



« ՆՈՐԱՎԱՆՔ »

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Արա Մարջանյան

ԱՂԻԲԵԶԱՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Երևան
2013

ՀՏԴ 332.012.2 (479.24)
ԳՄԴ 65.9 (2Ադ)
Մ 387

Գրքում օգտագործված ողջ վիզուալ նյութը գտնվում է հանրային ազատ հասանելիության և օգտագործման տիրույթում:

Մարջանյան Արա

Մ 387

Ադրբեջանական Հանրապետության սոցիալ-տնտեսական համակարգը / Ա.Մարջանյան. - Եր.: Նորավանք, 2013. - 330 էջ:

Գրքում դիտարկվում են Ադրբեջանի սոցիալ-տնտեսական համակարգի որոշ տարրեր (նավթային ոլորտ, ընդհանուր մակրոտնտեսական ցուցանիշներ, պետքուջե, ռազմական ծախսեր): Քննվում են Ազերի-Չիրազ-Գյունեշլի դաշտից նավթի արդյունահանման ցուցանիշները, ոլորտի խնդիրները և հեռանկարները: Վեր են հանվում երկրի ռազմականացման տրամաբանությունը, հիմնական փուլերը և ցուցանիշները: Գրքում զետեղված են ծավալուն փաստագրական նյութ, վիճակագրական աղյուսակներ և այլն, բերվում են նյութը ներկայացնող բազմաթիվ գծապատկերներ և նկարներ: Առաջին անգամ ամբողջականորեն ներկայացված և օգտագործված են Ադրբեջանին առնչվող *Wikileaks* կայքի հաղորդագրությունները:

ՀՏԴ 332.012.2 (479.24)
ԳՄԴ 65.9 (2Ադ)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	7
ՆԱԽԱԲԱՆ	10
ԳԼՈՒԽ 1. ԱՐԴԲԵԶԱՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՌՈՏ	13
ԳԼՈՒԽ 2. ԱՐԴԲԵԶԱՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱՎԹԱՅԻՆ ՈԼՈՐՏԸ	31
2.1. Նավթային ոլորտ. ընդհանուր տվյալներ	31
2.2. Ազերի-Չիրազ-Գյումեշլի նավթադաշտը	45
2.3. Նավթային խաղերը ոչգծային աշխարհում	68
2.4. ԱՀ նավթային ոլորտի կառուցվածքը և առանձնահատկությունները	88
ԳԼՈՒԽ 3. ԱՐԴԲԵԶԱՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐԸ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿՐՈՏՆԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ	123
3.1. Արտաքին առևտրի շրջանառությունը և հաշվեկշիռը	124
3.2. Արտահանում	136
3.3. Ներկրում	139
3.4. Ընդհանուր մակրոտնտեսական ցուցանիշներ	143
ԳԼՈՒԽ 4. ԱՐԴԲԵԶԱՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ	180
4.1. Ինչպիսի՞ն է ԱՀ պետբյուջեն	180
4.2. Ինչո՞ւ են ԱՀ պետբյուջեի գնահատականներն այսքան տարբեր	181
4.3. ԱՀ պետբյուջեի առանձնահատկությունը (եկամտային հատված)	186
4.4. ԱՀ պետբյուջեի ուղղվածությունը (ծախսային հատված)	200
4.5. Ի վերջո, ինչպիսի՞ն է ԱՀ պետական բյուջեն	205
ԳԼՈՒԽ 5. ԱՐԴԲԵԶԱՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՌԱԶՄՄԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ	215
5.1. ԱՀ ռազմական ծախսերը	215
5.2. Ո՞ր երկրներից և ի՞նչ սպառազինություն է գնում Ադրբեջանական Հանրապետությունը	247
5.3. Ադրբեջանի ռազմականացման քրոնիկոնն առանձին դրվագներով	257

5.4. Հավասարակշռության դիստանցիան Առաջին հարվածի (<i>Fist Strike</i>) և «Փոխադարձ երաշխավորված ոչնչացման» (<i>MAD</i>) ռազմավարությունների միջև	292
5.5. Ի՞նչ է մտածում աշխարհն այս ամենի մասին	299

ՎԵՐՋԱԲԱՆ.

ԱՂԲԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՄԵԿ ԳԱՂԱՓԱՐԱՆԻՇՈՎ	317
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	322

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ*

Հավելված 1. Wikileaks կայքէջի կողմից հրապարակված Բաքվում ԱՄՆ դեսպանության հաղորդագրությունները

- Հ1.1. Բաքվում ԱՄՆ դեսպանության հաղորդագրությունները ԱԶԳ նավթադաշտի արդյունահանման խնդիրների, BP/AIOC կոնսորցիումի, ԱՀ պետական նավթային SOCAR ընկերության և ԱՀ իշխանությունների հետ դրանց հարաբերությունների վերաբերյալ*
- Հ1.2. Նավթային ոլորտին առնչվող Wikileaks-յան հաղորդագրությունները*
- Հ1.3. Ֆինանսատնտեսական ոլորտին առնչվող Wikileaks-յան հաղորդագրությունները*
- Հ1.4. Ադրբեջանական դոսյեի ռազմական (պաշտպանական) ոլորտին առնչվող Wikileaks-յան Խմբաքանակ Ա-ի հաղորդագրությունները*

Հավելված 2. ԱՀ պետական SOCAR նավթային ընկերության մինչև 2007թ. սկիզբը ստորագրված ԱԲՀ-ները

Հավելված 3. Կասպից ծովի սահմանագատման խնդիրը

Հավելված 4. ԱԶԳ նավթադաշտի արդյունահանման ծրագրերը

Հավելված 5. Ադրբեջանի Նավթային պետական հիմնադրամ

- Հ5.1. ԱՆՊՀ 2012թ. բյուջեն*
- Հ5.2. Նախագահ Ի. Ալիևի հրամանագրերը 2011 և 2012թթ. բյուջեների մասին*

Հավելված 6. Պետական բյուջեների բացության ինդեքսը

* Հավելվածներն ամբողջությամբ հասանելի են «Նորավանք» ԳԿՀ կայքում՝ <http://www.noravank.am/arm/books/detail.php?ID=12315>

Հավելված 7. Ադրբեջանական Հանրապետության պետական բյուջեն 2005-11թթ.

- Հ7.1. Պետական բյուջեի եկամտային և ծախսային հատվածներն ըստ ԱՎՊԿ-ի*
- Հ7.2. Պետական բյուջեի եկամտային և ծախսային հատվածներն ըստ ԱՀ Ֆինանսների նախարարության*

Հավելված 8. Ադրբեջանական Հանրապետության ռազմական ծախսերը

- Հ8.1. Հատված ՄԱԿ ԶԳԳ 2010թ. նոյեմբերի թիվ 20 հոդվածների ժողովածուից*
- Հ8.2. Ռազմական ծախսերի մասին երկրների հաշվետվությունները. ՄԱԿ Զինաթափման գործերով գրասենյակ (UN ODA)*
- Հ8.3. ՄՄԽՀԻ Ռազմական ծախսերի գրադարան, 1992-2011թթ., Հարցում՝ 2012թ. օգոստոս:*
- Հ8.4. ՄՄԽՀԻ Ռազմական ծախսերի գրադարան, 1992-2011թթ., Հարցում՝ 2013թ. ապրիլ:*
- Հ8.5. ԱՀ և ՀՀ ռազմական ծախսերն ըստ ԱՄՆ Պետական դեպարտամենտի սպառազինության վերահսկման բյուրոյի «Աշխարհի ռազմական ծախսերը և զինատեսակների մատակարարումները» հաշվետվությունների*
- Հ8.6. ԱՀ ռազմական ծախսերն ըստ ԱՄՆ ԿՀՎ-ի*

Հավելված 9. Սովորական սպառազինությունների մատակարարումները Ադրբեջանական Հանրապետություն

- Հ9.1. ԱՀ-ի կողմից ՄԱԿ ԶԳԳ Ծանր սպառազինության ռեզիստր ներկայացված տվյալները*
- Հ9.2. ԱՀ ծանր սպառազինության ազգային ունեցվածքն ըստ ՄԱԿ ԶԳԳ ներկայացրած պաշտոնական հաշվետվությունների*
- Հ9.3. Ադրբեջանական Հանրապետության և Հայաստանի Հանրապետության մասնակցությունը սովորական սպառազինությունների կրճատման և ԶՈԶ չտարածման միջազգային պայմանագրերին*
- Հ9.4. ԱՀ Սովորական սպառազինության 1992-2011թթ. մատակարարումները. ՄՄԽՀԻ, ՄԳԱ*
- Հ9.5. 1992-2012թթ. ԱՀ սովորական զինատեսակների մատակարարումների մասին հաշվետվություններն ըստ մատակարար երկրի և մատակարարված զինատեսակների ու մատակարարումների տարբերվերի. ՄՄԽՀԻ, ԱՌ*
- Հ9.6. ԵՍՄՊ շրջանակներում երկրների ՕՄՊ ազգային ունեցվածքի և ՎՇԱ արժեքները: Միացյալ Թագավորության Պաշտպանության նախարարություն, 2010թ. (UKDS 2010)*

Հավելված 10. Ներդրումները Ադրբեջանական Հանրապետության տնտեսական ոլորտ

Հավելված 11. Ադրբեջանական Հանրապետության արտաքին առևտուրը

Հ11.1. Ադրբեջանի արտաքին առևտրի շրջանառությունը (\$ հազ.)՝

դասակարգված ըստ 2010թ. ցուցանիշների

Հ11.2. Ադրբեջանի արտաքին առևտրի շրջանառությունը և արտահանումն օֆշորային գոտիներ (\$ մլն)

Նկար Հ11.1. Ադրբեջանի արտահանումներն օֆշորային գոտիներ 2000-11թթ. (\$ մլն)

Հավելված 12. Ադրբեջանական Հանրապետության արտահանումը

Հ12.1. Արտահանման կառուցվածքն ըստ Առևտրի միջազգային ստանդարտի (SITC) դասակարգման: 2006-10թթ.

Հ12.2. Արտահանման ծավալներն ըստ աշխարհի երկրների, բացի ԱՊՀ երկրներից (\$ հազ.): 2006-10թթ.

Հ12.3. Արտահանման կառուցվածքն ըստ Առևտրի միջազգային ստանդարտի դասակարգման (SITC), \$ հազ.: 2006-10թթ.

Հ12.4. Արտահանվող ապրանքները, բնեղեն միավորներ և արժեք (\$ հազ.): 2006-10թթ.

Հավելված 13. Ադրբեջանական Հանրապետության ներկրումը

Հ13.1. Ներկրվող ապրանքները, բնեղեն միավորներ և արժեք (\$ հազ.): 2006-10թթ.:

Հ13.2. Ներկրման ծավալներն ըստ աշխարհի երկրների, բացի ԱՊՀ երկրներից ((\$ հազ.): 2006-10թթ.

Հ Ա Պ Ա Վ ՈՒ Մ Ն Ե Ր

ԱԲՀ	Արդյունքի բաշխման համաձայնագիր (<i>PSA</i>)
ԱՎՊԿ	Ադրբեջանական Հանրապետության վիճակագրական պետական կոմիտե
ԱԹՄ	Անօդաչու թռչող սարք (<i>UAV</i>)
ԱՀ	Ադրբեջանական Հանրապետություն
ԱՄՀ	Արժույթի միջազգային հիմնադրամ (<i>IMF</i>)
ԱՄՆ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ (<i>USA</i>)
ԱՄՆ ԱՎԲ	ԱՄՆ Աշխատուժի վիճակագրական բյուրո (<i>US Bureau of Labor Statistics</i>)
ԱՄՆ ՄԲ	ԱՄՆ Մարդահամարների բյուրո (<i>US CB</i>)
ԱՄՆ ԿՀՎ	ԱՄՆ Կենտրոնական հետախուզական վարչություն (<i>US CIA</i>)
ԱՄՆ ՊԴԲ	ԱՄՆ Պետական դեպարտամենտի սպառազինության վերահսկման բյուրո (<i>U.S. Department of State, Bureau of Arms Control, Verification and Compliance</i>)
ԱՆՊՀ	ԱՀ Նավթային պետական հիմնադրամ (<i>SOFAZ</i>)
ԱԶԳ	Ազերի-Չիրազ-Գյումեշլի նավթադաշտ (<i>ACG</i>)
ԱՊՀ	Անկախ Պետությունների Համագործակցություն (<i>CHI</i>)
ԱՌ	Ծանր սպառազինությունների գնումների ՍՄԽՀԻ առևտրային ռեգիստրներ (<i>SIPRI TR</i>)
ԱՌՆ	Արտաքին ուղիղ ներդրումներ (<i>FDI</i>)
ԳՈՒ	Գրոհային ուղղաթիռներ (<i>attack helicopters</i>)
ԵԱՀԿ	Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն (<i>OSCE</i>)
ԵՄՍՊ	Եվրոպայում սովորական սպառազինությունների սահմանափակման պայմանագիր (<i>SFET, DOBCE</i>)
ԶՏ	Զրահատեխնիկա
ԽՍՀՄ	Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն (<i>CCCP</i>)
ԾՍՊ	Սովորական ծանր սպառազինություններ
ԾՍՊ ԱՈՒ	ԵՄՍՊ շրջանակում հաշվառվող ԾՍՊ տեսակների ազգային ունեցվածք (<i>SFET, TLE National holdings</i>)

ԿՑ	<i>Թրանսփարենսի ինթերնեյշնլ</i> , կոռուպցիայի ցուցիչ (<i>TI CPI</i>)
ՀԱԿ	Հրթիռներ և արձակման կայանքներ
ՀԲ	Համաշխարհային բանկ (<i>WB</i>)
ՀԲ ԶՀՀ	ՀԲ Զարգացման հեռանկարների հանձնախումբ (<i>WB DPG</i>)
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՄՏ	Հիմնական մարտական տանկեր (<i>MBT, OBT</i>)
ՀՆԱ	Համախառն ներքին արտադրանք (<i>GDP</i>)
ՀՏՖ	Համաշխարհային տնտեսական ֆորում (<i>WEF</i>)
ՀՕՊ	Հակաօդային պաշտպանության կայանքներ
ՀՖ	Հերիթըջ ֆաունդեյշն, ԱՄՆ (<i>HF</i>)
ՄԲ	Մեծ Բրիտանիա (<i>GB</i>)
ՄԳԱ	Միտումների գնահատողական արժեքներ, ՍՄԽՀԻ (<i>SIPRI TIV</i>)
ՄԱԿ	Միավորված Ազգերի Կազմակերպություն (<i>UN</i>)
ՄԱԿ ԶԳԳ	ՄԱԿ Զինաթափման գործերով զբաղվող (<i>UN ODA</i>)
ՄԱԿ ԺԴ	ՄԱԿ Ժողովրդագրական դեպարտամենտ (<i>UN PD</i>)
ՄԱԿ ՍՍՌ	ՄԱԿ Սովորական սպառազինության ռեգիստր (<i>UN Register of Conventional Arms, UN RCA</i>)
ՄԱԿ ԺՏ	ՄԱԿ Ժողովրդագրական ամենամյա տեղեկատու (<i>UN DYB</i>)
ՄԱԿ ՏՄՀԴ	ՄԱԿ Տնտեսական և սոցիալական հարցերի դեպարտամենտ (<i>UN DESA</i>)
ՄԻ	Մարտական ինքնաթիռներ (<i>combat aircrafts</i>)
ՄՏՀ	Մեծ տրամաչափի հրետանի
ՄՑ	Համաշխարհային տնտեսական ֆորումի մրցունակության ցուցիչ (<i>WEF CI</i>)
ՄՖԿ	Միջազգային ֆինանսական կառույցներ (<i>IFI</i>)
ՆԱՏՕ	Հյուսիսատլանտյան պայմանագրի դաշինք (<i>NATO</i>)
ՇՆԶ	ԱՆՈՀ հասանելիք շահութային նավթի չափաբաժին
ՇԻԴ	Շահութաբերության իրական դրույք (<i>RROR</i>)

ՌԴ	Ռուսաստանի Դաշնություն (<i>РФ</i>)
ՌԾ	Ռեզնիստանի ծախսեր (<i>military expenditures</i>)
ՌՀՄԻ	Ռեզնիստանի հետազոտությունների միջազգային ինստիտուտ, Լոնդոն (<i>IISS</i>)
ՄԳԻ	Մաշտոտանի գների ինդեքս (<i>CPI</i>)
ՄԳՑ	ԱՄՆ Աշխատուժի վիճակագրական բյուրոյի սպառողական գների ցուցիչ (<i>consumer price index, US BLS CPI</i>)
ՄՄԽՀԻ	Մտոկիռի միջազգային խաղաղության հետազոտական ինստիտուտ (<i>SIPRI</i>)
ՄՄՊ	ԵՄՄՊ շրջանակում սահմանափակված սպառազինության տեսակներ (<i>TLE</i>)
ՎՇԱ	ԵՄՄՊ շրջանակում անդամ երկրների համար գործող ԾՄՊ տեսակների պարտավորեցնող վերին շեմային արժեք (<i>SFET, TLE Ceiling</i>)
ՏԱՑ	<i>Հերիթրջ ֆաունդեյշնի</i> և <i>Ուոլ-սթրիթ Ջորնալի</i> տնտեսական ազատության ցուցիչ (<i>IEF</i>)
ԴՐԱՄ	Главное ракетно-артиллерийское управление Минобороны РФ (ՌԴ Պաշտպանության նախարարության գլխավոր հրթիռահրետանային վարչություն)
ԱՊՕ	Ադրբեջանի միջազգային օպերացիոն ընկերություն
ԲՐ	<i>Բրիթիշ փեթրոլիում</i> ընկերություն
ՏՕԱՐ	Ադրբեջանի Նավթային պետական ընկերություն
Բ/ՕՐ	Բարել օրական

ՆԱԽԱԲԱՆ

Հայրենական հրատարակություններում առկա են Ադրբեջանին նվիրված բազմաթիվ ուսումնասիրություններ: Սակայն Ադրբեջանական Հանրապետության (ԱՀ) ընդհանուր սոցիալ-տնտեսական համակարգին նվիրված ամբողջական աշխատությունները, որոնք կհամատեղեն տեղեկատուի, փաստագրական աղբյուրի և վերլուծական ուսումնասիրության առավելությունները, սակավաթիվ են: Սույն գիրքը, ինչպես նաև մեր նախորդ աշխատությունը¹, կոչված է այս բացը գոնե մասնակիորեն լրացնելուն: Այս առումով, այն նախորդի տրամաբանական շարունակությունն է: Ու եթե առաջին գրքում քննվում էր ԱՀ պաշտոնական ժողովրդագրական վիճակագրությունը, վեր էին հանվում այն կեղծելու պաշտոնական Բաքվի գործելակերպն ու մեթոդները, ապա սույն գիրքը նվիրված է Ադրբեջանի նավթային ոլորտի (Գ. 2), ընդհանուր մակրոտնտեսական ցուցանիշների (Գ. 3), պետական բյուջեի (Գ. 4) և ռազմական ծախսերի (Գ. 5) քննությանը:

Երկու խոսք գրքի պատրաստման մեթոդաբանության մասին: Մերօրյա Ադրբեջանի մասին գիրք գրելը դյուրին գործ չէ: Բանն այն է, որ սոցիալ-տնտեսական համակարգի գրեթե բոլոր պաշտոնական ցուցանիշներն այս երկրում կամ բերվում են խեղաթյուրված, կամ ընդհանրապես չեն բերվում: Ուստի, իրական պատկերը հասկանալու համար անհրաժեշտ է համադրել տվյալ ցուցանիշի մասին ամենատարբեր աղբյուրների՝ հիմնականում Ադրբեջանից դուրս գտնվողների, տվյալները: Եվ անգամ այս պարագայում անհրաժեշտ է զգոնություն: Շատ դեպքերում այս կամ այն ցուցանիշին նվիրված հրապարակումները դրանք բերում են ոչ համ-

¹ Մարջանյան Ա., Ադրբեջանական Հանրապետություն. «վիրտուալ» ժողովրդագրության առանձնահատկությունները, Երևան, «Նորավանք» ԳԿՀ, 2012:

արժեք կամ ոչ ամբողջական, իսկ թույլ տրված սխալ գնահատականները վերատպվում ու բազմանում են հրատարակումից հրատարակում:

Բացի այդ, գործը բարդանում է նրանով, որ, ինչպես արդեն տեսանք ԱՀ ժողովրդագրական վիճակագրության օրինակով, խեղաթյուրված են ոչ միայն աղբյուրական պաշտոնական հրատարակումները, այլև միջազգային մի շարք հեղինակավոր աղբյուրների տվյալները: Նույնը պետք է ասել նաև ԱՀ նավթային ոլորտի, հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների, պետական բյուջեի, ռազմական ծախսերի, ծանր սպառազինության գնումների վերաբերյալ: Հետևաբար, համեմատական վերլուծությունն այստեղ պարզապես անհրաժեշտություն է:

Գրքում ներկայացվող բոլոր ցուցանիշների և տեղեկությունների համար նշվում են դրանց աղբյուրները: Եթե դրանք չեն նշվում, ապա օգտագործված է նախորդ նշված աղբյուրը: Սեփական հաշվարկների և փորձագիտական գնահատումների դեպքերը նշվում են հատուկ: Բերված բոլոր գրաֆիկները կառուցված են մեր կողմից: Նշվում են գրաֆիկների էլակետային տվյալների աղբյուրները: Օգտագործված վիզուալ այլ նյութերը գտնվում են հանրային օգտագործման տիրույթում և լայնորեն հասանելի են համացանցում:

Տարբեր կազմակերպությունների կայքէջերից ներբեռնված տվյալները (նշվում է դրանց ներբեռնման ժամանակը) բերվում են առանձին հավելվածներում, ինչը կոդիրինացնի դրանց հետագա օգտագործումը: Առանձին հավելվածներով ներկայացված են նաև Ազերի-Չիրազ-Գյունեշլի նավթադաշտի արդյունահանման եռափուլ ծրագրի մասին տեխնիկական մանրամասներ, Աղբյուրանի նվիրված *Wikileaks*-յան հաղորդագրությունների կորպուսի նկարագիրն ու մանրամասները, Կասախից ծովի սահմանազատման խնդրին առնչվող որոշ տեղեկություններ, մի շարք այլ նյութեր:

Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկը բերվում է յուրաքանչյուր գլխի վերջում: Օտարալեզու բառերը, անվանումները և հայավումները բերվում են *շեղագիր*: Օտարալեզու աղբյուրներից կատար-

ված բոլոր մեջբերումների թարգմանությունները մերն են: Ձանացել ենք հնարավորինս հարազատ մնալ բնագրերին: Թարգմանություններում քառակուսի փակագծերում բերվում են այն բառերը, որոնք բացակայում են բնագրում, բայց որոնք օգնում են ընկալել նյութն ավելի համարժեք:

Գիրքը չէր լինի, եթե չլինեին «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի աջակցությունը և անձնակազմի մասնագիտական օգնությունը: Իսկ տարվող աշխատանքներին մեծապես նպաստեց այն բարյացակամ և ջերմ մթնոլորտը, որը տիրում էր այստեղ գրքի պատրաստման ընթացքում: Պարտքս եմ համարում հատուկ շնորհակալություն հայտնել «Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն Գ.Ա. Հարությունյանին, որի դիտողություններն օգնեցին էապես բարելավել գրքի ընդհանուր կառուցվածքը, հստակեցնել դրա որոշ դրույթները:

Շնորհակալություն եմ հայտնում «Նորավանք» ԳԿՀ առաջատար վերլուծաբան Ս.Սարգսյանին՝ բազմաթիվ խթանիչ քննարկումների համար, որոնք հատկապես օգտակար եղան Ադրբեջանի ռազմական ծախսերին նվիրված գլխի պատրաստման ընթացքում: Իսկ «Նորավանք» ԳԿՀ փոխտնօրեն, ք.գ.թ. Ս.Սարուխանյանի հետ քննարկումներն օգնեցին ավելի ընդգրկուն դարձնել Ադրբեջանի նավթային ոլորտին առնչվող գլուխը:

Նրանց օգնությունն ու աջակցությունը մեծապես օժանդակել են գրքի պատրաստմանը և հնարավորություն են ընձեռել, հուսով եմ, նյութը ներկայացնել հնարավորինս համարժեք և ամբողջական: Հասկանալի է, որ գրքում բոլոր բացթողումների, հնարավոր վրիպումների ու սխալների համար պատասխանատվությունն ամբողջովին հեղինակինն է:

Արա Հ. Մարջանյան
«Նորավանք» ԳԿՀ առաջատար վերլուծաբան, տ.գ.թ.
Երևան, մայիս, 2013թ.

ԳԼՈՒԽ 1.
ԱՂԲԵԶԱՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՄԱՍԻՆ ՀԱՄԱՌՈՏ

Ինչպիսի՞ն է Ադրբեջանական Հանրապետության (ԱՀ) տնտեսական համակարգը: Մեկ նախադասությամբ պատասխանը հետևյալն է. այն մոնոտոնտեսություն է՝ կառուցված ածխաջրածինների (հում նավթ, հարակից և բնական գազ) զգալի պաշարների, դրանց արդյունահանման և արտահանման վրա:

Այսպես, ԱՀ ազգային եկամուտների ավելի քան 85%-ը գոյանում է արտաքին առևտրից, որում հանածո վառելիքների (հում նավթ, բնական և հարակից գազ) մասնաբաժինն իր հերթին չի իջել 80% ցուցանիշից: Սկսած 2008-ից՝ այն կազմել է մոտ 95% (այս մասին ավելի մանրամասն տե՛ս Գ. 3-ում): ԱՀ-ում արդյունահանված ողջ հում նավթի մոտ 90%-ը գոյանում է Կասպից ծովի միայն մեկ նավթադաշտից՝ Ազերի-Չիրազ-Գյունեշլի (ԱՉԳ) դաշտից (ավելի մանրամասն տե՛ս Գ. 2-ում): Ըստ էության, մերօրյա Ադրբեջանն իր տնտեսական համակարգով ԱՉԳ, Սանգաչալի տերմինալի և Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի կցորդն է: Եվ ինչպես Վրաստանը ժամանակին անվանվում էր «Վրաստանի խողովակաշարային հանրապետություն» [1], այնպես էլ մերօրյա Ադրբեջանը կարող է անվանվել «Ազերի-Չիրազ-Գյունեշլի հանրապետություն»:

Հատկանշական է, թե ինչ հետևողականությամբ է փորձում ստվերել Ադրբեջանն այս պարզ իրողությունը: Խոսուն է ԱՀ Նավթային պետական հիմնադրամի (ԱՆՊՀ, *SOFAZ*) պաշտոնական հաշվետվությունների օրինակը: Նկար 1.1-ի վերին հատվածում արտապատկերում ենք

ԱՆՊՀ 2011թ. տարեկան հաշվետվության այն գրաֆիկը, որը նկարագրում է տարբեր նավթագազային դաշտերի ածխաջրածինների վաճառքից գոյացած շահույթները՝ \$մլրդ չափողականությամբ: Այդ տարի ԱԶԳ նավթն ապահովել էր մոտ \$19 մլրդ շահույթ, Շահ Դենիզի գազը՝ մոտ \$237 մլն, այլ դաշտերը՝ շատ ավելի քիչ: Սակայն ինչ-որ բան այս նկարում այն չէ: Եվ իրոք, \$237 մլն պատկերող Շահ Դենիզի սյունակն իր երկարությամբ չի կարող կազմել \$19 մլրդ պատկերող ԱԶԳ սյունակի երկարության կեսը: Նույնը և այլ դաշտերի մասով (տե՛ս Նկար 1.1): Չէ՞ որ դրանք մի ամբողջ կարգ (1000 անգամ) ավելի փոքր են:



Այստեղ բանն այն է, որ ԱՆՊՀ փորձագետները դիմել են պարզունակ վիզուալ «հնարքի»: Իրականում բերված գրաֆիկը կառուցված է լոգարիթմական մասշտաբով, որն, այսպես ասած, համասեռացնում է բերված ցուցանիշները, և արտաքնապես Շահ Դենիզը դառնում է համեմատելի ԱԶԳ-ի հետ: Դիմելով այս հնարքին՝ ԱՆՊՀ փորձագետները հետո պարզապես «մոռացել» են նշել դա բերված նկարի գլխագրում: Եվ առաջին հայացքից կարող է թվալ, որ ներկայացված գրաֆիկի չափողականությունը, իրոք, պարզապես \$մլրդ է: Նկար 1.1-ի ստորին հատվածում բերում ենք ուղիղ գրաֆիկը \$մլրդ չափողականությամբ, ինչպես նաև *log* (\$մլրդ) չափողականությամբ: Ասորինակ ջայլամային գործելակերպը բնորոշ է ոչ միայն ԱՆՊՀ-ին (տե՛ս ստորև՝ 2.4 բաժնում), այլև ԱՀ ողջ քարոզչամեքենային և տարբեր պետական ու կիսապետական կառույցներին, որոնք հետևողականորեն կեղծում են ԱՀ սոցիալ-տնտեսական համակարգի ցուցանիշները՝ ժողովրդագրությունից մինչև ռազմական ծախսերը, պետբյուջեի դեֆիցիտից մինչև մանկական մահացության ցուցանիշներ:

ԱՀ տնտեսական համակարգը բոլոր մոնոտնտեսություններին բնորոշ մասնակի և կարճաժամկետ առավելությունները համադրում է երկարաժամկետ ու համակարգային վտանգների հետ: Առավելություններն ակնհայտ են: Ածխաջրածինների շոշափելի պաշարների ինտենսիվ արդյունահանումն ապահովում է էական նյութական բարիքների արագ կուտակում: ԱՀ քաղաքական կոշտ համակարգի պայմաններում սա

Նկար 1.1

ԱՀ նավթային եկամուտները ԱՆՊՀ պատկերմամբ (վերը) և իրականում

Chart 2.2.2. Proceeds from profit oil and gas sales by fields, 2011 (USD million)



Աղբյուրները՝ State Oil Fund of the Republic of Azerbaijan. Annual Report - 2011 և սեփական հաշվարկներ

հնարավորություն է ընձեռում համեմատաբար ձկուն և զանգվածային կերպով ուղղել այդ բարիքը և՛ անձնական շահերին, և՛ քաղաքական ու ռազմավարական այս կամ այն խնդրի լուծմանը՝ համահունչ օրվա իշխանությունների պատկերացումներին և սեփական շահերը երկրի շահերի հետ համադրելու նրանց ունակությանը: Խոցված իր իսկ սանձազերծած Արցախյան պատերազմում կրած ռազմական պարտությունից՝

ԱՀ իշխանությունները երկրի ածխաջրածինների պաշարներն ընկալեցին որպես ռևանշի միջոց թե՛ Արցախի, թե՛ Հայաստանի նկատմամբ: Ավելին, այս ընկալումը դյուրինացրեց 1990-ականների սկզբին Հ.Ալիևի կողմից իշխանության գավթումը: Հանրության աչքում նա ներկայացավ իբրև «փրկիչ», որն ազգի ցավերն ամոքելու, հայերից վրեժխնդիր լինելու և ազգի քարեկեցությունն ու երկրի զարգացումն ապահովելու ծրագիր ունի:

Այս ծրագիրը՝ այսպես կոչված «Ալիևի դոկտրինը», ԱՀ սոցիալ-տնտեսական համակարգի հենքն ու ձևագոյացնող կաղապարն է: Դոկտրինի ձևավորման սկիզբը հանդիսացավ այդ ժամանակ դեռ Ադրբեջանական ԽՍՀ Ժողովրդական ճակատի որոշ լիդերների, թուրք և մի շարք այլ ստրատեգների միջև XX դարի 80-ական թթ. վերջին հաստատված համագործակցությունը, որը շոշափելիորեն սնվում էր պանիալամիզմի և պանթուրքիզմի գաղափարախոսություններից:

Դոկտրինի տնտեսական բաղադրիչն ուրվագծվեց երկրի ածխաջրածինների պաշարների յուրացման ուղղությամբ ԱՀ առաջին նախագահ Ա.Էլչիբեյի կողմից 1991թ. հրավիրված շտաբանական *Ռաւկո Էնեքջի* և *Ջեյ-Փի Քեննի* ընկերությունների մշակումներում [2]: Բայց այն «միս ու արյուն» ստացավ միայն այն բանից հետո, երբ, ոտնահարելով Կասպից ծովի այլ երկրների շահերը, ԱՄՆ-ը, մասնակիորեն՝ նաև ՌԴ-ն, ԱԶԳ-ն «հանձնեցին» Ադրբեջանին: 1994թ. մայիսի 5-ին ստորագրվեց հրադադարի մասին Բիշքեկյան արձանագրությունը, իսկ 1994թ. սեպտեմբերի 20-ին ԱՀ և աշխարհի 7 երկրների 12 նավթային ընկերությունների միջև ստորագրվեց ԱԶԳ ավեզրյա (*off shore*) նավթային դաշտի յուրացման ու շահագործման «դարի պայմանագիրը» (տե՛ս Գ. 2 և Հավելվածներ 3, 4):

«Ալիևի դոկտրինի» ռազմավարական և աշխարհաքաղաքական բաղադրիչը պատմական համարժեք հեռանկարում անհրաժեշտ է դիտարկել XX դարի 50-ականների վերջի և 70-ականների սկզբի այն գործընթացների ծիրում, երբ արաբա-խսրայելական հակամարտության ենթատեքստում և ավելի լայն՝ գաղութատիրական համակարգի դեմ «երրորդ աշխարհի» ու «չմիացած երկրների» պայքարի ընթացքում նավթա-

յին հարստությունը և նավթի տարանցիկ ուղիները գիտակցվեցին որպես գորեղ աշխարհաքաղաքական գործիք [3]¹: Դրա ակունքը կարելի է տեսնել նաև 1996-97թթ. «Մեծ Միջին Արևելքի» ստեղծման գործընթացներում՝ որպես վերջինիս կարևորագույն բաղկացուցիչ ([4, 6, 7, 14; [6], map XVI; 8, c. 9), գտնել քաղաքական ու տնտեսական բաղադրիչին նվիրված մեծածավալ գրականությունում: Վերջապես, բոլորովին չմերժելով թվարկված մոտեցումները՝ կարելի է ենթադրել, որ այն ծագել է Ռուսական կայսրության հոգեվարքի ժամանակ մշակված, Կովկասից ու Արևելքից այդ կայսրությունը մեկուսացնելու՝ անցած դարասկզբի կայսերական Գերմանիայի գենշտաբի ծրագրից: Այդ ծրագիրը յուրովի վերիմաստավորվեց արդեն XX դարի 90-ականների սկզբին, ԽՍՀՄ փլուզումից հետո, Ադրբեջանում և Թուրքիայում, Վրաստանում, Իսրայելում և ԱՄՆ-ում ([8, c. 14-18; 9, p. 24-25):

«Ալիևի դոկտրինի», թերևս, ամենահակիրճ ու ամբողջական ձևակերպումը կարելի է գտնել ԱՄՆ ԿՀՎ 1998թ. պատրաստած և 10 տարի հետո գաղտնագրված մի նյութում², որի «Բոլորիս հայացքը դեպի Բաքու-Ջեյհան» հատկանշական վերնագիրը կրող բաժնում կարդում ենք. «Ալիևի աշխարհառազմավարական տեսլականը (*vision*) ենթադրում է միացյալ տեսակետ Կովկասի և Կենտրոնական Ասիայի վերաբերյալ՝ իրենց ամբողջականության և Արևմուտքի հետ անքակտելի կապի մեջ, սկզբում՝ հենված տնտեսական կապերի, հետո՝ անվտանգության երաշխիքների վրա: Թուրքիայի և ՆԱՏՕ-ի հետ կապն այս ծրագրի ինտեգրալ մասն է, որը թույլ կտա Բաքվին հեռանալ Ռուսաստանից և Իրանից, այսինքն՝ երկրներից, որոնք Ալիևը դիտարկում է իբրև սպառնալիք Ադրբեջանի անվտանգությանը... Ալիևը, հավանաբար, համարում է, որ

¹ Այսպես կոչված «պարզունակ և համակարգված էմբարգոյի փուլեր»: Նշենք, որ այս գիտակցումը երկուստեք էր. «ոսկե միլիարդի» երկրները նույնպես գիտակցեցին այս հանգամանքը և մշակեցին հակազդման իրենց զինանոցը (տե՛ս [3, էջ 37-39]):

² CIA, OTI/OREA CEI-9812. December, 1998. Ընդգծենք, որ սա աղմկահարույց «Wikileaks-յան գաղտնի» նյութ չէ, այլ ԱՄՆ ԿՀՎ պաշտոնական գաղտնի զեկույց, որն ընկած է, այսպես կոչված, «Ազգային հետախուզական գնահատականներ» (*National Intelligence Estimates*) կարևոր և հույժ գաղտնի հաշվետվությունների հիմքում: Դրանք կողմնորոշում են ԱՄՆ ռազմավարությունն աշխարհում՝ երկարաժամկետ հեռանկարում (մանրամասն տե՛ս [10]):

Բաքու-Ջեյհան նավթամուղը կհամախմբի երկկողմ հարաբերությունները Թուրքիայի հետ... իսկ վերջինիս դիտարկում է որպես Ադրբեջանի բնական գործընկեր՝ լեզվական, մշակութային, կրոնական ընդհանրության և Իրանի, Հայաստանի ու Ռուսաստանի նկատմամբ ընդհանուր թշնամանքի հետևանքով»:

Այսպիսով, Ալիևի դոկտրինը հակառակվում է մեր տարածաշրջանի 6 երկրներից անմիջականորեն 3-ի (Հայաստան, Իրան, ՌԴ) հետ՝ պատանդ վերցնելով տարածաշրջանի 4-րդ երկիրը՝ տրանզիտային Վրաստանը: Եվս մեկ անգամ հրավիրում ենք Հայաստանին «ինքնամեկուսացման» մեջ մեղադրող որոշ հայրենական և գրեթե բոլոր վրացական վերլուծաբանների ուշադրությունն այս հանգամանքի վրա: Իրականում Անդրկովկասի ներկայիս պառակտման հիմքում ընկած են հենց «Ալիևի դոկտրինը» և գաղութատիրական աշխարհաքաղաքական իրողությունները, այլ ոչ թե հայ ժողովրդի ինքնորոշման իրավունքը և ազատագրական պայքարը: Այն անշեղորեն և գրեթե անփոփոխ կյանքի կոչվեց 90-ականների կեսից սկսած մինչև 2007-08թթ.՝ մի կողմից ապահովելով Ադրբեջանի համախառն ներքին արտադրանքի տպավորիչ աճը և մյուս կողմից՝ տարածաշրջանում Հայաստանը համառորեն շրջանցող էներգատրանսպորտային ենթակառուցվածքի զարգացումը, լինեն դրանք նավթա- և գազատարներ, մայրուղի, երկաթուղի (Բաքու-Թբիլիսի-Կարս), թե էլեկտրաէներգիայի բարձրավոլտ հաղորդագծեր (Բորչկա-Ախալցխա 400 կվ լարման գիծ, տե՛ս [5, 9]):

Հիմնականում պահպանելով իր բովանդակությունը՝ Հայաստանի, ՌԴ և Իրանի մեկուսացում, «հայրական» այս դոկտրինը որոշակի շտկումների արժանացավ Ալիև-կրտսերի կողմից և նրա օրոք: Այսպես, սկսած 2007-ից՝ նա որոշակիորեն հակադրվեց Թուրքիայից և հատկապես Իրանից ու Հյուսիսային Կովկասից Ադրբեջան ներթափանցող մահմեդականացման վտանգին և քայլեր ձեռնարկեց ՌԴ-ի հետ հարաբերությունների բարելավման ուղղությամբ: Վերջին միտումն ուժեղացավ 2008թ. օգոստոսյան վրաց-օսական պատերազմից և Ռուսաստանի կողմից Հրվ. Օսիայի և Աբխազիայի անկախության ճանաչումից հետո: Մա-


կայն Վ.Պուտինի ՌԴ նախագահի պաշտոնում վերընտրվելուց, Գաբալայի ռադարային կայանից ՌԴ հրաժարվելուց հետո այս հարաբերություններում նորից որոշակի սառեցում նկատվեց (Գ. 5):

Ի.Ալիևի մյուս նորամուծությունն Ադրբեջանի տնտեսական և այլ կապերի նկատելի վերուղորդումն էր դեպի Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջան, հատկապես դեպի այս տարածաշրջանի «չմիացած երկրներին» մահմեդական տերությունները և Չինաստան: Բոլոր այս հանգամանքները ցայտուն արտացոլվեցին Ադրբեջանի տնտեսական համակարգում 2007-2012թթ. (Գ. 3): Բնութագրական են նաև Ի.Ալիևի Ադրբեջանի տնտեսական համակարգի դիվերսիֆիկացիային, նավթային գործոնից կախվածության թուլացմանն ուղղված ջանքերը, որոնք, սակայն, առ այսօր որևէ շոշափելի արդյունք չեն տվել (Գ. 2): Ի.Ալիևի նախագահական իշխանության համար հատկանշական է նաև Ադրբեջանի Նավթային ընկերությանը բնորոշ կորպորատիվ ղեկավարման տարրերի ներմուծումը երկրի ընդհանուր կլանաօլիգարխիկ ղեկավարման համակարգ:

Սակայն Ի.Ալիևի նախագահության, թերևս, ամենակարևոր ու հատկանշական գիծը դարձան երկրի աննախադեպ ռազմականացումը, ծանր, առաջին հերթին՝ գրոհային նշանակության սպառազինությունների ծավալուն գնումները, ԱՀ ռազմարդյունաբերական համալիրի ստեղծումը (Գ. 5): Իսկ քաղաքական առումով Ի.Ալիևի նախագահության ամենահատկանշական գիծը դարձան միանձնյա բռնատիրական համակարգի ուժեղացումն ու սահմանադրական ձևակերպումը: Այսպես, 2009թ. սահմանադրական «բարեփոխումների» արդյունքները ոչ միայն հնարավորություն ընձեռեցին Ի.Ալիևին «ցմահ» նախագահ դառնալ, այլև այդ հնարավորությունը կապեցին Լեռնային Ղարաբաղում պատերազմի վերսկսման և հակամարտությունը երբևէ չդադարեցնելու հետ (Գ. 2):

Ակնհայտ են նաև Ադրբեջանի մոնոտնտեսական համակարգին և «Ալիևի դոկտրինին» բնորոշ վտանգները: Դրանք մի քանիսն են: Նախ, հայտնի ճշմարտություն է, որ հիմնականում ածխաջրածինների վրա կառուցված տնտեսական համակարգը, թույլ զարգացած հասարակական կառույցների և ժողովրդավարական ինստիտուտների սաղմնային

մակարդակի պարագայում, հանգեցնում է ողջ տնտեսության միակողմանի, ձևախեղված զարգացմանը, խորացնում դեպի բռնաստիքություն քաղաքական համակարգի շարժը, սաստկացնում կոռուպցիան, սահմանափակում տնտեսական ու հասարակական ազատությունները: Բոլոր այս հանգամանքներն ընդգծված կերպով առկա են ներկայիս Ադրբեջանում և չեն վրիպել նույնիսկ որոշ հեռատես ադրբեջանցի վերլուծաբանների աչքից (տե՛ս, օրինակ, [12, 13]):



Աղբյուրը՝ <http://www.azstat.org/publications/azfigures/2012/en/012en.shtml>

Բերենք ասվածի մի քանի վկայություն: Այսպես, 1993-2010թթ. ընթացքում Ադրբեջանի ոչ նավթային ոլորտներում Արտաքին ուղիղ ներդրումները (ԱՌՆ, *FDI*)¹ կազմել են մոտ \$4.4 մլրդ (տե՛ս Նկար 1.2) [13]: Այս ծավալի մոտ 1%-ը (\$4.5 մլն) բաժին է ընկել գյուղատնտեսության ոլորտին, որտեղ, սակայն, զբաղված էր աշխատունակ բնակչության մոտ 40%-ը: Այսպիսով, գյուղատնտեսության ոլորտում մեկ աշխատավորի հաշվով 1993-2010թթ. համար ԱՌՆ-ը կազմել է ընդամենը \$3.0/մարդ: (Ադրբեջանի տնտեսական ոլորտում ներդրումների և մասնավորապես՝ արտաքին ուղիղ ներդրումների մասին տե՛ս Հավելված 10):

Մյուս կողմից, համաձայն պաշտոնական վիճակագրության, ԱՀ արդյունաբերական ոլորտում զբաղված է մոտ 200 հազ. մարդ (այսինքն՝ աշխատուժի մոտ 5.3%-ը, տե՛ս Աղյուսակ 1.1): Ընդ որում, բուն ածխաջրածինների արդյունահանման ասպարեզում 2005թ. զբաղված էր 40.8 հազար, իսկ 2010թ.՝ արդեն 35.3 հազար մարդ: Միննույն ժամանակ, 1993-2010թթ. ժամանակահատվածում, համաձայն մեր գնահատականների, նավթա- և գազարդյունահանման ոլորտում ներգրավվել է \$33.3 մլրդ ԱՌՆ կամ Ադրբեջան ներգրավված ողջ ԱՌՆ 88%-ը (տե՛ս Հավելված 10):

Այսինքն, եթե ընդունենք, որ նշված ժամանակահատվածում ածխաջրածինների արդյունահանման ասպարեզում անմիջականորեն զբաղված էր միջինը մոտ 40 հազ. մարդ (Աղյուսակ 1.1), ևս 40 հազ. մարդ զբաղված էր ածխաջրածինների հետ կապված հիմնադրամներում (ԱՆՊՀ, Հ.Ալիևի հիմնադրամ), բանկային համակարգում, տարատեսակ գրասենյակներում և այլ հարակից կառույցներում, ապա այս 80 հազար «ոսկե բանակի» մեկ շնչի հաշվով կստանանք \$416.3 հազ./մարդ ԱՌՆ: Այսինքն՝ **մոտ 139 հազար անգամ ավելի, քան, օրինակ, գյուղատնտեսության ոլորտի աշխատողների համար:** Անտարակույս, նման անհամամասնությունը լուրջ սոցիալական լարվածություն է առաջացնում ադրբեջանական հասարակությունում: Առավել ևս, որ այս ոլորտին բնորոշ են առանձին անհատների արագ գերհարստացումը, կոռուպցիան և տարատեսակ այլ չարաշահումներ:

¹ Foreign Direct Investments.

ԱՀ գրադվածությունն արդյունաբերական շղթայում (հազ. մարդ):
Պաշտոնական տվյալներ

Ոլորտ	2005	2006	2007	2008	2009	2010	2011
Արդյունաբերություն, այդ թվում.	193.2	197.0	208.3	210.3	192.3	181.8	183.8
Օգտակար հանածոների արդյունահանում	40.8	41.5	41.1	40.3	37.0	36.6	35.0
Արտադրություն	101.6	102.4	109.4	109.0	98.5	94.7	96.0

Աղբյուրը՝ <http://www.azstat.org/publications/azfigures/2012/en/012en.shtml>

Թրանսփարենսի ինթերնեյշնլ հայտնի միջազգային կազմակերպության գնահատականներով, 90-ականների ողջ ընթացքում Ադրբեյջանն աշխարհի ամենակոռուպացված երեք երկրների շարքում¹ էր: «Այն, ինչ կոռուպցիան Ադրբեյջանում դարձնում է մասշտաբով եզակի երևույթ, նավթային շահույթների հանկարծակի և զանգվածային ներհոսքն է երկիր: Իսկ այն դեռ երիտասարդ է, և պետական կառույցները պարզապես ունակ չեն մարսել այս ամենը (*digest all of this cash*)», - գրել է Ջոն Հոփկինսի համալսարանի և Փոլ Նիտցեի անվան Միջազգային բարձրագույն հետազոտությունների կենտրոնին կից գործող Կենտրոնական Ասիայի և Կովկասի ինստիտուտի (CACI) փորձագետ Ս.Ռոզենբլումը (*Scott Rosenblum*) 2011թ. փետրվարին²:

2011թ. սեպտեմբերի 6-ի հաղորդագրությունում «Ալ Ջազիրան» տեղեկացնում է³, որ համաձայն *Wikileaks* կայքի 2011թ. սեպտեմբերի սկզբին հրապարակված ԱՄՆ դեսպանությունների հաղորդագրությունների նոր չափաբաժնի, 2010թ. փետրվարով թվագրված մի նյութ վկայում է, որ կոռուպցիան, հատկապես Ադրբեյջանի մաքսային ծառայություններում, ունի համատարած բնույթ, իսկ ԱՀ Արտակարգ իրադրությունների նախարարությունը բնութագրվել է որպես «կթու կով Բաքվի էլիտայի հա-

¹ http://www.transparency.org/policy_research/surveys_indices/cpi/previous_cpi

² <http://www.cacianalyst.org/?q=node/5506>

³ <http://blogs.aljazeera.net/liveblog/wikileaks-sep-6-2011-1616>

մար»։ Հիշեցնենք, որ Ադրբեջանում ԱՄՆ դեսպանության 2010թ. դեկտեմբերի 15-ին հրապարակված մեկ այլ, ավելի վաղ հաղորդագրությունում երկրի նախագահ Ի.Ալիևը համեմատվել էր *մաֆիայի* պարագլխի հետ։

Մեկ այլ հայտնի միջազգային կազմակերպության՝ հեղինակավոր *Հերիթրջ ֆաունդեյշնի* գնահատականներով՝ Ադրբեջանի տնտեսական համակարգը կայունորեն գնահատվում է որպես «ոչ ազատ» (մանրամասն տե՛ս ստորև՝ 3.4 բաժնում)։

Համաձայն *Foreign Policy* ամսագրի և *Fund for Peace* կազմակերպության կողմից հրապարակվող «Խափանված երկրների ցանկը» (*Failed States Index*) վարկանիշային գնահատականների (մանրամասն տե՛ս [15]), Ադրբեջանի սոցիալ-տնտեսական համակարգին բնորոշ են տնտեսության առանձին ոլորտների անհավասարաչափ զարգացման, քրեականացման և պետական կառույցների ապալեգիտիմացման, ինչպես նաև կլանային խմբավորումների ազդեցության բարձր ցուցանիշներ՝ տարածաշրջանի երկրների մեջ ամենաբարձրներից մեկը։ Նման գնահատականներ է ներկայացնում նաև հայտնի Միջազգային ճգնաժամային խմբի՝ Ադրբեջանական Հանրապետության վերաբերյալ 2010թ. սեպտեմբերին հրապարակված զեկույցը։ Այն ուներ խորհրդանշական «Ադրբեջան. խոցելի կայունություն» խորագիրը, որն այս զեկույցը մեկնաբանող հոդվածի հեղինակի դիպուկ ձևակերպմամբ՝ կարելի էր անվանել նաև «Ադրբեջան. կայունության խոցելիություն» [16]։

Ի դեպ, քիչ չեն նաև տարատեսակ վարկանիշներ կազմող և հրապարակող կառույցները, որոնք Ադրբեջանին «շնորհում» են բավական բարձր գնահատականներ։ Այստեղ դրանց վրա հատկապես կանգ չենք առնի, բայց անհրաժեշտ ենք համարում նշել մի այսպիսի հատկանշական օրինակ, որն ուշագրավ է թե՛ իր վարկանիշային մոտեցումներով, թե՛ դրանց բարոյագաղափարախոսական հենքով։

Խոսքը Համաշխարհային տնտեսական ֆորումի¹ (ՀՏՖ) և նրա կողմից կանոնավոր կերպով հրապարակվող Երկրների մրցունակության

¹ *World Economic Forum (WEF)*.

ամենամյա տեղեկատուների¹ մասին է, որում գնահատվում են երկրի մրցունակության ցուցիչները: Այս տեղեկատուներում անցած տարիների ընթացքում Ադրբեջանը ներկայանում է որպես տարածաշրջանային առաջատար երկիր և իր ցուցանիշներով գերազանցում է նույնիսկ որոշ վերոպական ու ասիական զարգացած երկրների: Դա տեղի է ունենում (ոչ վերջին հերթին) այն բանի շնորհիվ, որ ՀՏՖ փորձագետները չափազանց բարձր են գնահատում ԱՀ հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները և պետական բյուջեի կատարողականը: Մասնավորապես, նրանք համարում են, որ 2011-ին ԱՀ պետբյուջեն պրոֆիցիտային էր՝ մոտ \$300 մլն կարգի (ՀՆԱ 0.6%): Իսկ ինչո՞ւ: Որտեղի՞ց ՀՏՖ-ին այս տվյալները: Մի՞թե տեղյակ չեն, որ, օրինակ, ԱՄՆ ԿՀՎ տվյալներով՝ այդ տարի ԱՀ պետական բյուջեն ոչ թե պրոֆիցիտային էր, այլ հակառակը՝ դեֆիցիտային: Ու այդ դեֆիցիտը կազմում էր ոչ ավելի, ոչ պակաս՝ \$11.0 մլրդ (ՀՆԱ 19%, այս մասին ավելի մանրամասն տե՛ս Գ. 4-ում): Կարծում եմ՝ դժվար չէ կռահել, թե որտեղից են ՀՏՖ փորձագետները վերցրել Ադրբեջանի իրենց այս գնահատականը. իհարկե՝ ԱՀ Ֆինանսների նախարարությունից: Իսկ թե ինչու են նրանք ընդունում այս գնահատականը և հակառակվում ԱՄՆ ԿՀՎ գնահատականին՝ մանրամասնվում է Գ. 4-ում:

Ընդհանրապես, ՀՏՖ այս հաշվետվությունների՝ Ադրբեջանին նվիրված հատվածն անհնար է կարդալ առանց ջղային ծիծաղի, մանավանդ հանրային նշանակության ենթակառուցվածքների մասով (էլեկտրա- և ջրամատակարարում, կոյուղի և այլն): Հատկապես ուշագրավ է հետևյալը. նավահանգստային ենթակառուցվածքների մասով Ադրբեջանի «մրցակցային» գնահատականը ՀՏՖ 2011թ. տեղեկատուում կազմել է 4.0 (78-րդ տեղն աշխարհում), իսկ, ուշադրություն՝ և, Հայաստանինը՝ 3.0 (127-րդ տեղն աշխարհում): Սա կատակ չէ: Բանն այն է, որ ՀՏՖ փորձագետներն Ադրբեջանը համարում են ցամաքային երկիր (*land locked country*), այնպես, ինչպես Հայաստանը, Մոնղոլիան կամ Նեպալը: Այլ խոսքերով, ՀՏՖ փորձագետները Կասպիցը համարում են ոչ թե ծով, այլ

¹ <http://www.weforum.org/issues/global-competitiveness>

«ներքին ջրավազան», որի վրա չեն տարածվում Ծովային օրենսգրքի միջազգային նորմերը: Իսկ ինչո՞ւ, ի՞նչ իրավունքով: Ո՞վ է օժտել այս կառույցին նման իրավասությամբ՝ մեկնաբանել այսօրինակ լրջագույն, խրթին, միջազգային կարևորության խնդիրները, որոնք առնչվում են բազմաթիվ երկրների ինքնիշխան իրավունքներին և միջազգային հարաբերությունների դաշտին:

Սա, իրոք, լրջագույն խնդիր է: Դրա արժեքն Ադրբեջանի համար կազմում է մոտ \$200 մլրդ: Բանն այն է, որ 1990-ականների սկզբին Ադրբեջանը (մասնակիորեն՝ նաև ՌԴ-ն) Արևմուտքի և ԱՄՆ հովանավորությամբ հենց այսպես մեկնաբանեց Կասպիցի կարգավիճակը: Արդյունքում՝ «Ալիևի դոկտրինի» շրջանակներում Ադրբեջանը տիրացավ Ազերի-Չիրազ-Գյունեշլի նավթային գերդաշտին: Հենց այսպիսի մեկնաբանումն Իրանին զրկեց Հարավային Կասպիցում իր հատվածն ունենալուց. այդ երկիրը մինչ այժմ բավարարվում է ԽՍՀՄ *ՀԿԲԴ*-ի 1935թ. գաղտնի ներգերատեսչական ակտով սահմանված Աստարա-Հասան Կուլի վարչական գծով: Նույնը վերաբերում է Թուրքմենստանին, որից գողացվեցին ԱԶԳ Արևելյան Ազերի հատվածը և Սերդար դաշտը (տե՛ս Գ. 2 և Հավելված 3): Այս երկրներն ամեննին հակված չեն Կասպիցի սահմանազատման հարցն ավարտված համարել, ինչպես որ իրեն թույլ է տալիս անել ՀՏՖ-ն՝ «լուծելով» այն «մրցունակության» իր տեղեկատուի հասարակ տողատակ-ծանուցումով:

Բայց ամենակարևորը նույնիսկ սա չէ: Երկրների վարկանիշներն արժեքավոր են, և դրանց կազմումն իմաստ ունի, եթե դրանք պատկանում են միևնույն արժեհամակարգային դաշտին և ձևակերպված են ուղիղ կերպով: Օրինակ, միանգամայն հասկանալի են մամուլի կամ տնտեսության ազատությունը, կամ կոռուպցիայի աստիճանը գնահատող *Freedom House*, *Heritage Foundation* և *Transparency International* կառույցների վարկանիշային գնահատականները: Նրանք հենվում են միևնույն՝ արևմտյան ժողովրդավարության մոդելի արժեհամակարգի վրա: Հասկանալի են նաև երկրների այն վարկանիշային գնահատական-

ները, որոնք հենվում են ուղիղ ձևակերպված բաղադրիչների գնահատման վրա, օրինակ՝ ժողովրդագրական ցուցանիշներ, ռազմական ծախսեր, պատժիչ համակարգում գտնվող մարդկանց քանակ, լայնաշերտ ինտերնետի բաժանորդների թիվ և այլն: Եվ նույնիսկ այս դեպքում հնարավոր են տարբեր բարդություններ ու տարակարծություններ [17]:

Բայց վարկանիշային գնահատականները կարող են կորցնել իրենց որոշակիության զգալի մասը, եթե գնահատվում են ոչ հատու ձևակերպված հասկացություններ, օրինակ՝ երկրի «ուժեղությունը», «փխրունությունը», «լեզիտիմությունը» և այլն [18]: Ու դրանք դառնում են պարզապես անհասկանալի և անիմաստ, եթե համադրելով որակապես տարբեր տիրույթների ցուցանիշներ, միանգամայն անհամատեղելի մեծություններ՝ գնահատում են, օրինակ, երկրի «մրցունակությունը»: Չէ՞ որ երկրի մրցունակությունը կազմված է տարբեր, այդ թվում նաև՝ պատմական, ասպեկտներից ու գործոններից, որոնք պատկանում են միանգամայն տարբեր արժեհամակարգային դաշտերի:

Օրինակ, երկիրը կարող է կոռուպցիայի շատ ցածր աստիճան ունենալ, իսկ տնտեսական դաշտը կարող է լինել միանգամայն ազատ: Եվ այսպիսի երկիրը կլինի շատ մրցունակ արևմտյան ժողովրդավարության մոդելի դաշտում և, ամենայն հավանականությամբ, նաև իրականում: Սակայն երկիրը կարող է լինել ավտորիտար, ունենալ կոռուպցիայի շոշափելի աստիճան, բայց գործել արդյունավետ, ունենալ ենթակառուցվածքների լավ համակարգ և նորից լինել «մրցունակ»: Ավելին, երկիրը կարող է լինել կատարյալ բռնատիրություն, բայց վարել հաջող ագրեսիվ քաղաքականություն, ստրկացնել իր և հարևան ժողովուրդներին, տիրանալ նրանց հարստությանը, անխնա կեղեքել բնական պաշարները և նորից լինել չափազանց «մրցունակ»: Կցանկանայի, չեմ թաքցնում, տեսնել երկրների «մրցունակության» ՀՏՖ գնահատականը՝ կատարված, ենթադրենք, Ավստրիայի *անշյուսի* պահին, Լեհաստանի բաժանման ժամանակ: Կամ, մի փոքր ավելի հեռու՝ Արցախն Ադրբեջանին և Հաթայի հանրապետությունը Թուրքիային հանձնելու օրերին: ՀՏՖ

փորձագետները, կարծում եմ, պետք է մի փոքր ընդլայնեն մտահորիզոնը և հասկանան պարզ մի իրողություն. քնած մարդուն կացնով գաղտագողի մոտեցող մարդասպանն ակնհայտ «մրցակցային առավելություններ» ունի: Բայց մի թե բանը դա է:

Ադրբեջանի մոնոտոնտեսական համակարգին բնորոշ հաջորդ վտանգն այս երկրի ռազմատենչ նկրտումներն են: Այսպես, մինչև 2007թ. բոլոր նախկին խորհրդային հանրապետությունների մեջ (բացի ՌԴ-ից) Ադրբեջանն ուներ ամենամեծ զինուժը: Միջազգային հեղինակավոր *Գլոբալ սեքյուրիթի* կազմակերպության տվյալներով, Ադրբեջանի զինուժը 2007թ. կազմում էր 95 հազ. զինվոր, որից 85 հազարը՝ ցամաքային զինուժ, 8 հազարը՝ օդային զինուժ և մոտ 2 հազարը՝ ռազմածովային ուժեր: Այս թվաքանակին անհրաժեշտ է ավելացնել ավելի քան 2500 հոգանոց ազգային գվարդիան (*National Guard*), ներքին գորքերի ավելի քան 12 հազարանոց բանակը և 5.0 հազ. սահմանապահներին¹: Նույն այդ աղբյուրն իրավացիորեն գրում է. «Ադրբեջանի ռազմականացման մասին է վկայում նրա ռազմական ծախսերի դինամիկան. 2007թ. [հայտարարվել էր, որ] այս երկրի ռազմական բյուջեն կգերազանցի հարևան Հայաստանի ողջ բյուջեն»:

Այս մասին հանգամանալից խոսվում է գրքի 5-րդ գլխում: Այստեղ նշենք միայն, որ վկայակոչելով 2010թ. հոկտեմբերի 20-ին կառավարության նիստի ժամանակ Ի.Ալիևի արտասանած բառերը՝ *Եվրասիանեթ* վերլուծական կայքը նշում է. «Չթաքցնելով գոհունակությունը երկրի անսպառ էներգետիկ ռեսուրսներով պայմանավորված Ադրբեջանի ներկայիս ֆինանսական հզորության առիթով՝ Ի.Ալիևը հայտարարեց. «Ներկայումս Ադրբեջանի բանակն ամենաուժեղն ու մարտունակն է Հարավային Կովկասում²... 2011թ. մեր ռազմական ծախսերն ավելին կլինեն,

¹ <http://www.globalsecurity.org/military/world/azerbaijan/intro.htm>

² Գուցե ամենաուժեղն էր, բայց ոչ ամենամարտունակը: Բանակի և ազգի մարտունակության աներևույթ էության գնահատումը վեր է գուտ քանակական և տեխնիկական ասպեկտներով զբաղվող կառույցների ու վարկանիշային կազմակերպությունների ուժերից: Իսկ այդ աներևույթ էությունը մարդկության պատմությունը կերտող, թերևս, ամենակարևոր գործոնն է:

քան Հայաստանի ողջ պետական բյուջեն: Բայց մենք կանգ չենք առնի այստեղ: Մենք ծրագրում ենք էլ ավելի մեծացնել մեր ռազմական ծախսերը... Հակառակ Հայաստանի, մենք ծախսում ենք մեր իսկ փողերը: Մենք կախված չենք որևէ այլ երկրից, չունենք և չենք էլ պատրաստվում ունենալ պարտքեր այլ երկրներից»: *Եվրասիանեթ*-ի վերլուծաբանի կարծիքով՝ վերջին պարբերությունում Ալինն «անթաքույց ակնարկում է ՌԴ-ի հետ Հայաստանի ռազմավարական հարաբերությունները»:

Այս կապակցությամբ, նախ, նշենք, որ այդ պահին Ադրբեջանը, այնուամենայնիվ, արտաքին պարտք ուներ: Համաձայն ԱՄՆ ԿՀՎ-ի, այն կազմում էր \$3.22 մլրդ.¹: Աշխարհի 201 երկրներից այդ ժամանակ արտաքին պարտք չունեին միայն Պալաուն, Բրունեյը և Մակաոն:

Եվ հետո, համաձայն բազում հեղինակավոր աղբյուրների, օրինակ՝ Խաղաղության միջազգային ինստիտուտի ռազմավարական հետազոտությունների կենտրոնի տեղեկատուների [16], նախկին ԽՍՀՄ 4-րդ բանակի ժառանգությունն ու օժանդակությունն ստացած Ադրբեջանական Հանրապետության բանակը տարածաշրջանում քանակապես ամենամեծն էր և տեխնիկապես ամենահագեցածը դեռ 1991-93թթ.: Մակայն քանակական չափանիշները երբեք չպետք է խառնել որակականների հետ, և պատերազմի արդյունքները, կարծում եմ, քաջ հայտնի են թե՛ Ադրբեջանում և Հայաստանում, թե՛ Արցախում և աշխարհում:

Մյուս պարզաբանումը պահանջում է հակիրճ պատմական ակնարկ: Բանն այն է, որ Ի.Ալինի այս ելույթի կապակցությամբ պարզապես ստիպված ենք հիշել Ռուսինիայի երկարամյա դեկավար, «չմիացած երկրների» լիդերների լավ ընկեր Ն.Չաուշեսկուի հայտնի ելույթը 1978թ. Լոնդոն կատարած պատմական այցելության ժամանակ (վստահ եմ՝ այս ելույթը, Բրիտանիայի թագուհուց բացի, ուշադիր լսում էին նաև *BP* ընկերության ներկայացուցիչները): Ակնարկելով Պլոյեշտիի նավթադաշտերի ինտենսիվ արդյունահանումը՝ նա հպարտությամբ նշեց, որ Ռուսինիան արդեն ծախսում է իր սեփական փողերը և այլևս կախված չէ

¹ Տե՛ս նաև Գ. 3, Նկար 3.16:

որևէ այլ երկրից¹: «Մենք արդեն չունենք և չենք էլ պատրաստվում ունենալ պարտքեր այլ երկրներից», - ասում էր Չաուշեսկուն Բուքինհեմյան պալատում: Ի դեպ, այդ ժամանակ, այնուամենայնիվ, Ռումինիան բավական զգալի արտաքին պարտք ուներ: Այն հաջողվեց էապես իջեցնել միայն 1980-ականների վերջին՝ Չաուշեսկուի վարչակարգի տապալման նախօրեին: Կարծում եմ՝ արժե, որ Ադրբեջանն ավելի խոր ուսումնասիրի Պլոյեշտիի նավթադաշտերի դերը Երկրորդ համաշխարհային պատերազմում՝ մասնավորապես, և Ռումինիայի տնտեսական համակարգի զարթոնքի և անկման պատմությունը՝ ընդհանրապես:

Բայց, թերևս, ամենաէական վտանգը, երկարաժակետ հեռանկարում՝ ամենակործանարարը, սեփական ժողովրդին հայատյացության ոգով ինդոկտրինացնելն է [19]: Սեփական և կլանային իշխանությունն ամրապնդելու նպատակով հայատյացությունը որպես քաղաքական գործիք օգտագործելը, հարևանի նկատմամբ ատելություն սերմանելով՝ ռեպրեսիվ ճիրաններում քայքայվող հասարակարգին համախմբելու, սեփական երիտասարդության միտքը թունավորելու փորձերը սեփական ժողովրդի նկատմամբ ամենաստոր բանն են, որ կարող էր անել և անում է Ադրբեջանի ներկայիս իշխանությունը:

Ադրյուրներ և գրականություն

1. *Дэвенпорт Е.Г., Кук С.Р.*, Нефтяные тресты и англо-американские отношения, М.: «Военный вестник», 1925.
2. *Adams, T.*, 2000. Caspian Hydrocarbons, the Politicization of Regional Pipelines, and the Economic Destabilization of the South Caucasus. *Caucasian Regional Studies*, 5:1, 2.
3. *Մարջանյան Ա.*, Էներգետիկա և աշխարհաքաղաքականություն, «Նորավանք» ԳԿՀ, «21-րդ ԴԱԸ», թիվ 1 (1), 2003թ., էջ 13-55²:
4. *Մարջանյան Ա.*, Մենք և Թուրքիան. լրջանալու պահը, 14.06.2010, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=4853&sphrase_id=9337

¹ Եթե *Եվրասիաներթի* հիշյալ տեքստի երիտասարդ հեղինակն ավելի տարեց լիներ, այս կապակցությամբ կասեր, որ Չաուշեսկուն «բացահայտ ակնարկում էր ԽՍՀՄ-ը»:

² http://www.noravank.am/upload/pdf/240_am.pdf

5. *Марджанян А.*, Энергетическое будущее Южного Кавказа: Электроэнергетика. *Caucasica*, vol. 1, Москва, 2011, с. 317-337.
6. *Zbigniew B.*, The Grand Chessboard: American Primacy and its Geostrategic Imperatives. New York: Basic Books, 1997.
7. *Гусейнов В. и др.*, Большой Ближний Восток, М., «Олма Медиа Групп», 2007г.
8. *Марджанян А.*, Наше будущее - глазами НИС. НОФ «Нораванк», «21-й ВЕК», № 3 (11), 2009г., с. 3-38. *Մարջանյան Ա.*, Մեր ապագան՝ ՆԻՏ աչքերով, «Նորավանք» ԳԿՀ, «21-րդ ԴԱԸ», թիվ 2 (24), 2009թ., էջ 26-63:
9. *Khanna P.*, The Second World. 2008. *Ханна П.*, Второй Мир, М., Центр исследования постиндустриального общества, изд. «Европа», 2010.
10. *Մարջանյան Ա.*, RAND կորպորացիան և մենք. Հայաստան-Թուրքիա հարաբերությունները, «Նորավանք» ԳԿՀ, «21-րդ ԴԱԸ», #3, 2010թ., էջ 19-50: *Марджанян А.*, Корпорация RAND и мы: армяно-турецкие взаимоотношения, НОФ «Нораванк», «21-й ВЕК», № 2 (18), 2011, с. 15-43.
11. *Rasizade A.*, Azerbaijan's Chances in the Conflic. *Iran and the Caucasus*. BRILL, Leiden-Boston, vol. 16.1, 2012.
12. *Насирли, А.*, Доходы от нефти – не экономическое развитие. *Бизим йол* (Наш путь), 2010, Июль 17. http://analitika.at.ua/news/azerbajdzhanskie_ehksperty_dokhody_ot_nefti_ne_ehkonomicheskoe_razvi_tie/2010-07-17-30064
13. *Hübner, G.*, Foreign Direct Investment in Azerbaijan—the Quality of Quantity. *Caucasus Analytical Digest*. No. 28, 21 June, 2011.
14. *Арутюнян Г.*, Новая государственность и новые вызовы, НОФ «Нораванк», «21-й ВЕК», № 4 (20), 2011, с. 5-27.
15. *Վերանյան, Կ.*, Արդրեզան. խոցելի կայունություն, «Նորավանք» ԳԿՀ, Գորբուս. էներգետիկ և տարածաշրջանային անվտանգություն, 6(12), 2010, էջ 8-13:
16. International Institute for Strategic Studies. The Military BbalanceAarchive. <http://www.iiss.org/publications/military-balance/the-military-balance-archive/>
17. *Մարջանյան Ա.*, Հարավային Կովկասի ժողովրդագրությունը XXI դարի վերջին, «Նորավանք» ԳԿՀ, «21-րդ ԴԱԸ», թիվ 4(44), 2012թ., էջ 20-44¹: *Մարջանյան Ա.*, Ժողովրդագրական վիճակագրական տվյալները տեղեկատվական և հոգեբանական պատերազմում, «Նորավանք» ԳԿՀ, «Գորբուս» վերլուծական հանդես, թիվ 7, 2012²:
18. *Մարջանյան Ա.*, Ուժեղ պետություն է արդյոք Հայաստանի 3-րդ Հանրապետությունը, «Նորավանք» ԳԿՀ, «21-րդ ԴԱԸ», թիվ 3 (21), 2008թ., էջ 74-98³:
19. *Մարջանյան Ա.*, Ազգային անվտանգությունը գլոբալ աշխարհաքաղաքական փոփոխությունների դարաշրջանում, «Նորավանք» ԳԿՀ, «21-րդ ԴԱԸ», #1 (35), 2011թ., էջ 30-60:

¹ http://www.noravank.am/upload/pdf/2.%20Ara%20Marjanyan%2004_2012.pdf

² http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=6597&sphrase_id=25814

³ http://www.noravank.am/upload/pdf/352_am.pdf


ԳԼՈՒԽ 2. ԱՂԻՔԵԶԱՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱՎԹԱՅԻՆ ՈԼՈՐՏԸ

Հաշվի առնելով ԱՀ սոցիալ-տնտեսական համակարգի մոնոտնտեսական բնույթը՝ նպատակահարմար է այս երկրի սոցիալ-տնտեսական համակարգի մեր դիտարկումները սկսել նավթային ոլորտից՝ նախ ներկայացնելով ոլորտը բնութագրող ընդհանուր տեղեկություններ: Հաշվի առնելով այս ոլորտում Կասպից ծովի Ազերի-Չիրազ-Գյունեշլի (ԱՉԳ, *ACG*) նավթադաշտի բացառիկ կարևորությունը երկրի տնտեսական և այլ համակարգերի գործունեության համար՝ մենք այս նավթադաշտի արդյունահանման և հարակից հարցերը կդիտարկենք երկու առանձին բաժիններում (2.2, 2.3): Սույն գլխի վերջին բաժնում կանգ կառնենք ԱՀ նավթային ոլորտի կառուցվածքի վրա (2.4)՝ նշելով այստեղ առկա բնութագրական կառուցվածքային երկակիությունը:

2.1. Նավթային ոլորտ. ընդհանուր տվյալներ

Պաշարներ. Համաձայն *Oil and Gas Journal* հեղինակավոր ամսագրի վերջին համարի, 2012թ. հունվարի դրությամբ Ադրբեջանի հում նավթի ապացուցված պաշարները (*proved reserves*) կազմել են 7 մլրդ բարել [2]:

Այս գնահատականը կրկնում է բրիտանական *BP* ընկերության էներգետիկ վիճակագրական տեղեկատուների այն հայտնի պնդումը, որ Ադրբեջանի հում նավթի ապացուցված պաշարները չեն փոխվել 2002-ից ի վեր և կազմում են 7 մլրդ բարել [1] (Նկար 2.1, ձախ առանցք, ուր ի մի են բերվել բրիտանական *BP* ընկերության հայտնի տեղեկատուների տվյալներն Ադրբեջանի հում նավթի 1998-2011թթ. ապացուցված պաշարների վերաբերյալ):



Աղբյուրներ՝ [1, 2], սեփական գնահատականներ


ԱՀ հում նավթի ապացուցված պաշարների առյուծի բաժինն Ադրբեջանի ափերյա (*offshore*) նավթադաշտերինն է: Նկար 2.2-ում ներկայացված է Ադրբեջանի ածխաջրածինների դաշտերի քարտեզը, ուր նշված են այս դաշտերի արդյունահանման վերաբերյալ Արդյունքի բաժանման համաձայնագրերի (ԱԲՀ, *PSA*) կնքման տարեթվերը, շահագործող կոնսորցիումների անդամ ընկերություններն ու բաժնետոմսերի համամասնությունը (%): Ածխաջրածինների այլ դաշտերի քարտեզը բերվում է Հավելված 2-ում:

Հում նավթի ապացուցված պաշարների տեսանկյունից ամենահարուստը Կասպիցի ԱԶԳ նավթադաշտն է (Նկար 2.2-ում այն նշված է կանաչ գույնով, նույն նկարում կարմիրով նշված է Շահ Դենիզի բնական գազի և կոնդենսատի դաշտը): Դեռ ԽՍՀՄ տարիներին պեղված ԱԶԳ նավթադաշտն այսպես կոչված «գերդաշտ» է: Համաձայն մի շարք առավելապես շատ մեջբերվող աղբյուրների (տե՛ս, օրինակ, [1-5]), այն գտնվում է Բաքվից մոտ 120 կմ արևելք-հարավ-արևելք (տե՛ս Նկար 2.3): Ընդհանուր մակերեսը կազմում է 432.4 կմ², 100-400 մ ջրի խորությամբ: Հիմնական

նավթաբեր շերտերն ընկած են ծովի հատակից 2.5-3.0 կմ խորության վրա: 1990-ականների սկզբին մասնագետները հակված էին կարծելու, որ գործ ունեն 3-4 առանձին նավթադաշտերի հետ: Հետագա ուսումնասիրությունները հերքեցին այս տեսակետը, և ներկայումս այն դիտարկվում է որպես ածխաջրածինների միացյալ, այսպես կոչված, «գերդաշտ»:

Նկար 2.2

Կասպից ծովի ԱՀ նավթագազային դաշտերը, որոնց համար ստորագրված են ԱԲՀ-ներ: ԱԶԳ դիրքն աղավաղված է



Աղբյուրը՝ <http://www.offshore-technology.com/projects/acg/acg2.html>

Անմիջապես ընդգծենք, որ բաց աղբյուրներում և համացանցում հասանելի Կասպիցի նավթադաշտերի գրեթե բոլոր քարտեզներում ԱԶԳ դիրքը ներկայացված է աղավաղված, այն արհեստականորեն մոտեցված է Ադրբեյջանի ծովափին: Նույնը վերաբերում է «Բաքվից մոտ 120 կմ» հեռավորության գնահատականին: Բայց, օրինակ, թուրքմենական արտ-

գործնախարարության տվյալներով, այն գտնվում է ոչ թե 120, այլ 160 կմ հեռավորության վրա¹: Բանն այն է, որ ԱԶԳ դաշտն ինքնին ձգվում է արևելք-հարավ-արևելք ուղղությամբ՝ մոտ 100 կմ երկայնքով: Այնպես որ, Բաքվից մոտ 120 կմ հեռավորության վրա գտնվում է, լավագույն դեպքում, ԱԶԳ արևմտյան ծայրակետը (*SWG* կամ Գյունեշլի հատվածի արևմտյան սկզբնամասը, տե՛ս Նկար 2.3): Հարցը կապված է Կասպից ծովի սահմանագատման խնդրի հետ, որին կանդրադառնանք հաջորդ բաժնում:

Համաձայն *Գլոբալ սեքյուրիթի* կազմակերպության տվյալների [2], 2010թ. Ադրբեջանում ԱԶԳ-ից էր արդյունահանվել այդ տարի հում նավթի ընդհանուր ծավալի 80%-ից ավելին: Անցած տարիներին այս համամասնությունն ընդհանուր առմամբ պահպանվել է: Համաձայն *Statoil* ընկերության տվյալների [3]², 1994թ. կնքված, ԱԲՀ-ի կողմից սահմանված տարածքում և համաձայնագրի գործունեության ժամանակահատվածում (1994-2024թթ.) ԱԶԳ նավթի հասանելի պաշարները (*recoverable reserves*) գնահատվում են 5.4 մլրդ բարել, այսինքն՝ ԱՀ ապացուցված պաշարների 77%-ը: Ընդ որում, համաձայն նույն աղբյուրի, 2009թ. վերջի դրությամբ այստեղից արդեն արդյունահանվել էր 1.4 մլրդ բարել նավթ, այսինքն՝ ԱԶԳ հասանելի պաշարների 26%-ը³:

Այս գնահատականներն ընդհանուր առմամբ հաստատվում են նաև *Wikileaks* կայքի հրապարակած՝ ԱՀ-ում ԱՄՆ դեսպանության հաղորդագրությունների տվյալներով: Սակայն վերջիններս պարունակում են նաև ուշագրավ մի հանգամանք: Այսպես, 2007թ. ապրիլի 27-ով թվագրված *07 BAKU 522* հաղորդագրությունից (տե՛ս Հավելված 1, Թիվ 3, 8.C)


¹ *Зонн И.С.*, Каспийская энциклопедия, М., Международные отношения, 2004, с. 28.

² Հրապարակված է 2007-08-30, վերանայված՝ 2011-01-18: Ցավոք, մեր ձեռքի տակ չկա *Statoil* ընկերության 2007թ. օգոստոսի 30-ի սկզբնական հրապարակումը:

³ Համաձայն նույն աղբյուրների, մինչև արդյունահանման մեկնարկը ԱԶԳ նախնական տեսական պաշարը (*Stock Tank Original Oil In Place, STOOIP*) գնահատված էր 17.4 մլրդ բարել, ինչն այն դարձնում էր աշխարհի ամենահարուստ նավթադաշտերից մեկը [3]: ԱԶԳ նավթադաշտի *տեսական* պաշարների այս գնահատականը հայրենական բազմաթիվ հրապարակումներում առաջ էր բերել որոշակի շփոթ և հանգեցրել ոչ համարժեք եզրակացությունների: Ինչպես տեսնում ենք, տեղի է ունեցել ապացուցված պաշարների (7 մլրդ) գերազանահատում 2.5 անգամ:

Նկար 2.3

ԱԶԳ նավթադաշտը: Պատկերված են նաև ԱԶԳ առանձին հատվածները՝ ըստ դրանց արդյունահանման փուլերի (Ազերի, Azeri, phase 1 and 2; Գյունեշլի, Gunashli, phase 3, Չիրագ, Chirag, COP, տե՛ս ստորև): Կարմիր աստղով պատկերված է 3-րդ փուլի «Խորջրյա Գյունեշլի» կայանքը (ավելի մանրամասն տե՛ս Հավելված 4)



տեղեկանում ենք, որ ըստ ԱՀ էներգետիկայի և արդյունաբերության նախարար Նաթիգ Ալինի, *BP* ընկերությունը 2007թ. վերանայել է ԱԶԳ նավթադաշտի պաշարները՝ դրանք բարձրացնելով նախկին 2.4 մլրդ բարելից մինչև 9 մլրդ-ի: Ընդ որում, մեջբերում ենք. «*BP*-ն ակնկալում է, որ մինչև գործող ԱԲՀ ժամկետի ավարտը (2024թ.) կարող է արդյունահանվել միայն այս ծավալի 60-70%-ը, և դաշտում դրանից հետո կմնա մոտ 2 մլրդ բարել անարդյունահանելի նավթ»: Դժվար չէ հաշվարկել, որ ըստ այս հաղորդագրության՝ ԱԶԳ արդյունահանելի նավթի պաշարները գնահատված են 5.4-6.3 մլրդ բարել, և որ ԱԶԳ դաշտում կմնա ոչ թե «մոտ 2 մլրդ», այլ 2.7-3.6 մլրդ բարել անարդյունահանելի նավթ:

Այստեղ ուշագրավ է երկու հանգամանք: Նախ այն, որ *BP* ընկերության կողմից 2007թ. իրականացված ԱԶԳ նավթադաշտի պաշարների այսչափ էական վերանայումը՝ ավելացում գրեթե չորս անգամ, ոչ մի կերպ չարտացոլվեց ԱՀ նավթի ապացուցված պաշարների գնահատականների վրա ոչ այդ, ոչ էլ հաջորդ տարիներին [1]: Ինչպես նշել էինք վերը, դեռ 2002 թվականից ԱՀ նավթի ողջ ապացուցված պաշարները *BP* ընկերության տարեկան տեղեկագրերում գնահատված էին 7 մլրդ բարել: Այդ ցուցանիշը մնում է անփոփոխ մինչև օրս (տե՛ս Նկար 2.1): Այստեղից կարելի է բխեցնել երկու հետևություն: Կամ *BP* ընկերության՝ ԱՀ նավթի ողջ ապացուցված պաշարների 2002-07թթ. գնահատականները կրում էին ուռճացված բնույթ և քիչ թե շատ հիմնավորվեցին միայն 2007թ.՝ ԱԶԳ նավթադաշտի արդյունահանելի պաշարների վերանայումից հետո, կամ 2007թ. ԱԶԳ արդյունահանելի պաշարների վերանայումն իրականացված էր այնպես, որ համապատասխանի ԱՀ նավթի ապացուցված պաշարների դեռ 2002թ. տրված գնահատականին:

Նետաքրքրական է նաև, որ *Statoil* ընկերության 2011թ. հունվարի 18-ի ԱԶԳ արդյունահանելի նավթի պաշարների վերը նշված գնահատականը (5.4 մլրդ բարել) համապատասխանում է 2007թ. ապրիլի 27-ի *07 BAKU 522* հաղորդագրությունում բերվող գնահատականների տիրույթի (5.4-6.3 մլրդ բարել) ստորին արժեքին: Այս հանգամանքը, ինչպես նաև

ստորև բերվող դիտարկումները կարծես թե ամրապնդում են մեր առաջին եզրահանգումը:

Համաձայն մասնագիտական բազմաթիվ գնահատականների, ԱԶԳ հասանելի պաշարներն արդյունաբերական մասշտաբների արդյունահանման համար կսպառվեն 2018-20թթ. ժամանակահատվածում: Այս առումով առավել հաճախակի նշվում է 2018-19թթ.: Սակայն մինչ այդ տեղի կունենա ԱԶԳ նավթի շահույթների էական նվազում (տե՛ս ստորև):

Սպառում. Համաձայն *BP* ընկերության տեղեկագրերի [1], հում նավթի սպառումն ԱՀ-ում 1998-2011թթ. չի գերազանցել 125 հազ. բ/օր ցուցանիշը (տե՛ս Նկար 2.1): Ընդ որում, 2001-2011թթ. ժամանակահատվածում այն իջնում է մինչև օրական միջինը 85 հազ. բարել ցուցանիշը, ինչն արտացոլում է Ադրբեջանի որդեգրած քաղաքականությունը՝ հնարավորինս իջեցնել հում նավթի սեփական սպառումը և առավելագույնի հասցնել արտահանման ծավալները: *BP* ընկերության և ԱՄՆ էներգետիկայի դեպարտամենտի մասնագետների կանխատեսումներով [1, 4]՝ այս ցուցանիշը կպահպանվի առաջիկա 2-3 տարիներին: Նկար 2.1-ում ներկայացված է ԱՀ-ում նավթի սպառման կորն ըստ փաստացի տվյալների (1998-2011թթ.) և ըստ նշված աղբյուրների կանխատեսումների (2012-2013թթ.):

Մշակում. 2012թ. հունվարի դրությամբ Ադրբեջանի նավթամշակման կարողությունները կազմում են 399 հազար բ/օր: Գործում է նավթամշակման երկու գործարան. Բաքվի նավթամշակման գործարանը՝ օրական 239 բարել հզորությամբ և Նոր Բաքվի (*New Baku*) նավթամշակման գործարանը՝ օրական 160 բարել հզորությամբ: Համաձայն ԱՄՆ կառավարության *EIA* գործակալության գնահատականների [4], երկու գործարանն էլ ունեն արդիականացման կարիք, ինչը կպահանջի \$600-700 մլն ներդրումներ:

Արդյունահանում. Ադրբեջանում հում նավթի արդյունահանման մասին տվյալները մի փոքր հակասական են: Նկար 2.1-ում բերվում է հում նավթի արդյունահանման կորը՝ կառուցված *BP* ընկերության վա-

ռելիքաէներգետիկ վիճակագրական տվյալների տեղեկագրերի հիման վրա [1]:

Ինչպես տեսնում ենք այս նկարից, 1998-2004թթ. ժամանակահատվածում՝ ԱԶԳ դաշտի «վաղ նավթի» արդյունահանման փուլում, այն դանդաղորեն աճում էր 1998թ. օրական միջինը 230 հազ. բարելից մինչև 2004թ. 315 հազ. բ/օր ցուցանիշը: 2005-ից, ԱԶԳ «հիմնական նավթի» եռափուլ համալիր ծրագրի մեկնարկից և Բաքու-Թբիլիսի-Ջեյհան (ԲԹՁ) նավթամուղի հիմնական ռեժիմով շահագործման մեկնարկից հետո (2006թ. հուլիս), հում նավթի արդյունահանումը սկսում է ինտենսիվորեն աճել: 2010թ. այն հասնում է օրական 1.037 մլն բարել ցուցանիշին [4]: Համաձայն *Statoil* ընկերության տվյալների [3], 2010թ. ԱՀ-ում արդյունահանված նավթի այս ընդհանուր ցուցանիշից օրական 830 հազ. բարել (80%) արդյունահանվել է ԱԶԳ-ից: Այս նավթադաշտից արդյունահանված նավթը (և հարակից գազի որոշակի բաժինը) երեք՝ 30 դյույմ և մեկ՝ 28 դյույմ տրամաչափի ստորջրյա խողովակաշարերով մղվում է դեպի Բաքվից 55 կմ հարավ գտնվող և 540 հեկտար մակերես զբաղեցնող Սանգաչալի նավթագազային տերմինալ: Այն ԲԹՁ նավթատար և Բաքու-Թբիլիսի-Էրզրում (ԲԹԷ) գազատար խողովակաշարերի գլխավոր հանգույցն է և Կասպիցի ավեզրյա ածխաջրածինների արդյունահանման համալիրի կարևոր բաղկացուցիչ: Սանգաչալի տերմինալը կարող է նաև նավթային լցանավեր (տանկերներ) ընդունել (օրինակ՝ Ղազախստանից) և դրանցով հասցված նավթը մղել խողովակաշար:

ԱՀ-ում հում նավթի արդյունահանման մասին վերը բերված տվյալների առնչությամբ անհրաժեշտ են որոշ մեկնաբանություններ: Նախ, 2004-08թթ. ընթացքում պաշտոնական Բաքվի բազմաթիվ հայտարարություններում, ինչպես նաև ԱԶԳ նավթադաշտը շահագործող կոնսորցիումի ղեկավար *BP* ընկերության պաշտոնական հայտարարություններում ծրագրվում էր, որ 2010-11թթ. Ադրբեջանում հում նավթի արդյունահանումը կգերազանցի օրական 1.2 մլն բարել ցուցանիշը: Այսպես, համաձայն *BP* ընկերության 2007թ. պաշտոնական հաշվետվության [5], նա-

խատեսվում էր, որ միայն ԱԶԳ-ից արդյունահանված և միայն Սանգաչալի տերմինալ մղված նավթի ծավալները 2010թ. կկազմեն օրական միջինը 1.244 մլն բարել: *BP* նշված հաշվետվությունից Նկար 2.4-ում պատկերել ենք համապատասխան նկարը ([5, *Figure 5.1*, p. 5.2], տե՛ս կանաչ կորը և աջ առանցքը): Ինչպես տեսնում ենք, այս նկարում բերված հատուկ գրությունն ընդգծում է ԱԶԳ-ից 2010թ. պիկային՝ 1.244 մլն բարել նավթի արդյունահանման ցուցանիշը (Նկար 2.4-ում՝ 1244 mbd)¹:


Մինչդեռ, համաձայն նույն *BP* ընկերության վիճակագրական տեղեկագրերի [1], ինչպես նաև այլ հեղինակավոր կազմակերպությունների գնահատականների, 2010թ. Ադրբեջանում հում նավթի ողջ արդյունահանումը (ոչ միայն ԱԶԳ-ից) կազմել էր ընդամենը օրական միջինը 1.037 մլն բարել (Նկար 2.1): Այսինքն՝ օրական առնվազն մոտ 200 հազ. բարել ավելի քիչ, քան դա ծրագրված էր *BP* և *AIOC* ընկերությունների կողմից 2007թ. միայն ԱԶԳ-ի համար:

Համաձայն Գլոբալ էներգետիկ հետազոտությունների կենտրոնի (ԳԷՀԿ, *Centre for Global Energy Studies, CGES*) 2010թ. մարտին հրապարակված տվյալների², 2009թ. ԱԶԳ-ից օրական արդյունահանվել էր 820 հազ. բարել: Իսկ համաձայն *BP* ընկերության 2011թ. մարտի 2-ի հայտարարության, նախորդ՝ 2010թ. ԱԶԳ-ից օրական արդյունահանվել է 823 հազ. բարել: Այս ցուցանիշները ոչ միայն զգալիորեն փոքր են Նկար 2.4-ում բերված *BP* 2006-07թթ. նախնական գնահատականներից, այլև նկատելիորեն զիջում են *BP* ավելի ուշ վերանայված ցուցանիշներին՝ 0.95 և

¹ mbd – հազ. բ/օր: *BP* մեզ համար անսովոր այս հապավումը որոշակի շփոթ առաջացրեց որոշ ադրբեջանցի, հայրենական և այլ մեկնաբանների շրջանում: Պարզության համար Նկար 2.4-ում, առանձին լուսամուտում բերում ենք *BP* 2007թ. հիշյալ հաշվետվության համապատասխան հապավումները ([5, p. xxii]): Նկար 2.4-ում բերվող այլ մանրամասներ (կարմիր կորը և ձախ առանցքը) անմիջականորեն չեն առնչվում մեր նյութին և վերաբերում են Սանգաչալի տերմինալից ստացվող արտադրական ջրի՝ դեպի ԱԶԳ դաշտ հետմղման ծրագրին: Օգտագործված ջրի այսպիսի հետմղումը նախ ապահովում է նավթի արդյունահանման համար անհրաժեշտ դաշտի ներքին ճնշումը, երկրորդ՝ ապահովում է աղտոտված ջրի բնապահպանական հեռացումը տերմինալից:

² <http://www.cges.co.uk/resources/articles/2010/03/16/azerbaijan-launches-the-next-phase-of-its-oil-development>

1.0 մլն բ/օր՝ համապատասխանաբար 2009թ. և 2010թ. համար: Ավելին, 2010թ. ցուցանիշը (օրական 0.82 մլն բարել) նույնիսկ ավելի փոքր էր, քան այդ տարվա սկզբին *BP* ընկերության հերթական վերանայված ցուցանիշը՝ 0.854 մլն բ/օր¹:



Աղբյուրը՝ *BP* ընկերություն [5]

Վերջապես, համաձայն *Ռոյթըրս* գործակալության², 2011թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին ԱԶԳ-ից արդյունահանված նավթի ծավալները կազմել էին օրական 757 հազ. բարել, ինչը 9.3%-ով ավելի քիչ է, քան նախորդ տարվա նույն ժամանակահատվածում արտադրված 835 հազ. բ/օր ցուցանիշը: Հղում կատարելով պաշտոնական Բաքվի հայտարարություններին՝ *Ռոյթըրս* գործակալությունը 2011թ. սեպտեմբերի 27-ին տեղեկացրեց³, որ վերանայվել են 2011թ. համար Ադրբեջանում պլանավորված նավթի արդյունահանման ցուցանիշները. դրանք իջեցվեցին

¹ <http://www.epcengineer.com/news/post/3838/bps-azeri-chirag-gunashli-produced-823100-bblday-in-2010>

² <http://af.reuters.com/article/energyOilNews/idAFL5E7MN31Z20111123>

³ <http://uk.reuters.com/article/2011/09/27/oil-azerbaijan-suspension-idUKL5E7KR2NF20110927>

օրական 100 հազ. բարել չափով և կազմեցին 900 հազ. բ/օր ողջ 2011թ. համար: Պատկերավորության համար Նկար 2.4-ում 2008-11թթ. համար կարմիր կետերով նշվում են վերը բերված՝ ԱԶԳ-ից նավթի արդյունահանման իրական ցուցանիշները: Այսպիսով, կարելի է փաստել, որ խափանված է ԱԶԳ-ից հում նավթի արդյունահանման *BP/AIOC* պլանավորված ցուցանիշների իրացումը:

Նկատենք նաև, որ 2011թ. համար Ադրբեջանում նավթի արդյունահանման անկում է արձանագրում նաև ԱՄՆ Էներգետիկայի դեպարտամենտի (*DOE*) Էներգետիկ տեղեկատվության վարչությունը (*EIA*): Համաձայն այս աղբյուրի 2012թ. հունվարի հաշվետվության [4], Ադրբեջանում երկար սպասված 1.1-1.2 մլն բարել միջին օրական պիկային արտադրությունը կգրանցվի 2012-ին և կպահպանվի կամ թերթևակի կնվազի հաջորդ՝ 2013թ. (տե՛ս Նկար 2.1): Ամենայն հարգանք տաճելով հիշյալ աղբյուրի նկատմամբ՝ կարծում ենք, սակայն, որ նման կանխատեսումներն ավելորդ լավատեսական են: Բանն այն չէ միայն, որ *Ռոյթթրս* գործակալության 2011թ. սեպտեմբերի 28-ի տեղեկատվության համաձայն¹, անգամ ադրբեջանական *SOCAR* պետական նավթային ընկերությանը մոտ կանգնած աղբյուրը հայտարարել էր, որ նավթի արդյունահանման բարձրակետն (պիկը) Ադրբեջանում ամենայն հավանականությամբ կարձանագրվի միայն 2013թ.: Բանն այն է, որ ըստ մեր գնահատականների, Ադրբեջանում 2004-07թթ. պլանավորվող ցուցանիշներից առնվազն 400 հազ. բ/օր ավելի քիչ ծավալի արդյունահանումը վկայում է ԱԶԳ շահագործման և այդ նավթի ԲԹՋ նավթամուղով արտահանման ողջ համալիր ծրագրի համակարգային արատի մասին:

Մենք այս եզրահանգումն արել ենք 2011թ. վերջին, հրապարակել 2012թ. փետրվարին [6]²: Ավելի վաղ, քան ԱՀ Վիճակագրական պետական կոմիտեն, փորձելով «փրկել իրադրությունը», 2012թ. ապրիլի 23-ին կհայտարարեր, թե «Ադրբեջանում հում նավթի արդյունահանման ծա-

¹ <http://uk.reuters.com/article/2011/09/28/azerbaijan-oil-idUKL5E7KS6FP20110928>

² Տպագիր հրապարակումը՝ էլ ավելի ուշ, տե՛ս *Մարջանյան Ա.*, Ադրբեջանական Հանրապետության նավթային ոլորտը, «Նորավանք» ԳԿՀ, Գլոբուս, 5(26), 2012:

վալների անկումը կրում է պլանավորված բնույթ և հեռու գնացող մտածված ռազմավարության հետևանք է»¹: Ավելի ուշ, *BP* ընկերությունն ըստ էության հերքեց այս տեղեկությունը՝ հայտնելով, որ ամեննին էլ նպատակ չուներ իջեցնել ԱԶԳ-ում նավթի արդյունահանման մակարդակը՝ ոչ 2011-ին, ոչ էլ 2012-ին: Եվ միայն 2012թ. հոկտեմբերի 10-ին ԱՀ նախագահ Ի.Ալիևը մեղադրեց *BP* ընկերությանը և նրա կողմից ղեկավարվող կոնսորցիումին՝ հայտարարելով, որ «կոնսորցիումի կոպիտ սխալների հետևանքով էականորեն նվազել են ԱԶԳ նավթարդյունահանման ծավալները»²: Ինչպես կտեսնենք ստորև, սա Ի.Ալիևի այս կարգի «աղմկոտ» առաջին հայտարարությունը չէ, որն ունի մեկ նպատակ՝ «Ալիևյան դոկտրինի» իմանենտ արատները բարդել այլոց վրա:

Արտահանում. 2010թ. Ադրբեջանից հում նավթի արտահանումները կազմել են մոտ 777 հազ. բ/օր: Համաձայն մի շարք լրատվամիջոցների գնահատականների, այս ցուցանիշը մոտ 8%-ով ցածր է նախորդ տարվա ցուցանիշից: 2011-ին նույնպես նախորդ տարվա համեմատ արձանագրվել է համադրելի անկում: ԱՀ-ից նավթի արտահանումն իրականացվում է հիմնականում երեք խողովակաշարերով:

Հիմնական ծավալները՝ մոտ 80%, բաժին են ընկնում ԲԹՁ նավթամուղին, որը Կասպից ծովի Սանգաչալի տերմինալը միացնում է Թուրքիայի Միջերկրական ծովի Ջեյհան նավահանգստի տերմինալին: Այն հիմնականում մղում է ԱԶԳ-ից արդյունահանված նավթը և շահագործվում է *BP* ընկերության կողմից ղեկավարվող կոնսորցիումով³: Թուրքական հատվածի օպերատորը *BOTAS International* ընկերությունն է: 2008թ. ԲԹՁ նավթամուղով տեղափոխվում էր նաև Թենգիզի դաշտից արդյունահանված դազախական նավթը, որը լցանավերով հասցվում էր Սանգաչալի տերմինալ: 2010թ. հուլիսից այս նավթատարով տեղափոխվում է նաև թուրքմենական նավթը: *BP* ընկերությանն է պատկանում

¹ <http://vestikavkaza.ru/news/ekonomika/neft/56571.html>

² <http://www.trend.az/news/politics/2075446.html>

³ *BP* (30.1%), Ադրբեջանական պետական *Sokar* ընկերությունը (25%), *Chevron* (8.9%), *Stat-oil* (8.71%), *TPAO* (6.53%), *ENI* և *Total* (5%-ական), *Itochu* (3.4%), *ConocoPhillips* և *Inpex* (2.5%-ական), *Amerada Hess* (2.36%).

ԲԹՋ նավթամուղի ընդհանուր ներդրումների (մոտ \$4 մլրդ) առյուծի բաժինը (2.6 մլրդ \$ուստ սթերլինգ)¹:

Սկզբում *BP* ընկերությունը դեմ էր ԲԹՋ ծրագրի իրականացմանը՝ այն արդարացված համարելով, եթե ԱԶԳ-ից նավթի արդյունահանումը հասնի օրական մեկ մլն բարել մակարդակի: Մակայն 1998թ. դեկտեմբերին ամերիկյան *AMOCO* ընկերության հետ միաձուլումից հետո, որի հետևանքով *BP*-ի համար բացվեց ԱՄՆ նավթային շուկան, ներառյալ՝ Մեքսիկական ծոցի ավեգրյա դաշտերը, *BP*-ն, տեղի տալով «Ալիևի դոկտրինի» տրամաբանությանը և ԱՄՆ ճնշմանը, համաձայնեց ԲԹՋ ծրագրի իրականացմանը (տե՛ս Գ. 1): ԲԹՋ իրագործմանը հետևողականորեն դեմ էր ԱԶԳ շահագործումն իրականացնող *AIOC* կոնսորցիումի *BP* գործընկեր, ամերիկյան *Exxon* ընկերությունը՝ այս ծրագիրն ավելի շատ աշխարհաքաղաքական *նախագիծ*, քան իրականում տնտեսապես շահավետ բիզնես-նախագիծ համարելով: Արդյունքում՝ այս ընկերությունը չմասնակցեց ԲԹՋ նավթատարի ծրագրի իրականացմանը:

ԲԹՋ նավթամուղը հիմնական ռեժիմով աշխատանքները սկսել էր 2006թ. հուլիսից: Նավթամուղի նոմինալ տարողունակությունը կազմում է 1.0 մլն բ/օր, որը կարող է բարձրացվել մինչև 1.2 մլն-ի: Իրականում, սակայն, ԲԹՋ-ն աշխատել է իր նոմինալ տարողունակությունից զգալիորեն ավելի ցածր մակարդակով: Այսպես, 2008թ. ԲԹՋ միջին օրական թողունակությունը կազմել էր 0.653 մլն բ/օր: 2011թ. այս նավթատարով տեղափոխվել է մոտ 32.2 մլն տ նավթ, ինչը 13% ավելի քիչ է նախորդ տարվա ցուցանիշից: Համաձայն *BP* ընկերության տվյալների [1], 2006թ. կեսից մինչև 2011թ. վերջը ԲԹՋ-ով տեղափոխվել է 1.13 մլրդ բարել: Դժվար չէ հաշվարկել, որ 2006թ. հուլիսից մինչև 2011թ. վերջը ԲԹՋ-ն աշխատել է իր նոմինալ (մոտ 2.0 մլրդ բարել՝ 2000 օրում) բեռնման միայն 56%-ով:

Նավթատարի աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով 2010թ. հուլիսին Ադրբեջանի և Թուրքմենստանի միջև հա-

¹ <http://www.guardian.co.uk/world/2010/dec/15/wikileaks-azerbaijan-bp-oil-10bn?intcmp=239>

մաձայնագիր կնքվեց ԲԹՁ-ով թուրքմենական նավթի տեղափոխման համար: 2012թ. փետրվարի 1-ի դրությամբ ԲԹՁ-ով տեղափոխվել է մոտ 4.4 մլն տ թուրքմենական նավթ, որից մոտ 2 մլն-ը՝ 2011թ. ընթացքում: 2011թ. մարտին հայտարարվեց, որ ԲԹՁ թուրքական *BOTAS International* օպերատորը նավթամուղի մեկնարկի պահից արձանագրել է \$31 մլն կորուստ՝ նավթամուղի թերբեռնման հետևանքով: Ակնկալվում է, որ ԲԹՁ ծրագրի գործունեության ավարտին (2045թ.) միայն այս ընկերության կորուստը կկազմի \$2 մլրդ:

Հաջորդ նավթատարը Բաքու-Նովոռոսիյսկ 100 հազ. բ/օր նումինալ թողունակությամբ խողովակաշարն է: 2010թ. այս խողովակաշարով արտահանման ռեժիմը կազմել էր 45.5 հազ. բ/օր, 2008թ.՝ մոտ 29 հազար: 2011թ. այս նավթամուղով տեղափոխվել էր մոտ 2 մլն տ նավթ, ինչը 11.3%-ով ավելի քիչ էր 2010թ. ցուցանիշից: Հիշեցնենք, որ դեռ 1996թ. ստորագրված ռուս-ադրբեջանական համաձայնագրով նախատեսվում էր, որ Բաքու-Նովոռոսիյսկ խողովակաշարով պետք է տեղափոխվի 5 մլն տ նավթ տարեկան՝ \$15.67/տ տրանզիտային սակագնով: 2011թ. երկրորդ կեսին արձանագրվել էր *SOCAR* և *Транснефть* ընկերությունների միջև բանավեճը՝ տրանսպորտային սակագների և տեղափոխվող նավթի ծավալների վերաբերյալ: Ռուսական կողմը, մասնավորապես, պահանջում էր կամ ավելացնել նավթատարի թողունակությունը, կամ վերանայել քվոտաները (տրամադրել 3 մլն տ նավթ տարեկան քվոտա ռուսական «*Лукойл*» ընկերությանը):

Երրորդ նավթատարը 145 հազ. բ/օր նումինալ թողունակությամբ Բաքու-Սուփսա (Վրաստան) խողովակաշարն է: Համաձայն *Գլոբալ սեքյուրիթի* ընկերության տվյալների, ադրբեջանական վաղ նավթը սպասարկող Բաքու-Սուփսա նավթամուղը շահագործվում է *Exxon* ընկերության կողմից: Թեև այն *BP*-ի կողմից դեկավարվող *AIOC* ընկերության անդամ է, որը շահագործում է ԱԶԳ դաշտը, սակայն *Exxon*-ը ԲԹՁ նավթամուղը շահագործող կոնսորցիումի անդամ չէ: Նավթատարը դադարի վիճակում էր 2006թ. հոկտեմբերից մինչև 2008թ. նոյեմբերը:

2008թ. տեղափոխումների թողունակությունը կազմել է ընդամենը 13 հազար բ/օր: 2009թ. հունվար-օգոստոս ժամանակահատվածում այս խողովակաշարի թողունակությունը կազմել է 55 հազար բ/օր: 2011թ. այս խողովակաշարով տեղափոխվել էր մոտ 2.652 մլն տ նավթ, ինչը 187 հազար տոննայով ավելի քիչ է նախորդ տարվա ցուցանիշից:

Վերջապես, Ադրբեջանից արտահանվող նավթի ծավալների մոտ 5%-ը բաժին է ընկնում երկաթուղուն և ավտոտրանսպորտին:

2.2. Ազերի-Չիրազ-Գյունեշլի նավթաղաշար

ԱԶԳ նավթաղաշար՝ ո՞ւմն է այն.

Կասպից ծովի սահմանազատման խնդիրը

Հարցը կարող է ուշացած թվալ: Իրոք, այսօր այն պատկանում է Ադրբեջանին և կազմում է այս երկրի նավթային արդյունաբերության, հետևաբար և ողջ երկրի հենքը: Այս հարցը կապված է Կասպից ծովի սահմանազատման բարդ ու հետաքրքիր խնդրին, և ուսանելի է պատկերացում կազմել, թե ինչու ԱԶԳ-ն, այնուամենայնիվ, այսօր համարվում է Ադրբեջանին «պատկանող», քանի որ այս հարցը վեր է հանում «Ալիևի դոկտրինի» բնույթն ու անմիջականորեն աղերավում է Լեռնային Ղարաբաղի խնդրին և հրադադարի մասին Բիշքեկյան արձանագրության տրամաբանությանը: Ընդհանրապես, Կասպիցի սահմանազատման խրթին թնջուկն ամենևին էլ լուծված չէ, ինչպես կուզեին կարծել Բաքվում, և ինչպես համարում են Համաշխարհային տնտեսական ֆորումի փորձագետները (տե՛ս Գ. 1): Հավելված 3-ում ներկայացվում են այս խնդրի հակիրճ նկարագրությունը, Կասպիցի վիճահարույց նավթաղաշտերի մասին տվյալները, ինչպես նաև Կասպիցի «միջնագծային» սահմանազատման հետ կապված Բաքվի զեղծարարությունները, որոնք ԱՄՆ, ՄԹ և այլ երկրների հովանավորությամբ հանգեցրին Ադրբեջանի կողմից ԱԶԳ նավթաղաշտի զավթմանը 1990-ականների սկզբին, և Արագ-Ալով-Շարգ ու Սերդար/Քյափազ նավթաղաշտի զավթման փորձերին՝ ներկայումս: Բացի այդ, Կասպիցի «միջնագծային» սահմանազատման դեպ-

քի համար մեր կողմից առաջարկված է Շտեյների կետերի օգտագործումը, որն առավել հստակ ցույց է տալիս Արագ-Ալով-Շարգ և Կասպիցի հարավային հատվածի այլ դաշտերի նկատմամբ Իրանի, ինչպես նաև Սերդար նավթադաշտի նկատմամբ Թուքմենստանի հավակնությունների հիմնավորությունը: Իսկ այստեղ բավարարվենք միայն հետևյալ եզրահանգումներով.

1. Առ այսօր՝ 2013թ., Կասպից ծովի կարգավիճակը սահմանող և միջազգային իրավունքի տեսանկյունից միակ վավեր փաստաթղթերը հանդիսանում են 1921, 1935 և 1940թթ. պայմանագրերը ՌԽՖՍՀ-ի (ԽՍՀՄ) և Պարսկաստանի միջև: Նշված բոլոր պայմանագրերը չեն սահմանում Կասպիցը ԽՍՀՄ-ի և Պարսկաստանի միջև զատող որևէ պետական սահման: Ավելին, դրանք բոլորն ընդգծում են երկկողմ նավարկության համար Կասպիցի բացությունը (և «փակ լինելը» երրորդ կողմերի համար), իսկ տնտեսական գործունեության համար նախատեսում են միայն 10 մղոնանոց ավեզրյա տարածք: Աստարա - Հասան կուլի վարչական սահմանագիծը ԽՍՀՄ-ը սահմանել է 1935-ին՝ Ներքին գործերի ժողկոմատի (*НКВД СССР*) գաղտնի ներգերատեսչական ակտով (Նկար 2.5): Հասկանալի է, որ այն որևէ կերպ միջազգայնորեն ճանաչված պետական սահման չի հանդիսանում:
2. ԽՍՀՄ-ը առնվազն երեք անգամ խախտել է հիշյալ միջպետական պայմանագրերի հիմնարար դրույթները. 1940-ականներին՝ Ադր. ԽՍՀ-ում ավեզրյա 10 մղոնանոց տարածքից դուրս հորատումների անցկացումով, 1982-ին՝ ԽՍՀՄ Սահմանների մասին օրենքի ընդունումով և 1990-ին՝ Կասպիցի ավեզրյա 10 մղոնանոց տարածքից դուրս նավթարդյունահանմանն ուղղված ծրագրերում երրորդ երկրներին հրավիրելով:

Նկար 2.5

Կասպիցի ալիկյան սահմանազատումը: ԽՍՀՄ Նավթարդյունաբերության նախարարության 1970թ. աղավաղված քարտեզը (մանրամասների համար տե՛ս Հավելված 3)




Աղբյուրը՝ [7]:

3. Հիմնվելով ԽՍՀՄ Նավթարդյունաբերության նախարարության 1970թ. աղավաղված քարտեզի վրա՝ 1989-1990թթ. Ադրբեջանը միակողմանի զավթել է ԱԶԳ նավթադաշտը և Հարավային Կասպիցի նավթագազային այլ դաշտեր (տե՛ս Նկար 2.5): Հասկանալի է, որ ԽՍՀՄ Նավթարդյունաբերության նախարարության 1970թ. քարտեզը որևէ կերպ չի հանդիսանում միջազգայնորեն ճանաչված պետական սահմաններ հաստատող փաստաթուղթ, ինչպես փորձում են դա ներկայացնել հայր և որդի Ալիևները [7] կամ նրանց սատարող և Իրանը շրջափակման մեջ պահել ցանկացող ԱՄՆ հրեական *լոբբինգ* որոշ վերլուծաբաններ [8]: Առ այսօր Ադրբեջանը միակ մերձկասպյան պետությունն է, որն իր կողմից զավթված Կասպիցի տարածքը սահմանադրորեն հայտարարել է սեփական ազգային տարածք (ԱՀ Սահմանադրություն, հոդված 11, կետ 5):
4. ԱԶԳ նավթադաշտի զավթումն ընկած է «Ալիևի դոկտրինի» հիմքում, որն էլ մեծապես խրախուսվում էր ԱՄՆ, ՄԹ, Իսրայելի, Վրաստանի և մասնակիորեն՝ ՌԴ-ի ու ԵՄ-ի կողմից (տե՛ս [7] և Հավելված 3): ԱՀ օրենսդրական մի շարք նախաձեռնություններով և 1994թ. սեպտեմբերյան «դարի պայմանագրի» ստորագրումով ավարտվեցին ԱԶԳ նավթադաշտի միակողմանի զավթումը և օկուպացիան Ադրբեջանի կողմից: Այն կոպիտ կերպով խախտում է.
- Թուրքմենստանի և Իրանի անօտարելի իրավունքները Կասպիցի հարավային հատվածի ածխաջրածինների և այլ բնական պաշարների արդյունահանման տեսանկյունից:
 - Պետական սահմանների մասին միջազգային իրավունքն ու նորմերը՝ հանդիսանալով անսադրված ագրեսիայի և օկուպացիայի բռնարարք:

Նկար 2.6

ԱՉԳ սահմանազատումը: Ադրբեջանական տարրերակի սահմանագիծը (սպիտակ ընդհատ գիծ) ամբողջությամբ ներառում է ԱՉԳ նավթադաշտը և անցնում է Սերդար/Քյափազ դաշտով: Թուրքմենական տարրերակի սահմանային միջնագիծը (կարմիր ընդհատ գիծ) անցնում է ԱՉԳ Արևելյան Ազերի հատվածով և ամբողջությամբ ներառում է Սերդար/Քյափազ դաշտը:



Ադրբեջանի «ԱՄՆ Տեխասի համալսարան և սեփական հաշվարկներ (տե՛ս նաև Հավելված 3)

5. ԽՍՀՄ Նավթարդյունաբերության նախարարության 1970թ. ադալված քարտեզի խոտորված միջնագիծն Ապշերոնյան թերակղզու հատվածում արհեստականորեն տեղափոխված է դեպի Արևելք՝ ԱՉԳ նավթադաշտն ամբողջությամբ տեղակայելով «Ադրբեջանական հատվածում» (տե՛ս Նկար 2.6): Այնինչ, 5 հանգուցանի նվազագույն գրաֆի Շտեյների կետերի մոտեցման վրա կառուցված Կասպիցի իրական միջնագիծը հստակ անցնում է ԱՉԳ նավթադաշտի Ազերի հատվածով՝ ամբողջությամբ թողնելով Սերդար (Քյափազ) դաշտը «թուրքմենական հատվածում» (տե՛ս Նկար 2.6 և Հավելված 3):

ԱՉԳ արդյունահանման BP/AIOC եռափուլ ծրագիրը. Մի փոքր տեխնիկական բնույթ ունեցող այս հարցին մենք անդրադարձել ենք գրքի վերջում՝ առանձին հավելվածով (Հավելված 4): Նույն տեղում բերում ենք նաև այս ծրագրի հավելյալ 4-րդ բաղադրիչի՝ Չիրագի նավթային ծրագրի

գրի (*Cirag Oil Project, COP*) մասին տվյալները:

Այստեղ միայն նշենք, որ \$6 մլրդ ընդհանուր արժողությամբ այս ծրագիրը, որի առաջին պլատֆորմը նախատեսվում է թողարկել 2013-ին, կոչված է խափանումից «փրկել» ԱԶԳ յուրացման *BP/AIOC* եռափուլ ծրագիրը (տե՛ս ստորև): Սակայն, համաձայն որոշ փորձագիտական գնահատականների, անգամ *COP* ծրագրի հաջող իրականացումը, մինչև նույն է, չի ապահովի ԱԶԳ յուրացման պլանավորված օրական մեկ մլն բարել արդյունահանման ցուցանիշը (ավելի մանրամասն տե՛ս Հավելված 4-ի վերջում):

ԱԶԳ արդյունահանման *BP/AIOC* եռափուլ ծրագրի խափանման պատճառները. Այս հարցը քննող տարօրինակորեն սակավաթիվ աղբյուրները ԱԶԳ դաշտից նավթի արդյունահանման պլանավորված ծավալների ու ժամանակացույցի խափանումը բացատրում են հիմնականում հետևյալ երեք գործոններով.

1. 2008թ. օգոստոսյան վրաց-օսական պատերազմով և ՌԴ-ի հետ Վրաստանի առճակատմամբ, որին նախորդել էր Թուրքիայի տարածքում ԲԹԶ նավթամուղի մեկ հատվածի պայթեցումը, արդյունքում՝ նվազել էր ԱԶԳ-ից նավթի արդյունահանումը:
2. 2010թ. Մեքսիկական ծոցում *BP* ընկերության *Deep Horizon* նավթային պլատֆորմի վթարի ու առաջացած բնապահպանական աղետի հետևանքներով. արդյունքում՝ *BP*-ն ստիպված էր ԱԶԳ ավեզրյա նավթադաշտի Ազերի հատվածում տեղակայված իր պլատֆորմներում ավելի հաճախակի տեսչական (ինսպեկցիոն) կանգնեցումներ իրականացնել:
3. 2008թ. սեպտեմբերին ԱԶԳ նավթադաշտում տեղակայված *BP* ընկերության «Կենտրոնական Ազերի» նավթային պլատֆորմի վթարով և դրա վերացման հետ կապված միջոցառումներով:

Բոլոր այս գործոնների հանգամանալի զննումը գալիս է ապացուցելու, որ դրանք առանձին-առանձին և նույնիսկ միասին վերցրած՝ անկարող են բացատրել հիշյալ խափանումը:

Նախ, Թուրքիայի տարածքում ԲԹՋ նավթամուղի պայթեցման¹ հետևանքներն արագ վերացվեցին, իսկ ՌԴ-Վրաստան 2008թ. օգոստոսյան հակամարտությունը խաթարեց ԲԹՋ նավթամուղի շահագործումն ընդամենը 4-5 օր: Եթե անգամ ընդունենք, որ այն խանգարվել էր մեկ շաբաթ, եթե անգամ ընդունենք, որ 2008թ. օգոստոսին ԲԹՋ-ն շահագործվում էր իր նոմինալ՝ 1.0 մլն բ/օր թողունակությամբ (ինչն, իհարկե, այդպես չէր, իրական ծավալն այդ ժամանակ կազմում էր 0.653 մլն բ/օր)², ապա նույնիսկ այդ դեպքում 2008թ. օգոստոսյան «վնասը» տարեկան կտրվածքով կկազմի միայն 7 մլն բարել: Հիշեցնենք, որ համաձայն *BP* 2007թ. հաշվետվության, 2008թ. միայն ԱԶԳ նավթադաշտից արդեն ծրագրվում էր ստանալ մոտ 1.0 մլն բարել նավթ օրական և 365 մլն բարել տարեկան (տե՛ս Նկար 2.3, աջ առանցք): Մինչդեռ, համաձայն նույն *BP* ընկերության վիճակագրական տեղեկատուների [1], այդ տարի ողջ Ադրբեջանում արձանագրվել էր նավթի միայն 0.915 մլն բարել միջին օրական արդյունահանում (տե՛ս Նկար 2.1): Կամ տարեկան կտրվածքով՝ 334 մլն բարել: Հասկանալի է, որ ԱԶԳ-ից իրական արդյունահանումը նույնիսկ ավելի քիչ էր: Այն 2008թ. կազմում էր մոտ 267 մլն բարել, այսինքն՝ 98 մլն բարելով ավելի քիչ, քան ծրագրվող 365 մլն բարել ցուցանիշը: Այս տարբերությունն անհնար է բացատրել 2008թ. «օգոստոսյան վնասի» 7 մլն բարել մեր «շոսայլ» գնահատականով:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ ԱՀ-ում ԱՄՆ դեսպանության 2007թ. հուլիսի 7-ով թվագրված, գաղտնիության ու զգայունության առավելագույն աստիճան ունեցող (*Secret, NOFORN*) 07 BAKU 855 հաղորդագրությունում (տե՛ս Հավելված 1, Թիվ 4) մտահոգություն էր հայտնվում, որ *BP* ընկերության ավիերոյա պլատֆորմները խոցելի են ահաբեկչության համար: Հաղորդագրությունը վկայակոչում էր *BP* այդ ժամանակվա ղեկավար Բ.Շրադերի բառերը, թե՛ «դրա համար կպահանջվի ընդամենը մեկ մարդ՝ ականանետով կամ 6 մարդ և մի մոտորանավակ»: Ընդ որում,

¹ Թեև հայտարարվեց, որ այս պայթեցման հետևում կանգնած էին քուրդ ապստամբները, իրական կատարողների և շարժառիթների մասին բերվող տվյալները հակասական են:

² <http://www.globalsecurity.org/military/world/azerbaijan/energy.htm>

նավթարդյունահանման մայրցամաքային ենթակառուցվածքների (օրինակ՝ Սանգաչալի տերմինալը) և նավթամուղերի, այդ թվում՝ ԲԹՋ, անվտանգության մակարդակը գնահատվում էր բավարար: Ավելին, Ադրբեջանում ԱՄՆ դեսպանության այս հաղորդագրությունը կոչ էր անում ԱՄՆ Պետդեպարտամենտին (!) արձագանքել *BP* այս մտահոգությանը՝ հիմք ընդունելով ՆԱՏՕ Ռիգայի գազաթաժողովում ընդունված «էներգետիկ անվտանգության մասին» հռչակագրի դրույթները¹: Ամենայն հավանականությամբ, արձագանքը շատ չուշացավ, քանի որ Ադրբեջանում ԱՄՆ դեսպանության արդեն 2008թ. հուլիսի 2-ով թվագրված *08 Baku 625* հաղորդագրությունից տեղեկանում ենք (տե՛ս Հավելված 1, Թիվ 7, 19.Տ), որ Կասպիցի *BP* նավթային պլատֆորմներում տեղակայվել են Ադրբեջանի ռազմածովային ուժերում «այսօրվա դրությամբ լավագույն ռադարային կայանքները»:

Նույնը պետք է ասել և վերը նշված երկրորդ գործոնի կապակցությամբ: Իսկապես, համաձայն *Ռոյթթըրս* գործակալության, Մեքսիկական ծոցի աղետից հետո, 2011թ. ամռան սկզբին, *BP*-ն նախագգուշացրեց *SOCAR* պետական ընկերությանը, որ պլանավորում է կանգնեցնել ԱԶԳ դաշտի Ագերի հատվածում իր երեք պլատֆորմների աշխատանքը՝ գննման և վերանորոգումների համար: Այս նորությունը լայնորեն տարածվեց ադրբեջանական մամուլում և այլ լրատվամիջոցներում՝ առաջացնելով անգամ խուճապային մեկնաբանություններ: Սակայն 15 օրով Ագերիի երեք պլատֆորմների կանգնեցումը կնշանակի միայն արդյունահանման իջեցում՝ առավելագույնը օրական 600 հազ. բարել նավթ: Իսկ գննումների ողջ ընթացքի համար՝ 9.0 մլն բարել (մանրամասն տե՛ս Հավելված 4):

Բայց, համաձայն *BP* 2007թ. հաշվետվության [5], 2011-ին միայն ԱԶԳ նավթադաշտից արդեն ծրագրվում էր ստանալ մոտ 1.15 մլն բարել

¹Նկատենք, որ 2006թ. նոյեմբերին ընդունված այս հռչակագրի դրույթները և ավելի ուշ ընդունված նմանատիպ այլ փաստաթղթերը տակավին կարոտ են համակողմանի լուսաբանման՝ տարածաշրջանում ռազմական հավասարակշռության խախտման, տարածաշրջանի երկրների սուվերեն իրավունքների ու անվտանգության երաշխիքների ապահովման տեսանկյուններից:

նավթ օրական կամ 420 մլն բարել տարեկան (տե՛ս Նկար 2.4, աջ առանցք): Իսկ ինչպես նշեցինք վերը, 2011թ. ողջ Ադրբեջանում արձանագրվել էր նավթի միայն 900 հազ. բարել միջին օրական արդյունահանում (տե՛ս Նկար 2.1), կամ տարեկան կտրվածքով՝ 329 մլն բարել: Եվ նորից՝ սա ողջ Ադրբեջանի համար: ԱԶԳ-ից այդ տարի արդյունահանվել էր մոտ 270 մլն բարել կամ 150 մլն բարելով ավելի քիչ, քան ծրագրվում էր: 150 մլն բարել այս տարբերությունը նույնպես անհնարին է բացատրել Ազերի դաշտի երեք պլատֆորմների 15-օրյա կանգնեցման հետևանքով գոյացած 9.0 մլն բարել վնասով: Այն նաև չի կարելի բացատրել, եթե մենք 2011թ. այս «զննումների վնասին» գումարենք 2008թ. օգոստոսյան «պայթեցումների» 7 մլն բարել վնասը:

Ի տարբերություն քննված երկու գործոնների, 3-րդ գործոնը՝ ԱԶԳ նավթադաշտում տեղակայված *BP* ընկերության «Կենտրոնական Ազերի» նավթային պլատֆորմից 2008թ. սեպտեմբերին արձանագրված նավթի արտահոսքը, իրոք, կարևոր է: Նախ, ասենք, որ այս լուրջ վթարի մասին ժամանակին և պատշաճ մակարդակով չտեղեկացվեցին ոչ երկրի ավեզրյա բնակչությունը, ոչ ԱՀ իշխանական օղակներն ու *AIOC* կոնսորցիումի այլ անդամները: Վթարի իրական մասշտաբների և նրա բնույթի մասին տվյալները հասարակությանը և մասնագետներին հայտնի դարձան միայն 2010թ. վերջին, *Wikileaks*-յան վերը նշված հրապարակումներից հետո (տե՛ս Հավելված 1, 2008թ. սեպտեմբերի 26-ի *08 BAKU 919* թիվ 11, հոկտեմբերի 8-ի *08 BAKU 947* թիվ 12 և 2009թ. հունվարի 15-ի *09 BAKU30*՝ թիվ 13 հաղորդագրությունները):

Այսպես, համաձայն թիվ 11 հաղորդագրության, ԱՄՆ դեսպանությունը բնութագրում է *BP* գործելակերպը որպես չափազանց գաղտնապահ: Համադրելով դեսպանությանը հասանելի տեղեկատվությունը՝ բերվում է դեպքերի հետևյալ զարգացումը: 2008թ. սեպտեմբերի 17-ին Կենտրոնական Ազերի¹ նավթային պլատֆորմի շուրջ նկատվում են գազի պղպջակներ: Պլատֆորմի վրա տեղակայված գազի տվիչներն արձանա-

¹ Այս պլատֆորմի մասին տե՛ս Հավելված 4-ում:

գրում են ջրում գազի անթույլատրելի բարձր կոնցենտրացիա և միացնում են վթարային ազդանշանը: Քիչ անց գազի հետմղման *B-17* հորատանցքում տեղի է ունենում պայթյուն, որի հետևանքով դուրս է ժայթքում տիղմի, ջրի և գազի շոշափելի զանգված: Ժամը 09:00-ին պլատֆորմի *BP* տնօրենը սեղմում է պլատֆորմից վթարային ընդհանուր տարհանման «կարմիր կոճակը», որից հետո պլատֆորմից տարհանվում է 211 աշխատող¹: Ամբողջությամբ դադարեցվում է Կենտրոնական Ազերի պլատֆորմի աշխատանքը: Ընդ որում, դադարեցվում են նաև Արևմտյան Ազերի և Արևելյան Ազերի նավթային ավեզրյա պլատֆորմների աշխատանքներն այն բանի հետևանքով, որ, նախ, այդ պահին Արևմտյան Ազերին էլեկտրական սնուցում էր ստանում միայն Կենտրոնական Ազերի պլատֆորմից, և հետո՝ հարակից գազի հետմղման համար այս պլատֆորմներն օգտագործում էին Կենտրոնական Ազերի պլատֆորմի կոմպրեսորային կայանքը (ավելի մանրամասն տե՛ս Հավելված 4, Նկար 24.1):

Պայթյունի պատճառները պարզելու համար *BP* ընկերությունն օգտագործում է ստորջրյա հեռակառավարվող ավտոմատ սարքերը (*ROV*), որոնք, *BP* բարձրաստիճան պաշտոնյաների պնդումներով, ծովի հատակին նկատում են նորագոյացություններ ու հատակի տեսանելի դեֆորմացիա: Իրականացվում է դուրս ժայթքած տիղմի և գազի նմուշների հավաքում, որոնց գնումը պետք է ցույց տար՝ տեղի է ունեցել մակերեսային², թե՞ խորքային գազի ժայթքում: Վերջինի դեպքում «աղետի հետևանքներն անվերականգնելի կլինեին», - ասում է *BP*-Ադրբեջան ընկերության ղեկավարը՝ համաձայն ԱՄՆ դեսպանության հաղորդագրության (թիվ 13, 8.C): Իսկ համաձայն 2008թ. հոկտեմբերի 8-ի թիվ 12 հաղորդագրության՝ «մենք կարող է այդպես էլ չիմանանք ժայթքման իրական պատճառը»: Թեև, ավելացնում է ԱՄՆ դեսպան Ա.Դերսը, փարատելով ԱՄՆ Պետդեպարտամենտի կասկածները հնարավոր ահաբեկչության մասին, «չկա որևէ պատճառ ենթադրելու, որ խնդիրն առա-

¹ Համաձայն ավելի ուշ հաղորդագրության (թիվ 12, 8.C), սա «*BP* ավեզրյա պլատֆորմների շահագործման պատմության մեջ ամենամասշտաբային վթարային տարհանումն էր»:

ջացել է որևէ այլ պատճառով, քան շահագործողի սխալմունքը կամ երկրաբանական բնույթի երևույթը» (թիվ 11, 9.C):

Այս առնչությամբ նկատենք հետևյալը: Մեզ այդպես էլ չհաջողվեց ծանոթանալ ԱԶԳ նավթադաշտի եռափուլ համալիր ծրագրի Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատականի (ՇՄԱԳ)¹ BP ընկերության պաշտոնական հաշվետվությանը: Որն, ի դեպ, Օրհուսի կոնվենցիայի (*Aarhus Convention*) համաձայն, պետք է որ բաց ու լայնորեն հասանելի փաստաթուղթ լիներ: Բայց և վստահ ենք, որ այն չէր պարունակում այնպիսի դրույթներ և հասկացություններ, ինչպիսիք են «անվերականգնելի վթարը» և վթարների «անիմանալի պատճառները»: Չհաջողվեց նաև ծանոթանալ ԱԶԳ նավթադաշտի ԱԲՀ պաշտոնական փաստաթղթին, ինչն այս անգամ հասկանալի է. այն պարունակում է բազում կոմերցիոն գաղտնիքներ: Բայց նորից չենք կասկածում, որ այս ԱԲՀ-ում սահմանվում է *Ֆորսմաժորային* իրադրությունների նկարագիրը:

Այս համատեքստում միանգամայն հասկանալի է դառնում BP ընկերության նախնական հակվածությունը (հստակ տեսանելի թիվ 11 և 12 հաղորդագրություններում)² սեպտեմբերյան վթարի պատճառը համարել «բնական պատուհասը», օրինակ՝ ստորջրյա տիղմային հրաբխի (*mud volcano*) ժայթքումը (դրա համար էին պետք «ծովի հատակի նորագոյացություններն» ու «հատակի տեսանելի դեֆորմացիան»): Չէ՞ որ այս դեպքում կգործեր համաձայնագրի *Ֆորսմաժորային* դրույթը, և BP-ն ֆինանսական պարտավորվածություն չէր կրի: Ամենայն հավանականությամբ, այս հնարավորությունը կանխելու համար SOCAR պետական նավթային ընկերության փոխնախագահը տեղեկացնում է BP-ին և ԱՄՆ դեսպանությանը, որ Ադրբեջանի համար *Ֆորսմաժորն* ընդունելի կլինի միայն աղետի բնական պատճառների աներկբա ապացույցների պարագայում (թիվ 11, 7.C): 2009թ. հունվարին BP-ն ընդունում է, որ աղետի պատճառը «հետմղման հորերից մեկի վատ ցեմենտապատումն է» (թիվ 13, 8.C), ինչով և ստանձնում է AIOC կոնսորցիումի պատասխանատվությունը (այդ թվում՝ նաև ֆինանսական) վթարի համար:

¹ *Environmental Impact Assessment.*

Դեսպանության գնահատականներով՝ 2008թ. սեպտեմբերյան վթարի հետևանքով ԱԶԳ-ից նավթի արդյունահանումն ընկել էր օրական 600 հազ. բարելով և այդ ժամանակ կազմում էր մոտ 300 հազ. բ/օր, նախկին՝ 900 հազ. ցուցանիշի փոխարեն: «Ադրբեջանն ամեն օր կորցնում է մոտ \$45 մլն, [այսինքն]՝ 600 հազ. բարել, մոտ \$100/բարել գնի դեպքում, հանած շահագործման և կապիտալի սպասարկման ծախսերը [*Capex/Opex*] և բազմապատկած 0.8-ով, քանի որ Ադրբեջանի մասնաբաժինը կազմում է շահութային նավթի 80%-ը»¹ (թիվ 11, 8.C): Ակնկալվում էր, որ Արևմտյան Ազերի պլատֆորմը կվերսկսի աշխատանքները նոյեմբերի սկզբին և կապահովի ևս օրական 100 հազ. բարել նավթի արդյունահանում:

Եվ նորից այստեղ անհրաժեշտ են որոշ մեկնաբանություններ: Նախ, ԱՀ-ում ԱՄՆ դեսպանության այս գնահատականը չափազանցված է, եթե նշված «օրական 900 հազ. բարել» գնահատականն ընկալենք որպես մինչև 2008թ. սեպտեմբերյան աղետը ԱԶԳ-ից նավթի արդյունահանման միջին օրական արտադրանք: Իրականում ԱԶԳ դաշտի արդյունահանման ծավալներն այդ ժամանակ չէին գերազանցում օրական միջինը 750-800 հազ. բարելը: Այդ են վկայում անգամ *BP* տեղեկատուները [1] (տե՛ս նաև Նկար 2.1): 900 հազ. բ/օր ցուցանիշ մինչև 2008թ. սեպտեմբերի 19 ժամանակահատվածում գրանցված էր այդ տարվա միայն առանձին օրերին, բայց ոչ մի դեպքում՝ որպես միջինացված ցուցանիշ ողջ ժամանակահատվածի համար:

Այնուհետև, Կենտրոնական Ազերի պլատֆորմից նավթի արդյունահանումն էականորեն հետ էր մնում պլանավորվող ծավալներից արդեն ողջ 2007-ի ընթացքում և մինչև 2008-ի սեպտեմբերյան աղետն ընկած ժամանակահատվածում: Միայն 2007-ին Կենտրոնական Ազերի պլատֆորմի փաստացի արդյունահանումը զիջում էր պլանավորված 300 հազ. ցուցանիշին 65 հազ. բարելով (22%, տե՛ս Հավելված 4, Նկար Հ4. 3): Դժվար չէ հաշվարկել (տե՛ս Նկար Հ4. 3), որ ողջ 2007-11թթ. ժամանակահատվածում Կենտրոնական Ազերի պլատֆորմի պլանավորված

¹ Ինչպես տեսնում ենք, *AIOC* կոնտրոլի մի ՇԻԴ արժեքը 2007թ. սեպտեմբերին գնահատված էր ավելի քան 22.75% (տե՛ս ստորև՝ 2.4 բաժնում):

ծավալներից թերարտադրումը կազմել էր միջինը մոտ 242 հազ. բ/օր, ներառյալ 2008թ. սեպտեմբերյան աղետից հասցված վնասը: Իսկ դա կարող է բացատրել ԱԶԳ վերը նշված պլանավորված ցուցանիշի թերակատարումը (400 հազ. բ/օր) մոտ 50%-ը: Թերակատարման մնացած 50%-ը պետք է փնտրել այլ պատճառների մեջ:

Այսպիսով, ԱԶԳ դաշտից նավթի արդյունահանման պլանավորված ցուցանիշների թերակատարումն անհնարին է բացատրել վերը նշված երեք գործոններից և ոչ մեկով: Ավելին, դրանց հանրագումարային ազդեցությամբ կարելի է բացատրել թերակատարման միայն մոտ 55%-ը: Կան բոլոր հիմքերը ենթադրելու, որ պլանավորված ծավալներին հասնելու գործում թերացումն ուներ «համակարգային» բնույթ: Հիմնական պատճառը, կարծում ենք, ԱԶԳ դաշտի արդյունահանման տեխնոլոգիական առանձնահատկությունն է՝ ջրի և նավթարդյունահանման ընթացքում ստացված հարակից գազի ոչ բավարար ծավալներով հետմղում դեպի ԱԶԳ նավթային հորիզոններ՝ դրանցում նավթի արդյունահանման համար անհրաժեշտ ճնշումն ապահովելու համար (Հավելված 4): Կարծում ենք նաև, որ առկա էր և ԱԶԳ նավթի արդյունահանելի պաշարների սկզբնական գնահատականների ուռճացման հանգամանքը, ինչպես նաև ԱԶԳ նավթադաշտից օրական 1.0 մլն և ավելի բարել նավթ ստանալու համար *BP/AIOC* սկզբնական եռափուլ համալիր ծրագրի ընդհանուր արդյունահանող հզորությունների անբավարար մակարդակը¹:

Եվ իրոք, ստեղծված իրադրությունը փրկելու և ԱԶԳ-ից արդյունահանվող նավթը բաղձալի և վաղուց խոստացված 1.0 մլն և ավելի բ/օր ցուցանիշին հասցնելու նպատակով *BP* ընկերությունը 2010 թվականից ստիպված եղավ ձեռնամուխ լինել նոր, ծավալուն ու թանկարժեք՝ 4-րդ փուլի ծրագրի իրականացմանը: Եվ նույնիսկ այս դեպքում ակնկալվում է, որ ԱԶԳ-ից պիկային արտադրությունը կգրանցվի միայն 2013թ. և,

¹ Այս լույսի ներքո միանգամայն հասկանալի է դառնում *Exxon* ընկերության ժամանակին արտահայտած թերահավատությունն ինչպես ԱԶԳ շահագործման եռափուլ ծրագրով նախատեսված ցուցանիշների, այնպես էլ ԲԹՋ վաղ կառուցման և ընդհանուր եկամտաբերության կապակցությամբ:

միննույն է, չի հասնի օրական 1 մլն բարել արդյունահանման ցուցանիշին (ավելի մանրամասն տե՛ս Հավելված 4, Նկար Հ4. 8):

ԱԶԳ արդյունահանում. փաթեթայի՞ն, թե՞ փուլային: Ընդհանրապես, ԱԶԳ դաշտի նավթարդյունահանման հետ կապված խնդիրները համարժեք հասկանալու համար անհրաժեշտ է վերադառնալ 2006-ի վերջ, 2007-ի սկիզբ և հարցը դիտարկել տարածաշրջանային էներգետիկ և աշխարհաքաղաքական ավելի լայն համատեքստում: Այդ ժամանակ էր, որ *BP* ընկերությունը ԱՀ իշխանություններին ներկայացրեց ԱԶԳ արդյունահանման իր մշակած համալիր եռափուլ ծրագրի դրույթները՝ այսպես կոչված «Սպիտակ գիրքը» (*White papers*): *BP* այս առաջարկի ամենաուշագրավ առանձնահատկությունն այն է, որ ԱԶԳ արդյունահանման համալիր ծրագրի իրականացումն այստեղ պայմանավորվում էր մի շարք այլ խնդիրներով՝ մեկ միացյալ փաթեթի շրջանակներում:

Դատելով որոշ նյութերից, այդ թվում *Wikileaks*-յան հաղորդագրություններից (տե՛ս Հավելված 1, թիվ 1, 5.C)՝ *AIOC* կոնսորցիումի կողմից ԱԶԳ համալիր նավթարդյունահանման խնդիրը *BP*-ն կապում էր.

1. 1994թ. ստորագրված ԱԶԳ շահագործումը կանոնակարգող ԱԲՀ-ով սահմանված *AIOC* կոնսորցիումի աշխատանքների ավարտական ժամկետի երկարացման,
2. Կասպիցի գազային պաշարների, այդ թվում՝ այսպես կոչված «ԱԶԳ խորքային գազի» *BP*-ի կողմից արդյունահանման նպատակահարմարության,
3. Ադրբեջանին սեփական կարիքների ու արտահանման համար գազամատակարարման ապահովման խնդիրների,
4. պետական *SOCAR* ընկերության աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու անհրաժեշտության, ինչպես նաև՝
5. ԱՀ-ում իրականացվող *AIOC* կոնսորցիումի ոչնավթային, սոցիալական/քաղաքական բնույթի ծրագրերում մասնակցության հստակ սահմանման խնդիրների հետ:

Ի լրումն այս դրույթների և ամրապնդելու համար սեփական դիրքերը՝ 2007թ. սկզբին *BP*-ն վերանայեց ԱԶԳ նավթի ապացուցված պաշարների իր գնահատականը՝ բարձրացնելով այն մոտ 4 անգամ և հասցնելով մինչև 9 մլրդ բարելի: ԱԶԳ արդյունահանելի նավթի պաշարներն այդ ժամանակ գնահատվեցին 5.4-6.3 մլրդ բարել, ինչը, սակայն, բոլորովին չանդրադարձավ ԱՀ նավթի ընդհանուր ապացուցված պաշարների գնահատականի վրա (տե՛ս վերը):

BP ընկերության «փաթեթային» այս առաջարկը մինչև 2008թ. օգոստոսի 8-ը Ադրբեջանի իշխանությունները, միանգամայն իրավացիորեն, որակում էին որպես «շանտաժ»: Թեև այսպիսի մոտեցումը, իհարկե, բխում էր ընկերության կորպորատիվ շահերից ու միանգամայն համահունչ էր ածխաջրածինների ռեսուրսային կցորդ հանդիսացող երկրներում վարվող քաղաքականության ընդհանուր տրամաբանությանը, այն, արդարև, չէր բխում (2007թ.) և ներկայումս էլ չի բխում ԱՀ բնակչության շահերից: Բայց այս իրադրության հատկանշական գիծն այն էր, որ *BP* «փաթեթային առաջարկի» որոշ կողմեր միահյուսվում էին տարածաշրջանային աշխարհաքաղաքականության և աշխարհատնտեսության որոշակի տարրերի հետ՝ ստեղծելով փոխկապակցված հարցերի բարդ կծիկ:

Իրոք, սկսած 2007-ից՝ միանգամայն համահունչ «Ալիևի դոկտրինի» դրույթներին, ԱՀ-ն ձեռնամուխ է լինում իր այս անգամ գազային պաշարները որպես տարածաշրջանային աշխարհաքաղաքականության առավել ճկուն լծակ օգտագործելու ծրագրին: Ենթադրվում էր, որ ադրբեջանական (հեռանկարում՝ նաև թուրքմենական) գազը պետք է դուրս մղի տարածաշրջանում ռուսական (և իրանական) գազը, ամրացնի ԱՀ դիրքը տարածաշրջանում՝ ամրապնդելով «Հարավային Կովկասի էներգետիկ կամուրջ» ծրագիրն Ադրբեջան-Վրաստան-Թուրքիա-Իսրայել առանցքով, վարժեցնի Թուրքիային ադրբեջանական գազը ԵՄ հասցնելու գործում բացառապես տարանցման, այլ ոչ թե «գնող, վաճառող» երկրի դերակատարմանը: Առավել ևս, որ ԱՄՆ իշխանական և կուսակցա-

կան տարբեր օղակները, այդ թվում՝ ԱՀ-ում ԱՄՆ դեսպանությունը, էական ճնշում էին բանեցնում ԱՀ-ի վրա, որպեսզի.

- ապահովվի 2006-07թթ. ձմեռները Վրաստանում «տաք» ու անցնցում անցկացնելու մարտավարական խնդիրը,
- իրականացվի ՌԴ-ից ստացվող գազից Վրաստանը «կտրելու», նրան դեպի Ադրբեջան-Թուրքիա-Իսրայել ու ԵՄ «էներգետիկ կամուրջ» ուղղորդելու ռազմավարական ծրագիրը [9] և
- ամրապնդվի Թուրքիայի նոր, ռազմավարական նշանակության դերակատարումը «Մեծ Միջին Արևելքի» տարածաշրջանում գալիք կարևորագույն գործընթացներում [10, 11]:

Բոլոր այս հարցերում ադրբեջանական գազի դերակատարումը նշանակալի էր: Ու թեև ԱՀ գազային (և էլեկտրաէներգետիկ) ոլորտների քննությունն ինքնին պահանջում է ծավալուն ուսումնասիրություն, այստեղ կանգ առնենք Կասպիցի ադրբեջանական հատվածի գազի արդյունահանման որոշ խնդիրների վրա: Առավել ևս, որ դրանք անմիջականորեն կապված են թե՛ ԱԶԳ դաշտից նավթի արդյունահանման խնդրի, թե՛ տարածաշրջանային ներկայիս աշխարհաքաղաքական զարգացումների հետ:

Առաջին հերթին անհրաժեշտ է անդրադառնալ ԱԶԳ նավթարդյունահանման ընթացքում գոյացող այսպես կոչված «հարակից գազի» (*associated gas*) խնդրին: Այս գազի ծավալները շոշափելի են: Այսպես, 2011թ. ԱԶԳ նավթարդյունահանման ընթացքում ստացվել է օրական մոտ 34 մլն մ³ հարակից գազ: Սա մոտ երկու անգամ ավելի է, քան Շահ Դենիզ դաշտի առաջին փուլի ծրագրի շրջանակներում արդյունահանված բնական գազի ծավալը: Սակայն հարակից գազի այս ծավալի մոտ 75%-ը նորից հետ է մղվել դեպի ԱԶԳ դաշտ՝ նավթի արդյունահանման ճնշումն ապահովելու համար: Ընդ որում, ԱԶԳ-ից արդյունահանված հարակից գազի ծավալների մատակարարման վերաբերյալ *BP/AIOC* կոնսորցիումը պետական *SOCAR* ընկերության հանդեպ չուներ (2010թ. սկզբի դրությամբ) որևէ պարտադրող պայմանավորվածություն: Եվ սա

միանգամայն բնական էր, քանի որ *BP*-ն հարակից գազը դիտարկում էր (և է) առաջին հերթին որպես ԱԶԳ նավթարդյունահանման ծավալների ապահովման միջոց, այլ ոչ թե որպես ինքնուրույն արժեք (*commodity*): Ինչպես նշել էինք, այս գազը նորից հետ է մղվում ԱԶԳ արդյունահանվող նավթային հորիզոնները՝ նավթի արդյունահանման համար անհրաժեշտ ներքին ճնշումն ապահովելու նպատակով:

2006-09թթ. ԱՀ իշխանությունը ԱԶԳ-ից արդյունահանված հարակից գազը հակված էր դիտարկել (և այսօր էլ շարունակում է դա անել) որպես տարածաշրջանային աշխարհաքաղաքականության զինանոցի գործուն լծակ: Շահ Դենիզի գազային դաշտի հիմնական՝ 2-րդ փուլի ձգձգվող մեկնարկի պարագայում, ԱԶԳ հարակից գազը ԱՀ իշխանությունները դիտարկում էին որպես սեփական «գազային էքսպանսիայի» իրագործման առաջին և լրջագույն միջոց: Հենց այս գազով էր պատրաստվում Ադրբեջանը «փակել» դեռ 2006-ին Թուրքիային խոստացված Շահ Դենիզի 3 մլրդ մ³ բնական գազի պարտքը՝ \$120/հազ. մ³ գնով (տե՛ս թիվ 1, 3.c): Գոնե մասնակիորեն կատարելու համար իր պարտավորվածությունը Թուրքիայի հանդեպ՝ ԱՀ իշխանությունները *BP*-ից և ԱՀ-ում ԱՄՆ դեսպանությունից պահանջում են, որ *AIOC* կոնսորցիումը Ադրբեջանին տրամադրի 3 մլրդ մ³ ԱԶԳ հարակից գազը: Մինչդեռ, 2007-ին, բոլոր հետմղումներից հետո, *BP*-ն Ադրբեջանին տրամադրել էր միայն 1.5 մլրդ մ³ (տե՛ս նույն տեղում՝ c. 7):

Իր հերթին, Ադրբեջանում ԱՄՆ դեսպանությունը, ԱՄՆ Պետդեպարտամենտը և այս երկրի իշխանության բարձրագույն օղակները ԱԶԳ հարակից գազը դիտում էին որպես Վրաստանի համար ՌԴ-ից միանգամայն անկախ գազամատակարարման, 2006-07թթ. ձմեռային պիկային սպառման բավարարման ռազմավարական նշանակության միջոց: *Wikileaks*-յան հաղորդագրություններում բազմաթիվ հիշատակումներ կան այդ մասին: Մասնավորապես, դրանցում նշվում է, որ Վրաստանի վարչապետ Նոդարիդելին 2006թ. դեկտեմբերին ԱՄՆ կատարած այցի ընթացքում խնդրել էր ԱՄՆ Պետդեպարտամենտի ղեկավար Բ.Ռայսին

և ԱՄՆ փոխնախագահ Դ.Չեյնիին, որ «նրանք խրախուսեն *BP* ընկերությանը՝ Վրաստանի գազամատակարարման գործում» (տե՛ս թիվ 2, *с. 6*): ԱՄՆ դեսպանության հաղորդագրություններից ակնհայտ երևում է այն մեծ ուշադրությունը, որը դեսպանությունը հատկացնում էր ԱՀ-ից Վրաստանի գազամատակարարումների ապահովմանը:

Աստեղ ապշեցնում է այն, որ նույնիսկ 2008-ի սեպտեմբերյան ծանր աղետից հետո արված հաղորդագրություններում ԱՄՆ դեսպանությունն առավելապես մտահոգված էր ոչ թե Լենքորանի ավիերյա բնակչության առօրյա կյանքի խաթարման վտանգով, ոչ թե Կասպից ծովի արևմտյան հատվածի ողջ էկոհամակարգի վրա կախված այս «դամոկլեյայան սրով», վերջապես՝ ոչ թե *AIOC* կոնսորցիումի պլատֆորմներում աշխատող անձնակազմի անվտանգության ապահովման խնդիրներով, այլ առաջին հերթին և հիմնականում Ադրբեջանից Վրաստան գազի անհրաժեշտ չափաքանակների մատակարարման խնդրով (տե՛ս թիվ 11-13): Չափազանց խոստն է այն հանգամանքը, որ 2008թ. հոկտեմբերի 8-ով թվագրված *08 Baku 947* հաղորդագրությունը (Հավելված 1, թիվ 12) հրապարակելիս, 2010թ. դեկտեմբերի 15-ին բրիտանական *Գարդիան* ամսագիրը պերճախոս կերպով վերտառել էր այն «*BP*-ն կարող է այդպես էլ չիմանալ գազի արտահոսքի իրական պատճառը»՝ ընդգծելով այս հարցի իրոք սենսացիոն նշանակությունն ու բնույթը: Մինչդեռ, բուն *08 Baku 947* հաղորդագրության ԱՄՆ դեսպանության անվանումը (*subject*) գործնական է ու սառնասիրտ. «Ադրբեջանը պատրաստ է արդյունահանել ԱԶԳ խորքային գազը և կարող է Վրաստանին գազ մատակարարել ձմեռվա սեզոնի համար»:

Հարակից գազի խնդրում ԱՀ, ԱՄՆ իշխանությունների և *BP/AIOC* կոնսորցիումի միջև եռակողմ այս հակասությունների հետևանքով *Wikileaks*-յան ադրբեջանական թղթապանակի հաղորդագրությունները պարզապես լեցուն են փոխադարձ մեղադրանքներով և պահանջներով¹: Պա-

¹ Տե՛ս, օրինակ, 2006թ. նոյեմբերի 15-ի *BAKU 1661* թիվ 1, *7.C* և 10.C, 2006թ. դեկտեմբերի 5-ի *BAKU 1771* թիվ 2, *6.C* և *8.C*; 2008թ. հոկտեմբերի 8-ի *BAKU 947* թիվ 12, *3.C*; 2009թ. հունվարի 15-ի *BAKU 030* թիվ 13, *8.C* և այլն:

րադոքսալ կերպով 2008թ. սեպտեմբերյան ադետն «օգնեց» լուծել այդ ձևեռ Վրաստանին անհրաժեշտ գազի խնդիրը: Իրոք, վթարի հետևանքով առնվազն մինչև 2008թ. դեկտեմբերը դադարեցվել էին հարակից գազի հետմդման աշխատանքները, և այն կարող էր այլ նպատակներով օգտագործվել: *BP* ընկերության այդ ժամանակվա դեկավար Բ.Շրեդերի՝ Ադրբեջանում ԱՄՆ դեսպանին հասցեագրած կծու խոսքերով՝ «վերջապես, լիքը գազ կլինի Վրաստան ուղարկելու համար» (թիվ 12, *c. 3*): Եվ սա 2008թ. օգոստոսի 8-ի միակ պարադոքսալ հետևանքը չէր (տե՛ս ստորև):

BP ընկերության «Սպիտակ գրքի» հետ կապված հաջորդ հանգամանքը, որին անհրաժեշտ է անդրադառնալ, հետևյալն է: ԱԶԳ «խորքային գազը», որի մասին խոսվում էր *BP* 2006թ. փաթեթային առաջարկում, բնական (ոչ հարակից) գազի այն պաշարներն են, որոնք գտնվում են ներկայումս *AIOC*-ի կողմից արդյունահանվող պաշարների ԱԶԳ նավթի հորիզոններից 1.5-2.5 կմ ավելի խոր: Խորքային բնական գազի այս պաշարները գնահատվում են 200-250 մլրդ մ³: 2011թ. ամռանից ընթանում են այս ծրագիրն իրականացնող ապագա կոնսորցիումի կազմի և կառուցվածքի մասին ինտենսիվ բանակցությունները: Ակնկալվում է, որ ապագա կոնսորցիումը, այնուամենայնիվ, կդեկավարի *BP* ընկերությունը¹: Սա 2006-ի վերջին *BP* ընկերության՝ ԱՀ-ին ներկայացրած «փաթեթային վերջնագրի» սպասելի և տրամաբանական արդյունքն է: Վերը նշել էինք, որ *BP*-ն 2007թ. սկզբի «փաթեթային առաջարկով» ԱԶԳ դաշտի նավթարդյունահանման հարցը կապել էր այս խորքային գազն իր կողմից արդյունահանելու խնդրի հետ՝ ցանկանալով ամրապնդել նավթարդյունահանման մեջ գրեթե մենաշնորհային դիրքը նաև գազի արդյունահանման ոլորտում իր էական դերակատարումով:

Ընդհանրապես, այն, որ *BP*-ն թե՛ նավթի արդյունահանման, թե՛ արդյունահանված նավթի տեղափոխման հիմնական պատասխանատուն է, իրոք, հակասում է բիզնեսի վարման ֆունկցիոնալ տարանջատման սկզբունքին: Այս առումով Հավելված 1-ում բերվող *Wikileaks*-յան

¹Թեև ԱԶԳ խորքային գազի արդյունահանումն իրականացնող այս նոր կոնսորցիումի կազմը կարող է և տարբերվել ԱԶԳ նավթն արդյունահանող *AIOC* կոնսորցիումի կազմից:

հաղորդագրություններում բազմաթիվ են Ի.Ալիևի և ԱՀ նավթային ոլորտի ղեկավարների գանգատները, թե «հիմա 1994 թվականը չէ, և *BP*-ն ու արևմտյան ընկերությունները պետք է ավելի զիջող լինեն ԱՀ շահերի հարցում»¹: Այս գանգատները Ի.Ալիևը կրկնեց նաև 2012թ. հոկտեմբերի 10-ին: Եվ միանգամայն իզուր:

Կարծում ենք, դրանք պետք է հասցեագրված լինեին ոչ թե *BP* ընկերությանը, ԱՀ-ում ԱՄՆ դեսպանությանը կամ նախագահի կողմից նշված ուրիշ «մութ ուժերի», այլ առավելապես 1994-ին Ալիև-ավագի ստորագրած «դարի պայմանագրի» դրույթներին, «Ալիևի դոկտրինի» կնքահայրերին Վաշինգտոնում, Լոնդոնում, Անկարայում, Թեյ Ավիվում, Թբիլիսիում և հենց Բաքվում: Գլոբալ տեսանկյունից, ինչպես 1994-ին, 2007-ին, այնպես էլ այսօր լիովին ուժի մեջ են 1994թ. աշխարհաքաղաքական իրողությունները: Եվ դրանք կշարունակեն գործել այնքան ժամանակ, քանի դեռ Ադրբեջանը կշարունակի պատանդ մնալ «Ալիևի դոկտրինի» տրամաբանությանը [9]:

Արդարության դեմ չմեղանչելու համար պետք է նշել, որ Ադրբեջանը սկզբնական փուլում պայքարում էր *BP* շանտաժի դեմ: Այսպես, պետական *SOCAR* ընկերությունը և ԱՀ իշխանությունը հայտարարեցին, որ *BP*-ն «յուրացնում» է ադրբեջանական նավթը, և սպառնացին դատի տալ ընկերությանը: Սակայն, ինչպես նշվել էր վերը, ԱՀ իշխանությունները հակահարված ստացան երկրի վարկանիշային գնահատականների հնարավոր վատացման և հսկայական ֆինանսական կորուստների սպառնալիքի տեսքով:

Ադրբեջանը փորձում էր նաև կոշտ դիրքորոշում բանեցնել Թուրքիայի հանդեպ՝ վերջինիս վերապահելով գազի զուտ տարանցող երկրի դերակատարում: Սկզբում կոշտ էր դիրքորոշումը Թուրքիային սեփական կարիքների համար մատակարարվող գազի գնի հարցում ևս: «Եթե հարկավոր է, ապա թող թուրքերը մի երկու ձմեռ մրսեն առանց մեր գազի», - անկեղծանում է ԱՀ նախագահ Ի.Ալիևը ԱՄՆ դեսպանի հետ Թուրքիայի և

¹ <http://www.trend.az/news/politics/2075446.html>

ԱՀ-ի միջև գազի մատակարարումների բանակցությունները քննարկելիս (տե՛ս Հավելված 1)¹: Սակայն բոլոր այս հարցերում Ադրբեջանը, ի վերջո, ընդունեց խաղի կանոնները: *BP*-ն ստացավ ԱԶԳ խորքային գազը: Բնական գազի մատակարարումների հարցում Թուրքիայի հետ լեզու գտնվեց, ինչն, ի դեպ, դյուրինացրեց Թուրքիայի և Հայաստանի հարաբերությունների բարելավմանն ուղղված գործընթացի վիժեցումը [10]:

Նշենք նաև, որ համաձայն *Ասոշիեյթեդ Փրես* գործակալության 2011թ. սեպտեմբերի 12-ի հաղորդագրության, Կասպից ծովի Ապշերոն նավթադաշտում ֆրանսիական *Total* ընկերության կողմից հայտնաբերվել են նոր և հարուստ ապացուցված գազի պաշարներ: Համաձայն աղբյուրի, դրանից հետո ԱՀ գազի ապացուցված պաշարները գնահատվում են 2.55 տրիլիոն մ³: Ակնկալվում է, որ Ապշերոն դաշտից գազի արդյունահանումը կսկսվի 2016-18թթ.: Ընդ որում, այս ծրագիրն իրականացնող կոնսորցիումի 40% մասնաբաժինը կպատկանի ֆրանսիական *Total* ընկերությանը: Նույնքան կլինի նաև պետական *SOCAR* ընկերության մասնաբաժինը, ևս 20%-ը կպատկանի ֆրանսիական *GDF Suez* էներգետիկ ընկերությանը²: Այսպիսով, ԱՀ ածխաջրածիներին արդյունահանման ոլորտ ֆրանսիական ընկերությունների մասշտաբային մուտքով որոշակիորեն կարող են թուլանալ *BP* ընկերության գրեթե մենաշնորհային

¹ Ժամանակին առիթ ունեցել էինք ձևակերպել տարածաշրջանային մեր «թեորեմը», համաձայն որի՝ «տարածաշրջանում բոլոր այն երկրները, որոնք ունեն ածխաջրածիների զգալի պաշարներ, և որոնց արտահանումը զգալի կախվածության մեջ է դնում այլ երկրներին, միտված են և օգտագործում են այս հնարավորությունն իրենց աշխարհաքաղաքական և ռազմավարական նպատակների համար: Ճիշտ այնպես, ինչպես բոլոր այն երկրները, որոնք ունեն հստակ արտահայտված քաղաքական կամք՝ սնվող տարածաշրջանային գերիշխման համար ծավալված հակամարտություններից, ներքին կոշտ սոցիալ-քաղաքական համակարգ և ՀՆԱ աճի բավարար տեմպ, կարող են դառնալ և դառնում են ռազմամիջուկային տերություններ» [12, էջ 34]: Այս «թեորեմի» առաջին մասն իրավացի է ԱՀ (և ՌԴ) պարագայում, իսկ երկրորդը՝ Թուրքիայի դեպքում [14, 15, 16]:

² Այս ընկերությունը հիմնվել է 2008թ. հուլիսին՝ *Gaz de France* և *Suez* ընկերությունների միաձուլումով: Հիշեցնենք, որ իր 2011թ. հայաստանյան այցից հետո Ֆրանսիայի նախկին նախագահ Ն.Սարկոզին այցելեց նաև Բաքու: Այցի ընթացքում ոչ միայն Պատվո լեզենի շքանշանով պարգևատրվեց ԱՀ առաջին տիկին, Հ.Ալիևի անվան հիմնադրամի ղեկավար Մ.Ալիևան (2011թ. հոկտեմբերի 7), այլև ստորագրվեցին ածխաջրածիների ապագա արդյունահանման հետ կապված մի շարք երկկողմ փաստաթղթեր:

դիրքերը: Այս գործընթացն անհրաժեշտ է դիտարկել «ռեսուրսային կցորդ» հանդիսացող (Լիբիա, աֆրիկյան մայրցամաքի մի շարք այլ երկրներ, Ադրբեջան, ԱՊՀ) երկրներում Անգլիա (ԱՄՆ) - Ֆրանսիա տնտեսական մրցակցության և ԵՄ-ում այս երկրների ներկայումս ծավալվող տնտեսական-քաղաքական հակամարտության համատեքստում:

Եզրափակելով ԱՀ գազային պաշարների մեր հակիրճ դիտարկումը՝ փաստենք. ԱԶԳ արդյունահանումը բոլոր համարժեք գնահատականներով հատել է պիկային հզորությունը՝ այդպես էլ չհասնելով 1 միլիոն բարել օրական արդյունահանման ցուցանիշին: *COP* ծրագրի իրականացումը թույլ կտա վերաբաշխել ԱԶԳ նավթադաշտի ներքին ճնշումը և երկարացնել պլատոյի ռեժիմում նավթարդյունահանումը (տե՛ս Հավելված 3): Սակայն առաջիկա 3-5 տարիներին անխուսափելի է Ադրբեջանում նավթարդյունահանման ծավալների անկումը՝ ԱԶԳ արդյունահանելի պաշարների սպառման և դրանց անգամ մասնակիորեն փոխարինող այլ նավթադաշտերի բացակայության հետևանքով: Այսպիսով, Ադրբեջանում ավարտվում է «Կասպիական մեծ նավթի դարաշրջանը»: Հետևաբար, անխուսափելի է նաև նավթադաշտերի «տարափի» նվազումը՝ պայմանավորված ԱԶԳ-ԲԹՁ ծրագրի իրականացմամբ: Որոշակի առումով կարելի է պնդել, որ ավարտվում է նաև *BP* «գերիշխման» դարաշրջանն Ադրբեջանում՝ հաշվի առնելով այլ, առաջին հերթին՝ ֆրանսիական ընկերությունների ներուժը գազային ոլորտում: Ադրբեջանի համար առջևում է գազի դարաշրջանը:

Սակայն ոչ բարդ հաշվարկները ցույց են տալիս, որ գազի արդյունահանումն ու արտահանումը չեն կարողանալու կոմպենսացնել նավթային եկամուտների անխուսափելի կրճատումը: Իրոք, Ադրբեջանում անցած տարիներին նավթի արդյունահանումն իր առավելագույն ցուցանիշներով կազմում էր մոտ 1 մլն բարել օրական, ինչը մոտ \$100/բ երկարաժամկետ միջին գնի դեպքում (սա շոայլ գնահատական է) տարեկան ապահովում էր մոտ \$36.0-36.5 մլրդ արժողությամբ ադրբեջանական նավթի վաճառքային ծավալի գոյացում: Մյուս կողմից, հայտնի է, որ

աղբրեջանական գազի առ այսօր ամենահավակնոտ ծրագրի (Շահ Դենիզի 2-րդ փուլ և *TANAP* գազատար)¹ արդյունահանման նախագծային ցուցանիշը կազմում է մոտ 16 մլրդ մ³ գազ տարեկան²: Գազի \$340/հազ. մ³ երկարաժամկետ միջին գնի դեպքում այն կարող է տարեկան գոյացնել միայն \$5.44 մլրդ վաճառքային ծավալ: Այսինքն՝ մոտ 7 անգամ ավելի քիչ, քան ԱԶԳ-ԲԹԶ նավթային ծրագիրը: Հետևաբար, գալիք տարիների ընթացքում՝ 2013-2018թթ. ժամանակահատվածում, ԱՀ ածխաջրածինների արդյունահանումից գոյացած եկամուտները, 2011-12թթ. համեմատ, անշեղորեն կնվազեն, գումարայինը՝ մոտ 6-7 անգամ: Նվազման կոնկրետ դինամիկան կախված է մի շարք տեխնիկական ու պաշարագիտական հանգամանքներից, ինչպես նաև բնական գազի գնագոյացման երկարաժամկետ սցենարներից, որոնց այստեղ չենք կարող անդրադառնալ: Նկատենք միայն, որ գազի \$500/հազ. մ³ չափազանց «շոյալ» երկարաժամկետ գնի դեպքում տարեկան վաճառքի ծավալը կկազմի \$8.0 մլրդ, այսինքն՝ նվազում մոտ 4.5 անգամ:

Այսպիսով, Աղբրեջանում ու Հարավային Կովկաս – Կասպիական տարածաշրջանում ավարտին է մոտենում ԱԶԳ դաշտի «մեծ նավթի» փուլը: Հետևաբար, ավարտվում է նաև Հյուսիսային Կասպիցի սահմանազատմամբ պայմանավորված աշխարհաքաղաքական այն կոնստրուկտը, որը ձևավորվել էր այստեղ դեռ ԽՍՀՄ փլուզման նախօրեին և 1990-ականների սկզբին (տե՛ս Հավելված 3): Առջևում է «գազի դարաշրջանը»: Այն պայմանավորված կլինի այժմ արդեն Հարավային Կասպիցի սահմանազատման գործընթացներով, տրանսկասպյան գազային և այլ ենթակառուցվածքային ծրագրերի մշակումով, դրանց իրականացմանը ՌԴ, Իրանի, Թուրքմենստանի և Ֆրանսիայի մասնակցության աստիճանով՝ ի համալրումն և/կամ ի հակակշիռ ԱՄՆ, ՄԲ, Իսրայելի և Թուրքիայի ծավալուն ներգրավվածության:

¹ Գազային ոլորտի *TANAP* ծրագրի մանրամասն վերլուծությունները տե՛ս Ս.Սարուխանյանի նյութերում՝ «Նորավանք» ԳԿՀ կայքում, www.noravank.am

² <http://expert.ru/2012/06/28/transturetskaya-truba/>

2.3. Նավթային խաղերը ոչգծային աշխարհում

Նավթային խաղեր. Ինչպես ասացինք վերը, *BP* ընկերության «փաթեթային առաջարկի» տրամաբանությանը ԱՀ-ն ակտիվորեն փորձում էր հակազդել մինչև 2008թ. օգոստոսը: Ի թիվս այլ աղբյուրների, դա են վկայում նաև Հավելված 1-ում բերվող՝ Բաքվում ԱՄՆ դեսպանության թիվ, թիվ 1-10 հաղորդագրությունները: Վրաց-օսական հակամարտության հետևանքներով, ՌԴ-ի կողմից Հրվ. Օսիայի և Աբխազիայի անկախության ճանաչումով, հայ-թուրքական մերձեցման գործընթացի առաջին փուլի մեկնարկով այս հակազդեցությունը սրընթաց թուլացավ և ավարտվեց լիակատար կապիտուլյացիայով: Աղբյուրներ, ի վերջո, ընդունեց 2007թ. *BP* ընկերության փաթեթային առաջարկի բոլոր հիմնական դրույթները¹: Այս կապակցությամբ ի հայտ են գալիս մի քանի ուշագրավ հանգամանքներ, որոնց արժե անդրադառնալ մի փոքր ավելի հանգամանալի:

Մեր դիտարկումները սկսենք հետաքրքիր մի մեջբերումով.

«2009թ. մայիսին կտրուկ սրվեց իրադրությունն Աղբյուրներում, մայրաքաղաք Բաքվում արձանագրվեցին ահաբեկչական պայթյուններ և զանգվածային բռնության դեպքեր: Պարբերաբար խանգարվում էր Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի բնականոն շահագործումը, իսկ ամսվա վերջին ԲԹՁ-ն ընդհանրապես կանգ առավ: Օրական մոտ 1 մլն բարել նավթի պակասին² միջազգային շուկան անմիջապես արձագանքեց նավթի գնի 12% ակնթարթային թռիչքով: Հունիսի սկզբներին խանգարվեց փխրուն հավասարակշռությունը Նիգեր գ. հովտում, ուր նորից գլուխ էին բարձրացրել ապստամբներ-

¹ Հետաքրքրական է, որ ամենայն հավանականությամբ պատասխանելով *BP* ընկերության մի բարձրաստիճան պաշտոնյայի հարցին, թե ինչու Աղբյուրներում ավելի վճռականորեն չսատարեց Մ.Սաակաշվիլուն 2008թ. օգոստոսյան օրերին, նա պատասխանեց. «Մեկ է, դա բան չէր փոխի», թեև շտապեց ավելացնել, որ «կուլիսների հետևում Աղբյուրներ գործնական քայլերով սատարում էր Վրաստանին» (թիվ 9, *I.C. 3.C*):

² Դժվար չէ կռահել, որ այս մեջբերման հեղինակները նկատի ունենին ԲԹՁ նավթամուղի *նովինալ* տարողունակությունը՝ 1 մլն բ/օր: Սակայն, ինչպես նշել էինք վերը, 2006թ. հուլիսից մինչև 2011թ. վերջը ԲԹՁ-ն աշխատել է թողունակության *նովինալ* արժեքից գրեթե երկու անգամ փոքր ցուցանիշով (56%):

րը: Արդյունքում՝ նորից խանգարվեց Նիգերիայից նավթի արտահանումը, ինչը շուկայում լրացուցիչ մտահոգություններ ստեղծեց:

Այս ամենին հետևեց Իրանի հայտարարությունը նավթի արտահանումն օրական 350 հազ. բարելավ կրճատելու մասին: Ըստ իրանական բարձրաստիճան պաշտոնյաների հայտարարությունների, այս կրճատումները կգործեն այնքան ժամանակ, մինչև որ չդադարեցվի ԱՄՆ և ԵՄ պատժամիջոցների գործընթացը Իրանի նկատմամբ: 2009թ. հուլիսին հում նավթի գինը մեկ բարելի դիմաց կազմեց \$145: Վերջապես, երբ օգոստոսի սկզբին Վենեսուելյան հայտարարեց, որ միանում է Իրանի պատժամիջոցներին՝ իր նավթային արտահանումների ծավալներում մտցնելով համապատասխան կրճատումներ, նավթի գինը հասավ աներևակայելի մակարդակի՝ \$160 մեկ բարելի դիմաց: Ամառվա ավարտին ողջ Արևմուտքը և առաջին հերթին՝ ԱՄՆ-ը և Մեծ Բրիտանիան, կանգնեցին էներգետիկ մղձավանջի առջև»:

Ի՞նչ է սա: Հեղինակի երևակայության արգասի՞ք: Ամենևին էլ ոչ: Մա մեջբերում է միանգամայն իրական, նույնիսկ պաշտոնական փաստաթղթից՝ **2007թ. նոյեմբերի 7-ին** կայացած ԱՄՆ Խաղաղօվկիանոսյան նավատորմի նախկին գլխավոր հրամանատար, ծովակալ Դ.Բլեյերի (*Denis Blair*) ելույթից [17]: Այս ելույթում պաշտոնաթող ծովակալը ԱՄՆ Կոնգրեսի էներգետիկ անկախության և գլոբալ տաքացման կոմիտեի անդամներին ներկայացրեց «Նավթային հարվածային ալիք» (*Oil Shock Wave*) մոդելային խաղերից մեկի (սցենարային վերլուծություն) արդյունքները:

Ժամանակային իրական մասշտաբում, իրական մեղիա-դաշտում և ԱՄՆ իշխանական օղակների իրական (բայց արդեն պաշտոնաթող) բարձրաստիճան պաշտոնյաների մասնակցությամբ (որոնք իրապես գիտեն, թե ինչ է նշանակում ազգային և գլոբալ մասշտաբի վճիռներ կայացնելը) անցկացվող «Նավթային հարվածային ալիք» մոդելային խաղերը ինքնին չափազանց հետաքրքրական երևույթ են, մեր արդի

«վիրտուալ աշխարհի» իսկական խորհրդանիշ և ուսանելի աղբյուր: Արժե այս խաղերին անդրադառնալ ավելի մանրամասն [18-20]: Բայց այստեղ մեզ հետաքրքրում է այլ հանգամանք:

Ինչպես գիտենք այսօր՝ 2013-ին, **2009թ. մայիսին** ոչ մի այսպիսի բան Բաքվում և աշխարհում տեղի չունեցավ: Բայց վերը բերված սցենարին շատ նման մի բան տեղի էր ունեցել արդեն **2008թ. օգոստոսին**¹: Նորից հարցնենք. ի՞նչ է սա, պարզ զուգադիպություն, թե՞ համարժեք վերլուծությունների արդյունք ու մոտակա ապագան կանխագգալու և մոդելավորելու ունակություն:

Հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է գոնե հակիրճ ներկայացնել այս մոդելային խաղերի հիմնական պատգամը, *մեսիջը*, որը հասցեագրված էր ԱՄՆ իշխանություններին: Այն շատ պարզ է (և ցավոք, ոչ այդքան ընդունելի ԱՄՆ քաղաքական *խթերլիշմենթի* որոշակի հատվածի համար) և կարելի է ձևակերպել հետևյալ կերպ. «արդի աշխարհում հում նավթի գնագոյացումը մեծապես ենթակա է մանիպուլյացիաների՝ լինեն դրանք ահաբեկչություններ, պատերազմներ, թե սպեկուլյատիվ մեքենայություններ: Հաշվի առնելով, թե որքան միահյուսված են նավթի և ընդհանրապես՝ ածխաջրածինների և հումքի գներն աշխարհի տնտեսական ու քաղաքական համակարգերի հետ, կարող ենք պնդել, որ մանիպուլյացիաներին մեծապես ենթակա է և մեր աշխարհաքաղաքական իրականությունը»²:

Այլ խոսքով՝ աշխարհի տնտեսաքաղաքական դինամիկ համակարգը մոտեցել է իր կայունության սահմանին: Եվ այստեղ բավական է այս համակարգի կրիտիկական մի որևէ բնութագրիչի նույնիսկ փոքր փոփոխություն, արտաքին մի փոքր միջամտություն³ («վարիացիա»՝

¹ Սցենարային այլ դրվագներին ակնանտես եղանք ողջ 2011-12թթ. և տեսնում ենք այսօր:

² Վստահ չեմ, որ իմ այս ձևակերպման հետ կհամաձայնեն «*Oil Shock Wave*» մոդելավորումների բոլոր մասնակիցները, մանավանդ ԱՄՆ Պետդեպարտամենտից: Բայց վստահ եմ, որ դրան կհամաձայնեք ծովակալ Դ.Բլեյերը՝ Վիետնամական պատերազմի տարիներին ԱՄՆ-ում իրականացված «սիզմա խաղերի» եռանդուն ջատագովը:

³ «Ընթացիկ իրականության վրա նվազագույն ներգործություն», ինչպես գրում էր մեծն Այգել Ազիմովն իր մարգարեական «Հավերժության վերջը» վիպակում 1955-ին [21], և ինչպես այսօր, այդքան հաճախակի, սիրում է կրկնել Ս.Պերեսլեզինը (տե՛ս [22]):

ինչպես ասում են մասնագետները), և համակարգը կարող է կորցնել իր (դինամիկ) կայունությունն ու ընկղմվել անցողիկ պրոցեսների¹ (*transient processes, переходные процессы*) մեջ:

Ումանք, ավաղ՝ շատերը, տուրք տալով ներկայիս մոդային, այս անցողիկ *պրոցեսները* կոչում են «քառս»: Նույնիսկ մեծատառով՝ «*Քառս*»: Ինչը, իհարկե, հակասում է դինամիկ համակարգերի տեսության հիմունքներին և այս տեսության *կիրառական* ասպեկտներով զբաղված մասնագետների ամենօրյա փորձին: Եվ դա զարմանալի չէ, քանի որ այս մոդան արդի աշխարհաքաղաքականություն ներմուծեց դինամիկ համակարգերի տեսությունից բավական հեռու կանգնած մի մարդ, պրոֆեսիոնալ դիվանագետ, որը զբաղված էր միանգամայն այլ բնույթի *կիրառական* խնդիրներով [23]: Խոսքն, իհարկե, Սթիվեն Մանի մասին է: Մեզ համար խորապես խորհրդանշական է թվում այն հանգամանքը, որ Ս.Մանը նաև ԱՄՆ առաջին պաշտոնական ներկայացուցիչն էր Հայաստանի նորանկախ 3-րդ Հանրապետությունում, իսկ հետո զբաղված էր Հարավային Կովկասի ածխաջրածինների արդյունահանման և տեղափոխման նոր աշխարհագրության կերտումամբ:

Իրականում պրն Մանը, իհարկե, լավ գիտի դինամիկ համակարգերի տեսության հիմունքները (ԱՄՆ ռազմական քոլեջի դասավանդման մակարդակն ընդհանրապես բարձր է և համակողմանի): Պարզապես այս քոլեջում դասավանդում են նաև *ռազմավարություն* և այն, ինչը կոչում են *գրանդ ստրատեգիա*, հավանական է՝ աշխարհում լավագույն մակարդակով: Վստահ եմ, որ պրն Մանը լավ գնահատականներով աչքի էր ընկնում հատկապես այս առարկաներից:

«Քառտիկ շեղում». **անցողիկ աշխարհ.** Բանն այն է, որ իրական կյանքում «քառսը», ավելի ճշգրիտ՝ «դինամիկ քառսը», կայունության կորստով պայմանավորված դինամիկ համակարգերին բնորոշ անցողիկ պրոցեսների մասնակի և շատ յուրահատուկ դեպքն է միայն: Բնական,

¹ Մենք հատուկ չենք օգտագործում «գործընթացներ» բառը ճիշտ այն պատճառով, որն ստիպում է խոսել ստամոքսի մարսողական *պրոցեսների*, նյարդային համակարգի իներվացիոն *պրոցեսների*, այլ ոչ թե *գործընթացների* մասին:

Ֆիզիկական համակարգերում, մեծ իներցիոնության և այսպես կոչված «դեպֆերային» ուժերի շոշափելի առկայության շնորհիվ, «քառսի» հետևանքները չնչին են, իսկ դրա գոյացումը քիչ հավանական՝ բառի շատ խիստ իմաստով: Ի վերջո, հենց դրա համար է մեր աշխարհը կայուն ու հասանելի ըմբռնման համար¹: Հենց դրա համար է, որ հին հույներն աշխարհը կոչում էին *Υποσπου*, այլ ոչ թե *Քաոս* (թեև գիտեին մեծատառով Քաոսի ողջ ուժը): Դրա հետևանքով է, որ, օրինակ, այսպես կոչված «Առնոլդի դիֆուզիայի» էֆեկտն առօրյա կյանքում մնում է գրեթե աննկատ: Ճիշտ ինչպես Պուանկարե-Լորենցի հարաբերականության տեսության *ռեյաստիվիստական* էֆեկտները:

Ուրիշ բան, սակայն, որ բարդ դինամիկ համակարգը, օրինակ՝ մի ողջ երկիր, իր սոցիալ-տնտեսական ու ազգային հարաբերությունների ոլորտներով, կարող է *բերվել* կայունության կորստի շեմին, միտումնավոր կամ պատահականորեն՝ իրեն ներքուստ բնորոշ գործոնների հետևանքով: Ինչպես կասեին մեր դրամատիկ հռետորաբանության ժամանակներում՝ երկիրը կարող է «ընկնել (նետվել) քառսի գիրկը»: Բայց, դե, սա բուն դինամիկ քառսի, առավել ևս մեծատառով «Քաոս»-ի հետ ոչ մի առնչություն չունի: Դինամիկ համակարգերի տեսությունում այս երևույթներն ունեն իրենց ճշգրիտ և միանգամայն համարժեք անվանումները՝ «կազմակերպված կրիտիկականություն», եթե խոսքն արտաքին, ուղղորդված ներագրման մասին է, կամ «աղմուկով ինդուկցված քաոս»², եթե խոսքը համակարգի կայունության որոշակի տիպի կորստի մասին է՝ այդ համակարգին բնորոշ ներքին պատահական երևույթների հետևանքով:

Ընդհանրապես, մեր օրերում «քաոս» բառի օգտագործման անհավատալիորեն լայն, անհիմն ու «քառտիկ» օգտագործումը, մանավանդ սոցիալ-տնտեսական ու աշխարհաքաղաքական ենթատեքստերում և հատկապես դինամիկ համակարգերի տեսությունից հեռու կանգնած հե-

¹ Սա Ռ.Թոմի հայտնի «կառուցվածքային կայունության» (*structural stability*) սկզբունքի այսպես կոչված իմացաբանական էությունն է [24]:

² *Noise induced chaos, хаос индуцированный шумом.*

դինակների կողմից, պարզապես ստվերում է տեղի ունեցող գործընթացների էությունը¹: Հեռուն չգնալու համար բավական է մի հայացք գցել «գունավոր հեղափոխություններին» և «արաբական գարնանը» նվիրված արդի մեծածավալ գրականությանը: Եթե «քառսն» այստեղ ինչ-որ կապ ունի էլ, ապա դա Ա.Շիրվանզադեի «*Քսոս*»-է: Ի վերջո, այն պատմում է նավթարդյունահանման և ժամանակի սոցիալ-քաղաքական առանձնահատկությունների մասին: Թերևս, արժե խորհուրդ տալ «*Oil Shock Wave*» մասնակիցներին՝ ներառել Շիրվանզադեին այս մոդելային խաղերի «հիմնադիր հայրերի» շարքում:

Ավելին, կարծում եմ՝ առկա են բոլոր հիմքերը պնդելու, որ «քառս» բառի այսպիսի լայն օգտագործումն ինքը որոշակիորեն ուղղորդված «միջամտություն» է, «մոդա»: Ուրախալի է, որ տեղեկատվական հեղափոխությունների մեր ժամանակներում հասանելի են դարձել բառօգտագործման այնպիսի գործիքներ, որոնք թույլ են տալիս մինչև վերջերս անհասանելի ստատիստիկ հիմնավորվածությամբ (ռեպրեզենտատիվությամբ) տեսանելի դարձնել այս կամ այն բառի, հասկացության օգտագործման հաճախակիության դինամիկան [26]: Իրոք, մինչ այդ այսպիսի ուսումնասիրությունները հիմնված էին միայն այսպես կոչված բառերի հաճախական բառարանների վրա [27, 28], որոնք մինչև մեր համակարգչային դարաշրջանն ունեին ոչ ռեպրեզենտատիվ ելակետային բազա, օրինակ՝ մեկ ամսագրի մեկ տարվա բոլոր համարներ կամ տեքստերի այլ՝ բավական սահմանափակ բազմություն: Լավագույն դեպքերում ելակետային բազմությունն այստեղ չէր գերազանցում մոտ մեկ մլն բառ և բառակապակցություն: Այլ խոսքով՝ դրանք այնքան էլ ռեպրեզենտատիվ չէին և լավագույն դեպքում տալիս էին միայն ստատիկ պատկերը՝ տվյալ պահին, տվյալ երկրում (տվյալ լեզվով), տվյալ նյութին բնորոշ բառօգտագործման հաճախակիությունը:


Ամեն ինչ փոխվեց, երբ *Գուգլ* (*Google*) ընկերությունը հայտնեց իր մոտ 15 մլն գրքերի թվայնացման ծրագրի ավարտի մասին: Մա երբևէ

¹ Ուրախությամբ նշեմ հաճելի բացառությունների որոշ սակավաթիվ դեպքեր [11, 25]:

տպագրված գրքերի մոտ 12%-ն է, իսկ դրանցում օգտագործված բառերի և բառակապակցությունների ելակետային բազմությունը գերազանցում էր 500 մլրդ-ը¹, այսինքն՝ հինգ հարյուր հազար անգամ ավելի, քան նախկինում: Այս հսկայածավալ բազմությունը *Գուգլը* հասանելի դարձրեց հանրային ազատ օգտագործման համար 2010-ի վերջից [26]: Ուստի, այսուհետ հնարավոր է դառնում դիտարկել բառերի և բառակապակցությունների օգտագործման դինամիկան՝ մինչ այժմ աննախադեպ համարժեքությամբ: Ընդ որում, այժմ հնարավոր է դառնում նաև դիտարկել այս կամ այն բառի օգտագործման հաճախակիության փոփոխությունը մոտ երկու դար ժամանակահատվածի ընթացքում (1800-2008):

Նկար 2.7

«Переходные процессы» և «хаос» բառերի օգտագործման հաճախակիությունը Google ընկերության ռուսերեն լեզվի տեղադրումում (35 մլրդ բառ և բառակապակցություն)



Նկար 2.7-ում բերում ենք *անցողիկ պրոցեսներ* («переходные процессы») և *քաոս* («хаос») բառերի օգտագործման հաճախակիության կորեքը ռուսերեն լեզվով, 1900-2008թթ. ժամանակահատվածում տպագրված մոտ մեկ միլիոն գրքերի և հոդվածների մեջ պարունակվող մոտ 35 միլիարդ բառերի և բառակապակցությունների բազմության հենքի վրա:

¹ Անգլերեն - 361 մլրդ բառ և բառակապակցություն, ֆրանսերեն 45 մլրդ, գերմաներեն 37 մլրդ, ռուսերեն 35 մլրդ:

Ունենալով վիճակագրական բարձր արժանահավատության աստիճան՝ բերված նկարը, կարծում ենք, հանդիսանում է վերջին տասնամյակներում իմացաբանական առումով տեղի ունեցած «պարադիգմալ փոփոխության» (*paradigm shift*) իսկական խորհրդանիշ¹: Ցավոք, նաև՝ *էպիկրիզ* (հիվանդության պատմություն): Իրոք, ինչպես տեսնում ենք, XX դարի 20-30-ականների պիկից հետո «*xaoc*» բառի օգտագործման հաճախակիությունը նվազում է՝ նվազագույն արժեքներին հասնելով 1960-1980թթ. հատվածում: Եվ սա բնական է:

Այս երեք տասնամյակը «ռզգծային հեղափոխության» տարիներն էին, երբ հայտնվեցին կայունության կորստին նվիրված բեկումնային ուսումնասիրություններ և կայացավ պարադիգմալ փոփոխություն ողջ բնագիտությունում: «Քաոս», ավելի ճշգրիտ՝ «կայունության կորուստ» հասկացության փոխարեն ուշադրությունը սևեռվեց կոնկրետ բնագիտական ասպարեզներում «քաոսի» գոյացման պատճառների, մեխանիզմների, որակա-քանակական պարամետրերի, կանխատեսման հնարավորությունների վրա: Այդ ժամանակ ստեղծվեցին «դիֆերենցվող արտապատկերումների հատուկության տեսությունը» («լայն հանրությանը» հայտնի որպես «աղետների տեսություն»), «կոլեկտիվ էֆեկտների տեսությունը» (նույն լսարանին հայտնի որպես «սիներգետիկա»): Մշակվեցին և հրապարակվեցին կայունության շեմին կանգնած համակարգերի աներևակայելի հարուստ, անակնկալ ու բարդ վարքը նկարագրող տարբեր մոդելներ և սցենարներ, ներմուծվեցին նոր ու հեղափոխական հասկացություններ² և այլն: 1960-1980թթ. այս թեմաներին նվիրված հրա-

¹ Անզլերեն, գերմաներեն և ֆրանսերեն լեզուներում նկարը նույնիսկ ավելի խոսուն է: Չափազանց գայթակղիչ կլիներ այդ նկարների համեմատական վերլուծությունը, բայց սա, իհարկե, առանձին ուսումնասիրության նյութ է:

² «Քաոսի» երկրպագուների համար նշենք տուրբուլենտության Ռոյել-Թակենսի և Պոմո-Մանկիլի մեխանիզմները, Պուանկարե-Հոպֆ-Անդրոնովի «սահմանային ցիկլի» բիֆուրկացիոն մեխանիզմը, Լորենցի «տարօրինակ աթրակտորը», Մմելյի «ամբակը», Ֆեյգենբաումի բիֆուրկացիաների կրկնապատկումների կասկադը, Մանդելբրոտի «ֆրակտալները», Թոմ-Առնոլդի «աղետների դասակարգման» թեորեմը, Կոլմոգորով-Առնոլդ-Մոզերի մեխանիզմը, Առնոլդի դիֆուզիան, Ժորդան-Սինայի «բիլիարդները», Անտոսովի A-համակարգերը, Հորքեյմերի «աղմուկով ինդուկցված քաոսի» մոդելները, Էյզենի և Հակենի սիներգետիկ մոդելները և այլն:

պարակումների իսկական հեղեղ տեղաց՝ հիմնականում անգլերեն և ֆրանսերեն լեզուներով: Այն բավական արագ թարգմանվում էր և ռուսերեն: Բացի այդ, ԽՍՀՄ-ում դեռ 40-ականներից առկա էին ակադեմիկոսներ Պապալեսկու, Մանդելշտամի, Անդրոնովի, Կոլմոգորովի հզոր դպրոցները, որոնց լրացնելու եկան Արնոլդի, Սինայի, Ջասլավսկու և ուրիշ շատերի բազմաթիվ աշխատանքները: Այնպես որ, ռուսալեզու գրականությունն այս հարցում, և այդ տարիներին, միանգամայն համահունչ էր դինամիկ քառսի ուսումնասիրությունների *մենյայթրիմին*:

Այդ ժամանակ «քառսին» նվիրված ուսումնասիրությունները դեռ առարկայական էին, պատշաճորեն խիստ և համահունչ բնագիտությանը հարիր չափանիշներին: Այլ խոսքով՝ դրանք *իմաստ* ունեին: Մասնագիտական հրապարակումներում քառսը դեռ մեծատառով չէր գրվում, իսկ ուշադրությունը հիմնականում ուղղված էր դրա գոյացման պատճառների ու մեխանիզմների բացահայտմանը, նկարագրմանը և կանխատեսմանը: Բնականաբար, նույն այդ ժամանակահատվածում նկատելի է նաև «անցողիկ պրոցեսներ» բառակապակցության օգտագործման հաճախակիության աճ («*переходные процессы*», տե՛ս Նկար 2.7): Այն հատկապես նկատելի է ռուսերեն տեգաուրուսում¹. չէ՞ որ անցողիկ պրոցեսների ԽՍՀՄ դպրոցը, թերևս, լավագույնն էր աշխարհում²: Այդ ժամանակ բոլոր նշված ուսումնասիրությունները դեռ կատարվում էին կայունության տեսության մեծ ծիրում, և դեռ կորսված չէր գիտական ճշգրտության ու համարժեքության չափանիշը:

Իսկ հետո, 1980-ականների կեսից, ինչ-որ բան³ կատարվեց, որը փոխեց ողջ պատկերը: Մի կողմից, կատարվող ուսումնասիրություններ-

¹ Այն նկատելի է և հայերենում: Հայրենական հրապարակումներում այլևս չեք հանդիպի «անցողիկ պրոցեսներ» կամ «մոնիթորինգ» եզրերը՝ ճարտարագետին կամ գիտնականին հարազատ իմաստային խստությամբ, վավերության իրենց տիրույթներում և կոնտեքստի համարժեքության դաշտերում: Այս եզրերին եկել են փոխարինելու տարատեսակ «գործընթացներն» ու «մշտադիտարկումներն» ամենաանակնկալ ոլորտներում՝ զուգորդված իմաստային համարժեքության լիակատար կորստով: Դրանք այլևս եզրեր չեն:

² Պատիվ ունեն համարել ինձ այս դպրոցի աշակերտ:


³ Կոմունիստական վարչակարգերի անկումը և ԽՍՀՄ մոտալուտ փլուզումն այս մեծ «ինչ-որ բանի» մասն էին:

րում շեշտը դրվեց ավելի ոչֆորմալացված համակարգերի ուսումնասիրման վրա (տնտեսական ճգնաժամեր, ֆինանսական շուկա, խիստ հսկողության գաղութներում ապստամբություններ, քաղաքական ճգնաժամեր և այլն): Օգտագործվող մոտեցումները կորցրին իրենց խստությունը, հասկացությունները դարձան մոտավոր և տձև: Ահագնացավ կեղծ գիտական, սպեկուլյատիվ բնույթի հրապարակումների թիվը: Փոխվեց և բուն քառսի նկատմամբ մոտեցումը, այն հաճախակի սկսեց գրվել մեծատառով: Եվս մի քանի տարի, և, եթե պատկերավոր արտահայտվելու լինենք՝ *Քառսը* հաղթեց *Կոսմոսին*:

Բայց սա կատարվող գործընթացների միայն մի կողմն էր: Մանկամտություն կլինեք կարծել, թե սոցիալական կամ քաղաքական համակարգերում «քառսին» նվիրված, իրենց մոտեցումներով խիստ, օգտագործված զինանոցով՝ համարժեք ուսումնասիրություններ այլևս չէին կատարվում: Հակառակը, դրանք նոր թափ ստացան, բայցև դուրս եկան բաց հրապարակումների մատչելի դաշտից: Այդպիսի հսկայածավալ լավ կազմակերպված, տասնամյակներ տևող և հատուկ ուղղորդված ուսումնասիրությունների մասին մենք արդեն առիթ ունեցել ենք գրելու, երբ վերլուծում էինք երկրների «ուժեղությունը», «թուլությունը» և «ձախողումը» գնահատող տարբեր կառույցների մոտեցումները [29]: Խորհրդանշական է, որ 1985-ից արդեն նկատելի է և *անցողիկ պրոցեսներ* հասկացության օգտագործման հաճախակիության նվազումը (Նկար 2.7): Եվ իսկապես խորհրդանշական է այն, որ Ս.Մանի հիշյալ աշխատությունը, որը հավասարապես պատկանում էր այս երկու միտումներին, Նկար 2.7-ում հայտնվում է «Քառս» բառի օգտագործման հաճախակիության վերելքի և «անցողիկ պրոցեսներ» հասկացության վայրէջքի ճիշտ միջնակետում: Այսուհետ «պրոցեսներին» եկան փոխարինելու «գործընթացները»:

Կարճ ասած, Նկար 2.7-ը համարժեք կերպով պատկերում է այն միտումները, որոնք բնորոշ էին ռուսալեզու և համաշխարհային գրականությանը մոտ կես դար ժամանակահատվածում (1960-2008թթ.): Այն արտացոլում է իրականությունը, և այն *իմաստ* ունի: Ինչպես *իմաստ*

ունեն բարդ դինամիկ համակարգերում անցողիկ պրոցեսները, այդ թվում՝ և «դինամիկ քառսը»: Այն ունի սկիզբ, ունի և վերջ: Ունի գոյացման պատճառներ, ծավալման առանձնահատկություններ, ընթացքի ուրույն սցենարներ ու մեխանիզմներ: Ինչպես նաև՝ շատ որոշակի հետևանքներ: Եվ այս ամենը մնում է ուժի մեջ, եթե խոսակցությունը դինամիկ համակարգերի լեզվից տեղափոխենք սոցիալ-տնտեսական կամ աշխարհաքաղաքական ոլորտ:



Աղբյուրները՝ Platts 2012, BP 2012:

Այս առումով «գունավոր հեղափոխությունները» և «արաբական գարնան» գործընթացները նույնպես իմաստ ունեն, ունեն գոյացման պատճառներ, զարգացման առանձնահատկություններ ու հանգեցնում են շատ որոշակի հետևանքների: Օրինակ, կայացող, սակայն տակավին չկայացած ազգ-պետությունների ջախջախում (Իրաք, Եգիպտոս, Լիբիա, Սիրիա), քաղաքական ու աշխարհաքաղաքական դիրքորոշման փոփոխություն (Իսպանիա, Ուկրաինա, Վրաստան), կամ քրիստոնեական

տարրի արտամղում «Մեծ Միջին Արևելքի» տարածաշրջանից և այլն: Ցավոք, այս կարևոր և հետաքրքիր հարցերի քննությունն անմիջականորեն դուրս է մեր թեմայից:

Շուկան, սպեկուլյացիան և արդար զինը. Այս տեսական շեղումը մեզ հարկավոր էր հետևյալն ընդգծելու համար: Նավթային ոլորտը, անքակտելիորեն միահյուսված լինելով աշխարհաքաղաքականությանը, բարդ դինամիկ համակարգ է, որը գոյատևում է կայունության և դրա կորստի միջև: Այստեղ կիրառելի են վերը հիշատակված երևույթներից և հասկացություններից շատերը: Մեր «գլոբալացված» աշխարհում նավթի արդյունահանման ծավալները և նավթի շուկայական զինը, իրոք, համակարգի այն կրիտիկական պարամետրերն են, որոնց միտումնավոր կամ պատահական փոփոխությունը կարող է հանգեցնել կառուցվածքային կայունության (*structural stability*) կորստի և աղետալի հետևանքների՝ թե՛ սովորական իմաստով, թե՛ «աղետների տեսության» լեզվով [18, 19, 30]:

Ինչպես նշել էինք վերը, սա էր «Նավթային հարվածային ալիք» մոդելային խաղերի հիմնական (և ուշացած) հետևություններից մեկը: Այս պարագայում կայունության կորուստը կարող է նշանակել համակարգային փլուզում կամ տնտեսական և ֆինանսական ճգնաժամ: Իսկ դրանցով առաջացած «հարվածային ալիքները» կտարածվեն տարածաշրջաններով, նույնիսկ ողջ աշխարհով մեկ՝ տանելով համակարգը դեպի նոր, տակավին անհայտ մի հավասարակշիռ իրավիճակի: Օրինակ՝ այսպես կոչված «նոր աշխարհակարգի» հաստատում, որը մենք գերադասում ենք կոչել նեոգաղութատիրություն, սպեկուլյատիվ-իմպերիալիստական վերազգային համակարգի հաստատում:

Այս կապակցությամբ մեզ հետաքրքրում է հում նավթի միջազգային գների վարքը վերջին տարիներին: Սկզբում ներկայացնենք այն ժամանակային մեծ մասշտաբով՝ 1972-2011թթ. համար (տե՛ս Նկար 2.8, ընթացիկ \$/բարել գներով): Այստեղ մենք տեսնում ենք 1985-86թթ. գների անկումը, որը ԽՍՀՄ փլուզմանն ուղղված «համակարգային հարվածի» կարևորագույն բաղկացուցիչն էր (ավելի մանրամասն տե՛ս [12]): Հստակ

տեսնում ենք նաև 1998թ. ճգնաժամի ազդեցությունը: Սակայն ուշադրություն դարձնենք իր ամպլիտուդով շատ ավելի մասշտաբային երևույթի վրա, թե ինչպես, սկսած 2002-05թթ., շեշտակիորեն և անբեկանելի կերպով սկսում է աճել հում նավթի գինը՝ անկախ նրա տեսակից:

Հարցով զբաղվող վերլուծաբաններից շատերը բացատրում են այս վարքը Չինաստանի հսկայական տնտեսական համակարգի զարգացմամբ, հում նավթի (և գազի) հանդեպ Չինաստանի տնտեսության հսկայական «ախորժակով», որը և կայունորեն բարձրացնում է հում նավթի գինը¹: Ինչպես նաև ԱՄՆ իշխանությունների կողմից իրականացված դուլարային զանգվածի շեշտակի ավելացումով: Դա, իհարկե, այդպես է, և այս բացատրությունը կգոհացներ նաև մեզ, եթե չլինեին դինամիկ համակարգերի վարքի կիրառական ասպեկտների ուսումնասիրման մեր փորձը և երկու կարևոր հանգամանք. վերը հիշատակված «Նավթային հարվածային ալիք» մոդելավորումների արդյունքները և 2007-08թթ. նավթի գների պիկային վարքը, որն առանձնանում է անգամ 2005-07թթ. գների աճի ֆոնին:


Բանն այն է, որ Չինաստանի տնտեսական զարգացումն այն հիմնական, ֆոնային ուժն է, որը պայմանավորում էր (և պայմանավորում է) հում նավթի գների կայուն, կանխատեսելի և գնահատելի բարձրացումը (Նկար 2.9): Դրանց այսպես ասած ուղղորդող վեկտորը, տատանումների տեսության լեզվով՝ երևույթի «հիմնական մոդան»² է: Այն ածխաջրածինների գնագոյացման համակարգը դանդաղորեն մոտեցնում է կայունության սահմանին: Ինչպես ասում են մասնագետները, սա այն ուժն է, որը բարձրացնում է «համակարգի կրիտիկականությունը»: Եվ այստեղ, կայունության սահմանին, բավական է արդեն իր մասշտաբ-

¹ Մենք նշել էինք ևս մեկ գործոն՝ ՌԴ-Մաուրյան Արաբիա ռազմավարական գործարքը՝ կայացած 2003թ. սեպտեմբերին [12]: Այն թույլ տվեց բացառել ԽՍՀՄ փլուզմանը հանգեցրած «համակարգային հարվածի» կրկնությունը ՌԴ-ի նկատմամբ ու երաշխավորեց ՌԴ տնտեսական և աշխարհաքաղաքական վերելքը 2002-2010թթ. ընթացքում: Ժամանակահատված, որը նախագահ Պուտինի կողմնակիցները բնութագրում են որպես «ծնկներից կանգնելու ժամանակը», իսկ հակառակորդները՝ որպես «нефтяная халыва»:

² Սա տատանումների տեսության «մոդան» է, լազերային ֆիզիկայի «мода накачки»-ն, այլ ոչ թե նորաձևությունը, «քառս» բառի օգտագործման ներկայիս մոդան:

ներով շատ ավելի փոքր գործոն, օրինակ՝ մի ահաբեկչություն, վթար կամ այլ *արտաքին ուղղորդված միջամտություն*, և համակարգը կարող է կորցնել կայունությունը, վերապրել «կառուցվածքային դեֆորմացիա» կամ, առօրյա լեզվով ասած՝ փլուզվել: Ահա սա է վերը հիշատակված «Նավթային հարվածային ալիք» մոդելավորումների հիմնական, ու նորից կրկնենք՝ բավական ուշացած արդյունքներից մեկը:

Նկար 2.9



Իսկ մյուս կարևոր արդյունքն այն է, որ այս մոդելավորումներն ու դրանց հետ կապված գործընթացները լույս սփռեցին այդպիսի մի «ուղղորդված արտաքին միջամտության» վրա: Դա տեղի ունեցավ այն բանից հետո, երբ այն ժամանակ ԱՄՆ նորընտիր նախագահ Բ.Օբաման, հաղթահարելով բազում արգելքներ, այնուամենայնիվ, կարողացավ նշանակել ծովակալ Բլեյերին ԱՄՆ Հետախուզության ազգային տնօրենի (DNI) պաշտոնում¹: Դրանից քիչ անց, վրաց-ռուսական պատերազմից

¹ Բայց այդպես էլ չկարողացավ ԱՄՆ Ազգային հետախուզության խորհրդի (NIC) նախագահի պաշտոնում հաստատել լեզենդար Չ.Ֆրիմենի թեկնածությունը՝ հանդիպելով ԱՄՆ պատմության մեջ նախադեպը չունեցող ճնշման: Նա նույնիսկ ստիպված եղավ 2010թ. մայիսի 21-ին ընդունել ԱՄՆ Հետախուզության ազգային տնօրենի պաշտոնից ծովակալ Դ.Բլեյերի վաղաժամ հրաժարականը (ավելի մանրամասն տե՛ս [32]):

ընդամենը 2 շաբաթ հետո, հեղինակավոր *The Washington Post*-ը 2008թ. օգոստոսի 21-ի իր համարում [31] տեղեկացրեց, որ համաձայն ԱՄՆ կառավարության օպցիոնների և ֆյուչերսային գործարքները վերահսկող անկախ գործակալության¹ տվյալների, որոշ ընկերություններ, որոնք իրենց ներկայացնում էին բացառապես որպես նավթ տեղափոխող և մատակարարող կազմակերպություններ, իրականում նավթային սպեկուլյանտներ են և արհեստականորեն, իրենց ձեռնադրելով կերպով բարձրացնում են նավթի գինը: Թերթի պնդմամբ՝ հաստատված է, որ 2008-ին աշխարհում նավթի գների պիկային վարքի համար հիմնականում պատասխանատու է ընդամենը մեկ այդպիսի ընկերություն՝ Շվեյցարիայում գրանցված *Vitol* ընկերությունը:

Ավելին, փաստված է, որ այս ընկերությունը Հյուսթոնում գտնվող մասնաճյուղի օգնությամբ իր ձեռքում էր կենտրոնացրել աշխարհի խոշորագույն՝ Նյու Յորքի ապրանքային բորսայում նավթի օպցիոնային վաճառքների 11%-ը՝ անհավասարի բարձր ցուցանիշ: 2008թ. հունիսի 6-ին *Vitol* ընկերությունը սպեկուլյատիվ գործարքներ էր իրականացրել 57.7 մլն բարել նավթի չափաքանակի հետ: Սա երեք անգամ ավելին է, քան ամբողջ ԱՄՆ օրական սպառումը: Գործարքի հետևանքով հում նավթի գինը բորսայում թռավ միանգամից \$11-ով և արդեն հուլիսի 11-ին հասավ \$147.27 մեկ բարելի դիմաց պիկային ցուցանիշին: Հղում կատարելով *CFTC* գործակալությանը մոտ կանգնած աղբյուրներին՝ թերթը պնդում էր, որ ապրանքային բորսաներում հումքային մատակարարումների առուժախի գործարքների 81%-ը գտնվում է ընդամենը մի քանի ընկերությունների ձեռքում, որոնց թվում է նշված *Vitol* ընկերությունը²:

¹ *Commodity Futures Trading Commission (CFTC)*.

² Այս առումով չափազանց ուշագրավ է *Գլենկոր* ընկերության գործունեությունը: Նշենք, որ *The Washington Post*-ի հիշյալ հոդվածը մեծ հնչեղություն ստացավ ԱՄՆ-ում: XX դարի սկզբին Ռոթշիլդյան տան մեքենայությունների մասին հրապարակումներից հետո այն, թերևս, հաջորդ հրապարակումն էր, որ փաստերով և հրապարակմանը զուգընթաց իշխանական ու *դատական վճիռներով* հաստատեց նավթի գնագոյացման սպեկուլյատիվ բնույթն ապրանքային բորսաներում:

Վերհիշենք «Նավթային հարվածային ալիքի» 2007թ. մոդելավորումների վերը բերված սցենարը: Ինչպես տեսնում ենք, որպեսզի իրական կյանքում նավթի գինն ակնթարթային թռիչք ապրի և հասնի \$147/բարել ցուցանիշին, ամենևին էլ պետք չէ պայթեցնել ԲԹՁ-ն: *Vitol* ընկերությունը դա արեց մենակ և արդեն 2008թ. հուլիսի 6-ին:

Նկար 2.10

Vitol/Arawak Energy ընկերության ԱԲՀ-ներով սահմանված 3 նավթաղաշտերը



Այս առումով հատկանշական է Ադրբեջանում *Vitol* ընկերության ակտիվ գործունեության փաստը: Բավական է մասնագիտացված գործակալությունների կայքէջերում իրականացնել ոչ բարդ որոնում, և ակնհայտ կդառնա, որ սկսած 2007թ.՝ այս ընկերությունը հետևողականորեն ամրապնդում է իր դերակատարումն Ադրբեջանից հում նավթի արտահանումների (հիմնականում Նովոռոսիյսկից) և ադրբեջանական նավթի առքուվաճառքի գործընթացներում: Ակներև կդառնա նաև այն հանգամանքը, որ 2007-2010թթ. ժամանակահատվածում զուտ մատակարարող ընկերությունից *Vitol*-ը կամաց-կամաց դառնում է նաև ադրբեջանական նավթաղաշ-

տերի սեփականատեր: Այսպես, համաձայն ռուսական *M&A online* տեղեկատվական-վերլուծական կայքէջի 2009թ. փետրվարի 5-ի հաղորդագրության¹, *Vitol* ընկերությունն իր *Rosco S.A* «քույր» ընկերության միջոցով 2007-08թթ. իր ձեռքը վերցրեց *Arawak Energy* ընկերության բաժնետոմսերի 41.43%-ը, իսկ 2009թ. փետրվարի սկզբին ամբողջությամբ կլանեց այն²: Բանն այն է, որ այս ընկերությանն էին պատկանում ադրբեջանական Գոբուստան ափեզրյա, Գոբուստան կենտրոնական և Գոբուստան հյուսիսային նավթագազային դաշտերը (տե՛ս Նկար 2.10):

Եզրափակելով՝ ներկայացնենք մի ուշագրավ դիտարկում ևս: *The Washington Post*-ի վերոհիշյալ հոդվածի հրապարակման հաջորդ օրով՝ 2008թ. օգոստոսի 22-ով թվագրված Բաքվում ԱՄՆ դեպանության հաղորդագրությունից (Հավելված 2, թիվ 9) տեղեկանում ենք, որ ԱՀ նախագահ Ի.Ալիևը *BP* ընկերության բարձրաստիճան մի պաշտոնյայի հետ անկեղծ զրույցում ներկայացրել է իր պատկերացումները մի քանի շաբաթ առաջ տարածաշրջանում ծավալված իրադարձությունների վերաբերյալ: Նա առաջ է քաշել, հաղորդագրության բառերով՝ «մի կոնսպիրոլոգիական տեսակետ», որի իսկությունը, ճիշտ է, չէր պնդում, բայց նայնպես, չափազանց հետաքրքրված էր քննարկել այն *BP* ներկայացուցչի հետ: Ըստ պրն Ալիևի, չափազանց կասկածելի է 2008թ. օգոստոսյան դեպքերի հետևյալ հաջորդականությունը.

- նախկինում *КТБ*-ի կողմից հովանավորվող քրդական *PKK* գրոհայինները պայթեցնում են ԲԹՁ-ն,
- երեք օր անց Ռուսաստանը ներխուժում է Վրաստան,
- «պատահական» ուրբակոծման հետևանքով շարքից դուրս է գալիս ԱՀ-ից նավթի տեղափոխման համար օգտագործվող երկաթուղային կամուրջը,

¹ <http://www.maonline.ru/mna/3491-vitol-poglotit-arawak-energy.html>

² Վլանումը հնարավոր եղավ միայն այն բանից հետո, երբ ստացվեց ՌԴ Հակամենաշնորհային դաշնային ծառայության (*ՓԱՇ ՓՓ*) համապատասխան թույլտվությունը: *Arawak Energy* ընկերությանն էին պատկանում նաև 3 դաշտ ՌԴ Կոմի Ինքնավար Հանրապետությունում և 5 դաշտ Ղազախստանում: Ի դեպ, *Vitol*-ը առաջին ընկերությունն էր, որը 2011թ. ապրիլի սկզբին իրականացրեց Լիբիայի «ապստամբների» նավթի առաջին չափաքանակների առքուվաճառքի գործարքը:

- մի այլ պատահական ռուսեր է ընկնում Բաքու-Սուփսա նավթատարից ընդամենը 10 մ հեռավորության վրա,
- ռուսական *Транснефть* ընկերությունը հայտնում է, որ Բաքու-Նովոռոսիյսկ նավթամուղի աշխատանքներում հայտնաբերվել են տեխնիկական խափանումներ, ինչը հարցականի տակ է դնում ԱՀ-ից նավթի արտահանման այդ ժամանակ գործող միակ ուղին (Հավելված 2, թիվ 9, *с. 5*):

Կարծում ենք, ակներև է, թե ինչ է այս ամենով ուզում ասել Ի.Ալիևը: Զվարճալի է, սակայն, թե ով է սա ասում՝ Ադր. ԽՍՀ *КТБ* նախկին ղեկավարի (որն ի պաշտոնե համակարգում էր *PKK* գրոհայինների հետ ՊԱԿ աշխատանքը) ներկայիս արքայազն-ժառանգը: Եվ ում է այս ամենն ասվում՝ նախկին Բրիտանական կայսրության և ներկայիս եվրատլանտյան համակարգի ենթակառուցվածքային տարրի ղեկավարներից մեկին: Իրոք որ, պատմությանը բնորոշ է սարկաստիկ հումորը:

Բայց այս հումորային երանգը չէ, որ գրավեց մեր ուշադրությունը, այլ՝ նախ այն հանգամանքը, որ եթե այս խոսակցությունը կայանար ոչ թե 2008թ. օգոստոսի 22-ին¹, այլ, ենթադրենք, ուղիղ մեկ ամիս անց՝ սեպտեմբերի 22-ին, ապա պրն Ալիևը վերը բերվող «կասկածելի երևույթների» շարքում անպայման կհիշատակեր նաև Կենտրոնական Ազերի պլատֆորմի աղետալի վթարը (վերը նշել էինք, որ Բաքվում ԱՄՆ դեսպանությունը վստահ էր, որ սա ահաբեկչությունն չէ, իսկ մի փոքր ավելի ուշ *BP*-ն ընդունեց, որ վթարը տեղի է ունեցել «ստորջրյա հորերից մեկի վատ ցեմենտապատման հետևանքով»):

Այնուհետև, սեպտեմբերյան այս ենթադրյալ խոսակցության մասնակիցների ուշադրությունը կցանկանայի հրավիրել այդ տարի հում նավթի միջազգային գների ուշագրավ վարքի վրա (Նկար 2.11): Այս նկարից տեսնում ենք, որ այսքան աղմուկ բարձրացրած ԲԹԶ պայթեցումը «քուրդ գրոհայինների կողմից», տարատեսակ «պատահական ռումբերը»

¹ Ի դեպ, չեմ էլ կասկածում, որ նման խոսակցություն կայացել է: Ուղղակի, ցավոք, *Wiki-leaks*-յան հրապարակումներում այս փաստը չի արտացոլվել:

և ընդհանրապես ողջ վրաց-օս-ռուսական օգոստոսյան «պատերազմը» նկարում արտահայտվում են դժվար նկատելի մի պիկով: Այլ խոսքով՝ այս ամենի ազդեցությունը հում նավթի միջազգային գների վրա պարզապես դժվար նշմարելի է:

Նկար 2.11



Հակառակը, հստակ նշմարելի է 2008թ. սեպտեմբերի 18-19-ին արձանագրված պիկը, որն իր ամպլիտուդով մոտ 4 անգամ ավելի մեծ էր, քան օգոստոսյան «պատերազմի» հում նավթի գներինը: Այն, կարծում եմ՝ միանգամայն հիմնավոր կերպով, մենք կապում ենք Կենտրոնական Ազերիի պլատֆորմի աղետի հետ, որը տեղի ունեցավ, ինչպես նշել էինք վերը, 2008թ. սեպտեմբերի 17-ի առավոտյան: Դե, իսկ ինչպե՞ս և ի՞նչ ճանապարհներով այս աղետի մասին տվյալները գրեթե անմիջապես հայտնի դարձան հում նավթի գնագոյացման հետ առնչվող ուժերին (հիշեցնենք, որ այս վթարի մասին տվյալները հասարակ մահկանացուներին հասանելի դարձան միայն 2010թ. դեկտեմբերի 15-ին, *Փարդիան* ամսագրի *Wikileaks*-յան հրապարակումներից հետո, ավելի քան 2 տարի անց), սա հարց է, որը կցանկանայի ուղղել թե՛ այս ենթադրյալ խոսակցության մասնակիցներին, թե՛ առավելապես ԱՄՆ *CFTC* գործակալության պաշտոնյաներին:

Մեզ թույլ տանք մի փոքր ընդլայնել Ի.Ալիևի պատկերացումները տարածաշրջանում գործող իրողությունների մասին և առաջարկենք դեպքերի զարգացման մեկ այլ տարբերակ.

- գիտակցելով նավթի համեմատաբար ցածր (\$30-40/բարել) գների պարագայում ԱԶԳ նավթարդյունահանման *BP/AIOC* եռափուլ ծրագրի վտանգված բիզնես-գրավչությունը, առավել ևս այն հանգամանքը, որ առանց այդ էլ ձգձգվող և անընդհատ թանկացող ԲԹԶ նավթամուղի ծրագիրն այլևս զրկվում է որևէ բիզնես-գրավչությունից,
- 2006-07 թվականներին առերեսվելով ԱԶԳ-ից նավթարդյունահանման խնդիրներում լուրջ բարդությունների հետ,
- ի շահ օգտագործելով ու փոխլրացնելով ԱՄՆ-ի, Իսրայելի, ԱՀ-ի և Վրաստանի կողմից վարվող տարածաշրջանային քաղաքականության տարբերը,

BP ընկերությունը «հանցավոր գործարքի» մեջ է մտնում *Vitol* և *Glencor* ընկերությունների հետ ու 2004-05 թվականներից ձեռնամուխ է լինում հում նավթի միջազգային գների սպեկուլյատիվ բարձրացման գործընթացին: Դա *BP* և այլ խոշոր նավթարդյունաբերող ընկերությունների համար խոստումնալից հեռանկարներ բացեց ոչ միայն Հարավային Կովկասում, այլ նաև այս տարածաշրջանից շատ ավելի հեռու, մոլորակի գրեթե բոլոր նավթաբեր անկյուններում՝ Մեքսիկական ծոցից մինչև Ալյասկա, Նիգեր գետի հովտից մինչև Ռուսաստան¹, բազմաչարչար Դարֆուրից մինչև Լիբիա:

¹ Արդարության դեմ չմեղանչելու համար նկատենք, որ 2010թ. մայիսի 26-ին ՌԴ Արբիտրաժի գերագույն դատարանը \$35.2 մլն տուգանք սահմանեց *TNK/BP* համատեղ ընկերությանը «հակամենաշնորհային օրենքների խախտման և 2008-ին նավթի ու նավթամթերքների գների արհեստական բարձրացման և սպեկուլյացիայի համար»:

<http://www.platts.com/RSSFeedDetailedNews.aspx?xmlpath=RSSFeed/HeadlineNews/Oil/8751289.xml>

Ժամանակին ռուս վերլուծաբաններից մեկը 2008-ի վրաց-օս-ռուսական պատերազմն անվանեց «*BP*-ի պատերազմ»: Ինչպես գիտենք, 2013թ. մարտի 21-ից 50-50% մասնաբաժիններով *TNK/BP*-ն այլևս պատմություն է: Այն կլանվել է ՌԴ պետական «*Роснефть*» ընկերության կողմից, <http://lenta.ru/news/2013/03/21/close/>

Մյուս կողմից, *BP* ընկերությունը 2007թ. սկզբին «փաթեթային վերջնագիր» ներկայացրեց Ադրբեջանին՝ հանդիպելով վերջինիս որոշակի դիմադրությանը: Դեպքերի «հարկադիր թեժացումը» տարածաշրջանում հանգեցրեց ռազմական բախման: ՌԴ վճռական հակահարվածից հետո կոտրվեց *BP* «փաթեթային վերջնագիր» շանտաժին հակազդելու ԱՀ քաղաքական կամքը: Արդյունքում՝ ամրապնդվեց ոչ միայն *BP* գերիշխող դիրքն Ադրբեջանում նավթարդյունահանման գործում, այլև երաշխավորվեց *BP* դերակատարումը դեռ 1994թ. ստորագրված «դարի պայմանագրով» սահմանված ժամկետից անդին, երաշխավորվեց այս ընկերության էական դերակատարումը նաև ադրբեջանական գազի ոլորտում՝ և՛ խորքային (ԱԶԳ), և՛ բնական (Շահ Դենիզ), ապահովվեց ԱՀ իշխանությունների ավելի «հասկացող» մոտեցումը միջազգային նավթագազային ընկերությունների հետ հարաբերություններում:

Դե, իսկ հում նավթի միջազգային գները կայունորեն մնացին \$100-110/բարել գնային տիրույթում՝ ապահովելով տարատեսակ աշխարհաքաղաքական շարժառիթներից ակտուալացած ածխաջրածինների արդյունահանման ծրագրերի բիզնես-գրավչությունը, որոնք գների բնականոն գնագոյացման դեպքում (\$50-75/բարել)¹ գուրկ կլինեին որևէ գործարար գրավչությունից:

Թե այս ամենն ինչ արդյունքների հանգեցրեց Ադրբեջանի պետական բյուջեի, ռազմական ծախսերի և սպառազինության գնումների առումով, հատկապես 2007 և 2009թթ., կտեսնենք ստորև՝ 4-րդ և 5-րդ գլուխներում:

2.4. ԱՀ նավթային ոլորտի կառուցվածքը և առանձնահատկությունները

SOCAR. Ադրբեջանի Պետական նավթային ընկերությունը (*SOCAR*) պատասխանատու է հում նավթի և բնական գազի արտահանման, երկրի նավթավերամշակման երկու գործարանների շահագործման, նավթա-

¹Սա, ի դեպ, Համաշխարհային բանկի փորձագետների «հում նավթի խելամիտ գնի» գնահատականն է:

մուղների շահագործման և նավթի ու գազի արտահանման/ներկրման համար: Դեռ նախագահ Ա.Էլչիրեյի ժամանակներից *SOCAR*-ը պարտադիր մասնակցում էր Ադրբեջանում իրականացվող բոլոր նավթային և գազային ծրագրերի ԱԲՀ-ներում և կոնսորցիումներում: Այսպես, *SOCAR*-ը ԲԹԶ նավթամուղի և ԲԹԷ գազատարի կոնսորցիումների 25%-ի բաժնետերն է, ինչպես նաև մասնակցում է ավելի քան 20 այլ ԱԲՀ-ներում (Հավելված 2-ում ներկայացված են մինչև 2007թ. վերջը ստորագրված բոլոր ԱԲՀ-ներում *SOCAR* ընկերության մասնաբաժինը և կոնսորցիումների սկզբնական կազմը):

Ներկայումս *SOCAR*-ն ապահովում է Ադրբեջանում արդյունահանվող նավթի մոտ 20%-ը: 1990-ականների վերջին կնքված գրեթե բոլոր ԱԲՀ-ներում նկատելի է *SOCAR* պետական ընկերության մասնաբաժնի ավելացում: Այն միջինը գտնվում է արդեն 20-50%-ի տիրույթում (տե՛ս Հավելված 2): Համաձայն որոշ մեկնաբանությունների [33-34], այս հանգամանքը վկայում է, մի կողմից՝ ընկերության տեխնիկական հասունացման, մյուս կողմից՝ ոլորտը վերահսկելու պետության, ավելի ճիշտ՝ երկրի նախագահի և նրա մերձավորների ցանկության մասին:

Այս իրադրությունը խորացնում է *SOCAR* պետական ընկերության գործունեությանն ի սկզբանե բնորոշ ներքին հակասությունները: Իսկապես, մի կողմից՝ այս ընկերությունը, պահպանելով լոյալությունը ԱՀ նախագահին (և իր նախկին ղեկավարին), ստիպված է որոշակի ֆինանսական «մասհանումներ» անել Նավթային հիմնադրամին (ԱՆՊՀ, տե՛ս ստորև), նախագահի անձնական ֆոնդին, ինչպես նաև Հ.Ալիևի հիմնադրամի սոցիալական բնույթի ծրագրերի ֆինանսավորմանը (հիմնականում ծրագրերի շրջանակում): Ընդ որում, համաձայն ԱՀ որդեգրած նավթային ռազմավարության, այս փոխանցումները և, առաջին հերթին՝ այսպես կոչված «ԱՆՊՀ նավթի շահութային վաճառքի եկամուտները» (տե՛ս ստորև), ազատված են տարատեսակ հարկումներից, որոնց ենթակա են բոլոր այլ եկամտային փոխանցումները, ինչպես նաև ունեն այլ զեղչումներ (տրանզիտային վճարներ, բանկային գործողությունների

միջնորդավճար, ապահովագրում և այլն): Հասկանալի է, որ այսպիսի իրավիճակը նպաստում է դրամական հոսքերի անվերահսկելիությանը և էլ ավելի է մեծացնում առանց այդ էլ շոշափելի կոռուպցիան ոլորտում:

Մյուս կողմից, մասնակցելով բազմաթիվ ԱԲՀ-ներում և կոնսորցիումներում՝ *SOCAR*-ը պետք է ապահովի գործարար պատշաճ արդյունավետություն և շահութաբերություն: Սակայն, որոշ աղբյուրների գնահատմամբ, այս ընկերությունը գործում է ծայրաստիճան անարդյունավետ: Այս առումով առավել խոսուն է ընկերության կադրային քաղաքականությունը: 2011թ. սկզբի դրությամբ ընկերությունն ուներ մոտ 70 հազար հոգանոց աշխատակազմ, ընդ որում՝ անձնակազմի մեկ մարդու հաշվով այն արդյունահանում էր մոտ 2.61 բարել նավթային համարժեք (ն.հ.): Մինչդեռ, անգամ ռուսական *Գազպրոմի* պարագայում, որն աշխարհի նավթագազային ամենարդյունավետ ընկերությունը չէ, այս ցուցանիշը կազմում է 17.1 բարել ն.հ./մարդ [35]:

Բացի այդ, միջինից զգալիորեն ավելի բարձր աշխատավարձերով և հավելավճարներով, աշխատողներին անվճար տրամադրվող բնակարաններով ու մանկապարտեզներով, ամառային հանգիստը մասնակիորեն կամ լրիվ ֆինանսավորող վաուչերների համակարգով *SOCAR*-ը ԱՀ հասարակության, առաջին հերթին՝ դրա մասնագիտական, ճարտարագիտական հատվածների, որակյալ բանվորների և գրեթե ողջ միջին դասի համար դարձել է աշխատանքի և կյանքի հարմարությունն ապահովող բաղձալի երազանք: *SOCAR*-ի «ոսկյա 70 հազար»-ի գոյացումն ու առկայությունը երկրում հասարակական շոշափելի լարում են ստեղծում: Առավել ևս, որ նավթագազային ոլորտն առհասարակ ներքին շուկայում ստեղծում է խիստ սահմանափակ թվով աշխատատեղեր: Մինչդեռ, այստեղ ստացված եկամուտները կամ մեկ շնչին ընկնող ներդրումները երեք կարգ անգամ ավելին են, քան ԱՀ տնտեսական համակարգի այլ ոլորտներում (տե՛ս Գ. 1):

SOCAR ընկերության գործունեության մեջ անձնական, քաղաքական և գործարար խնդիրների հստակ ֆունկցիոնալ տարանջատման բացակայությունը հանգեցնում է ընկերության արդյունավետության

կորստի և մեծացնում իրականացվող գործառույթների անթափանցիկությունը: Միտում, որը, համաձայն որոշ գնահատականների, հատկապես նկատելի է 2008-ից հետո: Բավական է նշել, որ *SOCAR* ընկերության 2008թ. ամենամյա հաշվետվությունը չի ներկայացնում նավթի վաճառքից և արտահանումից ստացված իր շահույթի մասին որևէ տվյալ: 2011թ. սեպտեմբերի դրությամբ այս ընկերությունը չունեի հոգաբարձուների խորհուրդ և, ըստ էության, ղեկավարվում էր միայն ընկերության նախագահի և փոխնախագահի կողմից, որոնք իրենց հերթին նշանակվում են ԱՀ նախագահի կողմից: Մա բացառիկ երևույթ է աշխարհի ազգային նավթային ընկերությունների համար:

ԱՀ Արդյունաբերության և էներգետիկայի նախարարություն. Մա ոլորտի հաջորդ կարևոր կառույցն է, որը պատասխանատու է զարգացման քաղաքականության մշակման և իրականացման, պաշարագիտական հետազոտությունների կատարման, ինչպես նաև արտահանման համար:

Իրականում, սակայն, նախարարության ղերակատարումը խիստ սահմանափակված է ԱԲՀ-ներով, որոնք ունեն օրենքի ուժ, և որոնք կարգավորում ու սահմանում են երկրում գործող միջազգային նավթային ընկերությունների գործունեության ողջ տիրույթը՝ ածխաջրածինների բուն արդյունահանումից մինչև հարկերի վճարում և սոցիալական կորպորատիվ պարտականություններ: Այսպիսով, ԱԲՀ-ների առկայությունը՝ մի կողմից և երկրի նախագահի հետ անմիջական ու սերտ կապերով գորեղ *SOCAR* ընկերությունը՝ մյուս կողմից, շոշափելիորեն նեղացնում են նախարարության գործունեության տիրույթը՝ զրկելով վերջինիս նավթային (և գազային) ոլորտի վրա ներազդելու գործուն որևէ լծակից:

Նման իրավիճակում նախարարությունը չունի *SOCAR* ընկերության գործունեությունը վերահսկելու ոչ կարողություն, ոչ էլ քաղաքական կամք [4]: Բնական է, որ այս իրադրությունը զգալի լարում է ստեղծում *SOCAR* ընկերության և նախարարության միջև, խորացնում է այս ընկերության գործունեության անթափանցիկությունը և մեծացնում կոռուպցիոն ռիսկերը: Իրադրությունն այստեղ արտացոլվում է ԱՆՊՀ և ԱՀ

կառավարության, հատկապես՝ Ֆինանսների նախարարության միջև հարաբերություններում, երկրի պետական բյուջեի ձևավորման և դրա իրականացման ու վերահսկման հարցերում (տե՛ս վերը՝ Գլուխ 2):

Միջազգային օպերացիոն ընկերություն (AIOC). ԱՀ նավթային ոլորտի մյուս կարևոր կառույցը Ադրբեջանի Միջազգային օպերացիոն ընկերությունն է, որին բաժին է ընկնում Ադրբեջանում արդյունահանվող նավթի 80%-ից ավելին: Ըստ էության, այն ԱԶԳ նավթադաշտը շահագործելու դեռ 1994թ. «դարի պայմանագրի» մրցույթը շահած 10 ընկերություններից կազմված կոնսորցիում է, որը *Amoco* ընկերության հետ միաձուլումից հետո (1998թ.) ներկայումս ղեկավարում է *BP* ընկերությունը, և որը շահագործում է ԱԶԳ նավթադաշտը: Հիշեցնենք, որ այս միաձուլումը *BP*-ի առաջ բացեց բենզինի մանրածախ վաճառքի ամերիկյան շուկան: Փոխարենն այն վերանայեց ԱԶԳ արդյունահանման ու հատկապես ԲԹԶ նավթամուղի հանդեպ իր թերահավատ վերաբերմունքը:

2008-ի օգոստոսյան վրաց-ռուսական պատերազմից, ՌԴ-ի կողմից Հրվ. Օսիայի և Աբխազիայի անկախության ճանաչումից հետո ԱՀ իշխանություններն ընդունեցին *BP* ընկերության «փաթեթային» առաջարկը և համաձայնեցին թե՛ երկարացնել վերջինիս հետ 1994թ. կնքված ԱԶԳ դաշտի արդյունահանման ԱԲՀ ժամկետը, թե՛ համաձայնեցին վերջինիս դիտարկել որպես Շահ Դենիզի գազային ծրագրի 2-րդ փուլի, ինչպես նաև ԱԶԳ դաշտի «խորքային գազի» արդյունահանման ծրագրի ղեկավար: Ի պատասխան ԱՀ այս դիրքորոշման, *BP*-ն հաստատեց վճռակա նությունը՝ շարունակել ԱԶԳ նավթի արդյունահանումը, հասցնել այն խոստացված 1.0-1.1 մլն բ/օր ցուցանիշին, ինչի համար ձեռնամուխ եղավ ԱԶԳ նավթի արդյունահանման 4-րդ լրացուցիչ փուլի իրականացմանը (*COP* ծրագիր, տե՛ս վերը, նաև Հավելված 3):

Բացի այդ, 2011թ. նա բարձրացեց *AIOC* կոնսորցիումում իր մասնաբաժինը՝ նախկին 34.1%-ից՝ 35.78%-ի¹ (2012թ. հունվար) այն բանից հետո, երբ 2010թ. գնեց ամերիկյան *Devon* ընկերությանը պատկանող 5.63%

¹ Այլ տվյալներով՝ 35.83%:

բաժինը (տե՛ս Նկար 5.2): 2011թ. հուլիսին *Devon* ընկերության այս բաժնից 1.65%-ը *BP*-ն վաճառեց պետական *SOCAR* նավթային ընկերությունը ներկայացնող *AzACG Ltd.* ընկերությանը, ինչը բարձրացրեց *SOCAR*-ի մասնակցությունը կոնսորցիումում նախկին 10%-ից մինչև 11.65%-ի¹: 2012թ. հունվարի դրությամբ *AIOC* մյուս մասնակիցների մասնաբաժիններն են. ամերիկյան *Chevron*, *Exxon Mobil* և *Hess* ընկերություններինը՝ 11.27%, 8.0% և 2.72% համապատասխանաբար, ճապոնական *Inpex Corp.* և *Itochu Oil* ընկերություններինը՝ 10.96% և 4.3% համապատասխանաբար, նորվեգական *Statoil*-ինը՝ 8.56% և թուրքական *TPAO*-ինը՝ 6.75%:

BP-ն ԲԹԶ նավթամուղի և ԲԹԷ գազատարի կոնսորցիումների մեծամասնական բաժնետերը և ղեկավարն է: 1992-ից ի վեր *BP*-ն Ադրբեջանում առավելագույն ներդրումներ իրականացրած օտարերկրյա ընկերությունն էր՝ մոտ \$33 մլրդ 2012թ. հունվարի դրությամբ:

Ադրբեջանական Հանրապետության Նավթային պետական հիմնադրամ (SOFAZ, ԱՆՊՀ). ԱՆՊՀ-ն, թերևս, ԱՀ նավթային ոլորտի ամենակարևոր կառույցն է: Ուստի, այս կառույցի հետ կապված խնդիրները կքննարկենք ավելի մանրամասն: Իրականում, ԱՆՊՀ ղերակատարումը ԱՀ ողջ սոցիալ-տնտեսական և քաղաքական համակարգում այնքան մեծ է, որ այստեղ ստիպված կլինենք կատարել երկրի իշխանական համակարգի, դրա բնույթի ձևավորմանը, գլոբալ աշխարհաքաղաքականության առանձին խնդիրներին ու մեր տարածաշրջանում դրանց արտահայտությունների հարցերին նվիրված առանձին դիտարկումներ՝ մի փոքր շեղվելով բուն ԱՆՊՀ-ին առնչվող հարցերից: Բայց դա անհրաժեշտ է ԱՀ սոցիալ-տնտեսական ու քաղաքական համակարգի համարժեք ընկալման համար:

ԱՆՊՀ-ն հիմնադրվել է երկրի նախագահի 1999թ. դեկտեմբերի 29-ի թիվ 240 հրամանագրով: Հաջորդ տարի նախագահի 2000թ. դեկտեմբերի 29-ի թիվ 434 հրամանագրով հաստատվել են ԱՆՊՀ նպատակները և գործունեության կանոնակարգը: 2001թ. սեպտեմբերին ԱՆՊՀ-ի և ԱՀ

¹ Համաձայն *PIA «Новости»* գործակալության, այս բաժնեմասի համար *SOCAR*-ը *BP*-ին վճարել է \$585 մլն, <http://ria.ru/company/20110726/407508909.html>

Ֆինանսների նախարարության միջև կնքվեց երկրի պետական բյուջեի կազմման, գործունեության համակարգման և տեղեկատվության փոխանակման մասին հուշագիրը, որն ուրվագծում էր ԱՀ պետական բյուջեի կազմման և իրականացման գործում ԱՆՊՀ միջոցների ներգրավումը, գործունեության համակարգումը: 2001թ. նոյեմբերի 16-ին երկրի նախագահի թիվ 217-ii QD հրամանագրով ԱՆՊՀ գործունեությունն ազատվեց շահութահարկի, ԱԱՀ և հողահարկի վճարումներից: Կառավարության հատուկ որոշմամբ արտահանման մաքսային տուրքերից ազատվեց այսպես կոչված ԱՆՊՀ «շահութային նավթի վաճառքի չափաբաժինը» (ՇՆԶ, *profit oil sales to the State Oil Fund*) [37]:

Նախագահի 2001թ. հունիսի 19-ի մեկ այլ հրամանագրով հաստատվեցին ԱՆՊՀ արտարժույթային ռեզերվների պահպանման և օգտագործման կանոնները: Նկատենք, որ 2011թ. դրությամբ օրենքի ուժ ունեցող որևէ փաստաթուղթ չկար, որը կկանոնակարգեր ԱՆՊՀ գործունեությունը, ինչպես արվում է ածխաջրածինների արդյունահանման համար օրենքի ուժ ունեցող Արդյունքի բաշխման համաձայնագրերի (ԱԲՀ, *Production Sharing Agreements*) պարագայում: Համաձայն հաստատված կանոնակարգի, ԱՆՊՀ գործունեության հիմնական նպատակներն են.

1. նավթի արդյունահանումից գոյացած եկամուտների հասանելիության ապահովումն ապագա սերունդների համար՝ «Ապագա սերունդների» պահուստային ֆոնդի տեսքով,
2. երկրի մակրոտնտեսական հաշվեկշռի և կայունության ապահովումը,
3. ֆինանսական կարգապահության ամրապնդումը:

Շահութային նավթի չափաբաժին: ԱՆՊՀ միջոցների գոյացման հիմնական աղբյուրը ԱԲՀ-ով գործող կոնսորցիումների կամ ընկերության արդյունահանված «շահութային նավթի» բաժնի վաճառքն է: Այս դրամական հատկացումները կոչվում են «ԱՆՊՀ շահութային նավթի չափաբաժիններ» (ՇՆԶ): Դրանք հաշվարկվում են՝ ելնելով կոնսորցիումի արդյունահանած շահութային նավթի (*Profit Petroleum*) ծավալներից:

Վերջինս ներկայացնում է ողջ արդյունահանված նավթի ծավալներից հանած այն ծավալները, որոնց վաճառքից գոյացած եկամուտները նախատեսվում են շահագործման ծախսերը և ներգրավված կապիտալի սպասարկումը (տոկոսադրույքներ) փակելու համար:

Այնուհետև, շահութային նավթի չափաբաժինը բաժանվում է երկու մասի՝ ԱՆՊՀ չափաբաժին (ԱՆՊՀ ՇՆԶ) և կոնսորցիումի չափաբաժին, ելնելով յուրաքանչյուր եռամսյակը մեկ հաշվարկվող կոնսորցիումի շահութաբերության իրական դրույքի (ՇԻԴ, *Real Rate of Return, RROR*) մեծությունից՝ որոշակի համամասնությամբ: Այն բերվում է Աղյուսակ 2.1-ում:

Ինչպես հետևում է աղյուսակից, որքան մեծ է կոնսորցիումի ՇԻԴ-ը, այնքան մեծանում է ԱՆՊՀ ՇՆԶ-ը: Իրականում, այս չափաբաժինների որոշման մեթոդաբանությունը, որն այստեղ ներկայացրինք խիստ պարզեցված, բավական բարդ է և խճողված: Ավելին, համաձայն մի շարք հեղինակավոր աղբյուրների [35-37], ԱՆՊՀ փոխանցվելիք նավթի շահութային վաճառքի չափաբաժինների ճշգրիտ հաշվարկի համար անհրաժեշտ տվյալները մեծ մասամբ անհասանելի են անկախ գնահատումների համար: Էլ ավելի խճողված է գազի արդյունահանումից գոյացած ԱՆՊՀ ՇՆԶ հաշվարկի մեթոդաբանությունը:

Աղյուսակ 2.1

Նավթի շահութային վաճառքի չափաբաժինների հաշվարկը

ՇԻԴ տիրույթները	ԱՆՊՀ չափաբաժինը շահութային նավթից (ԱՆՊՀ ՇՆԶ)	Կոնսորցիումի չափաբաժինը եկամտային նավթից (կոնսորցիումի ՇՆԶ)
ՇԻԴ < 16.75%	30%	70%
16.75% <= ՇԻԴ < 22.75%	55%	45%
22.75% <= ՇԻԴ	80%	20%

Օգտագործվող մեթոդաբանությունը ՇԻԴ հաշվարկը կապում է նավթի տեղափոխման և տրանսպորտային իրական ծախսերի գնահատականների հետ: Վերջիններիս մասին հավաստի տվյալները դժվարհասանելի են և դժվարվերահսկելի, ինչը լուրջ տարաձայնությունների

անիթ է հանդիսանում ԱՆՊՀ, պետական *SOCAR* ընկերության և ԱԶԳ նավթադաշտն արդյունահանող միջազգային *BP/AIOC* կոնսորցիումի միջև՝ տնտեսական ոլորտի նավթարդյունահանման ճյուղային մակարդակում, ինչպես նաև ԱՀ նախագահի, ԱՆՊՀ և *AIOC* կոնսորցիումի ղեկավար՝ բրիտանական *BP* ընկերության միջև՝ իշխանական բարձրագույն օղակներում:

Այս հարցում որոշակի մանրամասներ հայտնի դարձան միայն *Wikileaks*-յան ադրբեջանական թղթապանակի հաղորդագրություններից (Հավելված 1-ում բերվում են այն հաղորդագրությունները, որոնք վերաբերում են ԱՀ նավթային ոլորտին և ԱԶԳ նավթադաշտը շահագործող *BP* ընկերության ու ԱՀ իշխանությունների, ԱՆՊՀ-ի և պետական նավթային *SOCAR* ընկերության միջև հարաբերություններին):

Այսպես, 2007թ. հոկտեմբերի 9-ով թվագրված *07 Baku 1227* հաղորդագրությունից տեղեկանում ենք (թիվ 5, 4.C), որ ԱՀ նախագահ Ի.Ալիևը գանգատվում է ԱՀ-ում ԱՄՆ դեսպանին՝ պնդելով, որ ԱԶԳ դաշտից նավթարդյունահանումն իրականացնող *BP* ընկերությունը և նրա կողմից ղեկավարվող *AIOC* կոնսորցիումը «գողանում են մեր նավթը»: Ըստ Ալիևի, հաջորդ՝ 2008-ից արդեն պետք է գործի շահութային նավթի ՇԻԴ 80%՝ Ադրբեջան և 20%՝ *AIOC* կոնսորցիում չափաբաժինների համամասնությունը: Այսինքն՝ այդ տարվա համար կոնսորցիումի ՇԻԴ-ն արդեն իսկ գնահատված էր 22.75% և ավելի (տե՛ս Աղյուսակ 2.1): Հակառակը, *BP*-ն պնդում է, որ չափաբաժինների այս համամասնությանը և կոնսորցիումի ՇԻԴ-ն այդ արժեքին կհասնեն միայն 2010-ին: Բարկացած Ի.Ալիևը նույնիսկ սպառնում է դեսպանին, որ եթե չգտնվի այս հարցի լուծումը, ապա այն կդառնա հրապարակային քննարկումների առարկա:

13 օր անց, 2007թ. հոկտեմբերի 22-ով թվագրված *07 Baku 1268* հաղորդագրությունից տեղեկանում ենք (թիվ 6, 2.C և 8.C), որ տարաձայնությունների ֆորմալ հիմքում ընկած է ՇԻԴ հաշվարկի մեթոդաբանության այն դրույթը, որով վերջինիս գնահատումը կապվում է նավթի տեղափոխման ընդհանուր ծախսերի գնահատման հետ: Ադրբեջանական

կողմը մեղադրում էր *BP*-ին այն բանում, որ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան (ԲԹՁ) նավթատարի աշխատանքների մեկնարկը միտումնավոր կերպով ձգձգվում է, ինչը բարձրացնում է նավթի տրանսպորտային ծախսերը: Հետևաբար, իջնում է ՇԻԴ արժեքը, որի հետևանքով փոքրանում է Ադրբեջանի շահութային նավթի չափաբաժինը (թիվ 6, 2. C):

Դեսպանության գնահատմամբ՝ տազնապեցնողն այստեղ այն է, որ ԱՀ նավթային պետական *SOCAR* ընկերությունը, հիմնվելով սեփական հաշվարկների և մոտեցումների վրա, պատրաստվում էր միակողմանիորեն հաշվարկել ՇԻԴ արժեքն ու շահութային նավթի իր չափաբաժինը, հրապարակավ մեղադրել *BP* ընկերությանն ավելցուկ նավթի «մաքսանենգ ճանապարհով յուրացման մեջ»: Այս դեպքում Ադրբեջանում «*BP* նախագահ Բ.Շրեդերը \$10 մլրդ յուրացման մեղադրանքով կձերբակալվի խորհրդարանի շենքի առջև» (թիվ 6, 8. C): Վկայակոչելով 2007թ. հոկտեմբերի 18-ի իր գրույցը *SOCAR* ընկերության նախագահ Ռ.Աբդուլանի հետ՝ ԱՀ-ում ԱՄՆ դեսպան տիկին Դերսը գրում էր. «Եթե նավթի գները մնային \$30-40 մեկ բարելի համար տիրույթում, ապա, իրոք, 80%՝ Ադրբեջան և 20%՝ *AIOC* կոնսորցիում չափաբաժինների համամասնությունը կգրանցվեր միայն 2012թ.: Բայց նավթի ներկայիս բարձր գների պարագայում [որպեսզի չբարձրացվի Ադրբեջանի չափաբաժինը] *BP*-ն հայտարարեց, որ ՇԻԴ հաշվարկի բանաձևի մեջ սխալ է գործվել, և փոխեց հաշվարկի մեթոդաբանությունը»:

Սակայն հետաքրքրականն այստեղ ոչ թե *AIOC* կոնսորցիումի ՇԻԴ հաշվարկի հետ ծագած տարաձայնությունների ֆորմալ հիմքն է (ի վերջո, այս հարցն ավելի ուշ հարթվեց կողմերի փոխհամաձայնությամբ), այլ քաղաքական և աշխարհաքաղաքական այն համատեքստը, որի ֆոնին ծագեցին 2007թ. վերջի այս տարաձայնությունները:

Այս գործընթացներում անհրաժեշտ ենք համարում առանձնացնել հետևյալ կարևոր և մտահոգիչ հանգամանքները:

Շահույթի իրական դրույքը և նախագահական իշխանությունը.

Wikileaks կայքի հրապարակումների, ինչպես նաև այլ բազմաթիվ աղ-

բյուրների ուշադիր զննումը փաստում է, որ ՇԻԴ արժեքի շուրջ այս տարածայնությունները երևան եկան այն պահին, երբ *BP*-ն ԱՀ իշխանություններին ներկայացրեց ԱԶԳ արդյունահանման իր մշակած համալիր ծրագրի դրույթները՝ այսպես կոչված «Սպիտակ գիրքը» (*White papers*, տե՛ս վերը և Հավելված 1, թիվ 1, 5.Շ), իսկ Ադրբեջանի իշխանությունները, միանգամայն համահունչ «Ալինի դոկտրինի» դրույթներին, ձեռնամուխ էին եղել ԱԶԳ հարակից գազը որպես տարածաշրջանային աշխարհաքաղաքականության առավել ճկուն լծակ օգտագործելուն:

Նույն այդ ժամանակ ԱՄՆ իշխանական տարբեր օղակները, այդ թվում՝ ԱՀ-ում ԱՄՆ դեսպանությունը, էական ճնշում էին բանեցնում ԱՀ-ի վրա Վրաստանին գազի մատակարարումներ ապահովելու, վերջինիս ՌԴ-ից ստացվող գազից «կտրելու» և 2006-07թթ. ձմեռները «տաք» և անցնում անցկացնելու ուղղությամբ: Այսպիսով, փաստենք, որ ՇԻԴ-ի հետ կապված ԱՀ իշխանությունների աղմկահարույց քարոզչությունը մեկնարկեց հենց այդ ժամանակ, միանգամայն գիտակցված կերպով՝ նպատակ ունենալով հիմնականում երկու բան:

Առաջին նպատակը սպասարկելն էր սեփական տարածաշրջանային քաղաքականությունը՝ (Կենտրոնական Ասիա) – Ադրբեջան – Վրաստան – Թուրքիա – Իսրայել – ԵՄ առանցքով «էներգետիկ կամրջի» կայացում, Վրաստանին դեպի Ադրբեջան (վերա)ուղղորդում¹, տարածաշրջանում Հայաստանի մեկուսացման խորացում², ԼՂՀ ջլատում և (վեր)իշխում³: Մյուսը կապված էր ներքին խնդիրների հետ: *BP*-ի նկատմամբ կոշտ հայտարարություններով, վերջինիս դատարան տանելու սպառնալիքներով ու ծավալված ցուցադրական եռուզեռով Ի.Ալինը ամրապնդում էր իր *խիջըլ*՝ որպես ԱՀ քաղաքացիների և պետական շահերի աննկուն պաշտպան:

¹ Հիշենք Անդրկովկասյան սեյմի և *Անդրֆեդերացիայի* անփառունակ պատմությունը, անցած դարի 20-ականների *«Грузинская нефтепроводная республика»* տերմինը:

² Նորից հիշենք այս պատմությունը:

³ Եվս մեկ անգամ հիշենք անցած դարի 20-ականների պատմությունը:

Արժե՞ արդյոք ասել, որ այս ողջ աղմուկը գրեթե ոչինչով չավարտվեց: 2007-ին *BP*-ն չկանգնեց դատարանի առաջ, ավելին՝ ընդունվեցին նրա «Մպիտակ գրքում» բերված փաթեթային վերջնագրի բոլոր դրույթները: Խոսուհի են *Wikileaks*-յան աղբրեջանական թղթապանակի հաղորդագրությունների համապատասխան գնահատականները: Դրանց էությունը կարելի է ամփոփել մեկ նախադասությամբ. «Ալիևը հո ինքը չի թոցրել, որ հրաժարվի ԱԶԳ \$200 մլրդ-ից» (տե՛ս Հավելված 1, թիվ 11, 12): Ավելին, ինչպես կտեսնենք գրքի 5-րդ գլխում, նավթադոլարների հոսքը թույլ տվեց այդ տարի կտրուկ մեծացնել Աղբրեջանի կողմից ծանր սպառազինության գնումների ծավալները՝ հասցնելով դրանք մինչ այդ աննախադեպ մակարդակի (տե՛ս Նկար 5.5-ում): Կարծում ենք նաև, որ *BP*-ն դատարանի առաջ չի կանգնի նաև 2013-ին, բայց այդ մասին՝ քիչ անց:

Իսկ ներքաղաքական առումով Ի.Ալիևի «ձեռքբերումներն» առարկայական էին: Բանն այն է, որ ՇԻԴ կապակցությամբ և *BP/AIOC*-ի հետ կապված ողջ աղմուկն իրականում անհրաժեշտ էր Ի.Ալիևին երկրում միանձնյա իշխանության հաստատման հող նախապատրաստելու համար: Մեր այս պնդումն ամրապնդենք ժամանակագրական մի փոքրիկ ակնարկով:

2006թ. նոյեմբերի 8-ին, իշխող «*Ենի Ազերբայջան*» կուսակցության նույնանուն պարբերականում ուն Ա.Մանսիմլի (*Айдын Мансимли*) մի հոդված տպագրեց¹, որում ընթերցողների հետ կիսում էր իր այն դիտարկումը, թե «նախագահական իշխանության ժամկետների երկարացումը թույլ կտա նախագահ Ի.Ալիևին ավելի արդյունավետ կառուցել իր աշխատանքը: Իսկ երկիրը կշահի նրա ներուժն ավելի երկար օգտագործելուց»: Հեղինակը բերում էր Ղազախստանի, Ուզբեկստանի և Տաջիկստանի ոգևորիչ օրինակները, նկարագրում այս երկրներում սահմանադրության համապատասխան փոփոխությունների իրականացման հաջողված փորձը, նշում, որ Աղբրեջանն այս առումով պետք է իրականացնի սահմանադրության փոփոխությանը նվիրված հանրաքվե:

¹ <http://russian.eurasianet.org/departments/insight/articles/eav112306aru.shtml>

Հոդվածի տպագրումից հետո տևական ժամանակ Ի.Ալիևը և իշխող կուսակցությունը պահպանում էին խորհրդավոր, բայց և բարյացակամ լռություն: Իսկ «Խորհրդատվական մեջլիս» կոչվող դաշինքի ղեկավարը՝ Մ.Ալիզադեն (*Мамед Ализаде*), կարծիք հայտնեց, թե «Ադրբեջանի նման հասարակություն ունեցող երկրում նախագահը պարզապես չի կարող 5 տարում իրականացնել նախատեսված բոլոր ծրագրերը»: Այս գաղափարին կտրուկ դեմ արտահայտվեց միայն ընդդիմադիր *Մուսավաթը*:

Սակայն առավել հետաքրքիր է այս առաջարկին ադրբեջանական առաջատար վերլուծաբանների ընդհանուր առմամբ թերահավատ արձագանքը: Ռ.Մուսաբեկովի (*Расим Мусабеков*) կարծիքով, Ա.Մանսիմլիի հիշյալ հոդվածը «ոչ մի բան չի նշանակում և խոսում է միայն հեղինակի ստորաքարշության մասին: Ես չեմ հավատում, որ Ի.Ալիևը լրջորեն մտադիր է դիտարկել նախագահական իշխանության երկարացման հարցը», գրում է նա (տե՛ս նույն տեղում): Մեկ այլ վերլուծաբանի՝ Ի.Մամեդովի (*Ильгар Мамедов*) կարծիքով, «Սա հեղինակի գաղափարն է միայն, ու այս դեպքում ինքը՝ Ի.Ալիևը, շուտով կհայտնի իր բացասական վերաբերմունքն այս հարցին»: Մամեդովի սպասումները տևեցին մոտ մեկ տարի և ամրապնդվեցին նախագահի աշխատակազմի այժմ նախկին ղեկավար Ռ.Մեհթիևի (*Рамиз Мехтиеv*) 2007թ. մայիսի 7-ի հետևյալ հայտարարությամբ¹. «Ի.Ալիևը մտադիր չէ երկարացնել իր նախագահական իշխանության ժամկետը մինչև 7 տարի»: Ապա շարունակում է. «Ոմանք, բարի շարժառիթներից ելնելով, կարող է և նման առաջարկներով ու նախաձեռնություններով հանդես գան, բայց երկրի ղեկավարը չի կհսում այս տեսակետը»:

Եվ ահա, փոթորկալից 2008-ին հաջորդեց 2009 թվականը, և հայտնի *BBC* գործակալության մարտի 18-ի հատուկ հաղորդագրությունից² տեղեկացանք, որ «Ադրբեջանում կայացել է երկրի սահմանադրության փոփոխություններին նվիրված հանրաքվեն: Չայների ճնշող մեծամաս-

¹ <http://news.day.az/politics/81514.html>

² http://news.bbc.co.uk/go/pr/fr/-/hi/russian/international/newsid_7949000/7949806.stm

նությամբ՝ 92%, ընդունվել է ԱՀ սահմանադրության 29 փոփոխություն, այդ թվում՝ հանվել է հին սահմանադրության այն դրույթը, որը սահմանափակում էր նախագահի իշխանության տևողությունը երկու ժամկետով: Այսպիսով, եզրակացնում է *BBC*-ին, «Ի.Ալիևը կարող է մնալ նախագահ նաև 2013-ից հետո»: 2009թ. մարտի 18-19-ի «*Ազատություն*», «*CNN*», «*Ռոյթերս*» «*ITAP-TACC*» և «*Le Monde*» համապատասխան հաղորդագրությունների եզրահանգումներն ավելի կտրուկ էին. «Այսպիսով, Ադրբեջանի 47-ամյա նախագահ Իլիամ Ալիևը հնարավորություն է ստանում մինչև կյանքի վերջը վերընտրվել նախագահի պաշտոնում»: Միարժեք էր տեղի ունեցածի և *Մուսավաթ*-ի գնահատականը. «[հանրաքվեով] իրականացված երկրի քաղաքական համակարգի փոփոխությունն Ադրբեջանը դարձրեց ժառանգական միապետություն»:

Տեղի ունեցածն, ինչ խոսք, արտառոց երևույթ է իրեն եվրոպական համարող երկրի համար: Բերված եզրահանգումներն էլ իրավացի են: Սակայն, ինչպես և գրեթե միշտ, լրատվական այս հրապարակումները բաց թողեցին կարևոր մի հանգամանք՝ չափազանց վտանգավոր մեզ համար: Նկատի ունենք ոչ միայն (և ոչ այնքան) միանձնյա իշխանության հաստատման համար *BP/AIOC-ի* ու «ժողովրդի այլ կեղեքիչների» դեմ Ի.Ալիևի ցուցադրական քարոզչության վարպետորեն օգտագործելը, այլև հետևյալը: Իրականում, 2009թ. ադրբեջանական սահմանադրական փոփոխությունները չերկարացրին նախագահական ժամկետը մինչև 7 տարի, ոչ էլ «հնարավորություն ստեղծեցին Ի.Ալիևի համար՝ մինչև կյանքի վերջը վերընտրվել նախագահի պաշտոնում»: Տեղի ունեցավ մեզ՝ Հայաստանի և ԼՂՀ քաղաքացիների, ինչպես նաև Ադրբեջանի քաղաքացիների համար շատ ավելի վտանգավոր մի բան:

Իրականում, **նոր սահմանադրության 6-րդ գլխի 101-րդ հոդվածի V կետով մինչև կյանքի վերջը Ի.Ալիևի նախագահ վերընտրվելու հնարավորությունը կապվեց Լեռնային Ղարաբաղում պատերազմ վերսկսելու անհրաժեշտության և պատերազմը երբևէ չվերջացնելու հետ**: Եվ իրոք, նշված հոդվածը պնդում է (հնարավոր տարակարծություններից խուսա-

փելու համար այն բերում ենք ԱՀ նախագահի կայքի ռուսերեն տարբերակով, առանց թարգմանության)։

«V. В случае, если ведение военных операций в условиях войны не позволяет провести выборы Президента Азербайджанской Республики, то срок полномочий Президента Азербайджанской Республики продлевается до окончания военных операций. Решение об этом принимается Конституционным судом Азербайджанской Республики на основании обращения государственного органа, обеспечивающего проведение выборов (референдума)»¹.

Ավելին, փոփոխված սահմանադրության այլ հոդվածներ, ինչպես և երկու ժամկետների արգելքի հանումը հստակորեն կապեցին Ալինի կլանի՝ իշխանական բուրգի զագաթում մնալու հարցը տարածաշրջանում և ԼՂՀ-ում անվերջանալի հակամարտության անհրաժեշտության հետ։ Եվ զուր չէ, որ 2010թ. մարտի 25-ին բաց մամուլում առաջին անգամ հրապարակվեց ԱՄՆ բանակի գլխավոր շտաբի քոլեջում մշակված «GAAT» (Վրաստան-Ադրբեջան-Հայաստան-Թուրքիա, ՎԱՀԹ) սցենարային վարժանքի մասին նյութը²։

Այստեղ մենք հատուկ չենք անդրադառնա այս հարցին։ Նշենք միայն, որ ՎԱՀԹ-ը դիտարկում է մեր տարածաշրջանում 2018թ. ռազմական գործողությունների ծավալման վարժանք-սցենարը, որի հիմքում ընկած են Իրանի կազմաքանդումը, Հարավային Կասպիցի սահմանագատման հարցն ու ԱԱՇ, Սերդար և այլ դաշտերի ճակատագիրը (տե՛ս Նկարներ 2.5, 2.6 և Հավելված 3), Ադրբեջանի հնարավոր տրոհումը ազգային և կլանաօլիգարխիկ առանձին հատվածների, ԼՂՀ-ում պատերազմական գործողությունների վերսկսումը, ԼՂՀ-ում և Իրանի սահմանին, ինչպես կասեն Լիբիայից հետո, հատուկ, «ոչ թռիչքային գոտիների» ստեղծումն ու դրանց փոխանցումը ՆԱՏՕ/Թուրքիայի «և /կամ Ադրբեջան»

¹ <http://ru.president.az/azerbaijan/constitution/>

² <http://www.army.mil/article/36325/exercise-blends-joint-interagency-international-elements/>

նի» վերահսկմանը¹: ՎԱՀԹ-ի մասին մենք այստեղ հիշատակեցինք հիմնականում այն բանի համար, որ այս սցենարային վարժանքի 2012-13թթ. ուսումնական տարվա ձեռնարկում կարդում ենք 2018թ. մեր տարածաշրջանում ծավալվող դեպքերի մասին հետևյալ ներածականը². «2018թ. Հայաստանում, ծագումով Լեռնային Ղարաբաղից նախագահ Ս.Սարգսյանը երրորդ անգամ վերընտրվում է իր պաշտոնում: Ադրբեջանում նախագահ Ի.Ալիևը ավարտում է իր 3-րդ ժամկետը և լքում պաշտոնը: Այն զբաղեցնում է վարչապետ Ա.Ռասիզադեն, որը և ձեռնամուխ է լինում դեմոկրատական ռեֆորմների իրականացմանը» [42]:

Այստեղ չգիտես ինչի՞ վրա զարմանաս՝ սցենարի այլասերված տրամաբանությամբ, թե՞ դրա ցինիզմի վրա: Իսկ գուցե Ֆորտ Լիվենուորթի փորձագետները նկատի ունեին, որ «2013-ին ավարտվեց համապետական ընտրությունների փուլը Հայաստանում՝ նախկին ընտրությունների համեմատ զգալի առաջընթաց գրանցելով: Իսկ Ադրբեջանում նախագահ Ի.Ալիևը 3-րդ անգամ առաջադրվում է նախագահի թեկնածու և շոնդալից հաղթանակ տոնում»: Իսկ գուցե «Ադրբեջանում նախագահական ընտրություններն ընթացան համատարած կեղծիքներով, ինչը հանգեցրեց դրության ապակայունացմանն ու վտանգեց ածխաջրածինների արտահանումը»: Ո՞վ գիտե: Գիտենք միայն, որ ՎԱՀԹ սցենարով նախատեսված ռազմական գործողության ռազմավարական նպատակն է «ԱՄՆ և իր դաշնակիցների համար պահպանել Կասպիցի ածխաջրածինների պաշարների հասանելիությունը»: Իսկ մարտավարականը՝ «պաշտպանել Ադրբեջանն Իրանից՝ ապահովելով Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը և ինքնիշխանությունը» [41]:

Ահա այսպես են նավթը, ՇԻԴ-ը և ածխաջրածինների արդյունահանումից գոյացած միջոցների կլանաօլիգարխիկ զավթումը՝ ամրապնդված «բարեփոխված սահմանադրությամբ», կապվում պատերազմի և խաղաղության հարցին: Կարծում եմ, որ տարածաշրջանի համար իրենց կործանարար հետևանքներով Ադրբեջանի 2009թ. սահմանադրական

¹ Այս մասին ավելի մանրամասն տե՛ս [41] և Հավելված 3:

² Այն, ինչը ռուսերեն անվանվում է «ВВОДНАЯ»:

փոփոխությունները գերազանցեցին նույնիսկ «Ալինի դոկտրինը» սպասարկելու համար ԱԶԳ նավթադաշտն Ադրբեջանին «հանձնելու» 1990-ականների սկզբի որոշումը: Մասնավորապես, 2009-ի սահմանադրական հանրաքվեն լարեց Ադրբեջանի նախագահական ապագա ընտրություններով (2013 և 2018թթ.) պայմանավորված «տկտկացող» մեխանիզմը՝ Հարավային Կասպիցի սահմանազատման ներկայում մեկնարկած պայթյունավտանգ գործընթացների ֆոնին:

Այսպիսով, 2009-ից կազմաքանդվեցին Ադրբեջանում ժողովրդավարության դեռ պահպանված կառույցները, վերջնականապես վիժեցվեց Ադրբեջանում քաղաքակիրթ իշխանափոխության հնարավորությունը, իսկ վարչակարգի և Ալինների կլանի իշխանության պահպանման հարցը սահմանադրորեն կապվեց պատերազմի և պատերազմը երբևէ չավարտելու անհրաժեշտության հետ: Այսքանից հետո արժե՞ զարմանալ, ինչպես դա անում են պաշտոնական Բաքուն, ադրբեջանական մամուլը և միջազգային որոշ կառույցներ, որ Լեռնային Ղարաբաղի հարցում այս էլ քանի տարի որևէ առաջխաղացում չի գրանցվում:

Վարկանիշները և աշխարհաքաղաքականությունը: BP/AIOC կոնսորցիումի ՇԻԴ-ի շուրջ տարաձայնությունների համատեքստում ուշագրավ է այն հանգամանքը, որ ի պատասխան ԱՀ մեղադրանքների, BP ընկերության փոխնախագահ Ֆ.Հոմը բացահայտ սպառնաց ԱՀ իշխանավորներին, որ կներգործի աշխարհի երկրների ներդրումային մթնոլորտը և վարկավորման գրավչությունը գնահատող *Moody's* հանրահայտ ընկերության՝ ԱՀ-ին տրվող գնահատականների վրա՝ վերջիններիս վատթարացման առումով:

Չափազանց հարմար «զուգադիպությամբ» *Moody's*-ը հենց այդ ժամանակ ծրագրում էր երկշաբաթյա այց կատարել Ադրբեջան՝ ներդրումային մթնոլորտի գրավչության, տնտեսության ու բիզնեսի զարգացման և ազատության աստիճանները տեղում գնահատելու նպատակով (տե՛ս Հավելված 2, թիվ 6, 16.C): Բաքվում ԱՄՆ դեսպանության գնահատումներով, սա լուրջ սպառնալիք էր, քանի որ *Moody's*-ի աննպաստ գնահա-

տականի դեպքում կարող էին բարձրանալ ԱՀ-ին տրվող ներդրումների տոկոսադրույքները, ինչն էականորեն կփոխեր Ադրբեջանում ածխաջրածինների արդյունահանման ոլորտի ծրագրերի բիզնես-գրավչության հաշվարկներն ու ցուցանիշները և կարող էր միլիարդավոր դոլարների վնաս հասցնել, որի ազդեցությունը կզգացվեր տնական ժամանակ:

Ի դեպ, այս դիպվածը, թերևս, առաջին անգամ խոսուն կերպով վկայեց *Moody's*, *Fitch* և մի քանի այլ ընկերությունների դերակատարումը տնտեսական և աշխարհաքաղաքական լուրջ հետևանքներ ունեցող գործընթացներում՝ ազգային, տարածաշրջանային և նույնիսկ գլոբալ մակարդակներով: 2010թ. դեկտեմբերից հետո, երբ առաջին անգամ մամուլում տպագրվեցին *Wikileaks*-յան այս նյութերը, մենք ակնատես եղանք իսկական «վարկանիշային պատերազմների», որոնք վարվում էին հսկայական ֆինանսարդյունաբերական կոնգլոմերատների և առանձին պետությունների միջև: Կարծում ենք, որ այս գործընթացներն անհրաժեշտ է դիտարկել դասական «ազգ-պետությունների» և վերագրային ընկերությունների միջև ընթացող հակամարտության ու գլոբալ աշխարհաքաղաքականության ենթատեքստերում [32]:

Վերջին օրինակներն այստեղ մի շարք երկրների վարկանիշային գնահատականների փոփոխություններն էին՝ արձանագրված 2011-12թթ. ընթացքում, և որոնք անմիջական լծակ են հանդիսանում տարատեսակ գլոբալ ինտեգրացիոն գործընթացների (Եվրաինտեգրացիա, Ատլանտյան համագործակցության, Եվրասիական միություն) սպասարկման, հեռանկարների ձևավորման և տարբեր երկրների ուղղորդման գործում: Զուր չէ, որ ԱՄՆ-ը, ՌԴ-ն և Չինաստանը հայտարարեցին անկախ վարկանիշային միջազգային կառույցի ստեղծման մտադրության մասին: Այդ մասին 2012թ. հոկտեմբերի 24-ին հայտնեց չինական *Մինխուա* գործակալությունը: Հաղորդագրությունը մեջբերում էր Չինաստանի առաջատար վարկանիշային «*Ռազուն*» ընկերության նախագահ Գուան Ցյան Ջունի հետևյալ դիտարկումը.

«Այսօր այս ոլորտում իշխում է «ամերիկյան մեծ եռյակը»՝ *S&P, Moodis* և *Fitch* ընկերությունները, որոնք տրամադրում են հիմնական վերլուծական տեղեկատվությունը: Սակայն նրանք ոչ միայն չկարողացան կանխել համաշխարհային ֆինանսական ճգնաժամը, այլև խորացրին այն» [39]:

Կես տարի անց, 2013թ. մայիսի 7-ին, հայտարարվեց, որ այս նոր միջազգային վարկանիշային կազմակերպությունը՝ *Universal Credit Rating Group-ը*, կսկսի գործել Հունկոնգում 2013թ. հունիսի 25-ից [40]:

Հին օրերի երգը. Ադրբեջանում 2006-2007թթ. և 2012-13թթ. ընթացող զարգացումների միջև կարելի է անցկացնել հետաքրքիր զուգահեռականներ: 2012-ին Ի.Ալիևը նորից հարձակվեց *BP*-ի վրա՝ սպառնալով վերջինիս դատարան տանել, ինչպես և 2007-ին: Տարբերությունն այն է, որ Ի.Ալիևը, համաձայնելով մեր վերն արված դիտարկումներին, այսօր համարում է, որ խափանվել է ԱԶԳ արդյունահանման *BP/AIOC* եռափուլ ծրագիրը: Ինչպես 2007-ին, այնպես էլ այժմ, նորից վեր են հանվել ՇԻԴ-ի հետ կապված հարցերը: Եվ նորից Ադրբեջանում պատրաստվում են նախագահական ընտրություններին, ինչպես 2007-ին սկսել էին նախապատրաստվել սահմանադրական հանրաքվեին:

Այս նմանությունները կարող էին բացատրվել նախագահական ընտրությունների փուլին բնորոշ հոռետորաբանությամբ, երբ հիմնական թեկնածուն կարիք ունի ադրբեջանական հասարակության աչքում նորից ամրապնդել «ժողովրդի շահերի պաշտպանի» իմիջը: Այո, կարող էին, եթե չլինեին այս զուգահեռների խորքում ընկած շատ ավելի հիմնարար նշանակություն ունեցող հանգամանքներ:

Բանն այն է, որ Ադրբեջանում ավարտվում է այսպես կոչված Մեծ նավթի դարաշրջանը: Հավանաբար, կարելի է պնդել, որ ավարտվում է նաև *BP* ընկերության և ԲԹՁ «ոսկյա դարը»: Հասկանալի է, որ այս գործընթացը տևական է, և *BP* ընկերության դիրքերը դեռ բավական ամուր են. ի թիվս այլ փաստերի, դա են վկայում վերը բերված մեր դիտարկումները: Բայց, կարծում եմ, ակնհայտ է նաև, որ Ադրբեջանին (և տարածա-

շրջանին) սպասվում են գազի դարաշրջանը, գազակոնդենսատի նոր դաշտերի վրա իշխելու հարցը, Կասպիցի սահմանագատման տակավին չլուծված և պոտենցիալ հսկայական լարվածություն պարունակող խնդիրը, ֆրանսիական (և իսրայելական) ընկերությունների և կապիտալի եռանդուն «հարձակումը», տրանսպորտային ենթակառուցվածքների տարածաշրջանային զարգացման խնդիրները: Եվ ամենակարևորը՝ տարածաշրջանում ներկայումս ընթացող աշխարհաքաղաքական «ինտեգրացիոն գործընթացների» երկու մեծ սցենարների առկայությունը՝ եվրոպական և եվրասիական:

Մեզ համար այստեղ ամենակարևորն (ու մտահոգիչն) այն է, որ ինչպես 1994-ին Լեռնային Ղարաբաղում հրադադարի մասին Բիշքեկյան արձանագրության ստորագրումը սերտորեն միահյուսված էր Ադրբեջանում «Մեծ նավթի դարաշրջանի» կերտման, Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի հանրապետությունների շրջափակման գործընթացների հետ՝ համահունչ «Ալիևի դոկտրինի» աշխարհաքաղաքական «ինտեգրացիոն սցենարին», այնպես էլ այսօր տակավին անհայտ ու դժվարնշմարելի միտումներ կարող են ընկած լինել մոտ ապագայի «գազի դարաշրջանի», Հարավային Կասպիցի սահմանագատման և նոր «տարածաշրջանային ինտեգրացիոն սցենարների» թիկունքում:

Ընդգծենք, որ բոլորովին հակված չենք չարագույժ տրամադրություններ ստեղծել: Հակառակը, կարծում ենք, որ ՌԴ-ում և Վրաստանում 2012-13թթ. ժամանակահատվածում ընթացող քաղաքական և իշխանական գործընթացները հստակ լավատեսության հիմք են տալիս¹: Բայց նաև վստահ ենք, որ առկա են լուրջ վտանգներ: Դրանցից ամենատեսանելին ու անմիջականն Ադրբեջանի հնարավոր արկածախնդրությունն է տարածաշրջանում՝ պայմանավորված.

¹ Դրանք ամրապնդվում են նաև Միջերկրական ծովում Կիպրոսի և Իսրայելի հարևանությամբ շոշափելի պաշարներով գազի դաշտերի հայտնաբերմամբ: Սա կարող է թուլացնել Իսրայելի ներգրավվածության աստիճանն Ադրբեջանում և Հարավային Կասպիցում: Ակնկալվում է, որ 2016-17թթ. Իսրայելը կկարողանա նույնիսկ սեփական գազ արտահանել: Թեև նկատենք, որ այսօր և մոտ ապագայում Իսրայելում սպառված նավթի 40-45%-ը գալիս է Ադրբեջանից:

- նավթային դարաշրջանի ավարտով,
- 2009թ. սահմանադրական փոփոխություններով և 2013 և 2018թթ. նախագահական ընտրություններով (տե՛ս վերը),
- 2006-ից մեկնարկած սեփական ռազմարդյունաբերական համալիրի ստեղծումով, դրանում Իսրայելի (և ՌԴ) էական դերակատարմամբ, ռազմականացման պետական համալիր ծրագրի մշակմամբ և իրականացմամբ, հակաիրանական պլանցոնարմի ստեղծման ներկայիս գործընթացներով (տե՛ս Գ. 5),
- սեփական քարոզչության և մյուսոսների ծուղակն ընկնելով:

Կարծում ենք, որ հարցերի այս թնջուկը տարածաշրջանային զարգացումների համատեքստում դեռ կարոտ է ուշադիր և հավասարակշռված քննության:


ԱՆՊՀ բյուջեն. Վերադառնալով ԱՆՊՀ եկամուտների գոյացմանը՝ նկատենք, որ բացի ՇՆԶ-ից, դրանք գոյանում են նաև ածխաջրածինների ԱԲՀ-ներում պետական *SOCAR* ընկերության մասնաբաժնի դիվիդենդներից, հիմնադրամի սեփական միջոցների կառավարումից գոյացած եկամուտներից, տարանցման, հոդօգտագործման և բոնուսային վճարներից ու այլ աղբյուրներից:

Համաձայն ԱՆՊՀ 2010թ. տարեկան հաշվետվության [37]¹, այդ տարի ԱՆՊՀ եկամուտը կազմել էր \$16.3 մլրդ, որից \$15.8 մլրդ-ը (96.7%) գոյացել էր ԱՆՊՀ փոխանցվելիք ածխաջրածինների (նավթ և գազ) շահութային վաճառքի չափաբաժնի իրացումից², մոտ \$198 մլն-ը՝ ԲԹԶ նավթամուղի կոնստրուկցիոնի դիվիդենդներից (1.21%), մոտ \$195 մլն-ը՝ հիմնադրամի սեփական միջոցների կառավարումից գոյացած եկամուտներից (1.19%) և \$131 մլն-ը՝ Շահ Դենիզ նավթադաշտի առաջին փուլի եկամուտների ճշգրտումից (0.81%): Համաձայն ԱՆՊՀ 2010թ. հաշվետվության [37], \$16.3 մլրդ ընդհանուր եկամտի 51.2%-ն առանձնացվել էր

¹ Սույն աշխատության պատրաստման պահին հասանելի վերջին հաշվետվությունը:

² Այս ծավալից 15.6 մլրդ-ը (կամ 98.8%) բաժին էր ընկնում Ազերի-Զիրագ-Գյունեշլի նավթադաշտի արդյունահանումից ստացված նավթային եկամուտներին:

Պահուստային հիմնադրամի համար, որն այդ տարի կազմել էր \$22.8 մլրդ¹: 2010թ. ԱՆՊՀ հիմնական միջոցները կազմել էին \$22.767 մլրդ: Հիմնվելով նշված աղբյուրում բերվող տվյալների վրա՝ Նկար 2.12-ում ներկայացված է 2001-10թթ. ԱՆՊՀ հիմնական միջոցների աճի գրաֆիկը.



Աղբյուրները՝ [37] և սեփական հաշվարկներ

Համեմատության համար նույն նկարում նշված աղբյուրից արտապատկերում ենք այս ցուցանիշին նվիրված ԱՆՊՀ հաշվետվության համապատասխան նկարը (վերին ձախ անկյուն): Ինչպես տեսնում ենք, այն միտումնավոր խեղաթյուրված է: Այսպիսի պրիմիտիվ «հոգեբանական» հնարքով SOFAZ փորձագետները նպատակ ունեն մեղմել ԱՆՊՀ

¹ Համաձայն *news.az* 2011թ. սեպտեմբերի 22-ի տեղեկության, 2011թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ ԱՆՊՀ Պահուստային հիմնադրամի միջոցները գերազանցել են \$40 մլրդ ցուցանիշը: <http://news.az/articles/economy/45051>

միջոցների գոյացման իրականում խիստ անհամաչափ բնույթի բացասական վիզուալ ազդեցությունը՝ փորձելով մոտեցնել այն «զծային անընդհատ» աճի տրամաբանությանը (տե՛ս նաև Նկար 1.1 և Նկար 2.13), մեղմել «կանխիկի այն հանկարծակի տարափը, որն Ադրբեջանն ի գորու չէ մարսել» (Գ. 1):

ԱՆՊՀ եկամուտները, ըստ հաստատված կանոնակարգի, բացի Պահուստային հիմնադրամին արվող հատկացումներից, օգտագործվում են պետական բյուջե փոխանցումների, ենթակառուցվածքային և սոցիալական բնույթի մի շարք ծրագրերի ֆինանսավորման, ինչպես նաև արտերկրում ադրբեջանցի ուսանողների ուսումը վճարելու համար:

Ադյուսակ 2.2-ում ներկայացվում է ԱՆՊՀ եկամուտների և ծախսերի մանրամասն տարեկան բացվածքը 2007-12թթ. համար: Մինչ այդ, այսինքն՝ մինչ ԱԶԳ նավթադաշտի «հիմնական նավթի» փուլի մեկնարկը, ԱՆՊՀ ընդհանուր եկամուտները չէին գերազանցում 0.5-1.0 մլրդ մանաթը և ստորև չեն դիտարկվում: Գրքի պատրաստման պահին 2012թ. ԱՆՊՀ պաշտոնական հաշվետվությունը բացակայում էր, ուստի այդ տարվա համար բերվում են ԱՆՊՀ կայքից վերցված ընթացիկ ցուցանիշները: Վերջին երկու այունակներում բերվում են 2007-11թթ. և 2007-12թթ. գումարային ցուցանիշները՝ դիտարկված հինգ տարիների համար: Ադյուսակի վերջին երկու տողերում բերվում են ԱՆՊՀ զուտ շահույթը (եկամուտներ հանած ծախսեր)՝ ըստ տարիների և գումարային՝ արտահայտված ադրբեջանական մանաթով և ԱՄՆ դոլարով: Վերջին դեպքում օգտագործված է տվյալ տարում մանաթ/դոլար պաշտոնական տարեկան միջին փոխարժեքը:

ԱՆ ՊՂՀ ԲՈՒՅՆԻՆ 2007-12թթ.

Աղյուսակ 2.2

Միև մասնաբաժնի	2007	2008	2009	2010	2011	2012 *	2007-2011	2007-2012
Եկամուտները, այդ թվում՝	1555.7	10144.7	8361.0	13088.5	15628.4	10697.0	48778.4	59475.4
ՇՆԸ	1429.7	9819.5	7992.3	12656.1	15257.5	10365.4	47155.1	57520.6
Միջոցների կտրամադրումից	55.1	148.9	211.4	155.9	176.4	319.2	747.7	1067.0
Բյուջեի միջոցներ		104.8	150.8	158.7	66.8	9/Բ	481.0	481.0
Շահ Դենից 1 դիվիդենդներ				105.0	101.7	9/Բ	206.7	206.7
Եկամուտներ՝ գնալիս ստացրելությունից	33.4	70.6				9/Բ	104.0	104.0
Տրամադրված եկամուտ	14.6		5.6	8.3	7.5	8.1	36.0	44.2
ԱԳՀ ստացվածքում և բնույթներ	17.2			1.6	15.7	3.3	34.5	37.9
Acceage fees	5.6			1.2	1.3	9/Բ	8.1	8.1
Այլ եկամուտ	0.2	0.9	0.9	1.8	1.4	0.9	5.2	6.1
Միև մասնաբաժնի	2007	2008	2009	2010	2011	2012 *	2007-2011	2007-2012
Ծախսերը, այդ թվում՝	1115.6	4380.9	5319.5	6386.6	9606.6	10561.3	26809.2	37370.5
Մտահոսումներ տեղադրված	585.0	3800.0	4915.0	5915.0	9000.0	9905.0	24215.0	34120.0
Օրգու-Փաբայա ցրատար	173.6	211.8	120.0	199.6	32.6		737.6	737.6
Մասնու-Այգեբուս ոռոգման համակարգ	76.9	120.6	130.0	131.0	200.0	200.0	658.5	858.5
Փախստակների կացարաններ	154.2	145.0	90.0	104.9	140.0	110.0	634.1	744.1
Բարձր-Թրիխի-Իրադ երկաթուղի	30.0	88.7	30.0	12.4	161.9	252.5	323.0	575.5
ԱՆՊՀ վարչական ծախսեր	7.4	9.8	24.5	14.0	57.1	73.8	112.8	186.6
ԱԶԳ ծրագրում SOCAR ընկերության մասնաբաժնի կապակցում	88.5	9/Բ	9/Բ	9/Բ	9/Բ	9/Բ	88.5	88.5
Արտերկրում ուտանություններ ուտան վճար		5.0	10.0	9.6	15.0	20.0	39.6	59.6
ԱՆՊՀ գումարային գույքի ցածր	2007	2008	2009	2010	2011	2012*	2007-2011	2007-2012
միև մասնաբաժնի	440	5764	3041	6702	6022	136	21969	22105
վիև \$ ԱՄՆ	489	6404	3802	8377	7622	172	26695	26867

* 2012թ. հասարակ բերրիում են 2011թ. դեկտեմբերին հաստատված ԱՆ ՊՀ 2012թ. բյուջեի ցուցանիշները: 9/Բ - գնահատականը բացակայում է: Աղյուսակները՝ [37]:

Ինչպես տեսնում ենք այս աղյուսակից, անցած 5 տարիների ընթացքում (2007-11թթ.) ԱՆՊՀ գումարային եկամուտները կազմել են մոտ 48.8 մլրդ մանաթ (\$59.3 մլրդ), գումարային ծախսերը՝ 26.8 մլրդ մանաթ (\$32.6 մլրդ): Այլ խոսքով՝ անցած 5 տարիների ընթացքում ԱՆՊՀ զուտ եկամուտները կազմել են մոտ 21.9 մլրդ մանաթ (\$26.7 մլրդ): Հատկանշական է, որ սկսած 2011-ից՝ նկատելի է ԱՆՊՀ զուտ շահույթի նվազում: 2010թ. այն կազմել էր 6.7 մլրդ մանաթ (\$8.4 մլրդ), իսկ 2011-ին՝ արդեն 6.0 մլրդ մանաթ (\$7.6 մլրդ): Այս միտումն ամենայն հավանականությամբ կշարունակվի և՛ 2012-ին, և՛ դրանից հետո: Էլ ավելի հատկանշական է, որ համաձայն 2011թ. դեկտեմբերին հաստատված ԱՆՊՀ 2012թ. բյուջեի պլանի¹, այդ տարի ակնկալվող ՇՆԶ-ը կազմելու էր 10.4 մլրդ մանաթ, այսինքն՝ ավելի քան 5.0 մլրդ մանաթով (\$6.25 մլրդ) քիչ, քան նախորդ տարի: 2012թ. հուլիսի 3-ին վերանայված ԱՆՊՀ բյուջեի տվյալների համաձայն²՝ 2012թ. ԱՆՊՀ ՇՆԶ ծավալը հասցված է 13.39 մլրդ մանաթի:

Բայց այս դեպքում ևս արդեն վերանայված ցուցանիշը նորից զիջում է նախորդ տարվա 15.6 մլրդ մանաթ պաշտոնական ցուցանիշին ավելի քան 2 մլրդ մանաթով (\$2.5 մլրդ, տե՛ս Աղյուսակ 2.2): Ի դեպ, նշենք, որ ԱՆՊՀ բյուջեների այս տարեմիջյան վերանայումները ԱՆՊՀ բյուջեի (և ինչպես կտեսնենք Գ. 4-ում՝ ԱՀ պետական բյուջեի) առանձնահատկություններից մեկն են: Դրանց համար հիմք են ծառայում ԱՀ նախագահի հատուկ հրամանագրերը, որոնցից մի քանի նմուշ բերում ենք Հավելված 5-ում: Նկատենք նաև, որ 2012թ. ԱՆՊՀ բյուջեի վերանայման համար հիմք հանդիսացող ԱՀ նախագահի հրամանագրի բնագիրը բացակայում է թե՛ ԱՆՊՀ կայքում, թե՛ ԱՀ նախագահի կայքում: Հանգամանք, որն ստիպում է կասկածի տակ առնել այդ տարի ԱՆՊՀ ցուցանիշները՝ մասնավորապես, և ԱՀ 2012թ. պետական բյուջեի պաշտոնական տվյալները՝ առհասարակ (Գ. 4): Բերված փաստերը և Աղյուսակ 2.2-ի

¹ http://www.oilfund.az/en_US/hesabatlar-ve-statistika/buedce-melumatlari/ARDNF-budce-tesdiq-edildi.asp (*SOFAZ 2012 budget approved 30.12.2011*):

² http://www.oilfund.az/en_US/hesabatlar-ve-statistika/buedce-melumatlari/doevlet-neft-fondu-2012-ci-il-buedcesine-deyisiklikler-edildi-09-02-2012.asp

տվյալները ևս մեկ անգամ ապացուցում են մեր վերը կատարած եզրահանգումն Ադրբեջանում ԱԶԳ «Մեծ նավթի դարաշրջանի» մոտալուստ ավարտի մասին:

Անդրադառնանք նաև ԱՆՊՀ բյուջեի ծախսային հատվածին: Ինչպես հետևում է Ադյուսակ 2.2-ի տվյալներից, դրանց առյուծի բաժինը կազմում են ԱՀ պետական բյուջե կատարվող ներարկումները (մասհանումները): 2007-ին դրանք կազմել էին մոտ կես մլրդ մանաթ կամ այդ տարվա ընդհանուր մասհանումների մոտ 50%-ը: 2009-ին դրանք կազմել էին մոտ 4.9 մլրդ մանաթ կամ այդ տարվա ընդհանուր մասհանումների արդեն մոտ 92%-ը: Իսկ 2011-ին այս ցուցանիշը կազմեց 94%: 2012թ. ԱՆՊՀ բյուջեի նախնական պլանով նախատեսվում էր պետական բյուջեին հատկացնել մոտ 10.0 մլրդ մանաթ (\$12.5 մլրդ), ինչը կազմում էր նախատեսված եկամուտների նույնպես 94%-ը: Համաձայն ԱՆՊՀ 2012թ. բյուջետային վերանայումների (տե՛ս Հավելված 5), նավթի նախատեսվածից բարձր գների հետևանքով 2012թ. ԱՆՊՀ եկամուտների ցուցանիշը հասցված է 13.4 մլրդ մանաթի (մոտ \$16.8 մլրդ):


Ընդ որում, առ 2013թ. մայիսը հայտնի չէ պաշտոնական որևէ հայտարարություն ԱՆՊՀ-ից 2012թ. պետական բյուջե մասհանման ծավալների փոփոխության մասին: Այս հանգամանքը վկայում է, որ ԱՆՊՀ բյուջեն, սկսած 2011-ից, կորցնում է ճկունությունը՝ երկրի պետական բյուջե մասհանումներ կատարելու հնարավորության տեսանկյունից: ԱԶԳ նավթարդյունահանման ծավալների կրճատումն այս պարագայում անխուսափելիորեն կհանգեցնի պետբյուջե ներկարկումների ծավալների կրճատմանը՝ սկսած 2013-14 թվականներից: Իրադրությունն այս «պիկային» վիճակում պահելու համար (94% եկամուտների հատկացում պետբյուջեին) անհրաժեշտ կլինի կամ հում նավթի *azeri lights* տեսակի միջազգային գների կտրուկ բարձրացում, կամ ԱՀ Պահուստային հիմնադրամ փոխանցված միջոցների բանաձևի վերանայում (տե՛ս վերը):

Հավելենք միայն, որ ԱՆՊՀ պաշտոնական հաշվետվություններում ծախսային հատվածին նվիրված գրաֆիկներին բնորոշ է այն նույն

պրիմիտիվ կեղծարար հնարքը, որն ԱՆՊՀ փորձագետները կիրառում էին ԱՆՊՀ միջոցների գոյացումը (Նկար 2.12) և ԱՆՊՀ ՇՆՉ եկամուտներում ԱԶԳ և այլ դաշտերի մասնաբաժինները (Նկար 1.1, Գ. 1) պատկերելիս: Այսպես, Նկար 2.13-ում պատկերում ենք 2003-10թթ. պետական բյուջե ԱՆՊՀ մասհանումների գրաֆիկը: Ինչպես տեսնում ենք, այն խիստ ոչգծային է, և ԱԶԳ հիմնական փուլի մեկնարկից հետո մասհանումներն էականորեն աճում են նախորդ տարիների ցուցանիշների համեմատ: Նույն նկարում ԱՆՊՀ 2011թ. պաշտոնական հաշվետվությունից պատկերում ենք նույն ցուցանիշի ԱՆՊՀ գրաֆիկը: Ինչպես տեսնում ենք, այստեղ նույնպես առկա է վերոհիշյալ վիզուալ աղավաղումը՝ կոչված «գծայնացնելու» իրավիճակը:

ԱՀ պետբյուջե մասհանումներից հետո ԱՆՊՀ ծավալով հաջորդ ծախսային հոդվածը (մոտ \$200 մլն) բաժին է ընկնում Օդուգ-Գաբալա շրջանից դեպի Բաքու խմելու ջրի ինքնահոս ջրատարի կառուցման ծրագրին: 2006-11թթ. ժամանակահատվածում ԱՆՊՀ-ն այս ծրագրի իրականացման համար ծախսել է ընդհանուր 737 մլն մանաթ: Հաջորդը Սամուր-Ապշերոն ոռոգման համակարգի վերակառուցման ծրագիրն է: Ծրագրի նպատակն է ինքնահոս ջրատարի օգտագործմամբ «Բաքու և Սումգայիթ քաղաքների համար ապահովել հուսալի ջրամատակարարում»¹: ԱՆՊՀ-ն այս ծրագրի իրականացման համար ծախսել է մոտ 656 մլն մանաթ: Փախստականների կացարանների շինարարության համար ԱՆՊՀ-ն մինչև 2012թ. հատկացրել է \$634 մլն մանաթ: Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղու կառուցման ծրագրի համար ԱՆՊՀ-ն 2007-2011թթ. ժամանակահատվածում տրամադրել է 323 մլն մանաթ: Սակայն 2012թ. բյուջեով նախատեսվում է ևս 253 մլն մանաթի հատկացում: Կտրուկ աճել են ԱՆՊՀ սեփական վարչական ծախսերը: Այսպես, եթե 2010-ին դրանք կազմել էին 14 մլն մանաթ, ապա հաջորդ տարի դրանք ավելացել են 4 անգամ և կազմել 57.1 մլն մանաթ:


¹ Այդպես է բնագրում: Նշված աղբյուրի այս տեղեկությունը հակասում է դրա՝ որպես «ոռոգման ծրագիր» անվանմանը:



Աղբյուրները՝ [37] և սեփական հաշվարկներ

Բերված տվյալները հնարավորություն են ընձեռում գնահատել մինչ այժմ ԱՆՊՀ եկամուտներով զոյացած ԱՀ ռազմավարական Պահուստային հիմնադրամի ծավալների վերին սահմանը: Նկար 2.14-ում 2007-2011թթ. ժամանակահատվածի համար պատկերել ենք հիմնադրամին հատկացված տարեկան միջոցները, ինչպես նաև ԱՆՊՀ ամբողջ ծախսերը՝ ներառյալ պետական բյուջե մասհանումները: Նկարի վերջին երկու սյունակը պատկերում է գումարային ցուցանիշները 2007-2011թթ. և 2007-2012թթ. ժամանակահատվածների համար: Ինչպես տեսնում ենք նկարից, ԱՀ Պահուստային հիմնադրամի գումարային ծավալի վերին սահմանը կազմում է մոտ 22 մլրդ մանաթ (\$27.5 մլրդ)¹:

¹ Նկատենք, որ համաձայն ԱՆՊՀ 2011թ. պաշտոնական հաշվետվության, 2011թ. դեկտեմբերի դրությամբ Պահուստային հիմնադրամի ծավալը կազմել էր մոտ \$29.8 մլրդ, այսինքն՝ մոտ 24 մլրդ մանաթ [37]:



Աղբյուրները՝ [37] և սեփական հաշվարկներ

Եզրափակելով ԱՆՊՀ գործունեության մեր հակիրճ քննարկումը՝ անհրաժեշտ է նշել հետևյալը: Միանգամայն անկախ գործող ԱՆՊՀ-ն, ԱՀ նախագահի և նրա աշխատակազմի հետ իր անմիջական կապով, գործունեության անթափանցիկությամբ և եկամուտների աղբյուրների անվերահսկելիությամբ, ինչպես նաև պետական բյուջեի ձևավորման

գործում 2007-ից սկսած իր էական դերակատարմամբ, որոշակիորեն կաթվածահար է անում ԱՀ կառավարությանը՝ առհասարակ և ԱՀ Ֆինանսների նախարարությանը՝ մասնավորապես, բյուջետային կարգապահության պահպանման, դրա հաշվեկշռման, ծախսային հատվածի թափանցիկության ու արդյունավետ ֆիսկալ քաղաքականություն իրականացնելու առումներով: Չուր չէ, որ ԱՄՆ ԿՀՎ որդեգրած մեթոդաբանությունն ընդհանրապես հրաժարվում է դիտարկել ԱՆՊՀ ներարկումները որպես պետբյուջեի եկամտային հատվածի իրական աղբյուր (տե՛ս Գ. 4) և իր գնահատականներում չի հենվում ԱՀ պետական բյուջեի մասին պաշտոնական տվյալների վրա:

Կառուցվածքային առումով հակասական այս իրավիճակը լարում է առաջացնում ԱՆՊՀ-ի և ԱՀ կառավարության միջև, որը կարող է սրվել (և սրվում է) նավթային կոնյունկտուրայի թե՛ դեպի վեր, թե՛ դեպի վար փոփոխման դեպքում: Ընդհանուր քաղաքական անկայունության պարագայում այն կարող է օգտագործվել (և օգտագործվում է) սոցիալ-տնտեսական ու քաղաքական պոպուլիստական ուղղվածության այլևայլ գործընթացների ժամանակ:

Ի դեպ, կառուցվածքային նույն հակասությունը, պարզապես ավելի ստորին՝ ճյուղային մակարդակով, բնորոշ է ԱՀ էներգետիկայի և արդյունաբերության նախարարության և *SOCAR* Պետական նավթային ընկերության հարաբերություններին (տե՛ս 2.2 բաժնում): Ավելին, այս հակասությունները ձևավորվել են, այսպես ասած՝ վերից վար, նավթային ոլորտից դեպի ընդհանուր կառավարական և իշխանական մակարդակ: Դրանք սնվում են, մի կողմից՝ դեռ 1990-ականների կեսերին ստորագրված և օրենքի ուժ ունեցող ԱԲՀ-ների դրույթներից, մյուս կողմից՝ ԱՀ իշխանության ջանքերից՝ վերահսկել և ըստ իրենց հայեցողության կառավարել նավթագազային արդյունահանումից ստացված եկամուտները և դրանցով պայմանավորված սոցիալական, քաղաքական ու աշխարհաքաղաքական դիվիդենդները:

Եզրակացություններ

- Ադրբեջանը միակողմանիորեն զավթել է ԱԶԳ նավթադաշտը և Հարավային Կասպիցի նավթագազային այլ դաշտերը՝ հիմնվելով ԽՍՀՄ Նավթային արդյունաբերության նախարարության 1970թ. ադավադված քարտեզի վրա: ԱԶԳ նավթադաշտի զավթումն ընկած է «Ալինի դոկտրինի» հիմքում: Առ ասոր Ադրբեջանը միակ մերձկասպյան պետությունն է, որն իր կողմից զավթված Կասպիցի տարածքը սահմանադրորեն (հոդված 11, կետ 5) հայտարարել է սեփական ազգային տարածք: 1994թ. սեպտեմբերյան «դարի պայմանագրի» ստորագրումով ավարտվեցին ԱԶԳ նավթադաշտի միակողմանի զավթումն ու օկուպացիան: Այն հանդիսանում է անսադրված ագրեսիայի և օկուպացիայի բռնարարք, որը կոպտորեն խախտում է Կասպիցի կարգավիճակը սահմանող միջազգային պայմանագրերն ու նորմերը, Կասպիցի հարավային հատվածի ածխաջրածինների և այլ բնական պաշարների արդյունահանման Թուրքմենստանի և Իրանի իրավունքները:
- Խափանված է ԱԶԳ «հիմնական նավթի» *BP/AIOC* եռափուլ ծրագիրը: Ծրագրի նոր՝ 4-րդ փուլի իրականացումը (*COP*, մեկնարկը՝ 2013-ին) ի վիճակի կլինի երկարաձգել ԱԶԳ նավթադաշտի շահագործումը պլատոյի ռեժիմում, բայց, ամենայն հավանականությամբ, չի ապահովի այստեղ օրական 1 մլն բարել նավթի արդյունահանման ցուցանիշը նկատելիորեն տևական ժամանակ: Առաջիկա տարիներին Ադրբեջանում անխուսափելի է նավթադոլարային եկամուտների նվազումը:
- Գազային ոլորտի անգամ ամենահավակնոտ ծրագրերի իրականացումը (Շահ Դենիզ - *TANAP*) Ադրբեջանին կապահովի մոտ 6-7 անգամ ավելի քիչ շահույթ, քան ԱԶԳ-ԲԹՁ ծրագիրը: Առաջիկա տարիների ընթացքում Ադրբեջանում 6-7 անգամ կնվազեն ածխաջրածիններից գոյացած ընդհանուր եկամուտները:
- Ածխաջրածինների արդյունահանումից եկամուտների նվազման սպասումները, միջազգային նավթագազային ընկերությունների «շանտաժին» հլու ենթարկվելը, ինչպես նաև մի շարք այլ գործոններ

ադրբեջանական հասարակությունում առաջացնում են շոշափելի հիասթափություն դեռ 1994-ին Ադրբեջանին համատարած բարօրություն ու սոցիալ-տնտեսական շեշտակի զարգացում խոստացած «Ալիևի դոկտրինից»:

- Այս հիասթափությունը, զուգորդված հասարակության խորացող սոցիալական բևեռացմամբ, հանրային և անձնական ազատությունների բռնաճնշմամբ, ազգային փոքրամասնությունների նկատմամբ համակարգային բնույթ ունեցող խտրականություններով, պայթյունավտանգ իրավիճակ է ստեղծում երկրում: Իրադրությունը խորանում է Ադրբեջանում առկա ժողովրդավարության սաղմնային մակարդակի, քաղաքացիական հասարակության թերզարգացածության և հատկապես իշխանափոխության մեխանիզմների և իշխանության կիրառման, ըստ էության՝ կիսաֆեոդալ բնույթի պատճառով:
- 2009թ. մարտյան սահմանադրական հանրաքվեն հիմնովին փոխեց ԱՀ քաղաքական համակարգը: Հանրաքվեի արդյունքներով ընդունված ԱՀ նոր սահմանադրությունը մինչև կյանքի վերջը Ի.Ալիևի նախագահ վերընտրվելու հնարավորությունը կապում է Լեռնային Ղարաբաղում պատերազմ վերսկսելու անհրաժեշտության և պատերազմը երբևէ չվերջացնելու հետ:
- ԱՆՊՀ և *SOCAR* եկամուտները գոյանում են անթափանց միջավայրում, ԱՀ օրենսդրական դաշտի սահմաններից դուրս և միայն մասնակիորեն են ենթարկվում ֆիսկալ վերահսկման: Բացակայում է ԱՆՊՀ և *SOCAR* եկամուտների, դրամային հոսքերի և ծախսերի նկատմամբ հանրային կամ անկախ վերահսկման որևէ գործուն մեխանիզմ: ԱՆՊՀ մասհանումները պետական բյուջե կատարվում են, ըստ էության, միանձնյա որոշումներով և անվերահսկելի պայմաններում: Նավթային ոլորտում առկա կառուցվածքային հակասությունները (*SOCAR-BP/AIOC*, *BP/AIOC*-ԱՆՊՀ, ԱՆՊՀ-ԱՀ էներգետիկայի նախարարություն և այլն) հաղորդվում են ԱՀ պետական կառավարման վերին օղակներ:

Աղբյուրներ և գրականություն

1. BP Statistical Review of World Energy. 1998-2012.
2. <http://www.globalsecurity.org/military/world/azerbaijan/energy.htm>
3. <http://www.statoil.com/en/About/Worldwide/Azerbaijan/Pages/AzeriChiragGunashli.aspx>
4. US DOE Energy Information Administration. Azerbaijan: Country Analysis Brief. 9 Jan 2012.
5. Azeri, Chirag, Gunashli Full Field Development Produced Water Disposal Project. Environmental and Socio-economic Impact Assessment. Final Report, AIOC/BP. January 2007.
6. http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=6500&sphrase_id=25309
7. *Алиев Ильхам*, Каспийская нефть Азербайджана. М.: Известия, 2003.
8. *Cohen, A.*, Iran's Claims Over Caspian Sea Resources Threaten Energy Security. The Heritage Foundation. No. 1582, September 4, 2002.
9. *Марджанян А.*, Энергетическое будущее Южного Кавказа: Электроэнергетика. *Caucasica*, vol. 1, Москва, 2011г., с. 317-337.
10. *Մարջանյան Ա.*, RAND կորպորացիան և մենք. Հայաստան-Թուրքիա հարաբերությունները, «Նորավանք» ԳԿՀ, «21-րդ ԴԱԸ», #3, 2010թ., էջ 19-50¹: *Марджанян А.*, Корпорация RAND и мы: армяно-турецкие взаимоотношения, НОФ «Нораванк», «21-й ВЕК», № 2 (18), 2011г., с. 15-43².
11. *Հարությունյան Գ.*, Նոր Մերձավոր Արևելք. Իրողություններ և հեռանկարներ. 13.03.2012³:
12. *Մարջանյան Ա.*, Էներգետիկա և աշխարհաքաղաքականություն, «Նորավանք» ԳԿՀ, «21-րդ ԴԱԸ», թիվ 1 (1), 2003թ., էջ 13-55⁴:
13. *Taşpınar, Ö.*, The Rise of Turkish Gaullism: Getting Turkish-American Relations Right. *Insight Turkey*, v. 13, No. 1, 2011.
14. *Մարջանյան Ա.*, Ժան Բորդիյարի «Միմուլյակրը» և Բարաք Օբամայի «*Medz Yeghern*»-ը. Մաս Բ. «le Mai 1968», «Նորավանք» ԳԿՀ, «21-րդ ԴԱԸ», թիվ 3 (43), 2012թ., էջ 5-27⁵:
15. *Ülgen, S.*, Turkey and the Bomb. Carnegie Endowment for International Peace. Feb., 2012.
16. *Հարությունյան Գ.*, Թուրքական միջուկային սպառնալիքը; *Մարջանյան Ա.*, Միջուկային Թուրքիան; *Տեր-Հարությունյան Ա.*, Թուրքիայի միջուկային նկրտումների վերաբերյալ: «Նորավանք» ԳԿՀ, «Գլոբուս», 4(25), 2012:

¹ http://www.noravank.am/upload/pdf/RAND_arm.pdf

² http://www.noravank.am/upload/pdf/2.Ara_Marjanyan_21_VEK_02_2011.pdf

³ http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=6348

⁴ http://www.noravank.am/upload/pdf/240_am.pdf

⁵ http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=6324&sphrase_id=25340

17. Oil Shock: Potential for Crisis. Admiral Dennis Blair, USN (Ret.). Written Testimony Before the US House Select Committee on Energy Independence and Global Warming, 7 November, 2007.
18. Oil ShockWave. Oil Crisis Executive Simulation. Simulation Report & Summary of Findings. The National Commission on Energy Policy (NCE), Securing America's Future Energy (SAFE), The Bipartisan Policy Centre (BPC), Washington, D.C. June, 2005.
19. What Would \$120 Oil Mean for the Global Economy? R.F. Wecott. SAFE, Washington, D.C. April 2006.
20. Oil ShockWave. Oil Crisis Executive Simulation. Simulation Report & Summary of Findings. Securing America's Future Energy (SAFE), The Bipartisan Policy Centre (BPC), Washington, D.C. November 2007.
21. *Azimov, A.*, The End of Eternity. Doubleday, 1955. (Азимов А., Конец Вечности.)
22. *Переслегин С.*, Возвращение к звездам, М., АСТ, 2009.
23. *Mann, S.*, Chaos, Criticality and Strategic Thought. *Parameters*, US National War College. April 1991.
24. R. Thom. Stabilité Structurelle et Morphogénèse. Benjamin, N.Y., 1972.
25. *Арутюнян Г., Гриняев С.*, Состоится ли «захват Уолл-стрита»? НОФ «Нораванк», «21-й ВЕК», №1, 2012.
26. *Jean-Baptiste Michel, et al.*, Quantitative Analysis of Culture Using Millions of Digitized Books. *Science*, vol. 331, 176, 2011.
27. *Ղազարյան Բ. Կ.*, Ժամանակակից հայոց լեզվի հաճախականության բառարան: Հայկական ՍՍՀ ԳԱ, 1982: *Ղազարյան Բ. Կ.*, Հայոց լեզվի հաճախականության թեմատիկ բառարանի կազմումը: Պատմա-բանասիրական հանդես, № 4, 1968. էջ 225-232:
28. Частотный словарь русского языка. Под ред. Л.Н. Засориной. М., «Русский Язык», 1977.
29. *Մարջանյան Ա.*, Ուժեղ պետություն է արդյոք Հայաստանի 3-րդ Հանրապետությունը: «Նորավանք» ԳԿՀ, «21-րդ ԴԱԸ», թիվ 3 (21), 2008թ., էջ 74-98¹:
30. *Becker G.*, Speculation and Strategic Oil Reserves. 07.05.2011².
31. A Few Speculators Dominate Vast Market for Oil Trading. *Washington Post*. By David Cho. Thursday, August 21, 2008; A01.
32. *Марджанян А.*, Наше будущее - глазами *NIC*. НОФ «Нораванк», «21-й ВЕК», № 3 (11), 2009г., с. 3-38³.
33. *Kjarnet, H.*, The State Oil Company SOCAR: A Microcosm of Azerbaijani Development? *Caucasus Analytical Digest*. No. 16, 26 April, 2010.

¹ http://www.noravank.am/upload/pdf/352_am.pdf

² <http://english.caixin.com/2011-07-05/100275986.html>

³ http://www.noravank.am/rus/futuris/detail.php?ELEMENT_ID=5895

34. *Aslanli, K.*, Oil and Gas Revenues Management in Azerbaijan: Crude Dependence and Its Consequences. *Caucasus Analytical Digest*. No. 16, 26 April, 2010.
35. *Hübner, G.*, Foreign Direct Investment in Azerbaijan—the Quality of Quantity. *Caucasus Analytical Digest*. No. 28, 21 June, 2011.
36. *Lussac, S.*, The State as a (Oil) Company? The Political Economy of Azerbaijan. GARNET Working Paper No. 74/10. February 2010.
37. State Oil Fund of the Republic of Azerbaijan (SOFAZ). Annual Reports 2001-2011.
38. *Mirzeyevev, Sch.*, Azerbaijan Economy Since Azerbaijan Economy Since. Center for Economic and Social Development (CESD) March, 2012. www.cesd.az
39. Россия, США и Китай создадут независимое рейтинговое агентство. ИТАР-ТАСС, 24/10/2012¹.
40. Новое международное рейтинговое агентство открывается в Гонконге. ИТАР-ТАСС, 07/05/2013².
41. *Մարձջանյան Ա.*, Военные игры и не только. 05.06.2013. Versia.am³. *Մարձջանյան Ա.*, 2017-2019թթ. պատերազմը և «Վրաստան-Ադրբեջան-Հայաստան-Թուրքիա» (ՎԱՀԹ) սցենարը. «Նորավանք» ԳԿՀ, «Գլորիա», 2013: *Մարձջանյան Ա.*, ТРЕНАЖ - НО НЕ ТОЛЬКО. Голос Армении⁴, 22 июня, 2013, No 67 (20420).
42. GAAT Scenario, Study Guide #1. Present – DEC 2019. Ref. C210. Fort Leavenworth, Version: AY 12-13.

¹ <http://www.itar-tass.com/c1/553670.html>

² <http://www.itar-tass.com/c16/729059.html>

³ <http://www.versia.am/ara-mardzhanyan-voennye-igry-i-ne-tolko/>


⁴ <http://www.golosarmenii.am/ru/20420/society/27642/>

ԳԼՈՒԽ 3.

ԱՂԲԵԶԱՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐԸ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Արտաքին առևտրի մասին տեղեկատվության առավել ամբողջական, սակայն որոշ դեպքերում՝ ոչ հավաստի աղբյուր է Ադրբեջանի վիճակագրական պետական կոմիտեն (ԱՎՊԿ)¹: Գրքի պատրաստման պահին (2013թ. մայիս) հասանելի էին միայն մինչև 2011թ. տվյալները: Ստորև բերվող տվյալները ներբեռնվել են 2012թ. մարտին և թարմացվել 2013թ. մայիսին՝ 2011թ. ցուցանիշների հաշվառման նպատակով: Հետևելով ԱՎՊԿ մոտեցումներին՝ արտաքին առևտրի մասին տվյալները բերվում են դասակարգված՝ ըստ ԱՊՀ և մնացած աշխարհի երկրների:

¹ <http://www.azstat.org/>. Ըստ ԱՎՊԿ-ի, արտահանում (*export*)՝ նշանակում է Ադրբեջանում արտադրված կամ այլ երկրներից ներկրված ապրանքների (*goods*) պետական սահմանները հատելը: Ադրբեջանում արտադրված են համարվում նաև այն ապրանքները, որոնք ներկրվել են երկիր և ենթարկվել վերամշակման, որի ընթացքում փոփոխվել են դրանց քանակական և որակական ցուցանիշները: Արտահանման գումարային ծավալի գնահատման ժամանակ օգտագործված են *FOB* գները, այսինքն՝ արտահանվող ապրանքի գինը ներառում է ապրանքի արժեքը՝ գումարած դրանց տեղափոխման ծախսերը մինչև երկրի սահման (ցամաքային, ծովային, օդային), գումարած բեռնման ծախսերը: Ներկրում (*import*)՝ նշանակում է այլ երկրներից ապրանքների Ադրբեջանի սահմանների հատում՝ սպառման կամ վերարտահանման (*re-export*) նպատակով: Ներկրման գումարային ծավալի գնահատման ժամանակ օգտագործված են երկրի *SIF* կամ ֆրանկո-սահման գները, այսինքն՝ դրանք ներառում են ապրանքի արժեքը՝ գումարած դրանց տեղափոխման ծախսերը մինչև երկրի սահման (ցամաքային, ծովային, օդային), գումարած ապահովագրական ծախսերը: Արտաքին առևտրի շրջանառությունը (*External trade turnover*) նշանակում է ներկրման և արտահանման գումարային արժեքների բացարձակ գումարը: Արտաքին առևտրի հաշվեկշիռը (*External trade balance*) նշանակում է արտահանման և ներկրման գումարային ծավալների տարբերությունը: Եթե արտահանումը գերակշռում է ներկրմանը, ապա հաշվեկշիռը դրական է և հակառակը:



Աղբյուրը՝ http://www.azstat.org/statinfo/consumermarket/en/ext_t.shtml

3.1. Արտաքին առևտրի շրջանառությունը և հաշվեկշիռը

Ըստ ԱՎՊԿ-ի, Ադրբեջանի արտաքին առևտրի հաշվեկշիռը 1991-2007թթ. Ժամանակահատվածի՝ 17 տարիների ընթացքում տատանվել է մոտ \$1 մլրդ-ի սահմաններում (բոլոր գները՝ ընթացիկ ԱՄՆ դոլար)՝ լինելով բացասական 1994-1999թթ. ընթացքում (տե՛ս Նկար 3.1): 1996թ. այն կազմել է -\$329.3 մլն, իսկ 2006թ.՝ \$1.1 մլրդ: Իրադրությունը կտրուկ փոխվում է՝ սկսած 2008-ից, երբ արտաքին առևտրի հաշվեկշիռը շեշտակիորեն աճելով կազմում է \$40.5 մլրդ. նախորդ տարվա համեմատ աճ գրեթե 120 անգամ: 2008-ի այս ցուցանիշը ռեկորդային է ԱՀ պատմության մեջ ու վկայում է ազգային եկամուտների գոյացման ծայրահեղ անհավասարակշռության մասին: Այդ տարի արտաքին առևտրի շրջանառությունը կազմել էր մոտ \$55 մլրդ, որից արտահանումը՝ \$47.5 մլրդ: Աղյուսակ 3.1-ում բերում ենք անցած 6 տարիների համար Ադրբեջանի արտաքին առևտրի շրջանառության, հաշվեկշիռի, ինչպես նաև արտահանումների և ներկրումների ընդհանուր գումարային տվյալները.

Աղյուսակ 3.1

Արտաքին առևտրի ծավալները (\$ մլրդ ԱՄՆ)

տարի	շրջանառություն	ներկրում	արտահանում	հաշվեկշիռ
2006	11.64	5.27	6.37	1.11
2007	11.77	5.71	6.06	0.34
2008	54.93	7.17	47.76	40.59
2009	20.82	6.12	14.70	8.58
2010	27.96	6.60	21.36	14.76
2011	36.33	9.76	26.57	16.81

Աղբյուրը՝ http://www.azstat.org/statinfo/consumermarket/en/ext_t.shtml

Արտաքին առևտրի շրջանառության և արտահանումների մասին ԱՎՊԿ տվյալներն ունեն այն ուշագրավ առանձնահատկությունը, որ տարբերվում են ԱՀ Մաքսային ծառայության կողմից բերվող նույն ցուցանիշների արժեքներից: Այս հանգամանքը նշվում էր հարցով զբաղված փորձագետների կողմից դեռ 2008-ին: Սակայն ԱՎՊԿ պաշտոնական հրապարակումներում այս ցուցանիշների երկու տարբեր գնահատականները սկսեցին բերվել միայն 2013-ից սկսած և միայն երկու տարիների համար:

Աղյուսակ 3.2

Արտաքին առևտրի ծավալների ԱՎՊԿ և ԱՀ Մաքսային ծառայության գնահատականները (\$ մլրդ ԱՄՆ)

	շրջանառություն	ներկրում	արտահանում	հաշվեկշիռ
2010թ.				
ԱՎՊԿ	33.16	6.60	26.56	19.96
Մաքս	27.96	6.60	21.36	14.76
	Տարբերություն՝ 5.20		5.20	5.20
	18.6%		24.3%	35.2%
2011թ.				
ԱՎՊԿ	43.12	9.76	33.37	23.61
Մաքս	36.33	9.76	26.57	16.81
	Տարբերություն՝ 6.8		6.8	6.8
	18.7%		25.6%	40.4%

Այսպես, 2011թ. արտաքին առևտրի շրջանառության ԱՎՊԿ գնահատականը, բերված ԱՎՊԿ պաշտոնական կայքում 2013-ի փետրվարից, կազմում էր մոտ \$33.2 մլրդ: Մակայն նույն ցուցանիշի ԱՀ Մաքսային ծառայության 2011թ. տարվա գնահատականը նկատելիորեն ավելի փոքր է՝ \$27.9 մլրդ (տե՛ս Աղյուսակ 3.2): Ընդ որում, այս մոտ \$5.2 մլրդ տարբերությունը (կամ այդ տարի ամբողջ արտահանման մոտ 24%-ը) արտահանումների ԱՎՊԿ և ԱՀ Մաքսային ծառայության գնահատականների տարբերության հետևանք է: Այսպես, ԱՎՊԿ տվյալներով այն 2011-ին կազմել է \$26.6 մլրդ, իսկ ԱՀ Մաքսային ծառայության տվյալներով՝ \$21.3 մլրդ: Նույնն է իրավիճակը և 2010թ. համար (Աղյուսակ 3.2): Սկսած 2013-ից՝ ԱՎՊԿ պաշտոնական կայքը բերում է այս երկու ցուցանիշները միասին՝ մեկ աղյուսակում, ոչ մի կերպ չբացատրելով գնահատականների տարբերության պատճառները¹: Նշվում է միայն, որ պաշտոնական են հանդիսանում ԱՀ Մաքսային ծառայության գնահատականները: Ուստի, Աղյուսակ 3.1-ում և ստորև ամենուր մենք բերում ենք արտաքին առևտրի շրջանառության և արտահանումների հենց այս աղբյուրի պաշտոնական գնահատականները:

Առկա են բոլոր հիմքերը ենթադրելու, որ գնահատականների այս տարբերությունն ածխաջրածիներին (հում նավթ, հարակից և բնական գազ, այլ հարակից նյութեր) արտահանումներում «գորշ շուկայի» առկայության հետևանքն է: Այն կարող է ծառայել իբրև ոլորտում կոռուպցիոն բաղադրիչի հուսալի ստորին գնահատական: Ինչպես հետևում է Աղյուսակ 3.2-ից, 2010-11թթ. ընթացքում գնահատականների այս տարբերությունը կազմել է արտաքին առևտրի շրջանառության մոտ 19%-ը և արտահանումների ընդհանուր ծավալի մոտ 25%-ը՝ տարեկան: Այսպիսով, 2010-11թթ. ածխաջրածիներին ոլորտում կոռուպցիոն բաղադրիչն Ադրբեջանում կազմում էր արտահանումների տարեկան ծավալի առնվազն մեկ քառորդը: Հիմք ընդունելով այս գնահատականը՝ կարելի է հաշվարկել, որ ԱԶԳ «մեծ նավթի» փուլի մեկնարկից հետո (տե՛ս Գ. 2)

¹ http://www.azstat.org/statinfo/consumermarket/en/ext_t.shtml

կոռուպցիոն այս բաղադրիչը 2006-11թթ. համար գումարայինը կազմել է մոտ \$31.0 մլրդ¹: Այն հատկապես շոշափելի էր 2008-ին (մոտ \$12.0 մլրդ), երբ հում նավթի ռեկորդային ծավալների արտահանումը հանգեցրեց այդ տարի ԱՀ արտահանումների ռեկորդային ցուցանիշին՝ \$47.7 մլրդ (տե՛ս Աղյուսակ 3.1):

Ինչպես կտեսնենք ստորև, 2008-ի այս ցուցանիշի համար «պատասխանատու» են Իտալիայի կողմից Ադրբեջանի հում նավթի գնումները: Նկատենք, որ դրանք իրականացվեցին միջազգային մասշտաբով հում նավթի գլոբալ սպեկուլյատիվ գնագոյացման պայմաններում (տե՛ս Գ. 2, բաժին 2.3 և Նկար 2.11): Ստորև կտեսնենք (տե՛ս Գ. 5), որ կուտակված միջոցները՝ ներառյալ դրանց «գորշ» բաղադրիչը, ԱՀ իշխանությունների կողմից օգտագործվեցին 2008-13թթ. ծանր սպառազինությունների զանգվածային գնումների, սեփական ռազմարդյունաբերական համալիրի զարգացման և միջազգային թատերաբեմում ակտիվ *լոբբինգի* համար: Սխալված չենք լինի, եթե պնդենք, որ Իտալիայի, Ադրբեջանի, ՌԴ-ի և մի շարք այլ երկրների իշխանական ու բիզնես-կառույցների փոխադարձ գործնական ու անձնական կապերի հանդեպ հետաքրքրության բարձր աստիճանը՝ նշմարելի *Wikileaks*-յան Խմբաքանակ Ա-ի 2008-09թթ. հաղորդագրություններում, որոշակի առումով պայմանավորված էր վերը նշված գործոններով:

Աղյուսակ 3.3

Արտաքին առևտրի շրջանառությունն ըստ տարածաշրջանների

\$ մլրդ ԱՄՆ	2006	2007	2008	2009	2010	2011
Ամբողջը, այդ թվում.	11.64	11.77	54.93	20.82	27.96	36.33
ԱՊՀ	2.69	2.60	3.42	2.96	4.03	5.48
Մնացած աշխարհ	8.95	9.17	51.51	17.86	23.93	30.85

¹ Ուշագրավ է, որ այս գնահատականն իր մեծությամբ հատկանշականորեն համեմատելի է 1992-2011թթ. ընթացքում ԱՀ ռազմական ողջ ծախսերի՝ \$29.06 մլրդ 2010թ. ԱՄՆ հաստատուն դոլար, կամ մոտ \$31.02 մլրդ ԱՄՆ 2013թ. դոլար շտկված գնահատականի հետ (տե՛ս Գ. 5, բաժին 5.1 և Նկար 5.2):

Դիտարկելով Ադրբեջանի արտաքին առևտրի կառուցվածքն ըստ առանձին երկրների և խմբերի՝ անհրաժեշտ է ընդգծել, որ 2008-2011թթ. ընթացքում նկատելի է ԱՊՀ երկրների հետ Ադրբեջանի արտաքին առևտրի շրջանառության աճի տեմպի գերակշռումը (111%) աշխարհի մնացած երկրների (84%) և ողջ արտաքին առևտրի շրջանառության աճի (86%) համեմատ (տե՛ս Աղյուսակ 3.3): Թեև տոկոսային հարաբերությամբ ԱՊՀ երկրների հետ Ադրբեջանի արտաքին առևտրի շրջանառությունը մնում է համեստ: Այսպես, 2006 և 2007թթ., մինչև հում նավթի ծավալուն արտահանումների սկիզբը, այն կազմել էր ողջ արտաքին առևտրի շրջանառության 23% և 22%-ը համապատասխանաբար: Ռեկորդային՝ 2008-ին այս ցուցանիշը նվազագույնն է՝ 6.2%, իսկ 2010թ. այն կազմել էր 14.4%՝ զգալիորեն զիջելով 2006թ. ցուցանիշին:

Աղյուսակ 3.4

*Արտաքին առևտրի շրջանառությունն ըստ երկրների (\$ հազ.):
Դասակարգված ըստ 2010թ. ցուցանիշների*

#	Երկրներ	2006	2007	2008	2009	2010
1	Իտալիա	2,970,014	1,081,820	19,410,565	3,916,178	7,162,466
2	Ֆրանսիա	403,341	362,645	2,455,505	1,468,326	1,992,659
3	ՌԴ	1,525,844	1,531,305	1,933,258	1,818,499	1,918,561
4	ԱՄՆ	289,842	497,235	6,281,698	2,007,360	1,834,271
5	Իսրայել	711,009	400,688	3,685,879	1,317,205	1,804,191
6	Ուկրաինա	355,916	494,746	739,355	695,787	1,354,198
7	Թուրքիա	773,185	1,680,896	1,433,326	1,014,604	942,336
8	Չինաստան	228,884	288,916	977,802	615,034	926,469
9	Խորվաթիա	5,110	40,877	573,384	194,555	789,071
10	Բնդոնեզիա	2,252	396,304	1,416,679	664,493	788,529
11	Մալայզիա	4,069	16,573	36,770	429,206	780,133
12	Սինգապուր	40,141	17,903	57,609	10,132	684,771
13	Գերմանիա	412,820	491,859	804,137	640,949	616,974


Հավելված 11-ի Աղյուսակ Հ11.1-ում բերվում է այն երկրների ցանկը, որոնց հետ Ադրբեջանի արտաքին առևտրի շրջանառության ծավալները 2010թ. գերազանցել են \$100 մլն ցուցանիշը (Հավելվածում տվյալները բեր-

վում են դասակարգված ըստ 2010թ. տվյալների): Այդպիսիք են 36 երկիր: Այս ցանկում դեղինով ընդգծված են ԱՊՀ անդամ երկրները, առանձնացված է նաև Վրաստանը (2010-ին՝ 14-րդ երկիրը): Ամբողջականության համար աղյուսակի վերջում բերվում են նաև ԱՊՀ մնացած այն երկրների տվյալները, որոնց հետ Ադրբեջանի արտաքին առևտրի շրջանառությունը փոքր է \$100 մլն ցուցանիշից: Աղյուսակ 3.4-ում առանձնացրել ենք Ադրբեջանի 13 խոշորագույն առևտրային գործընկերների ցանկը՝ դասակարգված ըստ 2010թ. տվյալների, որոնց հետ 2010թ. Ադրբեջանի արտաքին առևտրի շրջանառությունը գերազանցել է \$600 մլն-ի շեմը:

Ինչպես տեսնում ենք, անցած տարիներին Ադրբեջանի հիմնական առևտրային գործընկերն Իտալիան է: 2008-ին այս երկրի հետ շրջանառությունը կազմել էր մոտ \$19.4 մլրդ, ինչը մոտ 3 անգամ ավելին է, քան այդ տարի 2-րդ երկրի՝ ԱՄՆ-ի հետ առևտրային շրջանառությունը (\$6.3 մլրդ): Ավելին, այդ տարի Իտալիայի հետ արտաքին առևտրի շրջանառության ծավալը գերազանցում էր ԱՄՆ, Թուրքիայի, Ֆրանսիայի և ՌԴ-ի հետ առևտրի շրջանառության ծավալները միասին վերցված (տե՛ս Նկար 3.2): Ընդհանրապես, Իտալիան Ադրբեջանի թիվ մեկ առևտրային գործընկերն էր նաև դիտարկված ժամանակաշրջանի բոլոր այլ տարիների համար: Բացառություն է կազմում միայն 2007թ., երբ Իտալիան զիջեց Թուրքիային (\$1.68 մլրդ) և ՌԴ-ին (\$1.53 մլրդ) համապատասխանաբար: Հավելենք, որ 2008թ. Ադրբեջանի արտաքին առևտրի շրջանառության արտառոց արժեքը (մոտ \$55.0 մլրդ, տե՛ս Աղյուսակ 3.1) պայմանավորված էր այդ տարի արտահանումների արժեքով (մոտ \$48.0 մլրդ), որն իր հերթին պայմանավորված էր Իտալիայի կողմից հում նավթի ռեկորդային գնումով՝ \$19.4 մլրդ, կամ այդ տարի գումարային արտահանումների 40%-ը (տե՛ս հաջորդ բաժնում):

Բերված աղյուսակի մյուս հատկանշական հանգամանքը Խորվաթիայի, Ինդոնեզիայի, Մալայզիայի և Սինգապուրի հետ Ադրբեջանի արտաքին առևտրի շրջանառության շեշտակի աճն է: 2006թ. այս երկրների հետ Ադրբեջանի առևտրի շրջանառության ծավալները չնչին էին՝ մի քանի մլն ԱՄՆ դոլար (Սինգապուրի հետ՝ մոտ \$40 մլն): Իսկ 2010թ. այս ցու-

ցանիշը Խորվաթիայի, Ինդոնեզիայի և Մալայզիայի համար կազմում էր արդեն մոտ \$800 մլն (Մինգապուրի հետ՝ մոտ \$700 մլն): Այսինքն՝ աճ մոտ 150-160 անգամ: Այս հանգամանքը մահմեդական և «չմիացած երկրների» հետ Ադրբեջանի քաղաքական մերձեցման ռազմավարության տնտեսական արտացոլանքն է: Հաշվի առնելով նաև Չինաստանի հետ առևտրի զգալի աճը՝ այն վկայում է Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի նկատմամբ Ադրբեջանի ուշադրության ավելացման մասին:



Վերը բերված աղյուսակում երկրների կարգային տեղերը համապատասխանում էին 2010-ին արձանագրված Ադրբեջանի հետ առևտրային շրջանառության ծավալներին: Ուստի, դրանց հաջորդականությունը (կարգային տեղը Աղյուսակ 3.4-ում) վավեր է միայն մեկ՝ 2010թ. համար: Որպեսզի հստակ տեսնենք անցած 6 տարիների ընթացքում Ադրբեջանի առևտրային գործընկեր պետությունները՝ հիմնվելով ԱՎՊԿ կայքի տվյալների գրադարանի մեր մշակումների վրա, Աղյուսակ 3.5-ում 2006-11թթ. ժամանակահատվածի համար բերվում է երկրների կարգային տեղերի աղյուսակն ըստ Ադրբեջանի հետ արտաքին առևտրի շրջանառության ծավալների: Աղյուսակում ներառված են առաջին 20 կարգային տեղերը:

Աղյուսակը հստակ ցույց է տալիս Մեծ Բրիտանիայի կարգային տեղի նահանջը: Ադրբեջանի հետ արտաքին առևտրի շրջանառության ընդհանուր ծավալի մեջ 2006-ին այն զբաղեցնում էր 5-րդ տեղը, 2007-ին՝ 8-րդ, 2008-ին՝ 11-րդ, 2009-ին՝ 13-րդ, և 2010-ին՝ արդեն վերջին՝ 20-րդ տեղը: Տեսանելի նահանջ է գրանցում նաև Գերմանիան՝ 2006թ. 6-րդ տեղից մինչև 2010-ի 13-րդ տեղը: Հակառակը, ԱԶԳ հիմնական նավթի փուլի մեկնարկի հետ մեկտեղ, նկատելի է ԱՄՆ դիրքի առաջխաղացումը: 2006-ին այն Ադրբեջանի առևտրային 12-րդ գործընկերն էր, իսկ հետագա տարիներին մշտապես տեղ է զբաղեցնում արդեն առաջին հնգյակում: Հստակ նշմարելի է նաև Ֆրանսիայի դիրքային առաջխաղացումը 2007-ի 12-րդ տեղից մինչև 2-րդ տեղը՝ 2010 և 2011թթ.: 2011թ. առաջին քսանյակի նորեկ երկրներն են Շվեյցարիան, Բուլղարիան և Վիրջինյան կղզիները (ԱՄՆ)՝ ամենայն հավանականությամբ որպես օֆշորային գոտի: Այս շարքում ուշագրավ է Խորվաթիայի առկայությունը, որը 2009-ին նույնիսկ դարձավ Ադրբեջանի 9-րդ առևտրային գործընկեր երկիրը:

Դառնալով Ասիական տարածաշրջանին՝ փաստենք Չինաստանի դիրքային առաջխաղացումը՝ 2006-07թթ. 14-15-րդ տեղից մինչև 8-րդ տեղը՝ 2010-ին: Նույնն անհրաժեշտ է ասել և առավել թվով մահմեդական բնակչություն ունեցող Ինդոնեզիայի համար, որն առաջին 20-յակում առաջին անգամ հայտնվում է 2007-ին (11-րդ տեղը), հաջորդ տարիներին կայունորեն զբաղեցնում արդեն 8-9-րդ տեղը: Համանման է և Մալայզիայի կարգային տեղի փոփոխությունը. այն առաջին քսանյակում հայտնվում է 2009-ին (15-րդ տեղը), իսկ հաջորդ տարիներին զբաղեցնում է 11-րդ տեղը: Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի երկրորդ հսկան՝ Հնդկաստանը, բացի ռեկորդային 2008-ից, Ադրբեջանի 16-18-րդ առևտրային գործընկեր երկիրն է 2009-11թթ. ընթացքում:

Դիտարկված 6 տարի ժամանակաշրջանում Ադրբեջանի առևտրային հիմնական գործընկերների հնգյակում մշտապես հայտնվում է Իտալիան: Մեկական բացառությամբ՝ ՌԴ-ն և ԱՄՆ-ը, երկուական բացառու-

թյամբ՝ Ֆրանսիան և Իսրայելը, 3 անգամ՝ Թուրքիան: Ահա այն երկրները, որոնց հետ առևտրից գոյացած եկամուտները կազմում են Ադրբեջանի տնտեսական համակարգի ծավալային աճի հիմքը, և, ստիպված ենք ավելացնել, կամա թե ակամա սնում են ադրբեջանական միլիտարիզմը, սաստկացնում մեր տարածաշրջանում սպառազինության մրցավազքը և խորացնում այստեղ ռազմավարական անկայունությունը (տե՛ս Գ. 5):

Ավարտելով Ադրբեջանի արտաքին առևտրի շրջանառության ծավալների դիտարկումը՝ Նկար 3.3-ում պատկերել ենք անցած 5 տարիների համար մեր տարածաշրջանի երկրների հետ Ադրբեջանի արտաքին առևտրի շրջանառության ծավալների դինամիկան: Նկարից հետևում է, որ անցած 5 տարիների ընթացքում տեսանելիորեն նվազել է Թուրքիայի հետ Ադրբեջանի առևտրաշրջանառությունը՝ 2007-ի. \$1.7 մլրդ-ից մինչև 2010թ. \$0.9 մլրդ: 2007թ. Թուրքիան Ադրբեջանի թիվ մեկ առևտրային գործընկերն էր, իսկ 2010-ին՝ արդեն 7-րդը: Այս հանգամանքը համահունչ է տարածաշրջանում Ադրբեջանի և Թուրքիայի միջև որոշակի հակասությունների սրմանը (հայ-թուրքական մերձեցման գործընթաց, մահմեդականացման գործոն, Իսրայելի հետ Թուրքիայի հարաբերությունների սրում):

Նկատելի է նաև Իրանի հետ շրջանառության ծավալների նվազումը: Ինչպես հետևում է Ադրբեջանի 3.5-ից, Իրանը 2006-11թթ. ընթացքում Ադրբեջանի առևտրային գործընկերների քսանյակում հայտնվել է միայն 3 անգամ, վերջինը՝ 2008-ին, զբաղեցնելով 20-րդ տեղը: Կայուն է Վրաստանի հետ շրջանառության ծավալը՝ մոտ \$500 մլն տիրույթում: Առևտրաշրջանառությունը ՌԴ-ի հետ տեսանելիորեն աճել է 2008-ից սկսած, երբ նախորդ տարվա համեմատ (մոտ \$1.5 մլրդ) արձանագրվեց 30% աճ՝ այդ տարի կազմելով մոտ \$1.9 մլրդ: Այս ցուցանիշը պահպանվում է նաև հաջորդ 3 տարիներին: Սա, անշուշտ, բացատրվում է 2008թ. վրացական ագրեսիային ՌԴ վճռական պատասխանից և հատկապես ՌԴ-ի կողմից Աբխազիայի ու Հրվ. Օսիայի անկախության ճանաչումից Ադրբեջանի ստացած տպավորություններով և մի շարք այլ հանգամանքներով:


Աղյուսակ 3.5

Աղբրեջանի հետ 2006-11թթ. արտաքին առևտրի շրջանառությամբ երկրների առաջին 20-յակը

	2006	2007	2008	2009	2010	2011
1	Իտալիա	Թուրքիա	Իտալիա	Իտալիա	Իտալիա	Իտալիա
2	ՌԴ	ՌԴ	ԱՄՆ	ԱՄՆ	Ֆրանսիա	Ֆրանսիա
3	Թուրքիա	Իտալիա	Բարայել	ՌԴ	ՌԴ	ՌԴ
4	Բարայել	Իրան	Հնդկաստան	Ֆրանսիա	ԱՄՆ	ԱՄՆ
5	ՄԲ	ԱՄՆ	Ֆրանսիա	Բարայել	Բարայել	Թուրքիա
6	Գերմանիա	Ուկրաինա	ՌԴ	Թուրքիա	Ուկրաինա	Ուկրաինա
7	Ֆրանսիա	Գերմանիա	Բալանիա	Ուկրաինա	Թուրքիա	Գերմանիա
8	Իրան	ՄԲ	Նիդեռլանդներ	Թայվան	Չինաստան	Ինդոնեզիա
9	Թուրքմենստան	Վրաստան	Թուրքիա	Ինդոնեզիա	Խորվաթիա	Բարայել
10	Ուկրաինա	Բարայել	Ինդոնեզիա	Գերմանիա	Ինդոնեզիա	Բելառուս
11	Վրաստան	Ինդոնեզիա	ՄԲ	Չինաստան	Մալայզիա	Մալայզիա
12	ԱՄՆ	Ֆրանսիա	Չինաստան	Կանադա	Սինգապուր	Չինաստան
13	Ղազախստան	Ղազախստան	Հր. Կորեա	ՄԲ	Գերմանիա	Հր. Կորեա
14	Չինաստան	Ճապոնիա	Գերմանիա	Վրաստան	Վրաստան	Վրաստան
15	Ճապոնիա	Չինաստան	Ուկրաինա	Մալայզիա	Հր. Կորեա	ՄԲ
16	Հունաստան	Հնդկաստան	Կանադա	Բալանիա	Ղազախստան	Վիրջ. կղզ.
17	Ռումինիա	Հյուս. Կորեա	Խորվաթիա	Հնդկաստան	Հնդկաստան	Բուլղարիա
18	Հյուս. Կորեա	Բրազիլիա	Վրաստան	Հյուս. Կորեա	Կանադա	Հնդկաստան
19	Նիդեռլանդներ	Հունաստան	Ղազախստան	Ղազախստան	Թայվան	Շվեյցարիա
20	Բրազիլիա	Մալթա	Իրան	Խորվաթիա	ՄԲ	Խորվաթիա


Ավարտելով ԱՀ արտաքին առևտրային շրջանառության հակիրճ քննությունը՝ անդրադառնանք օֆշորային գոտիներին: Հիմնվելով ԱՎՊԿ տվյալների վրա՝ Հավելված 11-ի Աղյուսակ Հ11.2-ի վերին հատվածում բերվում են օֆշորային գոտիների հետ Աղբրեջանի առևտրային շրջանառության տվյալներ (\$ մլն) 2005-11թթ. համար: Դրանք 7-ն են՝ Մալթա, Վիրջինյան կղզիներ (ԱՄՆ)¹, Կիպրոս, «այլ չնշված երկրներ» խումբը, Լյուքսեմբուրգ, Բահամներ և Գիբրալթար: Աղյուսակի վերջին սյունակում բերվում է նշված երկրների հետ գումարային շրջանառությունը 2005-11թթ. համար: Առևտրային այս շրջանառության գումարային ծավալը կազմել է մոտ \$2.0 մլրդ, ինչը դիտարկված ժամանակահատվածում կազմում է աշխարհի երկրների հետ (բացի ԱՊՀ երկրներից) Աղբրեջանի առևտրային ընդհանուր շրջանառության 1.3%-ը: Իր ծավալներով այստեղ առաջին տեղում է Մալթան՝ \$768 մլն, որին հաջորդում է Վիրջինյան կղզիները (ԱՄՆ)՝ \$610 մլն:

¹ Բրիտանական Վիրջինյան կղզիների հետ Աղբրեջանի առևտրային շրջանառությունը, համաձայն ԱՎՊԿ տվյալների, չնչին է:



Վեր հանելու համար այս երկրների հետ Ադրբեջանի առևտրային շրջանառության բնույթը՝ Ադյուսակ Հ11.2-ի ստորին հատվածում բերվում են այս երկրներ Ադրբեջանից արտահանումների գումարային ծավալները 1992-2011թթ. համար: Վերջին սյունակում բերվում են նշված երկրներ Ադրբեջանից արտահանումների գումարային ծավալները (1992-2011թթ.): Ինչպես տեսնում ենք, դիտարկված ժամանակահատվածում դրանք կազմել են մոտ \$2.1 մլրդ, ինչը կազմում է աշխարհի երկրների հետ (բացի ԱՊՀ երկրներից) Ադրբեջանի արտահանումների 1.6%-ը: Այստեղ Մալթան¹ նույնպես գրավում է առաջին տեղը՝ \$861 մլն, որին նորից հաջորդում է Վիրջինյան կղզիները (ԱՄՆ)՝ \$610 մլն: Համադրելով Ադյուսակ Հ11.2-ի տվյալները՝ կարելի է եզրակացնել, որ նշված երկրների հետ առևտրային շրջանառությունը գրեթե ամբողջովին բաղկացած է դեպի օֆշորներ արտահանումներից:

¹ Համաձայն ԵՄ էներգետիկ պորտալի (www.eu.eu)՝ Մալթան 100%-ով ներկրում է հում նավթի իր պահանջարկը հիմնականում Բուրիայից (ավելի վաղ՝ Լիբիայից): Ադրբեջանից հում նավթի կամ այլ ապրանքների մատակարարումները Մալթային փաստված չեն: Ուստի, Ադրբեջանից Մալթա արտահանումներն անհրաժեշտ է դիտարկել որպես օֆշորային արտահանումներ՝ դիտարկելով դրանք ամենայն հավանականությամբ Բուրիայի հետ Ադրբեջանի առևտրային շրջանառության ծիրում:



Նկար 3.4-ում 1992-2011 թթ. համար պատկերված են նշված 7 գոտիների Ադրբեջանից տարեկան արտահանումների դրամական ծավալները՝ որպես % ընդհանուր արտահանումներից: Ինչպես տեսնում ենք, 1992-ին դրանք կազմել են ընդհանուր արտահանումների մոտ 9%-ը (մոտ \$73 մլն՝ դեպի Կիպրոս), որից հետո սկսում են նվազել մինչև ԱԶԳ յուրացման «վաղ նավթի» փուլի մեկնարկը: 1999-2006 թթ. դրանք տատանվում էին 2%-ի շրջակայքում: Արտահանումներն այս գոտիներ կտրուկ աճում են 2007-ին՝ կազմելով այդ տարի ընդհանուր արտահանումների մոտ 5%-ը. 2008-ին, ամենայն հավանականությամբ ֆինանսական ճգնաժամի հետևանքով, դրանք նվազում են և հետո կայունորեն աճում 2009-11 թթ. ընթացքում՝ 2011-ին կազմելով մոտ 4% (\$807 մլն), նախորդ տարվա համեմատ (մոտ \$237 մլն) աճելով գրեթե 3.5 անգամ (տե՛ս Հավելված 11, Աղյուսակ Հ11.2):

3.2. Արտահանում

Համաձայն ԱՎՊԿ տվյալների¹ 2010թ. Ադրբեջանից արտահանումների գումարային ծավալը կազմել էր \$20.5 մլրդ (ընթացիկ գներով): Անցած 5 տարիների ընթացքում այս առումով ռեկորդային էր 2008թ., երբ արտահանումների գումարային ծավալը կազմել էր \$47.13 մլրդ: Արտահանումներում առյուծի բաժինը պատկանում է ածխաջրածիններին, առաջին հերթին՝ հում նավթին:

Հենվելով ԱՎՊԿ տվյալների գրադարանի վրա՝ Աղյուսակ 3.6-ում բերում ենք 2006-10թթ. համար Ադրբեջանից արտահանվող այն հիմնական ապրանքների ցանկը, որոնց համար գումարային ծավալները գերազանցում են \$100 մլն ցուցանիշը: Տվյալները դասակարգված են ըստ 2010թ. ցուցանիշների: Աղյուսակի վերին տողում բերվում են նաև արտահանումների գումարային ծավալները (\$ մլն): Ինչպես տեսնում ենք աղյուսակից, ոչ ածխաջրածնային ապրանքներից զատ, արտահանումներում տեղ են գտել միայն գյուղատնտեսական բնույթի երկու ապրանք՝ շաքար (մոտ \$146 մլն 2010-ին) և միրգ (մոտ \$112 մլն 2010-ին): 2011թ. համար այս պատկերը մնացել է անփոփոխ: Այսպիսով, 2008-11թթ. ժամանակահատվածի համար ոչ ածխաջրածնային ապրանքների բաժինն ընդհանուր արտահանումներում չի գերազանցել 2.0% ցուցանիշը:

Հավելված 12-ում բերում ենք 2006-10թթ. ԱՀ-ից արտահանումների մասին տվյալները, ուր Աղյուսակ Հ12.1-ում բերվում է արտահանվող ապրանքների տեսականին՝ բնեղեն միավորներով և գումարային արտահայտությամբ (\$ մլն, ընթացիկ): Հաջորդ՝ Աղյուսակ Հ12.2-ում բերվում է արտահանումների կառուցվածքն ըստ արտահանվող ապրանքների Առևտրի միջազգային ստանդարտի (*SITC*)² դասակարգման:

Դասակարգման առանձնահատկությունները հանգեցնում են նրան, որ նշված երկու աղյուսակներում Ադրբեջանից արտահանումների գումարային ծավալները մի փոքր տարբերվում են միմյանցից:


¹ http://www.azstat.org/statinfo/consumermarket/en/ext_t.shtml

² *Standard International Trade Classification.*

Աղյուսակ 3.6

Արտահանվող հիմնական ապրանքները (\$ մլն): Պաշտոնական տվյալներ (դասակարգված ըստ 2010թ. ցուցանիշների, \$100 մլն և ավելին)

#	Ապրանքատեսակ	2006	2007	2008	2009	2010
Գումարային արտահանում, այդ թվում		6 076.1	5 710.5	47 128.6	14 126.0	20 552.0
1	Հում նավթ	3 848.5	3 214.2	44 170.9	11 989.7	18 489.6
2	Դիզվառելիք	867.7	865.5	1 249.3	706.0	944.1
3	Շաքար	31.1	149.6	83.4	102.1	145.9
4	Շարժիչային բենզին	198.1	223.7	295.2	130.4	133.8
5	Թարմ միրգ	98.4	124.3	151.6	142.0	112.3
6	Կերոսին	123.3	200.5	198.6	599.2	105.7
Հիմնական ոչածխաջրածինների բաժինն արտահանումների առաջին վեցյակում		2.6%	6.1%	0.5%	1.8%	1.3%



Հենվելով այս տվյալների վրա՝ Նկար 3.5-ում պատկերել ենք 2006-10թթ. Ադրբեջանից ընդհանուր արտահանումներում հում նավթի և նավթամթերքների մասնաբաժինը: Ինչպես տեսնում ենք, մինչ ԱԶԳ «հիմնական նավթի» փուլի մեկնարկը՝ այն կազմել է մոտ 85%: Հետագա տարիներին այս մասնաբաժինն աճել է՝ հասնելով մոտ 95%-ի: Այս ցուցանիշը պահ-

պանվել է նաև 2011 և 2012թթ. համար: Ռեկորդային՝ 2008-ին հում նավթի և նավթամթերքների մասնաբաժինն ընդհանուր արտահանումներում կազմել է 98%:

Նկատենք, որ ԱՎՊԿ տվյալների գրադարանը չի ֆիքսում հարակից և բնական գազի արտահանումների ծավալները (Վրաստան և Թուրքիա ԱԶԳ հարակից գազի արտահանումների մասին տե՛ս Գ.2): Հաշվի առնելով այն հանգամանքը, որ արտահանումների համար վերցված ԱԶԳ հարակից գազի ծավալները չէին ֆիքսվում նաև *BP/AIOC* կոնսորցիումի սովորական պրոցեդուրաների միջոցով (հիշեցնենք, որ կոնսորցիումը *SOCAR* պետական ընկերության և ընդհանրապես՝ ԱՀ իշխանությունների առջև չունեի ԱԶԳ հարակից գազի մատակարարումների ծավալները ֆիքսող որևէ իրավական պարտավորություն¹, տե՛ս Գ. 2), առկա են բոլոր հիմքերը ենթադրելու, որ գազի այս արտահանումները սպասարկում էին թե՛ ԱՀ իշխանական օղակների աշխարհաքաղաքական ամբիցիաները, թե՛ դրանց գրպանները:

Հավելված 12-ում բերում ենք նաև 2006-10թթ. ԱՀ-ից աշխարհի տարբեր երկրներ արտահանումների ծավալների մասին տվյալները: Այսպես, Ադրբեյջանի 212.3-ում բերվում են, բացի ԱՊՀ երկրներից, աշխարհի այլ երկրներ Ադրբեյջանից արտահանումների ծավալները (\$ հազ.): Այս աղյուսակում երկրները դասակարգված են ըստ 2010թ. ցուցանիշների: Ադրբեյջանի 3.7-ում բերվում են Ադրբեյջանից ԱՊՀ երկրներ արտահանումների ծավալները (\$ մլն):

Ինչպես հետևում է բերված տվյալներից, անցած 5 տարիների ընթացքում նկատելի է ՌԴ և հատկապես Ուկրաինա արտահանումների ծավալների շեշտակի աճը համապատասխանաբար 2007թ. և 2008թ. սկսած: Իտալիան Ադրբեյջանից արտահանումների (հում նավթ) բացարձակ առաջատարն է: 2006թ. արտահանումներն Իտալիա կազմել էին մոտ \$3.0 մլրդ կամ այդ տարի Ադրբեյջանից աշխարհի այլ երկրներ (բացի ԱՊՀ երկրներից) արտահանումների մոտ 50.0%-ը: 2011-ին այս ցու-

¹ Այն նախատեսվում էր ԱԶԳ նավթային դաշտեր հետմղման համար (տե՛ս նաև Հավելված 4-ում):

ցանիշները կազմում էին \$9.34 մլրդ և 40% համապատասխանաբար: 2008-ին, Ադրբեջանից հում նավթի արտահանումների ռեկորդային տարում, դրանք կազմել էին \$19.22 մլրդ և 41.2% համապատասխանաբար (տե՛ս Հավելված 12-ի Նկար Հ12.1-ում):

Աղյուսակ 3.7

Արտահանման գումարային ծավալներն ԱՊՀ երկրներ, \$ մլն ԱՄՆ (դասակարգված ըստ 2010թ. ցուցանիշների)

Երկրներ	2006	2007	2008	2009	2010
Ամբողջը, այդ թվում	6372.2	6058.2	47756.0	14701.4	21360.2
Ողջ ԱՊՀ, որից	644.4	1102.5	1128.4	1137.4	1983.9
Ուկրաինա	38.4	29.2	172.1	184.0	888.6
ՌԴ	344.3	527.1	582.9	746.4	773.6
Թուրքմենստան	9.5	13.6	21.0	37.5	200.7
Ղազախստան	105.7	127.6	290.2	142.2	44.6
Ղրղզստան	7.0	2.7	3.6	4.6	40.5
Ուզբեկստան	6.9	4.5	7.5	5.8	20.3
Տաջիկստան	130.9	51.6	45.6	8.1	8.2
Բելառուս	1.5	2.3	5.2	5.2	7.2
Մոլդովա	0.3	0.1	0.3	3.7	0.2


3.3. Ներկրում

Համաձայն ԱՎՊԿ տվյալների, անցած 5 տարիների ընթացքում Ադրբեջան ներկրումների գումարային ծավալներն ընդհանուր առմամբ հաստատուն են և տատանվում էին \$5.5-6.5 մլրդ-ի սահմաններում: Ադրբեջան ներկրումների ամբողջական աղյուսակը բերվում է Հավելված 13-ի Աղյուսակ Հ13.1-ում, ուր ներկայացված են թե՛ ներկրվող ապրանքների ծավալները՝ բնեղեն միավորներով (հատ, տոննա և այլն), թե՛ տվյալ ապրանքատեսակի ներկրումների գումարային ծավալը (\$ հազ.):

Ստորև, Աղյուսակ 3.8-ում առանձնացված է ներկրված ապրանքների ցանկի առաջին տասնյակը՝ դասակարգված դրանց 2010-ին արձանագրված գումարային ծավալով.

Ներկրվող հիմնական ապրանքները (\$ հազ.)՝
 դասակարգված ըստ 2010թ. ցուցանիշների

Ապրանքատեսակ		2006	2007	2008	2009	2010
	Ամբողջը \$հազ.	5,266,744	5,713,525	7,169,981	6,123,111	6,600,612
1	Մարդատար ավտոմեքենաներ	433,305	456,451	648,975	455,911	451,592
2	Ցորեն	143,984	296,950	368,379	194,779	285,385
3	Ծխախոտի գլանակ	89,017	167,451	193,214	217,692	221,290
4	Մետաղե կոնստրուկցիա	59,991	48,547	62,605	66,332	196,938
5	Շաքար	72,987	105,634	92,709	105,708	180,135
6	Դեղամիջոցներ	48,287	91,271	108,075	112,229	120,691
7	Բեռնատարներ	78,548	143,816	232,651	101,514	106,873
8	Երկաթե ձողեր և ամրան	36,249	43,129	70,233	75,905	91,484
9	Երկայնական փայտյա հեծաններ	25,978	37,311	38,543	45,126	91,417
10	Բուսայուղ	35,065	43,939	66,138	65,546	83,761



Ինչպես հետևում է բերված տվյալներից, ներկրումների մեջ ամենազգալի մասնաբաժինը պատկանում է ավտոմեքենաներին: Ընդ որում, հաշվի առնելով Հավելված 13-ի ներկրումների ամբողջական աղյուսակի տվյալները՝ նկատելի է ԱՀ ներկրված ավտոմեքենաների ծավալների հաստատուն կրճատման միտումը՝ մեկ ներկրված ավտոմեքենայի տեսակարար գնի աճին զուգահեռ:

Այսպես, 2008թ. ԱՀ է ներկրվել մոտ 89 հազ. մարդատար ավտոմեքենա՝ մոտ \$649 մլն ընդհանուր արժողությամբ: Իսկ 2010-ին՝ ընդամենը 52 հազ. հատ՝ մոտ \$452 մլն ընդհանուր արժողությամբ: Նկար 3.6-ը պատկերում է նշված միտումը 2006-10թթ. համար: Ինչպես տեսնում ենք, ԱՀ ներկրված մեկ ավտոմեքենայի արժեքը 2006-ի \$6186/մեքենա ցուցանիշից աճել է մինչև \$8714/մեքենա 2010-ին: Բերված տվյալները հստակ ցույց են տալիս Ադրբեջանի հասարակության խորացող սոցիալական բևեռացումը՝ նկատելի հատկապես ԱԶԳ յուրացման մեկնարկից սկսած:

Աղյուսակ 3.9

*ԱՀ ներկրումների գումարային ծավալները (\$ մլն)՝
դասակարգված ըստ 2010թ. ցուցանիշների*

Երկրներ	2006	2007	2008	2009	2010
ՌԴ	1182	1004	1350	1072	1145
Թուրքիա	385	625	807	907	771
Գերմանիա	404	472	599	554	607
Չինաստան	222	279	479	485	588
Ուկրաինա	318	466	567	512	466
ՄԲ	454	411	386	275	303
Ղազախստան	127	222	200	64	294
ԱՄՆ	198	269	267	261	206
ԱՄԲՈՂՋԸ, այդ թվում	5267	5714	7170	6123	6601
ԱՊՀ երկրներ	2,49	1903	2289	1827	2051
Այլ երկրներ	3218	3811	4881	4296	4550

Աղյուսակ 3.9-ում ամբողջացնում ենք 2006-10թթ. ԱՀ ներկրումներ իրականացնող առաջին 8 երկրների ցանկը՝ կառուցված ըստ ներկրում-

ների գումարային ծավալների (\$ մլն): Ցանկը դասակարգված է ըստ 2010թ. ցուցանիշների (երկրների ամբողջական ցանկը, բացի ԱՊՀ երկրներից, բերվում է Հավելված 13-ի Աղյուսակ Հ13.2-ում): Աղյուսակ 3.9-ի վերջին երեք տողերում բերվում են նաև ամբողջ ներկրումների տարեկան ծավալները, այդ թվում ԱՊՀ երկրներից և մնացած երկրներից առանձին-առանձին:

Ինչպես տեսնում ենք աղյուսակից, ներկրումների գումարային ծավալներով առաջինը ՌԴ-ն է, որից ներկրումները ԱՀ 2010թ. կազմել են \$1.145 մլրդ: Թուրքիան վերջին 4 տարիներին կայունորեն 2-րդ տեղում է: 2009-ին ներկրումները Թուրքիայից կազմել էին մոտ \$900 մլն: Նկատելի է Չինաստանից ներկրումների գումարային ծավալների ավելացումը: Դիտարկված ժամանակահատվածում դրանք 2006-ի \$222 մլն ցուցանիշից հասել են մոտ \$0.6 մլրդ-ի՝ 2010-ին:

Աղյուսակ 3.10

Ներկրումների գումարային ծավալներն ԱՊՀ երկրներից (\$ հազ.), դասակարգված ըստ 2010թ. ցուցանիշների

Երկրներ	2006	2007	2008	2009	2010
Ողջ ԱՊՀ, որից	2049.0	1902.6	2289.4	1827.1	2051.1
ՌԴ	1181.6	1004.2	1350.4	1072.1	1145.0
Ուկրաինա	317.5	465.6	567.2	511.7	465.6
Ղազախստան	127.3	222.3	200.1	63.6	293.6
Բելառուս	20.7	77.0	89.8	136.8	112.6
Թուրքմենստան	369.0	40.3	51.6	26.2	13.9
Ուզբեկստան	27.5	19.1	22.4	12.4	12.3
Մոլդովա	4.7	9.8	6.1	2.9	5.9
Տաջիկստան	0.3	0.5	0.5	0.7	1.3
Ղրղզստան	0.5	0.9	1.3	0.8	1.0

Աղյուսակ 3.10-ում ամբողջացնում ենք 2006-10թթ. ԱՀ ներկրումների գումարային ծավալները ԱՊՀ երկրներից: Դիտարկված ժամանակահատվածում բացարձակ առաջատարի դիրքում են ներկրումները ՌԴ-

ից, որոնք ներկրումների ընդհանուր ծավալի մեջ 2006-10թթ. չեն իջել 50% ցուցանիշից: Համաձայն ԱՎՊԿ տվյալների, դիտարկված ժամանակահատվածում դրանք ընդհանուր առմամբ հաստատուն էին՝ մոտ \$1.0 մլրդ-ի սահմաններում: Սակայն, ինչպես կտեսնենք ստորև՝ Գ. 5-ում, այս ժամանակահատվածում ՌԴ-ից Ադրբեջանին է մատակարարվել էական ծավալների ռազմական տեխնիկա: Հետևաբար, անհրաժեշտ է եզրակացնել, որ ոչ ԱՎՊԿ, ոչ ԱՀ Մաքսային ծառայության պաշտոնական հրապարակումներում այս ներկրումները հաշվի չեն առնվում: Նույնը վերաբերում է նաև Իսրայելից, Թուրքիայից, Ուկրաինայից և Բելառուսից ռազմական տեխնիկայի ներկրումներին:

Ադյուսակ 3.10-ում 2006-ին Թուրքմենստանից ռեկորդային՝ \$369.0 մլն արժողությամբ ներկրումները պայմանավորված էին Ադրբեջան անվտանգության ծախսերի մատակարարումներով: Նույնն է և Ղազախստանից ներկրումների ծավալների պատճառը 2007 և 2010թթ. համար: Հիշեցնենք, որ այս ներկրումներն անհրաժեշտ էին Ադրբեջանին՝ գոնե մասնակիորեն բարձրացնելու համար ԲԹԶ նավթամուղի շահագործման ցուցանիշները (այդ մասին տե՛ս Գ. 2):

3.4. Ընդհանուր մակրոտնտեսական ցուցանիշներ

Սույն բաժնում բերվում են Ադրբեջանի որոշ մակրոտնտեսական և այլ ցուցանիշները՝ հիմնված Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) էլեկտրոնային գրադարանի (ներբեռնված է 2011թ. սեպտեմբերի վերջին) [1], ինչպես նաև ԱՄՆ ԿՀՎ տեղեկատուների [2] տվյալների վրա: Տարածաշրջանային համատեքստում համարժեք ընկալման համար շատ դեպքերում դրանք ներկայացվում են Հայաստանի և Վրաստանի համապատասխան ցուցանիշների հետ միասին:

Տվյալների այս երկու քաջ հայտնի և հեղինակավոր աղբյուրներն ընտրված են ոչ պատահական: Բանն այն է, որ դրանցում Ադրբեջանի մասին բերվող միևնույն հիմնարար նշանակության ցուցանիշները (ՀՆԱ, ՀՆԱ տարեկան աճ, տեսակարար ՀՆԱ, սղաճ, պետբյուջեի պրոֆի-

ցիտ/դեֆիցիտ, բնակչության թիվ և այլն) զգալիորեն տարբերվում են միմյանցից: Որոշ դեպքերում դրանք պարզապես հակադիր են, ինչպես ԱՀ պետական բյուջեի պարագայում¹: Գնահատականների այս տարբերությունների հանգամանալի քննությունը դուրս է սույն աշխատության շրջանակներից: Այստեղ սահմանափակվենք միայն նշելով, որ ԿՀՎ գնահատականներն ընդհանուր առմամբ ավելի ինքնուրույն են և հակված չեն ամբողջությամբ հետևելու ադրբեջանական պաշտոնական տվյալներին, որոնք շատ դեպքերում ենթարկված են զանգվածային զեղծարարությունների [3, 4]:



Հակառակը, ԱՄՀ տվյալների գրադարանի տվյալներն ու հրապարակումները շատ դեպքերում պարզապես կրկնում են պաշտոնական Բաքվի ոչ այնքան հավաստի տվյալները, ինչպես, օրինակ, սղաձի, սպառողական ապրանքների գնային ինդեքսի և այլ ցուցանիշների դեպքում: Ի դեպ, միանգամայն այլ են ԱՄՀ փորձագետների մասնավոր գնահատականները՝ արտահայտված առանձին սեմինարների, խորհրդակցությունների և զրույցների ժամանակ: Դրանք, սակայն, ոչ մի արտահայտություն չեն գտել ԱՄՀ պաշտոնական հրապարակումներում և լայն հասարակությանը հասանելի դարձան միայն *Wikileaks*-յան հաղորդագրությունների հրապարակումից հետո (տե՛ս ստորև):

Արժույթի միջազգային հիմնադրամ. Ստորև, բերվում են ԱՄՀ տվյալների գրադարանի [1] տվյալներն Ադրբեջանի մակրոտնտեսական որոշ ցուցանիշների վերաբերյալ: 2012-16թթ. տվյալները հանդիսանում են ԱՄՀ կանխատեսումներ:

Նկար 3.7ա-ում պատկերել ենք 1992-2016թթ. ժամանակահատվածի համար Ադրբեջանի ՀՆԱ արժեքը ԱՄՆ դոլարով, ընթացիկ գներով: Բերվող գնահատումների հիմքում ընկած են ազգային արժույթով արտահայտված ՀՆԱ-ն և ԱՄՆ դոլարի նկատմամբ ազգային արժույթի միջին տարեկան շուկայական փոխարժեքը: 2011-ին Ադրբեջանի ՀՆԱ-ն կազմել էր \$69 մլրդ, Հայաստանինը՝ մոտ \$10 մլրդ: Համաձայն ԱՄՀ


¹ Այս մասին տե՛ս ստորև և հաջորդ գլխում:

կանխատեսումների, 2016-ին Ադրբեջանի ՀՆԱ-ն կկազմի \$115 մլրդ, Հայաստանինը՝ \$13 մլրդ համապատասխանաբար¹:



Աղբյուրը՝ [1] և սեփական հաշվարկներ

¹ Իրականում Ադրբեջանի ՀՆԱ բերված գնահատականները խտորված են: Նկար 3.7ա-ում բերվում են նաև Ադրբեջանի՝ ըստ իրական տղաճի շտկված ՀՆԱ արժեքները (տե՛ս ստորև):



Աղբյուրը՝ [1]

ԱՄՀ այս տվյալներին անհրաժեշտ է մոտենալ ամենայն զգուշավորությամբ: Իրոք, համադրության համար Նկար 3.7բ-ում բերում ենք նույն աղբյուրի տվյալները՝ ըստ գնողունակության շտկված (*PPP*)¹ ՀՆԱ-ների համար (մլրդ միջազգային \$): Ինչպես տեսնում ենք, Ադրբեջանի համար նախկին նկարում հստակ տեսանելի անկումը՝ պայմանավորված 2008-09թթ. ֆինանսատնտեսական ճգնաժամով, այս նկարում հարթված է: Չխորանալով ԱՄՀ հաշվարկային մեթոդաբանական առանձնահատկությունների մեջ, նշենք միայն, որ Նկար 3.7բ-ի «հարթված» պատկերի համար պատասխանատու են երկու հաշվարկային գործակիցներ՝ ՀՆԱ դեֆլյատորը² և կիրառված *PPP* փոխարկման գործակիցը (*Implied PPP conversion rate*): ԱՄՀ տվյալների գրադարանի կողմից այս երկու գործակիցների կիրառված մեծությունները պատկերված են Նկար 3.8ա և 3.8բ-ում համապատասխանաբար: Ինչպես տեսնում ենք Նկար 3.8ա-ից, Ադրբեջանի ՀՆԱ դեֆլյատորի կորը 2008-09թթ. համար ունի հատկանշական փոփոխություն, որը և «կոմպենսացում» է Նկար 3.7ա-ում տեսանելի

¹ Purchasing power parity.

² GDP deflator. Մղաճի ինդեքսին համարժեք մեծություն է և ներկայացնում է թվային ցուցիչ, որի 100 միավոր արժեքը ֆիքսվում է որևէ բազային տարվա համար: Հայաստանի համար բազային է 1996թ., Ադրբեջանի համար՝ 2003թ., Վրաստանի համար՝ 2000թ.: Արդեն միայն այս հանգամանքը հարցականի տակ է դնում Նկարներ 3.7ա և 3.7բ-ում պատկերված իրողությունների համարժեքությունը: Դե, իսկ Ադրբեջանում սղաճի իրական ծավալների զեղծումներին կանդաղադառնանք ստորև:

տեսակարար ՀՆԱ անկումը՝ հանգեցնելով Նկար 3.7բ-ի ավելի ողորկ վարքին: Նույնը վերաբերում է Վրաստանին, ուղղակի այստեղ կոմպենսացիայի ամպլիտուդն ավելի փոքր է:

Էլ ավելի խոսու՞ն է վիճակը կիրառված *PPP* փոխարկման գործակցի դեպքում: Ինչպես տեսնում ենք Նկար 3.8բ-ից, ԱՄՆ տվյալների գրադարանում այն ոչգրոյական արժեք ունի միայն Հայաստանի համար: Մինչդեռ, Ադրբեջանի և Վրաստանի համար այս գործակիցը դիտարկված ողջ ժամանակահատվածում գրոյական է: Ունենք բոլոր հիմքերը ենթադրելու, որ Նկար 3.8բ-ի հետևում որևէ տնտեսագիտական իրողություն կանգնած չէ, գոնե Հարավկովկասյան երկրների մակրոտնտեսական ցուցանիշների *համեմատական* վերլուծության տեսանկյունից¹: Այստեղ, կարծում եմ, գործ ունենք այն նույն գործելակերպի հետ, որն արդեն նկարագրել էինք Ադրբեջանի ժողովրդագրական ցուցանիշների զանգվածային զեղծարարությունները քննելիս [3], և այս աղավաղված տվյալների՝ տարբեր հեղինակավոր միջազգային հրապարակումների և տվյալների գրադարանների միջոցով տարածումն ուսումնասիրելիս [4]: Ստորև դեռ կանդրադառնանք Ադրբեջանի սղաճի (ՀՆԱ դեֆլյատորի), ինչպես նաև Ադրբեջանի պետական բյուջեի հակասական գնահատականների հարցին:



Հաջորդ երկու նկարներում պատկերել ենք սղաճի վերաբերյալ գրաֆիկներն Ադրբեջանի և Հայաստանի համար: Նկար 3.9ա-ում պատկերված է 1995-2016թթ. ժամանակահատվածի համար սղաճը (սպառողական գների միջին տարեկան արժեքը)՝ ինդեքսավորված ըստ տվյալ երկրի բազային տարվա: Հայաստանի և Ադրբեջանի համար բազային է հանդիսանում 1995թ., երբ սպառողական գների միջին տարեկան ինդեքսն ընդունվել է 100 միավոր: Ինչպես հետևում է այս նկարից, 2011թ. սղաճի ինդեքսը գտնվում էր 250 միավորի տիրույթում: Այն ավելի փոքր է Հայաստանի (245) և մի փոքր ավելի բարձր՝ Վրաստանի համար (266): Համաձայն կանխատեսումների՝ 2016թ. սղաճի ինդեքսի առավել մեծ ար-

¹ Անաչառ լինելու համար նշենք, որ ԱՄՆ-ն ինքը չի որոշում կիրառված *PPP* փոխարկման գործակիցների արժեքները, այլ վերցնում է դրանք այլ աղբյուրներից [1]:

Ժեք կունենա Ադրբեջանը (362), նվազագույնը՝ Հայաստանը (296): Նկար 3.9բ-ում նույն ժամանակահատվածի համար բերվում է սղաճի տարեկան փոփոխության գրաֆիկը (նախորդ տարվա համեմատ, %): Ադրբեջանի սղաճի տարեկան տատանումների ամալիտուդը զգալիորեն գերազանցում է մյուս երկու հանրապետությունների ցուցանիշը: Վերջին տասնամյակի համար սղաճի առավելագույն տատանումն Ադրբեջանում գրանցվել է 2008-09թթ. համար՝ 2008թ. մոտ 21% արժեքից մինչև 1.5%՝ 2009թ.: Այս հանգամանքը պայմանավորված է այդ տարիներին արձանագրված՝ Ադրբեջանից հում նավթի արտահանման ռեկորդային ցուցանիշներով, ինչպես նաև Նավթային պետական հիմնադրամից (ԱՆՊՀ, SOFAZ) պետբյուջե ներարկված ու սղաճի զսպմանն ուղղված շոշափելի ծավալի ներմուծումներով (տե՛ս հաջորդ գլխում):

Արձագանքելով համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի իրողություններին՝ նույն տարիներին սղաճի նմանատիպ վարք, սակայն ավելի փոքր ամալիտուդով, արձանագրվել է նաև Վրաստանի համար՝ 2008թ. մոտ 10% արժեքից մինչև 1.7% 2009թ.: Հայաստանի պարագայում այս տատանումն ամենամեղմն էր՝ 2008թ. մոտ 9% արժեքից մինչև 3.5% 2009թ.: Նկատենք նաև, որ համաձայն ԱՄՀ կանխատեսումների, սղաճի տարեկան փոփոխությունն Ադրբեջանում կաճի մինչև մոտ 10%՝ 2012թ., որից հետո կսկսի նվազել մինչև 5%:

Ինչպես և ՀՆԱ դեպքում, Ադրբեջանում սղաճի ԱՄՀ բերված գնահատականներին անհրաժեշտ է վերաբերվել մեծ զգուշությամբ: Բանն այն է, որ դրանք հիմնականում արտացոլում կամ պարզապես կրկնում են ԱՀ իշխանությունների պաշտոնական գնահատականները: Եվ ինչպես շատ այլ ազգային ցուցանիշների պարագայում, Բաքվի կողմից բերվող սղաճի պաշտոնական տվյալները ենթարկված են զանգվածային զեղծարարությունների: Դրան, ի դեպ, քաջատեղյակ էին (և են) ԱՄՀ փորձագետները: Այլ բան, որ իրենց պաշտոնական հրապարակումներում և տվյալների գրադարանում [1] ԱՄՀ-ն, այնուամենայնիվ, հնարավոր է համարում ներկայացնել ԱՀ սղաճի վերաբերյալ զեղծված պաշտոնական տվյալները:



Աղբյուրը [1]

Այս ուշագրավ հարցի մասին տվյալները հասանելի դարձան միայն այն բանից հետո, երբ 2010թ. նոյեմբերի 28-ից սկսեցին հրապարակվել Բաքվում և այլ մայրաքաղաքներում ԱՄՆ դեսպանությունների հաղորդագրությունները (Հավելված 1): Այսպես, Wikileaks-յան Խմբաքա-

նակ Ա-ի «Ադրբեջանական դոսյեի» արդեն իսկ առաջին հաղորդագրություններից մեկում, թվագրված 2006թ. փետրվարի 10-ով, կարդում ենք. «Այստեղ՝ Բաքվում, գաղտնիք չէ, որ նախագահը ցանկանում է տեսնել 10%-ից ավելի փոքր սղաճ: ԱՀ կառավարությունը նախագահի այս ցանկությունը մինչ այժմ բավարարում էր սպառողական գների ինդեքսի (ՄԳԻ, *CPI*)¹ հետ «խաղալով»: Մակայն այս տարի [2006-ին] սա դժվար կլինի» (Թիվ 9, *06 BAKU 205*, 6.C): Հաղորդագրության հեղինակն իր վերջին պնդման մեջ չարաչար սխալվում էր: Սպառողական գների ինդեքսի և սղաճի հետ «խաղերը» Բաքվի համար որևիցե դժվարություն չներկայացրին ոչ 2006-ին, ոչ հաջորդ տարի և ոչ էլ առ այսօր:

4 օր անց կազմված *06 BAKU 219* հաղորդագրությունում կարդում ենք. «ԱՄՀ-ն փետրվարի վերջին Ադրբեջան հատուկ առաքելություն կուղարկի, ուսումնասիրելու համար 2005-ի կեսերին այստեղ ընդունված ՄԳԻ հաշվարկային նոր մեթոդաբանությունը²: Լուրջ կասկածներ կան, որ [սղաճի հաշվարկների] այս փոփոխությունը հանգեցնում է սղաճի հաշվարկված արժեքի համակարգված խտտորմանը՝ դրա նավազեցման ուղղությամբ» (Թիվ 15, *06 BAKU 219*, 6. SBU)³: ԱՄՀ առաքելությունն իրոք ժամանում է Բաքու, բայց նրա գործունեությունն իշխանությունների կողմից արժանանում է, մեղմ ասած, տարօրինակ գնահատականի: Այսպես, 2006թ. մարտի 16-ով թվագրված *06 BAKU 412* (Թիվ 55) հաղորդագրությունը վկայում է, որ սղաճի իրական արժեքների որոշման հետ կապված՝

¹ *Consumer price index.*

² Այն ներմուծվել էր ԱԶԳ «հիմնական նավթի» փուլին և ԱՀ ազգային արժույթի՝ մանաթի տարեվերջյան դեմոմինացիային ընդառաջ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2005-ին ընդունվեց նաև Ադրբեջանի ռազմականացման համալիր պետական ծրագիրը (Գ. 5), սա շատ ուշագրավ փաստ է (տե՛ս ստորև):

³ Այս հաղորդագրությունում հիշատակվում են նաև *Moody's* վարկանիշային ընկերության՝ Ադրբեջան սպասվող այցելության մասին առաջին շշուկները (*rumors*): Բացի այս, նշվում է, որ Ադրբեջանին *Fitch* ընկերության վերջին վարկանիշային գնահատականները ԱՀ իշխանությունների համար հիասթափեցնող էին, քանի որ դրանք թողնված էին անփոփոխ՝ *BB* (կայուն) մակարդակում (Թիվ 15, 4.C): Իսկ թե ինչ վարպետությամբ *BP* ընկերությունն օգտագործեց *Moody's*-ի սպասվող այցը Բաքու (և 2008-ի օգոստոսյան պատերազմը) իր 2006թ. «Սպիտակ գրքի» փաթեթային պահանջները բավարարելու համար՝ նկարագրել ենք Գ. 2-ում:

ԱՄՀ գործունեությունն ադրբեջանական իշխանությունների «զահլան տարել է»: Ավելին, այդ ժամանակ Էկոնոմիկայի զարգացման նախարար Հ.Բաբանը (*Heydar Babayev*) հայտարարում է, որ «իր գործունեությամբ ԱՄՀ-ն պարզապես սպանում է Ադրբեջանի ֆինանսական ոլորտը»:

Նախարար Բաբանն այստեղ նկատի ունի Ադրբեջանի իշխանություններին ուղղված ԱՄՀ չդադարող հորդորները՝ վարել ավելի խելամիտ, ոչ պոպուլիստական և պատասխանատու ֆինանսական քաղաքականություն, դադարեցնել պետական բյուջեի ծախսային հատվածի խելահեղ ընդլայնումը և ձեռնամուխ լինել սղաճի զսպմանն ուղղված գործուն միջոցներին, այլ ոչ թե տարվել ՄԳԻ-ի հետ խաղերով: Զայրացած Բաբանը, հակառակվելով այս հորդորներին, պնդում էր. «[ես] ընդհանրապես տպավորություն ունեմ, որ ԱՄՀ-ն և ՀԲ-ն մեզ հետ խաղում են լավ ոստիկան – վատ ոստիկան խաղը»: Հաղորդագրության հեղինակ դեսպան Հարնիշը այսպես է մեկնաբանում նախարար Բաբանի այս խոսքերը. «Առաջին անգամը չէ, որ նախարար Բաբանը քննադատում է ԱՄՀ-ին, և հակառակը, գովաբանում ՀԲ-ին՝ Ադրբեջանին իրականում սատարելու համար» (Թիվ 55, *06 BAKU 412*, 10.C): Ինչո՞ւ էին նախարար Բաբանը և ԱՀ իշխանությունները գոհ ՀԲ-ից հարցին արդեն թռուցիկ պատասխանել էինք Գ. 2-ում՝ Ադրբեջանում *Moody's* և *Fitch* վարկանիշային ընկերությունների «խաղերը» նկարագրելիս: Եվ դեռ կանոնադառնանք քիչ անց՝ ՀԲ տիրահոջակ «*Doing Bussines*» տեղեկատուների և ԱՀ ներդրումային գրավչության գնահատականների հետ կապված:

Սղաճի հարցը մի որոշ ժամանակ շարունակում է մնալ Բաքվում ԱՄՆ դեսպանության ուշադրության կիզակետում: 2006թ. ապրիլի 12-ին

¹Նույն աղբյուրից տեղեկանում ենք, որ համաձայն նախարար Բաբանի, «առաջիկա 5 տարիներին Ադրբեջանը չի կենտրոնանա ԼՂՀ հարցի վրա, այլ զբաղված կլինի տնտեսական և ռազմական զարգացման խնդիրներով: Շուտով մեր ռազմական բյուջեն կգերազանցի Հայաստանի ողջ բյուջեն, հայտարարեց նա՝ ավելացնելով, որ Հայաստանը կլինի առաջին երկիրը, որն իր հարձակումով կսաղորի պատերազմ Ադրբեջանի հետ: Ի պատասխան այս հայտարարության՝ ԱՄՆ ներկայացուցիչը զգուշացրեց, որ Հայաստանի հետ պատերազմը կկործանի ԱՀ տնտեսությունը» (Թիվ 55, 11.C): Այս խնդիրներին կանոնադառնանք Գ. 5-ում:

Բարձրում ԱՄՆ դեսպան Հարնիշը նույնիսկ հատուկ սեմինար է կազմակերպում նախարարների մակարդակով՝ նվիրված մակրոտնտեսական ցուցանիշներին և բյուջետային գործընթացներին¹: Մեմինարի արդյունքները, սակայն, այնքան էլ ոգևորիչ չէին: Մեմինարի առաջին հատվածում ԱՀ ֆինանսների փոխնախարար Ա.Բայրամովը (*Azer Bayramov*), անսալով ԱՄՀ հորդորներին, համաձայնում է, որ պետական ծախսերի անգուսպ ընդլայնումը լուրջ բացասական հետևանքներ կունենա մակրոտնտեսական ցուցանիշների վրա և կսաստկացնի սղաճը: Նա առաջարկում է հատուկ միջկառավարական խորհուրդ ստեղծել, որը կգրադվեր սղաճի զսպման, պետական միջոցների ծախսերի և բյուջետային կարգապահության, ինչպես նաև տնտեսական կանխատեսումների ու զարգացման մոդելավորման հարցերով և կկարողանար առաջարկներ ձևակերպել ԱՀ իշխանությունների համար: Այս առաջարկը ոգևորությամբ ընդունվում է թե՛ ԱՀ ֆինանսների նախարար Ա.Ալակբարովի (*Avaz Alakbarov*), թե՛ ԱՀ ԿԲ նախագահ Ե.Ռուսթամովի (*Elmar Rustamov*), թե՛ սեմինարին մասնակից ՀԲ, *USAID* և այլ միջազգային ֆինանսական կառույցների (*ՄՖԿ, IFI*) ներկայացուցիչների կողմից: Մակայն իր եզրափակիչ խոսքում ԱՀ էկոնոմիկայի զարգացման նախարարն անսպասելիորեն հայտարարում է, որ «Ադրբեջանի կառավարությունը բարձր մակարդակով տնտեսական և բյուջետային մի նոր հանձնաժողով ստեղծելու ամենևին էլ կարիքը չունի: Կառավարությունն ինքն արդեն կարող է և հաջողությամբ իրականացնում է այս գործառնությունը: Մասնավորապես, մենք արդեն մշակել և նախագահին ենք ներկայացրել տնտեսական զարգացման երկարաժամկետ ռազմավարությունը» (Թիվ 87, 06 BAKU 573, 11.SBU):

Այստեղ մի պահ ընդհատենք սղաճին նվիրված մեր դիտարկումները, քանի որ նախարար Բաբանի այս հայտարարությունը չափազանց կարևոր է: Այն հստակորեն մատնանշում է ԱԶԳ «հիմնական նավթի» մեկնարկի նախօրեին ընդունված հատուկ համալիր պետական ծրագրի մշակման և ընդունման փաստը: Ինչպես կտեսնենք հաջորդ երկու

¹ Եզակի երևույթ ԱՄՆ դեսպանատների գործունեության պատմությունում, ինչպես նշում է ինքը՝ հաղորդագրության հեղինակը:

գլուխներում, այս ծրագրի հիմնական նպատակն էր Ադրբեջանի ռազմարդյունաբերական համալիրի ստեղծումը, գրոհային նշանակության ծանր սպառազինությունների ծավալուն գնումների իրականացումը (Գ. 5), հակահայկական քարոզչական լայնամասշտաբ քարոզչության ու տարատեսակ միջազգային և երկկողմ հարթակներում հսկայածավալ *լոբբինգի* կազմակերպումը, Հարավային Կասպիցի սահմանագատման հարցում ագրեսիվ, զավթողական քաղաքականության շարունակումը (Գ. 2 և Հավելված 4):

Նախարար Բաբանի այս պնդումը և ընդհանրապես ԱՀ իշխանությունների գործելակերպը՝ հետևողականորեն մերժել ՀՆԱ, սղաճի, պետական ծախսերի և այլ ցուցանիշների իրական չափերի ներկայացումը, ապացուցում է, որ Ադրբեջանի ռազմականացման բազմափուլ պետական ծրագրի մեկ այլ, չափազանց կարևոր բաղադրիչը դրա, այսպես ասած, մակրոտնտեսական բլոկն էր: Այն ներառում էր մանաթի դենոմինացիայի անցկացումը, պետական ծախսային կոշտ համակարգի ստեղծումը՝ հիմնված ԱՀ նախագահի և նրա կլանի վրա, այս համակարգի դուրսբերումն արտաքին վերահսկողության դաշտից: Նշված խնդիրների լուծման համար պարզապես անհրաժեշտություն է հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների հանդեպ դիրեկտիվ, հրամայողական համակարգի ստեղծումը, որն արտաքին աշխարհին կներկայացնի ոչ թե դրանց իրական, բնականոն վարքն ու դինամիկան, այլ կներկայացնի դրանց «ցանկալի» պատկերը՝ համահունչ ընդունված պետական ծրագրի նպատակներին: Այլ խոսքերով, մակրոտնտեսական ցուցանիշների զանգվածային մանիպուլյացիան, սղաճի պաշտոնական գնահատականների զեղծումներն այս առումով ամեննին էլ պատահական երևույթ չեն, այլ անհրաժեշտաբար հետևում են ընդունված պետական ծրագրի տրամաբանությունից, ԱՀ իշխանությունների գործելակերպն են հանդիսանում:

Բայց այս պետական բազմափուլ ծրագրի, թերևս, ամենակարևոր բաղադրիչը քաղաքականն է: Թվարկված խնդիրների լուծումը ենթադրում է կոշտ, ավտորիտար քաղաքական համակարգի առկայություն,

գուրկ այլակարծության որևէ լուրջ բաղադրիչից, ժողովրդավարական համակարգի գործուն տարրերից: Այսպիսով, նշված պետական ծրագրի իրականացման համար պարզապես անհրաժեշտ էին երկրում կլանաօլիգարխիկ համակարգի ամրապնդումը, ժողովրդավարական ինստիտուտների հետևողական ոչնչացումը: Ինչպես արդեն նշել ենք վերը (Գ. 2), այս նպատակը «փայլուն» իրագործվեց այս պետական ծրագրի ընդունումից 3 տարի անց՝ Ադրբեջանում 2009-ի Սահմանադրական հանրաքվեի իրականացմամբ, որը հիմնահատակ փոխեց ԱՀ քաղաքական համակարգը՝ դարձնելով այն ժառանգական կլանաօլիգարխիկ ավտորիտար պետություն:

Վերադառնանք, սակայն, Ադրբեջանում սղաճի իրական մակարդակի հարցին: 2006թ. հուլիսի 21-ով թվագրված *06 BAKU 1076* հաղորդագրությունից տեղեկանում ենք, որ 2006-ի 10%-ից փոքր սղաճի պաշտոնական գնահատականն անհրաժեշտ է հարցականի տակ դնել. «ԱՄՀ ներկայացուցիչը պնդում է, որ 2006-ի սղաճի իրական մեծությունը վստահաբար կկազմի երկնիշ թիվ¹: Նա ասաց [ԱՄՆ] դեսպանին, որ ԱՀ կառավարության ՍԳԻ նոր պաշտոնական մեթոդաբանությունը շարունակաբար թերագնահատում է իրական սղաճի մեծությունը, իսկ Ազգային բանկն օտարված է մոնետար քաղաքականության վերահսկումից» (Թիվ 182, *06 BAKU 1076* 1.C): Այլ խոսքերով, Ադրբեջանն ինչքան ուզենա մանաթ կտպագրի, ինչը «կստիպի մանաթն արհեստականորեն ուժեղացնել և անարգել ընդլայնել պետական ծախսերը: Սա կհանգեցնի տնտեսական համակարգի տենդի (*overheat the economy*)»: Հաշվի առնելով «Ադրբեջանում առկա *էնդեմիկ* կոռուպցիան և ԱՀ կառավարությունում համակարգման աղետալի պակասը՝ պետք է սպասել, որ նավթային եկամուտներից շլացած Ադրբեջանի իշխանությունները կդառնան անկառավարելի», եզրակացնում է ԱՄՀ ներկայացուցիչը:

¹ Ինչպես հետևում է Նկար 3.9բ-ից, ԱՄՀ-ն իր տվյալների գրադարանում [1], այնուամենայնիվ, բերում է ԱՀ կառավարության սղաճի պաշտոնական գնահատականից (12-13%, տե՛ս ստորև) նույնիսկ ավելի փոքր արժեք (8.4%):

2006թ. նոյեմբերի 8-ով թվագրված *06 BAKU 1624* հաղորդագրությունից, որը նվիրված է 2008-ի նախագահական ընտրություններին ընդառաջ Ի.Ալիևի ելույթի քննությանը, տեղեկանում ենք, որ «ԱՀ կառավարությունն ընդհանրապես հակված է անհիմն հայտարարությունների: ...2006-ին իրական սղաճը կազմում էր մոտ 15-20%» (Թիվ 297, *06 BAKU 1624*, 6.C): 2006-ի սղաճին առնչվող հետագա պարզաբանումները բերվում են 2006թ. դեկտեմբերի 12-ով թվագրված *06 BAKU 1798* հաղորդագրությունում. «Նոյեմբերի 30-ին տեղի ունեցած «Ադրբեջանի եկամուտների կառավարման հանձնախմբի բարեկամներ»¹ խմբի հետ հանդիպմանը ԱՄՀ տեղական ներկայացուցիչը նկարագրեց ԱՀ մակրոտնտեսական ընդհանուր պատկերը: Նա հայտարարեց, որ սղաճի պաշտոնական գնահատականները ոչ մի բան չեն արտահայտում: Սղաճի իրական մեծությունը մոտ 20% է: Եվ այն էլ ավելի կաճի 2007-ին: Իսկ 2006-ի պաշտոնական 8.4%² գնահատականը սղաճի միջին ամսական վիճակագրական տվյալների հետ մանիպուլյացիաների հետևանք է և կոչված է բավարարելու 2005-ի նախագահական դեկրետի պահանջը՝ երկրում ապահովել սղաճի միանիշ մեծություն (*single-digit inflation*)» (Թիվ 347, *06 BAKU 1798*, 1.C, 3.C):

Սղաճի իրական չափերի հետ կապված՝ Բաքվում ԱՄՆ դիվանագետների և ՄՖԿ փորձագետների տագնապը հաջորդ տարի ոչ միայն շարունակվեց, այլև ուժեղացավ: Այսպես, 2007թ. մարտի 6-ով թվագրված *07 BAKU 274* հաղորդագրությունը տեղեկացնում է, որ «համաձայն ԱՄՀ առաջատար վերլուծաբան Վ.Կրամարենկոյի (*Vitali Kramarenko*), 2007-ին թաքնված սղաճը կկազմի մոտ 16-17%, որին կավելանա ևս մոտ 4-5%՝ բենզինի և հանրային ծառայությունների սակագների վերջին գնաճով պայմանավորված³: Այսպիսով, 2007թ. սղաճն Ադրբեջանում կկազմի 20% և ավելին: Կրամարենկոն պնդում է, որ այս տարի պարզապես անհնա-

¹ *Friends of Azerbaijan Revenue Management Group*. Այս խմբին մոտ կանգնած ԱՀ բյուջետային հանձնախմբի մասին տե՛ս Գ. 4 և Գ. 5-ում:

² Տե՛ս Նկար 3.9բ:

³ 2006թ. դեկտեմբերի վերջին Ադրբեջանում բարձրացվեցին բենզինի, վառելիքի և հանրային ծառայությունների (էլեկտրականություն, տրանսպորտ և այլն) սակագները:

րին կլինի ունենալ միանիշ սղաճ [ինչպես դա սահմանում էր Ի.Ալիևի 2005թ. դեկրետը–*Ա.Ա.*], և որ ԱՀ կառավարությունը տեղյակ է այդ մասին... Համաձայն այլ անկախ փորձագետների, իրականում սղաճը 2007-ին էապես կգերազանցի 20%-ը¹, քանի որ իրական գնաճը որոշ գանգվածային սպառման խմբերում արդեն կազմում է 30-40%» (Թիվ 438, 07 *BAKU* 274, 1.C, 3.C): Նկատենք, որ Նկար 3.9բ-ից հետևում է, որ ԱՄՀ տվյալների գրադարանը 2007-ի սղաճի համար, այնուամենայնիվ, բերում է պաշտոնական գնահատականը՝ էապես փոքր 20%-ից:

Սղաճի իրական մեծությունների մասին մտահոգ նախադասություններ կարելի է գտնել Խմբաքանակ Ա-ի Ադրբեջանական դոսյեի 2007թ. տնտեսական հարցերին նվիրված գրեթե բոլոր մնացած հաղորդագրություններում: Մասնավորապես, ապրիլի 25-ով թվագրված հաղորդագրությունը նորից պնդում է, որ 2007-ի սղաճը «ըստ ԱՄՀ-ի կգտնվի 18-22%-ի տիրույթում: Բացի այդ, ԱՀ Ազգային բանկի (*NBA*) նախագահն ապրիլի 14-ին պաշտոնապես հայտարարեց, որ ամբողջ տարվա կտրվածքով սղաճը կկազմի առնվազն 16%: 2005-ից ի վեր սա առաջին դեպքն է, երբ Բարձրաստիճան ադրբեջանական պաշտոնյան հայտարարում է, որ սղաճը կգերազանցի միանիշ արժեքը» (Թիվ 521, 07 *BAKU* 505, 2.C):

Այս մտահոգությունները զագաթնակետին հասան 2007թ. մայիսի 18-ով թվագրված 07 *BAKU* 603 հաղորդագրությունում, որից տեղեկանում ենք, որ.

«Այսօր Ադրբեջանի կառավարության առջև ծառայած է երկու կարևոր և փոխկապակցված խնդիր՝ զսպել սղաճը և ապահովել երկարաժամկետ ֆիսկալ կայունությունն (*fiscal sustainability*) ու ծախ-

¹ Հետաքրքրական է, որ նույն այս հաղորդագրությունում ասվում է, որ «ԱՄՀ-ն շարունակ առաջարկում է ԱՀ կառավարությանը՝ ստիպել պետական նավթային *SOCAR* ընկերությանը վերջապես մուծել իր բոլոր հարկերը, ինչը կօգնի որոշակիորեն մեղմել սղաճային ճնշումը»: Նկատենք, որ ԱՄՀ այս ճնշումը մնաց ապարդյուն և՛ 2007-ին, և՛ դրանից հետո: Մասնավորապես, *SOCAR* ընկերությունը 2007-ին այդպես էլ չհրապարակեց, թե ինչքան գումար է փոխանցում ԱՆՊՀ-ին (տե՛ս Գ. 2, բաժին 2.4-ում): Իրադրությունը նույնն է և այսօր՝ 2013-ին:

սային կարգապահությունը: Մինչդեռ առկա են բոլոր նշանները, որ 2008թ. պետական բյուջեում կառավարությունը նորից պատրաստվում է իրականացնել ծախսային հատվածի մեծացում: ԱՄՆ տեղական առաջատար վերլուծաբանը 2008-ի մշակվող պետական բյուջեն որակում է որպես «անկայուն»¹: Ավելին, նա ԱՀ կառավարությանն է ներկայացրել իր մոդելային վերլուծությունների ու հաշվարկների արդյունքները, համաձայն որոնց, եթե շարունակվի պետական ծախսերի ավելացման ներկայիս էքսպանսիոնիստական քաղաքականությունը, որն ավելի էր սաստկացել 2008-ի նախագահական ընտրություններին ընդառաջ, ապա սղաճի հետևանքով Ադրբեջանը պարզապես կվատնի իր նավթային եկամուտները և կսպառի ԱՆՊՀ ողջ միջոցներն արդեն 2016-ին» (Թիվ 546, 07 BAKU 603, 5.C)²:

Իմիջիայլոց նկատենք, որ համաձայն 2007թ. սեպտեմբերի 12-ով թվագրված 07 BAKU 1124 հաղորդագրության, ԱՄՆ վերը հիշատակված առաջատար վերլուծաբան Վ.Կրամարենկոյի գնահատումներով, առաջիկա 15 տարիներին անհատական շահառուների յուրացումից Ադրբեջանը ծրագրում էր ստանալ մոտ \$200 մլրդ եկամուտ, ինչը հաստատուն դոլարներով կազմում է մոտ \$5-6 մլրդ տարեկան, մինչև 2016թ.» (Թիվ 688, 07 BAKU 1124, 4.C):

Շարունակելով սղաճի թեման՝ նշենք, որ համաձայն 2008թ. ապրիլի 4-ով թվագրված 08 BAKU 322 (Թիվ 938, 4.C) հաղորդագրության, ՍԳԻ հիման վրա հաշվարկված տարեկան սղաճը 2007-ին կազմել էր 29%: Իսկ

¹ Մի փոքր ավելի ուշ՝ 2007թ. հոկտեմբերի 2-ին, լսելով պետբյուջեի ծախսերի նոր ընդլայնման պլանների մասին, Վ.Կրամարենկոն 2008-ի պետբյուջեն կանվանի «սարսափելի» («scary», Թիվ 700, 07 BAKU 1207): Եվ իսկապես, ինչպես կտեսնենք հաջորդ գլխում (տե՛ս Նկար 4.2.), 2008-ին ԱՆՊՀ-ից պետական բյուջե նախատեսված մոտ 1.1 մլրդ մանաթին շուտով ավելանում է ևս 2.7 մլրդ մանաթ՝ լրացուցիչ հատկացումներ: Ի դեպ, նույնը կրկնվեց և՛ 2010-ին, և՛ 2011-ին (տե՛ս նույն տեղում):

² Բացի բերված այս կարևոր պնդումներից, 07 BAKU 603 հաղորդագրությունը պարունակում է ևս մի շարք ուշագրավ տվյալներ, որոնց անհրաժեշտ է հատուկ անդրադարձնալ: Ինչն էլ կանենք Ադրբեջանում սղաճի և սպառողական գների ինդեքսի մասին մեր քննության ավարտից անմիջապես հետո:

ԱՄՆ Առևտրային պալատի տեղական հանձնախմբի համանման հաշվարկներով, այն նույնիսկ գերազանցել է 30%-ը: Վերջապես, 2008թ. հուլիսի 10-ով թվագրված *08 BAKU 667* հաղորդագրությունը պնդում է, որ «ԱՄՇ-ն, ինչպես նաև Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը, ՀԲ-ն ու Միջազգային ֆինանսական կորպորացիան միահամուռ պնդում են պետական ծախսերի վարվող էքսպանսիոնիստական ու անպատասխանատու քաղաքականության վտանգը: ... ԱՄՇ-ն իր 2008-ի տարեկան սղաճի գնահատումը նորից է բարձրացրել, ներկայումս այն գնահատվում է ավելի քան 26%: Այլ անկախ տեղական և միջազգային աղբյուրները կարծում են, որ սղաճը 2008-ին կկազմի նույնիսկ ավելի քան 30%: Բոլոր նշված աղբյուրները վստահ են, որ ներկայիս միտումների պահպանման դեպքում սղաճը [Ադրբեջանում] կմնա երկնիչ և՛ 2009-ին¹, և՛ դրանից հետո» (Թիվ 1032, *08 BAKU 667*, 8.C):

Եվ վերջ: *08 BAKU 667*-ը Խմբաքանակ Ա-ի տնտեսական հարցերին նվիրված *Wikileaks*-յան վերջին հաղորդագրությունն է, որն անդրադառնում է Ադրբեջանում սղաճի ու սպառողական գների ինդեքսի իրական մակարդակների հարցին: Այս թեման այլևս ընդմիջտ դուրս է գալիս քննարկումներից: Թե ինչու՞ առաջին հայացքից դժվար է պատասխանել:

Իրոք, սղաճի և բյուջետային ծախսերի հարցը հատկապես էական դարձավ 2009-ին՝ մի շարք հանգամանքների հետևանքով (տե՛ս հաջորդ գլխում), և կարծես թե այն պետք է առանցքային դեր խաղար Բաքվում ԱՄՆ դեսպանության հաղորդագրություններում: 2009-ին այս հարցին նվիրված հաղորդագրությունների բացակայությունը չի կարելի բացատրել նաև այդ տարի Խմբաքանակ Ա-ում Ադրբեջանից ստացված հաղորդագրությունների ընդհանուր թվի նվազումով: Սա ճշմարիտ կլիներ միայն 2010-ի համար: Այդ տարի «Ադրբեջանական դոպլեթ» հաղորդագրությունների ընդհանուր քանակը կազմել էր ընդամենը 45 հատ (տե՛ս

¹Նկար 3.9բ-ից հետևում է, որ ԱՄՇ տվյալների գրադարանը [1] 2008-ի ու հատկապես 2009-ի համար շարունակում է բերել ՄԳԻ և սղաճի՝ իրականությունից միանգամայն կտրված, պաշտոնական գնահատականները, էապես փոքր՝ հենց ԱՄՇ և այլ ՄՖԿ փորձագետների գնահատականներից: Նույնը վերաբերում է նաև [1]-ի 2013-16թթ. համար կատարված կանխատեսումներին:

Հավելված 1, Նկար Հ1.1): Սակայն 2009-ին դրանք դեռ զգալի թիվ էին կազմում (324 հատ, տե՛ս նույն տեղում):


Կարծում ենք, պատասխանն այն է, որ 2008-ի երկրորդ կեսին Բաքվում ԱՄՀ առաջատար վերլուծաբան Վ.Կրամարենկոյին, որի անունն ու խիստ գնահատականներն այդքան հաճախակի կարելի էր գտնել մինչև 2008-ի կեսը թվագրված «Ադրբեջանական դոսյեի» հաղորդագրություններում, փոխարինում է Կ.Գվենեթաձեն (*Koba Gvenetadze*), որի անունը «Ադրբեջանական դոսյեի» մնացյալ հաղորդագրություններում հիշատակվում է միայն մեկ անգամ՝ 2009թ. հունվարի 13-ով թվագրված *09 BAKU 23* հաղորդագրությունում: Այն էլ՝ շատ բնութագրական կերպով: Այստեղ նորանշանակ Գվենեթաձեն հայտնում է, որ «ԱՀ կառավարության հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների (ՀՆԱ և սղաճ) պաշտոնական գնահատականները ԱՄՀ-ն համարում է թեև ոչ իդեալական, բայց միանգամայն հուսալի և պիտանի հետագա օգտագործման համար» (Թիվ 1213, *09 BAKU 23*, 6.C)¹: Դե ինչ, ԱՄՀ-ն ունկնդիր եղավ պրն Գվենեթաձեի եզրակացությանը. ինչպես տեսնում ենք Նկարներ 3.8 և 3.9-ից, ԱՄՀ-ն պարզապես կրկնում է այս ցուցանիշների Բաքվի պաշտոնական գնահատականները՝ չլիանալով դրանք բերել և իր տվյալների գրադարանում [1]:

Ամենևին հակված չլինելով կիսել պրն Գվենեթաձեի լավատեսությունն այս հարցում՝ անհրաժեշտ ենք համարում կատարել հետևյալ դիտարկումը: Նախագահական դեկրետի միջոցով սղաճի «դեմն առնելու» հնարքը, ինչ խոսք, արատառոց մոտեցում է: Այն, թերևս, մակրոտնտեսական գիտության մեջ ադրբեջանական նորամուծություն պիտի համա-

¹ Ի դեպ, այս հաղորդագրության հեղինակ Դ.Լուսն նշում է նաև, որ «Գվենեթաձեի կարծիքով, ԱՀ կառավարությունը դեռ չի որոշել իր 2009թ. պետբյուջեի առաջնայնությունները», այնուհետև հավելում է. «բոլոր դեպքերում դրա կատարումը լուրջ խնդիր է լինելու: Հիմնական հարցն այստեղ այն է, թե որ ծրագրերը ԱՀ կառավարությունը կորոշի կարճել ֆինանսավորումից» (Թիվ 1213, *09 BAKU 23*, 4.C): Հաջորդ երկու գլուխներում կտեսնենք, որ պրն Գվենեթաձեն չարաչար սխալվում էր: ԱՀ կառավարությունը, ավելի ճշգրիտ՝ ԱՀ նախագահ Ի.Ալիևը շատ լավ պատկերացնում էր, թե որոնք են 2009թ. պետբյուջեի առաջնայնությունները: Իսկ Դ.Լուսի վերջին արտահայտությունը լուրջ հետևանքներ կունենա քիչ անց՝ 2009թ. ապրիլի 23-ով թվագրված ԱՄՆ պետքարտուղարի «հատուկ Ադրբեջանի համար» դրված հարցերի տեսքով (տե՛ս հաջորդ գլխում):

րել: Այս առումով սպառողական գների ինդեքսի և սղաճի վիճակագրական տվյալների ԱՀ իշխանությունների մանիպուլյացիաների կապակցությամբ ԱՄՇ, *USAID* և այլ ՄՖԿ-ների փորձագետների գանգատները՝ այդքան տեսանելի և ցցուն մինչև 2008-ի կեսը թվագրված հաղորդագրություններում, իհարկե, միանգամայն տեղին էին և հիմնավոր: Նրանց բերած տվյալները հնարավորություն են ընձեռում գնահատել ԱԶԳ «հիմնական նավթի» փուլի մեկնարկից հետո Ադրբեջանում իրական սղաճի դինամիկան և հաշվարկել այդ տարիների իրական ՀՆԱ ծավալները, ինչպես և իրական սղաճի հետևանքով ՀՆԱ կորստի տարեկան և գումարային մեծությունները: Մեր հաշվարկների արդյունքները պատկերված են Նկար 3.10-ում: Նկարի վերին հատվածում բերվում են սղաճի պաշտոնական և ճշգրտված տվյալները (ձախ առանցք, %), ինչպես նաև ՀՆԱ պաշտոնական և ճշգրտված մեծությունները (\$ մլրդ, ընթացիկ գներով, աջ առանցք):


Ինչպես տեսնում ենք այս նկարից, ՀՆԱ ճշգրտված արժեքը, օրինակ՝ 2012-ին, կազմել է \$60.6 մլրդ, ԱՄՇ գրադարանի [1] ու պաշտոնական Բաքվի \$80.8 մլրդ-ի փոխարեն: Նկար 3.10-ի ստորին հատվածում բերվում են իրական սղաճով պայմանավորված ՀՆԱ տարեկան կորուստները՝ դիտարկվող ժամանակահատվածում: 2012-ին դրանք կազմել են մոտ \$20 մլրդ: Նույն նկարում՝ պատուհանում բերվում են 2005-12թթ. և 2005-16թթ. ժամանակահատվածների համար իրական սղաճով պայմանավորված ՀՆԱ գումարային կորուստները: Դրանք կազմել են \$96.1 և մոտ \$177 մլրդ համապատասխանաբար: Հիշեցնենք, որ վերը հիշատակված ԱՄՇ առաջատար վերլուծաբան Վ.Կրամարենկոյի գնահատումներով, 2005-16թթ. ժամանակահատվածում ածխաջրածինների յուրացումից Ադրբեջանը կստանա մոտ \$200 մլրդ եկամուտ: Իսկ ինչպես հետևում է Նկար 3.10-ից, դրա մոտ 89%-ը (\$177 մլրդ) կփոշիանա իրական սղաճի հետևանքով: Գոհունակությամբ արձանագրենք, որ բերված հաշվարկները միանգամայն համընկնում են ԱՄՇ մոդելի եզրահանգումներին, որի մասին նշել էինք վերը (տե՛ս նաև Թիվ 546, *07 BAKU 603*, 5.C):



Աղբբուրները [1] և սեփական հաշվարկներ

Հաջորդ երկու գրաֆիկներում պատկերել ենք 2000-2016թթ. անղբկովկասյան հանրապետությունների համար պետական եկամուտների (Նկար 3.11) և պետական ծախսերի (Նկար 3.12) ցուցանիշները՝ արտահայտվաճ ՀՆԱ-ի նկատմամբ %-ով: Իսկ Նկար 3.13-ում պատկերել ենք պետական եկամուտների և ծախսերի տարբերությունը՝ նույնպես արտահայտվաճ ՀՆԱ-ի նկատմամբ %-ով: Ինչպես հետևում է Նկար 3.13-ից, սկսաճ 2004-ից՝ Աղբբեջանը գտնվում է պրոֆիցիտային դաշտում, երբ պետական եկամուտները սկսում են գերազանցել պետական ծախսերը:



2000-16թթ. ժամանակահատվածի համար պրոֆիցիտի առավելագույն չափն արձանագրվել է 2008թ.՝ 20% ՀՆԱ չափով: Ըստ ԱՄՀ փորձագետների գնահատման, պրոֆիցիտն Ադրբեջանում կպահպանվի մինչև 2016թ. և սկսած 2012-ից՝ սահուն կնվազի մինչև 7-8% ՀՆԱ արժեքը: Հայաստանի և Վրաստանի համար նշված ժամանակահատվածում դեֆիցիտի առավելագույն ցուցանիշն արձանագրվել է հետճգնաժամային 2009թ. և կազմել է երկրների ՀՆԱ 7.7% և 6.5%-ը՝ համապատասխանաբար:




Աղբյուրը՝ [1]

Այստեղ անհրաժեշտ է նշել, որ ԱՀ պետական բյուջեի պրոֆիցիտ/դեֆիցիտի ԱՄՀ և ԿՀՎ գնահատականները տրամագծորեն հակառակ են միմյանց: Այն տարիներին, երբ ԱՄՀ-ը ֆիքսում է ԱՀ պետբյուջեի էական պրոֆիցիտ, ԿՀՎ-ն, ընդհակառակը, ֆիքսում է շոշափելի դեֆիցիտ: Սա բավական արտառոց երևույթ է, որին մինչև վերջերս արժանի ուշադրություն չի դարձվել: Իրականում սա հետաքրքիր ու հիմնարար նշանակության հարց է, որին հատուկ և ավելի հանգամանալի կանոնադրառանք հաջորդ գլխում: Այստեղ պարզապես նշենք, որ ԱՄՀ գնահատականները

րով Ադրբեջանը կայուն պրոֆիցիտային դաշտում հայտնվում է միայն Ադրբեջանի Նավթային պետական հիմնադրամի (ԱՆՊՀ) գործունեության միայն 7-րդ տարում:







Նկար 3.14-ում պատկերել ենք 1992-2016թթ. անդրկովկասյան 3 հանրապետությունների համար ազգային խնայողությունների ցուցանիշը՝ արտահայտված ՀՆԱ-ի նկատմամբ %-ով: Այն ազգային արժույթով արտահայտված համախառն ազգային խնայողությունների (*gross national savings*)¹ հարաբերությունն է տվյալ երկրի ՀՆԱ-ին՝ նույնպես արտահայտված տեղական արժույթով: 2011թ. այն Ադրբեջանի համար կազմել էր մոտ 43%, Հայաստանի և Վրաստանի համար՝ մոտ 20% և 10% համապատասխանաբար: Համաձայն ԱՄՀ կանխատեսումների, 2016թ. Հայաստանի և Ադրբեջանի համար ազգային խնայողությունների ցուցանիշները կհավասարվեն միմյանց և կկազմեն մոտ 27%²: Վրաստանի ցուցանիշը 2016թ. կանխատեսվում է մոտ 15%-ի սահմանում:

Նկար 3.15-ում պատկերել ենք ԱՄՀ տվյալներն անդրկովկասյան երեք հանրապետություններում գրանցված գործազրկության վերաբերյալ: Տվյալները բերվում են տոկոսով՝ երկրի ընդհանուր աշխատունակ բնակչության թվի համեմատ: Նկատենք, որ ԱՄՀ-ն հանրապետություն-

¹ Համախառն ազգային խնայողությունը երկրի համախառն առկա եկամուտն է՝ հանած վերջնական սպառման բոլոր ծախսերը և սոցիալական վճարները կենսաթոշակային հիմնադրամների:

² Նկատենք, որ համաձայն տարբեր մասնագիտական գնահատականների (տե՛ս Գ. 2), 2016 թվականը ԱԶԳ մասշտաբային շահագործման ավարտական փուլի առաջին տարին է:

ների բնակչության և աշխատուժի տվյալները վերցնում է երկրների պաշտոնական վիճակագրական ծառայություններից: Ինչպես հետևում է այս նկարից, գործազրկության առավելագույն մակարդակը գրանցված է Վրաստանի համար. 2011թ. այն կազմել է 16.2%: Ադրբեջանի և Հայաստանի ցուցանիշները մոտ 2.5 անգամ ավելի փոքր են և 2016թ. հավասարվում են իրար մոտ 6% ցուցանիշի շուրջ:



Եվ նորից, Ադրբեջանում գործազրկության ԱՄՀ բերված տվյալներին պետք է զգույշ վերաբերվել: Այսպես, դեռ 2006թ. նոյեմբերի 8-ով թվագրված *06 BAKU 1624* հաղորդագրությունում, նվիրված նախագահ Ի.Ալիևի հերթական ամսագրոգոտ ելույթի քննությանը, կարդում ենք. «առջևում նախագահական ընտրություններին դեռ երկու տարի ունենալով՝ նախագահին արդեն ներկայացնում է իր ձեռքբերումները տնտեսական ոլորտում, նշելով նոր աշխատատեղերի ստեղծումը և կանխատեսելով, որ գործազրկությունն առաջիկա տարիներին չի գերազանցի 10%-ը: Այնինչ, ոչ պաշտոնական գնահատականներով իրական գործազրկությունը երկրում կազմում է մոտ 35-45%»: Ինչպես տեսնում ենք Նկար 3.15-ից, Ադրբեջանում գործազրկության մակարդակի մասին նախագահի այս ցուցումը հնազանդորեն արտահայտվեց թե՛ պաշտոնական գնահատականներում, թե՛ այս գնահատականները բերող ու տարածող ԱՄՀ տվյալների գրադարանում: Եվ սա այն դեպքում, երբ Ադրբեջանում ՄՖԿ ներկայացուցիչների և արտասահմանյան դիվանագիտական կորպուսի համար գաղտնիք չէ, որ իրական գործազրկությունն այստեղ առնվազն չորս անգամ ավելին է:

Նկար 3.16-ում պատկերված են անդրկովկասյան երեք հանրապետությունների պետական ընդհանուր պարտքի մասին ԱՄՀ տվյալները՝ բերված %-ով երկրի ՀՆԱ-ի համեմատ: 2000-2008թթ. ժամանակահատվածում Ադրբեջանի պետական ընդհանուր պարտքը 25%-ից նվազում է մինչև 7.3%՝ 2008թ.: Այնուհետև, ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքների հաղթահարման նպատակով վերցված փոխառությունների ազդեցության տակ այն աճում է մինչև 12.1%՝ 2009թ., 2011թ. կազմելով 10.7%: Համաձայն ԱՄՀ փորձագետների կանխատեսումների, դրանից հետո այն թեթևակիորեն կաճի և 2016թ. կկազմի մոտ 13%: Նմանատիպ, բայց տատանման ամպլիտուդի ավելի շոշափելի արժեքով է բնութագրվում նաև Հայաստանի պետական ընդհանուր պարտքի դինամիկան: 2007-08թթ. այն կազմել էր 16%, 2009թ. վերցված փոխառությունների ազդեցության տակ՝ արդեն 41.5%: Համաձայն ԱՄՀ կանխատեսումների, 2016թ. Հայաստանի պետական պարտքը կկազմի ՀՆԱ 36.5%-ը:

Եզրափակելով Ադրբեջանի մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ ԱՄՀ գրադարանի տվյալների մեր քննությունը՝ նշենք հետևյալը: ՍԳԻ, սղաճի, ՀՆԱ և այլ ցուցանիշների իրական չափերի պաշտոնական Բաքվի գնահատականները հարցականի տակ դնող ԱՄՀ և այլ ՄՖԿ փորձագետների մոտմոքը՝ այդքան տեսանելի մինչև 2008-ի կեսը թվագրված «Ադրբեջանական դոսյեի» Wikileaks-յան հազորդագրություններում, իրենց էությունը որքան հիմնավոր, այնքան էլ պարզունակ ու նախկին: Եթե չասենք՝ երկերեսանի: Իրոք, եթե՝

«ԱՄՀ ներկայացուցիչներն իրենց զարմանքն ու վրդովմունքն են արտահայտում առ այն, որ խախտելով նախնական պայմանավորվածությունները՝ ԱՀ իշխանությունները չեն տպագրել ԱՄՀ 2006թ. և 2007թ. պաշտոնական հաշվետվությունները, հետևաբար, դրանք մնացել են անհասանելի մասնագետների և լայն հասարակության համար: ԱՄՀ տեղական ղեկավարները պնդում են, որ այս հանգամանքը հղի է լուրջ բացասական հետևանքներով, քանի որ միջազգային բանկերն օգտագործում են հենց ԱՄՀ հաշվետվությունները՝ երկրում առկա ռիսկերը հաշվարկելիս» (Թիվ 546, 07 BAKU 603, 10.C):

Եթե ԱՄՀ-ն իրոք մտահոգ է Ադրբեջանում իրական պատկերն ի հայտ բերելու, դրա մասին բարձրաձայնելու գործին, ապա էլ ինչո՞ւ դա չանել գոնե իր իսկ տվյալների գրադարանում, որը և՛ 2006-ին, և՛ 2007-ին, և՛ այսօր շարունակում է բերել Բաքվի կեղծված պաշտոնական տվյալները: Ինչո՞ւ ԱՄՀ-ն իր գրադարանում, տեղեկատուներում և այլ հրապարակումներում 2005-ից սկսած առ այսօր շարունակ բերում է ՍԳԻ, սղաճի և ՀՆԱ պաշտոնական Բաքվի կեղծված տվյալները: Չէ՞ որ դրանք հիմք են ծառայում հետագա վերատպումների ու այլ աղբյուրներում հրապարակումների համար, ներառյալ լայն զանգվածականություն ունեցող ՀԲ և Համաշխարհային տնտեսական ֆորումի (WEF, ՀՏՖ) կայքերն ու տեղեկատուները (տե՛ս Գ. 1): Ինչո՞ւ է ԱՄՀ-ն յուրօրինակ կերպով ներքաշվում համատարած կեղծումների վրա կառուցված ադրբեջանական քարոզչության մեջ:

Այս ամենը հանգեցնում է մեզ մի շատ կարևոր հարցի՝ հեղինակավոր ՄՖԿ-ների ու այլ կառույցների կողմից հարավկովկասյան երկրների մասին տարբեր վարկանիշային տեղեկատուներում բերվող տվյալների և դրանց տրված գնահատականների *արժանահավատության* հարցին: Այս հարցին առիթ ունեցել էինք անդրադառնալ ՄԱԿ ԺԴ կողմից բերվող Ադրբեջանի ժողովրդագրական ցուցանիշների, ինչպես նաև «Հազարամյակի մարտահրավերներ» կորպորացիայի տարատեսակ գնահատականների առնչությամբ [4]: Այստեղ, սակայն, մեզ կհետաքրքրեն ՀԲ-ի կողմից կազմվող քաջ հայտնի «*Doing Business*» տեղեկատուի Ադրբեջանին վերաբերող գնահատականներն ու դրանց հետ կապված գործընթացները: Այս տեղեկատուի գնահատականների մասին, բայց Վրաստանի առնչությամբ, նույնպես առիթ ունեցել էինք խոսել՝ Հայաստանի և Վրաստանի համար հանրահայտ «*Հերիթըջ ֆաունդեյշն*» կազմակերպության «Տնտեսության ազատությունը» տեղեկատուների հետ կապված [5]: Հակիրճ հիշեցնենք, թե բանն ինչ էր այստեղ:

Համաձայն ՀՖ 2007թ. տեղեկատուի, այդ տարի Հայաստանը կորցրել էր «հիմնականում ազատ երկրի» իր կարգավիճակը՝ առաջին անգամ սկսած 1993-ից: Հակառակը, Վրաստանի համար 2007-ին ֆիքսված էր աննախադեպ առաջխաղացում: Կատարված վերլուծությունը ցույց տվեց, որ այս պատկերի համար պատասխանատու է ՀՖ 2007թ. մեթոդաբանական նորամուծությունը. այդ տարի այն իր ազատությունների գնահատման համար առաջին անգամ օգտվեց այդ նույն թվականին ՀԲ-ի կողմից առաջարկված «*Doing Business*» տեղեկատուի որոշ արդյունքներից: Դրանց համաձայն, Վրաստանը 2007-ին ճանաչվել էր աշխարհում թիվ մեկ երկիրը՝ միանգամայն հակադիր այն տնտեսական և սոցիալական իրողություններին, որոնք 2007-ին առկա էին Վրաստանում¹: Ուստի, 2007թ. ՀԲ «*Doing Business*» և ՀՖ «տնտեսության ազատությունը» տեղեկատուների այս տվյալները [5]-ում գնահատվեցին որպես ոչ

¹ Եվ որոնց մասին այսօր, այս երկրում իշխանափոխությունից հետո, մենք, հուսով եմ՝ նաև «նրանք», ավելին գիտեն, քան 2007-ին:

արժանահավատ ու խեղաթյուրված՝ զուտ քաղաքական և աշխարհաքաղաքական դրդապատճառներից ելնելով¹:

Այդ ժամանակ, ցավոք, չգիտեի, որ մոտավորապես նույն բանը կատարվում էր և Ադրբեջանում: Մա ինչ-որ տեղ կարելի է ներելի համարել, քանի որ ՀԲ «*Doing Business*»-ի Ադրբեջանին տրված գնահատականների հիմքում ընկած գործընթացների մասին առաջին տեղեկությունները հասանելի դարձան միայն 2010-ի վերջին՝ *Wikileaks*-յան հրապարակումներից հետո: Մասնավորապես, 2006-ով թվագրված մի շարք հաղորդագրություններում ֆիքսվում է ադրբեջանական իշխանությունների դժգոհությունն առ այն, որ այս տեղեկատուներում ԱՀ-ն «լավ տեղ չի գրավում»: Իսկ 2007թ. մայիսի 11-ով թվագրված հաղորդագրությունում կարդում ենք. «Նախագահ Ալիևը շատ դժգոհ է ՀԲ «*Doing Business*» 2005թ. տեղեկատուի Ադրբեջանին տրված տեղից: Նա հանձնարարել է էկոնոմիկայի զարգացման նախարար Բաբանին առաջարկներ պատրաստել՝ բարելավելու համար 2006թ. այս տեղեկատուում [երկրների] տեղաբաշխումը»² (Թիվ 536, 07 BAKU 573, 1.C):

Ուշադրություն դարձրեք՝ ոչ թե «առաջարկներ պատրաստել՝ բարելավելու համար Ադրբեջանում ներդրումային կլիման, նվազեցնելու կոռուպցիան կամ տնտեսական ոլորտում ապահովելու մրցակցությունն ու ազատությունը», այլ «բարելավել» 2006թ. ՀԲ այս տեղեկատուում տպագրվելիք երկրների տեղաբաշխումը: Շատ հստակ հանձնարարական: Եվ նախարար Բաբանն անցավ գործի: Նրա աշխատանքը ՀԲ տեղի ներկայացուցիչների հետ այնքան հաջող ընթացավ, որ, ճիշտ է, ոչ թե 2006-ի, բայց արդեն 2007-ի ՀԲ հիշյալ տեղեկատուն էականորեն բարձ-

¹ Ուրախությամբ պետք է նշեմ, որ հաջորդ տարի ՀՖ «տնտեսության ազատությունը» տեղեկատուն շտկեց Հայաստանի պարագայում թույլ տված սխալները (այն նորից գնահատվեց որպես Հարավային Կովկասի ամենաազատ երկիրը, տե՛ս [5]-ի ռուսերեն հրատարակության հետգրությունը): Մեղմվեցին նաև Վրաստանին տրված անհիմն բարձր գնահատականները: Ցավոք, նույնը չենք կարող ասել ՀԲ «*Doing Business*» տեղեկատուի մասին:

² «President Aliyev was reportedly not happy with Azerbaijan's 2005 World Bank "Doing Business" report ranking and ordered Economic Development Minister Babayev to prepare recommendations to improve the ranking for the 2006 report».

րացրեց Ադրբեջանի տեղը վարկանիշային սանդղակում: Դե, իսկ 2008-ին տեղի ունեցավ աներևակայելին¹. այդ տարվա ՀԲ «*Doing Business*» տեղեկատուն Ադրբեջանը գնահատեց որպես աշխարհի թիվ մեկ երկիր տնտեսական ոլորտում բարեփոխումների համար: Այս ամենը, հավանաբար, չափազանց ոգևորիչ էր նախարար Բաբանի համար: Ինչպես նշել էինք վերը, նա նույնիսկ իրեն թույլ տվեց մատ թափ տալ «անհասկացող» ԱՄՆ փորձագետների վրա՝ դժգոհելով, որ վերջիններս պնդում են ներկայացնել երկրում սղաճի իրական չափը, վարել պատասխանատու ֆինանսական քաղաքականություն, սանձել պետական ծախսերը կամ գոնե տպագրել Ադրբեջանին նվիրված ԱՄՆ հաշվետվությունները՝ օրինակ բերելով «հասկացող» ՀԲ-ին:

Ստեղծված իրադրությունն այնքան ճշացող էր, որ Բաբվում ԱՄՆ դեսպանը 2008թ. սեպտեմբերի 9-ին տազնապաճ շտապում է հայտնել իր ղեկավարներին, որ, «ճիշտ է, ՀԲ «*Doing Business*» հաշվետվությունում Ադրբեջանի առաջխաղացումը սպասելի էր՝ հատկապես այստեղ ձեռնարկված միջոցներից հետո, բայց միևնույն է, ՀԲ-ի կողմից Ադրբեջանի հռչակումը որպես տնտեսական բարեփոխումների գծով աշխարհի թիվ մեկ երկիր, այստեղ շատերին զարմացրեց... Դեսպանությունն ուշադիր կզննի այս հաշվետվությունը՝ դրա տպագրումից հետո և հավելյալ տեղեկատվություն կտրամադրի՝ լրացուցիչ վերլուծություն իրականացնելուն պես» (Թիվ 1093, 08 BAKU 845, 9.C): Ցավոք, չգիտեմ՝ պահպանե՞ց իր այս վերջին խոստումը դեսպան Դերսը, թե՞ ոչ. *Wikileaks*-յան հաղորդագրություններն այս մասին լռում են: Բայց գիտեմ հետևյալը:

Նախ, սահմանափակվել միայն իշխանությունների կողմից սղաճի և այլ հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների կեղծումների մասին շարունակ կրկնվող գանգատներով՝ առանց այս գործելակերպի դրդապատճառների վերլուծության; խոսել Ադրբեջանում «էնդեմիկ» կոռուպցիայի մասին և, այնուամենայնիվ, «ըմբռնումով» մոտենալ երկրում բիզնեսի համար բարձր գրավչության մասին պնդումներին և հրապա-

¹ Կլինեք աներևակայելի, եթե չլինեք 2007-ի ՀԲ և ՀՖ տեղեկատուներում Վրաստանի հետ կատարվածը:

րակումներին; նշել ադրբեջանական մանաթի արհեստածին բարձր փոխարժեքը, դրա հանդեպ հասարակությունում վստահության բացակայությունը, գունազարդ նկարագրել այն հերթերը, որոնք գոյացան բանկերում և տարադրամի ավտոմատներում 2009-ի սահմանադրական հանրաքվեի օրերին՝ գնահատական չտալով բուն հանրաքվեի վտանգավոր արդյունքներին, ողջ տարածաշրջանի համար դրանց կործանարար հետևանքներին; խոսել ադրբեջանական «օկուպացված» տարածքների մասին՝ առանց քիչ թե շատ հիմնավոր պատկերացում կազմելու այս տարածքների պատմական և իրավաբանական կարգավիճակը սահմանող նյութերին և փաստերին, լրության մատնելով Կասպիցի 25%-ի բռնագավթումն Ադրբեջանի կողմից, այս գավթումը սահմանադրորեն ամրագրելու փաստը. այս ամենը (և ոչ միայն) վկայում են Ադրբեջանի շուրջ ստեղծված երկակի ստանդարտների ու փարիսեցիության հեղձուցիչ մթնոլորտի մասին:

Այս մթնոլորտում տեղի ունեցան շատ ավելի աներևակայելի բաներ, քան ՀԲ «*Doing Business*»-ի 2008-ի Ադրբեջանի գնահատականը: Ողջ աշխարհի աչքի առջև զանգվածային կաշառքների և լոբբինգի շնորհիվ Ադրբեջանն ընտրվեց ՄԱԿ ԱԽ ոչ մշտական անդամ, այն էլ արևելաեվրոպական երկրների քվոտայով (Գ. 5): Շլացած ադրբեջանական նավթադոլարների փայլից, որոնց պսպղունությունը երաշխավորված էր *Moody's*, *Fitch* և այլ վարկանիշային ընկերությունների գնահատականներով, ՀԲ «*Doing Business*» տեղեկատուների տվյալներով, եվրոպական մի երկիր Ադրբեջանին փոխանցեց արդեն դատապարտված ստոր մարդասպանին՝ հետագա հերոսացման և փառաբանման համար: Չհանդիպելով միջազգային հանրության և ոչ մի հստակ ձևակերպված հակազդեցության՝ ադրբեջանական քարոզչությունն ընդունեց նախնադարյան երանգ: Եվ ահա 21-րդ դարում մի երկրի նախագահը թշնամի է հայտարարում հարևան մի ողջ ազգի: Այն ազգին, որը հանդիսանում էր Ադրբեջանական ԽՍՀ երկրորդ տիտղոսակիր ազգը, որն օգնեց կայանալ այս երկրին, հարստացրեց նրա մշակույթը, շենացրեց նրա քաղաքները:

Եվ հետո: Վերը հիշատակվող *Wikileaks*-յան հաղորդագրություններից ակամա տպավորություն կարող է ստեղծվել, որ Ադրբեջանում ԱՄՀ և այլ ՄՖԿ-ների փորձագետներն այդպես էլ թերացան ընկալել ԱԶԳ «հիմնական նավթի» մեկնարկային փուլում Ադրբեջանի իշխանական օղակներում ընթացող պրոցեսների էությունը: Այո, կոռուպցիան Ադրբեջանում «էնդեմիկ» է: Այո, իշխանական վերնախավը 2005-ի վերջին պատրաստվում էր նավթային գերշահույթների յուրացման «դժվարին գործին»: Այո, պետական *SOCAR*-ը չի հրապարակել (և չի հրապարակում) իր շահույթների ու դրանց շարժի մասին տվյալները: Այո, ԱՀ իշխանական օղակները տարված էին (և տարված են) պոպուլիստական հայտարարություններով, պոպուլիստական սոցիալական, ֆինանսական, նույնիսկ ռազմական քաղաքականություններ վարելով: Այս ամենը ճիշտ է և միանգամայն իրավացիորեն հարուցում էր նշված փորձագետների մտահոգությունը: Սակայն, կարծում ենք, որ ԱՀ իշխանություններն այստեղ շատ ավելի ռացիոնալ ու հետևողական են, քան դա կարելի էր կարծել: Այլ խոսքերով, ՀՆԱ, ՄԳԻ և սղաճի իրական չափերի քողարկումը, դրանց և այլ մակրոտնտեսական ցուցանիշների կեղծումներն ամեննին էլ ադրբեջանական իշխանությունների քմահաճույթը չեն: Ոչ էլ պրոֆեսիոնալ ունակությունների բացակայության վկայություն, անփութության կամ չկամության հետևանք: Սա լավ մտածված ու համակարգված ծավալուն պետական ծրագրի անքակտելի բաղադրիչ է, որը կոչված է սպասարկելու «Ալիևի դոկտրինի» հիմնարար դրույթները, Ալիևյան կլանի իշխանության հարատևության խնդիրը: Զեղծարարությունը՝ պատմությունից մինչև մակրոտնտեսություն, ժողովրդագրությունից մինչև ռազմական ծախսեր, ոչ միայն ԱՀ իշխանությունների որդեգրած գործելակերպն է, այլև այս իշխանության բուն էությունը:

ԱՄՆ ԿՀՎ՝ Ադրբեջանի մակրոտնտեսական և ընդհանուր բնույթի ցուցանիշները համարժեք համատեքստում ընկալելու համար անհրաժեշտ է դրանք համադրել այլ աղբյուրի տվյալների հետ: Բանն այն է, որ ԱՄՀ (ինչպես նաև ՄԱԿ, ՏՀԶԿ և ՀԲ) վերը բերված ցուցանիշների ճնշող

մեծամասնությունը հիմնվում է ազգային պաշտոնական վիճակագրական տվյալների վրա՝ անխուսափելիորեն արտացոլելով վերջիններիս բնորոշ թե՛ դրական, թե՛ բացասական առանձնահատկությունները: Այսօրվա դրությամբ բաց աղբյուր հանդիսացող և տասնամյակների փորձ ունեցող այլընտրանքային լուրջ աղբյուր կարող են լինել միայն ԱՄՆ ԿՀՎ տվյալների գրադարանը և *World Factbook* տեղեկատուները: Ստորև դիտարկվում են Ադրբեջանի սոցիալ-տնտեսական ոլորտի ընդհանուր ցուցանիշները՝ համաձայն ԿՀՎ *World Factbook* տեղեկատուների 1992-2011թթ. տպագիր տեղեկատուների և կայքի՝ 2012 և 2013թթ. գնահատականների համար¹:

Համաձայն ԿՀՎ *World Factbook* 2011թ. տեղեկատուի, 2011թ. հուլիսի գնահատականով Ադրբեջանի բնակչությունը կազմել է 8.37 մլն մարդ, բնակչության աճի 0.846% տեմպով: 2010թ. Ադրբեջանի աշխատուժը կազմել էր 5.933 մլն մարդ, ընդ որում, գյուղատնտեսական սեկտորում զբաղված էր աշխատուժի 38.3%-ը, արդյունաբերությունում՝ 12.1%-ը և ծառայությունների ոլորտում՝ 49.6%-ը: Գործազուրկների մասնաբաժինը 2010թ. կազմել էր աշխատուժի 1.0%-ը (2009թ.՝ աշխատուժի 0.9%-ը)²: Ինչպես նշել էինք մեր նախորդ ուսումնասիրություններում [3, 4], ԿՀՎ այս գնահատականներն էականորեն տարբերվում են պաշտոնական Բաքվի և ԱՄՀ, ՀԲ ՄԱԿ ԺԴ ու այլ կազմակերպությունների տվյալներից: Ըստ ԿՀՎ գնահատականների՝ զինված ուժերում ծառայելու տարիքի (18-49) տղամարդկանց թվաքանակն Ադրբեջանում 2010թ. կազմել էր 2.354 մլն: Ամեն տարի զինված ուժերում ծառայելու տարիք է մտնում մոտ 77 հազ. տղամարդ: ԿՀՎ և այս տվյալներն էականորեն տարբերվում են պաշտոնական Բաքվի տվյալներից (այս մասին ավելի մանրամասն տե՛ս Հավելված 8, ՀՑ.6-ում):

¹ <https://www.cia.gov/library/publications/the-world-factbook/geos/aj.html>

² Այդպես է բնագրում: Սա ակնհայտ վրիպակ է, քանի որ այս ցուցանիշներն էականորեն տարբերվում են անգամ պաշտոնական Բաքվի արդեն զգալիորեն նվազեցված ցուցանիշներից (տե՛ս Նկար 3.15):

ԿՀՎ-ն Ադրբեջանի ռազմական ծախսերն ուղիղ կերպով չի գնահատում արժանահավատ տվյալների բացակայության պատճառով: Այս հարցն ավելի մանրամասն դիտարկվում է Գ. 5-ում:

Ադրբեջանի ըստ գնողունակության շտկված (*purchasing power parity*) ՀՆԱ-ն կազմել էր \$90.79 մլրդ՝ 2010թ. ԱՄՆ դոլարով (2010թ. գնահատական: 2009թ.՝ \$86.47 մլրդ, 2008թ.՝ \$79.11 մլրդ): Ըստ գնողունակության՝ ՀՆԱ իրական աճը կազմել էր 5%, իսկ մեկ շնչին ընկնող ըստ գնողունակության ՀՆԱ-ն կազմել էր \$10.9 հազար (2010թ. գնահատական: 2009թ.՝ \$10.5 հազար, 2008թ.՝ \$9.7 հազար): Ընդ որում, գյուղատնտեսական սեկտորի մասնաբաժինը ՀՆԱ գոյացման մեջ կազմել էր 5.2%, արդյունաբերությանը՝ 60%¹, իսկ ծառայությունների ոլորտինը՝ 34.8%: Արդյունաբերական արտադրանքի աճի տեմպերով 2010թ. Ադրբեջանն աշխարհի 167 երկրների մեջ զբաղեցրել էր 123-րդ տեղը՝ 2.6% ցուցանիշով (2010թ. գնահատական): Նկատենք, որ համաձայն նույն աղբյուրի, Հայաստանն այս ցուցանիշով էականորեն առաջ է Ադրբեջանից և զբաղեցնում է 40-րդ տեղը՝ 8% ցուցանիշով:

Ֆիքսված (գրոս) ներդրումները կազմել էին Ադրբեջանի ՀՆԱ 16.9%-ը (աշխարհի երկրների 124-րդ կարգային տեղը): 2010թ. գնահատականով Ադրբեջանի պետությունների եկամտային մասը կազմել է \$6.837 մլրդ, ծախսային մասը՝ \$14.66 մլրդ, իսկ բյուջեի դեֆիցիտը կազմել է ՀՆԱ 0.8%-ը: Ընդ որում, հարկումները և եկամուտները կազմել են ՀՆԱ 12.6%-ը, հանրային պարտքը՝ ՀՆԱ 4.6%-ը (2009թ.՝ 6.7%)²: ԿՀՎ այս գնահատականների էական տարբերությունը և՛ ԱՄՆ, և՛ պաշտոնական Բաքվի տվյալներից ավելի մանրամասն դիտարկվում է հաջորդ գլխում:

Կենտրոնական բանկի զեղչման դրույքը (*discount rate*) 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել էր 2% (8%՝ 2008թ.): Համաձայն ԿՀՎ փորձագետների, Ադրբեջանի համար այն համընկնում է վերաֆինանսավորման դրույքի հետ: Ընդհանրապես, երկրի ԿԲ զեղչման դրույքը՝ ըստ

¹ Ներառյալ նավթային ոլորտը:

² ԿՀՎ կայքի 2012թ. հունվարի տվյալներով՝ այս ցուցանիշները կազմում էին 5.2% (2009թ. համար՝ 8.9%):

ԿՀՎ մեթոդաբանության, երկրի կոմերցիոն և դեպոզիտար բանկերին ԿԲ-ի կողմից տրամադրված միջոցների տարեկան միջինացված դրույքաչափն է: ԿՀՎ կայքէջում 2011թ. դեկտեմբերին այս ցուցանիշներն Ադրբեջանի համար թարմացվել են: 2010թ. ԿԲ զեղչման դրույքը կազմել է 3%:


Առևտրային բանկերի վարկավորման հիմնական տոկոսադրույքը 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել էր 21% (2009թ.՝ 20.03%, 2008թ.՝ 19.76%): Այսպիսով, 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ադրբեջանի առևտրային բանկերի վարկավորման հիմնական տոկոսադրույքի և ԿԲ զեղչման դրույքի տարբերությունը կազմել էր 18% (2009թ.՝ 18.03%, 2008թ.՝ 11.76%): Այս շոշափելի մարժան պարարտ հող էր ստեղծել 2008-2011թթ. ընթացքում Ադրբեջանի բանկային ոլորտի զարգացման համար: Միևնույն ժամանակ, այս հանգամանքը նպաստում է ածխաջրածինների ոլորտում դրամային հոսքերի անթափանցիկությանը, կոռուպցիոն ռիսկերի մեծացմանը և ոչ նավթային իրական սեկտորում զարգացման համար միջոցների սղությանը¹: ԿՀՎ փորձագետները չեն գնահատել Ադրբեջանի հանրային արժետոմսերի շուկայական արժեքը (*Market value of publicly traded shares*)՝ վերջինիս գրեթե բացակայության պատճառով:

Արտարժույթով և ոսկով Ադրբեջանի պահուստները 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գնահատվել էին \$6.409 մլրդ (\$5.364 մլրդ՝ 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ)²: Արտաքին պարտքը 2010թ. դեկ-

¹ Համեմատության համար ասենք, որ Հայաստանի պարագայում 2011թ. հոկտեմբերի սկզբի դրությամբ ԿԲ զեղչման դրույքի մասին ԿՀՎ տվյալների գնահատականը բացակայում էր, իսկ 2008թ. վերջի դրությամբ այն գնահատվել էր 7.25%: Հայաստանի առևտրային բանկերի վարկավորման հիմնական տոկոսադրույքը 2010թ. վերջի դրությամբ գնահատվել էր 19.2% (2009թ. վերջի դրությամբ՝ 18.76%): Հայաստանի առևտրային բանկերի վարկավորման հիմնական տոկոսադրույքը 2008թ. վերջի դրությամբ կազմել էր 17.05%: Այսպիսով, նշված տարբերությունը 2008թ. վերջին Հայաստանի համար կազմել էր 9.75%, Վրաստանի համար՝ 13.24%: Միևնույն ժամանակ, ՌԴ պարագայում այս տարբերությունը կազմել էր 6.56%, Թուրքիայի համար՝ 6%: Նշված հանգամանքը վկայում է Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի բանկային համակարգերին բնորոշ անհամամասնությունը («բանկային կապիտալիզմ»):

² Պետական ռեզերվներից զատ, ԱՆՊՀ տարադրամի ռազմավարական պաշարը (այսպես կոչված «Ապագա սերունդների ֆոնդը») 2010թ. կազմել էր \$22.8 մլրդ (տե՛ս Գ. 2, բաժին 2.4 և վերը՝ Նկար 3.10):

տեմբերի 31-ի դրությամբ կազմել էր \$3.221 մլրդ (\$3.934 մլրդ՝ 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ): 2010թ. ադրբեջանական մանաթի միջին փոխարժեքը կազմել էր \$0.8035: Հիմնվելով ԱՀ Կենտրոնական բանկի տվյալների գրադարանի վրա՝ Նկար 3.16-ում պատկերված է 2009-12թթ. ընթացքում ԱՀ տարադրամային ռեզերվային պահուստների դինամիկան (մլրդ \$):



Աղբյուրը՝ <http://www.cbar.az/pages/statistics/special-standarts-publication/international-reserves-wo-oil-funds/>

Կրթական ծախսերը կազմել են երկրի ՀՆԱ 2.8%-ը (2009թ. գնահատական, միակ հասանելի գնահատականը 2011թ. դեկտեմբերի դրությամբ): Այս ցուցանիշով Ադրբեջանն աշխարհի 163 երկրների մեջ զբաղեցրել էր 140-րդ տեղը և զիջում էր Թուրքիային՝ 136-րդ կարգ, ՀՆԱ 2.9% և Հայաստանին՝ 133-րդ կարգ, ՀՆԱ 3%:

Եզրակացություններ

- ԱՀ արտաքին առևտուրը երկրի ՀՆԱ գոյացման հիմնական միջոցն է: Ճշգրտորեն արտացոլելով ԱՀ մոնոտոնտեսական համակարգի բնույթը՝ այն ծայրահեղ անհամաչափ է: ԱՀ գոյության առաջին 17 տարիների ընթացքում արտաքին առևտրի շրջանառությունը տատանվել է մոտ \$1 մլրդ-ի սահմաններում: 2008-ին այն կտրուկ աճում է՝ կազմելով \$40.5 մլրդ, որից հետո անկում է ապրում և ներկայումս գտնվում է մոտ \$15-19 մլրդ-ի սահմաններում:
- Արտաքին առևտրի հենքը կազմում են ածխաջրածինների, առաջին հերթին՝ հում նավթի արտահանումները: 1996-2006թթ. ժամանակահատվածում դրանց բաժինն ընդհանուր արտահանումներում չի իջել 60% մակարդակից, իսկ ԱԶԳ «մեծ նավթի» փուլի մեկնարկից հետո 2006-11թթ. ընթացքում այն կազմել է 95%: Արտահանվող ոչ ածխաջրածնային ապրանքներն են հիմնականում միրգը և շաքարը (ընդհանուր արտահանումների ընդամենը 5%): Ներկրվող տեսականու առաջին եռյակում են մարդատար ավտոմեքենաները, ցորենը և ծխախոտի գլանակները:
- 1996-2011թթ. ժամանակահատվածում Ադրբեջանի թիվ մեկ առևտրային գործընկերն էր Իտալիան: 2006թ. արտահանումներն Իտալիա կազմել էին մոտ \$3.0 մլրդ կամ այդ տարի Ադրբեջանից աշխարհի այլ երկրներ (բացի ԱՊՀ երկրներից) արտահանումների մոտ 50%-ը: 2011-ին այս ցուցանիշները կազմել են \$9.34 մլրդ և 40%: Ադրբեջանից հում նավթի արտահանումների ռեկորդային՝ 2008 թվականին դրանք կազմել էին \$19.22 մլրդ և 41.2% համապատասխանաբար:
- Բացի Իտալիայից, 2006-11թթ. ժամանակաշրջանում Ադրբեջանի առևտրային հիմնական գործընկերների հնգյակում մեկ տարի բացառությամբ հայտնվում են ՌԴ-ն և ԱՄՆ-ը, երկուսն էլ բացառությամբ՝ Ֆրանսիան և Իսրայելը, 3 անգամ՝ Թուրքիան: Այս երկրների հետ առևտրից գոյացած եկամուտները կազմում են Ադրբեջանի տնտեսական համակարգի ծավալային աճի հիմքը:

- Նկատելի է Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի երկրների հետ Ադրբեջանի առևտրի շրջանառության աճը: Չինաստանը 2006-07թթ. 14-15-րդ տեղից Ադրբեջանի հետ առևտրային իր շրջանառության ծավալներով 2010-ին զբաղեցրել է 8-րդ տեղը: Ինդոնեզիան առաջին 20-յակում առաջին անգամ հայտնվում է 2007-ին (11-րդ տեղը): Հաջորդ տարիներին այն արդեն կայունորեն զբաղեցնում է 8-9-րդ տեղը: Համանման է և Մալայզիայի կարգային տեղի փոփոխությունը:
- Ադրբեջանից ածխաջրածինների արտահանումների ոլորտում կոռուպցիոն բաղադրիչը 2010-11թթ. ընթացքում կազմել է արտահանումների ընդհանուր ծավալի մոտ 25%-ը՝ տարեկան: ԱԶԳ «մեծ նավթի» փուլի մեկնարկից հետո 2006-11թթ. ընթացքում ածխաջրածինների արտահանումների ոլորտի կոռուպցիոն բաղադրիչը գումարայինը կազմել է մոտ \$ 31.0 մլրդ, այսինքն՝ ԱԶԳ նավթադաշտի շահագործումից 2001-2016թթ. ընթացքում ակնկալվող շահույթի (\$200 մլրդ) մոտ 16%-ը:
- 1992-2011թթ. ընթացքում Ադրբեջանից արտահանումներն օֆշորային գոտիներ կազմել են մոտ \$2.1 մլրդ կամ աշխարհի երկրների հետ (բացի ԱՊՀ երկրներից) Ադրբեջանի ողջ արտահանումների 1.6%-ը: Մալթան այստեղ գրավում է առաջին տեղը՝ \$861 մլն, որին հաջորդում է Վիրջինյան կղզիները (ԱՄՆ)՝ \$610 մլն: 1992-ին արտահանումներն օֆշորային գոտիներ կազմել էին ընդհանուր արտահանումների մոտ 9%-ը (\$73 մլն՝ դեպի Կիպրոս): 2008-ին ֆինանսական ճգնաժամի հետևանքով դրանք նվազում են: 2011-ին արտահանումներն օֆշորային գոտիներ կազմել են արդեն մոտ 4% (\$807 մլն)՝ նախորդ տարվա համեմատ աճելով գրեթե 3.5 անգամ:
- Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների մասին (ՀՆԱ, ՍԳԻ, սղաձ, պետբյուջե) պաշտոնական տվյալներն Ադրբեջանում իշխանությունների կողմից ենթարկված են զանգվածային կեղծումների: Դրանք կրում են միտումնավոր և համակարգված բնույթ ու հանդիսանում են երկրում բռնատիրական համակարգի ստեղծման և Ադրբեջանի ռազմականացման պետական ծրագրի անքակտելի բաղադրիչ:

Աղբյուրներ և գրականություն

1. International Monetary Fund, World Economic Outlook Database, September 2011¹.
2. US CIA. World Factbooks. 1992 - 2011.
3. Մարջանյան Ա., Ադրբեջանական Հանրապետություն. «վիրտուալ» ժողովրդագրության առանձնահատկությունները, Երևան, «Նորավանք» ԳԿՀ, 2012թ.²:
4. Մարջանյան Ա., Հարավային Կովկասի ժողովրդագրությունը XXI դարի վերջին, «Նորավանք» ԳԿՀ, «21-րդ ԴԱԸ», թիվ 4(44), 2012թ. էջ 20-44³:
5. Մարջանյան Ա., «Հերիթեջ ֆաունդեյշնի» տնտեսական ազատության տեղեկատուի շուրջ, «21-րդ ԴԱԸ», թիվ 3 (17), 2007թ.⁴: *Марджанян А.*, «О ежегодниках индексов экономической свободы «The Heritage Foundation», «21-й ВЕК», № 1 (7), 2008г.⁵.

¹ <http://www.imf.org/external/pubs/ft/weo/2011/02/weodata/index.aspx>

² <http://noravank.am/upload/pdf/Ara%20Marjanyan%20book.pdf>

³ http://www.noravank.am/upload/pdf/2.%20Ara%20Marjanyan%2004_2012.pdf

⁴ http://www.noravank.am/upload/pdf/265_am.pdf

⁵ http://www.noravank.am/upload/pdf/333_ru.pdf

ԳԼՈՒԽ 4. ԱՂԲԵԶԱՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ

4.1. Ինչպիսի՞ն է ԱՀ պետբյուջեն

Ինչպես և ԱՀ բնակչության թվաքանակի դեպքում [1], «ինչպիսի՞ն է Աղբեջանական Հանրապետության պետական բյուջեն» պարզ հարցը չունի պատրաստի ու պարզ պատասխան: Այստեղ կրկին պահանջվում է համադրել տվյալների մի քանի աղբյուր, քանի որ ԱՀ պետբյուջեի պաշտոնական գնահատականները խիստ տարբերվում են այլ՝ հեղինակավոր աղբյուրների գնահատականներից [2]:

Այսպես, համաձայն ԱՀ Վիճակագրական պետական կոմիտեի (ԱՎՊԿ)¹ և ԱՀ Ֆինանսների նախարարության², 2011թ. Աղբեջանի պետական բյուջեն *պրոֆիցիտային* էր: Այսինքն՝ բյուջեի եկամտային հատվածը գերազանցում էր ծախսային հատվածին մոտ 305 մլն մանաթով (կամ \$386 մլն)³, ինչը կազմում էր այդ տարի հանրապետության ՀՆԱ 0.6%-ը: Այս գնահատականը կրկնում է ԱՊՀ վիճակագրական ծառայությունը⁴: Մասնակիորեն՝ նաև Արժույթի միջազգային հիմնադրամը (ԱՄՀ, *IMF*), Համաշխարհային բանկը (ՀԲ, *WB*) և Համաշխարհային տնտեսական ֆորումը (ՀՏՖ, *WEF*):

Մինչդեռ, համաձայն ԱՄՆ ԿՀՎ գնահատականի⁵, նույն 2011-ին ԱՀ պետական բյուջեն ոչ թե պրոֆիցիտային էր, այլ հակառակը՝ *դեֆիցի-*

¹ <http://www.azstat.org>

² <http://www.maliyye.gov.az>

³ Այստեղ և ստորև ԱՄՆ դոլար/ԱՀ մանաթ բոլոր փոխարկումներն իրականացված են ԱՀ ԿԲ այդ տարվա միջին տարեկան պաշտոնական փոխարժեքով:

⁴ <http://www.cisstat.com>

⁵ <https://www.cia.gov/library/publications/the-world-factbook/>

տային: Ընդ որում, բյուջեի դեֆիցիտը կազմել էր ոչ ավելի, ոչ պակաս՝ \$11 մլրդ, ինչը կազմում էր այդ տարի հանրապետության ՀՆԱ 18.7%-ը: Նման գնահատականներ են բերում նաև արևմտյան «դասական» տնտեսական մոդելով ու արժեհամակարգով առաջնորդվող մի շարք կազմակերպություններ: Օրինակ, ԱՄՆ *Հերիթըջ ֆաունդեյշն (HF)* կազմակերպության «տնտեսական ազատության» տեղեկատուները, Լոնդոնի էկոնոմիկայի դպրոցի (*LSE*) հրապարակումները և այլն:

Գնահատականների այսպիսի էական տարբերությունը, դրանց ուղղակի հակադիր բնույթն ամենևին էլ 2011թ. առանձնահատկությունը չեն, այլ բնորոշ են անցած 8 տարիների ԱՀ պետբյուջեների գնահատականներին: Մա բացառիկ երևույթ է, և այս արտառոց վիճակը կարոտ է բացատրության: Առավել ևս, որ հարցը զարմանալիորեն քիչ է արժանանում վերլուծական հանրության ուշադրությանը: Ավելին, շատ դեպքերում այն կարծես թե անտեսվում է, մատնվում լռության:

4.2. Ինչո՞ւ են ԱՀ պետբյուջեի գնահատականներն այսքան տարբեր

ԱՀ պետբյուջեի մասին գնահատականների այսօրինակ հակասական ու արտառոց վիճակն առաջին հայացքից կարելի է բացատրել նրանով, որ Ադրբեջանում, ըստ էության, բացակայում է պետական բյուջեի մասին *պաշտոնական, հասանելի, հավաստի և ամբողջական* տեղեկատվությունը: Որպես այդպիսին, հասկանալի է, չեն դիտարկվում ադրբեջանական ու այլ տպագիր և էլեկտրոնային լրատվամիջոցները, քանի որ դրանք պաշտոնական աղբյուր չեն, շատ դեպքերում՝ ոչ էլ հավաստի են: Չենք դիտարկում նաև ԱՀ պետբյուջեի ծավալուն պաշտոնական բուն փաստաթղթերը: Նախ, այն պարզ պատճառով, որ դրանք բաց չեն, երբևէ չեն հրապարակվել ամբողջությամբ, ուստի և հասանելի չեն արտաքին աշխարհին՝ բաց հոլովակներով: Այս փաստաթղթերից վերցված որոշ ընդհանրացված ցուցանիշներ կարելի է գտնել միայն Բաքվում ԱՄՆ դեսպանության գաղտնիության տարբեր աստիճաններ ունեցող մի շարք հաղորդագրություններում՝ առ այսօր հրապարակված *Wikileaks* կայքէջի

կողմից¹: Եվ անգամ դրանցում հանդիպում ենք անընդհատ կրկնվող գանգատների, թե Բաքվում ԱՄՆ դեսպանությանը հասանելի դարձած ԱՀ պետբյուջեի փաստաթղթերն ընդհանրական են, զուրկ բովանդակային մանրամասներից: Մովորաբար բերվում են ընդամենը մոտ մեկ տասնյակ ընդհանրացված թվեր՝ առանց դրանց հիմնավորումների, առանց ծախսային հոդվածների քիչ թե շատ մանրամասն նկարագրի, առանց հոդվածների բացվածքի՝ ըստ ճյուղային նախարարությունների ու գերատեսչությունների և այլն: Նույնը ստիպված ենք ասել և պաշտոնական «*Azerbaijan*» թերթում² տեղ գտած՝ պետբյուջեին նվիրված սակավաթիվ ու կցկտուր հրապարակումների մասին:

Հատկանշական է, որ առաջին դեպքը չէ, երբ Ադրբեջանի սոցիալ-տնտեսական համակարգի որևէ կարևորագույն տարրի, այս պարագայում՝ երկրի պետական բյուջեի մասին հավաստի ու ամբողջական տվյալները բացակայում են թե՛ այդ երկրում, թե՛ այդ երկրից դուրս: Իսկ միջազգային և այլ կազմակերպությունների գնահատականներն իրարամերժության աստիճան հակասական են: Այդպիսին է իրավիճակը ԱՀ ժողովրդագրական վիճակագրության պարագայում, երբ «որքա՞ն է Ադրբեջանի բնակչությունը» պարզ հարցի պատասխանը պահանջում է ոչ թե մեկ հայացք՝ ձգված որևէ հավաստի տեղեկատուի էջերին, այլ առանձին ուսումնասիրություն [1, 14]: Ինչպես կտեսնենք հաջորդ գլխում, միանգամայն նույնն է իրավիճակը նաև ԱՀ ռազմական ծախսերի դեպքում: «Տեղեկատվական հասանելիության» և ինֆորմացիոն *բուլի* մեր օրերում աշխարհում դժվար է գտնել մեկ այլ երկրի օրինակ, որի հիմնարար կարևորության ցուցանիշների մասին հարցը պարուրված լինի անորոշության այսպիսի քողով, իսկ ստեղծված արտառոց իրավիճակը միջազգային կազմակերպությունների և մարմինների կողմից ընդունվի այսքան անտարբեր սառնասրտությամբ, որքան որ Ադրբեջանի պարագայում է:

¹ Բաքվում ԱՄՆ դեսպանության՝ ԱՀ պետբյուջեին և ռազմական ծախսերին առնչվող ու ստորև մեջբերվող կամ հիշատակվող հաղորդագրությունների բնագրերը բերվում են Հավելված 1-ում՝ մասնակի կրճատումներով: Բոլոր մեջբերվող հատվածների թարգմանությունները մերն են – *Մ.Մ.*:

² <http://www.azerbaijan-news.az/>

Միակ համեմատելի ու համադրելի (բոլոր իմաստներով) օրինակը, թերևս, Թուրքիայի միջուկային իրական կարողությունների գնահատման հարցն է: Եվ սա չարագույժ զուգադիպություն է Թուրքիայի ու Ադրբեջանի տարածաշրջանային հարևանների համար [3]:

Վերադառնալով ԱՀ պետական բյուջեի մասին հասանելի և ամբողջական տեղեկատվության շուրջ ստեղծված իրավիճակին՝ նշենք թեթև լավատեսության հիմք տվող մի հանգամանք: Ստեղծված արտառոց իրավիճակն իր ողջ անընդունելիությամբ, կարծես թե, սկսել է գիտակցվել նույնիսկ Ադրբեջանում: Գոնե որոշակի մասնագիտական խմբերի շրջանակում: Այսպես, հայտնի Բաց հասարակության ինստիտուտի (*Open Society Institute*) աջակցությամբ 2010-ից Բաքվում գործում է «կառավարությանը¹ մոտ կանգնած» ԱՀ Ազգային բյուջեի հանձնախումբը (*National Budget Group*)՝ իր *Budget.Az* ինտերնետային կայքով:

Հանձնախումբը հետևյալ կերպ է նկարագրում իր առջև ծառայած խնդիրը և առաքելությունը². «Ադրբեջանում ոչ միայն բացակայում է պետական բյուջեի մասին ինտերնետով հասանելի տեղեկատվությունը, այլև չկան այս հարցին նվիրված տպագիր պաշտոնական հրապարակումներ, ծախսային հոդվածների նորմատիվ փաստաթղթերի հրապարակումներ»: Նկարագրելով ստեղծված անմիխիթար վիճակը՝ կայքը շարունակում է. «Այս հարցում պաշտոնական [Բաքվի] տեսակետն այն է, որ պետբյուջեի պաշտոնական փաստաթղթերը չափազանց ծավալուն են, ու դրանց տեղակայումն ինտերնետ կայքերում իբր թե կբերի վերջիններիս ծանրաբեռնմանը, նույնիսկ կաթվածահար կանի դրանց աշխատանքը»: Բայց, «օրինակ, Ռուսաստանի Դաշնության 2011թ. պետական բյուջեի 3061 էջանոց պաշտոնական փաստաթղթի տեղակայումը բոլորովին էլ կաթվածահար չարեց ՌԴ Ֆինանսների նախարարության կայքը», հեզնորեն նկատում է *Budget.Az* կայքը: Եվ ընդհանրապես, «աշխարհում կան այնպիսի բաներ, ինչպիսին է փաստաթղթերի սեղմումը՝ .zip, .rar և այլ՝ քաջ հայտնի ձևաչափերով, ինչը «թեթևացնում» է համապատաս-

¹ Ավելի ճշգրիտ՝ ԱՀ Ֆինանսների նախարարությանը:

² <http://budget.az/budget/en/main?content=231>

խան *Ֆայլը* և դյուրինացնում անգամ ամենածավալուն փաստաթղթի ներբեռնումը»,- տեղեկացնում է կայքը:

Այստեղ չգիտես ինչի վրա զարմանաս՝ «պաշտոնական տեսակետի» ցինիկ տգիտությամբ, թե՞ *Budget.Az* փորձագետների միամիտ կիսահեզնական լրջության: Այնուամենայնիվ, անգամ այս աղբյուրը ԱՀ պետբյուջեի առնչությամբ ԱՎՊԿ կամ ԱՀ Ֆինանսների նախարարության տեղեկատվության համեմատ որևէ հավելյալ մանրամասն չի բերում: Իսկ *Budget.Az* կայքի «հրապարակումներ» և «վերլուծություններ» բաժինները հանգիստ սրտով կարելի է որակել որպես անբովանդակ:

Համաձայն երկրների բյուջեների բացության ինդեքսի (*OBI* 2010) հայտնի հրապարակումների, 2010-ին դիտարկված աշխարհի 72 երկրների մեջ ԱՀ բյուջեի «բացությունը» գնահատված է 43% կամ 52-րդ տեղը՝ «մասամբ բաց բյուջե» ունեցող երկրների խմբի նախավերջին տեղը¹: Վերջինը Բոսնիա-Ներցեգովինան էր (44%, տե՛ս Հավելված 6): Մասնավորապես, ԱՀ պետբյուջեի մասին պաշտոնական տեղեկատվությունում ներկայացված չեն երկրի ռազմական (պաշտպանական) ծախսերը: Դրանց տակ որոշակի հավանականությամբ և որոշ վերապահումներով պետք է հասկանալ «այլ ծախսեր» բյուջետային տողը: (Ի դեպ, ԱՀ «պաշտպանական ծախսերը» ուղիղ կերպով բերվում են միայն վերը նշված Ազգային բյուջեի հանձնախմբի կայքում²: Բայց այստեղ բերված թվերի արժանահավատության, ինչպես նաև այս կայքի իրական (կամա, թե՛ ակամա) առաքելության մասին մենք կխոսենք հաջորդ գլխում՝ ԱՀ ռազմական ծախսերի հարցը քննելիս):

¹ 2012թ. օգոստոսի դրությամբ *OBI* կազմակերպության վերջին հրապարակումը վերաբերում էր 2010թ.: Համաձայն *OBI* մեթոդաբանության, որքան բաց է տվյալ երկրի բյուջեն, այնքան մեծ է *OBI* 2010թ. ցուցչի արժեքը՝ արտահայտված տոկոսներով (0%-100%) և այնքան բարձր տեղ է զբաղեցնում տվյալ երկիրը «բյուջեի բացության ինդեքսի» վարկանիշային աղյուսակում: Առաջատարն այստեղ Հարավաֆրիկյան Հանրապետությունն էր՝ բյուջեի բացության ինդեքսի 92% ցուցանիշով, իսկ ԱՄՆ-ը զբաղեցնում էր 7-րդ տեղը՝ բյուջեի բացության 82% ցուցանիշով: Սա «լայնորեն բաց բյուջե» ունեցող երկրների խմբի վերջին տեղն է: ՌԴ-ն (60%), Թուրքիան (57%) և Վրաստանը (55%) *OBI* 2010թ. վարկանիշային աղյուսակում զբաղեցնում էին համապատասխանաբար 21-րդ, 29-րդ և 34-րդ տեղերը՝ բոլորը «մասամբ բաց բյուջե» երկրների խմբում: Հայաստանի պետական բյուջեն *OBI*-ն, ցավոք, չի դիտարկում (<http://internationalbudget.org>):

² <http://budget.az/budget/en/main?content=333>

Աղյուսակ 4.1

Ադրբեջանական Հանրապետության պետական բյուջեն, ԱՎՊԿ և ԱՀ Ֆինանսների նախարարության պաշտոնական տվյալներ

վն մանաթ	2005	2006	2007	2008	2009	2010	2011
Եկամտային մաս, այդ թվում	2,055.2	3,868.8	6,006.6	10,762.7	10,325.9	11,403.0	15,700.7
ԱԱՀ	599.9	737.8	1,179.2	1,910.9	2,012.8	2,082.5	2,222.7
Իրավաբանական անձանց շահութահարկ	355.4	1,360.5	2,457.7	2,862.3	1,329.2	1,429.9	2,134.0
Ֆիզ. անձանց շահութահարկ	317.4	407.3	588.6	627.2	581.9	590.2	715.7
Ակցիզային հարկ	141.0	187.4	402.9	486.9	485.1	514.9	480.2
Արտաքին տնտեսական գործունեության հարկումներ	205.2	139.3	293.2	449.7	418.1	291.8	433.1
Հանքարդյունահանման հարկ	53.5	100.2	123.2	147.7	121.9	130.1	129.8
Գույքահարկ	40.4	55.8	72.3	112.9	66.2	101.8	103.9
Այլ հարկեր	28.1	40.9	68.6	96.8	86.8	90.3	140.6
Հողահարկ	15.3	18.5	27.1	30.6	26.2	35.3	35.3
«Այլ մուծումներ»*	299.0	821.1	793.8	4,037.7	5,197.7	6,136.2	9,305.3
վն մանաթ	2005	2006	2007	2008	2009	2010	2011
Ծախսային մաս, այդ թվում	2,140.7	3,790.1	6,086.2	10,774.2	10,503.9	11,765.9	15,396.7
Տնտեսական ոլորտ	444.7	1,246.9	2,350.0	4,958.6	4,373.9	4,889.9	6,803.2
Սոցիալ-վշակության ոլորտ, այդ թվում.	843.3	1,049.7	1,670.3	2,312.5	2,763.0	2,901.4	3,447.0
կրթություն	372.5	479.1	723.0	979.7	1,147.9	1,180.8	1,268.5
առողջապահություն	115.3	162.0	257.2	346.2	402.4	429.2	493.2
սոցիալական պաշտպանություն**	304.9	341.5	594.8	846.4	1,054.4	1,123.0	1,495.4
վշակույթ, սպորտ, տեղեկատվություն և այլ***	50.6	67.1	95.3	140.2	158.3	168.4	189.9
Գիտություն	28.8	32.0	43.9	62.1	83.3	92.8	106.1
Դատա-իրավապահ համակարգ****	206.4	278.7	431.3	533.9	648.9	668.5	710.2
Օրենսդիր, գործադիր և պետական իշխանություն	123.9	142.8	198.8	252.4	289.7	303.0	281.9
Այլ ծախսեր	493.6	1,040.0	1,391.9	2,654.7	2,345.1	2,910.3	4,047.8
դեֆիցիտ (-), պրոֆիցիտ (+)	-85.5	78.7	-79.6	-11.5	-178	-362.9	304.5
Որպես ՀՆԱ %	0.7	ԳԲ	0.3	0.03	0.5	0.9	0.6

* ԱՀ Ֆինանսների նախարարության տեղեկատվությունում նշված է որպես «ոչ հարկային եկամուտ» (տե՛ս Հավելված 7, Աղյուսակ Հ7.2):

** 2012-ից աղբյուրում պետբյուջեի ծախսային հատվածում «սոցիալական պաշտպանություն» և «սոցիալական ապահովում» տողերը ներկայացված են առանձին (տե՛ս Հավելված 7):

*** 2012-ից աղբյուրում այս տողից առանձնացված է «սպորտը» (տե՛ս Հավելված 7):

**** ԱՀ Ֆինանսների նախարարության տեղեկատվությունում այս տողը նշված է որպես «պաշտպանության, արդարադատության և անվտանգության հաստատություններ» (տե՛ս Հավելված 7, Աղյուսակ Հ7.2):

Այսպիսով, փաստենք, որ ԱՀ պետբյուջեի մասին *հասանելի և պաշտոնական միակ աղբյուրները* ԱՎՊԿ-ն և ԱՀ Ֆինանսների նախարարության հրապարակումներն ու կայքերն են: Այս պաշտոնական տեղեկատվությունը բերվում է Հավելված 7-ում և ամբողջացվում Աղյուսակ 4.1-ում:

Համենայնդեպս, այս հանգամանքը չէ, որ ընկած է ԱՀ պետբյուջեի մասին, մի կողմից՝ ԱՄՆ ԿՀՎ, *Հերիթըջ ֆաունդեյշնի* և մի շարք այլ աղբյուրների, մյուս կողմից՝ պաշտոնական Բաքվի ու իր գործընկերների գնահատականների հակադրության հիմքում: Իրական պատճառն այստեղ շատ ավելի խորն է, թեև հենվում է ԱՀ պետբյուջեի անհավանականորեն պարզ, առաջին հայացքից՝ աննկատ կառուցվածքային առանձնահատկության վրա: Բայց իրական, բովանդակային առումով գնահատականների այս տարբերությունն ունի հիմնարար, գաղափարախոսական բնույթ և պայմանավորված է այն բանով, թե ինչպես է ընկալվում մեր օրերի Ադրբեյջանն՝ իր մոնոտոնտեսական կլանաօլիգարխիկ համակարգով, տարբեր արժեհամակարգային և աշխարհաքաղաքական հենք ունեցող երկրների, կառույցների և «ուժային կենտրոնների» կողմից:

4.3. ԱՀ պետբյուջեի առանձնահատկությունը (եկամտային հատված)

Հայտնի է, որ երկրի պետբյուջեի դասական կառուցվածքը ենթադրում է երկու մեծ հատվածների առկայություն՝ բյուջեի «եկամտային» և «ծախսային» հատվածներ: Ընդ որում, «եկամտային» հատվածը պետք է գոյանա երկրում իրականացված առևտրատնտեսական, գործարար և իրավասեփականատիրական գործունեության ողջ դաշտի հարկումներից և տուրքերից: Դրանք բոլորը կազմում են «նորմալ» երկրի պետբյուջեի եկամտային հենքը («հարկային բազան»), որն էլ հանդիսանում է երկրի բնականոն գործունեության հանրագումար արդյունքը: Այսպիսին է դասական արևմտյան տնտեսագիտական ու գաղափարախոսական մոտեցումը՝ ամրագրված սոցիալ-տնտեսական մշակույթի հիմնարար դրույթներում, սկսած դեռ Ադամ Սմիթի «Ժողովուրդների հարստության

պատճառների և բնույթի քննությունից» և վերջացրած «Կա միայն երկու անխուսափելի բան՝ մահը և հարկերը» ասույթը:

ԱՀ պետական բյուջեի պարագայում վերը նշված առանձնահատկությունն այն է, որ եկամտային հատվածում, բացի «հարկային բազայի» սովորական տողերից (շահութահարկ, ակցիզ, գույքահարկ, ԱԱՀ և այլն), առկա է ևս մեկ բյուջետային տող: Պետական բյուջեի՝ ԱՀ Ֆինանսների նախարարության հրապարակումներում այն ամոթխածորեն վերնագրվում է «ոչ հարկային եկամուտներ» (*non-tax revenues*), տե՛ս Հավելված 7, Աղյուսակ 27.2), իսկ ԱՎՊԿ հրապարակումներում՝ պարզապես «այլ մուծումներ» (տե՛ս Հավելված 7, Աղյուսակ 27.1): Առաջին հայացքից սա կարող է աննշան հանգամանք թվալ: Բայց իրականում այդպես չէ:

Բանն այն է, որ բյուջետային այս տողը քողարկում է ԱՀ Նավթային պետական հիմնադրամի (ԱՆՊՀ) եկամուտներից գոյացած դրամական որոշակի զանգվածի ներհոսքը երկրի պետբյուջեի եկամտային հատված (ԱՆՊՀ մասհանումներ, տե՛ս Գ. 2, Աղյուսակ 2.2): Եվ այստեղ ողջ հարցն այն է, որ դասական արևմտյան տնտեսագիտական և գաղափարախոսական մոտեցմամբ՝ այսօրինակ մուծումները չեն կարող դիտարկվել որպես երկրի պետբյուջեի իրական եկամուտ, քանի որ դրանք *գոյանում են պետական հարկային դաշտից դուրս, գտնվում են երկրի ֆիսկալ վերահսկման տակ միայն մասնակիորեն, կարգավորվում են ԱՀ օրենսդրական դաշտից միանգամայն անկախ՝ և ձևավորվում են ԱՀ նախագահի միանձնյա որոշումներով՝ հատուկ հրամանագրերի միջոցով ու հարմար պահին:*

Նշված կառուցվածքային առանձնահատկության մասին պատկերացում կազմելու համար դիտարկենք Աղյուսակ 4.1-ում մլն ադրբեջանական մանաթով բերված պետբյուջեի պաշտոնական ցուցանիշները 2005-11թթ. ժամանակահատվածի համար: Այստեղ չակերտների մեջ է առնված բյուջեի եկամտային հատվածի «այլ մուծումներ» տողը (կամ «ոչ


¹ Առանձին ընկերությունների և կոնսորցիումների հետ կնքված Արդյունքի բաշխման համաձայնագրերի դրույթներով:

հարկային մուծումներ» տողը՝ ԱՀ Ֆինանսների նախարարության տվյալներում, Հավելված 7, Աղյուսակ Հ7.2): Համադրելիության համար Աղյուսակ 4.1-ում պահպանվել է ԱՀ պետբյուջեի ներկայացման պաշտոնական այն ձևաչափը, որը գործում էր մինչև 2011թ. սեպտեմբերը: Դրա համաձայն՝ ծախսային հատվածի «մշակույթ, սպորտ, տեղեկատվություն և այլ» տողը ներառում էր «սպորտ» բյուջետային տողի ծախսերը: Տարանջատված այն ներկայացվում է միայն 2012թ. սկզբից: Իսկ «սոցիալական պաշտպանություն» տողը ներառում է ինչպես բուն սոցիալական պաշտպանությունը (անգլերեն տարբերակում՝ *social protection*), այնպես էլ սոցիալական ապահովության (*social security*) ծախսերը: Ծախսային հատվածի այս երկու հոդվածները պաշտոնական աղբյուրներում տարանջատված ներկայացվում են նույնպես 2012թ. սկզբից:

Ինչպես հետևում է Աղյուսակ 4.1-ից, ԱԶԳ նավթադաշտի շահագործման հիմնական փուլի մեկնարկից հետո (2006թ.) կտրուկ աճում են ԱՀ պետբյուջեի եկամտային և ծախսային հատվածները: 2005թ. դրանք կազմել էին մոտ 2.06 և 2.14 մլրդ մանաթ համապատասխանաբար (կամ մոտ \$2.24 և \$2.33 մլրդ՝ պաշտոնական փոխարժեքով): Իսկ 2011-ին դրանք արդեն կազմել էին 15.7 և 15.4 մլրդ մանաթ (կամ մոտ \$19.9 և \$19.5 մլրդ): Համաձայն պաշտոնական տվյալների, անցած 7 տարիների ընթացքում ԱՀ պետբյուջեն պրոֆիցիտային էր 2006 և 2011թթ., աննշան դեֆիցիտային՝ 2005-ին և 2007-10թթ. ընթացքում: Ընդ որում, դիտարկված ողջ ժամանակահատվածում ԱՀ պետբյուջեի պրոֆիցիտ/դեֆիցիտի բացարձակ արժեքը չի գերազանցել 365 մլն մանաթը (կամ 2010թ. ՀՆԱ մոտ 1.0%): 2011թ. ամռանը հայտնի դարձավ, որ 2012թ. ԱՀ պետական բյուջեի ծախսային հատվածը պլանավորվում էր 16.984 մլրդ մանաթ, իսկ եկամտայինը՝ 16.436 մլրդ մանաթ¹: Նախատեսվում էր, որ 2012թ. բյուջեն կլինի դեֆիցիտային՝ 548 մլն մանաթ, կամ 2012թ. համար պլանավորվող ՀՆԱ մոտ 1.3% չափով: Նշված բյուջետային պլանի հիմքում ընդունված էր ԱԶԳ դաշտից արդյունահանվող *Azeri Lights* նավթատե-

¹ <http://vestikavkaza.ru/news/politika/Parliament/47673.html>

սակի \$80 մեկ բարելի համար միջին տարեկան գինը: Սակայն 2011թ. դեկտեմբերին այս ցուցանիշները վերանայվեցին. 2012թ. պետբյուջեի ծախսային հատվածն ավելացվեց մինչև 17.072 մլրդ մանաթ, եկամտայինը՝ մինչև 16.438 մլրդ մանաթ, իսկ բյուջեի դեֆիցիտը հասցվեց մինչև 634 մլն մանաթ կամ ծրագրվող ՀՆԱ 1.5%:



Աղբյուրները՝ <http://www.azstat.org/publications/azfigures/2012/en/020en.shtml>
և սեփական հաշվարկներ

Վերջապես, 2012թ. մայիսին պաշտոնապես հայտարարվեց¹, որ նորից են վերանայվել 2012թ. պետբյուջեի ցուցանիշները՝ ծախսային և եկամտային հատվածները զուգահեռաբար ավելացվել են ևս 600 մլն մանաթով և հասցվել 17.672 և 17.038 մլրդ մանաթի համապատասխանաբար: Վերանայման հիմքում ընկած էր այն հանգամանքը, որ ելնելով նավթային ստեղծված կոնյունկտուրայից՝ վերանայվել էր բյուջեի հիմքում ընկած *Azeri Lights* նավթատեսակի գինը, որը հասցվել էր մինչև \$100/բարելի: Ինչպես կտեսնենք ստորև, պետբյուջեի հիմնական ցուցանիշների տարեմիջյան այսպիսի վերանայումներն Ադրբեջանի համար դարձել են ավանդական՝ սկսած ԱԶԳ յուրացման «հիմնական նավթի» փուլի մեկնարկից²:

Հիմնականում սրանք են ԱՀ պետբյուջեի ցուցանիշների մասին այն տվյալները, որոնք սովորաբար բերվում են երկրի տնտեսական ոլորտին նվիրված ադրբեջանական մեդիա-դաշտի հրապարակումներում, հաճախակիորեն մեջբերվում այլ, այդ թվում նաև հայրենական ԶԼՄ-ում և նույնիսկ որոշ վերլուծական հոդվածներում: Մինչդեռ, Ադյուսակ 4.1-ում ամբողջացված պաշտոնական տվյալների անգամ մակերեսային գննումը հավելյալ շատ ուշագրավ մանրամասներ է ի հայտ բերում:

Նախ նկատենք, որ 2005-11թթ. ժամանակահատվածում բյուջեի եկամտային հատվածի «այլ մուծումները» («ոչ հարկային եկամուտները»՝ բյուջեի ԱՀ Ֆիննախի տարբերակում) հետզհետե դառնում են պետական բյուջեի եկամտային հատվածի գոյացման հիմնական աղբյուր: Այս հանգամանքը տեսանելի է դարձնում Նկար 4.1-ը: Այն պատկերում է

¹ <http://1news.az/economy/20120524101119745.html>

² 2012թ. սեպտեմբերի 14-ին ԱՀ Ֆիննասների նախարարությունը կառավարությանը ներկայացրեց 2013-16թթ. համար համակցված պետական բյուջեների նախագիծը, որի հիմքում ընդունված էր *Azeri Lights* նավթատեսակի 80\$/բ գինը: Ներկայացված նախագծով ենթադրվում էր, որ 2013-ին տարեկան ավելի քան 4% տղաճի դեպքում ՀՆԱ աճը կկազմի 5%-ից մի փոքր ավելի, իսկ նավթային ոլորտի աճը կկազմի ավելի քան 9% (<http://www.trend.az/capital/business/2066394.html>): Մեծ հավանականությամբ կարելի է ենթադրել, որ նավթային սեկտորի նախատեսված աճը հիմնված է *BP* ընկերության կողմից ԱԶԳ նավթադաշտի յուրացման նոր՝ 4-րդ փուլի Չիրագի նավթային ծրագրից (*COP*) ակնկալիքների վրա: *COP* ծրագրի մեկնարկը պլանավորված է 2013-ին (ավելի մանրամասն տե՛ս Գ. 2 և Հավելված 3):

2005-11թթ. համար ԱՀ պետբյուջեների եկամտային հատվածի կառուցվածքը՝ ըստ դրա «հարկային բազայի» և «այլ մուծումների»: Ինչպես տեսնում ենք, սկսած 2008-ից՝ «այլ մուծումների» մասնաբաժինը բյուջեի եկամտային հատվածում էականորեն աճում է: 2009-ին այն հավասարվում է բյուջեի «հարկային բազային» հատելով 50% շեմը: Դե, իսկ 2011-ին «այլ մուծումները» կազմում էին ԱՀ պետբյուջեի եկամտային հատվածի արդեն մոտ 60%-ը:

Աղյուսակ 4.2

ԱՀ պետբյուջեի եկամտային հատվածի «Այլ մուծումներ» տողի կառուցվածքը

մլն մանաթ և % եկամտային հատվածի նկատմամբ	2005	2006	2007	2008	2009	2010	2011
«այլ մուծումները», այդ թվում.	299.0	821.1	793.8	4,037.7	5,197.7	6,136.2	9,305.3
ԱՆՊՀ մասհանումներ	150	585	585	3,800	4,915	5,915	9,203.2
	50.1%	71.2%	73.7%	94.1%	94.6%	96.4%	98.9%
Իրական այլ մուծումներ	149.5	236.4	209.0	237.8	282.8	221.2	102.1
	49.8%	28.8%	26.3%	5.9%	5.4%	3.6%	1.1%

*Աղբյուրները՝ <http://www.azstat.org/publications/azfigures/2012/en/020en.shtml>
http://www.oilfund.az/en_US/hesabatlar-ve-statistika/hesabat-arxivi.asp
 և սեփական հաշվարկ*

Իր հերթին, 2005-11թթ. ժամանակահատվածում «այլ մուծումներում» շեշտակիորեն աճում է ԱՆՊՀ մասհանումների կշիռը, և այս հանգամանքը Աղյուսակ 4.1-ում և ԱՀ պետբյուջեի մասին հրապարակումներում արդեն այդքան էլ նկատելի չէ: Ասվածն ակնառու դարձնելու նպատակով մենք աղյուսակում (Աղյուսակ 4.2) բերվում են 2005-11թթ. ընթացքում ԱՆՊՀ տարեկան մասհանումները պետբյուջե՝ վերցված ԱՆՊՀ պաշտոնական հաշվետվություններից [4]: Նույն աղյուսակում բերվում են պետբյուջեի «այլ մուծումներ» հոդվածի ծավալները՝ վերցված Աղյուսակ 4.1-ից: Այնուհետև հաշվարկված են պետբյուջեի եկամտային հատվածի իրական «այլ մուծումները»՝ ԱՆՊՀ մասհանումներից գատ:


Ինչպես տեսնում ենք, դեռ 2005-ին, այսինքն՝ ԱԶԳ նավթադաշտի «վաղ նավթի» փուլի ավարտին, ԱՆՊՀ մասհանումներն արդեն կազմում էին պետբյուջեի «այլ մուծումներ» հոդվածի կեսից մի փոքր ավելին (50.1%): 2006-ից սկսած, երբ սկսվում են ԱԶԳ յուրացման «հիմնական նավթի» փուլը և ԲԹՋ նավթամուղի շահագործումը (տե՛ս Գ. 2), ԱՆՊՀ մասհանումները կազմեցին «այլ մուծումներ» հոդվածի արդեն ավելի քան 70%-ը: Հետագա երեք տարիներին (2008-10թթ.) դրանք կազմեցին «այլ մուծումների» ավելի քան 95%-ը: Ռեկորդային 99% ցուցանիշը ԱՆՊՀ մասհանումների համար արձանագրվեց 2011-ին¹:

Բայց Նկար 4.1-ը տալիս է ԱՀ պետբյուջեի եկամտային հատվածի կառուցվածքի միայն ստատիկ պատկերը: Իրականում այն դինամիկ է, ինչը պայմանավորված է ԱՀ պետբյուջեի հիմնական ցուցանիշների բազմակի վերանայումներով՝ կախված ԱՀ կլանաօլիգարխիկ իշխանական վերին օղակների վճիռներից: Այս «դինամիկ» գործընթացը մի փոքր ավելի ակնառու դարձնելու համար Նկար 4.2-ում պատկերում ենք ԱՀ 2005-11թթ. պետբյուջեների եկամտային հատվածների կառուցվածքն ըստ «հարկային բազայի», տվյալ տարվա բյուջետային նախնական պլանով սահմանված ԱՆՊՀ մասհանումների, ինչպես նաև տվյալ տարվա ընթացքում իրականացված ԱՆՊՀ լրացուցիչ տարեմիջյան մասհանումների: Ինչպես տեսնում ենք, դիտարկվող ժամանակահատվածում լրացուցիչ մասհանումներն իրականացվել են 2008, 2010 և 2011թթ. (2009-ի «դեպքն» ավելի մանրամասն կքննարկվի ստորև): Դրանք կատարված են ոչ միայն ու ոչ այնքան պահպանելու համար ԱՀ պետական բյուջեների ընդհանուր «ծախսային», «պոպուլիստական» բնույթը՝ գործելակերպ, որը ժամանակին այդքան քննադատվեց ԱՄՆ մասնագետների կողմից (տե՛ս Գ. 3), այլ, ինչպես կտեսնենք հաջորդ գլխում, հիմնականում երաշխավորելու համար երկրի խելահեղ ռազմականացման բազմափուլ և համալիր ծրագիրը:

Ահա սա է կառուցվածքային այն առանձնահատկությունը, որը հանգեցնում է ԱՀ պետբյուջեների մասին վերը նշված հակադիր գնահա-

¹ Առկա են բոլոր հիմքերը ենթադրելու, որ 2012թ. համար այս ցուցանիշը պահպանվել է:

տականներին: Մա կարող է անհավանական թվալ, իսկ նշված կառուցվածքային առանձնահատկությունը՝ ոչ այդքան էական: Բայց իրականում այդպես չէ:



Աղբյուրները՝ <http://www.azstat.org/publications/azfigures/2012/en/020en.shtml>
http://www.oilfund.az/en_US/hesabatlar-ve-statistika/buedce-melumatlari/doevlet-neft-fondunun-2011-ci-il-buedcesine-deyisiklikler-edildi-14-07-2011.asp

Բանն այն է, որ «այլ մուծումներ» տողի ներքո իրականացվում է ԱՀ մեկ այլ, ոչ պետական, բայց երկրի համար առաջնային կարևորություն ունեցող՝ ԱՆՊՀ նավթային բյուջեի տարրերի ներթափանցումը երկրի պետական բյուջե: Ընդ որում, «այլ մուծումներ» տողի առկայությունն արտացոլում է երկրում ձևավորված իշխանական և սոցիալ-տնտեսական կլանային համակարգի առանձնահատկությունը և հանգեցնում մի շարք կարևորագույն հետևանքների:

ԱԶԳ յուրացման «հիմնական փուլի» մեկնարկով (2006թ.) սկիզբ դրվեց մի իրողության, որում ԱՀ պետական բյուջեն հետզհետե ընդունեց «երկրորդական» բնույթ՝ հանդիսանալով ԱՆՊՀ բյուջեի¹ ընդամենը ածանցյալը: Ասվածն ամենևին էլ չի վերաբերում ԱՆՊՀ մասհանումների ծավալների տարեցտարի ավելացմանը (տե՛ս Նկար 4.2), թեև սա էլ է էական: Այստեղ ավելի կարևոր են երևույթի, այսպես ասած, կառուցվածքային հետևանքները:

Նախ, ԱՀ-ում գործող համակարգի շնորհիվ երկրում ձևավորվել են «զուգահեռ բյուջե» և «զուգահեռ կառավարություն»: Այսպիսի երկփեղկվածությունը, թերևս, ԱՀ սոցիալ-տնտեսական համակարգի ամենահատկանշական գծերից է: Այն առկա է արդեն իշխանական կառավարական վերին մակարդակում՝ գոյացնելով այստեղ «ԱՀ Ֆինանսների նախարարություն – ԱՆՊՀ» բևեռային մրցակից զույգը: Բայց այս երկփեղկվածությունն անհրաժեշտաբար հաղորդվում է նաև վարչարարական ավելի ստորին՝ ճյուղային մակարդակին և արտահայտվում է, օրինակ՝ «ԱՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն – SOCAR ընկերություն» կամ «ԱՀ պաշտպանության նախարարություն – ԱՀ Պաշտպանական արդյունաբերության նախարարություն» բևեռային ու մրցակից զույգերում: Վերջապես, այն տեղավորվում է ընդհուպ մինչև հանրային կյանք՝ պայմանավորելով այստեղ նավթարդյունաբերման ոլորտում զբաղված «ոսկյա 80000» ընտրյալների բանակի գոյացումը՝ ի հակադրություն մնացյալ հասարակության (տե՛ս Գ. 1):

Հաջորդ հետևանքն այն է, որ ԱՀ պետական բյուջեի եկամտային և ծախսային հատվածների պլանավորումը, այլ խոսքով՝ երկրի տնտեսական զարգացման քաղաքականության մշակումը, ըստ էության, հիմնվում է հում նավթի² միջազգային գների մասին վաղօրոք կատարված կանխատեսումների վրա, հետևաբար՝ կախված մնալով այս կանխատեսումների ճշգրտությունից: Այս իրավիճակը ԱՀ սոցիալ-տնտեսական զարգացումը պատանդ է դարձնում նավթային կոնյունկտուրայի վայրի-

¹Տե՛ս Գ. 2-ում:

²Ավելի ճշգրիտ՝ ԱԶԳ-ում արդյունահանվող *Azeri Lights* նավթի տեսակի գներից:

վերումներին ու կատարվող կանխատեսումների արժանահավատությամբ կամ միտումնավորությամբ:

Իրոք, ներկայիս գլոբալ և տարածաշրջանային աշխարհաքաղաքական անկայուն իրավիճակում, նավթի գնագոյացման մեխանիզմներում սպեկուլյատիվ գործոնների շոշափելի առկայության պայմաններում¹, գրեթե անհնարին են նավթի գների համարժեք կանխատեսումները՝ անգամ մեկ տարվա կտրվածքով: Հետևաբար, անխուսափելի են նաև այս կանխատեսումների տարեմիջյան վերանայումները, ինչն, ԱՀ-ում ստեղծված բյուջետային մեխանիզմի «առանձնահատկության» հետևանքով, հանգեցնում է արդեն ընթացիկ բյուջեի բազմակի վերանայումներին²: Արդյունքում՝ թուլանում են բյուջեի պլանավորման կարգապահությունը և կատարման պատասխանատվությունը՝ նավթային կոնյունկտուրայի թե՛ դրական, թե՛ բացասական փոփոխությունների դեպքում: Օրինակ, 2008թ. հում նավթի գների սպեկուլյատիվ պիկային արտառոց վարքը (տե՛ս Նկարներ 2.8 և 2.11, Գ. 2) հնարավորություն ընձեռեց այդ տարի հուլիսի 11-ին ԱՀ պետբյուջե հավելյալ փոխանցել 2.7 մլրդ մանաթ (կամ մոտ \$3.4 մլրդ)³՝ որպես լրացում այն 1.1 մլրդ մանաթի, որը նախատեսված էր 2008թ. բյուջետային պլանով (Նկար 4.2): Անցնելով մի փոքր առաջ՝ նկատենք, որ ԱՆՊՀ 2008թ. հուլիսյան այս լրացուցիչ մասհանումը ԱՀ նախագահ Ի.Ալիևի առաջին (անհաջող) փորձն էր՝ հավասարեցնել սեփական ռազմական բյուջեն Հայաստանի ողջ պետական բյուջեին: Այդ մտադրության մասին նա բարձրաձայնել էր դեռ 2007-ին (տե՛ս Գ. 1 և հաջորդ գլխում):

¹Տե՛ս Գ. 2, 2.1.6 բաժնում:

²Այս կանխատեսումները դարձել են ադրբեջանական վերլուծական հանրության և ԶԼՍ սիրելի զբաղմունքը: Դրանք աշխատանք են ապահովում վերլուծաբան-կանխատեսողների մի սովոր բանակի համար: Մերօրյա Ադրբեջանում նավթի գների կանխատեսումները դարձել են յուրօրինակ ազգային «սպորտաձև»: Եվ ահա, վերը հիշատակված *Budget.AZ* կայքէջը բոլոր այցելուներին և ցանկացողներին առաջարկում է կատարել իրենց կանխատեսումները, թե որ գնային տիրույթում կհայտնվի նավթի միջին տարեկան գինը: Այսպես ասած՝ «ձայն բազմաց, ձայն Աստծո» տրամաբանությամբ (<http://budget.az/budget/en/main>).

Մակայն ամենակարևոր հետևանքն այն է, որ ստեղծված ֆինանսաբյուջետային համակարգը, ըստ էության, տարանջատել է երկրի ածխաջրածնային պաշարների յուրացումից գոյացած եկամուտները երկրի պետական բյուջեի եկամտային հատվածից, հետևաբար և երկրի սոցիալ-տնտեսական դաշտի բնականոն կյանքից: Այս առումով ԱՀ պետբյուջեների «ոչ հարկային եկամուտներ» տողը պարզապես ամրագրում է կատարված տարանջատումը զուտ ֆորմալ առումով՝ ճշգրտորեն արտացոլելով Ադրբեջանում ստեղծված կլանաօլիգարխիկ սոցիալ-տնտեսական համակարգի բուն էությունը: Այն է.

1. բնական պաշարների, առաջին հերթին՝ ածխաջրածինների արդյունահանման և դրա հետևանքով գոյացած եկամուտների *զավթում*,
2. հասարակության *օտարում* այս եկամուտների գոյացման մեխանիզմներից և բարիքներից,
3. գոյացած եկամուտների *պարփակում* մեկուսի կլանաօլիգարխիկ հատվածի շրջանակներում, ներհյուսված «ԱՀ նախագահ-ԱՆՊՀ-SOCAR» իշխանատնտեսական բուրգում,
4. երկրի հարկային և օրենսդիր դաշտերից դուրս, ֆիսկալ մեխանիզմների համար անթափանց միջավայրում գոյացած եկամուտների *նպատակաուղղում*՝ առաջին հերթին Ադրբեջանում ձևավորված իշխանական ռեժիմի վերարտադրմանը:

ԱՀ պետբյուջեի կառուցվածքային առանձնահատկության այս հետևանքների գիտակցումն է, որ հանգեցնում է գաղափարախոսական տարբեր հենքերի վրա գործող կազմակերպությունների կողմից ԱՀ պետբյուջեին տրվող տրամագծորեն հակադիր գնահատականներին:

«Ոչ հարկային եկամուտներ» տողով իրականացված նավթարդյունահանումից գոյացած միջոցների որոշակի հատվածի ուղղումը պետբյուջե իրականում դեֆորմացնում է երկրի ֆիսկալ-հարկային քաղաքականությունը, թուլացնում պետբյուջեի կազմման և կատարման ընդհանուր կարգապահությունը, նվազեցնում բյուջեի միջոցների գոյացման և ծախսման թափանցիկությունը, դրա վերահսկելիությունը, էրոզիայի

ենթարկում կառավարության պատասխանատվությունը, ամրապնդում կոռուպցիան ԱՀ պետախիշխանական ու բիզնես ղեկավարման բուրգի ողջ տիրույթով: Այս եզրահանգումներին են գալիս նաև հարցը քննող մի շարք անկախ և հեղինակավոր վերլուծաբաններ [5-8]:

ԱՀ պետությունների եկամտային հատվածի մասին բերված տվյալները վկայում են մի այլ կարևոր հանգամանք ևս, որը, ցավոք, հաճախ վրիպում է հարցին նվիրված բազմաթիվ հրապարակումների ուշադրությունից: Դա այն է, որ ԱԶԳ նավթադաշտի «հիմնական նավթի» փուլի իրականացումը գրեթե չանդրադարձավ բյուջեի եկամտային հատվածի իրական բաղադրիչ հանդիսացող «հարկային բազայի» ցուցանիշների վրա, չապահովեց դրա հաստատուն աճը: 2011թ. պետությունների «հարկային բազան», ըստ ԱՎՊԿ և ԱՀ Ֆիննախի, կազմել էր 6.4 մլրդ մանաթ (կամ մոտ \$8.1 մլրդ՝ պաշտոնական փոխարժեքով), ինչը թեև որոշակիորեն գերազանցում էր 2009-10թթ. համապատասխան ցուցանիշները, սակայն նկատելիորեն զիջում է 2008թ. ցուցանիշին (6.7 մլրդ մանաթ): Իր հերթին, 2009թ. պետությունների հարկային բազան (5.1 մլրդ մանաթ կամ մոտ \$6.37 մլրդ) զիջում էր 2007թ. համապատասխան ցուցանիշին (5.2 մլրդ մանաթ կամ մոտ \$5.7 մլրդ)՝ հաջորդ տարի աճելով ընդամենը 200 մլն մանաթով (տե՛ս Նկար 4.1-ում):

Որպես Աղյուսակ 4.1-ի լրացում առանձին աղյուսակում (Աղյուսակ 4.3) ներկայացնենք ԱՀ պետությունների հարկային բազան ըստ դրանում տարատեսակ հարկերի համամասնության (%): Հարկատեսակներն այստեղ բերվում են դասակարգված ըստ 2011-ին դրանց մասնաբաժինների մեծության՝ նվազման կարգով: Առանձին տողով նշվում է հարկային բազայի մասնաբաժինը պետությունների եկամտային հատվածի նկատմամբ (%):

Ինչպես հետևում է բերված տվյալներից, հարկային բազայում առավել մեծ են ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) և իրավաբանական անձանց շահութահարկերի մասնաբաժինները: 2005-11թթ. համար դրանք միասին վերցրած կազմել են հարկային բազայի մոտ 55-65%-ը: Ընդ որում, զգալի է իրավաբանական անձանց շահութահարկի մասնաբաժնի աճը: 2006-08թթ. դրանք կազմել էին հարկային բազայի մոտ 43-47%-ը: ԱԱՀ

մասնաբաժինը դիտարկված ժամանակահատվածում ունի ավելի հաստատուն բնույթ և միջինը կազմել է հարկային բազայի մոտ 32%-ը:

Միևնույն ժամանակ, նկատելի է ֆիզիկական անձանց շահութահարկի մասնաբաժնի հաստատուն նվազումը՝ դիտարկված ողջ ժամանակահատվածում: 2005թ. այն կազմել էր 18.1%, իսկ 2011-ին՝ 11.2%: Այս հարկատեսակի նվազագույն՝ 9.3% արժեքն արձանագրվել է 2008-ին: 2005-06թթ. կտրուկ նվազել է արտաքին տնտեսական գործունեության հարկի մասնաբաժինը 11.7%-ից մինչև 4.6%՝ 2006-ին, որից հետո այն դանդաղ աճել է մինչև 2011թ. 6.8% ցուցանիշը: Հարկային բազայի այլ հոդվածների մասնաբաժինները դիտարկված ժամանակահատվածում մնացել են գրեթե անփոփոխ:

Բայց ամենակարևորն այստեղ պետքույզեի եկամտային հատվածում հարկային բազայի մասնաբաժնի կայուն նվազումն է (տե՛ս Աղյուսակ 4.3-ի վերջին տողը), ինչն էլ հիմք է տալիս եզրակացնելու, որ 2005-11թթ. ժամանակահատվածում ԱԶԳ նավթադաշտի «հիմնական նավթի» *BP/AIOC* եռափուլ ծրագրի իրականացումը, բացի բուն ծրագրային թիրախների խափանումից (տե՛ս Գ. 2), նաև չհանգեցրեց երկրի սոցիալ-տնտեսական համակարգի համալիր զարգացմանը, ինչը պետք է արտահայտվեր ողջ սոցիալ-տնտեսական դաշտի գործունեությունից գոյացած «հարկային բազայի» աճով: Հակառակը, այն խորացրեց համակարգի մոնոտոնտեսական բնույթը, մեծացրեց դրա դեֆորմացվածությունը, թերացավ ապահովել տնտեսության դիվերսիֆիկացված զարգացումը: Իսկ նավթարդյունահանումից ստացված եկամուտները, մնալով պարփակված հասարակության նեղ շրջանակներում, չհանգեցրին ԱՀ ողջ բնակչության բարեկեցության հաստատուն աճին, սաստկացրին սոցիալական անհավասարությունը և ուժգնացրին առանց այդ էլ շոշափելի կոռուպցիան (տե՛ս նաև Գ. 7):

Եզրափակելով ԱՀ պետքույզեի եկամտային հատվածի մեր հակիրճ քննությունը՝ հաջորդ փուլում տրամաբանական կլինի քննել նաև դրա ծախսային հատվածը: Ինչի՞ վրա է ծախսվում աղբբեջանական հասարակությունից օտարված նավթային հարստությունը:

ԱՀ պետությունների էկամտային հատվածի հարկային բազայի կառուցվածքն (%)
ըստ ԱԳՊԿ և ԱՀ Ֆինանսների նախարարության

Աղյուսակ 4.3

Հարկեր	2005	2006	2007	2008	2009	2010	2011	Միջինը
	ԱԱՀ	34.2%	24.2%	22.6%	28.4%	39.2%	39.5%	
իրավ. անձանց շահութահարկ	20.2%	44.6%	47.1%	42.6%	25.9%	27.1%	33.4%	34.4%
Ֆիզ. անձանց շահութահարկ	18.1%	13.4%	11.3%	9.3%	11.3%	11.2%	11.2%	12.3%
ակցիզային հարկեր	8.0%	6.1%	7.7%	7.2%	9.5%	9.8%	7.5%	8.0%
արտաքին տնտ. գործ. հարկ	11.7%	4.6%	5.6%	6.7%	8.2%	5.5%	6.8%	7.0%
հանքարդյունահանման հարկ	3.0%	3.3%	2.4%	2.2%	2.4%	2.5%	2.0%	2.5%
գույքահարկ	2.3%	1.8%	1.4%	1.7%	1.3%	1.9%	1.6%	1.7%
այլ հարկեր	1.6%	1.3%	1.3%	1.4%	1.7%	1.7%	2.2%	1.6%
հողահարկ	0.9%	0.6%	0.5%	0.5%	0.5%	0.7%	0.6%	0.6%
Ուրջ հարկային բազան	%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
		վճարված	1,756.2	3,047.8	5,212.7	6,725.0	5,128.2	5,266.8
Հարկային բազան՝ պետությունների էկամտային հատվածի նկատմամբ	85.5%	78.8%	86.8%	62.5%	49.7%	46.2%	40.7%	

Աղբյուրները՝ <http://www.aasat.org/publications/azfigures/2012/en/020en.shtm1>,
<http://www.mallye.gov.az/en/node/943>, սեփական հաշվարկներ


4.4. ԱՀ պետբյուջեի ուղղվածությունը (ծախսային հատված)

ԱՀ պետբյուջեի ծախսային հատվածի ցուցանիշների ուղղակի դիտարկումը (տե՛ս Աղյուսակ 4.1) փաստում է, որ դրանք աճում են 2005-2011թթ.՝ եկամտային հատվածի աճին զուգընթաց: Ընդ որում, նախորդ գլխում արդեն նշել էինք, որ ԱԶԳ «հիմնական նավթի» փուլի մեկնարկով սկիզբ առած ԱՀ պետբյուջեի ծախսային հատվածի շեշտակի ավելացումը, ապահովելով «պոպուլիստական» բյուջետային քաղաքականության իրականացումը, հանգեցրեց էական սղաճային ճնշման, ինչը բավական շոշափելի է ԱՀ ողջ սոցիալ-տնտեսական դաշտի համար, ինչն էլ ստիպեց ԱՀ իշխանություններին՝ իրականացնել սղաճի զսպմանն ու քողարկմանը միտված քայլեր և դիմել սպառողական գների ինդեքսի (CPI) և սղաճի ցուցանիշների զանգվածային կեղծման (տե՛ս Գ. 3): Ճիշտ ինչպես ժողովրդագրական վիճակագրական ցուցանիշների պարագայում [1]:

Անդրադառնանք, սակայն, ԱՀ պետբյուջեի ծախսային հոդվածների քննությանը: Նկար 4.3-ում մլրդ մանաթ չափողականությամբ բերվում են 2005-11թթ. պետբյուջեների ծախսային հոդվածների (բացի «արդյունաբերություն» տողից) ծավալները: Նկարը թույլ է տալիս դիտարկել դրանք համադրության մեջ: Ինչպես տեսնում ենք, դիտարկված ժամանակահատվածում էականորեն աճել են առեղծվածային «այլ ծախսերը», 2005թ. 0.5 մլրդ մանաթ ցուցանիշից դրանք հասել են մոտ 4.0 մլրդ-ի՝ 2011-ին: Այս ծախսերը բնութագրում ենք որպես «առեղծվածային», քանի որ դրանց էությունն ու բովանդակությունը չեն մանրամասնում ԱՀ պետական բյուջեն և որևէ պաշտոնական աղբյուր: «Այլ ծախսերի» աճի ֆոնին գիտության, սպորտի, առողջապահության և սոցիալական պաշտպանության բյուջետային տողերի ֆինանսավորման աճը 2005-11թթ. ընթացքում շատ ավելի համեստ է: Բացարձակ թվերով դրանց աճը կլինի նույնիսկ ավելի համեստ, որոշ պարագաներում՝ նույնիսկ բացասական, եթե հաշվի առնենք սղաճի իրական կամ նույնիսկ պաշտոնական ցուցանիշները: Մակայն դա չէ այստեղ ուշագրավը:

ԱՀ պետական ֆինանսա-սոցիալական քաղաքականության ընդհանուր ուղղվածությունը, անցած տարիներին վարվող քաղաքականու-

թյան տրամաբանությունն ու միտումները հասկանալու համար անհրաժեշտ է նախ դիտարկել բյուջետային ծախսային առանձին հոդվածների մասնաբաժինը տվյալ տարվա բյուջեի ընդհանուր ծախսային հատվածի նկատմամբ (%), այնուհետև դիտարկել այդ մասնաբաժինների փոփոխությունը նախորդ տարվա համեմատ, և այդպես՝ դիտարկվող ողջ ժամանակահատվածի համար: Այսպիսով, ստացված պատկերը խոսում է (տե՛ս Աղյուսակ 4.4):



Աղբյուրը՝ <http://www.azstat.org/publications/azfigures/2012/en/020en.shtml>

Այսպես, 2005-ի համեմատ 2009-ի պետբյուջեի ծախսային հատվածում աճել էր միայն «տնտեսական ոլորտ» հոդվածի բաժինը (աճ 2 անգամ): Մնացած ծախսային հոդվածների համար փաստում ենք անկում՝ 1.1-ից («կրթություն», «դատաիրավական համակարգ», «առողջապահություն», «մշակույթ», «գիտություն») մոտ 28 անգամ («սոցիալական ապահովություն»): Անկում է փաստվում անգամ «այլ ծախսեր» բյուջետային տողի համար¹: Անփոփոխ է մնացել միայն քարոզչական նշանակություն

¹ 2009թ. ԱՀ ռազմական ծախսերին կանդրադառնանք ստորև:

ունեցող «սպորտ» ծախսային հոդվածի համամասնությունը՝ մնալով տվյալ տարվա բյուջեի ընդհանուր ծախսային հատվածի մոտ 2%-ի մակարդակում:

Էլ ավելի վատթար է պատկերը, եթե 2005-ի հետ համեմատենք 2011թ. բյուջեի ցուցանիշները: Այս դեպքում, բացի «տնտեսական ոլորտ» հոդվածից, աճ է արձանագրվել միայն «այլ ծախսեր» հոդվածի համար: 2005թ. համեմատ նվազել է 2011թ. պետբյուջեի «սոցիալական պաշտպանություն», «առողջապահություն», անգամ «սպորտ» հոդվածների բաժինը: Ավելի քան 2 անգամ նվազել է «կրթություն» բյուջետային տողի համամասնությունը: «Գիտություն», «մշակույթ, տեղեկատվություն և այլ» հոդվածների համար նվազումը գրեթե կրկնակի է: Նվազել է նույնիսկ «դատաիրավական համակարգ» հոդվածի ֆինանսավորման համամասնությունը, որը, հիշեցնենք, ըստ ԱՀ Ֆինանսների նախարարության, անհրաժեշտ է ընթերցել որպես «պաշտպանության, արդարադատության և անվտանգության հաստատություններ» (տե՛ս Հավելված 7, Աղյուսակ Հ7.2): «Օրենսդիր, գործադիր և պետական իշխանություն» հոդվածով ծախսերի համամասնությունը նվազել է ավելի քան 3 անգամ: Իսկ պետբյուջեի ծախսային «սոցիալական ապահովություն» հոդվածի համամասնությունը 2005թ. համեմատ նվազել է մոտ *37 անգամ*:

Ի հավելումն Աղյուսակ 4.4-ի, Նկար 4.4-ում պատկերված են «այլ ծախսեր», «սպորտ» և «կրթություն» ծախսային հոդվածների ֆինանսավորման դինամիկան (մլն մանաթ, ձախ առանցք) և բյուջետային այդ տողերի համամասնությունը տվյալ տարվա բյուջեի ծախսային հատվածի նկատմամբ (% , աջ առանցք):

Բերված ցուցանիշներն առավել պատկերավոր նկարագրում են անցած 7 տարիներին ԱԶԳ նավթադաշտի յուրացման *BP/IOC* եռափուլ ծրագրի իրականացման ընթացքում պաշտոնական Բաքվի վարած սոցիալ-տնտեսական քաղաքականության բնույթը և դրա ուղղվածությունը: Ինչպես տեսնում ենք, այն ամեննին էլ համահունչ չէ «Ադրբեջանի նավթն Ադրբեջանի ժողովրդի հարստությունն է» Հ.Ալիևի տխրահռչակ կարգախոսին:

Աշխատանքի ծախսային հատվածի կառուցվածքն ըստ հողի տեսակների (% Ընդհանուր ծախսային հատվածի նկատմամբ) և 2011թ. ցուցանիշների փոփոխությունը 2005թ. համեմատ


Աղյուսակ 4.4

Ծախսային հողի տեսակներ	%										աճ, նվազում (անգամ)	
	2005	2006	2007	2008	2009	2010	2011	(2005/09)	(2005/11)			
տնտեսական ոլորտ	20.8	32.9	38.6	46.0	41.6	41.6	44.2	2.00	2.13			
այլ ծախսեր	23.1	27.4	22.9	24.6	22.3	24.7	26.3	1.03	1.14			
տեղիական պաշտպանություն	10.2	0.4	9.5	7.7	9.9	9.4	9.6	1.03	1.06			
կիրություն	17.4	12.6	11.9	9.1	10.9	10.0	8.2	1.59	2.11			
դատարարական համակարգ*	9.6	7.4	7.1	5.0	6.2	5.7	4.6	1.56	2.09			
առողջապահություն	5.4	4.3	4.2	3.2	3.8	3.7	3.2	1.41	1.68			
օրենսդիր, գործադիր և պետական իշխանություն	5.8	3.8	3.3	2.3	2.8	2.6	1.8	2.10	3.16			
վճարված, տեղեկատվություն, այլ	2.1	1.6	1.4	1.1	1.3	1.2	1.1	1.67	2.00			
գիտություն	1.4	0.8	0.7	0.6	0.8	0.8	0.7	1.70	1.95			
սպորտ	0.24	0.18	0.22	0.20	0.24	0.20	0.17	1.00	1.41			
տեղիական ապահովություն	4.1	8.7	0.3	0.2	0.2	0.1	0.1	27.60	36.68			

* Աշխատանքի նախարարության տեղեկատվությունում այս տողը նշված է որպես «պաշտպանության, պրոպագանդայի և անվտանգության հաստատություններ» (տե՛ս նախկին 7, Աղյուսակ 27.2):

Աղյուսակում օգտագործված է 2012-ից պաշտոնական տվյալներում (ԱԳԳԿ, ԱՀ Ֆինանսների նախարարություն) օգտագործվող ԱՀ պետությունների ծախսային հողի տեսակների բացվածքը (տե՛ս նախկին 7, Աղյուսակ 27.2): Բոլոր ցուցանիշները համապատասխանում են Աղյուսակ 4.1-ում բերվող տվյալներին:

Աղբյուրները՝ <http://www.aastat.org/publications/azfigures/2012/en/020en.shtml> և սեփական հաշվարկներ



4.5. Ի վերջո, ինչպիսի՞ն է ԱՀ պետական բյուջեն

ԱՀ պետբյուջեի հիշյալ կառուցվածքային առանձնահատկությունը գրավել է ոչ միայն մեր ուշադրությունը: Wikileaks-յան հրապարակումներից տեղեկանում ենք, որ դեռ 2009-ին, մտահոգված հարավկովկասյան հանրապետություններում 2008-09թթ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքների ազդեցությամբ, ինչպես նաև (և առաջին հերթին) տարածաշրջանային մի շարք այլ խնդիրներով, ԱՄՆ Պետական դեպարտամենտի ղեկավարն իր 09 STATE 41027 «REQUEST FOR INFORMATION ON POLITICAL IMPLICATIONS OF GLOBAL FINANCIAL CRISIS IN CAUCASUS» հաղորդագրությունում, թվագրված 2009թ. ապրիլի 23-ով¹, անհրաժեշտ համարեց մի հարցաշար ուղարկել Երևանում, Թբիլիսիում և Բաքվում ԱՄՆ դեսպաններին: Հաղորդագրությունում նշվում էր, որ պատասխաններն անհրաժեշտ են վաշինգտոնյան վերլուծաբաններին՝ իրենց ուսումնասիրությունների համար: Հաղորդագրությունում «հատուկ Ադրբեջանի համար» խորագրի ներքո դրվեցին հետևյալ հարցերը.

«1. Ընչքա՞ն գումար է ԱՆՊՀ-ն հետ փոխանցել պետական բյուջե: Որքանո՞վ է կառավարությունը պատասխանատու և հաշվետու պետբյուջե կատարած այս մասհանումների համար:

2. Դեսպաններն ո՞ր մասերն են պաշտոնյաները պատրաստվում կարճել ֆինանսավորումից, եթե նավթի գները շարունակեն մնալ բյուջեում ամրագրված \$65/բարել² սահմանագծից ներքև: Մասնավորապես, որքանո՞վ դա կազդի և կազդի՞ արդյոք ռազմական ծախսերի վրա» (ընդգծումները մերն են- Ա.Մ., տե՛ս Հավելված 1, 09 STATE 41027):

¹ Wikileaks կայքը հրապարակել է 2011թ. օգոստոսին (Խմբաքանակ Ա, տե՛ս Հավելված 1): Խոստն է Պետդեպարտամենտի այս հաղորդագրության կազմման օրաթիվը: Ուշագրավ են նաև այս հաղորդագրության «Հայաստանի համար» հարցերը, որոնք անհրաժեշտ է դիտարկել հայ-թուրքական հարաբերությունների բարելավման փորձերի համատեքստում (տե՛ս, օրինակ, [9]):

² 2009թ. պետական բյուջեի նախնական նախագիծը սահմանում էր Ազերի տեսակի հում նավթի \$70/բարել գինը:

«Հատուկ Ադրբեջանի համար» այս հարցերն, ինքնին, ուշագրավ են, հատկապես ԱՀ ռազմական ծախսերի մասին հարցը (որին կանդրադառնանք հաջորդ գլխում): Այս հարցերը ցույց են տալիս ԱՀ պետբյուջեի գոյացման «ադրբեջանական առանձնահատկությունները» հասկանալու՝ ԱՄՆ Պետդեպարտամենտի ցանկությունը: Պակաս ուշագրավ չեն նաև այս հարցերի տրամաբանական ու դարձվածաբանական առանձնահատկությունները:

Օրինակ, այն, որ տիկին Քլինթոնն այստեղ օգտագործում է «հետ փոխանցել պետական բյուջեին»¹ դարձվածքը: Իրոք, «Արևմտյան» տնտեսագիտական մտածելակերպի և լեզվամտածողության հենքի վրա ծնված այս հարցը լռելյայն ենթադրում է այն պարզ իրողությունը, որ ԱՆՊՀ եկամուտները, որ գոյացել են ԱՀ-ում ածխաջրածինների արդյունահանումից և արտահանումից, ի սկզբանե պետք է որ պատկանեին երկրի սոցիալ-տնտեսական ողջ դաշտին, եթե կուզեք՝ երկրի քաղաքացիներին: Հետևաբար, դրանք ուղղակիորեն պետք է պատկանեին երկրի պետական բյուջեին: Այստեղից էլ ծնվում է ԱՀ պետբյուջե ԱՆՊՀ մասհանումների *09 STATE 41027* հաղորդագրության որակումը որպես մուծումներ «հետ՝ պետական բյուջեին»:

Մինչդեռ, փաստացի այս հարստությունը զատված է ոչ միայն երկրի պետական բյուջեից, այլև օտարված է երկրի քաղաքացիներից, դասական քաղաքական տնտեսագիտության «օտարում» եզրույթի ողջ իմաստով: Այս հարստության որոշ հատվածի անուղղակի և խճողված ներհոսքը «հետ՝ պետական բյուջե» պարզապես խորացնում է սոցիալ-տնտեսական համակարգի դեֆորմացումը՝ ուժգնացնելով երկրի իշխանության առանց այդ էլ զգալի հակվածությունն իշխանության կլանաօլիգարխիկ բռնապետության մոդելի նկատմամբ: Ես չգիտեմ ավելի վառ մի օրինակ, որն այսքան խոսուն և սառնասրտորեն ընդգծեր Հ.Ալիևի «Ադրբեջանի նավթն Ադրբեջանի ժողովրդի հարստությունն է» հայտնի կարգախոսի ողջ փարիսեցիությունը:

¹ «How much money is being transferred from the State Oil Fund back into the budget?»

Նկատենք նաև, որ *09 STATE 41027* հաղորդագրության պետքայնության կատարման հետ կապված պարբերությունում օգտագործվում է «*Officials*» (պաշտոնյաներ), այլ ոչ թե «*Government*» (կառավարություն) բառը, ինչն, իհարկե, ավելի տրամաբանական կլիներ բյուջեի կատարողականը քննող համատեքստում (ի դեպ, հաղորդագրության 1.C կետում տիկին պետքարտուղարը հենց այդպես էլ վարվում է): Կարծում ենք, որ սա ամեննին էլ լեզվական սայթաքում չէ, այլ ԱՀ իշխանական համակարգի գործունեության «առանձնահատկության» համարժեք ընկալում: Պարզ տրամաբանությունը հուշում է, որ պետքայնության եկամտային հատվածի ավելի քան 60%-ի գոյացման համար (տե՛ս Նկար 4.1) ամեննին պատասխանատվություն չկրող ու այն գրեթե չվերահսկող ուժը՝ ԱՀ կառավարությունը, չի կարող նաև խելամտորեն պատասխանատու լինել դրա իրացման ծավալների, ծախսման առաջնայնությունների որոշման և կատարման կարգապահության համար:

Ընդհանրապես, *Wikileaks*-յան «Ադրբեջանական դոսյեի» հաղորդագրությունները լի են այս երկրի բյուջետային կառուցվածքի արատների, երկրում ձևավորված իշխանական կլանաօլիգարխիկ համակարգի, համատարած կոռուպցիայի մասին դիտարկումներով և գնահատականներով: Այսպես, 2006թ. փետրվարի 14-ով թվագրված հաղորդագրությունը նշում էր.

«Այս ողջ «ազատ» փողը լավ բանի չի հանգեցնի: Այն լուրջ վտանգ է երկրի տնտեսական համակարգի հավասարակշռման համար» (Հավելված 1, թիվ 15, *06 BAKU 219*)¹:

Նույն թվականի մարտի 16-ով թվագրված մի այլ հաղորդագրությունը պնդում էր.

¹ Հիշեցնենք, որ այս նույն հաղորդագրությունը նշում էր *Moody's* վարկանիշային գործակալության Ադրբեջան նախատեսվող այցի մասին: Հանգամանք, որն այդքան վարպետորեն օգտագործեց *BP* ընկերությունն ադրբեջանական իշխանությանը շանտաժի ենթարկելու համար (տե՛ս Գ. 2): Նույն այս հաղորդագրությունը նշում էր Ադրբեջանի իշխանության կողմից սղաճի (սպառողական գների ինդեքսի *CPI*) վերաբերյալ զանգվածային մեքենայությունների մասին (տե՛ս Գ. 3):

«Տնտեսական և բյուջետային վճիռների կայացման ադրբեջանական ներկայիս մեխանիզմը պարզապես կազմաքանդված է, այստեղ բացակայում է թափանցիկությունը և այն չի ներառում պատկան բոլոր կողմերը: Օրինակ, որպես կանոն, բյուջետային կենտրոնական նախարարությունները՝ ԱՀ Ֆինանսների նախարարությունը և ԱՀ Տնտեսական զարգացման նախարարությունը, պարզապես չեն էլ մասնակցում բյուջետային և հանրային ներդրումային ծրագրերի քննարկումներին» (Հավելված 1, թիվ 53, *06 BAKU 407*):

«Ինչն, ի դեպ, հենց Ադրբեջանի օրենսդրության խախտում է», ընդգծում էր այս հաղորդագրությունը:

Երկու օր անց Ադրբեջանում ԱՄՆ դեսպանությունը պատրաստում է մեզ այստեղ հետաքրքրող թերևս ամենաուշագրավ՝ *06 BAKU 411* հաղորդագրությունը: Բանն այն է, որ ինչպես 2009թ. ապրիլին, այնպես էլ 2006թ. փետրվարին՝ ԱԶԳ նավթադաշտի BP/AIOC եռափուլ ծրագրի մեկնարկի նախօրյակին, ԱՄՆ Պետդեպարտամենտը մի հաղորդագրություն¹ էր ուղարկել Բաքվում, Թբիլիսիում և Երևանում իր դեսպանատներին, որը նույնպես պարունակում էր հարցաշար, որի պատասխանները պիտի օգնեին հասկանալ հարավկովկասյան հանրապետությունների տնտեսական, առաջին հերթին՝ էներգետիկ խնդիրներում իշխանությունների վճիռների կայացման մեխանիզմը և գործելակերպը: 2006թ. մարտի 16-ին Բաքվում ԱՄՆ դեսպան Ռ.Հարնիշն իր «*ECONOMIC DECISION-MAKING AZERBAIJANI STYLE*» գլխագիրը կրող հաղորդագրությունում ԱՄՆ Պետդեպարտամենտի հարցերին ի պատասխան տեղեկացնում է հետևյալը.

«Տնտեսական վերին մակարդակում վճիռների կայացման գործընթացն Ադրբեջանում մնում է մթին գաղտնիք՝ պարուրված միայն մերձավորների նեղ շրջանակից սպրդող շշուկներով և ասեկոսեներով: Հիմնվելով անցյալում և ներկայում տնտեսական քաղաքակա-

¹ *06 STATE 27788. Wikileaks* կայքէջի «Խմբաքանակ Ա» հրապարակումներում այն բացակայում է (ավելի մանրամասն տե՛ս Հավելված 1):

նությանն առնչվող ընդունված որոշումների վրա՝ կարելի է եզրակացնել, որ նախագահ Ալիևը և իր մերձավորները հիմնական կարևորության տնտեսական որոշումները կայացնում են իրենց սեփական գործարար և ֆինանսական շահերից ելնելով» (Հավելված 1, թիվ 54, 06BAKU411)՝:

Նմանօրինակ դիտարկումների շարքը կարելի է շարունակել և 2007, 2008 ու 2009թթ. Wikileaks-յան հաղորդագրությունների կամ 1991-2012թթ. ժամանակահատվածում տպագրված բազմաթիվ այլ աղբյուրների մեջբերումով [5-6, 11-14]: Բայց դեսպան Հարնիշի 2006թ. դիտարկումը, թերևս, առանձնանում է հստակությամբ, լակոնիկությամբ և սպառիչ կերպով ի մի է բերում ԱՀ իշխանական և սոցիալ-տնտեսական համակարգերի այս բոլոր աղբյուրների դիտարկումները:

Աղյուսակ 4.5

Աղբբեջանական Հանրապետության պետական բյուջեն


\$ մլրդ, ընթացիկ	2005	2006	2007	2008	2009	2010	2011
Ըստ ԱՄՆ ԿՀՎ-ի [10]							
Եկամտային հատված	3.180	4.775	6.752	12.69	ԳԲ*	6.837	8.486
Ծախսային հատված	2.986	5.735	8.360	15.670	ԳԲ*	14.660	19.500
Պրոֆիցիտ/Դեֆիցիտ	0.194	-0.96	-1.608	-2.98	ԳԲ*	-7.823	-11.014
Ըստ պաշտոնական Բաքվի **							
Եկամտային հատված	2.234	4.334	7.000	13.100	12.907	14.254	19.874
Ծախսային հատված	2.327	4.246	7.093	13.114	13.130	14.707	19.489
Պրոֆիցիտ/Դեֆիցիտ	-0.093	0.088	-0.796	-0.115	-0.222	-0.454	0.386

* ԳԲ - ԱՄՆ ԿՀՎ տվյալներում գնահատականը բացակայում է:
 ** Պաշտոնական ցուցանիշները տե՛ս Աղյուսակ 4.1: Փոխարկումը ԱՄՆ ընթացիկ դոլարի իրականացված է ԱՀ Կենտրոնական բանկի \$/մանաթ պաշտոնական փոխարժեքի հիման վրա:

¹ Wikileaks-յան Խմբաբանակ Ա-ում առկա է 06 STATE 27788 հաղորդագրության հարցաշարին այդ ժամանակ ՀՀ-ում ԱՄՆ դեսպան Էվանսի պատասխանը (06 YEREVAN 281) թվագրված փետրվարի 27-ով: Թբիլիսիից ստացված պատասխանը Wikileaks-յան Խմբաբանակ Ա-ում բացակայում է:

Այս բոլորից հետո, կարծում ենք, այլևս անակնկալ չէ, որ ԱՀ պետբյուջեի ընդհանուր ցուցանիշների (եկամտային ու ծախսային հատվածներ, պրոֆիցիտ/դեֆիցիտ) ԱՄՆ Պետդեպարտամենտի և ԱՄՆ ԿՀՎ գնահատականներն էականորեն տարբերվում են պաշտոնական Բաքվի և մի շարք այլ աղբյուրների գնահատականներից: 2005-2010թթ. համար Աղյուսակ 4.5-ում մեկտեղված են 2012թ. դեկտեմբերի դրությամբ հասանելի ԱՀ պետբյուջեի մասին ԱՄՆ ԿՀՎ հայտնի «*World Factbooks*» տեղեկատուների գնահատականները (ԱՄՆ ընթացիկ դոլարով) [10]: Համեմատության համար նույն աղյուսակում բերվում են նաև պաշտոնական Բաքվի համապատասխան գնահատականները (տե՛ս Աղյուսակ 4.1):

Ինչպես տեսնում ենք, դեռ 2006թ.՝ ԱԶԳ եռափուլ ծրագրի մեկնարկային տարում, առկա էր այդ տարի ԱՀ պետբյուջեի պրոֆիցիտ/դեֆիցիտի հակադիր գնահատումը. աննշան պրոֆիցիտ՝ պաշտոնական Բաքվի գնահատական, և մոտ մեկ \$մլրդ դեֆիցիտ՝ ԱՄՆ ԿՀՎ



Աղբյուրները՝ <http://www.azstat.org/publications/azfigures/2012/en/020en.shtml>, [10], CESD Azerbaijan (Nov. 2011) և սեփական հաշվարկներ

գնահատական: Հաջորդ տարի այս երկու աղբյուրներն էլ ֆիքսում են ԱՀ 2007թ. պետբյուջեի դեֆիցիտը, սակայն ԿՀՎ գնահատականը (\$1.61 մլրդ) մոտ երկու անգամ գերազանցում է պաշտոնական Բաքվի գնահատականը (\$0.8 մլրդ): 2008թ. գնահատականների այս տարբերությունը դառնում է արդեն եռակի: ԱՀ 2010թ. պետբյուջեի համար պաշտոնական Բաքուն տալիս է մոտ \$0.5 մլրդ դեֆիցիտ գնահատական, այնինչ ԿՀՎ գնահատականը ԱՀ այդ տարվա պետբյուջեի համար կազմում է մոտ \$8.0 մլրդ, տարբերությունը՝ 16 անգամ: Վերջապես, 2011թ. համար պահպանվում է գնահատականների որակական տարբերությունը (*դեֆիցիտ*՝ պաշտոնական *պրոֆիցիտի* փոխարեն), իսկ քանակական առումով գնահատականները տարբերվում են մոտ 29 անգամ:

Նկար 4.5-ում ի մի է բերվում ասվածը: Այստեղ պատկերված են ոչ միայն Ադյուսակ 4.5-ի տվյալները, այլև բերվում են 2012թ. ԱՀ պետբյուջեի մասին պաշտոնական Բաքվի և ԱՄՆ ԿՀՎ նախնական գնահատականները՝ հրապարակված 2013թ. փետրվարին¹:

Համադրելով վերը բերված տվյալները՝ դժվար չէ հասկանալ ԱՀ պետբյուջեի մասին ԱՄՆ ԿՀՎ և պաշտոնական Բաքվի գնահատականների այս հակադրության բուն պատճառը: Այն կարելի է ձևակերպել հետևյալ կերպ. ըստ ԱՄՆ ԿՀՎ գնահատականների, **ԱԶԳ նավթադաշտի շահագործումից գոյացած եկամուտները զավթված են ԱՀ իշխանական կլանաօլիգարխիկ օղակների կողմից, օտարված են Ադրբեջանի քաղաքացիներից և զատված ԱՀ պետական բյուջեից: Ուստի, ԱՆՊՀ թե՛ պլանավորված, թե՛ լրացուցիչ մասհանումները չեն հանդիսանում պետական բյուջեի եկամտային հատվածի բաղադրիչ: ԱՀ իշխանության կողմից վարվող «պոպուլիստական» և վոյունտարիստական ֆինանսատնտեսական քաղաքականության պայմաններում դրանք հանգեցնում**

¹ 2013թ. փետրվարի 4-ին ԱՀ ֆինանսների նախարար Շարիֆովը հայտարարեց, որ 2012թ. պետբյուջեն իրականացվել է 200 մլն մանաթ (կամ մոտ \$254 մլն պաշտոնական փոխարժեքով) *պրոֆիցիտով*, ինչը, ըստ նախարարի, կազմում էր այդ տարի ՀՆԱ 0.37%-ը (<http://www.novosti.az/economic/20130204/298461195.html>): 2013թ. փետրվարի 14-ին ԱՄՆ ԿՀՎ «*World Factbook*» կայքը հրապարակեց ԱՀ 2012թ. պետական բյուջեի կատարման իր գնահատականը՝ *դեֆիցիտ* ՀՆԱ 3.2% չափով կամ մոտ \$2.3 մլրդ (<https://www.cia.gov/library/publications/the-world-factbook/geos/aj.html>): Այս գնահատականներն արտացոլված են Նկար 4.5-ում:

են պետությունների դեֆիցիտին և դեֆորմացիային երկրի ողջ ֆինանսատնտեսական ու սոցիալական համակարգը:

Եզրափակելով անցած տարիների ԱՀ պետական բյուջեների մեր դիտարկումը՝ ընդգծենք հետևյալ ուշագրավ փաստը: ԱՄՆ ԿՀՎ տեղեկատուներում [10] բացակայում է ԱՀ 2009թ. պետությունների գնահատականը¹: Նկար 4.5-ում մենք այն գնահատել ենք \$5.2 մլրդ դեֆիցիտ: Ինչպես հետևում է նկարից, այս գնահատականը միանգամայն համահունչ է ԱՄՆ ԿՀՎ նախորդ և հաջորդ տարիների գնահատականին: Սակայն ուշագրավն այստեղ 2009թ. պետությունների ԿՀՎ գնահատականի բացակայությունն է: Կարծում ենք, սա հետևանք է այն բանի, որ ԱՄՆ Պետդեպարտամենտի *09 STATE 41027* հաղորդագրության «հատուկ Ադրբեջանի համար» 2009թ. հարցերն այդ ժամանակ մնացին անպատասխան:

Վստահաբար, ԱՄՆ պետքարտուղարը հետագայում ստացավ իր այս հարցերի պատասխանները՝ պաշտոնական հոլովակներով: Մեզ թույլ տանք, սակայն, ձևակերպել այս հարցերի նաև մեր պատասխանները: Նախ, այն բանի համար, որ *Wikileaks*-յան հրապարակումներում (Խմբաքանակ Ա, տե՛ս Հավելված 1) դրանք, ցավոք, բացակայում են: 2009թ. ապրիլի 23-ից հետո Բաքվում ԱՄՆ դեսպանության՝ ԱՀ բյուջեին առնչվող առաջին իսկ հրապարակված հաղորդագրությունը միայն զարմանքով և կիսահեզնական հայտնում է, որ պաշտոնական Բաքուն որոշել է կառուցել ոչ միայն աշխարհի ամենաբարձր դրոշակակիր կայմը², այլ նաև որոշել է «օգնել խեղճ Ֆրանսիային՝ վերականգնել Վերսալը» (տե՛ս Հավելված 1, թիվ 1421, *09 BAKU 708*, թվագրված է 2009թ. սեպտեմբերի 4-ով): Սա, իհարկե, հետաքրքիր է, ընդգծում է ԱՀ բյուջետային ծախսերի ողջ «գունեղությունը»³, բայց չի պատասխանում *09 STATE 41027* հաղորդագրության հարցերին: Հատկապես Ադրբեջանի ռազմական ծախսերի առումով:

¹ Համապատասխան հրատարակումը կրկնում է միայն 2004թ. և 2008թ. տվյալները:

² «Որն իր բարձրությամբ կգերազանցի ոչ միայն Աշգաբադի համանման կայմը, այլ նաև 6 ոտնաչափով ավելի բարձր կլինի հյուսիսկորեական Պան Մուն Ջոն «քարոզչական» ավանտում կանգնեցված կայմից», մանրամասնում է *09 BAKU 708* հաղորդագրությունը:

³ Ինչպես նաև մի փոքր լույս է սփռում Ֆրանսիային սիրաշահելու Ադրբեջանի ծավալուն փորձերի վրա:

Եվ հետո, 2009-ի ապրիլից արդեն անցել է բավական ժամանակ, ու այս հարցերին կարելի է պատասխանել ոչ միայն 2009-ին առկա միտումների հիման վրա, այլ նաև 2010-13թթ. ԱՀ պետբյուջեների տվյալները և այլ փաստագրական տեղեկատվության հենքն օգտագործելով: Իսկ դրա համար անհրաժեշտ է անդրադառնալ ԱՀ ռազմական ծախսերի քննությանը, ինչին նվիրված է գրքի հաջորդ գլուխը:

Եզրակացություններ

1. Մերօրյա Ադրբեջանում ածխաջրածինների ոլորտը զավթված է գործող կլանաօլիգարխիկ համակարգի կողմից, իսկ գոյացած բարիքը՝ օտարված ԱՀ ժողովրդից: Ի հակադրություն «Ադրբեջանի նավթն Ադրբեջանի ժողովրդի հարստությունն է» ալիևյան տխրահռչակ կարգախոսի: Զավթված բարիքն առաջին հերթին ուղղվում է գործող վարչակարգի կայունության պահպանմանը և վերարտադրմանը:
2. Երկրում ձևավորված ֆինանսաբյուջետային համակարգը ճշգրտորեն արտացոլում է այս հանգամանքը, խորացնում կոռուպցիան և հասարակության բևեռացումը: Ի հաշիվ քաղաքացիների բարեկեցության և երկրի զարգացման հեռանկարի, Ադրբեջանում գործող վարչակարգը նպատակաուղղում է ժողովրդից զավթված բարիքը երկրի խելահեղ ռազմականացման և ռազմարդյունաբերական համալիրի ստեղծման ու զարգացման գործին:
3. ԱԶԳ յուրացման *BP/IOC* եռափուլ ծրագրի ձախողումը, նոր՝ 4-րդ փուլի իրականացման տակավին հարցական արդյունքները¹ և Շահ Դենիզի գազակոնդենսատային դաշտի յուրացման 2-րդ փուլի մշուշոտ հեռանկարները, զուգորդված ածխաջրածինների միջազգային գների անկանխատեսելի վարքով, ինչպես նաև Ադրբեջանում իշխանավոխության «քաղաքակիրթ» մեխանիզմների իսպառ բացակայությամբ, հավանաբար կբարձրացնեն Ադրբեջանում ներքին լարվածությունը, կխորացնեն տարածաշրջանային անկայունությունը 2013-15թթ.:

¹ «Զիրագ նավթային ծրագիր»: Մեկնարկը ծրագրված է 2013թ. ապրիլին:

Աղբյուրներ և գրականություն

1. *Մարջանյան Ա.*, Աղբբեջանական Հանրապետություն. «վիրտուալ» ժողովրդագրության առանձնահատկությունները, Երևան, «Նորավանք» ԳԿՀ, 2012թ.¹:
2. *Մարջանյան Ա.*, Աղբբեջանի պետական բյուջեն, «Նորավանք» ԳԿՀ «Գլոբուս» վերլուծական հանդես², թիվ 11, (32) 2012:
3. *Մարջանյան Ա.*, Միջուկային Թուրքիան, «Նորավանք» ԳԿՀ «Գլոբուս» վերլուծական հանդես³, թիվ 4, (32) 2012; *Մարջանյան Ա.*, Միջուկային Թուրքիա. մարտահրավերները Հայաստանին և տարածաշրջանին, «XXI դարի մարտահրավերները և Հայաստանի անվտանգության հիմնախնդիրները» համաժողով, 2012թ. նոյեմբեր, Երևան:
4. State Oil Fund of the Republic of Azerbaijan. Annual Reports, 2001-11.
5. *Khanna P.*, The Second World. 2008. *Ханна П.*, Второй Мир, М., Центр исследования постиндустриального общества, изд. «Европа», 2010г.
6. *Lussac, S.*, The State as a (Oil) Company? The Political Economy of Azerbaijan. GARNET Working Paper No. 74/10. February 2010.
7. *Bayratov, V., McNaught, T., Rashidov, E.*, Managing Resource Revenues in Oil-Rich CAREC Countries: The Case of Azerbaijan. CESD, Baku, April 2011.
8. Oil Boom and Resource Curse. European Stability Initiative - CESD⁴ April, 2012.
9. *Մարջանյան Ա.*, RAND կորպորացիան և մենք. Հայաստան-Թուրքիա հարաբերությունները, «Նորավանք» ԳԿՀ, «21-րդ ԴԱԸ», թիվ 3, 2010թ., էջ 19-50; *Марджанян А.*, Корпорация RAND и мы: армяно-турецкие взаимоотношения. НОФ «Нораванк», «21-й ВЕК», № 2 (18), 2011г., с. 15-43.
10. US CIA. World FactBooks. 1992 - 2011.
11. *Auty, R. M.*, Sustaining Development in Mineral Economies: the resource curse thesis. Routledge, 1993.
12. *Karl, T.L.*, The Paradox of Plenty: Oil Booms and Petro-States. Los Angeles, University of California Press, 1997.
13. *Soros, G.*, Lifting the Resource Curse. *Project Syndicate*, 15 March 2003.
14. Validation of the Extractive Industries Transparency Initiative (EITI) in the Republic of Azerbaijan. Final Report⁵, Feb.2009.

¹ <http://noravank.am/upload/pdf/Ara%20Marjanyan%20book.pdf>

² http://www.noravank.am/arm/articles/security/detail.php?ELEMENT_ID=6807

³ http://www.noravank.am/arm/articles/security/detail.php?ELEMENT_ID=6470

⁴ www.cesd.az/new/2012/04/oil-boom-and-resource-curse/

⁵ <http://eiti.org/files/Azerbaijan%20EITI%20Validation%20Report.pdf>

ԳԼՈՒԽ 5. ԱՂԲԵԶԱՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ

5.1. ԱՀ ռազմական ծախսերը

Աղբբեջանի ռազմական ծախսերը (ՌԾ) ուղիղ կերպով չեն արտացոլվում ԱՀ պետությունից պաշտոնական և որևէ այլ հրապարակումներում: Դրանց մասին բաց աղբյուրների և ԶԼՄ տվյալները հակասական են, նյութը թերի, հաճախ նաև անփույթ են ներկայացնում: Հարցը քիչ թե շատ հիմնավոր քննելու համար այստեղ նույնպես, արդեն որերորդ անգամ, ստիպված ենք դիմել սակավաթիվ հեղինակավոր բաց աղբյուրների գնահատականների համեմատական վերլուծությանը: Դրա համար առանձնացվել է աղբյուրների 2 հիմնական խումբ:

Առաջինը ԱՀ պաշտոնական բաց աղբյուրներն են. ԱՎՊԿ կայքը (*Azərbaycan Respublikası Dövlət Statistika Komitəsi, AzStat*), ԱՀ Պաշտպանության (*Azərbaycan Respublikası Müdafiə Nazirliyi*)¹, ԱՀ Պաշտպանական արդյունաբերության (*Azərbaycan Respublikası Müdafiə Sənayesi Nazirliyi*)², ԱՀ Ազգային անվտանգության (*Azərbaycan Respublikası Milli Təhlükəsizlik Nazirliyi*)³, ԱՀ Տնտեսական զարգացման (*Azərbaycan Respublikası İqtisadi İnkişaf Nazirliyi*)⁴ և ԱՀ Ֆինանսների նախարարությունների (*Azərbaycan Respublikası Maliyyə Nazirliyi*), ինչպես նաև ԱՀ խորհրդարանի (*Uhih məclisi*)⁵ կայքերը:

¹ <http://www.mod.gov.az>

² <http://www.mdi.gov.az>

³ <http://www.mns.gov.az>

⁴ <http://www.economy.gov.az>. Կայքէջը 2011թ. սեպտեմբերից մինչև 2013թ. մարտ ժամանակահատվածը անհասանելի էր:

⁵ <http://www.meclis.gov.az/?/en/commission/2>

Հաջորդ կարևոր խումբը ներկայացնում են միջազգային այն հեղինակավոր կառույցները, որոնք երկար տարիներ վերլուծում և հրապարակում են աշխարհի երկրների ՌԾ և սպառազինության մատակարարումների գնահատականները: Դրանք են ՄԱԿ Զինաթափման գործերով զբաղվող (ՄԱԿ ԶԳԳ, *UN ODA*) և ՄԱԿ ԶԳԳ Սովորական սպառազինությունների ռեգիստրն (ՄԱԿ ՍՍՌ, *UN RCA*) իր տվյալների գրադարաններով, ԱՄՆ ԿՀՎ-ն (*US CIA*) իր «*World Fact Book*» ամենամյա տեղեկատուներով, Ստոկհոլմի Միջազգային խաղաղության հետազոտական ինստիտուտը (ՍՄԽՀԻ, *SIPRI*) իր ամենամյա տեղեկատուներով, ԱՄՆ Պետական դեպարտամենտի սպառազինության վերահսկման բյուրոն (ԱՄՆ ՊԴԲ, *U.S. Department of State, Bureau of Arms Control, Verification and Compliance*) իր պաշտոնական *WMEAT* հաշվետվություններով, Ռազմավարական հետազոտությունների միջազգային ինստիտուտը (ՌՀՄԻ, *IISS*) իր «*Military Balance*» տեղեկատուներով և որոշ այլ աղբյուրներ:

Օգտագործվել են տեղեկատվության ևս երկու լրացուցիչ խմբեր՝ միջազգային հեղինակավոր լրատվական գործակալությունները և մամուլը (*Reuters, Guardian, Associated Press, Независимая газета* և այլն)¹, ինչպես նաև մի շարք վերլուծական կայքեր և *Wikileaks*-յան հրապարակումներ (Խմբաքանակ Ա, տե՛ս Հավելված 1):

Սկսենք ԱՀ պաշտոնական աղբյուրներից: ԱՀ Պաշտպանության նախարարության կայքէջում երկրի պաշտպանական բյուջեի մասին, և ընդհանրապես, ԱՀ ռազմական ոլորտի վիճակագրական-փաստագրական բնույթի որևէ նյութ, բացակայում է: Փոխարենը, հենց հիմնական էջից սկսած՝ այն շոայլորեն ողողված է «Խոջալուի ջարդի» և «հայկական ագրեսիայի» մասին պաշտոնական Բաքվի հերյուրանքներով՝ համեմված հայաստաց որակումներով: Նույնն է պատկերը ԱՀ Ազգային անվտանգության, Պաշտպանական արդյունաբերության նախարարու-

¹ ՉԼՄ-ում այս հարցը քննող նյութերն ի վերջո հենվում են նշված աղբյուրներից որևէ մեկի վրա: Կողմակալության մեղադրանքներից խուսափելու համար ստորև հարցին վերաբերող հայրենական հրապարակումներ չեն օգտագործվում:

թյունների և ԱՀ նախագահի¹ կայքէջերում²: ԱՀ պաշտպանական (ռազմական) ծախսերի մասին փաստագրական նյութերի բացակայությամբ հատկապես աչքի է ընկնում ԱՀ խորհրդարանի կայքը, որի անվտանգության և պաշտպանության, տնտեսական քաղաքականության կոմիտեների, ինչպես նաև վիճակագրության³, հաշվետվությունների⁴ և ելույթների սղագրությունների⁵ էջերն իրենց ստեղծման օրվանից առ 2012թ. օգոստոս մնում էին կուսականորեն դատարկ:

Արդեն նշել էինք, որ ԱՀ պետական բյուջեների մասին պաշտոնական տվյալներն արտաքին աշխարհի համար հասանելի են միայն ԱՎՊԿ և ԱՀ Ֆինանսների նախարարության կայքերից ու հրապարակումներից: Ընդ որում, ԱՎՊԿ տեղեկատվությունում պաշտպանական (ռազմական) ծախսերն ընդհանրապես նշված չեն (տե՛ս վերը և Հավելված 7, Աղյուսակ Հ7.1): Այստեղ առկա է միայն խորհրդավոր «այլ ծախսեր» տողը:

ԱՀ Ֆինանսների նախարարության կայքէջում ԱՀ 2000 և 2005-09թթ. պետական բյուջեների մասին տվյալներում պաշտպանական ծախսերը բերվում են դատախիրավական և անվտանգության համակարգի ծախսերի հետ միասին (*defence, justice and security institutions*, տե՛ս Հավելված 7, Աղյուսակ Հ7.2): Աղյուսակ Հ7.2-ում բերված այս վեց թվից, ինչպես նաև ԱՀ Ֆինանսիի ողջ կայքէջից անհասկանալի է մնում՝ ներառում է արդյոք «պաշտպանության, արդարադատության և անվտանգության հաստատություններ» բյուջետային տողը *ռազմական* այնպիսի

¹ <http://en.president.az/>

² Նյութից մի փոքր դուրս. այսօր անհնարին է որևէ քաղաքակիրթ կամ իրեն քաղաքակիրթ համարող երկրի պաշտոնական ու կառավարական կայքերում գտնել քսենոֆոբիայի և ռասիզմի ոգով պարուրված այնքան նյութ, որքան նշված աղբբեջանական կայքերում: Պատկերը նույնն է նաև «ոչ ուժային կառույցների» պաշտոնական կայքերում, օրինակ՝ ԱՀ Գիտությունների ակադեմիա, ԱՀ Ազգային գրադարան և այլն: Ժամանակն է, որ որևէ հեղինակավոր միջազգային և չեզոք կառույց վերջապես գնահատական տա այս խայտառակությանը:

³ <http://www.meclis.gov.az/?/en/statik/statistic/>

⁴ <http://www.meclis.gov.az/?/en/report/>

⁵ <http://www.meclis.gov.az/?/en/stenoqram/>

ծախսեր (*military expenditures*), ինչպիսիք են արտերկրում և երկրի ներսում սպառազինության գնումների համար հատկացված միջոցները, ռազմական նշանակության հետազոտությունների և փորձարարական ու կոնստրուկտորական (*R&D, НИОКР*) աշխատանքների, ռազմական արդյունաբերության ֆինանսավորումը: Կամ՝ *պաշտպանական* այնպիսի ծախսեր (*defense expenditures*), ինչպիսիք են զինծառայողների աշխատավարձերը, թոշակները, ապահովագրումը, քաղաքացիական պաշտպանության ու արտակարգ իրավիճակների համակարգերի հետ կապված ծախսերը և այլն: Բոլոր դեպքերում, սա է ***արտաքին աշխարհի համար հասանելի պաշտոնական, բաց միակ աղբյուրը, ուր մատնանշվում են ԱՀ պաշտպանական (ռազմական) ծախսերը***, այն էլ՝ տարրալուծված դատախրավական համակարգի ծախսերի մեջ:

Անցնելով միջազգային հեղինակավոր կառույցներին՝ նախ ընդգծենք, որ դրանք ԱՀ ՌԾ-ի մասին բաց, պաշտոնական տեղեկատվության առումով ստեղծված այս արտառոց դրությունը ոչ մեկնաբանում են, ոչ դատապարտում: Դրություն, որն առնվազն տարօրինակ է և չափազանց վտանգավոր՝ ռազմաշունչ հռետորաբանություն որդեգրած և ռևանշիստական տարածաշրջանային քաղաքականություն վարող երկրի դեպքում:

Այնուհետև, փաստենք, որ ՄԱԿ-ին անդամակցման օրվանից¹ Ադրբեջանական Հանրապետությունը ՄԱԿ ԶԳԳ-ին չի տրամադրել սեփական ՌԾ-ի մասին ոչ մի պաշտոնական հաշվետվություն: Հիշեցնենք, որ ՄԱԿ ԶԳԳ-ն այն եզակի աղբյուրն է, որը միջազգային հանրությանն է ներկայացնում երկրների ՌԾ-ի մասին պաշտոնական տվյալները՝ բերված այդ երկրների *պաշտոնական* հաշվետվությունների տեսքով: Այս հաշվետվությունները, ճիշտ է՝ կամավոր են, բայց ՄԱԿ ԶԳԳ ամսագրի խմբագրականի խոսքերով՝ «նաև տվյալ երկրի կայացվածության յուրահատուկ վկայությունն են հանդիսանում, ցույց են տալիս այս հարցում տվյալ երկրի բացությունը, դրա ժողովրդավար ու խաղաղասեր բնույթը» [1]:

¹ 1992թ. մարտի 2:

Երկրների ՌԾ-ի մասին ՄԱԿ ԶԳԳ հաշվետվությունների մեխանիզմի հաստատումից ի վեր ՄԱԿ անդամ երկրների գրեթե երկու երրորդը (192-ից 124-ը) ՄԱԿ ԶԳԳ է ներկայացրել սեփական ՌԾ-ի մասին պաշտոնական հաշվետվություն *զոնե մեկ անգամ* [1, p.22]: Հայաստանը ՄԱԿ ԶԳԳ իր առաջին պաշտոնական հաշվետվությունը ներկայացրել է 1997-ին և սկսած 2003-ից՝ շարունակում է կանոնավոր ներկայացնել դրանք¹ (տե՛ս [1], նաև Հավելված 8, ՀՑ.1): 2010թ. նոյեմբերի դրությամբ Ադրբեջանը ՄԱԿ ԶԳԳ-ին իր ՌԾ-ի մասին պաշտոնական հաշվետվությունը չէր ներկայացրել և *ոչ մի անգամ*:

Իրադրությունը չի փոխվել նաև 2010-ից հետո: 2012թ. օգոստոսի դրությամբ ՄԱԿ ԶԳԳ պաշտոնական կայքէջում² կարելի է գտնել շատ երկրների ՌԾ-ի մասին պաշտոնական հաշվետվություններ: Հավելված 8, Աղյուսակ ՀՑ.2-ում բերվում են այդ երկրների այբբենական ցանկի սկզբնական հատվածը (2012թ. օգոստոսի դրությամբ) և 2010թ. Հայաստանի պաշտոնական հաշվետվության օրինակը: Ինչպես տեսնում ենք, ԱՀ-ն այս ցանկում նորից բացակայում է: Այսինքն՝ Ադրբեջանը չի ներկայացրել իր ՌԾ ամենամյա պաշտոնական հաշվետվությունները նաև 2010թ. նոյեմբերից հետո: Ցավոք, այս հանգամանքը ո՛չ հիշյալ հողվածում [1], ո՛չ ՄԱԿ ԶԳԳ այլ նյութերում և ո՛չ էլ ՄԱԿ պաշտոնական հայտարարություններում ո՛չ մեկնաբանվում, ո՛չ էլ գնահատվում է ըստ արժանվույն: Հակառակը, այս գործելակերպը կարծես թե խրախուսվում է յուրօրինակ ու վտանգավոր կերպով (տե՛ս ստորև, 5.4 բաժնում):

Ադրբեյջանի 2-րդ խմբում, թերևս, ամենահայտնին և առավելապես մեջբերվողը Ստոկհոլմի Միջազգային խաղաղության հետազոտական ինստիտուտն է (ՄՄԽՆԻ, *SIPRI*) իր ամենամյա տեղեկատուներով [2]: ՄՄԽՆԻ հրապարակումներում և տվյալների գրադարանում կարելի է գտնել ՌԾ-ին վերաբերող 3 տիպի տվյալներ: Առաջինը տվյալ երկրի

¹ Կրաստանն իր առաջին հաշվետվությունը ներկայացրել է 2000թ. և դադարել է ներկայացնել՝ սկսած 2009-ից: [1] հողվածագիրը տազնապով նշում է, որ սկսած 2009-ից ընդհանրապես սկսել է նվազել ռազմական ծախսերի մասին հաշվետվություններ ներկայացնող երկրների թիվը:

² <http://unhq-appspub-01.un.org/UNODA/Milex.nsf>

ՌԾ-ի¹ մասին ընդհանուր ծավալային գնահատականներն են, որոնք ՍՄԽՀԻ տվյալների գրադարանում և տեղեկատուներում բերվում են՝

ա) տեղական տարադրամով՝ առանձին ֆինանսական և տոմարային տարիների համար,

բ) ԱՄՆ հաստատուն դոլարով, որևէ բազային տարվա համար,

գ) որպես % երկրի ՀՆԱ-ից: Այս դեպքում օգտագործվում են երկրների տոմարային տարվա ՀՆԱ-ների պաշտոնական գնահատականները՝ արտահայտված տեղական տարադրամով և ընթացիկ գներով²:

ՍՄԽՀԻ 2-րդ և 3-րդ տիպի տվյալները վերաբերում են ՌԾ «սպառողական մատակարարումներ (գնումներ)» բաղադրիչին ու դրանց տիպա-քանակական մանրամասներին: Դրանք կոդիտարկենք հաջորդ բաժնում, իսկ ստորև կկենտրոնանանք ԱՀ ՌԾ միայն ընդհանուր, ծավալային գնահատականների վրա:

Մինչ այդ անհրաժեշտ է նշել, որ համաձայն ՍՄԽՀԻ մեթոդաբանության, ՌԾ գնահատականներում ընթացիկ դոլարից կամ տվյալ երկրի տարադրամից բազային տարվա հաստատուն ԱՄՆ դոլարին անցումն իրականացվում է սպառողական գների ցուցչի (ՍԳՑ, *consumer price index, CPI*) և տվյալ տարում ԱՄՆ դոլարի նկատմամբ տվյալ տարադրամի միջին շուկայական փոխարժեքի օգտագործումով (*market exchange rates, MER*): Ընդ որում, բազային՝ 2010թ. տարվա ԱՄՆ հաստատուն դոլարին փոխարկումը ՍՄԽՀԻ-ն իրականացնում է ԱՄՆ Աշխատուժի վիճակագրական բյուրոյի (*US Bureau of Labor Statistics*) կողմից առաջարկվող ՍԳՑ արժեքների հիման վրա³:

Ընդգծենք մի փաստ, որը հաճախ վրիպում է մեր նյութին առնչվող բազմաթիվ հրապարակումների ուշադրությունից: ՍՄԽՀԻ-ի կողմից բերվող ՌԾ տվյալները *կոչված չեն* գնահատել տվյալ երկրի ՌԾ *իրական, փաստացի ծավալները*: Այս ցուցանիշները և դրանց հաշվարկման մեթո-

¹ Երկրի ռազմական ծախսերի ՍՄԽՀԻ սահմանման մասին կխոսենք ստորև:

² ԱՀ պարագայում այս ցուցանիշի ՍՄԽՀԻ գնահատականներին այստեղ գրեթե չենք անդրադարձնա՝ դրանց չնչին արժանահավատության հետևանքով (այս մասին տե՛ս սույն բաժնի վերջում):

³ <http://data.bls.gov/cgi-bin>

դաբանությունը ՄՄԽՀԻ փորձագետների կողմից մշակվել են տարբեր երկրների ՌԾ *համեմատական* վերլուծության և դրանց երկարաժամկետ *համադրման* համար¹: Սա չեն զլանում կրկնել ՄՄԽՀԻ փորձագետներն իրենց տեղեկատուների յուրաքանչյուր ամենամյա հրապարակումներում [2]: Այնուհանդերձ, ԱՀ ՌԾ-ին նվիրված հրապարակումների ճնշող մեծամասնությունը գնահատում է այդ երկրի ռազմական տարեկան ծախսերի *իրական* ծավալները հենց ՄՄԽՀԻ տվյալների հիման վրա:

Բացի այս, ՌԾ-ի մասին տեղեկատվությունը ՄՄԽՀԻ փորձագետները հիմնականում ստանում են իրենց կողմից մշակված հարցաշարերը տվյալ երկրի իշխանություններին ուղարկելով և ստացված պատասխանների հիման վրա: Հասկանալի է, որ բոլոր այն դեպքերում, երբ առկա են տվյալ երկրի ՌԾ, պաշտպանական բյուջեի, սպառազինության մատակարարումների և առևտրի, պաշտպանական բնագավառում երկկողմ ու բազմակողմ պայմանագրերի պաշտոնական և բաց տվյալները, օգտագործվում են նաև դրանք: Վերջապես, օգտագործվում են նաև այլ միջազգային կառույցների տվյալները: Այլ դեպքերում իրականացվում են փորձագիտական գնահատումներ, իսկ համապատասխան ցուցանիշները ՄՄԽՀԻ հրապարակումներում առնվում են քառակուսի փակագծերի մեջ՝ ընդգծելու համար դրանց ոչ հավաստի և միայն գնահատողական բնույթը²:

Հետևաբար, իրենց գնահատականներում ՄՄԽՀԻ փորձագետները մեծապես կախված են տվյալ երկրի իշխանության բարեխիղճ վերաբերմունքից և ՌԾ վերաբերող հասանելի ու հավաստի տվյալների առկայությունից: Հաշվի առնելով ԱՀ պաշտպանական բյուջեի մասին վերը բերված դիտարկումները՝ կարծում ենք, առկա են բոլոր հիմքերը՝ ամենայն

¹ Հենց այս նպատակով է ՄՄԽՀԻ-ն իրականացնում երկրների ՌԾ գնահատականների փոխարկումը 2010թ. ԱՄՆ հաստատուն դոլարի՝ հիմնված ՍԳՑ արժեքների վրա: ՄՄԽՀԻ-ն հետևողականորեն մերժում է (և շատ իզուր) այս հարցում ըստ գնողունակության շտկված տարադրամի փոխարժեքի օգտագործումը (*purchasing power parity exchange rates*): ՄՄԽՀԻ տվյալների գնահատման մանրամասները հասանելի են ինստիտուտի պաշտոնական կայքի մեթոդաբանական բաժնում (տե՛ս հաջորդ ծանուցման մեջ):

² http://www.sipri.org/databases/milex/sources_methods

զգոնությամբ վերաբերվելու համար ԱՀ ՌԾ-ի մասին ՄՄԽՀԻ գնահատականներին:

Զինվելով այս նախազգուշացումներով՝ անդրադառնանք Ադրբեյջանի (և Հայաստանի) ՌԾ-ի մասին 2012թ. ապրիլին հասանելի 1992-2011թթ. ժամանակահատվածի համար ՄՄԽՀԻ տվյալներին, որոնք հասանելի էին 2012թ. ապրիլի դրությամբ: Դրանք ներբեռնվել են ՄՄԽՀԻ տվյալների գրադարանից¹ և ամբողջացված են Հավելված 8, Աղյուսակ Հ8.3-ում՝ ՄՄԽՀԻ համապատասխան ծանուցումների հետ միասին:

Սկսենք նրանից, ինչից սովորաբար սկսում են լրատվամիջոցները, նույնիսկ որոշ վերլուծական հրապարակումները, և որի համար ՄՄԽՀԻ գնահատականները *պիտանի չեն*. փորձենք պատկերացում կազմել ԱՀ ՌԾ *իրական* ծավալների մասին, գոնե մեկ, օրինակ՝ 2011թ. համար: Նկատենք, որ ՀՀ ռազմական ծախսերը 2011թ. համար ՄՄԽՀԻ-ն գնահատել է 154 մլրդ դրամ (կամ մոտ 384 մլն ԱՄՆ 2010թ. հաստատուն դոլար) և իր համապատասխան մեկնաբանությունում ծանուցում է, որ «եթե հաշվի առնենք Հայաստանի զինուժի ռազմական թոշակները (*military pensions*), ապա ՀՀ ռազմական ծախսերը կավելանան ևս 15-20%-ով» (տե՛ս Հավելված Հ8.3)²: Ադրբեյջանի ՌԾ-ն ՄՄԽՀԻ-ն գնահատել է 2.45 մլրդ մանաթ (մոտ \$2.8 մլրդ ԱՄՆ 2010թ. հաստատուն դոլար, Աղյուսակ Հ8.3, կամ մոտ \$3.1 մլրդ ԱՄՆ 2011թ. հաստատուն դոլար): Համապատասխան ծանուցումն այս անգամ հայտնում է, որ բերված գնահատականը ներառում է մոտ 1.08 մլրդ մանաթ արժողությամբ «պաշտպանական հատուկ ծրագրերի» բյուջեն³:

Հիշենք այս հանգամանքը: Անդրադառնանք այլ աղբյուրների: 2011թ. փետրվարի 22-ին *Նեգալիսիմայա գազետա* պարբերականը գրում էր⁴.

¹ <http://milexdata.sipri.org/>

² Վրաստանի համար, նույն ծանուցումով, բերվում են հետևյալ գնահատականները՝ 718 մլն լարի կամ մոտ \$371 մլն ԱՄՆ 2010թ. հաստատուն դոլար:

³ ԱՀ ռազմական ծախսերին առնչվող ՄՄԽՀԻ մյուս ծանուցումը նշում է, որ այս երկրում դիտարկված ժամանակահատվածում իրականացված է տեղական տարադրամի դենոմինացիա (իրականացված է 2005-ի վերջին՝ ԱԶԳ հիմնական նավթի փուլի և ռազմականացման պետական ծրագրի մեկնարկին ընդառաջ, տե՛ս Գ. 3, բաժին 3.4 և ստորև):

⁴ http://www.ng.ru/cis/2011-02-22/1_neoglobalizm.html

«Ադրբեջանի ռազմական բյուջեն 2010թ. \$1.59 մլրդ-ից աճել է մինչև \$3.1 մլրդ 2011թ., ինչը կազմում է ՀՆԱ 6.2%-ը: Համաձայն ԱՀ ֆինանսների նախարար Շարիֆովի, ի լրումն հայտարարված ռազմական բյուջեի, 2011-ին ևս \$1.36 մլրդ նախատեսվում է ծախսել ռազմական բնույթի արտադրության վրա»:

Այսպիսով, եզրակացնում է *Նեզավիսիմայա զազետա*-ի վերլուծաբանը, «Ադրբեջանի ընդհանուր ռազմական ծախսերը 2011թ. կկազմեն մոտ \$4.46 մլրդ կամ ՀՆԱ մոտ 9%-ը»: Ինչպես տեսնում ենք, համաձայն այս աղբյուրի, որի տվյալներն անցյալում կասկածներ չեն հարուցել, «պաշտպանական հատուկ ծրագրերի» \$1.36 մլրդ բյուջեն ամենևին էլ ներառված չէ ԱՀ ՌԾ-ի մեջ, ինչպես դա պնդում է ՍՄԽՀԻ-ն իր ծանուցման մեջ (տե՛ս Հավելված 8, Աղյուսակ 28.3): Փաստենք, որ *Նեզավիսիմայա զազետա*-ի ԱՀ ՌԾ գնահատականը՝ 4.46 մլրդ 2011թ. ԱՄՆ դոլար, մոտ 30%-ով ավելին է, քան ՍՄԽՀԻ համապատասխան գնահատականը (\$3.1 մլրդ 2011թ. ԱՄՆ դոլար):

Հետաքրքրական է, որ այս երկու գնահատումների համար սկզբնաղբյուր է հանդիսացել ԱՀ ֆինանսների նախարարի 2010թ. հոկտեմբերի 12-ի պաշտոնական հայտարարությունը: Հնարավոր տարակարծություններից խուսափելու համար ներկայացնենք այն ադրբեջանական *Թրենդ* գործակալության հաղորդագրությամբ.

Азербайджан в 2011 году почти вдвое увеличит

долю оборонных расходов в бюджете страны¹

12 октября 2010, 14:14. Азербайджан, Баку, 12 октября

/корр. Trend М. Алиев/

Общие расходы на оборону из государственного бюджета в 2011 году составят 2511 миллионов манатов, что на 1187 миллионов манатов или 89,7 процентов больше чем в 2010 году, сказал во вторник министр финансов Самир Шарифов в ходе обсуждения проекта госбюджета на будущий год на пленарном заседании Милли меджлиса (парламента).

¹ <http://www.trend.az/print/1765123.html>

"С учетом военной доктрины Азербайджана, которая является составной частью концепции национальной безопасности нашей страны, на финансирование оборонного потенциала страны из государственного бюджета в 2011 году планируется выделить 1325 миллионов манатов. Для доведения вооруженных сил до современных требований, для приобретения современного оружия из государственного бюджета в 2011 году планируется выделить дополнительно 1087 миллионов манатов", - сказал Шарифов.

По его словам, доля расходов на оборону страны в 2011 году составит 19,7 процентов, тогда как в 2010 году этот показатель составлял 10,7 процентов. "То есть, доля оборонных расходов в бюджете страны увеличилась почти вдвое", - сказал Шарифов.

Также в госбюджете предусмотрены инвестиционные проекты в сфере обороны, отметил министр.

Նույն տեքստն են բերում մոտ երկու տասնյակ ադրբեջանական և այլ լրատվամիջոցներ՝ ադրբեջաներեն, ռուսերեն, անգլերեն և այլ լեզուներով: Ինչպես տեսնում ենք, ըստ պրն Շարիֆովի.

1. 2011թ. պետբյուջեի ընդհանուր պաշտպանական ծախսերը նախատեսվում էին 2.511 մլրդ մանաթ, այլ ոչ թե 2.45 մլրդ մանաթ, ինչպես դա նշված է ՄՄԽՀԻ տվյալներում;
2. ՄՄԽՀԻ ծանուցման մեջ հիշատակված մոտ 1.08 մլրդ մանաթը (կամ մոտ \$1.37 մլրդ 2011թ. ԱՄՆ դոլար) իրականում նախատեսված էր ոչ թե «պաշտպանական հատուկ ծրագրերի», այլ նոր սպառազինություն գնելու համար: Եվ այն հատկացված էր *լրացուցիչ*, հետևաբար և ներառված չէր 2.511 մլրդ մանաթ «պաշտպանական բյուջեի» մեջ, ինչպես դա իրավացիորեն նշում է *Նեգավիսիմայա գազետա*-ն;
3. բերված հաղորդագրության վերջին տողը հայտնում է, որ նշված հատկացումներից զատ ԱՀ պետբյուջեն նախատեսում է նաև որոշակի ներդրումներ «պաշտպանական ոլորտի ծրագրերի համար»:

Այդ մասին լռում է ոչ միայն ՍՄԽՀԻ-ն, այլև *Նեզավիսիմայա գազետա*-ի նշված հոդվածը:

12 օր անց, 2010թ. հոկտեմբերի 22-ին, *Եվրասիանեթ* վերլուծական կայքէջը տեղեկացնում էր¹, որ նույն օրը «Ադրբեջանի Միլի մեջլիսը ձայների 104 կողմ և 5 դեմ համամասնությամբ հավանության է արժանացրել այս երկրի պաշտպանական բյուջեն, որը կազմել է 2.5 մլրդ մանաթ (\$3.12 մլրդ): 2011թ. Ադրբեջանի պաշտպանական բյուջեն կկազմի կառավարության ընդհանուր ծախսերի 20%-ը (վերջիններս կկազմեն 12.5 մլրդ մանաթ կամ շուրջ \$16 մլրդ)», - հայտնում է աղբյուրը:

Մի պահ ընդհատելով մեջբերումը՝ նկատենք, որ 2011թ. ԱՀ պետբյուջեի ծախսային հատվածն իրականում կազմել էր 15.39 մլրդ մանաթ կամ մոտ 19.5 մլրդ 2011թ. ԱՄՆ դոլար (տե՛ս Գ. 4, Աղյուսակ 4.1): Եթե ընդունենք, որ պահպանվել է ԱՀ ՌԾ-ի համար պետբյուջեի ընդհանուր ծախսերի մոտ 20%-ի հատկացման իշխանության մտադրությունը, ապա դրանք պետք է որ կազմեին մոտ 3.1 մլրդ մանաթ կամ մոտ 3.9 մլրդ 2011թ. ԱՄՆ դոլար: Ինչը նորից զգալիորեն ավելին է, քան ՍՄԽՀԻ 2.45 մլրդ մանաթ գնահատականը: Եվ ինչպես կտեսնենք, այն *չի ներառում* լրացուցիչ ավելի քան 1.0 մլրդ մանաթ հատկացումները: Վերադառնանք մեր աղբյուրի մեջբերմանը.

«Բաքվի պաշտոնյաները չեն բացահայտում, թե ինչպես է պատրաստվում ծախսել այս գումարը *ԱՀ Պաշտպանության նախարարությունը*: Ֆինանսների նախարարը խորհրդարանին հայտնեց միայն, որ 1.4 մլրդ մանաթ (մոտ \$1.75 մլրդ) կհատկացվի ռազմուժի մոդեռնիզացիային և նոր սպառազինության գնմանը: Բացի այդ, առանց որևէ մանրամասնի՝ նա հայտնեց, որ լրացուցիչ կհատկացվի ևս 1.87 մլրդ մանաթ (մոտ \$2.33 մլրդ) ԱՀ ռազմական ներուժի բարձրացմանն ուղղված հատուկ ծրագրերի համար» (ընդգծումը մերն է- *Ա.Մ.*):

Բերված պարբերության տրամաբանությունը վկայում է, որ «պաշտպանական բյուջեի» նախնական 2.5 մլրդ մանաթը (\$3.12 մլրդ)

¹ <http://www.eurasianet.org/print/62223>

ամենայն հավանականությամբ պատկանում է ԱՀ Պաշտպանության նախարարության իրավասությանը: Բացի այդ, խորհրդարանական քննարկումների ժամանակ ռազմուժի նորացման և նոր սպառազինության գնումներին հատկացվելիք գումարը նախնական 1.087 մլրդ մանաթից աճել է մինչև 1.4 մլրդ մանաթի (1.7 մլրդ 2011թ. ԱՄՆ դոլար)¹: Իսկ լրացուցիչ հատկացումների գումարը կազմել է 1.87 մլրդ մանաթ (2.36 մլրդ 2011թ. ԱՄՆ դոլար): Հետևաբար, 2011թ. ԱՀ ՌԾ իրական ծավալները գերազանցում են 4.0 մլրդ մանաթ ցուցանիշը, ինչն արդեն մոտ երկու անգամ ավելին է, քան ՍՄԽՀԻ 2.45 մլրդ մանաթ գնահատականը:

Այսպիսով, ունենք բոլոր հիմքերը պնդելու, որ ԱՀ 2011թ. ՌԾ-ի մասին ՍՄԽՀԻ գնահատականները չեն արտացոլում իրականությունը և նվազեցնում են դրանք 90-100%-ով: Մեծ հավանականությամբ կարելի է ենթադրել, որ անցած տարիների ՍՄԽՀԻ գնահատականները նույնպես չեն համապատասխանել իրականությանը: Ինչպես կտեսնենք, իրադրությունն այստեղ նույնիսկ ավելի վատ է, քան կարելի էր պատկերացնել սկզբում:

Բայց, մինչ այդ մեջբերենք ևս մի հատված *Եվրասիանեսթ* կայքէջի նյութից: Խորհրդարանում ԱՀ ֆինանսների նախարարի ելույթին նվիրված պարբերությունում նշվում է, որ նախարարը հայտնել է, թե «ավելացվելու է նաև ԱՀ Պաշտպանության նախարարությունից միանգամայն գատ գործող *ԱՀ Պաշտպանական արդյունաբերության նախարարության* բյուջեն» (ընդգծումը մերն է- *Ա.Մ.*): Սակայն, շարունակում է աղբյուրը, «նախարարը ոչ մի թիվ չհրապարակեց»: Որոշակի հավանականությամբ կարելի է պնդել, որ դրանք հենց վերը նշված 1.87 մլրդ մանաթ լրացուցիչ հատկացումներն են, որը ՍՄԽՀԻ-ն, չգիտես ինչու, գնահատում է 1.1 մլրդ մանաթ:

¹ Ուշագրավ է, որ վկայակոչելով *Milaz.info* ռազմական նորությունների կայքի խմբագրին (*Jasur Sumarlinli*) նշված աղբյուրը պնդում էր, որ այս 1.4 մլրդ մանաթ գումարից մոտ 600 մլն մանաթը (\$749 մլն) նախատեսվում էր «ռուսական երկու C-300 ՀՕՊ համակարգերի գնման համար», որոնք, ըստ հեղինակի, «միանգամայն անպիտան են Ղարաբաղյան պատերազմի համար» (այս մասին տե՛ս 5.3 բաժնում):

Իսկ այժմ անդրադառնանք տվյալ երկրի ՌԾ ՍՄԽՀԻ սահմանմանը: Ըստ որդեգրված մեթոդաբանության¹, դրանք ներառում են. ա) ողջ զինուժի, այդ թվում և խաղաղապահ զինուժի, բ) երկրի *պաշտպանության նախարարության* և ռազմական ծրագրերում ներգրավված այլ կառավարական գործակալությունների (*government agencies*), գ) ռազմական գործողություններում մասնակցության ունակ ռազմականացված ուժերի (*paramilitary forces*), դ) ռազմական նշանակության տիեզերական գործունեության հետ կապված բոլոր կապիտալ և ընթացիկ ծախսերը: Եվ պետք է չներառեն քաղաքացիական պաշտպանության (*civil defence*) և նախորդ տարիների ռազմական գործունեության հետ կապված ընթացիկ ծախսերը (գորացրում, վետերանների արտոնություններ, ռազմական արտադրության կոնվերսիա և հին սպառազինության ուտիլիզացիա): Իսկ ըստ բնույթի, տվյալ երկրի ռազմական ծախսերը պետք է ներառեն զինուժի ողջ անձնակազմի ընթացիկ ծախսերը, շահագործման ծախսերը, գնումները, ռազմական նշանակության հետազոտություններն ու ծրագրերը, ռազմական շինարարության ծախսերը, ռազմական օգնությունը:

Մենք չզլացանք բերել ՍՄԽՀԻ այս սահմանումը հետևյալի համար: Ըստ դրա ֆորմալ ընթերցման, ՌԾ գնահատման համար դիտարկվում է երկրի միայն «*պաշտպանության նախարարության* և ռազմական ծրագրերում ներգրավված այլ կառավարական գործակալությունների (*government agencies*)» գործունեությունը: Բայց ԱՀ Պաշտպանական արդյունաբերության նախարարությունը պետական գործակալություն չէ, այլ առանձին նախարարություն և այս առումով կարող է չընդգրկվել ՍՄԽՀԻ դիտարկումներում: Մյուս կողմից, այս նախարարությունը զբաղված է մի գործունեությամբ, որն ամբողջովին պատկանում է ՍՄԽՀԻ ՌԾ սահմանմամբ ուրվագծված տիրույթին: Հետևաբար, դրա բյուջեն պետք է հաշվառվի ԱՀ ՌԾ գնահատականում: Արդյո՞ք այս ֆորմալ հակասությունն է այն պատճառը, որը հանգեցրել է 2011թ. Ադրբեջանի ՌԾ ՍՄԽՀԻ գնահատականների վերը նշված անհամարժեքությանը: Երբ, ամենայն հավանականությամբ այս նախարարության 2011թ. 1.08 մլրդ մանաթ բյու-

¹ <http://www.sipri.org/databases/milex/definitions>

ջեն (որն իրականում կազմում էր 1.87 մլրդ մանաթ) ՍՄԽՀԻ-ն իր ծանուցումում ներկայացնում է որպես ներառված ԱՀ ընդհանուր ՌԾ իր 2.45 մլրդ մանաթ գնահատականում: Այնինչ, այդ 2.45 մլրդ մանաթ գնահատականը լավագույն դեպքում միայն ԱՀ Պաշտպանության նախարարության բյուջեն էր, այն էլ՝ նախնական տարբերակով:

Եվ հետո, ԱՀ Պաշտպանական արդյունաբերության նախարարությունը հիմնվել է ԱՀ նախագահի թիվ 1191 հրամանագրով՝ թվագրված 2005թ. դեկտեմբերի 16-ով: Եվ պետք է ենթադրել, որ այն գործել էր ոչ միայն 2011-ին, այլ նաև 2006, 2007, 2008, 2009 և 2010թթ.: Ուստի, ՍՄԽՀԻ տվյալները կազմող փորձագետների և այդ տվյալների հենքի վրա ԱՀ ՌԾ *իրական* ծավալները գնահատող հեղինակների առջև դնենք հետևյալ հարցերը: Ինչպե՞ս, որքա՞ն և ի՞նչ *արժանահավատությամբ* է գնահատել ՍՄԽՀԻ-ն ԱՀ Պաշտպանական արդյունաբերության նախարարության 2006-10թթ. տարեկան բյուջեները, եթե անգամ 2011թ. գնահատականն այս առումով վստահելի չէ: Ինչպե՞ս են ներառվել դրանք 2006-10թթ. ԱՀ ընդհանուր ՌԾ ՍՄԽՀԻ համապատասխան գնահատականներում: Եվ ներառվե՞լ են դրանք առհասարակ:

Երկրորդ հարցը հետևյալն է: ԱՀ ՌԾ-ի մասին ՍՄԽՀԻ տվյալներում (Աղյուսակ 28.3) աչքի է զարնում այն հանգամանքը, որ 1992-2004թթ. ժամանակահատվածի համար դրանք բոլորը վերցված են քառակուսի փակագծերի մեջ¹: Հիշեցնենք, որ ըստ ՍՄԽՀԻ մեթոդաբանության, դա նշանակում է, որ դրանք ունեն միայն գնահատողական բնույթ և հենված չեն որևէ հավաստի, այդ թվում՝ պաշտոնական աղբյուրի վրա: Ի՞նչն է հիմք տվել ՍՄԽՀԻ փորձագետներին 2005թ. սկսած՝ այլևս քառակուսի փակագծերի մեջ չներառել ԱՀ ՌԾ-ի մասին գնահատականները: Մի՞թե ԱԶԳ «հիմնական նավթի» փուլի մեկնարկը:

¹ ՀՀ պարագայում տվյալները ներկայացված են ուղիղ, ինչն, ըստ ՍՄԽՀԻ-ի, վկայում է դրանց բարձր արժանահավատության մասին: Քառակուսի փակագծերի մեջ է առնված միայն ՀՀ 2011թ. գնահատականը: Բայց դա սովորական երևույթ է ՀՀ-ին առնչվող ՍՄԽՀԻ հրապարակումների ընթացիկ տարվա գնահատումների համար: Հաջորդ տարի, հավաստի տվյալներ ստանալուն պես, նոր հրապարակումներում այս փակագծերը կանոնավորապես հանվում են (տե՛ս [2]):

Չէ՞ որ դա նշանակում է, որ ի հայտ են եկել ԱՀ ՌԾ-ի մասին հավաստի կամ հավաստի ու պաշտոնական տվյալներ, որոնք անհասանելի էին մինչև 2004թ.: Մի՞թե ՄՄԽՀԻ փորձագետները բավարարվել են ԱՀ Ֆինանսների նախարարության այն զավեշտալի 6 թվերով, որոնք նկարագրում են (պետք է որ նկարագրեին) 2005-09թթ. ԱՀ «պաշտպանական» ծախսերը, չգիտես ինչու՝ տարրալուծված դատաիրավական ոլորտի ծախսերի մեջ (տե՛ս վերը և Հավելված 7, Աղյուսակ Հ7.2): Կամ գուցե ինչ-որ բան է փոխվել այս առումով ՄԱԿ ԶԳԳ կայքէջում, որը մնացել է աննկատ մեզ ու մնացյալ աշխարհի համար (տե՛ս վերը և Հավելված Հ8.1 ու Հ8.2):

Աղյուսակ 5.1 *ԱՀ ՌԾ-ն ըստ Budget.az կայքի*

Տարի	մլն մանաթ	ՀՆԱ %
1992	-	-
1993	-	-
1994	-	-
1995	50	2.3
1996	61	2.2
1997	71	2.2
1998	75	2.2
1999	87	2.3
2000	97	2.1
2001	107	2
2002	121	2
2003	136	1.9
2004	174	2
2005	288	2.3
2006	641	3.6
2007	811	3
2008	1321	3.3
2009	1184	3.4
2010	1185	2.9
2011	1345	2.7
2012*	1407	2.8
* 2012թ.՝ կանխատեսում		

Իհարկե՝ ոչ: Ինչպես տեսանք վերը, ՄԱԿ-ին անդամակցության օրվանից առ ասօր Ադրբեջանը ՄԱԿ ԶԳԳ-ին ոչ մի անգամ չի ներկայացրել սեփական ՌԾ-ի մասին պաշտոնական որևէ հաշվետվություն: Այդ դեպքում ի՞նչ է կատարվել այս ուղղությամբ Ադրբեջանում: Ահա թե ինչ: 2005-ին Բաց հասարակության ինստիտուտի (*Open Society Institute*) անմիջական աջակցությամբ Բաքվում հիմնադրվեց «Տնտեսական և սոցիալական զարգացման կենտրոն» ոչ կառավարական կազմակերպությունը (ՏԱԶԿ, *Center for Economic and Social Development, CESD*): Այն արագ դարձավ ԱՀ Ֆինանսների նախարարությանը «մոտ կանգնած» ԱՀ Ազգային բյուջեի հանձնախմբի (*National Budget Group*) կորիզը, որի

Budget.Az կայքի մասին խոսել էինք նախորդ գլխում: Եվ ահա, 2005թ. սկսած, ԱՀ պատմության մեջ առաջին անգամ հիշյալ կայքը սկսում է հրապարակել Ադրբեջանի ռազմական ծախսերի մասին ուղղակի տվյալներ¹ (Աղյուսակ 5.1):

Կարծես թե գոհունակության համար առկա են բոլոր հիմքերը. վերջապես հայտնվեց ԱՀ ՌԾ-ի մասին տեղեկատվության գուցեն ոչ պաշտոնական, բայց գոնե «մոտ կանգնած» մի աղբյուր: Մակայն ադրբեջանական տեղեկատվության հետ աշխատելու մեր փորձն ապարդյուն չէր կարող անցնել, և այն կոչում է զգոնության: Իսկապես, Աղյուսակ 5.1-ի տվյալները, մեղմ ասած, տարօրինակ են:

Մինչև 2005թ. այստեղ բերված ԱՀ ՌԾ-ի մասին տվյալները (մին մասնաթ չափողականությամբ և որպես ՀՆԱ տոկոս) ճշգրտորեն համընկնում են ՍՄԽՀԻ տարեկան տեղեկատուների գնահատականներին (տե՛ս Հավելված 8, Աղյուսակ Հ8.3): Բայց *Budget.Az* կայքը սկսել է գործել միայն 2006-ից: Հետևաբար, բնական է ենթադրել, որ այն պարզապես վերատպել է ՍՄԽՀԻ 1995-2004թթ. Ադրբեջանին վերաբերող գնահատականները՝ զլանալով բերել սեփական որևէ այլ գնահատական և ցանկանալով ընդգծել, որ ՍՄԽՀԻ 1995-2004թթ. գնահատականները միանգամայն համարժեք են և ընդունելի: Մինչդեռ անգամ ՍՄԽՀԻ փորձագետները դրանք համարում էին ոչ արժանահավատ, ինչի համար էլ դրանք վերցնում էին քառակուսի փակագծերի մեջ: Նկատենք նաև, որ այդ տարիների ԱՀ պետական բյուջեների մասին *Budget.Az* կայքում (և ընդհանրապես ադրբեջանական ողջ մեդիա-դաշտում կամ պաշտոնական ու կիսապաշտոնական հրապարակումներում) անհնարին էր գտնել որևէ հրապարակում, ուր բերված կլիներ ԱՀ ՌԾ-ի մասին որևէ մանրամասն: Դրանք բացակայում էին (և են) նաև ՄԱԿ ԶԳԳ տվյալների գրադարանում:

Զարմանալի կերպով *Budget.Az* կայքի տվյալները համընկնում են ՍՄԽՀԻ տվյալներին նաև 2004-ից հետո (Աղյուսակ 5.1-ում դրանք ընդգծված են գույնով), և այդպես՝ ընդհուպ մինչև 2011թ.:

¹ <http://budget.az/budget/en/main?content=333>

Այս առումով հատկանշական են 2009թ. Ադրբեջանի ՌԾ-ի մասին գնահատումները: Հիշեցնենք, որ այդ տարի ԱՄՆ պետքարտուղարն իր *09 STATE 41027* հաղորդագրությունում՝ թվագրված 2009թ. ապրիլի 23-ով, «հատուկ Ադրբեջանի» համար բարձրացրեց այն հարցը, թե ինչպես կազդեն նավթի միջազգային գների տատանումներն ԱՀ պետբյուջեի կատարողականի, մասնավորապես՝ ռազմական ծախսերի վրա (տե՛ս նախորդ գլխի 4.5 բաժնում): *Budget.Az* կայքի տվյալներով, այդ տարի ԱՀ ռազմական ծախսերը կազմել էին 1.2 մլրդ մանաթ (տե՛ս Աղյուսակ 5.1): Նույն գնահատականն անվարան կրկնում է նաև ՍՄԽՀԻ-ին թե՛ իր 2012թ., թե՛ 2013թ. տեղեկատվություն (տե՛ս Հավելված 8, Աղյուսակներ 28.3 և 28.4):

Նույն գնահատականն է բերում նաև 2009-ին Բաքվում ԱՄՆ դեսպանության գործերի ժամանակավոր հավատարմատար Դ.Լուին 2009թ. հունվարի 16-ով թվագրված իր *09 BAKU 34* հաղորդագրությունում: Այն նվիրված էր ԱՀ 2009թ. նոր ընդունված պետական բյուջեի մանրամասներին, մասնավորապես՝ ռազմական ծախսերին, սակայն պարունակում է չափազանց ուշագրավ առանձնահատկություններ: Նշված հաղորդագրությունում նա հայտնում է.

«2.(C) 2008թ. նոյեմբերի 25-ին խորհրդարանում 92 կողմ, 8 դեմ ձայներ հավաքելուց հետո հաստատվեց ԱՀ կառավարության 2009թ. բյուջեն: Այդ մասին 2009թ. դեկտեմբերի 11-ին հաղորդագրություն տպագրվեց կառավարական "*Azerbaijan*" պարբերականում, ըստ որի՝ 2009թ. պետբյուջեի եկամտային հատվածը կազմելու է 12.12 մլրդ մանաթ (\$15.17 մլրդ), ծախսայինը՝ 12.36 մլրդ մանաթ (\$15.39 մլրդ). ներկայացված բյուջեն չնչին դեֆիցիտային է, մոտ \$200 մլն, ավելի քիչ, քան ՀՆԱ 0.4%-ը. ...Բյուջեի հաշվարկում ընկած է նավթի \$70/բ գինը: (Նշում. Ադրբեջանում սովորություն են դարձել բյուջեի ցուցանիշների տարեմիջյան լրացուցիչ ավելացումները, այնպես որ՝ մեծ հավանականությամբ բերված թվերը դեռ կփոխվեն տարեվերջին):

3.(C) Ծախսային հատվածի առյուծի բաժինը կազմում են ... ռազմական ծախսերը (1.2 մլրդ մանաթ), ... **Նախագահ Ալիևն իր ամսնորյա ուղերձում հայտարարեց, որ 2009-ին պաշտպանական բյուջեն կաճի: Մինչդեռ, 2009թ. բյուջեն 10%-ով փոքր է 2008-ի նախնա-**

կան և 25%-ով 2008-ի վերանայված բյուջեից, որի պաշտպանական ծախսերն ավելին էին, քան \$2 մլրդ-ը: (Նշում. մեծ հավանականությամբ Ալինը մտադիր է ավելացնել ռազմական ծախսերը տարեկեսին: Մենք կշարունակենք ուշիմ հետևել այս հարցին):»

(տե՛ս Հավելված 1, թիվ 1219, ընդգծումները մերն են– *Մ.Մ.*)

Մեջբերումն ուշագրավ է նախ նրանով, որ վկայում է, որ, ի տարբերություն «կառավարությանը մոտ կանգնած» *Budget.Az* կայքի կամ ՍՄԽՀԻ փորձագետների, պրն Լուն լավատեղյակ է ադրբեջանական բյուջետային քաղաքականության առանձնահատկություններին: Մասնավորապես, պրն Լուն չէր կասկածում, որ 2009թ. ԱՀ ՌԾ 1.2 մլրդ մանաթ գնահատականը միայն նախնական է և դեռ կավելացվի բյուջեի տարեմիջյան վերանայումների ընթացքում (տե՛ս նախորդ գլխի 4.3 բաժնում): Մինչդեռ, առ այսօր ՍՄԽՀԻ-ին իր բոլոր տեղեկատուներում և տվյալների գրադարանում բերում է հենց այս 1.2 մլրդ մանաթ «գնահատականը», այն էլ առանց փակագծերի մեջ վերցնելու (տե՛ս Հավելված 8, Աղյուսակներ 28.3 և 28.4): Պրն Լուի ականջները որսացել էին նաև Ի.Ալինի 2008թ. ամանորյա ելույթի հետևյալ բառերը. «Գալիք տարի մենք էլ ավելի կմեծացնենք մեր ռազմական ծախսերը...», որոնց, թերևս, ականջալուր չեղան *Budget.Az* կայքի (տե՛ս Աղյուսակ 5.1) և ՍՄԽՀԻ փորձագետները (Հավելված 8, Աղյուսակներ 28.3 և 28.4): Վերջապես, դեռ 2009թ. հունվարին նրա համար գաղտնիք չէր, որ 2008թ. ԱՀ ռազմական ծախսերը կազմել էին մոտ \$2 մլրդ (մոտ 1.7 մլրդ մանաթ): Հանգամանք, որն այդպես էլ «գաղտնիք» մնաց *Budget.Az* կայքի և ՍՄԽՀԻ փորձագետների համար (տե՛ս Աղյուսակ 5.1, Աղյուսակներ 28.3 և 28.4):

Ցավոք, պրն Լուն շուտով տեղափոխվեց այլ աշխատանքի և իր վերջին նշման խոստումը՝ ուշիմ հետևել ԱՀ 2009թ. ռազմական ծախսերի հարցին, այդպես էլ չհասցրեց կատարել (մենք կփորձենք ուղղել այդ բացը ստորև)¹: Իսկ այստեղ տեղին է նկատել, որ ԱՀ պետական բյուջե-

¹ Ինչպես նախորդ գլխում արդեն շտկել էինք 2009թ. ԱՀ պետբյուջեի գնահատականը: Այդ տարի բյուջեի իրական դեֆիցիտը կազմեց մոտ \$5.2 մլրդ՝ նախատեսված \$200 մլն-ի փոխարեն (տե՛ս Նկար 4.5):

ների մասին առաջին քիչ թե շատ մանրամասն հրապարակումները *Budget.Az* կայքում հայտնվում են միայն 2012թ. վերջից: Դրանք նվիրված են ԱՀ 2011 և 2012թթ. պետական բյուջեներին և առաջին անգամ ու զարմանահրաշ կերպով պարունակում են «պաշտպանական ծախսեր» տողը (համապատասխան թվերը ներկայացված են Աղյուսակ 5.1-ում):

Սակայն *Budget.Az* կայքի տվյալներում հրաշքները սրանով չեն ավարտվում: 2011 և 2012թթ. համար բյուջեների ծախսային հատվածում, «պաշտպանական ծախսեր» տողից բացի, դրա եկամտային հատվածում կարելի է տեսնել, օրինակ, Շուշի, Լաչին, Ադդամ, Ֆիզուլի և Ջեբրայիլ քաղաքների գործունեությունից գոյացած եկամուտների ներհոսքի տողերը: Իսկ ծախսային հատվածում՝ այդ քաղաքներին ուղղված հետադարձ դրամային հոսքերը: Հանգամանք, որը մեզ հիմք է տալիս *Budget.Az* կայքի տեղեկատվությունը դասել առավելապես *ֆենթրզի* գրականության ոլորտին, այլ ոչ թե դիտարկել այն որպես երկրի տնտեսական հիմնական ցուցանիշները ներկայացնող քիչ թե շատ հավաստի աղբյուր:

Ունենք բոլոր հիմքերը պնդելու, որ այստեղ տեղի է ունեցել «ֆալսիֆիկացիոն վավերացման» երկուստեք գործընթաց: Իսկապես, իր կայքէջում հետին թվով վերատպելով ՍՄԽՀԻ 1995-2005թթ. քառակուսի փակագծերում վերցված անհավաստի գնահատականները (տե՛ս Հավելված 8, Աղյուսակ 28.3)՝ *Budget.Az* կայքի փորձագետները յուրօրինակ կերպով «հաստատում» են ՍՄԽՀԻ 1995-2005թթ. այս, ինչպես կտեսնենք ստորև՝ էապես խեղաթյուրված տվյալները՝ վավերացնելով դրանք տեղական և «մոտ կանգնած» կազմակերպության անունով: Եվ հակառակը, հենվելով *Budget.Az* կայքում հայտնված 2005-10թթ. ՌԾ-ի մասին կիսապաշտոնական և այսպես ասած «հավաստի» տվյալների վրա՝ ՍՄԽՀԻ փորձագետները հնարավոր համարեցին կրկնել դրանք 2005-10թթ. իրենց տեղեկատուներում և այլևս քառակուսի փակագծերում չբերել ԱՀ ռազմական ծախսերի մասին *Budget.Az* կայքից վերցված այս տվյալները:

Երկուստեք հաճելի այս իրավիճակը շարունակվեց մինչև 2011թ. ապրիլը, երբ անգամ ՍՄԽՀԻ «դյուրահավատ» փորձագետները համա-

րեցին, որ *Budget.Az*-ն արդեն, պատկերավոր ասած, «չափն անցնում է»: Իրոք, հիշյալ կայքի ԱՀ ՌԾ 2011թ. գնահատականը կազմել էր ընդամենը 1.345 մլրդ մանաթ (տե՛ս Աղյուսակ 5.1): Մինչդեռ ՍՄԽՀԻ համապատասխան գնահատականը մոտ երկու անգամ ավելին է՝ 2.452 մլրդ մանաթ (տե՛ս Հավելված 8, Աղյուսակ Հ8.3): Եվ ինչպես տեսանք վերը, անգամ այս 2.452 մլրդ գնահատականը չէր համապատասխանում իրականությանը: 2011թ. ԱՀ ՌԾ համարժեք գնահատականը կազմում է ավելի քան 4.0 մլրդ մանաթ, այսինքն՝ 3.5 անգամ ավելի, քան *Budget.Az*-ի գնահատականը:

Ուստի, անհրաժեշտ է փաստել, որ չնայած իր առաքելության մասին ճոռոմ խոսքերին, *Budget.Az* կայքի հիմնական նպատակն է մոլորեցնել սեփական քաղաքացիներին երկրի ՌԾ իրական ծավալների հարցում, ապակողմնորոշել այս հարցով զբաղված միջազգային կազմակերպություններին, փորձագիտական հանրությանն ու կառույցներին:

Ընդհանրապես, հարկ է նշել, որ ՌԾ-ի հետ կապված «կեղծ վավերացման» նշված երկուստեք գործընթացը բոլորովին էլ արտառոց երևույթ չէ մերօրյա Ադրբեջանի և այս գործընթացներին ներգրավված միջազգային որոշ կառույցների համար: Նույն բանն է կատարվում ԱՀ պետբյուջեի, մակրոտնտեսական ընդհանուր ցուցանիշների հետ, երբ ՀԲ և ԱՄՀ որոշ փորձագետների մասնակցությամբ դրանք նախ խեղաթյուրվում են Ադրբեջանում, հրապարակվում տեղական աղբյուրներում (տե՛ս Գ. 3 և 4), այնուհետև ԱՀ պետբյուջեի այս «նկարած» ցուցանիշները հպարտորեն ներկայացվում են, օրինակ, Համաշխարհային տնտեսական ֆորումի (ՀՏՖ, *WEF*) Դավոսյան հանդիպումներում, որից հետո տեղ են գտնում ՀՏՖ «Երկրների մրցունակության» ամենամյա տեղեկագրերում՝ ի լուր աշխարհի տարածելով այլոց նկատմամբ ԱՀ «մրցակցային առավելության» մյուծոսը [7]: Բացարձակապես նույնն է իրավիճակը նաև ժողովրդագրական վիճակագրությունում: Ադրբեջանում ժողովրդագրական վիճակագրությունը ենթարկվում էր (և է) զանգվածային խեղաթյուրումների նախ ԱՀ պաշտոնական հրապարակումներում [10]:

Այնուհետև դրանք վավերացվում ու տարածվում են հեղինակավոր մի շարք կազմակերպությունների, այդ թվում՝ ՄԱԿ ԺԴ-ի (*UNPD*) կողմից [3]: Այնպես որ, այստեղ մենք գործ ունենք **պաշտոնական Բարձր գործելակերպ դարձած «Ֆալսիֆիկացիոն վավերացման» մտածված ու համակողմանի պետական քաղաքականության հետ:**

Այս պարագայում, ինչքանով էր անհրաժեշտ Հայաստանի Հանրապետության ՌԾ-ի հետ կապված ՍՄԽՀԻ վերը նշված ծանուցումը: Իսկ ո՞ր աղբյուրից են ՍՄԽՀԻ փորձագետները ստացել ԱՀ զինուժի ռազմական թոշակների կամ ընդհանուր ընթացիկ պաշտպանական ծախսերի մասին տվյալները: Եվ որքանով են դրանք *արժանահավատ*¹: Ու եթե հաշվի առնենք դրանց իրական ծավալները, ապա ինչքանով կավելանան ԱՀ ռազմական ծախսերը: Արդյո՞ք ավելի նպատակահարմար չէր լինի, եթե այս, մեծ հաշվով՝ անիմաստ ծանուցման փոխարեն ՍՄԽՀԻ փորձագետները պարզաբանեին, օրինակ, ԱՀ Պաշտպանական արդյունաբերության նախարարության բյուջեի հաշվառման հետ կապված խնդիրը:

Հասկանալու համար, թե ճշգրտության ինչ աստիճան կարելի է (և պետք է) ակնկալել միջազգային հեղինակավոր աղբյուրների Ադրբեջանի ՌԾ գնահատականներից, համեմատենք ՍՄԽՀԻ տվյալները մեկ այլ, ոչ պակաս հեղինակավոր աղբյուրի տվյալների հետ: Օրինակ՝ ԱՄՆ Պետական դեպարտամենտի Սպառազինության վերահսկման բյուրոյի (ԱՄՆ ՊԴԲ) «Աշխարհի ռազմական ծախսերը և զենքի փոխանցումները» (*World Military Expenditures and Arms Transfers, WMEAT*) հաշվետվությունների ԱՀ ՌԾ գնահատականների հետ [4-6]: Համարժեք համեմատության համար բոլոր ցուցանիշները կբերենք 2010թ. հաստատուն ԱՄՆ դոլարով, ինչի համար կօգտագործենք ՍՄԽՀԻ մոտեցումը՝ հիմնված ԱՄՆ Աշխատուժի բյուրոյի կողմից հաշվարկվող ՍԳՑ արժեքների վրա (*consumer price index, CPI*)²: Ադրբեջանի և Հայաստանի ՌԾ-ի վերաբերյալ

¹ Տարատեսակ էլեկտրոնային գրադարաններում, այս կամ այն վարկանիշային աղյուսակներ կազմող միջազգային և այլ կազմակերպությունների հրապարակումներում հարավկովկասյան հանրապետությունների գնահատականների *արժանահավատության* չարաբաստիկ հարցին առիթ ունեցել ենք անդրադառնալու [3]:


² <http://www.bls.gov/cpi/cpicalc.htm>

2012թ. վերջի դրությամբ *WMEAT* հասանելի բոլոր հաշվետվությունների [4-6] տվյալներն ամբողջացվում են Հավելված 8, Աղյուսակ 28.5-ում:

Ինչպես տեսնում ենք, համաձայն *WMEAT* 2000թ. պաշտոնական հաշվետվության [5], ԱՀ ռազմական ծախսերը 1999թ. կազմել էին մոտ 927 մլն 1999թ. ԱՄՆ դոլար (տե՛ս Աղյուսակ 28.5), ինչը համարժեք է 1.21 մլրդ 2010թ. ԱՄՆ հաստատուն դոլարին: Մինչդեռ, ՍՄԽՀԻ-ն գնահատում էր դրանք 257 մլն 2010թ. ԱՄՆ հաստատուն դոլար (տե՛ս Աղյուսակ 28.3), այսինքն՝ մոտ 5 անգամ ավելի քիչ: 1995թ. համար պատկերը հետևյալն է. *WMEAT 2000* հաշվետվություն՝ մոտ 600 մլն 1999թ. ԱՄՆ դոլար (տե՛ս Աղյուսակ 28.5), ինչը համարժեք է 781 մլն 2010թ. հաստատուն ԱՄՆ դոլարին: ՍՄԽՀԻ-ն տալիս է 171 մլն 2010թ. ԱՄՆ հաստատուն դոլար (տե՛ս Աղյուսակ 28.3): Տարբերությունն այս անգամ էլ մոտ 5 անգամ է: Նկար 5.1-ում ամբողջացնում ենք 1992-99թթ. համար ԱՀ ՌԾ-ի մասին ՍՄԽՀԻ և ԱՄՆ ՊԴԲ գնահատականները՝ բերված միևնույն 2010թ. հաստատուն ԱՄՆ դոլարով: Համեմատության համար բերվում են նաև Հայաստանի Հանրապետության ՌԾ-ի մասին ՍՄԽՀԻ գնահատականները:

Ինչպես տեսնում ենք, 1992-1999թթ. համար ԱՄՆ ՊԴԲ գնահատականները տարբերվում են միմյանցից մինչև 3, իսկ ՍՄԽՀԻ գնահատականներից՝ մոտ 5 անգամ: Նույնն է իրավիճակը, եթե անդրադառնանք ՌՀՄԻ «*Military Balance*» տեղեկատուներին [12]: Բերված նկարը պարզորոշ ցույց է տալիս ԱՀ ՌԾ գնահատականների հետ կապված այն անմխիթար վիճակը, որը տիրում էր դարավերջին հարցով զբաղվող աշխարհի նույնիսկ ամենահեղինակավոր կազմակերպությունների տվյալներում: Ընդգծենք՝ խոսքը միևնույն երկրի, միևնույն կերպ սահմանված ռազմական ծախսերի մասին է, որոնք հաշվարկվում և արտահայտվում են միևնույն՝ 2010թ. ԱՄՆ հաստատուն դոլարով: Այնուամենայնիվ, գնահատականների տարբերությունն այստեղ հասնում է ոչ թե տոկոսների, այլ անգամների: Կարելի է միայն պատկերացնել, թե ինչպիսին է վիճակն այլ, ոչ այնքան հեղինակավոր աղբյուրներում: Ոչ մի ինժեներ լուրջ չի ընդունի անգամ երրորդական կարևորության մի նախագիծ, որում

միննույն չափողականությամբ արտահայտված նույն ցուցանիշի հաշվարկային արժեքները տարբերվեն միմյանցից 3-5 անգամ: Առավել ևս, սա ընդունելի չէ ՌԾ նման լրջագույն հետևանքներ ունեցող ցուցանիշի դեպքում: Ու հատկապես սեփական ռևանշիստական նկրտումներն առանձնապես չքողարկող երկրի պարագայում:



Աղբյուրները՝ <http://milexdata.sipri.org/>, [4-6]
 (տե՛ս նաև Հավելված 8, Աղյուսակներ Հ8.3 և Հ8.5)

2013թ. ապրիլի 2-րդ կեսին հասանելի դարձան երկրների ՌԾ ՄՄԽՀԻ թարմացված գնահատականները: Աղբյուրազանցական Հանրապետությանը վերաբերող այս տվյալները, Հայաստանի համապատասխան ցուցանիշների հետ միասին, ամբողջացված են Հավելված 8-ի Աղյուսակ Հ8.4-ում: Ինչպես տեսնում ենք, դրանք պարունակում են որոշ ուրախալի միտումներ, սակայն դեռ հեռու են Աղբյուրազանցական ՌԾ-ի շուրջ ստեղծված գավեշտալի իրավիճակը շտկելուց: Ուրախալի է, իհարկե, որ սկսած

2011-ից՝ ՌԾ գնահատման գործում ՍՄԽՀԻ փորձագետներն այլևս չեն հենվում *Budget.az* կայքի ամբողջապես խեղաթյուրված տվյալների վրա: Այսպես, 2011թ. աղբբեջանական ՌԾ-ները ՍՄԽՀԻ փորձագետները գնահատում են 2.43 մլրդ մանաթ (մոտ 3.0 մլրդ 2011թ. ԱՄՆ հաստատուն դոլար)՝ *Budget.az* կայքի 1.4 մլրդ մանաթի փոխարեն: Իսկ 2012թ. աղբբեջանական ռազմական ծախսերը գնահատվել են 2.5 մլրդ մանաթ (մոտ 3.2 մլրդ 2012թ. ԱՄՆ հաստատուն դոլար) *Budget.az* կայքի 1.41 մլրդ մանաթ «կանխատեսման» փոխարեն (տե՛ս Աղյուսակ 5.1 և Հավելված 8, Աղյուսակ Հ8.4): *Budget.az* կայքի 2.7% և 2.8% գնահատումների համեմատ ավելի խելամիտ տեսք ունեն և որպես ՀՆԱ տոկոս ՌԾ նոր գնահատումները՝ 4.9% և 4.6%, 2011 և 2012թթ. համար համապատասխանաբար:

Բայց, ինչպես տեսանք վերը, իրականում խեղաթյուրված էին ոչ միայն 2011թ. աղբբեջանական ՌԾ «ԱՀ կառավարությանը մոտ կանգնած» *Budget.az* կայքի տվյալները, այլ նաև հենց ՍՄԽՀԻ նոր գնահատականները: Դրանք համարժեքորեն չէին արտացոլում ոչ ԱՀ Պաշտպանական արդյունաբերության նախարարության բյուջեն, ոչ պատվիրված ու գնված սպառազինության ծավալները, ոչ «հատուկ պաշտպանական ծրագրերի» (*special defence projects*) ծավալները և այլն: Ունենք բոլոր հիմքերը ենթադրելու, որ ԱՀ ՌԾ ծավալների թերագնահատմանը միտված ՍՄԽՀԻ գործելակերպը հիմնականում պահպանվել է և այսօր: Այլապես դժվար է հասկանալ, թե ինչու նորացված ու թարմացված ՍՄԽՀԻ 2013թ. գրադարանը ճշգրտորեն կրկնում է 1992-2011թթ. ԱՀ ՌԾ-ի մասին իրականությունից հեռու իր նախկին տվյալները, ինչո՞ւ համարժեք կերպով հաշվի չեն առնված Իսրայելից և այլ երկրներից ԾՄՊ վերջին տարիների գնումների իրական ծավալները, մատակարարված սպառազինության բնույթը, ինչո՞ւ չեն հաշվառված ռազմական նշանակություն ունեցող այլ ծախսեր:

Իրադրությունը հարցը քննող հեղինակավոր այլ կազմակերպությունների նորացված գնահատականներում նույնիսկ ավելի վատն է: 2013թ. ապրիլին թարմացրեց իր ՌԾ տվյալների գրադարանը ՌՀՄԻ-ն

(Լոնդոն, *IISS*): Համաձայն իր *Military Balance 2013* տեղեկատուի¹, Ադրբեյջանի 2012թ. ռազմական ծախսերը կազմել են \$1.77 մլրդ (2010-ինը՝ \$1.68 մլրդ), ինչը՝ ըստ ՌՀՄԻ փորձագետների, կազմում էր այդ տարի Ադրբեյջանի ՀՆԱ 2.5%-ը: Եվ փույթ չէ, որ այս գնահատականն էապես զիջում է անգամ ՍԽՄՀԻ համապատասխան գնահատականին՝ 2.5 մլրդ մանաթ և ՀՆԱ 4.6%: Փույթ չէ, որ դեռ 2013թ. հունվարի 16-ին հեղինակավոր *Associated Press*-ը, վկայակոչելով ԱՀ նախագահ Ի.Ալիևի հերթական ռազմաշունչ ելույթը, գնահատել էր 2012թ. ԱՀ ՌԾ-ն \$3.0 մլրդ և նշում էր Ի.Ալիևի մտադրությունը 2013-ին այն հասցնել \$3.7 մլրդ-ի²:

Հայտնի է, որ երկրների ՌԾ-ի վերաբերյալ ՍՄԽՀԻ, ՌՀՄԻ, անգամ ԱՄՆ ՊԴԲ հրապարակումները, էլ չենք ասում տարատեսակ ՋԼՄ և բազմաթիվ վերլուծական հանդեսների մասին, ըստ էության, ունեն փորձագիտական բնույթ, և, այսպես ասած, կաղապարված չեն պաշտոնական պատասխանատվությամբ: Այլ է իրավիճակը հետախուզական բնույթի պետական կազմակերպությունների պաշտոնական տվյալների դեպքում: Դրանց կողմից բերվող տվյալներն անհրաժեշտաբար պետք է ունենան հավաստիության ավելի բարձր աստիճան և հիմնված պետք է լինեն ոչ միայն ու ոչ այնքան փորձագիտական գնահատականների, որքան բազմիցս ստուգված և վերստուգված փաստացի տվյալների վրա: Ուստի, չափազանց ուշագրավ է, թե ինչպես են գնահատում Ադրբեյջանի ՌԾ այս բնույթի ամենահայտնի (ու, թերևս, միակ բաց) աղբյուրը՝ ԱՄՆ Կենտրոնական հետախուզական վարչության (ԿՀՎ) «*World Factbook*» ամենամյա տեղեկատուները [8]:

Հավելված 8-ի Աղյուսակ չ8.6-ում ի մի են բերվում ԱՀ ՌԾ (*military expenditure*) վերաբերյալ ԿՀՎ բոլոր գնահատականները 1992-2011թթ. համար³: Դրանք ապշեցուցիչ են իրենց աղբատիկությամբ. նկատի

¹ <http://www.iiss.org/publications/military-balance/the-military-balance-2013/>

² <http://www.foxnews.com/world/2013/01/16/azerbaijan-hikes-military-spending-to-37b-assertions-persist-with-neighboring/>: *Associated Press*-ի 2013թ. հունվարի 16-ի այս հաղորդագրությունն արագ տարածվեց ողջ աշխարհով և վերատպվեց տասնյակ հաղորդագրություններում: Մեջբերում ենք ըստ ամերիկյան *FOXNEWS* հեռուստատվիքի:

³ Գիրքը տպագրության պատրաստելու պահին (2013թ. մայիս) ԿՀՎ կայքում բացակայում էր ԱՀ 2012թ. ՌԾ-ի մասին որևէ գնահատական:

ունենք, իհարկե, գնահատականների իրականացման թվաքանակը: **Անցած 20 տարիներին իր ամենամյա տեղեկատուներում ԱՀ ՌԾ-ի մասին տվյալներ ԿՀՎ-ն բերում է միայն *հինգ* անգամ:** Վերջինը՝ 1999-ին: Հավաստի տվյալների բացակայության պատճառով 1999-ից ի վեր ԿՀՎ-ն ԱՀ ՌԾ ծավալների գնահատականներ այլևս չի կատարում: Ավելի վատ է իրադրությունը ԱՀ ռազմական ծախսերը որպես ՀՆԱ տոկոս գնահատման դեպքում: **Անցած 20 տարիների համար կատարված է միայն *երկու աղյուսի* գնահատում:** 1995-ին դրանք գնահատվել էին ՀՆԱ 10%, ինչն, ի դեպ, մոտ 4 անգամ ավելին է, քան ՍՄԽՀԻ համապատասխան գնահատականը (2.7%, տե՛ս Աղյուսակ 28.3): Սյուս, առ այսօր վերջին գնահատականը կատարված է 1999-ին (2.6%): Հասկանալի է, որ այս պարագայում նույնպես ԱՄՆ ԿՀՎ-ն Ադրբեջանի ռազմական ծախսերը որպես ՀՆԱ տոկոս այլևս չի գնահատում: Գ. 3-ում արդեն խոսել էինք Ադրբեջանի ՀՆԱ պաշտոնական և որոշ միջազգային կառույցների գնահատականների անհուսալիության մասին: Այս պարագայում, հիմնել մեկ անհուսալի մեծության գնահատականը մեկ այլ, նույնիսկ ավելի անհուսալի գնահատված մեծության վրա՝ պարզապես անիմաստ է:

Ի դեպ, ԱՄՆ ԿՀՎ [8] տեղեկատուները բերում են չափազանց հետաքրքիր տվյալներ ԱՀ բանակում ծառայելու տարիք մտնող (18 տարեկան) արական սեռի բնակչության տարեկան թվաքանակի մասին: 2011թ. համար բնակչության այս հատվածի (*կոհորտայի*) ԿՀՎ գնահատականը 2010-ի համեմատ կտրուկ նվազել է՝ մոտ 10 հազարով (տե՛ս Հավելված 8, Աղյուսակ 28.6 և Նկար 28.3): Հաշվի առնելով այս կոհորտայի համամասնությունը ԱՀ ընդհանուր բնակչության թվաքանակում՝ սա նշանակում է ԱՀ բնակչության «հանկարծակի» նվազում մոտ 65-75 հազար մարդով ընդամենը մեկ տարում: Այս արտառոց գնահատականը կապված է ԿՀՎ-ի կողմից ԱՀ ժողովրդագրական պետական վիճակագրության տվյալների հանդեպ վստահության կորստի և դրանց փոխարեն սեփական գնահատականների կիրառման հետ: Ինչն ամբողջապես հաստատում է մեր ավելի վաղ կատարած եզրահանգումը պաշտոնա-


կան Բաքվի կողմից իրականացվող ԱՀ ժողովրդագրական վիճակագրության զանգվածային կեղծարարությունների և այս գործընթացին ներգրավված որոշ միջազգային կազմակերպությունների գործելակերպի մասին (ավելի մանրամասն տե՛ս Հավելված 8.6-ում և [3, 9, 10]):

Հաշվի առնելով վերը բերված փաստերը և ԱՀ ՌԾ-ի վերաբերյալ ՄԱԿ ԶԳԳ, ԱՄՆ ՊՂԲ, ԿՀՎ, *Ջեյնս* գործակալության և առկա քիչ թե շատ հավաստի այլ տվյալները՝ փորձենք գնահատել Ադրբեջանի ռազմական ծախսերի *հրական* տարեկան և գումարային ծավալները: ՄՄԽՀԻ տվյալների հետ համադրելիության պահպանման համար շտկված գնահատականները կբերենք 2010թ. ԱՄՆ հաստատուն դոլարով, իսկ բոլոր փոխարկումները կիրականացնենք՝ հենվելով ԱՄՆ Աշխատուժի վիճակագրական բյուրոյի կողմից առաջարկվող ՄԳՑ արժեքների վրա՝ այնպես, ինչպես անում են ՄՄԽՀԻ փորձագետները:

Նկար 5.2-ում բերվում են ԱՀ ՌԾ ՄՄԽՀԻ բոլոր գնահատականները 1992-2011թթ. համար ԱՄՆ հաստատուն դոլարով [2] առ 2013թ. մարտը¹: Դժվար չէ հաշվարկել, որ համաձայն ՄՄԽՀԻ գնահատականների, Ադրբեջանի ընդհանուր ռազմական ծախսերը 1992-2011թթ. ժամանակահատվածում կազմել են \$14.48 մլրդ 2010թ. ԱՄՆ հաստատուն դոլար (կամ մոտ \$15.46 մլրդ ԱՄՆ 2013թ. դոլար): Նույն նկարում բերում ենք նաև ԱՀ տարեկան ՌԾ շտկված գնահատականները: Ինչպես տեսնում ենք, շտկված տվյալների համեմատ ՄՄԽՀԻ տվյալները էապես թերագնահատում են Ադրբեջանի ռազմական ծախսերը՝ դիտարկված գրեթե ողջ ժամանակահատվածում: Դժվար չէ հաշվարկել, որ 1992-2011թթ. համար Ադրբեջանի ռազմական գումարային ծախսերն իրականում կազմել են **\$29.06 մլրդ 2010թ.** ԱՄՆ հաստատուն դոլար (կամ մոտ **\$31.02 մլրդ ԱՄՆ 2013թ. դոլար**), այսինքն՝ մոտ երկու անգամ ավելի, քան դա հետևում է ՄՄԽՀԻ տվյալներից: Հիշեցնենք նաև, որ ԱԶԳ «հիմնական նավթի» փուլի մեկնարկից սկսած՝ հում նավթի և հարակից գազի արտահանումների ոլորտում «գորշ» կոռուպցիոն բաղադրիչի մեր գնահատա-

¹ 2013թ. ապրիլին հրապարակվեցին երկրների ՌԾ-ի մասին ՄՄԽՀԻ թարմացված տվյալները: Դրանց անդրադարձել ենք վերը:

կանները՝ հիմնված ԱՎՊԿ և ԱՀ Մաքսային ծառայության տվյալների տարբերության վրա, կազմում էին մոտ \$31.0 մլրդ (տե՛ս Գ. 3, բաժին 3.1-ում): Այսպիսի գուգադիպումը դժվար է պատահական համարել:



Աղբյուրները՝ [2, 4-6, 8, 11, 12] և սեփական հաշվարկներ

ԱՀ ՌԾ քննությունը եզրափակենք հետևյալ դիտարկումով: Մենք հեռու ենք այն մտքից, թե ծախսված այս մոտ \$30 մլրդ-ը օգտագործվել է 100% նպատակային կերպով և բարձր արդյունավետությամբ: Հակառակը, կարծում ենք, որ, ըստ էության, Ադրբեջանի քաղաքացիներից օտարված այս միջոցները ծախսվել են այս երկրի սոցիալ-տնտեսական համակարգին բնորոշ անարդյունավետությամբ և երկրի կոռուպցիոն դիմագծին համահունչ:

Ընդհանրապես ասել, թե Ադրբեջանում առկա է շոշափելի կոռուպցիա, նշանակում է ոչինչ չասել: Այստեղ նույնիսկ բավարար չէ նշել, որ համաձայն *Թրանսփարենսի ինթերնեյշնրլ (ԹԻ)* հայտնի միջազգային կազմակերպության տվյալների¹, վերջին երկու տասնամյակների ընթաց-

¹ http://www.transparency.org/policy_research/surveys_indices/cpi/previous_cpi

քում կոռուպցիան Ադրբեջանում զգալիորեն ավելին էր, քան մեր տարածաշրջանի որևէ այլ երկրում: Ջոն Հոփկինսսի համալսարանի, Փ.Նիտցեի անվան Միջազգային բարձրագույն հետազոտությունների կենտրոնի Կենտրոնական Ասիայի և Կովկասի ինստիտուտի (*CACI*) փորձագետ Ս.Ռոզենբլումի (*Scott Rosenblum*) կարծիքով՝ «այն, ինչը կոռուպցիան Ադրբեջանում դարձնում է իր մասշտաբներով եզակի երևույթ, նավթային շահույթների հանկարծակի և զանգվածային ներհոսքն է երկիր: Իսկ այն դեռ երիտասարդ է, և պետական կառույցները պարզապես չեն կարող մարսել այս ողջ կանխիկը (*digest all of this cash*)»¹:

Այս առումով գունեղ են նաև *Wikileaks*-յան որոշ հրապարակումներ: Նախորդ գլուխներում արդեն մեջբերել էինք դրանցից մի քանիսը, որոնք նկարագրում էին ԱՀ կառավարության և Ի.Ալիևի գործելակերպը: Քաջ հայտնի են նաև *Wikileaks*-յան «Ադրբեջանական դոսյեի» այն հաղորդագրությունները, որոնք բնութագրում են Ի.Ալիևին որպես մաֆիայի պարագլուխ (Թիվ 1435, *09 BAKU 749*) կամ նկարագրում մերօրյա Ադրբեջանի ծավալուն և ճյուղավորված կլանաօլիգարխիկ համակարգը (Թիվ 1539, *10 BAKU 54*, Թիվ 1561, *10 BAKU 127*): Հավելենք, որ հայտնի Կազմակերպված հանցավորության և կոռուպցիայի տեղեկատվական ծրագիրը² 2012-ին ԱՀ նախագահ Ի.Ալիևին շնորհել էր «տարվա ամենակոռուպացված մարդ» տիտղոսը՝ հետևյալ ձևակերպամբ. «Ալիևների ընտանիքին՝ Ադրբեջանի բոլոր եկամտաբեր բիզնեսներից բազմամյա դրամաշորթության և կոռուպցիայի համար»³: Բայց իրավիճակը, թերևս, առավել ընդգրկուն բնութագրում է հետևյալ եզրահանգումը՝ կատարված 2008-ին մի հայտնի միջազգային վերլուծաբանի կողմից. «Երդվյալ կլանայնությունն այստեղ սովորական երևույթ է: Երկակի ստանդարտները՝ կյանքի նորմ: Դե, իսկ կոռուպցիան խորապես արմատավորված է երկրի մշակույթի մեջ» [13]:

¹ <http://www.cacianalyst.org/?q=node/5506>

² *Organized Crime and Corruption Reporting Project, (OCCRP)*:

³ <http://www.globalsecurity.org/military/world/azerbaijan/corruption.htm>

Ինչ վերաբերում է պաշտպանական ոլորտին, ապա այստեղ տիրող վիճակը լավագույնս նկարագրում է «Թուրան» լրատվական գործակալության վաշինգտոնյան թղթակցին 2012թ. օգոստոսի 6-ին տրված մի հարցազրույց¹: Դրանում ԱՀ Պաշտպանության նախարարությունում 17 տարի ծառայած Ռ.Մամեդովը (*Rashad Mamedov*), որը 2010-2012թթ. ղեկավարում էր նախարարության ֆինանսական բաժինը, պնդում էր, թե «պաշտպանական նպատակներով հատկացված միջոցների մեծ մասը յուրացվում է մի խումբ զինվորական բարձրաստիճան պաշտոնյաների կողմից»: Նմանօրինակ դիտարկումներով հարուստ են և *Wikileaks*-յան «Ադրբեջանական դոսյեի» հաղորդագրությունները:

Ընդհանրապես, առկա են բոլոր հիմքերը ենթադրելու, որ կոռուպցիայի աստիճանը ԱՀ ռազմական ոլորտում ընդհանրապես և սպառազինությունների գնումների գործընթացներում՝ մասնավորապես, նույնիսկ ավելին է, քան այս երկրի առանց այդ էլ բարձր կոռուպցիոն միջին ցուցանիշը: Նման եզրահանգման համար հիմք է հանդիսանում *ԹԻ* կազմակերպության բրիտանական ստորաբաժանման՝ 2013-ին հրապարակած «Պետությունների պաշտպանական հակակոռուպցիոն ցուցիչները» հաշվետվությունը [14]²: Այստեղ դիտարկվում են աշխարհի 82 պետություններ՝ ըստ ռազմական և սպառազինության մատակարարումների ոլորտում գրանցված կոռուպցիայի ցուցչի: Ցավոք, Ադրբեջանն այդ ցանկում ուղղակիորեն ներառված չէ, սակայն ներկայացված այլ տվյալները խոսուն են:

Նախ՝ նշված հաշվետվության հիմնական եզրակացության մասին: Այն հնչում է հետևյալ կերպ. «Նույնիսկ այն երկրներում, որոնցում ընդհանուր կոռուպցիայի մակարդակը մեծ չէ, իսկ ինստիտուցիոնալ կառույցների կայացվածությունը և արդյունավետությունը գնահատվում են բավական բարձր, ռազմական և սպառազինության մատակարարումների ոլորտում առկա է կոռուպցիայի անհամեմատ ավելի բարձր աստիճան»: Մասնավորապես, Իսրայելը, Ուկրաինան և Հարավային

¹ http://azerireport.com/index2.php?option=com_content&do_pdf=1&id=3676

² www.defenceindex.org

Աֆրիկան, որոնք *ԹԻ* տվյալներով կոռուպցիայի ընդհանուր ցածր ցուցիչներ և ինստիտուցիոնալ կայացած ու արդյունավետ կառույցներ ունեն, նշված հաշվետվությունում ներառված են ռազմական ոլորտում «բարձր կոռուպցիայի աստիճան» ունեցող երկրների խմբում (D⁺ ենթախումբ, [14]): Շատ ավելի վատթար են ՌԴ, Թուրքիայի, Բելառուսի և Վրաստանի գնահատականները: Դրանք ներառված են ռազմական և սպառազինության մատակարարումների ոլորտում կոռուպցիայի «շատ բարձր» ցուցանիշներով երկրների խմբի եզրագծում (D⁻ ենթախումբ, տե՛ս նույն տեղում): Ինչպես կտեսնենք հաջորդ բաժնում, Ադրբեջանին ծանր սպառազինություն (ԾՍՊ) մատակարարող երկրներն են հատկապես ՌԴ-ն, Ուկրաինան, Բելառուսը, Թուրքիան, Իսրայելը և Հարավային Աֆրիկան:

Այսպիսով, Ադրբեջանը զինող բոլոր հիմնական երկրները ռազմական և սպառազինության մատակարարումների ոլորտում «բարձր» կամ «շատ բարձր» կոռուպցիայի ցուցչով երկրներ են, և այս «գույզադիպումը» չափազանց մտահոգիչ է: Առավել ևս, եթե հաշվի առնենք թվարկված երկրներին բնորոշ գործելակերպը՝ վաճառել այլ աղբյուրներից անհասանելի բարձր տեխնոլոգիական ու գրոհային նշանակության արդի ԾՍՊ: Իրադրությունը դառնում է էլ ավելի ընդգծված, եթե հաշվի առնենք բուն Ադրբեջանի կոռումպացվածության «ռեկորդային» ցուցանիշները, ռազմատենչ հոետորաբանությունը, քաղաքական արկածախնդրությունների ու տարատեսակ զեղծարարությունների հանդեպ պաշտոնական Բաքվի հակվածությունը:

Հիմք ընդունելով ռազմական հարցերով ռուսաստանյան հայտնի վերլուծաբան Պավել Ֆելզենգաուերի փորձագիտական գնահատականը ՌԴ-ում, Ուկրաինայում և Բելառուսում սպառազինությունների մատակարարման ոլորտում «ընդունված» *откат*-ների մասին¹, ինչպես նաև խնդրին վերաբերող մի շարք միջազգային կազմակերպությունների (*SIPRI, Janes, US SD BACVA*) ու որոշ այլ աղբյուրների տվյալները, նշված

¹ Տե՛ս, օրինակ՝ <http://www.novayagazeta.ru/politics/55414.html>

երեք երկրներից Ադրբեջանին ԾՍՊ մատակարարումների ընթացքում գոյացած կոռուպցիոն մասնաբաժինը 1993-2012թթ. ընթացքում կարելի է գնահատել \$800-850 մլն-ի տիրույթում: Եվս մոտ \$270 մլն կազմում են ԾՍՊ մատակարարումների «*откат*»-ներն այլ երկրներից, հիմնականում՝ Իսրայելից¹ և Թուրքիայից: Այսպիսով, ռազմական ոլորտում միայն ԾՍՊ մատակարարումների մասով կոռուպցիոն բաղադրիչը 1993-2012թթ. ժամանակահատվածում Ադրբեջանում կազմում է մոտ \$1.0 մլրդ: Սակայն, ԱՀ պաշտպանական ոլորտի ընդհանուր կոռուպցիոն համայնապատկերում ԾՍՊ մատակարարումներն ընդամենը մեկ, այն էլ ոչ ամենածավալուն բաղադրիչն են: Այս առումով, շատ ավելի ընդգրկուն է ռազմական արդյունաբերության, շինարարության, դրամական սպասարկման ու ապահովագրության, հետազոտական ու զարգացման ծրագրերի, քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների ռազմականացված հատվածների հետ կապված «կոռուպցիոն շուկան»²: Այնպես որ, 1993-2012թթ. ժամանակահատվածում **ԱՀ ռազմական (պաշտպանական) ոլորտում կոռուպցիայի ընդհանուր ծավալը կազմում է մոտ \$3.0-5.0 մլրդ**³:

Վերջում նշենք հետևյալը: Մեզ՝ Ադրբեջանի տարածաշրջանային հարևանների համար ամոքիչ չէ Լոնդոնում տեղակայված ՌՀՄԻ-ի վերջերս կատարած այն դիտարկումը, թե «կառավարությունները շատ դեպքերում ռազմական ծախսերն օգտագործում են որպես քաղաքական գործիք: Իսկ դա, ռազմական ծախսերի ոլորտում, բերում է *մյութոսների* գոյացմանը: Որպես օրինակ կարելի է բերել Ադրբեջանը» (*The Military Balance*, 2013 [12]):

¹ Իսրայելի պարագայում հաշվի չեն առնված Ադրբեջանին մոտ \$1.6 մլրդ արժողությամբ սպառազինությունների մատակարարումները: Կարելի է ենթադրել, որ դրանց հաշվառման դեպքում բերվող գնահատականը մոտավորապես կկրկնապատկվի ու կկազմի \$2 մլրդ:

² Բաքվում ԱՄՆ բարձրաստիճան մի դիվանագետի խոսքերով, վերջինս «ադրբեջանական վերնախավի համար պարզապես կթու կոժ է հանդիսանում» (Թիվ 1528):

³ Համեմատության համար նշենք, որ համաձայն ՄՄԽՀԻ տվյալների՝ Հայաստանի Հանրապետության 1992-2011թթ. ժամանակահատվածում պաշտպանական ողջ ծախսերը կազմել են մոտ 4.0 մլրդ 2010թ. ԱՄՆ հաստատուն դոլար (Հավելված 8, Աղյուսակ շ8.3):

Հակառակը, հետևելով ռուս դասականներին՝ կարծում ենք, որ պատմության բեմահարթակում, առաջին ակտում պատից կախված հրացանն անհրաժեշտաբար կկրակի դրամայի 3-րդ ակտում: Մոտավորապես նույն կարծիքին է և ադրբեջանցի այն սպան, որը *Ռոյթթրս* գործակալությանը 2012թ. սեպտեմբերի 30-ին տված հարցազրույցում ասում էր. «Մենք շարունակ գենք ենք գնում: Միգուցե սա լավ բան է՝ Հայաստանին վախեցնելու համար: Բայց դե, դուք հո անընդհատ գենք չեք գնում այն պատից կախելու համար, որ վրան փոշի նստի: Մի օր այս ամենը կարող է և օգտագործվել»¹:

Եվ հետո, ՌՀՄԻ մեր գործընկերներին հարցնենք. կա՞րողյոք մարդկային պատմությունը կերտող ավելի գորեղ գործոն, քան *մյուլտսնները*:

5.2. Ո՞ր երկրներից և ի՞նչ սպառազինություն է գնում Ադրբեջանական Հանրապետությունը

Ադրբեջանի ընդհանուր ռազմական ծախսերի քննությունից հետո տրամաբանական է անդրադառնալ ՌԾ առանձին բաղադրիչների քննությանը: Հասկանալի պատճառով մեզ առաջին հերթին կհետաքրքրեն ԱՀ-ի կողմից գնված սովորական *ծանր սպառազինությունների* տիպաքանակական ցուցանիշները, այս գնումների ժամանակագրությունը և մատակարար երկրների ցանկը: Զգիտեմ՝ արժե՞ ասել, որ այս ամենի մասին տեղեկությունները սուղ են, շատ դեպքերում՝ ոչ ամբողջական և հակասական, ինչպես ԱՀ ռազմական ծախսերի, պետական բյուջեի, սղաճի, սոցիալական բևեռացման Զինիի գործակցի տվյալների, աղքատության, գործազրկության իրական մակարդակի կամ ԱՀ ժողովրդագրական վիճակագրության պարագայում:

Ինչպես միշտ, սկսենք պաշտոնական տվյալներից: Դրանք, ավելի ճշգրիտ՝ դրանց սակավությունը, խոսուն են: Հավելված 9-ի Աղյուսակ 29.1-ում բերում ենք ՄԱԿ Սովորական սպառազինության ռեգիստր (ՄԱԿ ՍՍՌ, *UN Register of Conventional Arms, UN RCA*) ներկայացված

¹ Մեջբերում ենք տառացիորեն, իսրայելական հայտնի *Haaretz* պարբերականից՝ <http://www.haaretz.com/news/diplomacy-defense/sources-azerbaijan-mulls-helping-israel-with-iran-attack-1.467628>

սովորական ԾՄՊ գնումների/արտահանումների մասին Ադրբեջանի բոլոր պաշտոնական տարեկան հաշվետվությունները: Հիշեցնենք, որ այս պաշտոնական ամենամյա հաշվետվությունները, ինչպես և ՄԱԿ ԶԳԳ ներկայացված երկրների ՌԾ-ի մասին պաշտոնական հաշվետվությունները (տե՛ս վերը՝ 5.1. բաժնում) կամավոր են: Սակայն, ինչպես նշում են ՄԱԿ ՍՍՌ դեկավարները, «Ակնկալվում է, որ երկրների կառավարությունները կգիտակցեն ծանր սպառազինության պաշտոնական հաշվետվություններ ներկայացնելու առաքելության կարևորությունը և պատասխանատու վերաբերմունք կցուցաբերեն այս սպառազինությունների գնումներն իրականացնելիս»¹: Հաշվետվությունները ներառում են սովորական ծանր սպառազինության (*Heavy Weapons*) մասին սովյալներ՝ դասակարգված ըստ 7 խմբի.

1. հիմնական մարտական տանկեր (ՀՄՏ, ավելի քան 16.7 տ դատարկ քաշով և 75 մմ և ավելի տրամաչափի հիմնական թնդանոթով տանկեր);
2. զրահատեխնիկա (ԶՏ, թրթուրավոր, կիսաթրթուրավոր կամ ակերով զրահապատ ինքնագնաց տեխնիկա, որն ունակ է տեղափոխել ավելի քան 4 հետևակային կամ զինված է առնվազն 12.5 մմ տրամաչափի ինտեգրացված զինահամակարգով);
3. մեծ տրամաչափի հրետանի (ՄՏՀ, ավելի քան 75 մմ տրամաչափի ինքնագնաց կամ քարշակ թնդանոթներ, հաուրիցներ, ռեակտիվ համազարկային կայանքներ);
4. մարտական ինքնաթիռներ (ՄԻ, ֆիքսված կամ փոփոխական երկրաչափությամբ ինքնաթիռներ, որոնք հատուկ նախագծված էին եղել կամ մոդիֆիկացվել են՝ կրելու համար ուղղորդվող և չուղղորդվող հրթիռներ, ռումբեր, թնդանոթներ, գնդացիներ կամ այլ զենք);
5. գրոհային ուղղաթիռներ (ԳՈւ, ուղղաթիռներ, որոնք նախագծված էին եղել կամ մոդիֆիկացվել են՝ կրելու համար «օդ-ԶՏ», «օդ-մակերևույթ», «օդ-ընդերք», «օդ-օդ» տիպի զենք);

¹ <http://www.un-register.org/HeavyWeapons/Index.aspx>

6. մարտական նավեր (ՄՆ, 500 տ ջրածավալի ռազմական օգտագործման համար զինված և հանդերձավորված նավեր և սուզանավեր, ինչպես նաև մինչև 500 տ ջրածավալի նավեր՝ զինված առնվազն 25 կմ հեռահարության հրթիռներով և տորպեդներով);
7. հրթիռներ և արձակման կայանքներ (ՀԱԿ, 25 կմ և ավելի հեռահարությամբ ղեկավարվող կամ չղեկավարվող հրթիռներ, բալիստիկ կամ թևավոր հրթիռներ և համապատասխան արձակման կայանքներ ու համալիրներ):

Հավելված 9-ի Աղյուսակ 29.1-ից հետևում է, որ անցած երկու տասնամյակի ընթացքում (1992-2011թթ.) Ադրբեջանը ծանր սպառազինությունների գնման պաշտոնական հաշվետվություն է ներկայացրել **միայն 6 անգամ՝** 2002, 2004-06, 2008-09թթ. համար: ԾՄՊ «գրոյական գնումներ» Ադրբեջանը ֆիքսել է 1996-97, 2000-01, 2003թթ. համար (գրոյական գնումների մասին տեղեկատվությունը նույնպես պաշտոնական հաշվետվություն է): Իսկ 1992-94, 1998-99 և 2007թթ. Ադրբեջանը ծանր սպառազինությունների պաշտոնական հաշվետվություն չի ներկայացրել ընդհանրապես: Եվ ստորև մենք կտեսնենք, թե ինչու:

Էլ ավելի վատ է վիճակն Ադրբեջանի ԾՄՊ ազգային ունեցվածքի (*national holdings*) մասին ամենամյա պաշտոնական հաշվետվությունների պարագայում: 2012թ. օգոստոսի դրությամբ ՄԱԿ ՄՍՌ գրադարանում¹ անցած երկու տասնամյակի (1992-2011թթ.) համար առկա էր Ադրբեջանի *միայն երեք* պաշտոնական հաշվետվություն՝ 1995, 1996 և 1997թթ. համար (Հավելված 9, Աղյուսակ 29.2): Ընդ որում, 1995 և 1996թթ. հաշվետվություններում ծանր սպառազինության ՀԱԿ բաղադրիչով նշվում է, որ այս տեղեկատվությունը գաղտնի է: Նկատենք նաև, որ ծանր սպառազինության ազգային ունեցվածքի հինգ բաղադրիչներով բոլոր այս երեք հաշվետվությունները նշում են միևնույն ցուցանիշները. 270 միավոր ՀՄՏ, 301 միավոր ՄՏՀ, 49 միավոր ՄԻ, 15 միավոր ԳՈւ և 16 միավոր ՄՆ:

¹ <http://www.un-register.org/HeavyWeapons/Index.aspx>

Այսպիսով, ՄԱԿ-ին անդամակցության օրվանից սկսած՝ Ադրբեջանն իր ԾՍՊ-ի մասին պաշտոնական հաշվետվությունները ՄԱԿ ՍՍՌ-ին ներկայացրել է, մեղմ ասած, ոչ ամբողջական: Այս առումով վիճակը նույնն է, ինչ ԱՀ ՌԾ-ի մասին ՄԱԿ ԶԳԳ պաշտոնական հաշվետվությունների պարագայում: Մտահոգիչն այն է, որ պաշտոնական Բաքվի այս գործելակերպը նույնպես գրեթե չի արժանացել պատկան մարմինների, միջազգային կառույցների դատապարտմանը (մի երկու բացառությամբ, որոնց մասին կխոսենք ստորև):

Այժմ անդրադառնանք Ադրբեջանի կողմից սովորական ԾՍՊ գնումների մասին ՍՄԽՀԻ տվյալներին: Դրանք երկու տիպի են: Առաջինն այսպես կոչված Միտումների գնահատողական արժեքներն են (ՄԳԱ)¹, որոնք դրամային տեսքով գնահատում են տվյալ տարում ԾՍՊ գնումների (առաքումների) ծավալները: Ինչպես հուշում է այս անվանումը և ինչպես չեն զլանում կրկնել ՍՄԽՀԻ փորձագետներն իրենց ամենամյա հրապարակումներում [2], ՄԳԱ-ներն ունեն միայն գնահատողական արժեք: Դրանք առաջին հերթին կոչված են տարբեր երկրների սպառազինությունների գնումների համեմատական կամ դրանց ժամանակագրական վերլուծությունների համար: Այդ նպատակով ՍՄԽՀԻ փորձագետները ՄԳԱ-ներն արտահայտում են ֆիքսված, բազային՝ 1990թ. հաստատուն ԱՄՆ դոլարով:

ՍՄԽՀԻ գրադարանը ՄԳԱ-ները բերում է երկու դասակարգմամբ՝ ըստ սովորական ԾՍՊ տեսակների² և ըստ մատակարար երկրների: Հավելված 9-ի Աղյուսակ 29.4-ում բերում ենք 2013թ. մարտի 21-ի դրությամբ հասանելի՝ Ադրբեջանի կողմից ԾՍՊ գնումների ՄԳԱ-ները երկու դասակարգմամբ և 1990թ. ԱՄՆ հաստատուն դոլարով (ՍՄԽՀԻ գրադարանի տվյալներ): Հետագա վերլուծությունների դյուրինացման համար

¹ SIPRI trend indicativ values, TIV.

² ՍՄԽՀԻ-ի կողմից ՄԳԱ-ներում ընդունված սովորական ԾՍՊ դասակարգումը մի փոքր տարբերվում է ՄԱԿ ԶԳԳ-ի կողմից կիրառվող դասակարգումից: Այսպես, ՄԳԱ «գրահատելիսկա» դասը ներառում է ՀՄՏ-ները, մինչդեռ ՄԱԿ ՍՍՌ-ը դրանք նշում է առանձին: ՍՄԽՀԻ-ի կողմից միասնական են ներկայացվում նաև ԳՈւ և ՄԻ դասերը: Բացի այդ, ՄԳԱ-ներում հակաօդային պաշտպանության կայանքները (ՀՕՊ) նշվում են առանձին:

ՄԳԱ-ների արժեքները բերում ենք նաև 2010թ. ԱՄՆ հաստատուն դոլարով փոխարկված, որպեսզի դրանք համադրելի լինեն ՄՄԽՀԻ ՌԾ գնահատականների հետ: Ընդ որում, փոխարկման համար օգտագործվել են ԱՄՆ Աշխատուժի վիճակագրության բյուրոյի ՄԳՑ արժեքները¹, ինչպես դա ընդունված է ՄՄԽՀԻ ՌԾ գնահատումների մեթոդաբանությունում (տե՛ս 5.1. բաժնում): Վերջապես, ընդգծելու համար ՄՄԽՀԻ գրադարանի տվյալների փոփոխությունների դինամիկան՝ առանձին աղյուսակով բերվում են այս նույն տվյալները, ինչպես դրանք հասանելի էին 2012թ. օգոստոսի 2-ի դրությամբ:


2013թ. մարտի 21-ի դրությամբ հասանելի ՄՄԽՀԻ տվյալները վկայում են, որ 1992-2012թթ. ժամանակահատվածում Ադրբեջանն իրականացրել է մոտ \$1.68 մլրդ 1990թ. ԱՄՆ հաստատուն դոլար արժողությամբ ԾՍՊ գնումներ, ինչը կազմում է մոտ \$2.8 մլրդ 2010թ. հաստատուն դոլար: Մեծ հավանականությամբ կարելի է պնդել, որ այս գնահատականը նվազեցնում է իրական ծախսերը գոնե միայն այն բանի համար, որ համարժեք չի արտահայտում վերջին՝ 2012թ. Ադրբեջանի կողմից ԾՍՊ գնումների ծախսերը: Համաձայն ՄՄԽՀԻ 2012թ. օգոստոսի տվյալների, 1992-2011թթ. ժամանակահատվածում Ադրբեջանն իրականացրել էր մոտ \$1.196 մլրդ 1990թ. ԱՄՆ հաստատուն դոլար արժողությամբ ԾՍՊ գնումներ, (\$1.995 մլրդ 2010թ. հաստատուն դոլար): Ընդ որում, նշված ժամանակահատվածի միայն վերջին՝ 2011թ. ընթացքում Ադրբեջանն իրականացրել էր ԾՍՊ գնումներ ընդհանուրը մոտ \$277 մլն 1990թ. ԱՄՆ հաստատուն դոլար արժողությամբ (մոտ \$462 մլն 2010թ. հաստատուն դոլար): 7 ամիս անց, 2013թ. մարտի դրությամբ ՄՄԽՀԻ-ն վերանայել էր իր այս գնահատականը՝ հասցնելով այն մինչև \$606 մլն 1990թ. ԱՄՆ հաստատուն դոլարի (կամ մոտ \$1.064 մլրդ 2010թ. հաստատուն դոլար, տե՛ս Հավելված 9, Աղյուսակ 29.4): Այս ավելացումը հիմնականում պայմանավորված էր ՌԴ-ից Ադրբեջանին 2011թ. իրականացված ԳՈւ մատակարարումների ավելի ամբողջական հաշվառմամբ (տե՛ս Հավելված 9, Աղյուսակ 29.6): Ուստի, կարելի է ակնկալել որ,

¹ <http://data.bls.gov/cgi-bin>

2013թ. մարտի 21-ի դրությամբ հասանելի 2012թ. ՄԳԱ Ադրբեջանի գնահատականը և, օրինակ, Իսրայելից 2012թ \$9.0 մլն 1990թ. ԱՄՆ հաստատուն դոլար արժողությամբ ԾՄՊ գնումների ՍՄԽՀԻ ներկայիս ծիծաղելի գնահատականը դեռ կվերանայվեն մոտ ապագայում (տե՛ս ստորև):


Նկար 5.3

ԱՀ-ի կողմից 1992-2012թթ. ընթացքում ծանր սպառազինության գնումների կառուցվածքը



Նկար 5.4

ԱՀ-ի կողմից 1992-2012թթ. ընթացքում ծանր սպառազինության գնումներն ըստ մատակարար երկրների: Աղբյուրը՝ <http://milexdata.sipri.org/>



Համադրելով Ադրբեջանի տարեկան ՌԾ-ի մասին ՄՄԽՀԻ տվյալները (Հավելված 8, Աղյուսակ 28.3) 2010թ. հաստատուն ԱՄՆ դոլարով արտահայտված ԾՄՊ տարեկան գնումների հետ (Հավելված 9, Աղյուսակ 29.4)՝ կարելի է փաստել, որ 1992-2011թթ. ընթացքում Ադրբեջանն իր տարեկան ՌԾ միջինը մոտ 20%-ը նպատակաուղղում էր ԾՄՊ գնումներին: Հասկանալի է, որ այստեղ անհրաժեշտ է մտապահել ՄՄԽՀԻ գնահատականների մոտավորության մասին մեր բոլոր նախազգուշացումները, ինչպես նաև բերված մեծության միայն մոտավոր միջինացված բնույթը:

Հենվելով 2012թ. օգոստոսի և 2013թ. մարտի դրությամբ հասանելի ՄՄԽՀԻ ՄԳԱ տվյալների վրա (տե՛ս Հավելված 9, Աղյուսակ 29.4)՝ Նկար 5.3-ում ի մի է բերվում 1992-2012թթ. ժամանակահատվածում Ադրբեջանի կողմից իրականացված սովորական ԾՄՊ գնումների կառուցվածքը՝ դասակարգված ըստ հիմնական զինատեսակների (%): Նկար 5.4-ում պատկերված են Ադրբեջանին այս սպառազինությունը վաճառող երկրների մասնաբաժինները (%): Ինչպես հետևում է նկարներից, նշված ժամանակահատվածում Ադրբեջանի կողմից գնված ԾՄՊ գումարային ծավալում 45.6%-ը բաժին է ընկնում «ինքնաթիռներին» (ՄԻ և ԳՈւ), որին հաջորդում է «գրահատեխնիկան», ներառյալ ՀՄՏ-ները (20.7%): Եվս 5.1% բաժին է ընկնում մեծ տրամաչափի քարշակ և ինքնագնաց հրետանուն: **Անգամ այս ամբողջացված տվյալները վկայում են, որ 1992-2012թթ. ժամանակահատվածում Ադրբեջանի կողմից իրականացված ԾՄՊ գնումներում գրոհային նշանակության սպառազինությունը կազմում է առնվազն 72%** (Նկար 5.3):

Ադրբեջանին ԾՄՊ մատակարարող թիվ մեկ երկիրը Ռուսաստանի Դաշնությունն է (53.6%), որին հաջորդում են Ուկրաինան (30.9%) և Բելառուսը (6.0%): Այս երեք երկրներից Ադրբեջանին ԾՄՊ վաճառքը 1992-2012թթ. ընթացքում կազմում է այդ երկրին 1992-2012թթ. ժամանակահատվածում ծանր սպառազինությունների ընդհանուր մատակարարումների մոտ 91.0%-ը (Նկար 5.4):

2013թ. մարտի դրությամբ հասանելի ՄՄԽՀԻ տվյալների համաձայն (Աղյուսակ 29.4)՝ 2007-12թթ. ընթացքում ՌԴ-ից Ադրբեջանին ԾՄՊ

մատակարարումների գումարային ծավալը կազմել է 900 մլն 1990թ. ԱՄՆ հաստատուն դոլար (\$1.5 մլրդ 2010թ. հաստատուն դոլար), ինչը կազմում է ողջ 1992-2012թթ. ժամանակահատվածում ՌԴ-ից Ադրբեջան ծանր սպառազինությունների ընդհանուր մատակարարումների 99.9%-ը: Այսպիսով, ՌԴ-ից Ադրբեջանին ԾՍՊ մատակարարումները բացառապես իրականացվել են Կասպիցի ԱԶԳ նավթադաշտի «հիմնական նավթի» փուլի ընթացքում և դրա յուրացումից առաջացած միջոցներով: Հայաստանի համար այս ցուցանիշը կազմել է մոտ 100 մլն 1990թ. ԱՄՆ հաստատուն դոլար (166.8 մլն 2010թ. հաստատուն դոլար) կամ ողջ 1992-2012թթ. ժամանակահատվածում ՌԴ-ից Հայաստան ծանր սպառազինությունների ընդհանուր մատակարարումների ընդամենը 17.2%-ը:

2013թ. ապրիլի 13-ին ռուսական հանրային հեռուստաալիքին տված հարցազրույցում Ադրբեջանի նախագահ Ի.Ալիևը նշեց, որ «անցած 5-6 տարիների ընթացքում Ադրբեջանի և ՌԴ-ի միջև ռազմատեխնիկական համագործակցության մեջ նկատելի է ահռելի առաջընթաց: ՌԴ-ից մեր գնումները հաշվարկվում են միլիարդավոր դոլարներով»¹: Կրկնենք, ըստ 2013թ. ապրիլին հասանելի ՄՄԽՀԻ տվյալների, ՌԴ-ից Ադրբեջան 2007-12թթ. ընթացքում ԾՍՊ մատակարարումների ծավալը գնահատված է \$1.5 մլրդ 2010թ. ԱՄՆ հաստատուն դոլար (1.6 մլրդ 2013թ. ԱՄՆ դոլար):

¹ Մեջբերում ենք ըստ «Вести в субботу с С.Брилевым» ծրագրի կայքում տեղակայված տղազրույցի (http://www.vesti.ru/doc.html?id=1075384): Այն ենթարկված է որոշակի խմբագրության: Ահա թե ինչ է ասել Ի.Ալիևը հաղորդավար Ս.Բրիլյովին նշված հարցազրույցի եթերում՝ տառացիորեն.

«Ի.Ալիև. Գաբալայի կայանի վարձակալության գումարը մենք բարձրացրինք նաև այն բանի համար, որ ՌԴ-ի հետ վերջին 5-6 տարիներին մեր ռազմատեխնիկական համագործակցությունում նկատելի է ահռելի առաջընթաց: Այս գնումները հաշվարկվում են միլիարդավոր դոլարներով՝ ոչ թե մեկ, երկու, երեք և ոչ էլ չորս միլիարդ, չեմ ուզում շարունակել, արդեն իրացված և ստորագրված: Եվ այս ողջ սպառազինությունը մենք գնում ենք միջազգային գներով:

Ս.Բրիլյով. Դե, իհարկե, չե՞ որ դուք ՕՃԿԵ-ի կամ մի այլ բանի անդամ չեք:

Ի.Ալիև. Իհարկե» (http://www.vesti.ru/only_video.html?vid=499648/, 47-48-րդ րոպեներ: 2013թ. ապրիլի 15-ից այս նյութը հանված է շրջանառությունից: 2013թ. ապրիլի վերջի դրությամբ այն հասանելի էր youtube-ում

(http://www.youtube.com/watch?v=xobGwoz5O_s, 5.0-5.45-րդ րոպեներ):

Դե, իսկ արդեն 2013թ. հունիսի 15-ին ռուսական ռազմական կայքերից մեկը և երկու օր անց՝ “*Ведомости*” պարբերականը հայտնեցին ՌԴ-ից Ադրբեջան մոտ \$1.0 մլրդ ընդհանուր արժողությամբ ԾՍՊ նոր ծավալուն մատակարարումների մասին: Մատակարարված զինտեխնիկայի առանձին տեսակները, օրինակ, ТОС-1А “*Солнцелек*” ծավալային պայթյունի հրանետները, անմիջապես ցուցադրվեցին 2013թ. հունիսի 26-ին Բաքվում կայացած զորահանդեսի ժամանակ¹:


Իսրայելից Ադրբեջան ԾՍՊ մատակարարումների ՍՄԽՀԻ գնահատականները թերի են: Մասնավորապես, դրանցում բացակայում են 2009թ. մոտ \$350 մլն արժողությամբ ադրբեջանա-իսրայելական ծրագրի տվյալները, իսկ 2011թ. \$1.6 արժողությամբ ծրագրի մասին տվյալները բերվում են ոչ ամբողջական (ավելի մանրամասն տե՛ս ստորև 5.3 բաժնում՝ 2011թ. դրվագում): Համարժեք հաշվառման դեպքում կարելի է ակնկալել, որ սկսած 2009-ից՝ Իսրայելն Ադրբեջանի 3-րդ մատակարարն էր, իսկ 2011-ից՝ երկրորդը:

Ու կարծես թե սա դեռ բավական չէր, *Wikileaks*-յան հրապարակումներից տեղեկանում ենք, որ Ադրբեջան սպառազինության հատուկ տեսակներ են բերում նաև նավթարդյունաբերող ընկերությունները: Մասնավորապես, ԱՀ-ում ԱՄՆ դեսպանության 2008թ. հուլիսի 2-ով թվագրված հաղորդագրությունը վկայում է (տե՛ս Հավելված 1, *08 Baku 625*, Թիվ 7, 19.S), որ *BP* ընկերությունը, որը ղեկավարում է ԱԶԳ դաշտից նավթի արդյունահանումը (տե՛ս Գ. 2), Ադրբեջանին է մատակարարել ռադարային կայանքներ, որոնք «այսօրվա դրությամբ լավագույնն են, ինչ ունեն Ադրբեջանի ռազմածովային ուժերը»:

Այժմ համադրենք Ադրբեջանի ՌԾ և ԾՍՊ գնումների մասին ՍՄԽՀԻ տվյալները: Դրա համար Նկար 5.5-ում 1992-2011թթ. ժամանակահատվածի համար ի մի են բերվում Ադրբեջանի ՌԾ (աջ առանցք, տե՛ս նաև Նկար 5.1) և այս ԾՍՊ տարեկան գնումների տվյալները (ՄԳԱ, ձախ

¹ ՌԴ-ից այս նոր մատակարարումները, բնականաբար, արտացոլված չեն Նկար 5.4-ում: Դրանց մասին ավելի մանրամասն տե՛ս ստորև՝ 5.3 բաժնի վերջում:

առանցք): Առավել պատկերավորության համար նկարի x-երի երկրորդական առանցքում բերվում է տվյալ տարում ԾՄՊ գնումների մասնաբաժինը (%) այդ տարի ընդհանուր ՌԾ արժեքից: Բոլոր տվյալները բերված են 2010թ. ԱՄՆ հաստատուն դոլարով: Ինչպես և միշտ, փոխարկումն իրականացրել ենք համաձայն ՍՄԽՀԻ մեթոդաբանության:



Աղբյուրները՝ <http://milexdata.sipri.org/>, սեփական հաշվարկներ

Նկարից հետևում է, որ, օրինակ, 1992թ. համար ՍՄԽՀԻ-ն գնահատել է ԱՀ ՌԾ մոտ 390 մլն 2010թ. ԱՄՆ հաստատուն դոլար¹ և չի բերել ծանր սպառազինությունների գնման մասին և ոչ մի գնահատական: Հաջորդ՝ 1993թ. համար ԱՀ ՌԾ ՍՄԽՀԻ գնահատականը մնում է գրեթե

¹ Հիշեցնենք, որ համաձայն ԱՄՆ ՊԴԲ [5], 1992թ. ԱՀ ՌԾ-ն կազմել էր մոտ \$850 մլն 2010թ. ԱՄՆ հաստատուն դոլար, այսինքն՝ ՍՄԽՀԻ գնահատականից ավելի քան երկու անգամ շատ (տե՛ս Նկար 5.1):

նույն մակարդակին՝ 409 մլն 2010թ. ԱՄՆ հաստատուն դոլար¹, սակայն ՄՄԽՀԻ տվյալների գրադարանը 1993թ. համար ֆիքսում է Ադրբեջանի կողմից ծանր սպառազինության գնում մոտ \$82 մլն 2010թ. ԱՄՆ հաստատուն դոլար ծավալով, ինչը կազմել է այդ տարի ընդհանուր ՌԾ մոտ 20%-ը: Իր հերթին, Հավելված 9-ի Ադյուսակ 29.4-ից հետևում է, որ այս գնումներն իրականացվել են Ուկրաինայից զրահատեխնիկա գնելու համար: Հաջորդ՝ 2007թ. արձանագրում ենք մինչ այդ ժամանակահատվածում ԾՍՊ գնումների առաջին ռեկորդային ցուցանիշը՝ \$352 մլն 2010թ. ԱՄՆ հաստատուն դոլար կամ այդ տարի ընդհանուր ՌԾ 27%-ը: Այս առումով նոր «ռեկորդ» սահմանվեց 2011-ին՝ \$1.01 մլրդ 2010թ. ԱՄՆ հաստատուն դոլար կամ այդ տարի ընդհանուր ՌԾ 36%-ը: Ու սա միայն ՄՄԽՀԻ տվյալներով, որոնք, կրկնենք, կոչված չեն ՌԾ իրական ծավալների գնահատման համար:

5.3. Ադրբեջանի ռազմականացման բրոնիկոնն առանձին դրվագներով

Եվ այստեղ տեղին է անդրադառնալ ՄՄԽՀԻ-ի կողմից բերվող ռազմական ծախսերի վերջին՝ երրորդ խումբ տվյալներին: Դրանք այսպես կոչված երկրի ԾՍՊ գնումների առևտրային ռեզիստրներն են (ԱՌ)², որոնցում բերվում են տվյալ երկրին մատակարարված ԾՍՊ տեսակը, տիպը, պատվերի տարեթիվը, քանակը և մատակարարումների ժամկետները, ինչպես նաև տվյալ տեսակի ԾՍՊ մատակարար և այս սպառազինության սկզբնաղբյուր երկրները: Հավելված 9-ի Ադյուսակ 29.5-ում ի մի են բերվում Ադրբեջան ներմուծված ԾՍՊ ԱՌ-ները՝ հասանելի 2013թ. մարտի դրությամբ: Բացի այդ, Ադյուսակ 29.5-ում նշվում են ԱՌ տվյալներում 2012թ. օգոստոսի դրությամբ հասանելի տվյալների բոլոր փոփոխությունները՝ համապատասխան մեկնաբանություններով: Ժա-

¹ Հիշեցնենք, որ համաձայն ԱՄՆ ՊԴԲ [5], 1993թ. ԱՀ ՌԾ-ն կազմել էր մոտ \$1.0 մլրդ 2010թ. ԱՄՆ հաստատուն դոլար, այսինքն՝ ՄՄԽՀԻ գնահատականից ավելի քան 2.5 անգամ շատ (տե՛ս Նկար 5.1):

² SIPRI trade registers, TR.

մանակագրորեն ավելի պատկերավոր այս տվյալներն ամբողջացվում են Աղյուսակներ 5.2-5.5-ում: Ադրբեջանի ԱՌ տվյալները հնարավորություն են ընձեռում կանգ առնել ԱՀ ռազմականացման հետևյալ կարևոր ասպեկտների վրա: Նյութի ընկալման դյուրինացման համար մենք դրանք կլիմբավորենք ժամանակագրական առանձին դրվագներով:

2005թ. Ինչպես արդեն նշել էինք, ԱՀ Պաշտպանական արդյունաբերության նախարարությունը հիմնվել էր ԱՀ նախագահի թիվ 1191 հրամանագրի վրա՝ թվագրված 2005թ. դեկտեմբերի 16-ով: Սա ԱԶԳ նավթադաշտի «հիմնական նավթի» փուլի մեկնարկի նախօրյակն է: Ժամանակային այս զուգադիպումը ոչ մի դեպքում չի կարելի պատահական համարել: Հակառակը, այս զուգադիպումը հստակ մատնանշում է ԱՀ ռազմական ներուժի զարգացման, երկրի ռազմականացման բազմափուլ, երկարաժամկետ պետական ծրագրի առկայության մասին: Առավել ևս, որ ինչպես նշել էինք Գ.3-ի 3.4 բաժնում, հենց այդ ժամանակ ԱՀ էկոնոմիկայի զարգացման նախարարությունը, այլ գերատեսչությունների հետ համատեղ, մշակեց Ադրբեջանի զարգացման ռազմավարական պետական ծրագիրը, որը հաստատվեց նախագահի կողմից: Այս ծրագիրը, որը մենք կկոչենք ԱՀ ռազմականացման պետական համալիր ծրագիր, պարունակում էր մի շարք բաղադրիչներ:

Դրանցից առաջինը զուտ տնտեսաֆինանսական բնույթի էր և ենթադրում էր ադրբեջանական մանաթի դենոմինացիայի անցկացումը 2005-ի վերջին և մակրոտնտեսական ցուցանիշների հաշվարկման ու տպագրման կոշտ վերահսկումը: Այլ խոսքերով, դրանց և առաջին հերթին սղաճի ցուցանիշի զանգվածային կեղծումները: Այս մասին նույնպես արդեն նշել ենք Գ.3-ի 3.4 բաժնում:

ԱՀ ռազմականացման պետական ծրագրի 2-րդ կարևոր բաղադրիչն է ԾՄՊ գնումների ծավալուն գործընթացը, որին անդրադարձել էինք նախորդ բաժնում:

Այս համալիր ծրագրի 3-րդ կարևորագույն բաղադրիչը քարոզչական ու ապատեղեկատվական բաղադրիչն է, որին զուգահեռ իրակա-

նացվում են զեղծարարության և ապատեղեկատվության տարածման նպատակառդղված տարաբնույթ միջոցառումներ: Տարվող պետական քարոզչությունը նպատակ ունի հայատյացության սերմանումը, թշնամու պատկերի կերտումը, աղբբեջանական հասարակության ինդոկտրինացումը, նրան պատերազմի ու ռևանշի պատրաստելը: Բայց քարոզչության հիմնական, քաղաքական նպատակն է լեզվատիմացնել ալիևյան կլանի իշխանությունը, արդարացնել ածխաջրածինների արդյունահանումից զոյացած եկամուտների զավթումն աղբբեջանական հասարակության աչքերում, ցրել նրա ուշադրությունը սոցիալական խորացող բևեռացումից, ահագնացող կոռուպցիայից, անհատի, քաղաքացու և ազգային փոքրամասնությունների շահերի ոտնահարումից: Սակայն քարոզչական բաղադրիչի քաղաքական հիմնական նպատակը եղել և մնում է իշխող վարչակարգի լեզվատիմացումը, դրա կայունության և վերարտադրության ապահովումը: Այդպես էր 1990-ականների սկզբին, Հ.Ալևի կողմից իշխանության զավթման ժամանակ, այդպես էր 2009-ին, երբ ընտրական դեմոկրատիային փոխարինեց իշխանափոխության ժառանգական քաղաքական մոդելը: Այդպես է և այսօր:

Վերջապես, ծրագրի 4-րդ բաղադրիչը դրա բուն ռազմարդյունաբերական բաղադրիչն է, որով և 2005-ի վերջին ստեղծվեց ԱՀ Պաշտպանական արդյունաբերության նախարարությունը:

Հատկանշական կերպով 2005 թվականով է ֆիքսվում նաև Իսրայելից ենթադրաբար 6 միավոր «Lynx» տիպի ինքնագնաց ռեակտիվ համազարկային կայանքների աղբբեջանական պատվերը (տե՛ս Հավելված 9, Աղյուսակ Հ9.5): Քաջ հայտնի է¹, որ իսրայելական *I.M.I. Israel Military Industries Ltd* ընկերության արտադրության այս կայանքները տեղակայվում են 6 x 6 բարձր անցողիկությամբ շասինների վրա և արտահանման համար հասանելի են 3 տարբեր կոնֆիգուրացիաներով: Դրանք կարող են կրել 122 մմ տրամաչափի 20-40 կմ հեռահարությամբ 40 (2 x 20) միավոր «Grad» հրթիռներ, կամ 160 մմ տրամաչափի մինչև 45 կմ

¹ <http://www.army-guide.com/eng/product.php?prodID=4244&printmode=1>

հեռահարությամբ 26 (2 x 13) միավոր «LAR-160» հրթիռներ, կամ 300 մ տրամաչափի մինչև 150 կմ հեռահարությամբ 8 (2 x 4) միավոր «EXTRA» տիպի հրթիռներ: Ելնելով այն հանգամանքից, որ ՄՄԽՀԻ տվյալները նույն 2005-ով ֆիքսում են նաև ենթադրաբար 50 միավոր¹ «EXTRA» տիպի հրթիռների ադրբեջանական պատվերը Իսրայելին (տե՛ս նույն տեղում), ապա տպավորություն կարող է ստեղծվել, որ այստեղ խոսքը միայն այս կոնֆիգուրացիայի «Lynx»-երի մատակարարման մասին էր:

Մյուս կողմից, նույն ՄՄԽՀԻ տվյալներից հայտնի է, որ առկա է այս համազարկային կայանքների առնվազն երեք տարբեր ադրբեջանական մակնիշ՝ «Dolu-1», «Leysan» և «Shimsek»: Բացի այդ, բաց տեղեկատվության անգամ թռուցիկ զննումը փաստում է, որ այս կայանքներն Ադրբեջանում առկա են հրթիռների վերը նշված բոլոր երեք տրամաչափերով: Ավելին, դրանք տեղակայված են «KAMA3» 8 x 8 շահիների վրա: Ուստի, առկա են բոլոր հիմքերը պնդելու, որ նորաստեղծ ԱՀ Պաշտպանական արդյունաբերության նախարարության, թերևս, առաջին, բայց ոչ վերջին, խոշոր ծրագիրը հանդիսացել է «Lynx» տիպի ինքնագնաց ռեակտիվ համազարկային կայանքների, դրանց տարբեր մակնիշների հրթիռների հավաքումը, արտադրությունը և մոդեռնիզացիան: Այսպիսով, Ադրբեջանի ռազմարդյունաբերական համալիրի ստեղծման հիմքում ընկած է Իսրայելի հետ ռազմավարական և ռազմատեխնիկական համագործակցությունը: Այս հարցին ավելի մանրամասն կանդրադառնանք ստորև, 2011 թվականի վերաբերյալ հատվածում:

Առաջին այս ծրագրին հաջորդեց 2009թ. հարավաֆրիկյան *Paramount Group* ընկերության մոտ 60 միավոր *Marauder* և *Matador* զրահամեքենաների լիցենզիոն արտադրության ծրագիրը: Դրանց վրա տեղա-

¹ ՄՄԽՀԻ փորձագետների խղճին թողնենք այս գնահատականը: Դժվար չէ հաշվարկել, որ 300 մ տրամաչափի «EXTRA» հրթիռներով 6 կայանքների մեկ համազարկը հավասար է 48 հրթիռի: Եվ դժվար է պատկերացնել, որ «EXTRA» տիպի հրթիռներն Իսրայելից գնվել են ռեակտիվ համազարկային կայանքների միայն մեկ համազարկ կատարելու համար: Համաձայն այլ բաց աղբյուրների, Իսրայելից Ադրբեջանին է մատակարարվել «Lynx» ընտանիքի «LAR-160» հրթիռներով միայն 20 կայանք: Դրանց մեկ համազարկը պահանջում է 520 (20 x 26) հրթիռ:

կայվում էին ԱՄՆ-ից գնված *Cummins-6V* դիզելային շարժիչները: Այնուհետև՝ իսրայելական լիցենզիայով *Aerostar* և *Orbiter* տիպի ԱԹՍ-ների արտադրությունը *Azad Systems Co.* ընկերությունում՝ իսրայելական *Israel Aerospace Industries* ընկերության հետ համատեղ (տե՛ս Հավելված 9, Աղյուսակ Հ9.5); թուրքական *ROKETSAN*-ի հետ համատեղ 107 մմ և 122 մմ տրամաչափի հրթիռների արտադրության կազմակերպումը, *T-55* տանկի շասիի վրա ռեակտիվ համազարկային համակարգերի տեղակայումը¹ և այլն: 2011թ. դեկտեմբերի 17-ին ԱՀ Պաշտպանական արդյունաբերության նախարար Յավեր Ջամալովը (*Yaver Jamalov*) հայտարարեց², որ 2012-ից Ադրբեջանը պատրաստվում է մի շարք ռազմական նոր խոշոր ծրագրեր իրականացնել: Դրանք կներառեն բարիտի, տրոտիլի, հեքսոգենի, ինչպես նաև հրթիռների, տարբեր տրամաչափերի արկերի կադապարների և հակատանկային հրթիռների հավաքման գործարանների կառուցում: Ըստ նախարարի, 2006 թվականից մինչև 2012-ը հանրապետությունում կառուցվել է ռազմարդյունաբերական 42 արտադրություն, որի տեսականին 2012-ին հասցվել է 658 միավորի:

2007թ. Հարավկովկասյան հանրապետություններին ԾՍՊ մատակարարումների հարցը քննող գրեթե բոլոր մասնագիտական հրապարակումներում, անհամար վերլուծական հոդվածներում բազմիցս հանդիպում ենք ՌԴ-ից 1990-ականների սկզբին Հայաստանին սպառազինությունների «ապօրինի» մատակարարումների մասին պնդումների: Ահա և ՍՄԽՀԻ տվյալների գրադարանն իր՝ ՌԴ-ից Հայաստան ԱՌ էջում յուրաքանչյուր մատակարարված զինատեսակի տողում խնամքով ծանուցում է՝ «ապօրինի մատակարարում» (*illegal transfer*)³: Ֆորմալ առումով այսպիսի որակման համար հիմք է հանդիսանում այն հանգամանքը, որ ՌԴ-ից Հայաստանին մատակարարված այս զինատեսակները նշված չեն ՌԴ-ի կողմից ՄԱԿ ՍՍՌ ներկայացված ծանր սպառազինության

¹ <http://www.w54.biz/showthread.php?1692-Azerbaijani-military-industry-on-the-way-towards-development>

² <http://www.milaz.info/ru/news.php?id=25820>

³ http://armstrade.sipri.org/armstrade/page/trade_register.php

արտահանումների/ներկրումների 1993-95թթ. պաշտոնական հաշվետվություններում¹:

Մի պահ ընդունենք այս տրամաբանությունը և նորից անդրադառնանք Նկար 5.5-ին: Ինչպես տեսնում ենք, ԱԶԳ նավթադաշտի յուրացման հիմնական փուլի մեկնարկից հետո էապես աճում են Ադրբեջանի թե՛ ռազմական ընդհանուր, թե՛ ԾՍՊ գնելու համար հատկացված ծախսերը: Այսպես, 2006թ. դրանք կազմում էին ընդհանուր ՌԾ 22%-ը, այնինչ, օրինակ, 2004թ. դրանք ընդամենը 1.0% էին: 2007թ. արձանագրվում է մինչ այս Ադրբեջանի կողմից ԾՍՊ գնումների ռեկորդային ցուցանիշ՝ 352 մլն 2010թ. ԱՄՆ հաստատուն դոլար կամ այդ տարի ՌԾ 27%-ը (Նկար 5.5): Ուստի միայն Ադրբեջանի ՌԾ-ի մասին ՄՄԽՀԻ դրամական ծավալի գնահատականներով, որոնք, ինչպես տեսանք վերը, միտված են նվազեցնել դրանց իրական չափը: Բայց անգամ ՄՄԽՀԻ-ի կողմից բերվող ՄԳԱ և ԱՌ տվյալներն օգնում են հասկանալ, թե ինչ է գնել Ադրբեջանն այդ տարի (տե՛ս Աղյուսակներ 5.2-5.5 և Հավելված 9-ում): Դրանք են՝

- 60 միավոր T-72M1 տիպի ՀՄՏ-ները Բելառուսից (պատվերը՝ 2004թ.),
- 50 միավոր «EXTRA» տիպի «մակերևույթ-մակերևույթ» հրթիռները՝ «LYNX» տիպի ռեակտիվ համազարկային կայանքների համար Իսրայելից,

¹ Սյս հաշվետվություններն ունեն կամավոր բնույթ: Հարցը կապված է Եվրոպայում սովորական սպառազինությունների սահմանափակման պայմանագրի (ԵՍՍՊ, *SFET, JOBCE*) հետ: Այն ստորագրվել է 1990թ. նոյեմբերի 19-ին Փարիզում՝ ՆԱՏՕ և Վարշավյան պայմանագրի կազմակերպության (ՎՊԿ) երկրների միջև և ուժի մեջ է մտել 1992թ. նոյեմբերի 9-ին, երբ արդեն գոյություն չունեին ոչ ԽՍՀՄ-ը, ոչ ՎՊԿ-ն: Եվրոպայում ծավալվող աշխարհաքաղաքական փոփոխությունները հաշվի առնելու նպատակով 1999թ. նոյեմբերին ԵԱՀԿ Ստամբուլի գազաթաժողովի ժամանակ մշակվեց այսպես կոչված Ադապտացված ԵՍՍՊ-ն: Ի թիվս այլ երկրների, այն ստորագրվեց ՌԴ-ի, Ադրբեջանի և Հայաստանի կողմից: Բայթյան երկրները հետևողականորեն հրաժարվեցին ստորագրել ԵՍՍՊ-ն և հետագայում դարձան ՆԱՏՕ անդամ: Վրաստանը և Մոլդովան պայմանավորեցին իրենց մասնակցությունն իրենց երկրներից ռուսական ռազմակայանների դուրսբերմամբ [15]: Այստեղ մենք չենք ծանրանա ԵՍՍՊ և Ադապտացված ԵՍՍՊ ու հարակից հարցերին ՌԴ-ի կողմից ունեցած հիմնավոր վերապահումներին (ՆԱՏՕ ընդլայնում, ԱՄՆ-ի կողմից հակահրթիռային պաշտպանության (ՀՀՊ) համակարգերի ծավալում, փառանգային (ֆլանգային) սահմանափակումներ և այլն [15-19]): Հիշեցնենք միայն, որ 2007թ. ՌԴ-ն պաշտոնապես մորատորիում հայտարարեց ԵՍՍՊ կատարմանը [20]: Իր հերթին, 2011թ. նոյեմբերին ԱՄՆ-ը պաշտոնապես հայտարարեց, որ դադարեցնում է ՌԴ-ի նկատմամբ ԵՍՍՊ-ի կողմից սահմանվող որոշ դրույթների իրականացումը [21]:

- ևս 62 միավոր T-72M1 տիպի ՀՄՏ-ներ ՌԴ-ից (պատվերը՝ 2006թ.),
- 15 միավոր МИГ-29 (*Fulcrum A*) տիպի ՄԻ-ներ՝ Ուկրաինայից (պատվերը՝ 2005թ., մատակարարումները՝ 2006-09թթ.),
- 18 միավոր *BTP-80* տիպի զրահամեքենաները՝ Ուկրաինայից (պատվերը՝ 2006թ., մատակարարումները՝ 2007թ.),
- ևս 4 միավոր *BTC* տիպի զրահամեքենաները՝ նույնպես Ուկրաինայից (պատվերը՝ 2006թ., մատակարարումները՝ 2007թ.),
- 55 միավոր 122 մմ տրամաչափի D-30 տիպի քարշակ թնդանոթները՝ Ուկրաինայից,
- 43 միավոր P-27 (*AA-10 Alamo*) հակատանկային հրթիռները՝ նույնպես Ուկրաինայից:

Բացի այս ամենը, 2007թ. Ադրբեջանը պատվիրել էր, և ամենայն հավանականությամբ իրականացրել էր կանխավճար՝ հետևյալ սպառազինությունը գնելու համար.

- 4 միավոր *Aerostar* տիպի անօդաչու թռչող սարքավորում Իսրայելից (պատվերը՝ 2007թ., մատակարարումները՝ 2008թ.),
- 70 միավոր *BTP-80A* տիպի զրահամեքենա՝ ՌԴ-ից (պատվերը՝ 2007թ., մատակարարումները՝ 2007-10թթ.),
- 10 միավոր *Vector* տիպի ուղղաթիռային տուրելներ Հարավաֆրիկյան Հանրապետությունից (պատվերը՝ 2007թ., մատակարարումները՝ 2009-10թթ.)¹,
- 54 միավոր 122 մմ տրամաչափի 2Տ-1 «*Гвоздика*» տիպի ինքնագնաց հրետանային համակարգ (պատվերը՝ 2007թ., մատակարարումները՝ 2008-10թթ.) Ուկրաինայից,
- 3 միավոր 203 մմ տրամաչափի 2Տ-7 «*Пион*» տիպի ինքնագնաց հրետանային համակարգ (պատվերը՝ 2007թ., մատակարարումը՝ 2008թ.) Ուկրաինայից,

¹ Համաձայն ՄՄԽՀԻ ծանուցման, այս տուրելները նախատեսված էին ադրբեջանական Ми-24 տիպի ԳՈւ մոդեռնիզացիայի համար մինչև Ми-24Г դաս: Մոդեռնիզացիան նախատեսվում էր իրականացնել Ուկրաինայում:

- 12 միավոր Mx-24B (*Hind-E*) տիպի ԳՈւ (պատվերը՝ 2007թ., մատակարարումները՝ 2009-10թթ.) Ուկրաինայից¹:

Զարմանալի է, իհարկե, որ հարցն ուսումնասիրող փորձագետները ժամանակին առանձնապես ուշադրություն չդարձրին 2007-ին արձանագրված Ադրբեջանի կողմից ծանր սպառազինությունների գնումների այս շեշտակի աճին: ԱՄՆ Պետդեպարտամենտն իր ադրբեջանական պետություններին և ռազմական ծախսերին առնչվող հարցերը կառաջադրի միայն 2009թ. ապրիլին (տե՛ս Գ. 4, բաժին 4.4), իսկ ՍՄԽՀԻ համապատասխան գնահատականները² կհայտնվեն միայն 2010-ին (տե՛ս բաժին 5.1):

Ցավալի է նաև, որ փորձագիտական հանրությունը չհետաքրքրվեց, թե ինչու են անհրաժեշտ Ադրբեջանին 203 մմ տրամաչափի 2Տ-7 «*ПНОМ*» տիպի ինքնագնաց ծանր հրետանային համակարգերը: Չէ՞ որ դրանք առաջին հերթին նախատեսված են խոր էշելոնացված պաշտպանական համակարգերի կոտրման համար և կարող են արձակել ոչ միայն սովորական լիցքով պասիվ ու ակտիվ արկեր, այլ նաև հատուկ՝ քիմիական, բակտերիոլոգիական և միջուկային լիցքով արկեր: Ինչո՞ւ են անհրաժեշտ Ադրբեջանին ծանր ռեակտիվ համազարկային կայանքները, նոր տանկերը, մեծ տրամաչափի ինքնագնաց ու քարշակ հրետանին և գրոհային ուղղաթիռները: Չէ՞ որ 2007-ը ընդհանրապես առանձնահատուկ տարի էր Ադրբեջանի համար: Իրոք, այդ տարի Ադրբեջանի նախագահ Ի.Ալիևն առաջին անգամ հայտարարեց իր երկրի ռազմական բյուջեն ՀՀ ողջ պետական բյուջեին հավասարեցնելու մտադրության մասին³: Ադրբեջանական բարձրագույն իշխանական օղակներում այդ ժամանակ տենդագին քննարկվում էր ՌԾ շեշտակի ավելացման գաղա-

¹ Համաձայն ՍՄԽՀԻ ծանուցման, պայմանագրով նախատեսված էր այս ԳՈւ մոդեռնիզացիան մինչև Mx-24Դ դաս, որը պետք է իրականացվեր Ուկրաինայում՝ մինչև Ադրբեջանին մատակարարումը:

² Եվ Միացյալ Թագավորության Պաշտպանության նախարարության ուշագրավ գնահատականները (տե՛ս ստորև և Հավելված 9, Աղյուսակ 29.6):

³ Ալիևյան այս մտադրությունն այդ ժամանակ չիրականացավ: Ադրբեջանական իշխանավորների համար միանգամայն անակնկալ կերպով 2008-ին Հայաստանի պետական բյուջեն նախորդ տարվա համեմատ աճեց մոտ \$0.5 մլրդ-ով՝ կազմելով մոտ \$2.5 մլրդ (ԱՄՆ ընթացիկ դոլարով), տե՛ս *International Monetary Fund, World Economic Outlook Database*.

փարը: Արդյունքում՝ 2008թ. ապրիլի 15-ին հեղինակավոր *Ռոյթըրս* լրատվական գործակալությունը մեջբերում էր նախորդ օրը կառավարության նիստում Ի.Ալիևի արտասանած հետևյալ բառերը¹. «Անցած 4-5 տարիներին մեր երկրի ռազմական բյուջեն \$150 միլիոնից աճել է մինչև \$1.3 մլրդ, բայց և մեր պետբյուջեն էլ է ավելացել 10 անգամ: Ես կարծում եմ, որ այս պարագայում մեր ռազմական բյուջեն 2008-ին պետք է էլ ավելի աճի և կազմի \$2 մլրդ»:

Այստեղ մենք չենք հանդիմանի ՄՄԽՀԻ փորձագետներին նրա համար, որ Ադրբեջանի դիկտատորի այս հստակ «հանձնարարականի» պայմանում նրանք ԱՀ 2008թ. ՌԾ-ն գնահատել էին ավելի փոքր, քան «առաջնորդի» կողմից նախանշված \$2 մլրդ-ը (տե՛ս Հավելված 8, Այդուսակ Հ8.3): Չենք նշի նաև *Ռոյթըրս* գործակալության հիշյալ հաղորդագրության զարմանքն Ադրբեջանի արտգործնախարար Մամադյարովի ակնհայտորեն արտուրդ դիրքորոշումից, թե «մենք կարող ենք քննարկել միայն Լեռնային Ղարաբաղի ինքնավարության հարցը, այն էլ միայն Ադրբեջանի հետ»²: Նույնիսկ չենք հիշատակի *International Crisis Group*-ի դեռ 2007թ. կարծիքը, որ «[Լեռնային Ղարաբաղում] փխրուն զինադադարը կարող է խանգարվել, քանի որ Ադրբեջանն իր նավթադուլարներն օգտագործում է երկրի ռազմականացման համար» (տե՛ս հիշատակված *Ռոյթըրս* գործակալության 15.04.08 հաղորդագրությունում):

Բայց պարտավոր ենք համարում հարցով զբաղված փորձագետների ուշադրությունը սևեռել հետևյալ, զարմանալիորեն քիչ հիշատակվող փաստի վրա. **Ադրբեջանն իր ծանր սպառազինության գնումների 2007թ. պաշտոնական հաշվետվությունը չի ներկայացրել ՄԱԿ ՄՍՌ ընդհանրապես**, թեև նա դա արել է հաջորդ տարի և 2005-ին (տե՛ս վերը և Հավելված 9-ի Այդուսակ Հ9.1-ում): Զավեշտալին այստեղ այն է, որ այս պարագայում 2007-ին Ադրբեջանի կողմից գնված ԾՄՊ պատկանելի ցուցակն այդպես էլ չորակվեց որպես «ապօրինի մատակարարումներ»: Անգամ վերը նշված տրամաբանությամբ: Ավելացնենք, որ Ադրբեջանը ՄԱԿ

¹ <http://www.reuters.com/article/2008/04/15/idUSL1597375>

² Այդպես է բնագրում. ոչ թե «Ադրբեջանի կազմում», այլ «Ադրբեջանի հետ» - *Ա.Մ.*:

ՄՍՌ-ին չի ներկայացրել իր ծանր սպառազինությունների գնման նաև 1993 և 1994թթ. հաշվետվությունները (տե՛ս Հավելված 9, Աղյուսակ 29.1): Այնինչ, հենց այդ տարիներին էր, որ Ուկրաինայից Ադրբեջանին մատակարարվեց 150 միավոր T-55 տիպի ՀՄՏ: Ընդ որում, այս մատակարարումների պատվերի տարին 1993 թվականն էր, իսկ մատակարարումներն իրականացվել էին 1993-94թթ. ընթացքում (Աղյուսակ 5.3):

Այսպիսով, հաշվի առնելով Ադրբեջանի անթաքույց ռևանշիստական նկրտումները և վերը բերված փաստերը՝ անհրաժեշտ է այս երկրի կողմից 1993-94թթ. և 2007թթ. ԾՄՊ գնումներն ու դրանց մատակարարումները որակել «ապօրինի»՝ բառիս իմաստային ողջ երանգով: Մեզ՝ Ադրբեջանի տարածաշրջանային հարևանների համար ամենևին էլ սպեղանի չէ այն, որ, ասենք, Ուկրաինայից Ադրբեջանին 1994 կամ 2007թթ. մատակարարված ծանր սպառազինությունը նշվում է ՄԱԿ ՄՍՌ ներկայացված Ուկրաինայի պաշտոնական հաշվետվությունում: Բայց ի՞նչ է դա փոխում *Ադրբեջանի* իշխանությունների *մտադրությունների* բացահայտման տեսանկյունից, ի՞նչ է դա փոխում ԱՀ իշխանությունների *գործելակերպում*:

Այս հարցում միջազգային պայմանագրերի և դրույթների սովետական մեկնաբանությունները տեղին չեն: Այստեղ էական է միայն հետևյալը. **պաշտոնական Բաքվի անդադար ռևանշիստական հայտարարությունների ֆոնին, Ադրբեջանական Հանրապետությունը թաքցրել է պատկան միջազգային կառույցներից, իր հարևաններից ու սեփական քաղաքացիներից 1993, 1994 և 2007թթ. ընթացքում իրականացված ծանր սպառազինությունների գնումները: Ապօրինի գնումները:** Դրանց մասին մենք կարող ենք միջնորդված և մոտավոր պատկերացում կազմել միայն ՄՄԽՀԻ, ՌՀՄԻ և *Ջեյնս* ընկերության համապատասխան տեղեկատուների փորձագիտական ու մոտավոր գնահատականներից: Բայց ոչ անմիջականորեն՝ Ադրբեջանի կողմից ՄԱԿ ԶԳԳ և ՄԱԿ ՄՍՌ ներկայացված պաշտոնական հաշվետվություններից:

2009թ. դրվագը հիմնականում վերաբերում է նախորդ գլխում հիշատակված ԱՄՆ Պետդեպարտամենտի ղեկավարի *09 STATE 41027*

հաղորդագրության «հատուկ Ադրբեջանի համար» առաջադրված հարցերին (տե՛ս Գ. 4, 4.5 բաժնում): Հենվելով մինչև այժմ ներկայացված նյութի վրա՝ ԱՀ ռազմական ծախսերի, ԱՀ պետական բյուջեի և ԱՆՊՀ մասհանումների մասով տկն Քլինթոնի առաջադրած այս հարցերի պատասխաններն այսօր հնչում են հետևյալ կերպ:

2008թ. ընթացքում հում նավթի արհեստականորեն բարձրացված գները թույլ տվեցին ԱՆՊՀ-ին կուտակել շոշափելի լրացուցիչ միջոցներ: Դրանք օգտագործվեցին ԱՀ ՌԾ թոփչքաձև ավելացման համար, որոնք մեր գնահատումներով այդ տարի կազմեցին մոտ \$2.0 մլրդ 2010թ. ԱՄՆ հաստատուն դոլար¹ (տե՛ս Նկար 5.2): Հում նավթի սպեկուլյատիվ գնագոյացման դեմ ԱՄՆ-ում ձեռք առնված անգամ մասնակի միջոցները (տե՛ս Գ. 2), ի թիվս այլ գործոնների, 2008թ. աշնանը, ձմռանն ու հաջորդ տարի հանգեցրին հում նավթի միջազգային գների շոշափելի անկմանը: ԱՀ 2009թ. պետական բյուջեով նախատեսված 70 \$/բարել² շեմային արժեքի փոխարեն այդ տարի հում նավթի միջին տարեկան գինը կազմեց 61-62 \$/բարել³: Արդյունքում՝ ԱՆՊՀ-ն զրկվեց լրացուցիչ շահույթից և, ամենայն հավանականությամբ, այդ տարի պետբյուջե լրացուցիչ հատկացումներ չիրականացրեց (տե՛ս Նկար 4.2): Այդ տարի խափանվեց Ի.Ալիևի 2008-ին արտահայտած մտադրությունը՝ հավասարեցնել իր երկրի ՌԾ ծավալները Հայաստանի Հանրապետության ողջ պետական բյուջեին (տե՛ս վերը):


Սակայն նշված հանգամանքները, անգամ ԱԶԳ նավթադաշտի «Կենտրոնական Ազերի» պլատֆորմի 2008թ. սեպտեմբերի 17-ի ծանր վթարը (տե՛ս Գ. 2) ամենևին չխանգարեցին Ի.Ալիևին շարունակել երկրի ռազմականացման քաղաքականությունը: Նա վերահաստատեց դա 2009թ. նախագահական ամանորյա ուղերձում և, ինչն ավելի կարևոր է, ամրապնդեց այդ տարի ԾՄՊ ծավալուն գնումների անվերապահ իրա-

¹ ՄՄԽՀԻ տվյալներով՝ \$1.76 մլրդ 2010թ. ԱՄՆ հաստատուն դոլար:

² Այլ ոչ թե 09 STATE 41027 հաղորդագրությունում հիշատակված 65\$/բարել (տե՛ս Հավելված 1, թիվ 1219):

³ 61.39 \$/բարել՝ *Dubai* և 61.67 \$/բարել *Brent* տեսակների համար ([22], տե՛ս նաև Նկար 2.8):

կանացմամբ: ԱՆՊՀ լրացուցիչ մասհանումների անհնարինության պարագայում դրա համար երկրի տարադրամային պահուստային ֆոնդից օգտագործվեց մոտ \$1.0-1.2 մլրդ, որի հետևանքով պահուստային ֆոնդի ծավալները նվազեցին 2009թ. սկզբի \$6.4 մլրդ-ից մինչև \$5.4 մլրդ՝ 2009թ. դեկտեմբերի վերջի դրությամբ, նվազագույն տարեկան արժեքը՝ \$4.9 մլրդ, գրանցելով 2009թ. հուլիսին (տե՛ս Նկար 5.6):



Աղբյուրը՝ <http://www.cbar.az/pages/statistics/special-standarts-publication/>

Այս լրացուցիչ միջոցներն օգնեցին ևս մեկ անգամ թռիչքաձև ավելացնել Ադրբեյջանի ռազմական ծախսերը. մեր գնահատումներով՝ 2009-ին դրանք կազմել էին մոտ \$2.6 մլրդ 2010թ. ԱՄՆ հաստատուն դոլար¹ (տե՛ս Նկար 5.2), ինչն օգնեց գրեթե 5 անգամ ավելացնել ԾՍՊ գնումների ծավալները նախորդ տարվա համեմատ: ՄՄԽՀԻ տվյալներով՝ 2009-ին

¹ ՄՄԽՀԻ տվյալներով՝ \$1.56 մլրդ 2010թ. ԱՄՆ հաստատուն դոլար:

դրանք կազմել էին մոտ 244 մլն 2010թ. ԱՄՆ հաստատուն դոլար կամ այդ տարի Ադրբեջանի ՌԾ մոտ 16%-ը¹ (տե՛ս Նկար 5.5): Հատկացված միջոցները՝ ըստ ՍՄԽՀԻ տվյալների, օգտագործվեցին՝ գնելու համար գրոհային ուղղաթիռներ՝ Ուկրաինայից, մարտական ինքնաթիռներ՝ Բելառուսից, մեծ տրամաչափի ինքնագնաց հրետանի՝ Ուկրաինայից և Բելառուսից, հրթիռներ ռեակտիվ համազարկային կայանքների համար՝ Իսրայելից, մեծ տրամաչափի քարշակ հրետանի՝ Բուլղարիայից (տե՛ս Աղյուսակներ 5.2-5.5 և Հավելված 9-ում): Բացի այս, համաձայն որոշ տեղեկությունների, հենց 2009-ին Ադրբեջանը ՌԴ-ին պատվիրեց *C-300 ПМУ-2 «Фаворит»* տիպի ՀՕՊ համակարգերի 3 դիվիզիոն²:

Ադրբեջանի տարադրամային պահուստային ֆոնդից հատկացված այս միջոցները չարտացոլվեցին 2009թ. ԱՀ պետական բյուջեի պաշտոնական տվյալներում: Հատկանշականորեն այդ տարի ԱՄՆ ԿՀՎ-ն զերծ մնաց ԱՀ բյուջեի որևէ գնահատականից [8], իսկ պաշտոնական Բաքուն 2009թ. պետբյուջեի կատարողականը գնահատեց թեթև դեֆիցիտային, մոտ \$220 մլն տիրույթում: ԱՀ պետական բյուջեի կատարողականի այդ տարվա մեր գնահատականը կազմել էր դեֆիցիտ՝ մոտ \$5.2 մլրդ (տե՛ս Գ. 4, Նկար 4.5):

Այս ամենի արդյունքում ԱՄՆ Պետդեպարտամենտին հետաքրքրած 2009թ. ԱՀ պետբյուջեի ծախսային հոդվածների համամասնությունը 2005թ. համեմատ նվազեց.

- մոտ 1.5 անգամ՝ «կրթություն» և «առողջապապահություն» տողերով,

¹ Ունենք բոլոր հիմքերը ենթադրելու, որ դրանք շոշափելիորեն ավելին էին, քան ՍՄԽՀԻ գնահատականները:

² Մեջբերում ենք ըստ բրիտանական *BBC* հեռուստառադիոալիքի 2010թ. հուլիսյան հաղորդագրության (http://www.bbc.co.uk/russian/mobile/international/2010/07/100729_azerbaijan_s-300.shtml): Այս մասին առաջին անգամ հայտնեց ռուսական «Ведомости» պարբերականը 2010թ. հուլիսի 29-ին [23] (Ադրբեջանի *C-300 «Фаворит»* ՀՕՊ համակարգերի մատակարարումների մասին տե՛ս ստորև): Ուշագրավ է, որ 2009թ. ՍՄԽՀԻ ԱՌ-ը Ադրբեջանական այս պատվերի մասին լռում է [2]: Համապատասխան տեղեկատվությունը հայտնվեց միայն 2010-ին: Ընդ որում, այստեղ *C-300 «Фаворит»* ՀՕՊ կայանքների ՌԴ-ին պատվերի ծավալը գնահատված էր մոտ \$300 մլն ու թվագրված էր 2010-ով՝ առանց այս տարեթիվը փակագծերի մեջ առնելու, իսկ պատվերի քանակը նշվում էր «ենթադրաբար 1 դիվիզիոն»՝ 2012թ. ապրիլի տվյալներով, և «ենթադրաբար 2 դիվիզիոն»՝ 2013թ. ապրիլի տվյալներով (տե՛ս նաև 5.1. բաժնի թիվ 26 ծանուցումը, Հավելված 9-ի Աղյուսակ 29.5-ի համապատասխան ծանուցումները):

- մոտ 1.7 անգամ՝ «մշակույթ, տեղեկատվություն և այլ» ու «գիտություն» տողերով,
- մոտ 2 անգամ՝ «օրենսդիր, գործադիր և պետական իշխանություն» տողով,
- «սոցիալական ապահովություն» տողով մոտ 28 անգամ՝ այո, **քսանութ անգամ** (տե՛ս Գ. 4, Աղյուսակ 4.4):

Ահա այսպիսին են տիկին Քլինթոնի 2009թ. ապրիլյան «հատուկ Ադրբեջանի համար» առաջադրված հարցերի պատասխանները:

2010թ. Հաջորդ կարևոր դրվագը նույնպես կապված է Ադապտացված ԵՍՍՊ դրույթների հետ և հետևյալն է: Ինչպես հայտնի է, այս պայմանագրով սահմանված են հաշվառման ենթակա ԾՍՊ տեսակների ցանկը (ՊՍՍ, *TLE*)¹, տվյալ երկրում դրանց ազգային ունեցվածքի հասկացությունը (ԱՈւ, *TLE Holdings*) և տվյալ զինատեսակի պարտավորեցնող վերին շեմային արժեքները (ՎՇԱ, *TLE Ceiling*)²: Մասնավորապես, Ադրբեջանական Հանրապետության (և Հայաստանի Հանրապետության) համար Ադապտացված ԵՍՍՊ շրջանակներում 1999-ից հիմնական մարտական տանկերի (ՀՍ) առումով գործում է 220 միավոր պարտավորեցնող վերին շեմային արժեքը: Մինչդեռ, 2011թ. սկզբին հրատարակվեց Միացյալ Թագավորության ռազմական վիճակագրության 2010թ. տեղեկատուն (ՄԹ ՌՎ 2010, *UK Defence Statistic 2010*, [25]³), համաձայն որի՝ Ադրբեջանի ՀՍ ազգային ունեցվածքը 2010-ին կազմում էր 381 միավոր ՀՍ⁴: Այսինքն՝ գերազանցում էր ԵՍՍՊ-ով սահմանված ՎՇԱ-ն 161 միավորով կամ 73%-ով (տե՛ս Նկար 5.7)⁵: Ավելին, ՍՄԽՀԻ գրադարանի ԾՍՊ առևտրային ռեզիստրների 2013թ. մարտի դրությամբ

¹ *Treaty Limited Equipment*, Պայմանագրով սահմանափակված սպառազինություն (ՊՍՍ):


² Մանրամասների համար տե՛ս, օրինակ, [15, 24, 25]:

³ ԵՍՍՊ շրջանակով սահմանված սպառազինության մասին այս տեղեկատուի տվյալներն ամբողջացված են Հավելված 9-ի Աղյուսակ 29.6-ում:

⁴ Այս գնահատականը բերվում է նաև ՄԱԿ 67-րդ Ընդհանուր ասամբլեայի Հայաստանի Հանրապետության հաշվետվությունում (2012թ. հունիսի 12) և կրկնվում ՄԱԿ գլխավոր քարտուղարի 2012թ. հուլիսի 9-ի զեկույցում [26]:

⁵ Հայաստանի համար նշված աղբյուրը բերում է 110 միավոր ՀՍ, այսինքն՝ ուղիղ 2 անգամ փոքր ԵՍՍՊ-ով սահմանված ՎՇԱ արժեքից:

հասանելի տվյալները վկայում են (տե՛ս Աղյուսակ 5.3), որ ՎՇԱ-ն Ադրբեջանը գերազանցում է նույնիսկ *միայն նոր գնված ՀՍՏ քանակով և արդեն սկսած 2006 թվականից*:



Աղբյուրները՝ http://armstrade.sipri.org/armstrade/page/trade_register.php, [25, 27] և սեփական հաշվարկներ

Մինչև 2004թ. Ադրբեջանն, իրոք, գնել էր 154 միավոր ՀՍՏ¹: 2005-ին՝ ԱԶԳ «հիմնական նավթի» փուլի մեկնարկային տարում, դրանց ավելացան ևս 44 միավոր նոր, T-72 M1 տիպի ՀՍՏ-ներ, 19 միավոր՝ Բելառուսից և 25 միավոր՝ Ուկրաինայից: Այսպիսով, 2008-ին Ադրբեջանի կողմից նոր գնված ՀՍՏ ընդհանուր քանակը կազմեց 198 միավոր: Հաջորդ տարի (2006թ.) Ադրբեջանին մատակարարվեց ևս 58 T-72 M1 տիպի ՀՍՏ. 41 միավոր՝ Բելառուսից և 17 միավոր՝ Ուկրաինայից: Ուստի, 2006-ին Ադրբեջանին մատակարարված միայն նոր ՀՍՏ քանակը հաստեց այս զինատեսակի համար ԵՄՍՊ-ի կողմից Ադրբեջանի համար սահմանված ազգային ունեցվածքի ՎՇԱ-ն և կազմեց 256 միավոր ՀՍՏ:

¹ 1993-94թթ. 150 միավոր T-55 տիպի տանկ՝ Ուկրաինայից, 2002-ին՝ մեկ T-72 տիպի տանկ Սլովակիայից, և 3 T-72 տանկ 2004-ին՝ նորից Ուկրաինայից, տե՛ս Աղյուսակ 5.3:

Իրադրությունն էլ ավելի խորացավ, երբ 2006-07թթ. ընթացքում ՌԴ-ից Ադրբեջանին մատակարարվեցին նույն տիպի ևս 62 միավոր ՀՄՏ-ներ¹: ՄՄԽՀԻ տվյալներով, սկսած 2007-ից մինչև 2013թ. մարտը, Ադրբեջանին այլևս նոր ՀՄՏ-ներ չեն մատակարարվել: Հետևաբար, 1992-2012թթ. ժամանակահատվածում Ադրբեջանին մատակարարվել է ընդհանուր 318 միավոր ՀՄՏ, ինչն արդեն 98 միավորով գերազանցում է Ադրբեջանի համար ԵՍՍՊ սահմանված ՎՇԱ-ն (բոլոր բերված տվյալները պատկերված են Նկար 5.7-ում): Եվ սա դեռ ամենը չէ:

Ինչպես նշել էինք վերը, Ադրբեջանը ՄԱԿ ՄՍՌ ներկայացրել է իր ԾՍՊ-ի մասին միայն 1995, 1996 և 1997թթ. պաշտոնական հաշվետվությունները ([27], տե՛ս նաև Հավելված 9, Աղյուսակ 29.2): Համաձայն դրանց, 1997-ին Ադրբեջանն ուներ 270 միավոր ՀՄՏ: Քանի որ ՄԱԿ ՄՍՌ-ում (և առհասարակ) բացակայում է Ադրբեջանի ԾՍՊ-ի մասին 1999թ. պաշտոնական հաշվետվությունը, առկա են բոլոր հիմքերը ենթադրելու, որ այդ տարի Ադրբեջանը նույնպես ուներ 270 միավոր ՀՄՏ, ինչը 50 միավորով ավելին է, քան Ադրբեջանի ՎՇԱ-ն: Այսպիսով, **Բաքուն խախտել է Ադապտացված ԵՍՍՊ հիշյալ դրույթն այս պայմանագրի ստորագրման պահից:** Իսկ եթե այս ցուցանիշին հաջորդաբար գումարենք 1999-2007թթ. ընթացքում ՄՄԽՀԻ-ի կողմից ֆիքսված նոր ՀՄՏ ադրբեջանական գնումները, ապա կստանանք այն², որ **սկսած 2007-ից՝ հիմնական մարտական տանկերի ԱՀ ազգային ունեցվածքը կազմել է 438 միավոր, ինչը 100%-ով գերազանցում է Ադրբեջանի համար սահմանված Ադապտացված ԵՍՍՊ վերին շեմային արժեքը:** Բերված գնահատականները նույնպես պատկերված են Նկար 5.7-ում:

Նույնն է վիճակը և հիմնական տրամաչափի հրետանու առումով: Ադապտացված ԵՍՍՊ շեմային արժեքը ԱՀ-ի համար կազմում է 285 միավոր, այնինչ ԱՀ-ում առկա հիմնական տրամաչափի հրետանու

¹ 2007-ին ՌԴ-ից Ադրբեջանին T-72M1 տիպի ՀՄՏ մատակարարումների թե՛ պատվերի, թե՛ փաստացի մատակարարված տանկերի քանակը (62 միավոր) ՄՄԽՀԻ-ն բերում է փակագծերի մեջ՝ որպես ենթադրյալ տվյալներ (տե՛ս Հավելված 9, Աղյուսակ 29.5):

² ՄԱԿ ՄՍՌ-ում առկա չէ շահագործումից հանված ադրբեջանական ՀՄՏ-ների քանակի մասին պաշտոնական որևէ տվյալ:

թվաքանակն ըստ ՄԹ ՌՎ 2010թ. հաշվետվության [25])՝ կազմում է 425 միավոր (Հավելված 9, Աղյուսակ Հ9.6), իսկ ըստ ՄԱԿ գլխավոր քարտուղարի 2012թ. հուլիսի 9-ի զեկույցի՝ 516 միավոր [26]: Այսպես թե այնպես, ԵՍՍՊ-ով սահմանված հաշվառմանը ենթակա ԾՄՊ սպառազինության այս տեսակով Ադրբեջանը նույնպես խախտում է վերին շեմային արժեքը՝ 50%-ից 81%-ով:

Վերը նշել էինք, որ ԵՍՍՊ-ն և Ադապտացված ԵՍՍՊ-ն շատ իմաստներով այլևս չեն արտացոլում այսօրվա աշխարհաքաղաքական իրողությունները՝ ոչ Եվրոպայում, ոչ Սև ծովի ավազանի երկրներում, ոչ էլ Հարավային Կովկասում: Այո, ԵՍՍՊ-ի նկատմամբ մի շարք երկրներ ունեն լուրջ վերապահումներ:

Մասնավորապես, տարածաշրջանային հակամարտություններում ոչ միջուկային սպառազինության որոշ արդի տեսակներ՝ գրոհային ունակությամբ ԱԹՍ-եր, բարձր ճշգրտությամբ ոչ միջուկային մարտագլխիկներով դեկավարվող կրիչներ, նավերի և շարժական պլատֆորմների վրա տեղակայված ՀՀՊ տարրեր և այլն, ներկայումս ձեռք են բերում ռազմավարական նշանակություն [29]: Մինչդեռ, սպառազինության այս արդիական տեսակներն ամբողջությամբ դուրս են Ադապտացված ԵՍՍՊ վերահսկման շրջանակներից և չեն հանդիսանում այս պայմանագրի ՊՍՍ (*TLE*): Հետևաբար, դրանց մատակարարումը կամ արտադրությունն ու տեղակայումը ոչ հաշվառվում, ոչ էլ կարգավորվում են նշված պայմանագրի դրույթներով:

Այո, այս պայմանագիրն այլևս չի գոհացնում ՌԴ-ին՝ նախ և առաջ ՆԱՏՕ ընդլայնման ֆոնին պայմանագրի այսպես կոչված «ֆլանգային սահմանափակումների» մասով [16]: Զուր չէ, որ ՌԴ-ն ԵՍՍՊ-ի նկատմամբ իր մորատորիումը մտցրեց հենց 2007-ին՝ քաջ գիտակցելով, որ ՆԱՏՕ-ին անդամակցելու Վրաստանի իշխանությունների մոլեռանդ ձգտումը վաղ թե ուշ ավարտվելու է ռազմական ավանտյուրայով [30]: Ինչն էլ տեղի ունեցավ 2008թ. օգոստոսի 8-ին: Եվ սա ՌԴ միակ մտահոգությունը չէ: Մտահոգիչ են մարտական և հետախուզական նշանակու-

թյան ԱԹՄ-ների գանգվածային ծավալումն ու կիրառումն այս երկրի գրեթե ողջ պարագծային «թեժ կետերում», Միրիայում ծավալվող ողբերգությունը, Թուրքիայի տարածաշրջանային դերակատարման հարցը, գործընթացներն Իրանի շուրջ: Վերջապես, մտահոգիչ է ռազմանավերի վրա տեղակայված ՀՀՊ տարրերի հարցը: Չէ՞ որ այսպիսի ռազմանավեր կարող են հայտնվել ոչ միայն Միջերկրական, այլ նաև Սև, և ո՞վ գիտե, գուցեև Կասպից ծովերում՝ միանգամից և էականորեն խախտելով այստեղ ռազմավարական հավասարակշռությունը: Այս առումով անգամ ԱՄՆ որոշումն՝ այլևս չգարգացնել ՀՀՊ տարրերի ծավալումն Արևելյան Եվրոպայում, հարց, որն այդքան տևական ժամանակ բարդացնում էր ԱՄՆ-ՌԴ հարաբերությունները, ՌԴ-ի կողմից ընդունվեց ամենայն զսպվածությամբ: Ինչը բացատրվում է Սև ծովում, Թուրքիայում, մեր տարածաշրջանում և Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում ՀՀՊ տարրերի տեղակայման գործընթացների ուշիմ զննմամբ և դրանց նկատմամբ դիրքորոշման մշակման իմաստավորմամբ:

Այո, ԵՄՍՊ-ն այլևս չի գոհացնում նաև ԱՄՆ-ին, նախ՝ այն բանի համար, որ այն այլևս չի գոհացնում ՌԴ-ին [21]: Բայց և այն բանի համար, որ ԱՄՆ-ը էապես փոխում է ՀՀՊ իր գլոբալ ճարտարապետությունը՝ դրա տարրերի տեղաբաշխման տեսանկյունից ավելի մեծ ուշադրություն դարձնելով Պարսից ծոցի երկրների, Թուրքիայի և Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի վրա:

Այո, ԵՄՍՊ դրույթները չեն գոհացնում նաև մեզ, քանի որ հաշվի չեն առնում սպառազինության մի շարք կարևորագույն տեսակներ, որոնք ակտիվորեն գնում է Ադրբեջանը և որոնք ենթակա չեն Ադապտացված ԵՄՍՊ հաշվառմանն ու սահմանափակումներին: Խոսքն առաջին հերթին Իսրայելից գնված մարտական և հետախուզական ԱԹՄ-ների, Իսրայելից (և ՌԴ-ից) գնված ՀՀՊ համակարգերի տարրերի և այլնի մասին է: Մտահոգությունների լուրջ առիթ են նաև Թուրքիայում ՀՀՊ տարրերի տեղակայումը, բարձր ճշգրտության զինատեսակների ներկրումը և դրանց սեփական արտադրության մեկնարկը, Միրիայում վար-

վող պատերազմում այս երկրի (և Իսրայելի) անմիջական մասնակցությունն ու ներգրավման խնդիրը և այլ հարցեր: Այո, Ադապտացված ԵՍՍՊ-ն հաշվի չի առնում Հարավային Կովկասում ստեղծված *դե ֆակտո* աշխարհաքաղաքական իրողությունը՝ ոչ Լեռնային Ղարաբաղի փաստացի ինքնուրույնությունը, ոչ Աբխազիայի կամ Հարավային Օսիայի ներկայիս կարգավիճակը:

Եվ առնվազն տարակուսանք է առաջացնում այն հանգամանքը, որ մինչև 2007թ. Ադրբեջանի և Հայաստանի իշխանություններն Ադապտացված ԵՍՍՊ դրույթների պահպանման հարցում ենթարկվում էին միանգամայն անհամաչափ ներազդման: Իսկապես, *Wikileaks*-յան Խմբաքանակ Ա-ի հաղորդագրությունները փաստում են, որ 2004-05թթ. այս հարցում Հայաստանը գտնվում էր կոշտ ճնշման տակ¹, անգամ 1960-ականների վերջին ԽՍՀՄ արտադրության մի քանի թեթև զրահապատ քարշակների (*тягач*) հետ կապված միջադեպում²: Հակառակ դրան, մինչև 2007-ի վերջը գոյություն չունի *Wikileaks*-յան Խմբաքանակ Ա-ի գեթ մեկ հաղորդագրություն, որը, գոնե փափուկ կերպով, կհանդիմաներ Ադրբեջանին ԾՍՊ ինելահեղ գնումների կամ ԵՍՍՊ դրույթների կոպիտ խախտման համար: Իրադրությունն այստեղ կարծես թե մի փոքր բարելավվեց միայն ՀՀ իշխանությունների կոշտ, բայցև համարժեք հակափաստարկների շնորհիվ: Այսպես, 2005թ. հունվարի 12-ով թվագրված իր հաղորդագրությունում Երևանում ԱՄՆ դեսպան Էվանսը նշում էր, որ ի պատասխան բարձրացված հարցերի, պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը.

«[Հ]այտնեց իր մտահոգությունը առ այն, որ ԱՄՆ-ը զբաղված է Հայաստանի կողմից համեմատաբար փոքր խախտումներով, մինչդեռ տարածաշրջանի կայունության համար իրական վտանգը Լեռնային Ղարաբաղում պատերազմի վերսկսման Ադրբեջանի մտա-

¹04 YEREVAN 891, 04 YEREVAN 1532, 05 YEREVAN 45 (տե՛ս նաև Հավելված 1, բաժին Հ1.4):

²MT-LB (Многоцелевой тягач легкий бронированный): Հիշյալ հաղորդագրություններում դրանք ահասարուռ կերպով նշվում են որպես MTLB's:

դրությունն է: Նա հայտնեց, որ Ադրբեջանը ԽՍՀՄ-ից ժառանգել է մոտ 3 անգամ ավելի սպառազինություն, քան Հայաստանը: Իսկ դրանից հետո լրացուցիչ սպառազինություն է ստացել նաև Ուկրաինայից՝ գերազանցելով ԵՍՍՊ բոլոր շեմային արժեքները: Նա ընդգծեց, որ երկու երկրների միջև ռազմական բալանսը պետք է պահպանվի» (05 YEREVAN 45, 5.S/NF):

Իրադրության մասնակի շտկմանը նպաստեցին նաև մի շարք հայ վերլուծաբանների փաստարկներն առ այն, որ «[ա]նվտանգության համար իրական նշանակություն ունեն միայն Ադրբեջանի ռազմուժի գրոհային կարողությունները, որոնք ունակ կլինեն կոտրել Լեռնային Ղարաբաղի պաշտպանական դիրքերը: ԵՍՍՊ-ով սահմանված ԾՍՊ տեսակները սահմանափակ հնարավորություն կունենան ԼՂ բարդ ռելիեֆի պայմաններում, բայց դրանք կարող են կրիտիկական նշանակություն ունենալ պաշտպանական ֆորտիֆիկացիոն օղակի վրա հնարավոր գրոհի ժամանակ: Այսպիսով, դրանք չափազանց կարևոր են»¹:

Այո, իրադրությունն այս հարցում կարծես թե մի փոքր շտկվեց, բայց ուշացումով, շատ դանդաղ ու ոչ ամբողջովին:

ԵՍՍՊ դրույթները չեն գոհացնում նույնիսկ սեփական դիրքորոշումից շվարած Ադրբեջանին [31], որն, ի զարմանք *Ռոյթթրս* գործակալության մեկնաբանի, Լեռնային Ղարաբաղի հարցը պատրաստվում է լուծել «Ադրբեջանի և Ադրբեջանի միջև տարվող գործընթացներով»: Շարունակելով ադրբեջանական այս անհեթեթ մոտեցման տրամաբանությունը՝ Բաքվում ԱՄՆ նորանշանակ դեսպան Ա.Դերսը Հայաստանին ՌԴ-ից սպառազինությունների ենթադրյալ մատակարարումների հարցին նվիրված 2009թ. հունվարի 29-ի հիշյալ հաղորդագրությունում հեզանքով գրում էր.

«Թեև ՌԴ-ից Հայաստանին սպառազինության մատակարարումների խնդրի լուրջ ազդեցությունը կզգացվի առաջին հերթին

¹ 07 YEREVAN 1015, 5.C

Լեռնային Ղարաբաղի շուրջ բանակցություններում, կասկածից վեր է, որ այստեղ [Ադրբեջանում] կծագի նաև ԵՍՍՊ-ի հետ կապված խնդիրը: Զվարճալին այստեղ այն է, որ եթե այս սպառազինության որոշ հատվածը, ի վերջո, հայտնվի Լեռնային Ղարաբաղում, այն պետք է հաշվառվի որպես Ադրբեջանի ՊՍՍ ազգային ունեցվածք» (**Թիվ 1227, 12. Տ.**):

Զգիտեմ, ինչքանով է սա զվարճալի, բայց գիտեմ, որ այսպիսի տրամաբանությամբ նույնը կարելի է պնդել նաև 90-ականների սկզբին մարտի դաշտում ադրբեջանա-խորհրդային բանակից որպես ռազմավար վերցված սպառազինության մասին: Ծիծաղելին այստեղ (եթե ծիծաղն այստեղ տեղին լիներ) ոչ այնքան ԵՍՍՊ տրամաբանությունն է, որքան Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմի արդյունքներով ձևավորված իրողության մերժումն իր իսկ կողմից: Ծիծաղելին ստալինյան աշխարհագրության անուրջներով պարուրված ադրբեջանական դիրքորոշումն է, որն անցած դարասկզբի 20-ականների տխրահռչակ որոշումն ընկալում է որպես Աստծո ու ճակատագրի հավերժ և անբեկանելի պարզև, վեր պատմության բնականոն ընթացքից, մարդկային հասարակությունների զարգացման օրինաչափությունից և ազգերի ինքնորոշման անօտարելի իրավունքի կամարտահայտություններից: Իրավունք, որը ձեռք է բերվել ռազմի դաշտում և ամրագրվել հրադադարի մասին Բիշքեկյան արձանագրությամբ:

«Զվարճալին» այստեղ այն է, որ դեռ 2007-ին, օգտվելով ԵՍՍՊ մորատորիումի մասին ՌԴ մտադրությունից, ԵՍՍՊ հունիսյան արտահերթ համաժողովում Ադրբեջանը նախ հայտարարեց այսպես կոչված «*ֆորսմաժորային*» իրավիճակ և առիթը բաց չթողեց պահանջելու վերանայել ԵՍՍՊ շրջանակներում սեփական ՎՇԱ-ները՝ դրանց ավելացման նպատակով [32], փորձելով ինչ-որ կերպ «վավերացնել» այս հիմնարար դրույթների իր խախտումները և վիժեցնել տարածաշրջանում հաստատված ռազմական հավասարակշռությունը: Խախտումներ, որոնց մասին ԵՍՍՊ անդամներին տեղեկացրել էր ինքը՝ Ադրբեջանը, դեռ 2006-ին [33]՝

սովորության համաձայն նույնիսկ այս անգամ աղավաղելով ՎՇԱ գերագանցման մասին իր տվյալները¹:

«Զվարճալին» այստեղ այն հիստերիկ ռեակցիան էր, որը ցուցաբերում էր Ադրբեջանը, երբ 2007թ. հուլիսի 5-ին ԱՀ արտգործնախարարի տեղակալ Ա.Ազիմովը սպառնում էր վերոհիշյալ Դ.Լուին Ադապտացված ԵՍՍՊ-ի հանդեպ Ադրբեջանի մորատորիումով: Ադրբեջանական այս *բլեֆի* մասին բավական խոսույն վկայություն կա *Wikileaks*-յան «Ադրբեջանական դոսյեի» *07 BAKU 841* հաղորդագրությունում: Նկարագրելով ադրբեջանական ռեակցիան՝ դրա հեղինակ Ա.Դերսը եզրակացնում է. «Հաշվի առնելով բոլոր հանգամանքները՝ մենք կարծում ենք, որ Ադրբեջանը չի դիմի այս քայլին, գոնե մինչև այն պահը, երբ այս քայլին առաջինը չդիմի Ռուսաստանը» (Թիվ 616, 1.C): Եվ հիրավի, զվարճալին այս ամենում այն է, որ հակառակ տիկին Դերսի կարծիքի, այս քայլին Ադրբեջանը չդիմեց նաև ՌԴ-ի կողմից Ադապտացված ԵՍՍՊ-ին մորատորիումի պաշտոնական հայտարարումից հետո [20]: Ո՛չ 2007-ի վերջին, ո՛չ դրանից հետո:

Եվ արդեն ամեննին էլ զվարճալի չեն ԵՍՍՊ-ին մորատորիում հայտարարած ՌԴ-ից ԵՍՍՊ-ին մորատորիումով սպառնացող Ադրբեջանին ևս մոտ 100 նոր ՀՄՏ 2013թ. հունիսից սկսված մատակարարումները:

Բոլոր դեպքերում, այս ամենը բնավ չի նշանակում, թե ԱՀ-ի կողմից Ադապտացված ԵՍՍՊ դրույթների խախտումներն ընդունելի են կամ ներելի, ինչպես դա հակված են անել ՌԴ-ում և ԱՄՆ-ում որոշ գործիչներ ու վերլուծաբաններ [տե՛ս, 17, 18, Brajza]: Կրկնենք. այս հարցում միջազգային պայմանագրերի և դրույթների սովետական մեկնաբանությունները տեղին չեն: Վերջին հաշվով, Ադրբեջանը ստորագրել է ԵՍՍՊ-ն (1992թ.) և Ադապտացված ԵՍՍՊ-ն (1999թ., տե՛ս Հավելված 9, Աղյուսակ

¹Նշվում էր, որ ի հաշիվ Ուկրաինայից ստացված ԾՄՊ-ի, Ադրբեջանը գերագանցել է իր ՎՇԱ-ները 41 միավոր ՀՄՏ-ով և 58 միավոր մեծ տրամաչափի հրետանիով: Սկզբնական փուլում Ադրբեջանը փորձում էր բացատրել իր կողմից ՎՇԱ գերագանցումը ԾՄՊ մոդեռնիզացիայի ծրագրի իրականացմամբ և հնացած տեխնիկայի դուրսգրման գործընթացի երկարացմամբ [33]: Վերստուգումներից հետո այս թվերը կազմեցին 99 և 71 միավոր համապատասխանաբար [34]:

29.3): Այն հետ չի վերցրել իր ստորագրությունները: ՌԴ-ի կամ ԱՄՆ-ի նման չի հայտարարել այս պայմանագրի միակողմանի մորատորիումի մասին ո՛չ 2007-ին, ո՛չ էլ առ այսօր: Այստեղ էականը հետևյալն է. **Ադրբեջանական Հանրապետությունը տարեցտարի անբռնազրու կերպով խախտում է իր կողմից ստորագրված Ադապտացված ԵՄՄՊ հիմնարար դրույթները պայմանագրի ստորագրման պահից: Այն հետևողականորեն վիժեցնում է տարածաշրջանում հաստատված հավասարակշռությունը, ի չիք դարձնում Հարավային Կովկասում երկարատև խաղաղության և կայուն զարգացման որևէ հեռանկար:**

Քանի դեռ Ադապտացված ԵՄՄՊ-ի փոխարեն չի մշակվել և չի գործում որևէ այլ համարժեք մեխանիզմ, որն արդյունավետ կերպով կզսպեր պատերազմի վերսկսման հնարավորությունը մեր տարածաշրջանում, Ադրբեջանի որդեգրած ռևանշիստական գործելակերպն օր օրի ուժգնացնում է պատերազմի վերսկսման վտանգը մեր տարածաշրջանում: Համաշխարհային ուժային կենտրոնների կրավորական դիրքը, նրանց կողմից Ադրբեջանի այս գործելակերպի լռելյայն ընդունումը միայն սաստկացնում են առկախ վտանգը:

Ժամանակին Մեծ Բրիտանիայի վարչապետ Ու.Չերչիլը գրում էր, որ «եթե 30-ականների վերջին եվրոպական մամուլը երկրորդական նշանակության նյութերի և ռևանշիստական Գերմանիային դյուրթող հողվածների տպագրման փոխարեն իր նոր օրը սկսեր այդ երկրում ռազմական ծախսերի աճը փաստող հողվածներով, ապա Երկրորդ աշխարհամարտը՝ իր ողջ արհավիրքներով, միգուցե և չկայանար»: Այս բառերը միանգամայն այժմեական են ու տեղին մեր տարածաշրջանի համար և Ադրբեջանի պարագայում:

Ամբողջականության պահպանման համար այստեղ նշենք մտահոգության ևս մեկ կարևոր պատճառ: Դրա համար անդրադառնանք սովորական սպառազինությունների կրճատման և ՋՈՋ չտարածման մի շարք հիմնարար միջազգային պայմանագրերում Ադրբեջանի մասնակցության հարցին՝ համեմատելով այն Հայաստանի պարագայի հետ: Հա-

վելված 9-ի Աղյուսակ Հ9.3-ում բերում ենք այս համաձայնագրերին և պայմանագրերին ԱՀ և ՀՀ մասնակցության ժամանակագրական համեմատական աղյուսակը՝ կազմված ՄԱԿ ԶԳԳ պաշտոնական տվյալների հիման վրա:

Ինչպես տեսնում ենք, Քիմիական զենքի մասին համաձայնագիրը (*CWC*) Հայաստանը ստորագրել է 1993թ. և վավերացրել 1995թ. հունվարի 27-ին: Ադրբեջանը վավերացրել է այն միայն 2000թ. փետրվարին, 5 տարի անց: Կենսաբանական զենքի մասին համաձայնագիրը (*BWC*) Հայաստանը վավերացրել էր 1994թ. հունիսի 7-ին, Ադրբեջանը՝ միայն 10 տարի անց՝ 2004-ին: Ադրբեջանի տարածաշրջանային հարևանների համար լուրջ մտահոգությունների տեղիք է տալիս նաև այն հանգամանքը, որ Ադրբեջանը չի վավերացրել, նույնիսկ չի էլ ստորագրել «Շրջակա միջավայրի մոդիֆիկացիայի» (ՇՄՄ, *ENMOD*) համաձայնագիրը¹ (Հայաստանն այն վավերացրել է 2002թ. մայիսի 15-ին), ինչպես նաև ԶՈԶ մասնակի փորձարկումների (*PTBT*) պայմանագիրը (Հայաստանն այն վավերացրել է 1994թ. հունիսի 7-ին)²:

2011թ. և անդին. Վերջին դրվագը, որի վրա անհրաժեշտ ենք համարում կանգ առնել, հիմնականում վերաբերում է Ադրբեջան-Իսրայել

¹ ՇՄՄ համաձայնագիրն արգելում է բնական համակարգերի (կենսոլորտ, լիտոսֆերա, ջրային համակարգ, մթնոլորտ, անդրմթնոլորտային տարածք) դինամիկայի, բաղադրության և կառուցվածքի արհեստածին խաթարումը (<http://disarmament.un.org/treaties>):

² Այս պարագայում արժե՞ գարմանալ, ինչպես դա արեցին ադրբեջանական որոշ վերլուծաբաններ, որ 2012թ. մարտին Ադրբեջանի նախագահը չիրավիրվեց միջուկային անվտանգության և ԶՈԶ չտարածման Սեուլի գագաթաժողովին: Հիշեցնենք, որ հենց այստեղ, մոռանալով տակավին աշխատող բարձրախոսների մասին, ԱՄՆ նախագահ Բ.Օբաման, մտերմիկ թեքվելով ՌԴ նախագահ Դ.Մեդվեդևի կողմը, գանգատվեց ԱՄՆ նախընտրական քարոզարշավի տրամաբանությունից և ընտրություններից հետո ՀՀՊ հարցում խոստացավ ավելի ճկուն մոտեցում: «Ես կփոխանցեմ ձեր բառերը Վլադիմիրին [Վ.Պուտին]», - խոստացավ ՌԴ հեռացող նախագահը: 2013թ. մարտի 16-ին ԱՄՆ-ը հայտարարեց իր ԵվրոՀՀՊ ծրագրի 4-րդ փուլից հրաժարվելու մասին՝ ուշադրությունն այս հարցում սևեռելով Պարսից ծոցի երկրների, Իսրայելի, Թուրքիայի և Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի վրա: Մեզ մնում է միայն ափսոսալ, որ Սեուլում Մեդվեդև-Էրդոհան հանդիպման ժամանակ բարձրախոսները հուսալիորեն անջատված էին, իսկ լրագրողները՝ հեռացված:

ռազմավարական համագործակցությանը և ՌԴ-ից Ադրբեջանին ՄՍՊ մատակարարումներին:

Ինչպես հայտնի է, այն ծայր առավ 1990-ականների կեսերին և մոտ մեկ տասնամյակ հիմնականում սահմանափակվում էր հետախուզական և այլ բնույթի տեղեկատվական համագործակցությամբ (տե՛ս [30, c. 4; 35]): Իրադրությունը փոխվեց 2005-ին՝ ԱԶԳ նավթադաշտի «հիմնական նավթի» փուլի և ԲԹԶ նավթամուղի մեկնարկով: Դրանից հետո Ադրբեջանն արագ դարձավ Իսրայելին հում նավթ մատակարարող հիմնական երկրներից մեկը: Ներկայումս այն ապահովում է Իսրայելի պահանջարկի ավելի քան 40%-ը: Այդ մասին չեն զլանում կրկնել ԱՄՆ-ում և արևմտաեվրոպական մի շարք երկրներում Բաքվի դեսպանատներն իրենց կայքէջերում և ադրբեջանական տարատեսակ պաշտոնյաներն արտերկրում իրենց որոշ ելույթների ժամանակ:

Հասկանալի տրամաբանությամբ 2005-ով է թվագրվում նաև բաց աղբյուրներում փաստված Իսրայելից Ադրբեջանին ՄՍՊ առաջին խմբաքանակի մատակարարման պատվերը: Համաձայն ՍՄԽՀԻ տվյալների, դրանք վերը հիշատակված «*Lynx*» մակնիշի ռեակտիվ համազարկային կայանքներն էին և «*Extra*» տիպի հրթիռները դրանց համար¹ (Հավելված 9, Աղյուսակ Հ9.5)²: Ընդգծենք՝ այս առաջին իսկ պատվերում խոսքը գրոհային նշանակության ծանր սպառազինությանն էր վերաբերում, այլ ոչ թե պաշտպանական նշանակության սպառազինությանը, ինչը հասկանալի կլիներ, եթե կողմերը մտահոգված լինեին, օրինակ, ԲԹԶ նավթա-

¹ Այս պատվերի և ԱՀ ռազմարդյունաբերական համալիրի հիմնադրման մասին տե՛ս վերը՝ 2005թ. դրվագում: Հավելենք, որ *Wikileaks*-յան «Ադրբեջանական թղթապանակի» թիվ 282 հաղորդագրությունը, թվագրված 2006թ. հոկտեմբերի 21-ով, հիշատակում է 2005թ. սեպտեմբերին Ադրբեջանի և Իսրայելի միջև կնքված ռազմական արդյունաբերության մասին պայմանագիրը (*06 BAKU 1541*, 3.C): Այսպիսով, միանգամայն հիմնավորված է մեր վերը կատարած դիտարկումը, որ Ադրբեջանի ռազմարդյունաբերական համալիրի ստեղծման ակունքներում կանգնած է Իսրայելը:

² Ուկրաինային BM-9A52 «*Смерч*» տիպի ռեակտիվ համազարկային կայանքների ադրբեջանական պատվերը ենթադրաբար թվագրվում է 2003-ով (մատակարարումները՝ 2004-05թթ., տե՛ս նույն տեղում): 2013թ. հունիսի 15-ին հայտնի դարձավ ՌԴ-ից Ադրբեջանին ևս 18 «*Смерч*» կայանքների մատակարարման մասին:

մուղի կամ ԱՀ նավթային ենթակառուցվածքի այլ տարրերի անվտանգության հարցերով:

Ադրբեջանա-իսրայելական նախանշվող ռազմավարական (և ռազմական) համագործակցությունը նոր թափ ստացավ 2006թ. փետրվարին, այն բանից հետո, երբ ԱՄՆ այցի ընթացքում կայացավ Ադրբեջանի արտգործնախարար Է.Մամադյարովի (*Elmar Mammadyarov*) հանդիպումը ԱՄՆ-ում գործող հիմնական հրեական կառույցների նախագահների հետ: Ահա թե ինչպես է այն նկարագրում Բաքվում ԱՄՆ դեսպան Ռ.Հարնիշն (*Reno L. Harnish, III*) իր 2006թ. փետրվարի 15-ով թվագրված հաղորդագրությունում.

«1.C. Սեղմագիր. Արտգործնախարար Մամադյարովը փետրվարի 13-ին հանդիպեց ԱՄՆ Հիմնական Հրեական Կազմակերպությունների Նախագահների Կոնֆերանսի¹ ղեկավարներին: Նա Ադրբեջանի հարաբերություններն ԱՄՆ-ի հետ բնութագրեց որպես «ռազմավարական համագործակցություն» (*strategic partnership*) և ասաց, որ Ադրբեջանը ձգտում է սերտացնել հարաբերություններն Իսրայելի հետ: Թեև նա ընդունեց, որ Ադրբեջանի անդամակցությունը ԻԿԿ-ին (*OIC*) որոշ սահմանափակումներ է մտցնում այս հարցում, և չպարզաբանեց, թե երբ Ադրբեջանում կբացվի Իսրայելի դեսպանությունը: Մամադյարովը մեղադրեց Հայաստանին ԼՂ հակամարտության կարգավորման փարիզյան բանակցություններում արդյունքների բացակայության համար և ասաց, որ Երևանը հրաժարվում է փոխզիջումներից: Նա նաև մանրամասն քննարկեց տարածաշրջանային էներգետիկ ծրագրերը, ներառյալ դազախական նավթի ներհոսքը ԲԹՋ և դեպի Հարավային և Կենտրոնական Եվրոպա Շահ Դենիզի գազի արտահանման ուղիները: ՌԴ-ի հետ հարաբերությունում նա ընդգծեց ռուսական գյուղատնտեսական շուկայի կարևորությունը: Իրանի հետ կապված՝ նշեց Ադրբեջանի մտահոգությունն Իրանի միջուկային նկրտումների առնչությամբ: Լսարանը ջերմորեն ընդու-

¹Գլխատառերը բերվում են բնագրում՝ Conference of Presidents of Major American Jewish Organizations:

նեց Մամադյարովին՝ որպես ամերիկյան հրեա համայնքի փորձված ընկերոջ» (Թիվ 16, 06 BAKU 234, 1.C.)¹:

2006թ. հոկտեմբերի 19-ին Բաքու ժամանեց Ադրբեջանում Իսրայելի հյուպատոս Ա.Լենքը (*Arthur Lenk*, նստավայրը՝ Անկարա)՝ նպատակ ունենալով նախապատրաստել Իսրայելի Պաշտպանության նախարարության ռազմաքաղաքական համագործակցության գծով փոխնախարար Ա.Գիլադի (*Amos Gilad*) հոկտեմբերի վերջին նախատեսված այցն Ադրբեջան և նրա հանդիպումը ԱՀ Պաշտպանական արդյունաբերության նորանշանակ նախարար Յ.Ջամալովին (տե՛ս վերը՝ 2005թ. դրվագում): Բաքվում ԱՄՆ դեսպան Ա.Դերսի հետ իր զրույցում պրն Լենքը նշեց, որ Գիլադի այցի նպատակն է խորացնել 2005թ. սեպտեմբերին Իսրայելի և Ադրբեջանի միջև կնքված ռազմական արդյունաբերության մասին համաձայնագրի դրույթները, դրանց «միս և արյուն» տալ, ինչպես նաև հատուկ ռազմական կցորդ (*Defense Attache*) նշանակել Անկարայում տեղակայված՝ Ադրբեջանում Իսրայելի դեսպանատանը (Թիվ 282, 06 BAKU 1541, 3.C): Նշված հաղորդագրությունում՝ թվագրված 2006թ. հոկտեմբերի 21-ով, դեսպան Դերսը նշում է, որ «տեղական մամուլի հրապարակումները մեջբերել են պրն Լենքին, որն ասել է. «Իսրայելի, Ադրբեջանի և Միացյալ Նահանգների շահերը տարածաշրջանում համընկնում են»: Այս առնչությամբ տիկին Դերսն իր մտահոգությունն է արտահայտում, թե՛

¹ Անհրաժեշտ է ընդգծել այս հաղորդագրության նաև հետևյալ կարևոր դրվագը: Պատասխանելով լսարանի հարցին, թե ինչպես է նա գնահատում Իրանի շուրջ ծավալվող գործընթացները, պրն Մամադյարովը հայտարարեց. «այստեղ ապրում են 30 մլն էթնիկ ադրբեջանցիներ, և հասկանալի է, մենք ուշիուշով հետևում ենք գործընթացներին: Բացի այդ, Ադրբեջանը Նախիջևանին կապող միակ ցամաքային ճանապարհն անցնում է Իրանով» (Թիվ 16, 06 BAKU 234, 8.C.): Կարծում ենք, որ ահա այս ակունքից է սերում Իրանում ապրող «30 մլն էթնիկ ադրբեջանցիների» մյուծոսը, որը հետագայում մեծ տարածում ստացավ ադրբեջանցի, թուրք և իսրայելցի վերլուծաբանների բազում ելույթներում, նույնիսկ որոշ ռուսական ու հայրենական փորձագետների հրապարակումներում: Բերված գնահատականի ողջ անհիմնությունը, այս մյուծոսի գոյացման և տարածման պատճառները քննվում են [36]-ում:

«ԱՄՆ լավ ընկեր և դաշնակից Իսրայելի աճող ներկայությունը [Ադրբեջանում], հատկապես՝ ռազմական ներկայությունն Իրանի հարևան այս շիա մահմեդական երկրում, կարող է ակամա բացասական հետևանքներ ունենալ ներկայումս ընթացող մեր սեփական ռազմական համագործակցության և տարածաշրջանային անվտանգության ավելի լայն նպատակների համար» (Թիվ 282, 06 BAKU 1541, 8.C):

Դեսպանի այս միանգամայն հիմնավորված մտահոգություններն այնքան խորն էին, որ տիկին Դերսը խնդրեց ԱՄՆ Պետդեպին պարզաբանել ամերիկյան դիրքորոշումն Ադրբեջան-Իսրայել ռազմական համագործակցության վերաբերյալ: Ցավոք, Wikileaks-յան հաղորդագրությունների Խմբաքանակ Ա-ում այս պատասխան հաղորդագրությունը բացակայում է:

2006թ. հոկտեմբերի 30-31-ին կայացավ Ա.Գիլադի այցը Բաքու: Այս այցի արդյունքները տիկին Դերսը նկարագրում է իր 06 BAKU 1709 հաղորդագրությունում, որտեղ մասնավորապես նշում է, որ այցը ցածր մակարդակի էր և անբովանդակ («*low-profile and short on substance*»): Մի փոքր հակասելով ինքն իրեն՝ տիկին Դերսը տեղեկացնում է, որ ստորագրվել է ռազմական համագործակցության նոր պայմանագիր, Գիլադի և ԱՀ Պաշտպանության նախարար Ս.Աբիևի (*Safar Abiyev*) միջև կայացել է երկու հանդիպում, որոնց ընթացքում մանրամասն քննարկվել են Իրանի ռազմական և քաղաքական կառուցվածքային խնդիրները և ընդհանուր անվտանգության հարցեր, ինչպես նաև որոշվել է Անկարայում առանձին ռազմական կցորդ չնշակել: Փոխարենը, Իսրայելի Պաշտպանության նախարարությունը հատուկ պաշտոնյա կնշանակի (*DATT*), որը քառորդը մեկ պարբերականությամբ կայցելի անմիջապես Բաքու՝ տեղում հարցերը քննելու և քննարկելու համար: Ընդ որում, այս հարցում ավելորդ լուսաբանումներից խուսափելու համար «Իսրայելը չի հայտնի այս պաշտոնյայի անունն ու տվյալներն իր դիվանագիտական կորպուսի ցանկում և կներկայացնի դրանք միայն իր ԱՄՆ և բրիտանական գործընկերներին» (Թիվ

318, 4.C): Բավական արտառոց մի բան՝ ստիպված ենք հավելել:

Նոր կնքված պայմանագրի առնչությամբ, հղում կատարելով պրն Լենքի գնահատականներին, դեսպան Դերսը գրում է, «Լենքը կարծում է, որ երկկողմ ռազմական համագործակցության առումով այն էական նոր բան չի տա», և որ «Լենքը հատուկ ընդգծեց, որ այսուհետ Իսրայելը նոր երկկողմ ռազմական նախաձեռնություններ չի ձեռնարկի՝ առանց ԱՄՆ կառավարության հետ խորհրդակցելու» (Թիվ 318, 1.C): Ինչպես կտեսնենք, պրն Լենքը այստեղ կամա թե ակամա ստում էր, հավանաբար՝ ակամայից ապակողմնորոշելով նաև դեսպան Դերսին:

Նույն ՄՄԽՀԻ տվյալներից հայտնի է, որ հաջորդ տարի հիմք դրվեց Իսրայելից Ադրբեջան «*Aerostar*» ԱԹՍ մատակարարումներին և դրանց տեղական արտադրության կազմակերպմանը: 2008-ին Ադրբեջանն Իսրայելին պատվիրեց գրոհային նշանակության 155 մմ տրամաչափի *ATMOS-2000* տիպի ինքնազնաց հրետանային համակարգեր, 155 մմ տրամաչափի *CARDOM* տիպի ինքնազնաց հաուրիցներ, ինչպես նաև *Sufa* տիպի զրահամեքենաներ, *Hermes-450* տիպի ԱԹՍ-ներ և *Spike-MR/LR* տիպի հակատանկային հրթիռներ (Հավելված 9, Աղյուսակ 29.5)¹: Ցավոք, *Wikileaks*-յան հաղորդագրությունների Խմբաքանակ Ա-ում այս հարցին առնչվող և 2007-08թթ. թվագրված հաղորդագրությունները բացակայում են: Բայց 2009թ. առաջին իսկ հաղորդագրությունը խոսում է: Դա վերը հիշատակված Դ.Լուի «Ադրբեջանի զուսպ *սիմֆիոզը* Իսրայելի հետ» բարձր գաղտնիության և առավել զգայունության աստիճան ունեցող *09 BAKU 20* կարևոր հաղորդագրությունն է, որը մեջ կբերենք ավելի ծավալուն:

2009թ. հունվարի 13-ով թվագրված այս հաղորդագրության բովանդակությունը պրն Լուն ի մի է բերում հետևյալ կերպ.

«1.C. *Սեղմագիր*. Ադրբեջանի հարաբերությունները Իսրայելի հետ զուսպ են, բայց սերտ: Այս երկրներից յուրաքանչյուրն իրեն

¹ 2008թ. այս ակտիվությունը մասամբ բացատրվում է նաև այն մեծ տպավորությամբ, որն Ալիևի վրա թողեցին այդ տարի պատահած Կենտրոնական Ազերի պլատֆորմի վթարը, Վրաստանում օգոստոսյան դեպքերը, Մոսկվայի կողմից Հրվ. Օսիայի և Աբխազիայի անկախության ճանաչումը, հայ-թուրքական մերձեցման գործընթացի մեկնարկը:

շատ լավ է զգում մյուսի աշխարհաքաղաքական խնդիրների ծիրում: Նրանք երկուսն էլ Իրանը գնահատում են որպես սեփական գոյությանն ուղղված մահացու վտանգ: Իսրայելի համաշխարհային կարգի ռազմական արդյունաբերությունը, զուգորդված մատակարարումների հարցում այս երկրի անկաշկանդ վարքով, հրաշալիորեն համընկնում է Ադրբեջանի ռազմական անհագ ախորժակին, որը, տարբեր պատճառներով, չբավարարված է մնում ԱՄՆ-ի, Եվրոպայի և ՌԴ-ի կողմից, և որն առնչվում է Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի հետ: Ադրբեջանի նախագահ Ի.Ալիևի խոսքերով, Իսրայելի հետ Ադրբեջանի համագործակցությունը «այսբերգ է հիշեցնում, որի 9/10-րդը քողարկված է ջրով»: Այս համագործակցությանը բնորոշ է նաև իրատեսությունը. օրինակ, Իսրայելն ըմբռնումով է մոտենում ԻԿԿ-ում¹ քաղաքական պահանջներից բխող Ադրբեջանի բռնած դիրքին²» (Թիվ 1210, 1.С):

Այնուհետև, անցնելով երկու երկրների հարաբերությունների պատմությանը՝ նա նշում է.

«3.С. Ինչպես և Իսրայելը, Ադրբեջանն Իրանն ընկալում է որպես հիմնական, նույնիսկ մահացու վտանգ սեփական գոյությանը: Այս միացյալ դիրքորոշումը նրանց հարաբերությունների զարգացման ելակետն է: ԱՄՆ-ում ծնված Իսրայելի դեսպանն Ադրբեջանում՝ պրն Ա.Լենքը, սև հումորով հաճախ նշում է, որ եթե հնարավորություն ընձեռվեր փոխանակել հարևաններին Ադրբեջանի հետ, ապա նա դրանից կհրաժարվեր: Նույնիսկ բաց աղբյուրները նշում են, որ այս երկու երկրների միջև առկա էր հետախուզական ոլորտում ինտենսիվ համագործակցություն անգամ մինչև Հեյդար Ալիևի նախագահ դառնալը» (Թիվ 1210, 3.С):

¹ Իսլամական կոնֆերանս կազմակերպություն (*OIC*):

² Մեր կողմից հավելենք՝ նաև Բաքվում Իսրայելի դեսպանության հարցին:

Այնուհետև պրն Լուսն անցնում է երկու երկրների միջև ռազմական համագործակցության հարցին, և ինչպես կտեսնենք, այն ամենին էլ «զուսպ» չէ: Այսպես.

«5.С. Իսրայելի հետ իր սերտ հարաբերությունների շնորհիվ Ադրբեջանը հասու է դառնում իրենց որակական ցուցանիշներով այնպիսի զինատեսակներին, որոնք հասու չեն նրան ոչ ԱՄՆ-ից կամ Եվրոպայից՝ իրավական սահմանափակումների շնորհիվ, ոչ էլ նախկին խորհրդային մատակարարներից՝ Ուկրաինայից¹ և Բելառուսից: Մինչ արևմտյան տերությունները մտահոգ են ցամաքային մարտական համակարգեր վաճառել Ադրբեջանին՝ երկյուղելով խրախուսել վերջինիս վերսկսել պատերազմը Լեռնային Ղարաբաղում, Իսրայելն այս հարցում իրեն անկաշկանդ է զգում և մեծապես օգտվում է Ադրբեջանի պես հարուստ հաճախորդ ունենալուց: Ահա, 2008թ. սեպտեմբերին նորից, առանց ավելորդ աղմուկի, ԱՀ կառավարությունը լայնածավալ պայմանագիր ստորագրեց Իսրայելի Պաշտպանության նախարարության հետ, համաձայն որի՝ իսրայելական 3 ընկերություններ հաուրիցներ, արկեր, հրթիռային հրետանի և ռադիոսարքավորումներ կմատակարարեն [Ադրբեջանին]: «Soltam» ընկերությունը կմատակարարի հաուրիցներ և արկեր (*mortars and ammunition*), «Tadiran Communications»-ը՝ ռադիոսարքավորումներ, «Israeli Military Industries»-ը՝ հրթիռներ: IMI-ն վաճառում է հրետանային հրթիռների տեսականի և հարմարանքներ՝ սկսած խորհրդային 122 մմ տրամաչափի հնացած *BM-21 «Grad»* կայանքների մոդեռնացված տեսակներից, 122-300 մմ տրամաչափերի հրթիռների դեկավարման համակարգերից, մինչև 300 մմ տրամաչափի հրթիռների տեղակայման պլատֆորմներից: Հայտնի չէ, թե հատկապես ինչ է գնել Ադրբեջանը, իսկ գնումների ծավալը նկարա-

¹ Հավանաբար, պրն Լուսն տեղյակ չէր Ուկրաինայից «Смерч» տիպի ռեակտիվ համազարկային կայանքների 2004-05թթ. մատակարարումների մասին: Հակառակ դեպքում նա այդքան վստահ չէր լինի իր այս ձևակերպան մեջ: Այն էլ ավելի կխարխլվեր 2013թ. հունիսի 15-ին ՌԴ-ից Ադրբեջան ևս 18 «Смерч» կայանքների մատակարարման մասին տեղեկանալուց հետո:

գրված է պարզապես «մի քանի հարյուր մլն դոլար արժողությամբ»¹: Ադրբեջանն արդեն ունի *IMI* արտադրության 122 մմ տրամաչափի «*Lynx*» ռեակտիվ համագարկային կայանքներ, որոնք նա տեղակայում է *KAMAZ-63502* ծանր բեռնատարի վրա:

Ինչպես տեսնում ենք, պրն Լուին հստակ տարանջատում է Ադրբեջանի ռազմարդյունաբերական համալիրի հիմնման գործընթացները և դրանցում Իսրայելի դերակատարումը ԾՄՊ պարզ մատակարարումներից: Նա նույնիսկ հարկ համարեց այդ մասին տեղեկատվությունն առանձնացնել հատուկ՝ 6-րդ կետում, շնորհելով դրան *S/NF* աստիճան, այսինքն՝ «գաղտնի, ոչ օտարազգիների համար» (*SECRET/NOFORN*):

Բացի այդ, նա Ադրբեջանի և Իսրայելի միջև ռազմաքաղաքական հարաբերությունները համարում է ռազմավարական համագործակցություն՝ հիմնված Իրանի նկատմամբ այս երկրների ընդհանուր դիրքորոշման վրա: Հանգամանք, որն այս համագործակցությունը միանգամից տեղափոխում է տարածաշրջանային աշխարհաքաղաքականության դաշտ: Եվ նույնիսկ ավելին՝ *գրանդ ստրատեգիայի* դաշտ, հաշվի առնելով ԱՄՆ-Իսրայել զլոբալ և Իսրայել-Թուրքիա տարածաշրջանային համագործակցությունները: Միևնույն ժամանակ, Ադրբեջան-Իսրայել հարաբերությունները նա բնութագրում է որպես չափազանց պրագմատիկ՝ հատուկ նշելով, որ երկու երկրներն էլ «աչք կփակեն» որոշ կնճիռների վրա՝ Ադրբեջանի ԻԿԿ անդամություն, Բաքվում Իսրայելի դեսպանության խնդիր, պաղեստինյան արաբների նկատմամբ իսրայելական գործելակերպ և այլն:

Հետագա զարգացումները հաստատեցին պրն Լուի այս եզրահանգումները: Այսպես, 2009-10թթ. ընթացքում ի հայտ եկան ադրբեջանա-իսրայելական ռազմական համագործակցության նոր մանրամասներ:

¹ Այս գնահատականի վրա ենք հրավիրում ՄՄԽՀԻ փորձագետների ուշադրությունը, որոնք իրենց տեղեկատվությունը 2005-10թթ. Ադրբեջանի կողմից Իսրայելից գնած ԾՄՊ-ների մեկնաբանությունների պլոնակը թողնում են կուսականորեն դատարկ (Հավելված 9, Աղյուսակ 29.5): Մեր գնահատականներով՝ Ադրբեջանի ռազմարդյունաբերական համալիրի ստեղծման համար իսրայելական այս պայմանագրի արժեքը կազմել է մոտ \$300-350 մլն:

Օրինակ, 2010-ին՝ T-72 տիպի ադրբեջանական ՀՄՏ մոդեռնիզացիայի ծավալուն ծրագիրը, որն իրականացվում է *Elbit Systems of Azerbaijan Ltd* համատեղ ընկերության կողմից¹: Նույն թվականին ռազմական համագործակցության պայմանագիր ստորագրվեց նաև Ադրբեջանի և Թուրքիայի միջև: Թուրքական *Todayzaman* գործակալության փոխանցումով², համապատասխան պայմանագիրը ստորագրվել էր 2010թ. նոյեմբերին և, ի մասնավորի, նախատեսում էր թուրքական *Otokar* ընկերության հետ համատեղ զրահամեքենաների հավաքում և արտադրություն: Բացի այդ, նշվում էր, որ համագործակցությունը լինելու է բազմափուլ: «Առաջին փուլում նախատեսվում է հետևակային և գրոհային սպառազինության [համատեղ] արտադրության կազմակերպում Ադրբեջանում: Համագործակցության հետագա փուլերում նախատեսվում են զինամթերքի արտադրություն և ռազմական սարքավորումների արտահանում»:

Այնուհետև, բաց մամուլում ի հայտ եկան Ադրբեջանում իսրայելական ռազմաօդային բազաների մասին տեղեկությունները: Ընդ որում, այս հրապարակումների ակունքում կանգնած էին ԱՄՆ որոշ շրջանակներից տեղեկատվական «արտահոսքեր», ինչը վկայում էր ԱՄՆ իշխանությունների մտահոգությունն Իսրայելի օրեցօր ինքնուրույն դարձող ռազմավարական քայլերով³: Բոլոր դեպքերում, դրանք անհրաժեշտ է դիտարկել որպես Իրանի շուրջ «սանիտարական կորդոնի» ստեղծման

¹ http://irubric.ru/index.php?option=com_content&view=article&id=3231&catid=16:2013-01-13-15-17-18&Itemid=22

Հայտնվում է, որ այս ընկերությունն ընտրվել է թուրքական *ASELSAN* ընկերության կողմից, ինչը վկայում է այս ծրագրին նաև Թուրքիայի մասնակցությունը: Հատկանշական է *Elbit Systems*-ի ղեկավար Ջ.Ակերմանի (*Joseph Ackerman*) հետևյալ պնդումը. «Մեզ ընտրել են, քանի որ մեր նախորդ պատվիրատուն գոհ էր մեր աշխատանքից»: Համատեղ այս ընկերությունը ղեկավարում էր Է.Չերնին (*Edward Chernin*): \$56 մլն արժողությամբ ծրագիրը ենթադրում է մինչև 100-120 միավոր T-72 տանկերի մոդեռնիզացիա: Դրան կմասնակցեն *Elbit Systems* մայր ընկերության *Land C4I – Tadiran* և *Elbit Systems Electro-optics (Elop)* քույր ընկերությունները:

² <http://www.todayzaman.com/news-229199-azerbaijan-turkey-to-start-military-equipment-production-next-year.html>

³ Եվ, ի դեպ, հնարավորություն է տալիս վերը հիշատակված պրն Լենքի՝ Բաքվում ԱՄՆ դեսպան Դերսին տված հավաստիացումները որակել որպես մերկապարանոց ու անարժեք:

գործընթացի բաղկացուցիչ: Դեպքերի ինտենսիվ զարգացման դեպքում այն արագ կդառնա Իրանի վրա հարձակողական գործողությունների հենակետային տարածք (տե՛ս *GAAT* սցենարի նկարագրությունը, Հավելված 3-ի բաժին 3.2):

2011-ին լրատվամիջոցները հայտնեցին Իսրայելից Ադրբեջանին մոտ \$1.6 մլրդ ընդհանուր արժողությամբ ԾՍՊ ռեկորդային մատակարարումների մասին: Դատելով դրանց տիպա-քանակական տվյալներից, որոնք մասնակիորեն բերվում են ՍՄԽՀԻ ԱՌ-ում (Հավելված 9, Աղյուսակ 29.5), կարելի է ենթադրել, որ գումարային առումով դրանց զգալի մասը վերաբերում է հականավային, հակաօդային և հակահրթիռային պաշտպանության տարրերին (*Gabriel-5* տիպի հականավային հրթիռներ, *Barak-8* հակաօդային կայանքներ և հրթիռներ, *EL/M-2080 «Green Pine»* ՀՀՊ ռադարային կայանքներ): Ելնելով այս սպառազինության բնույթից՝ ամենայն հավանականությամբ կարելի է ենթադրել, որ դրանք առաջին հերթին նախատեսված են Կասպիցի ավազանում օգտագործման համար (տե՛ս Հավելված 3) և, այսպես ասած, ունեն առավելապես հակահրանական ուղղվածություն¹: Այսպիսով, կարող ենք փաստել Դ.Լուի վերը բերված եզրահանգման ևս մեկ ապացույց, թե ինչպես է իսրայելա-(թուրք)-ադրբեջանական ռազմական համագործակցությունը ներքաշում այս երկիրը *գրանդ ստրատեգիայի* դաշտ՝ այս անգամ արդեն ՀՀՊ տարրերի տեղակայման տեսանկյունից²:

Վերջապես նկատենք, որ 2011-12թթ. ակտիվորեն սկսեցին քննարկել նաև ՌԴ-ից Ադրբեջանին *C-300 ПМУ-2 «Фаворит»* տիպի ՀՕՊ համակարգերի մատակարարման փաստը և դրա հնարավոր ազդեցությունը տարածաշրջանային ռազմական հավասարակշռության, Լեռնային Ղա-

¹Նկատենք, որ փաստված են Պարսից ծոցի «հավատարիմ» արաբական երկրներին ՀՀՊ տարրերի ամերիկյան մատակարարումները: Էլ չենք խոսում «Միթիական վտանգի» պատրվակով Թուրքիայում դրանց տարրերի տեղակայման մասին:

²Ծավալային սահմանափակումներից ելնելով՝ այստեղ չենք դիտարկի ՀՀՊ տարր (*CIPPH, BMEWR*) հանդիսացող Գաբալայի (Կուտկաշենի) ռադարի չափազանց ուշագրավ հարցը: Արմավիր, Մալաթիա, Կուտկաշեն... Տարօրինակ է, թե ինչպես են միա-հյուսվում Հայկական աշխարհի այս տեղանուններն արդի ՀՀՊ տեղակայման աշխարհագրության հետ:

րաբաղի անվտանգության վրա և հարակից այլ հարցեր: Այստեղ սահմանափակվենք միայն հետևյալ մեջբերումներով: ՌԴ աշխարհաքաղաքական խնդիրների ակադեմիայի նախագահ, նախկինում՝ ԱՊՀ երկրների պաշտպանության նախարարների խորհրդի քարտուղար (1992-96թթ.), ՌԴ Պաշտպանության նախարարության միջազգային ռազմական համագործակցության գլխավոր վարչության պետ (1996-2001թթ.), գեներալ-գնդապետ Լ.Իվաշովի (*Леонид Ивашов*) 2013թ. հունվարի վերջին կատարած դիտարկմամբ.

«Ադրբեջանին նորագույն ՀՕՊ «*Фаворит*» համակարգերի վաճառքը քաղաքական վրիպում էր: Ավելի ճիշտ՝ նախագահ Դմիտրի Մեդվեդևի աշխարհաքաղաքական սխալը: Մենք շատ բան կորցրինք ամերիկացիների հետ *СНВ-3* պայմանագիրը ստորագրելով: Կամ, երբ պաշտպանության նախկին նախարար Ա.Սերդյուկովի «թեթև ձեռքով» Մեդվեդևն արտոնեց Իսրայելի հետ հետախուզական տվյալների փոխանակման մասին համաձայնագրի ստորագրումը: Այս բոլոր պայմանավորվածություններն այժմ դժվար է փոխել: Այդ թվում՝ Ադրբեջանի հետ կապվածները, որն այսօր մեծացնում է իր ռազմական բյուջեն և իրականացնում Ռուսաստանի ու նրա դաշնակիցների շահերին հակասող գործողություններ» [37]:

Նույն աղբյուրի փոխանցմամբ, նախկինում Անդրկովկասում ռուսական բանակային խմբի գլխավոր հրամանատարի տեղակալ, գեներալ-լեյտենանտ Յու. Նետկաչևը (*Юрий Неткачев*) գտնում է, որ.

«Ռուսաստանը վերջապես շրջվում է դեմքով դեպի Հայաստանը՝ Հարավային Կովկասում իր հիմնական և ռազմավարական դաշնակիցը: [Հայաստանի] ռազմական պոտենցիալի ամրապնդումն այս տարածաշրջանում կայունության երաշխիքն է: Եվ զսպող գործոն՝ դարաբաղյան խնդիրը պատերազմի ուժով լուծելուն հակված Ադրբեջանի համար»¹:

¹ http://www.ng.ru/cis/2013-01-30/1_karabah.html

5.4. Հավասարակշռության դիստանցիան Առաջին հարվածի (Fist Strike) և «Փոխադարձ երաշխավորված ոչնչացման» (MAD) ռազմավարությունների միջև

Ի մի բերենք մինչև այժմ ասվածը:

Ա. 1992-2012թթ. ընթացքում Ադրբեջանը ծախսել է մոտ \$30 մլրդ ռազմական նպատակներով: Նա կոպտորեն խախտում է իր իսկ ստորագրած միջազգային պայմանագրերի հիմնարար դրույթները, պատկան մարմիններից, միջազգային հանրությունից և սեփական քաղաքացիներից թաքցնում ԾՄՊ իր գնումները: Ադրբեջանին զինող բոլոր հիմնական երկրներն ունեն ռազմական ոլորտում կոռուպցիայի «բարձր» և «շատ բարձր» աստիճան: Բուն Ադրբեջանում այն հսկայածավալ է: 1992-2012թթ. ընթացքում Ադրբեջանի ռազմական (պաշտպանական) ոլորտում միայն կոռուպցիան ավելին էր, քան անցած 20 տարիների ընթացքում ՀՀ ողջ ռազմական ծախսերի գումարը:

Բ. Օգտագործելով ածխաջրածինների արդյունահանումից գոյացած և սեփական քաղաքացիներից օտարված միջոցները՝ Ադրբեջանի իշխանությունները, 2005-ից սկսած, իրականացնում են երկրի ռազմականացման բազմափուլ և համալիր պետական ծրագիր: Այս ծրագրի շրջանակներում ստեղծվել է ռազմարդյունաբերական համալիր, որտեղ գործում են ավելի քան չորս տասնյակ կազմակերպություններ: Իրականացվում են սպառազինության, այդ թվում նաև դրա նոր տեսակների համատեղ արտադրություն և մոդեռնիզացիա: Ծրագրի մյուս բաղադրիչով Ադրբեջանն իրականացնում է ծանր սպառազինությունների ծավալուն գնումներ: Այս ուղղությամբ Ադրբեջանի կողմից ծախսված միջոցների ավելի քան 70%-ն օգտագործվել է գրոհային նշանակության ծանր սպառազինություն ձեռք բերելու համար: Ծրագրի այլ բաղադրիչով իրականացվում են հայատյացության և ռևանշի պետական քարոզչություն, հասարակության ինդոկտրինացիա: Վարվում է բազմակողմ և բազմվեկտոր տեղեկատվական պատերազմ: ԱՀ իշխանությունները ՌԾ-ի մասին տեղեկատվությունը, պատմական, ազգագրական, ժողովրդագրական, տնտեսական ու այլ բնույթի կեղծված «փաստերն» օգտագոր-

ծում են որպես քաղաքական գործիք տարատեսակ մյուլթոսների գոյացման համար:

Գ. Իսրայելի և Թուրքիայի հետ ռազմաքաղաքական համագործակցության հոլովակով Ադրբեջան (և տարածաշրջան) են թափանցում գլոբալ աշխարհաքաղաքականության և *գրանդ ստրատեգիայի* այնպիսի հարցեր, ինչպիսիք են հակաիրանական պլանցոարմի կազմակերպումը և հակահրթիռային պաշտպանության տարրերի տեղակայումը: Կասպից ծովի սահմանագատման տակավին չլուծված ու չափազանց սուր հարցի ֆոնին, Ադրբեջանը ջանում է փոխել այստեղ ռազմավարական հաշվեկշիռը՝ ձգտելով ԱԶԳ-ից գատ Կասպիցում տիրանալ ածխաջրածինների նոր պաշարների, մեղմել նավթային «հետպիկային» ժամանակահատվածի դառը հետևանքները: Իրադրությունն էլ ավելի է խորանում ՌԴ-ի կողմից Ադրբեջանին գրոհային նշանակության ԾՍՊ ծավալուն մատակարարումներով:

Այս գործոնների առկայության պարագայում, մինչև այժմ Ադրբեջանի իշխանությունները կարողացել էին պահպանել հավասարակշռությունը սեփական գոյությունն արդարացնող և լեգիտիմացնող ռազմատենչության, ռևանշի խոստումների և քաղաքական կայունության, վերարտադրման հնարավորության կորստի վախի միջև: Բայց այս հավասարակշռությունը փխրուն է: Դրա պահպանումն անցյալում ենթարկվել, ներկայումս ենթարկվում, իսկ մոտ ապագայում՝ ենթարկվելու է փորձությունների:

Օրինակ, ԱԶԳ «հիմնական նավթի» *BP/AIOC* եռափուլ ծրագրի խափանումը և մի շարք այլ գործոններ զգալի հիասթափություն են առաջացնում ադրբեջանական հասարակության մեջ: Այս հիասթափությունը, զուգորդված հասարակության խորացող սոցիալական բևեռացումով, հանրային և անձնական ազատությունների բռնաճնշմամբ, ազգային փոքրամասնությունների նկատմամբ համակարգային խտրականություններով, պայթյունավտանգ իրավիճակ է ստեղծում երկրում: Այսպիսի իրավիճակում իշխանական վերնախավում աճում է գայթակղությունը՝ վերաուղղորդել աճող հիասթափությունն ու բացասական

Էներգիան այլ, ցանկալի է՝ երկրի ազգային սահմաններից դուրս (Արցախ, Հայաստան, Իրան, Հրվ. Կովկաս, ՌԴ) ուղղություններով: Եվ եթե մինչև այժմ ինքնապաշտպանական բնագործ զսպում էր Ադրբեջանի քաղաքական վերնախավին, օրինակ՝ Լեռնային Ղարաբաղի նկատմամբ անխոհեմ քայլերից¹, ապա այժմ ի հայտ են գալիս նոր գործոններ, որոնք կարող են խախտել այս փխրուն հավասարակշռությունը:

Դրանցից առաջինն ունի այսպես կոչված գլոբալ բնույթ և հետևյալն է. Միքիայի շուրջ, հակաիրանական «կորդոնի» ստեղծման ուղղությամբ և Կասպիցի սահմանազատման հարցում ԱՄՆ-ի, Թուրքիայի և Իսրայելի հետ ռազմաքաղաքական համագործակցությունն Ադրբեջանին պատանդ է դարձնում աշխարհաքաղաքական միանգամայն նոր տրամաբանությանը: Եթե Լեռնային Ղարաբաղի հետ կապված հարցում Ադրբեջանին են պատկանում վճիռների կայացման 50% հնարավորությունն ու իրավասությունը, ապա տարածաշրջանի համար այս նոր աշխարհաքաղաքական դինամիկայի վրա ներազդելու Ադրբեջանի հնարավորությունները շատ ավելի սահմանափակ են: Իսկ վճիռներ կայացնելու հնարավորությունները գրեթե զրոյական են: Այսպիսով, պատերազմի սկսման հարցերը նկատելիորեն միտում ունեն դուրս գալ Ադրբեջանի իշխանությունների վերահսկողությունից:

Հաջորդ գործոնը լոկալ է: Օգտվելով Նոբելյան մրցանակի դափնեկիր Կ.Լորենցի (*Konrad Lorenz*) հայտնի մի դիտարկումից²՝ այն կարելի է անվանել «հավասարակշռության դիստանցիայի հանկարծակի կորուստ»: Դրա էությունն այն է, որ տարբեր գործընթացների հետևանքով կարող է «հանկարծակի» կրճատվել հակամարտ կողմերի միջև գոյու-

¹ Միջազգային հայտնի վերլուծաբաններից մեկը 2012-ը անվանեց «չհայտարարված պատերազմների տարի»՝ նկատի ունենալով հենց մեր տարածաշրջանը:

² Երկու շնիկ, հուսալիորեն բաժանված իրարից ցանկապատով, մեծ ոգևորությամբ հաչում են իրար վրա՝ միևնույն ժամանակ համընթաց վազելով ցանկապատի երկայնքով: Եվ ահա, ցանկապատը հանկարծակի վերջանում է: Ապշած շնիկները մի պահ կանգ են առնում, երկյուղած նայում իրար: Եվ շրջվելով վազում հետ՝ դեպի կորցրած հավասարակշռությունը և հուսալի ցանկապատը [38]: Հուսով եմ, կեղծ հասկացված անտրոպոցենտրիզմը և մարդկային գոռոզությունը չեն խանգարի ընթերցողին տեսնել այս զվարճալի դրվագի հետևում թաքնված խոր պատկերը:

թյուն ունեցող «դիստանցիան», ինչով և խանգարվում է այն հավասարակշռությունը, որը մինչ այդ ապահովում էր իրավիճակի կայունությունը: Մեր պարագայում այս գործոնի ազդեցությունը երկակի է:

Առաջինը լավագույնս կարելի է հասկանալ հետևյալով: Տարատեսակ նորարարությունները կարող են «հանկարծակի» և էականորեն լավացնել սովորական սպառազինության հիմնական բնութագրերը՝ դարձնել այն ավելի կործանարար, ավելի ճիշտ՝ ավելի հեռահար: Օրինակ, եթե հակառակորդը 203 մմ տրամաչափի 2Տ-7 «*Пион*» ունի, ապա ինչ խոսք, այն մեծ և տպավորիչ թնդանոթ է: Բայց միայն այդքանը: Դրանցից մի քանիսը՝ վառված և լքված, կարելի էր տեսնել Վրաստանում՝ 2008թ. օգոստոսի վերջին: Սակայն, եթե հակառակորդն այս թնդանոթի համար ավելի հեռահար՝ ակտիվ-ռեակտիվ արկեր ունի, եթե դրանք ղեկավարվող են և հակառակորդը դրանց ղեկավարման ու թիրախավորման արդիական սարքավորում ունի և լավ վարժված անձնակազմ¹, ապա սա միանգամայն այլ բան է: Սա նշանակում է, որ հակառակորդը կարող է հուսալիորեն խոցել ձեզ՝ առանց հակադարձ խոցվելու վտանգի: Այսինքն՝ ձեռք են բերվել հեռահարության և ճշգրտության տվյալ պայմաններում աննախադեպ հնարավորություններ, ինչը միանգամից կրճատում է «հավասարակշռության դիստանցիան», փոխում հաստատված ռազմական հավասարակշռությունը: Նույնը պետք է ասել ռեակտիվ համագարկային կայանքների, մեծ տրամաչափի քարշակ և ինքնագնաց հրետանու, «մակերևույթ-մակերևույթ» հրթիռների և այլնի մասին: Ի դեպ, սա Լեոնային Ղարաբաղի հարցում հենց այն իրական վտանգն էր, որը մատնանշում էին հայ վերլուծաբանները դեռ 2007-ին (տե՛ս վերը):

Եվ հիմա, եթե Ադրբեջանն իրապես ձեռք բերի այսպիսի ունակություններ կամ հավատա, որ ձեռք է բերել՝ տարվելով իր իսկ ստեղծած մյուսոսներով, ապա սրընթաց կաճի ռևանշին դիմելու նրա հակվածությունը: Մանավանդ որ տասնամյակներ տևած հայատյացության, թշնա-

¹ Էլ չենք ասում «հատուկ» լիցքերի մասին, տե՛ս վերը:

մու պատկերի կերտման, ինդոկտրինացիայի պետական քարոզչությունը դրա համար պարարտ հող են նախապատրաստել: Ու այդժամ, խոհեմության պաշարն արդեն կարող է և չբավարարել այս կործանարար մղումը գապելու համար:

Հավասարակշռության դիստանցիայի կորստի մյուս լոկալ դրսևորումը պայմանավորված է առավելապես աշխարհագրական մանրամասներով և ԼՂՀ-ու հարակից հայկական ու ադրբեջանական տարածքների ռելիեֆով: Այսպես, եթե որևէ գործընթացի հետևանքով հանկարծակի «վերանա» ԼՂՀ-ի շուրջ բուֆերային գոտին¹, ապա տեղի կունենա ճիշտ այն նույն իրավիճակը, որը կգոյանար ավելի հեռահար, ավելի ճշգրիտ ու ավելի կործանարար զինատեսակների հայտնման դեպքում: Այլ խոսքերով, Ադդամի, Ֆիզուլու և պաշտպանական բուֆերային գոտու այլ հենակետերի «հանձնումը» նույնն է, թե Ադրբեջանը «հանկարծակի» ձեռք բերի նոր, մինչ այժմ չունեցած, գրոհային ռազմական կարողություն:

Անհրաժեշտ է ընդգծել, որ լոկալ մակարդակով, մեր սահմանափակ տարածքների, բարդ ռելիեֆի ու խիտ ենթակառուցվածքի պայմաններում, ծանր ռեակտիվ համագարկային կայանքները, ինչպես նաև աշխարհագրությունն ու օրոգրաֆիան ունեն նույնքան ռազմավարական նշանակություն, որքան որ գլոբալ մակարդակում ունենին միջմայրցամաքային բալիստիկ հրթիռները: Անհրաժեշտ է նաև հստակ պատկերացնել, որ գլոբալ մակարդակում «հավասարակշռության շեմին» կատարվող ռազմաաշխարհաքաղաքական խաղերը անհրաժեշտաբար հանգեցնում են կամ առաջին, անակնկալ և կործանիչ հարվածի ռազմավարությանը, կամ, նյութատեխնիկական բավարար կարողությունների առկայության դեպքում, հանգեցնում «փոխադարձ երաշխավորված ոչնչացման» խելագար տրամաբանությանը²: Ընդ որում, *MAD* ռազմավարությամբ կարծես թե ապահովված նոր հավասարակշռության վիճակը, միննույն է, մնում է անկայուն, ու ավարտվում հակամարտ կողմերից մեկի պարտությամբ

¹ Չոր չէ, որ ԱՄՆ հետախուզության ազգային տնօրենը ԼՂՀ կողմերի Բաժանարար Գծի մասին խոսում և գրում է մեծատառերով (տե՛ս ստորև):

² Mutual Assured distruction (MAD). Mad-ը նշանակում է նաև խելագար:

(կամ ոչնչացումով): Դա է վկայում XX դարի ողջ արյունոտ պատմությունն ընդհանրապես և ԽՍՀՄ փլուզումը՝ մասնավորապես:

Այսպիսով, նշված գործոնների միաժամանակյա առկայությունն ու միասնական ներգործությունն Ադրբեջանում Լեռնային Ղարաբաղի հարցում ստեղծել են «(ինքնա)կազմակերպված կրիտիկականության»¹ դասական իրավիճակ: Երբ իր մասշտաբներով նույնիսկ փոքր մի դրվագ կարող է հանգեցնել աղետալի հետևանքներով հղի երևույթի՝ պատերազմի վերսկսման: Սա ռազմավարական և հոգեբանական իսկական ծուղակ է, որում հայտնվել է Ադրբեջանը՝ հետևելով «Ալիևի դոկտրինին»: Այս ծայրաստիճան վտանգավոր ծուղակում հայտնվել ենք և՛ մենք, և՛ Լեռնային Ղարաբաղն ու ողջ Հարավային Կովկասը, հավանաբար և՛ ողջ տարածաշրջանը: Ահա այսպիսի իրավիճակում 2013թ. հունիսի 15-ին հայտնի դարձավ ՌԴ-ից Ադրբեջան գրոհային նշանակության ԾՍՊ նոր մատակարարումների մասին: Դրանք ներառում էին T-90C տիպի 94 միավոր ՀՄՏ, մոտ 100 միավոր БМП-3 տիպի հետևակի մարտական մեքենաներ, 18 միավոր մեծ տրամաչափի "Мста-С" տիպի ինքնագնաց հրետանային կայանքներ, 18 միավոր "Смерч" տիպի մեծ տրամաչափի ռեակտիվ համազարկային կայանք, 18 միավոր "Вена" ինքնագնաց հրետանային կայանքներ, ինչպես նաև 6 ծանր հրանետային ТОС-1А "Солнцелек" կայանքներ, և այս ամենի շահագործման համար անհրաժեշտ ռազմամթերք և տեխնիկա²: Թվարկված բոլոր ԾՍՊ տեսակներն ունեն առաջին հերթին և հիմնականում գրոհային նշանակություն: Այսպես, ծավալային հրե պայթյունի սկզբունքն օգտագործող "Солнцелек" հրանետները կոչված են լավ խրամատավորված ռազմուժի ոչնչացման համար: Դրանք տեղակայված են բարձր անցողունակություն ունեցող տանկային շասիի վրա, ինչը դյուրինացնում է դրանց օգտագործումը բարդ ռելիեֆների պարագայում: Նույնը անհրաժեշտ է ասել և "Смерч" ռեակ-

¹ «(само)организованная критичность», «(self)organized criticality»: Երևույթ, որի մասին այդքան սիրով գրում էր Հայաստանում ԱՄՆ առաջին դեսպան Ս.Մանն իր ավարտական թեզում այժմ արդեն հեռավոր 1991-ին [39] (տե՛ս նաև Գ. 2, բաժին 2.3):

² <http://www.rosbalt.ru/main/2013/06/18/1141914.html>

տիվ համագարկային կայանքների, ծանր ՀՄՏ-ների կամ ինքնագնաց հրետանային կայանքների մասին. դրանք կոչված են խրամատավորված, պաշտպանական գծերի կոտորման համար:

Թերևս, ավելորդ է հարցը, թե ինչ լավ խրամատավորված, էշելոնացված համակարգերի կոտորման համար կարող է օգտագործվել այս ողջ տեխնիկան: Առավել ևս, ԱՄՆ բանակի գլխավոր շտաբի *GAAT* վարժանքային խաղերին ծանոթանալուց հետո (որում, հիշեցնենք, խոսքը ԼՂՀ, Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի և Իրանի տարածքներում մարտական գործողությունների մասին է, տե՛ս [47] և Հավելված 3-ում):

Կարծում ենք, որ ստեղծված չափազանց վտանգավոր իրադրության սթափ գնահատումն էր, որ ստիպեց ԱՄՆ Ազգային հետախուզության տնօրեն (*DNI*)¹ Ջ.Քլեփերին (*James R. Clapper*) 2013թ. հունվարի 31-ին ԱՄՆ սենատի հետախուզական կոմիտեին ուղղված իր «Համաշխարհային վտանգների գնահատումը – 2013» գեկույցում [40] հատուկ նշել, որ «ռազմաշունչ հոետորաբանությունը, փոխադարձ վստահության բացակայությունը և շփման գծում անընդհատ կրկնվող բռնության դեպքերը *մեծացնում են սխալ հաշվարկի ռիսկը*, որը կարող է հանգեցնել իրադրության լարման՝ առանց [որևէ] նախազգուշացման»² (ընդգծումը մերն է– *Ս.Մ.*):

Ինչպես տեսնում ենք, համաձայն պրն Քլեփերի, այստեղ առավել վտանգավորն այն է, որ Ադրբեջանի իշխանական բարձրագույն և նույնիսկ միջին մակարդակի օղակներում կարող է թյուր պատկերացում ստեղծվել, որ ձեռք է բերվել առաջին, հաղթական հարվածի ունակություն (այլ խոսքերով՝ կրճատվել է «հավասարակշռության դիստանցիան»), և որ եկել է ճիշտ ժամանակը՝ այն կատարել, հանկարծակի և առանց որևէ նախազգուշացման: Մի անգամ ևս ընդգծենք, որ սա հենց այն վտանգն էր, որ նշվել էր հայ վերլուծաբանների կողմից դեռ 2007-ին (տե՛ս վերը՝ 2010թ. դրվագում):

¹ *Director of National Intelligence*. ԱՄՆ հետախուզական հանրության այս գլխավոր ղեկավար պաշտոնի և դրա գրասենյակի (*ODNI*) մասին ավելի մանրամասն տե՛ս [42]:

² «Heightened rhetoric, distrust on both sides, and recurring violence along the Line of Contact increase the risk of miscalculations that could escalate the situation with little warning» [40], p. 25.

Ցավոք, միտումնավոր, թե պարզ անուշադրության հետևանքով, պրն Քլեփերի եզրահանգման տազնապեցնող այս երանգն ամբողջությամբ դուրս է մնացել ԱՄՆ կոնգրեսականների համար *Congressional Research Service* հայտնի կազմակերպության կողմից պատրաստվող համապատասխան հաշվետվությունից [41]: Այս հաշվետվության հեղինակ ոմն պրն Նիկոլի (*Jim Nichol*) մեկնաբանությամբ, Քլեփերը 2013թ. հունվարի 31-ին ասել էր հետևյալը. «Նա [պրն Քլեփերը] մտահոգություն հայտնեց, որ ռազմաշունչ հռետորաբանությունը և Ադրբեջանի և Հայաստանի զինված ուժերի Շփման Գծում անընդհատ կրկնվող բռնության դեպքերը կարող են հանգեցնել իրադրության սրման՝ առանց [որևէ] նախազգուշացման»¹: Ինչպես տեսնում ենք, այստեղ հանված է Քլեփերի առանցքային միտքն իրադրության սխալ հաշվարկի և առաջին, անակնկալ հարվածի հնարավորության մասին: Մա, լավագույն դեպքում, աններելի անփութություն է: Այս թյուր մեկնաբանումը, ցավոք, տարածում ստացավ նաև որոշ ռուսալեզու և հայրենական վերլուծական հրապարակումներում, ուր բերվում է պրն Նիկոլի մեկնաբանումը, այլ ոչ թե ԱՄՆ Ազգային հետախուզության տնօրեն Ջ.Քլեփերի բնագիր գնահատականը՝ տրված 2013թ. հունվարի 31-ին ԱՄՆ սենատորների համար:

5.5. Ի՞նչ է մտածում աշխարհն այս ամենի մասին

Իսկ ինչպիսի՞ն է «միջազգային հանրության» արձագանքն այս ամենին: Ցավոք, մեղմ ասած՝ շատ յուրօրինակ: 2011թ. հոկտեմբերի 24-ին Ադրբեջանը փակ գաղտնի քվեարկությամբ, 155 կողմ և 13 դեմ ձայների համամասնությամբ ընտրվեց ՄԱԿ Անվտանգության խորհրդի ոչ մշտական անդամ: Այն կազմակերպության, որի այլ մարմիններին ոչ մի անգամ չի ներկայացրել իր ՌԾ-ի մասին պաշտոնական հաշվետվությունը (տե՛ս բաժին 5.1): Որից թաքցրել է իր 1993, 1994 և 2007թթ. ծանր սպառազինու-

¹ He raised concerns that heightened rhetoric and recurring violence along the line of contact between Armenian and Azerbaijani armed forces could “escalate the situation with little warning. [41], p. 3.: Նշենք նաև, որ Նիկոլը գրում է «line of contact between *Armenian and Azerbaijani* armed forces»-ի մասին: Մինչդեռ պրն Քլեփերը խոսում էր միայն «along the Line of Contact»-ի մասին, այն էլ, նկատենք՝ մեծատառերով:

թյան գնումները (տե՛ս բաժին 5.2): Որին տասնամյակներ շարունակ մատակարարել է սեփական բնակչության ժողովրդագրական խեղաթյուրված վիճակագրությունը, ներքին տեղահանվածների մասին միտումնավոր սուտ տեղեկատվությունը [3, 10]: Այն կազմակերպության ամենաազդեցիկ մարմնի անդամ, որը քննում է պատերազմի և խաղաղության կարևորագույն հարցերն աշխարհում:

Ուշագրավ են այս խայտառակ վճռի մանրամասները: Դրա կայացման համար պահանջվեցին երկու օր և ընտրությունների 17 ռաունդ (!), աննախադեպ բան ՄԱԿ ԱԽ պատմության ողջ ընթացքում: Եվ այն կայացվեց միայն այն բանից հետո, «երբ վրդովված Ադրբեջանի կողմից ձայների գնման և կաշառքի աննախադեպ կամպանիայից՝ Սլովենիան հանեց իր թեկնածությունը» (մեջբերում ենք՝ ըստ հայտնի *CNN* լրատվական հեռուստաալիքի մեկնաբանության¹): Դրանից հետո Սլովենիայի արտգործնախարար Ս.Ջբոգարը (*Samuel Zbogar*) դառնացած հայտարարեց. «Մենք հավանություն չենք տալիս ոչ այս ընտրությունների անցկացման կամպանիային, ոչ դրանց արդյունքներին: Բոլոր դեպքերում, թե՛ այս ընտրությունների ողջ ընթացքը, թե՛ արձանագրված արդյունքը չափազանց խոսուն են և լրացուցիչ մեկնաբանությունների կարիքը չունեն» (տե՛ս նույն տեղում):

Դե ինչ, մենք դիվանագետ չենք և կաղապարված չենք դիվանագիտական զսպվածությամբ, ուստի և թույլ տանք մեզ որոշ մեկնաբանություններ: Նախ՝ դրանց աշխարհաքաղաքական ասպեկտով:

Այս ընտրություններին Ադրբեջանը ներկայացավ որպես *Արևելյան Եվրոպայի* երկրների խմբի թեկնածու²: Սա լեզվական սայթաքում չէ, ոչ էլ կատակ՝ հենց արևելաեվրոպական երկրներին վերապահված *քվոտայով* Ադրբեջանը դարձավ այս ընտրությունների թեկնածու: Հասկանալի է, որ

¹ http://articles.cnn.com/2011-10-24/world/world_europe_un-security-council_1_security-council-azerbaijan-voting?_s=PM:EUROPE

² Նկատենք, որ դրա համար Ադրբեջանին բոլորովին էլ անհրաժեշտ չեղավ Եվրոպայի հետ ստորագրել «խորացված ասոցիացման» կամ դրա նման մի այլ որևէ պայմանագիր: Դժվար է գտնել մեր պոստմոդեռնի երբեք ժամանակների ու *ռեալիտիստիկ* ցինիկ դիմագիծը բացահայտող ավելի խոսուն դրվագ:

այսպիսի արտառոց ներկայացմանն անհրաժեշտաբար պետք է նախորդեր ծավալուն *լոբբինգ*: Որպեսզի, նախ՝ խափանվեր իրոք արևելաեվրոպական մի որևէ երկրի միացյալ թեկնածության առաջադրումը: Իսկ հետո՝ այս արտառոց աշխարհագրական տրամաբանության շրջանակներում ամրապնդվեր Ադրբեջանի թեկնածության ընկալման դյուրինացումը: Կասկածից վեր է, որ այստեղ Ադրբեջանին սատարել են այսպես կոչված «չմիացած երկրները», որի կազմակերպության անդամների հետ Ադրբեջանը սիրահետում էր տևական ժամանակ: Կասկած չի հարուցում նաև Թուրքիայի ակտիվ դերակատարումն այս հարցում: Նախ այն բանի համար, որ ՄԱԿ ԱԽ առաջիկա օրակարգի կենտրոնական խնդիրը հանդիսանալու էր Սիրիան: Իսկ Սիրիական հակամարտության մեջ, ավելի ճշգրիտ՝ Սիրիան որպես պետություն կազմաքանդելու ծրագրում, Թուրքիան ունի միանգամայն տեսանելի և հստակ ներգրավվածություն: Եվ հետո, ՄԱԿ ԱԽ-ից հեռացող Բոսնիա-Հերցեգովինայի փոխարեն Թուրքիան այստեղ ցանկանում էր տեսնել Օսմանյան կայսրության (և չմիացած երկրների խմբի) իր մի այլ բեկորին՝ Ադրբեջանին:

Այնուհետև, ուսանելի է Հունգարիայի վարքը 2011թ. հոկտեմբերին: Բանն այն է, որ ընտրությունների 17 ռաունդանի այս մարաթոնի ընթացքում Հունգարիան բազմիցս առաջ էր քաշում իր սեփական թեկնածությունը՝ ըստ էության վիժեցնելով արևելաեվրոպական միացյալ թեկնածության առաջադրման փորձերը: Հունգարիան ընտրություններում հավաքում էր միայն մեկ կողմ ձայն՝ իր սեփականը, բայց նորից դնում իր թեկնածությունը: Հաջորդ տարի այս արտառոց վարքը ստացավ իր տրամաբանական շարունակությունը մեկ այլ, էլ ավելի խայտառակ արարքում: Այս երկիրն Ադրբեջանին արտահանձնեց հայ սպա Գ.Մարգարյանին գիշերը քնած վիճակում կացնահարած ադրբեջանցի մարդասպան սպային, որը Հունգարիայում դատապարտված էր ցմահ բանտարկության: Այդ ժամանակ հրապարակվեց Հունգարիային տրամադրված հսկայական ադրբեջանական միջոցների մասին, փաստ, որը բացատրում է Հունգարիայի վարքը ՄԱԿ-ում 2011թ. հոկտեմբերին և դրանից հետո:

Ինչևէ, արդյունքում ՄԱԿ ԱԽ-ում ընտրվեց մի երկիր, որը հետևողականորեն և տևական ժամանակ խախտում է հիմնարար նշանակության պայմանագրերի դրույթները, որն իր հարևան ժողովրդին դիտարկում է որպես «թիվ մեկ թշնամի», որը հերոսացնում է մարդասպանին՝ նրան վճարելով Հունգարիայի բանտերում անցկացված ողջ ժամանակահատվածի աշխատավարձը: Մառնասիրտ ընթերցողը կարող է ասել, դե լավ, Ադրբեջանի՝ ՄԱԿ ԱԽ ոչ մշտական անդամ դառնալն այդքան էլ կարևոր բան չէ: Մեկ է, 2013-ին նա կլքի այս կառույցն ու վերջ: Սակայն, կարծում ենք, սա վերջը չէ, իսկ այսպիսի մոտեցումը հիմնովին սխալ է:

Բանն այն է, որ ՄԱԿ ԱԽ-ում Ադրբեջանի ընտրությունը միայն մի դրվագ է, որը վկայում է այսպես կոչված միջազգային հանրության խոր հիվանդության, նրա *դիսֆունկցիայի* մասին: Երբ արգահատելի ու վտանգավոր արարքները և միտումները չեն արժանանում համարժեք ռեակցիայի: Իսկ անհամարժեք, առավել ևս՝ այլասերված ռեակցիայի պարագայում պաթոլոգիկ, հիվանդագին երևույթները խորանում են՝ դառնալով քրոնիկ ու տանելով դեպի կործանում: Սա ճշմարիտ է թե՛ մարդու օրգանիզմի, թե՛ մարդկային հասարակությունների համար: ՄԱԿ ԱԽ ոչ մշտական անդամ Ադրբեջանի ընտրությունը միջազգային հանրության կողմից այսպիսի մի կործանարար ռեակցիա է, կործանարար մի պատգամ, «*մեսիջ*», որն այս հանրությունն ուղարկում է մի երկրի, որը տասնամյակներ շարունակ վարում է ռասիստական ու հայատյաց քարոզչություն, իր քրիստոնյա և մահմեդական հարևաններին ամեն օր սպառնում պատերազմով: Չգիտեմ, կարիք կա՞ արդյոք հիշեցնել ներկայիս ՄԱԿ նախակարապետ Ազգերի լիգայի անփառունակ վախճանը (և դրան նպաստող գերտերությունների «խաղերը»), որը թերացավ սանձել սպառազինության մրցավազքը և կանխել համաշխարհային պատերազմի արհավիրքը մարդկության համար:

Եվ սա, ցավոք, եզակի դեպք չէ, որի ականատեսն ենք Ադրբեջանին ուղղված տարատեսակ «*մեսիջներ*» շարքում: Օրինակ, ինչպե՞ս հասկանալ ԼՂՀ-ի շուրջ հակամարտության ու Ադրբեջանի ռազմականաց-

ման վերաբերյալ Մ.Բրայզայի վերջերս կատարած ու մեզանում լայնորեն տարածում ստացած այն դիտարկումը, թե «Ադրբեջանի ռազմականացումը իրականում դժվար հանգեցնի պատերազմի վերսկսմանը, քանի որ այսօր, անգամ սպառազինությունների այս ծավալուն գնումների պարագայում, նրանք պատրաստ չեն լանջն ի վեր մարտական գործողությունների (*up-hill batale*)»: Լավ, իսկ վա՞ղը: Չե՞ որ ժամանակն այսօր կանգ չառավ, իսկ Ադրբեջանի ռազմականացումը շարունակվում է: Ի՞նչ են նշանակում *Քարնեզի* հիմնադրամի այն գանգրահեր փորձագետի համանման դիտարկումները, թե «պատերազմի վերսկսումն այսօր քիչ հավանական է»¹: Փորձագետի, որն այդպես էլ թերացավ գլուխ հանել ԼՂՀ և Ադրբեջանի տարածքների մակերեսների տոկոսային հարաբերությունից և չընկալեց ինքնորոշման իրավունքի և օկուպացիայի տարբերությունը: Լավ, ասօր հավանական չէ, իսկ վա՞ղը:

Նույն հարցը կարելի է ուղղել նաև այն ռուս վերլուծաբաններին, ստրատեգներին ու քաղաքական գործիչներին, որոնք համանման դիտարկումներ են անում: Եվ որոնք մեր մտահոգությունները փարատելու համար հավելում են, որ «ՌԴ-ն տարածաշրջանում վարում է հավասարակշռված քաղաքականություն» և որ Ադրբեջանին գրոհային նշանակության ԾՍՊ ռուսական մատակարարումները հավասարակշռվում են Հայաստանին տրամադրված զինտեխնիկայով ու համակարգային ռազմաքաղաքական համագործակցությամբ: Դա, իրոք, այդպես է, այդ են վկայում, մասնավորապես, Հայաստանում ստորագրված մի շարք համաձայնությունները, որոնք կայացվեցին 2013-ի հունիսի այն օրերին, երբ Բաքվում շքերթի դուրս եկան ՌԴ-ից ստացված նոր ծանր զինատեսակները:

Այո, այդպես է, բայց անհնարին է երկար հավասարակշռել կշեռքի երկու նժարները՝ մերթ մեկի, մերթ մյուսի վրա հավելյալ ծանրաքարեր դնելով: Միգուցե ռազմավարական և ֆիզիկական վերացական մոդելներում սա արդարացված է: Սակայն իրական կյանքում այսպիսի մոտե-

¹ Անաչառության համար նկատենք, որ Թ. Դյու Վալը այսօր, իր գրքի 2-րդ վերահրատարակման ժամանակ Ադրբեջանի առնչությամբ կարծես թե ավելի վատատես է, քան առաջ:


ցումն ի վերջո անխուսափելիորեն կհանգեցնի կամ հավասարակշռության կորստի, կամ կշեռքի խափանման: Այլ խոսքերով, «(ինքնա)կազմակերպված կրիտիկականության» շեմին տարվել «սիմետրիկ աջակցության» պատրանքներով՝ նշանակում է պարզապես ողջ համակարգը հասցնել կործանման եզրին: Բայց անգամ սա այստեղ ամենակարևորը չէ: Եթե ՌԴ-ն իրեն համարում է մեր ռազմավարական դաշնակիցը, ապա «սիմետրիկ աջակցության» ռազմավարությունը գոյություն ունենալ չի կարող: Ճիշտ այնպես, ինչպես որ չեն կարող լինել «զուտ գործարար» հարաբերություններ ընկերների միջև: Ես վատ եմ պատկերացնում այնպիսի իրավիճակի հարատևումը, երբ մի ընդհարման ժամանակ ձեր դաշնակիցը, որին դուք ձեր մտերիմ ընկերն էիք համարում, վազում է այս ու այն կողմ, հարվածներ հասցնում մեկ այս կողմից, մեկ այն՝ քացատրելով իր տարօրինակ վարքը «զուտ բիզնեսի» նկատառումներով: Ռազմավարական դաշնակցությունը և իրական բարեկամությունն այլ վարք ու այլ լեքսիկոն են ենթադրում:

Ի՞նչ է նշանակում, վերջապես, ֆինանսական ու աշխարհաքաղաքական ինտրիգների մեծ վարպետ Բ.Բերեզովսկու այն դիտարկումը, թե «Եթե Իլիամ Ալիևն իր հոր որդին է, ապա նա պետք է վերջ դնի ռազմաքաղաքական բլեֆներին և անցնի վճռական գործողությունների»¹: Ինչպե՞ս սա հասկանանք: Մանավանդ, եթե հաշվի առնենք, որ չնայած ԾՍՊ գնումներին ու ամպագոռգոռ հայտարարություններին, մինչ օրս, այնուամենայնիվ, ԼՂՀ ճակատում Ի.Ալիևը գերծ է մնացել կործանարար արկածախնդրություններից²: Իհարկե, լավ է, որ Բ.Բերեզովսկին այլևս մեզ հետ չէ, բայց նրա այս դիտարկումները, ցավոք, շարունակում են ապրել: Դրանք կարելի է գտնել որոշ ադրբեջանական, թուրքական, հրեական և այլ հրապարակումներում:

¹ Ի դեպ, *Azadlyg* ռադիոկայանին 2010թ. մարտին տված իր այս հարցազրույցում պրն Բերեզովսկին հարկ համարեց մի խրատ տալ թե Հայաստանին, թե՛ Ադրբեջանին, որ եթե ցանկանում են լուծել իրենց մեջ բոլոր հարցերը, ապա պետք է դադարեն դիմել Ռուսաստանին: Պետք է ենթադրել, որ հարցի լուծման բանալին պրն Բերեզովսկին տեսնում էր ԱՄՆ-Իսրայել-Թուրքիա հարթությունում: Ափսոս, նա չապրեց այնքան երկար, որ ծանոթանար *GAAT* ռազմական խաղերի սցենարներին (տե՛ս Հավելված 3):

² Թե՛ն դիմել է մանր ու միջին սադրանքների:

Դե, իսկ այժմ կատարենք վերջապես այն, ինչին իրականում կոչված են և պիտանի ՄՄԽՀԻ տվյալները. համադրենք հարավկովկասյան երեք հանրապետությունների ռազմական ծախսերի դինամիկան միևնույն ժամանակահատվածի ընթացքում և համադրելի չափողականությամբ: Այդ նպատակով մեկ գրաֆիկում 1992-2011թթ. համար պատկերենք հարավկովկասյան հանրապետությունների ՌԾ ՄՄԽՀԻ տարեկան գնահատականները՝ արտահայտված միևնույն՝ 2010թ. ԱՄՆ հաստատուն դոլարով (Նկար 5.8)¹: Այս նկարն օգտակար մտորումների հրաշալի հնարավորություն է ընձեռում, որոնց, ի դեպ, այդքան էլ հաճախ չես հանդիպի, հատկապես ադրբեջանական մամուլում:



Աղբյուրը՝ <http://milexdata.sipri.org/>, (տե՛ս նաև Հավելված 8, Աղյուսակ Հ8.3)

Նախ, նկարը հստակ ցույց է տալիս մեկ բան. սկսած 2005-ից՝ Հարավկովկասյան տարածաշրջանի մեր երկու հարևանները ներքաշվեցին տենդազին ռազմականացման և սպառազինության մրցավազքի մեջ:

¹ Շեշտենք, որ սրանք ՄՄԽՀԻ բուն տվյալներն են, առանց մեր կողմից վերը կատարված շտկումների:

Այսպես, 2000թ. համեմատ Վրաստանի 2007թ. ռազմական ծախսերն ավելացան 26 անգամ: Նույն թվականի համեմատ Ադրբեջանի 2007թ. ռազմական ծախսերն ավելացան 5 անգամ: Ու սա միայն ՄՄԽՀԻ չշտկված տվյալներով, որոնք, ինչպես նշել էինք վերը, էականորեն թերագնահատում են ԱՀ ՌԾ-ն:

Ի պատասխան այս իրողության, Հայաստանի ռազմական ծախսերն սկսում են սահուն աճել՝ մնալով էապես ցածր մեր հարևանների ՌԾ ծավալներից և դրանց աճի տեմպերից: Չկա ավելի լավ օրինակ, որն այսքան վառ կպատկերեր, թե ով է տարածաշրջանում հակված *ստատուս քվոյի* խախտմանը և ունանշին, և ով է տարածաշրջանային զարգացման ու կայունության պահպանման իրական ջատագովր:

Հարցին նվիրված վերլուծական և այլ հրապարակումներից կարող ենք ծանոթանալ այն պնդմանը, թե Վրաստանի և Ադրբեջանի այսօրինակ ռազմաշունչ վարքը պայմանավորված էր (և է) տարբեր դրդապատճառներով, աշխարհաքաղաքական տարբեր խնդիրներով՝ ենթարկվելով զարգացման տարբեր տրամաբանությունների, և իր դրսևորումներում ունեն (ունի) միանգամայն տարբեր բնույթ:

Կարծում ենք, որ այս տեսակետը համարժեք չէ: Հակառակը, կարծում ենք, որ նշված երկրների այս վարքը միօրինակ և նույնատիպ պատասխանն է (*reaction*) միևնույն և քաջ հայտնի, բայց, ցավոք, վերջերս կարծես թե մոռացված մարտահրավերի (*challenge*), որը կոչվում է «ազգային խնդիր» կամ «ազգերի ինքնորոշման իրավունք»՝ կախված օրվա եզրաբանությունից:

ԽՍՀՄ փլուզումից հետո Վրաստանը հիմնովին ձախողվեց իր հետխորհրդային տարածքներում համախմբող ազգային քաղաքականության մշակման և վարման գործում [42]: Մինչև 2008թ. ամառը Թբիլիսին հակված էր հարցը լուծել ուժային եղանակով և մինիկայսերական նկրտումների ծիրում՝ օգտագործելով իր տարանցման հնարավորությունները: Այս գործելակերպը Վրաստանի համար ավարտվեց 2008թ. օգոստոսյան արկածախնդրությամբ, որի քաղաքական և աշխար-

հաքաղաքական հետևանքներն ամեննին էլ չեն վերջացել և շարունակում են ալեկոծել Վրաստանը (նաև տարածաշրջանը) նաև այսօր: Նույն կերպ վարվեց և Ադրբեջանը: Լեռնային Ղարաբաղի բնակչության բացառապես խաղաղ և օրինական պահանջներին [43] այս երկիրը պատասխանեց ջարդերով ու պատերազմով, և լիակատար ջախջախումից ու մասնատումից [44] խուսափեց միայն Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի հետ 1994թ. մայիսի 5-ի հրադադարի մասին Բիշքեկյան արձանագրության ստորագրումով¹:

Սկար 5.8-ը հստակորեն ցույց է տալիս մի կարևոր բան ևս: 1990-ականների սկզբին Ադրբեջանի ռազմական ծախսերը շոշափելիորեն ավելի էին, քան Հայաստանինը: Ու սա՝ միայն ՄՄԽՀԻ տվյալներով: Ինչպես տեսանք վերը, համաձայն ԱՄՆ ՊԴԲ տվյալների՝ Ադրբեջանի ռազմական ծախսերը 1992-1994թթ. մոտ 5 անգամ գերազանցում էին Հայաստանի ծախսերը: Բացի այդ, Ադրբեջանի ԽՍՀՄ ռազմական «ժառանգությունը» մոտ 3 անգամ գերազանցում էր Հայաստանի «ժառանգությունը»: Գերազանցումն էլ ավելի նկատելի էր մարտական ինքնաթիռների և ուղղաթիռների պարագայում:

Հիշեցնենք նաև, որ այդ ժամանակ Հայաստանում դեռ թարմ էին 1989թ. Սպիտակի աղետալի երկրաշարժի վերքերը, երկրաշարժի, որն ավերեց Հայաստանի արդյունաբերության ավելի քան 35%-ը: Սրան անհրաժեշտ է գումարել ծանրագույն էներգետիկ ճգնաժամը և շրջափակումը: Այնուամենայնիվ, հայ ժողովուրդն իր մեջ ուժ գտավ արժանի հակահարված տալու ադրբեջանական ագրեսորին և նրանց աջակցող վարձկաններին: Իսկ Ադրբեջանը փրկվեց, կրկնենք ևս մեկ անգամ, միայն Լեռնային Ղարաբաղի հետ զինադադարի արձանագրությունը ստորագրելով:

Եզրափակենք այս գլուխը հետևյալով: Հակամարտությունների և պատերազմների նախապատրաստման մեխանիզմների քննությանը նվիրված է ծավալուն գրականություն: Ի մի բերելով պատերազմի

¹ Բիշքեկյան հանդիպման նախաձեռնող կողմերից էին նաև ԱՊՀ Միջխորհրդարանական ասամբլեան, Ղրղզստանի խորհրդարանը և ՌԴ Արտաքին գործերի նախարարությունը [45]:

սկսման կամ վերսկսման օրինաչափությունների ֆորմալ ասպեկտին նվիրված ուսումնասիրությունների արդյունքները¹ կարելի է առանձնացնել վճիռների կայացման 3 ունիվերսալ նշանակության փուլեր:


***Պատերազմի սկսման (վերսկսման) մասին
ռազմավարական որոշում***

Այս փուլում քաղաքական ղեկավարությունը տվյալ երկիրը սկսում է դիտարկել որպես պոտենցիալ հակառակորդ, որի հետ ծագած խնդիրները, հավանական է, պետք է լուծվեն ռազմական միջոցներով: Քաղաքական ղեկավարության հրահանգով գլխավոր շտաբը սկսում է հարձակողական պատերազմի պլանների մշակումները: Այս փուլում պատերազմի սկսման (վերսկսման) հավանականությունը դառնում է ոչ զրոյական:

***Պատերազմի սկսման (վերսկսման) մասին
քաղաքական որոշում***

Տվյալ փուլում ծագած խնդիրների ռազմական լուծումը քաղաքական ղեկավարության կողմից սկսում է դիտարկվել որպես ամենաարդյունավետ և իրականանալի, բայց ոչ միակ հնարավոր տարբերակ: Պատերազմի սկսման (վերսկսման) հավանականությունը գերազանցում է 50%-ը, դեռ պահպանվում է խնդիրների լուծման այլ տարբերակների հավանականությունը: Գլխավոր շտաբը սկսում է հարձակողական պատերազմի հանգամանալի պլանների մշակում, իրականացվում են լայնածավալ շտաբային խաղեր ու վարժանք: Այս փուլի հատկանշական բնութագրերից է այն, որ պատերազմի պատրաստման գործին, բացի բուն ռազմական կառույցներից, միանում են երկրի քաղաքական ղեկավար մարմինները, տնտեսական, կազմակերպչական, վարչական և քարոզչական կառույցները:

¹ Ստորև բերվող դիտարկման համար հիմնականում հետևում ենք [46] աշխատությանը:



Պատերազմի սկսման (վերսկսման) մարտավարական որոշում

Այս փուլում պատերազմի սկսումը (վերսկսումը) դառնում է գործնականորեն անխուսափելի, և դրա հավանականությունն արագ մոտենում է 100%-ի: Ակտիվ գործողությունների կոնկրետ ժամկետը, մշակված պլաններում երկրորդական կարևորության մանրամասները դեռ կարող են փոփոխվել, բայց պատերազմի սկսումը (վերսկսումը) դառնում է անշրջելի: Պատերազմին պատրաստ են սոցիալ-տնտեսական համակարգի գրեթե բոլոր տարրերը. բանակը, տնտեսությունը, քարոզչամեքենան, դիվանագիտական համակարգը և այլն: Ստեղծվել է նպաստավոր հանրային կարծիք, իսկ հակառակորդ և հարևան երկրներում «5-րդ շարասյունը» բերված է ակտիվ վիճակի:

Ադրբեջանի պարագայում, կարելի է վստահաբար պնդել, որ Լեռնային Ղարաբաղում պատերազմի վերսկսման մասին ռազմավարական որոշումն ընկած էր դեռ «Ալինի դոկտրինի» հիմքում, «ԱԶԳ-ն ու նավթն ընդդեմ հրադադարի» 1990-ականների սկզբի գործարքի տրամաբանու-

թյունում: Այդ ժամանակ հիմք դրվեց Ադրբեջանի հետագա գործելակերպին՝ «կվեբրցնենք ԱԶԳ-ն, կհարստանանք, հրադադարով պայմանավորված ժամանակահատվածը կօգտագործենք ռազմական կարողություններ ստեղծելու համար և ձեռնամուխ կլինենք «մեր ազգային խնդիրներին» լուծմանը»: Այսպիսով, Ադրբեջանում պատերազմի վերսկսման ռազմավարական որոշումը կայացվել էր դեռ 1994 թվականին (Նկար 5.9):

2005թ. ԱՀ Պաշտպանական արդյունաբերության նախարարության հիմնադրումով, ռազմականացման պետական համալիր ծրագրի ընդունումով և Իսրայելի ու Թուրքիայի հետ ռազմաքաղաքական համագործակցության նոր փուլի մեկնարկով կարելի է և պետք է թվագրել Լեռնային Ղարաբաղում պատերազմի վերսկսման մասին Ադրբեջանի քաղաքական որոշման կայացումը: Այն վերջնական տեսք ընդունեց 2009թ. մարտի սահմանադրական հանրաքվեի արդյունքներով, երբ Ադրբեջանում հաստատվեց ժառանգական բռնատիրական քաղաքական համակարգ, իսկ նոր սահմանադրության դրույթներով՝ մինչև կյանքի վերջն Ի.Ալիևի նախագահ վերընտրվելու հնարավորությունը կապվեց Լեռնային Ղարաբաղում պատերազմ վերսկսելու անհրաժեշտության և այս պատերազմը երբևէ չավարտելու հետ: Այսպիսով, Ադրբեջանում կայացվել է և Լեռնային Ղարաբաղում պատերազմի վերսկսման քաղաքական որոշումը (Նկար 5.9):

Առկա փաստերի ու միտումների վերլուծությունից կարելի է ենթադրել, որ Լեռնային Ղարաբաղում պատերազմի վերսկսման մասին մարտավարական որոշումն Ադրբեջանն արդեն կայացրել է կամ ընդհուպ մոտեցել է այս կործանարար քայլին: Ադրբեջանական իշխանությունների ռազմաշունչ հռետորաբանությունը, շփման գծում անընդհատ կրկնվող բռնության դեպքերը, փոխադարձ վստահության դաշտի գոյացմանն ուղղված միջոցառումների մերժումն Ադրբեջանի կողմից՝ մեծացնում են սխալ հաշվարկի ռիսկը ԱՀ վճիռ կայացնող իշխանական տարբեր օղակներում: Բացի այդ, տարածաշրջանային մի շարք գործընթացներ ԼՂՀ-ում պատերազմի վերսկսման մասին ԱՀ-ի կողմից մարտավարական որոշ-

ման կայացումը և դրա մանրամասները պատանդ են դարձնում տարածաշրջանային մի շարք հակամարտությունների (Իրանի մեկուսացում, Հարավային Կասպիցի սահմանազատում, Հարավային Կովկասից ՌԴ արտամղում) զարգացման տրամաբանությանն ու դինամիկային:

Աղբյուրներ և գրականություն

1. UNODA Occasional Papers. PROMOTING FURTHER OPENNESS AND TRANSPARENCY IN MILITARY MATTERS. An assessment of the united nations standardized instrument for reporting military expenditures. No. 20, November 2010.
2. SIPRI Yearbooks, 1994-2011.
3. Մարջանյան Ա., Հարավային Կովկասի ժողովրդագրությունը XXI դարի վերջին, «Նորավանք» ԳԿՀ, «21-րդ ԴԱԸ», Թիվ 4(44), 2012թ. էջ 20-44¹:
4. *WMEAT 1998*. World Military Expenditures and Arms Transfers 1999-2000. US Department of State. Bureau of Verification and Compliance. Washington, DC. April, 2000.
5. *WMEAT 2000*. World Military Expenditures and Arms Transfers 1999-2000. US Department of State. Bureau of Verification and Compliance. Washington, DC. June, 2002.
6. *WMEAT 2005*. World Military Expenditures and Arms Transfers 1999-2000. US Department of State. Bureau of Verification and Compliance. Washington, DC. June 2007.
7. *Марджанян А.*, Поводы Для Острой Реакции. «Голос Армении», суббота 15-го сентября, 2012г, No 97 (20310)².
8. US CIA. World FactBooks. 1992 - 2011.
9. Մարջանյան Ա., Ադրբեջանի ռազմական ներուժի գնահատման շուրջ, «Նորավանք» ԳԿՀ «Գլոբուս» հանդես, թիվ 10, 2012³:
10. Մարջանյան Ա., Ադրբեջանական Հանրապետություն. «վիրտուալ» ժողովրդագրության առանձնահատկությունները, Երևան, «Նորավանք» ԳԿՀ, 2012թ.⁴:
11. *JANES*, Defense & Security Intelligence & Analysis Sentinel Security Assessment - Russia And The CIS. Section: Procurement - Azerbaijan, July 25, 2012.
12. *International Institute for Strategic Studies*. The Military Balance. 1995-2013.
13. *Khanna P.*, The Second World. 2008 (*Ханна П.*, Второй Мир, М., Центр исследования постиндустриального общества, изд. «Европа», 2010г.).

¹ http://www.noravank.am/upload/pdf/2.%20Ara%20Marjanyan%2004_2012.pdf

² <http://www.golosarmenii.am/ru/20310/home/21387/>

³ http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=6678

⁴ <http://noravank.am/upload/pdf/Ara%20Marjanyan%20book.pdf>

14. GOVERNMENT DEFENCE ANTICORRUPTION INDEX 2013. Defence and Security Programme, Transparency International UK, 2013.
15. МИД РФ. *Договор об обычных вооруженных силах в Европе (ДОВСЕ). Контроль над обычными вооружениями в Европе*. Справочная информация¹.
16. Генштаб предлагает НАТО компромисс по ДОВСЕ. РИА Новости, 19.05.2008; Россия нашла компромисс для выхода из тупика на переговорах по ДОВСЕ. РИА Новости, 19.05.2008.
17. *Литовкин, В.*, ДОВСЕ умер. Забудьте! Независимая газета, 25-ое ноября 2011г.².
18. *Храмчихин, А.*, ДОВСЕ умер и не надо его реанимировать. *Военно-Промышленный Курьер*. № 6 (423), 15 февраля 2012 г.³.
19. *Литовкин, В.*, ДОВСЕ умер. Да здравствует Венский документ. Независимая газета, 2-го апреля, 2013г.⁴.
20. Россия ввела мораторий на ДОВСЕ. "Коммерсантъ", №230 (3806), 13-ого Декабря 2007г.⁵.
21. США отказались от обязательств ДОВСЕ по России. *Радио "Голос Америки"*, 22.11.2011.⁶.
22. BP Statistical Review of World Energy 2012.
23. Россия поставит зенитно-ракетные комплексы С-300 Азербайджану. *Ведомости*, 29.07.2010.⁷; *Никольский А., Химшиашвили П.*, Не в Иран, так в Баку. 29.07.2010⁸.
24. *Bolving, K.*, The Adapted Treaty on Conventional Armed Forces in Europe Considerations concerning Baltic CFE-Membership. *Baltic Defence Review*, No. 4, vol 2000.
25. *UK DEFENCE STATISTICS 2010*. Declared Tanks, Armoured Combat Vehicles, Artillery, Attack Helicopters and Combat Aircraft Holdings and Ceilings by country within the scope of the Conventional Armed Forces in Europe Treaty. Directorate for Counter-Proliferation and Arms Control. 29 Sept. 2010.
26. Контроль над обычными вооружениями на региональном и субрегиональном уровнях. Шестьдесят седьмая сессия ГА ООН, Пункт 95(v) первоначального перечня А/67/50. Всеобщее и полное разоружение. Доклад Генерального секретаря. 9-ое июля 2012г.

¹ <http://www.mid.ru/bdomp/ns-dvbr.nsf/6786f16f9aa1fc72432569ea0036120e/432569d800226387c32570430031541a!OpenDocument>

² http://www.ng.ru/politics/2011-11-25/3_kartblansh.html

³ <http://vpk-news.ru/articles/862>

⁴ http://www.ng.ru/armies/2013-04-02/2_dovse.html

⁵ <http://www.kommersant.ru/doc/835718>

⁶ <http://www.golos-ameriki.ru/content/us-russia-cfe-2011-11-22-134338633/248657.html>

⁷ <http://www.vedomosti.ru/glossary/%D0%9F%D0%9C%D0%A3>

⁸ <http://www.memo.ru/d/50416.html>

27. UN Register of Conventional Arms: National Holdings.
28. UN Register of Conventional Arms: Heavy Weapons.
29. *Ильин Е.*, Евробезопасность и контроль над вооружениями. Независимое Военное Обозрение, 26.04.2013¹.
30. *Марджанян А.*, Корпорация *RAND* и мы: Армяно-турецкие взаимоотношения, НОФ Нораванк, «21-й ВЕК», #2(18), 2011г. стр. 37-38².
31. Превышает ли Азербайджан лимит вооружения? Зеркало, 17/08/2012³.
32. CFE Extraordinary Conference, document CFE-EC-(07). JOUR, 15 June 2007, Annex 35.
33. *Lachowski, Z.*, Conventional arms control. SIPRI Yearbook 2008, ch 10.
34. CFE Extraordinary Conference, document CFE-EC-(07). JOUR, 13 June 2007, Annex 26.
35. *Larrabee F. S., Lesser I.O.*, Turkish foreign policy in an age of uncertainty. RAND, Center for Middle East Public Policy, MR-1612. 2003.
36. *Асатрян, Г.*, Этническая Композиция Ирана: От “Арийского простора” до Азербайджанского мифа. Ереван, 2012.
37. *Мухин, В.*, Карабахская противовоздушная ружетка. Независимая газета, 30-го января, 2013г.⁴.
38. *Lorenz, K.*, Das sogenannte Bose. В-S, 1963. (Так Называемое Зло: К естественной истории агрессии. В кн. *Конрад Лоренц*, Обратная сторона зеркала, “Республика”, М., 1998).
39. *Малл, С.*, Chaos, criticality and Strategic Thought. *Parameters*, US National War College. April 1991.
40. Worldwide Threat Assessment of the US Intelligence Community Senate Select Committee on Intelligence. James R. Clapper, Director of National Intelligence. March 12, 2013⁵.
41. *Nichol, J.*, Armenia, Azerbaijan, and Georgia: Political Developments and Implications for U.S. Interests. Congressional Research Service, 7-5700, RL33453. January 24, 2013.
42. *Марджанян А.*, Наше будущее - глазами *НИС*. НОФ «Нораванк», «21-й ВЕК», № 3 (11), 2009г., с. 3-38⁶.
43. *Манасян А.*, Карабахский Конфликт: ключевые понятия и хроника, НОФ «Нораванк», Ереван, 2005г.

¹ http://nvo.ng.ru/realty/2013-04-26/1_eurosafety.htm

² http://www.noravank.am/upload/pdf/2.Ara_Marjanyan_21_VEK_02_2011.pdf

³ <http://www.zerkalo.az/2012/prevyishaet-li-azerbaydzhan-limit-vooruzheniya/>

⁴ http://www.ng.ru/cis/2013-01-30/1_karabah.html

⁵ <http://www.intelligence.senate.gov/130312/clapper.pdf>

⁶ http://www.noravank.am/rus/futuris/detail.php?ELEMENT_ID=5895

44. *Храмчихин А.*, Если бы не Бишкекский протокол, армянские войска разрезали бы Азербайджан пополам, *Analitika*, 12/05/2010¹.
45. Нагорно-Карабахская Республика, МиД. *Бишкекский протокол*².
46. *Молодяков, В.*, Тайный Сговор, «Алгоритм», М., 2000.
47. *Марджанян А.*, Военные Игры и Не только. 05.06.2013. Versia.am³.

¹ http://analitika.at.ua/news/khramchikhin_esli_by_ne_bishkekiskij_protokol_armjanskie_vojska_razrezali_by_azerbajdzhan_popolam/2010-05-12-26436

² <http://www.nkr.am/?p=43>

³ <http://www.versia.am/ara-mardzhanyan-voennye-igry-i-ne-tolko/>

ՎԵՐՋԱԲԱՆ.
Ադրբեջանական Հանրապետության
սոցիալ-տնտեսական համակարգը՝
մեկ գաղափարանիշով

Պատերազմն արհավիրք է, բնորոշ մարդկային պատմությանը: Ինչպես ասում են՝ «միայն գոհվածներն են տեսել պատերազմի վերջը»¹: Բայց սա չէ, որ կուզենայինք ընդգծել: Այլ այն, որ պատերազմը, ինչպես և ցանկացած հակամարտություն, ոչգծային երևույթ է: Այստեղ ալիկյան գոեհիկ, գծային տրամաբանությունը՝ «կխաբենք՝ Կասպիցը մեզնով կանենք, նավթը կարդյունահանենք, կհարստանանք, կշատանանք, կուժեղանանք և կհաղթենք», համարժեք չէ առաջին հերթին մեթոդաբանական առումով: Այն սայթաքում է այս պարզունակ սիլոգիզմի գրեթե բոլոր տրամաբանական քայլերում:

Նավթն անպայմանորեն չի հանգեցնում երկրի հարստության ու բարեկեցության. նորից խորհուրդ ենք տալիս ուսումնասիրել Ռուսիանիայի XX դարի պատմությունը: Եվ հետո, խաբված, կեղեքված և նվաստացված երկրները հակված չեն դրա մասին մոռանալ. սա ճշմարիտ է թե՛ առհասարակ, թե՛ օրինակ, Կասպիցի սահմանագատման խնդրի պարագայում: Բացի այդ, հարստությունն անպայմանորեն չէ, որ հանգեցնում է ազգի կամ երկրի հզորության. մարդկային հասարակությունների պատմությունը լեցուն է հակառակի օրինակներով:

¹ Միավամբ Պլատոնին վերագրված Ջ.Սանտայանայի այս խոսքերը փորագրված են Լոնդոնում գտնվող Պատերազմների կայսերական թանգարանի սրահում (*Imperial War Museum*):

Իր հերթին, բարեկեցության աճն անպայմանորեն չէ, որ հանգեցնում է երկրի բնակչության, այդ թվում՝ գորակաշի պիտանի երիտասարդների քանակի աճին: Իսկ ծանր սպառազինությունների ծավալումն ու անկանոն գնումները բոլորովին էլ պարտադիր չէ, որ նշանակեն հաղթանակ ապագա պատերազմում (և ապագայի պատերազմներում): Դրա համար բավական է մտաբերել Ս.Հուսեյնի, Հ.Մուբարաքի, Մ.Քադաֆիի և այլոց անձնական ու ազգային ճակատագրերը: Կամ, նայելով Վրաստանի ՌԾ աճը պատկերող կորին՝ հիշել Մ.Սաակաշվիլու 2008թ. օգոստոսյան արկածախնդրության ճակատագիրը: Վերջապես, վերհիշել սեփական պատմության 1990-ականների սկզբի դասերը:

Ի մի բերենք վերը բերված և մեր նախորդ գրքի նյութը՝ դիմելով վիզուալ, այսպես ասած՝ «գրաֆիկ» մոտեցման: Դրա համար մեկ միասնական գծապատկերում՝ Նկար 6.1-ում, միևնույն 1998-2011թթ. ժամանակահատվածի համար ու համեմատելի չափողականությամբ պատկերենք Ադրբեջանում հում նավթի տարեկան արդյունահանման կորը՝ Նկար 2.1-ից (10 հազար բ/օր չափողականությամբ), պաշտոնական տվյալների հիման վրա կառուցված բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ տարեկան ցուցանիշները՝ Նկար 3.1-ից (\$100/մարդ չափողականությամբ), ինչպես նաև հում նավթի միջազգային միջին տարեկան գինը Նկար 2.4.1-ից (\$/բարել չափողականությամբ): Նկար 6.1-ում բոլոր այս կորերին համապատասխանում է ձախ ուղղահայաց առանցքը: Նույն այդ նկարում պատկերենք նաև նախորդ տարվա համեմատ Ադրբեջանի բնակչության տարեկան աճի (%) մասին պաշտոնական Բաքվի տվյալները՝ վերցված մեր նախորդ աշխատությունից¹: Այս ցուցանիշին Նկար 6.1-ում համապատասխանում է աջ ուղղահայաց առանցքը:

Կարծում եմ, սխալված չենք լինի, եթե պնդենք, որ այս միացյալ գրաֆիկը՝ բաղկացած միևնույն վարքն ունեցող կորերից, ներկայացնում է «Ալիևի դոկտրինի» յուրօրինակ գաղափարանիշը, *հիերոգլիֆը*: Կար-

¹ Մարջանյան Ա., Ադրբեջանական Հանրապետություն. «վիրտուալ» ժողովրդագրության առանձնահատկությունները (Նկար 10), Երևան, «Նորավանք» ԳԿՀ, 2012թ., <http://noravank.am/upload/pdf/Ara%20Marjanyan%20book.pdf>:

ծում եմ, ակնհայտ է «Ալիևի դոկտրինի» և Նկար 6.1-ի հիմքում ընկած պրիմիտիվ ու պարզունակ տրամաբանությունը: Այն է. Ադրբեջանի քաղաքացիների և հասարակության բարօրությունն ու զարգացումը (ինչպես նաև ռազմական բյուջեն) պայմանավորված են երկրի նավթային հարստությամբ և անշեղորեն աճում են հում նավթի արդյունահանման ծավալների աճին զուգընթաց: Ընդգծելու համար այս տրամաբանությունը՝ հաշվարկենք նկարում բերվող ցուցանիշների միջև մաթեմատիկական կորելյացիայի գործակիցը 1998-2011թթ. ժամանակահատվածի համար (Աղյուսակ 6.1):

Աղյուսակ 6.1


1998-2010թթ. կորելյացիա (%)

Արդյունահանում / տեսակարար ՀՆԱ	98.2%
Արդյունահանում / բնակչության տարեկան աճ	95.3%
Նավթի միջ. գին / արդյունահանում	90.1%
Նավթի միջ. գին / բնակչության տարեկան աճ	77.2%

Ինչպես տեսնում ենք այս աղյուսակից, 1998-2011թթ. ժամանակահատվածում հում նավթի արդյունահանումը ոչ միայն ավելի քան 98%-ով կորելացվում է երկրի տեսակարար ՀՆԱ աճի հետ, այլև ավելի քան 95%-ով պայմանավորում է Ադրբեջանի բնակչության տարեկան աճը: Եթե Ադրբեջանի ռազմական բյուջեի մասին տվյալներն ավելի ամբողջական լինեին, ապա վստահաբար ցույց կտային գրեթե 100% կորելյացիա հում նավթի արդյունահանման հետ: Ահա սա է «Ալիևի դոկտրինի» գռեհիկ տրամաբանության հենքը:

Գռեհիկ, որովհետև պաշտոնական Բաքվի կարծիքով՝ հում նավթի արդյունահանման ծավալների աճով պայմանավորված երկրի տեսակարար ՀՆԱ աճն ինքնաբերաբար նշանակում է հասարակության բարօրության հաստատում, այլ ոչ թե «ոսկյա 80 հազարի» գոյացում, սոցիալական անհավասարության խորացում, համատարած կոռուպցիա և երկրի սոցիալ-տնտեսական համակարգի ձևախեղում: «Վիրտուալ վիճա-

կազրության» տարերքում գտնվող ադրբեջանցի պաշտոնյաների կարծիքով՝ հում նավթի արդյունահանման աճն այն հիմնական գործոնն է, որը կյանքի կկոչի 10 միլիոնանոց Ադրբեջանի գոյությունը, «որը երբեք չի համակերպվի կորսված տարածքների իրողության հետ»:



Եվ փույթ չէ, որ Ադրբեջանի պաշտոնական վիճակագրությունը պարզապես ողողված է տարատեսակ մեքենայություններով, որ սեփական աղավաղումներից խճճված պաշտոնյաները կորցրել են կապն իրականության հետ և պարզապես չեն ճանաչում այն երկիրը, որում ապրում են: Որ նավթը, ինքնին և ինքնաբերաբար, երբեք չի բերել հասարակության բարեկեցության աճի, իսկ հասարակության բարեկեցության աճն, ինքնաբերաբար, երբեք չի բերել և չի բերի բնակչության շեշտակի աճի: Որ այսպիսի տրամաբանությունը կարող է հանգեցնել պարզապես

զավեշտալի արդյունքի՝ մոտ 77% կորեյացիա երկրի բնակչության տարեկան աճի պաշտոնական գնահատականների և նավթի միջազգային գների միջև: Որ նվաստացուցիչ է սեփական երկրի հարստությունը պայմանավորել ընդերքում գտնվող հանածոներով, այլ ոչ թե սեփական քաղաքացիների ազատ և ստեղծագործ կյանքով ու աշխատանքով: Որ անհնարին է սեփական ազգային փոքրամասնությունների հանդեպ խտրական վերաբերմունքով հասնել ազգային համերաշխության ու ապահովել երկրի բնականոն զարգացումը: Որ Ադրբեջանական Հանրապետությունը երբեք չի ունեցել այն «կորսված» տարածքները, որոնց «հետբերումը» երեկ և այսօր դիտվում է որպես իշխանության վերարտադրման, քայքայվող հասարակությունը համախմբելու միակ գործուն միջոց: Վերջապես, որ սեփական ժողովրդին և տարածաշրջանի այլ երկրներին «Ալիևի դոկտրինի» տրամաբանության պարտադրումը պատանդ է վերցնում տարածաշրջանում տևական խաղաղություն և զարգացման որևէ հեռանկար:

Կեղեքել սեփական ժողովրդի հարստությունը հանդիսացող բնական պաշարները, նպատակաուղղել դրանք անձնական, ընտանեկան և կլանային իշխանության ամրապնդմանը, քաղաքական վերարտադրմանը, սանձել սեփական ժողովրդի ազատությունն ու մարդկային զարգացումը, հարևանների նկատմամբ ատելության սերմանմամբ փորձել համախմբել ռեպրեսիվ ճիրաններում քայքայվող հասարակարգը, թունավորել սեփական ժողովրդին հայատյացությամբ, նվաստացնել և բռնաճնշել ազգային փոքրամասնություններին, ռազմականացման խելահեղ պարույրով երկիրը տանել դեպի պատերազմ. այս ամենը մութ ժամանակներին բնորոշ գործելակերպ է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ի մի բերենք գրքում ներկայացված նյութը հետևյալ եզրահանգումների տեսքով.

1. Հիմնվելով ԽՍՀՄ Նավթային արդյունաբերության նախարարության 1970թ. աղավաղված քարտեզի վրա՝ 1989-1990թթ. Ադրբեջանը միակողմանի կերպով զավթել է ԱԶԳ նավթադաշտը և Հարավային Կասպիցի նավթագազային այլ դաշտեր: ԱԶԳ նավթադաշտի զավթումն ընկած է «Ալինի դոկտրինի» հիմքում: ԱՀ օրենսդրական մի շարք նախաձեռնություններով և 1994թ. սեպտեմբերյան «դարի պայմանագրի» ստորագրումով ավարտվեց ԱԶԳ նավթադաշտի միակողմանի զավթումը: Այն անսադրված ագրեսիայի և օկուպացիայի բռնարարք է և կոպտորեն խախտում է պետական սահմաններին վերաբերող միջազգային իրավունքն ու նորմերը, Թուրքմենստանի և Իրանի իրավունքները Կասպիցի հարավային հատվածի ածխաջրածինների և այլ բնական պաշարների արդյունահանման տեսանկյունից:
2. Խափանված է ԱԶԳ «հիմնական նավթի» *BP/AIOC* եռափուլ ծրագիրը: ԱԶԳ արդյունահանման նոր՝ 4-րդ փուլի իրականացումը (*COP*, մեկնարկը՝ 2013-ին) ի վիճակի կլինի երկարաձգել ԱԶԳ նավթադաշտի շահագործումը պլատոյի ռեժիմում, բայց, ամենայն հավանականությամբ, չի ապահովի այստեղ օրական 1 մլն բարել նավթի արդյունահանման ցուցանիշը բավական տևական ժամանակ: Առաջիկա տարիներին Ադրբեջանում անխուսափելի է նավթադաշտային եկամուտների նվազումը:
3. Գազային ոլորտի անգամ ամենահավակնոտ ծրագրերի իրականացումը (Շահ Դենիզ - *TANAP*), որի՝ առաջիկա տարիներին կյանքի

կոչվելու հավանականությունն, ի դեպ, անհրաժեշտ է համարել փոքր, Ադրբեջանին կապահովի մոտ 6-7 անգամ ավելի քիչ շահույթ, քան ԱԶԳ-ԲԹԶ ծրագիրը: Առաջիկա տարիների ընթացքում Ադրբեջանում ածխաջրածինների արդյունահանումից գոյացած ընդհանուր եկամուտների բազմակի նվազումն անխուսափելի է:

4. Ադրբեջանում ու Հարավային Կովկաս – Կասպիական տարածաշրջանում ավարտին է մոտենում ԱԶԳ դաշտի «մեծ նավթի» փուլը: Հետևաբար, ավարտվում է նաև Հյուսիսային Կասպիցի սահմանազատամբ պայմանավորված աշխարհաքաղաքական այն կոնստրուկտը, որը ձևավորվել էր այստեղ դեռ ԽՍՀՄ փլուզման նախօրեին և 1990-ականների սկզբին: Առջևում է «գազի դարաշրջանը»: Այն պայմանավորված կլինի այժմ արդեն Հարավային Կասպիցի սահմանազատման գործընթացներով, տրանսկասպյան գազային ու այլ ենթակառուցվածքային ծրագրերի մշակումով, դրանց իրականացմանը ՌԴ, Իրանի, Թուրքմենստանի և Ֆրանսիայի մասնակցության աստիճանով՝ ի համալրումն և/կամ ի հակակշիռ ԱՄՆ, ՄԲ, Իսրայելի և Թուրքիայի ծավալուն ներգրավվածության:
5. ԱՆՊՀ և *SOCAR* եկամուտները գոյանում են անթափանց միաջավարում, դուրս ԱՀ օրենսդրական դաշտի սահմաններից և ենթարկվում են ֆիսկալ վերահսկման միայն մասնակիորեն: Բացակայում է ԱՆՊՀ և *SOCAR* եկամուտների, դրամային հոսքերի և ծախսերի նկատմամբ հանրային կամ անկախ վերահսկման որևէ գործուն մեխանիզմ: ԱՆՊՀ մասհանումները պետական բյուջե կատարվում են, ըստ էության, միանձնյա որոշումներով և անվերահսկելի պայմաններում: Նավթային ոլորտում առկա կառուցվածքային հակասությունները (*SOCAR-BP/AIOC*, *BP/AIOC-ԱՆՊՀ*, *ԱՆՊՀ-ԱՀ* էներգետիկայի նախարարություն և այլն) հաղորդվում են ԱՀ պետական կառավարման վերին օղակներ:
6. ԱՀ արտաքին առևտուրը հանդիսանում է երկրի ՀՆԱ գոյացման հիմնական միջոցը: Ճշգրտորեն արտացոլելով ԱՀ մոնոտոնտեսական համակարգի բնույթը՝ այն ծայրահեղ անհամաչափ է: ԱՀ գոյության

առաջին 17 տարիների ընթացքում արտաքին առևտրի շրջանառությունը տատանվել է մոտ \$1 մլրդ-ի սահմաններում: 2008-ին այն կտրուկ աճում է՝ կազմելով \$40.5 մլրդ, որից հետո անկում է ապրում և ներկայումս գտնվում է մոտ \$15-19 մլրդ-ի սահմաններում:

7. Արտաքին առևտրի հենքը կազմում են ածխաջրածինների, առաջին հերթին՝ հում նավթի արտահանումները: 1996-2006թթ. ժամանակահատվածում դրանց բաժինն ընդհանուր արտահանումներում չի իջել 60% մակարդակից, իսկ ԱԶԳ «մեծ նավթի» փուլի մեկնարկից հետո 2006-11թթ. ընթացքում այն կազմել է 95%: Արտահանվող ոչ ածխաջրածնային ապրանքներն են հիմնականում միրգը և շաքարը (ընդհանուր արտահանումների ընդամենը 5%-ը): Ներկրվող տեսականու առաջին եռյակում են մարդատար ավտոմեքենաները, ցորենը և ծխախոտի գլանակները:
8. 1996-2011թթ. ժամանակահատվածում Ադրբեջանի թիվ մեկ առևտրային գործընկերն էր Իտալիան: 2006թ. արտահանումներն Իտալիա կազմել էին մոտ \$3.0 մլրդ կամ այդ տարի Ադրբեջանից աշխարհի այլ երկրներ (բացի ԱՊՀ երկրներից) արտահանումների մոտ 50%-ը: 2011-ին այս ցուցանիշները կազմել են \$9.34 մլրդ և 40%: Ադրբեջանից հում նավթի արտահանումների ռեկորդային՝ 2008 թվականին դրանք կազմել էին \$19.22 մլրդ և 41.2% համապատասխանաբար:
9. Բացի Իտալիայից, 2006-11թթ. ժամանակաշրջանում Ադրբեջանի առևտրային հիմնական գործընկերների հնգյակում մեկ տարի բացառությամբ հայտնվում են ՌԴ-ն և ԱՄՆ-ը, երկուսն էլ բացառությամբ՝ Ֆրանսիան և Իսրայելը, 3 անգամ՝ Թուրքիան: Այս երկրների հետ առևտրից զոյացած եկամուտները կազմում են Ադրբեջանի տնտեսական համակարգի ծավալային աճի հիմքը: Նկատելի է Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի երկրների հետ Ադրբեջանի առևտրի շրջանառության աճը:
10. Ադրբեջանից ածխաջրածինների արտահանումների ոլորտում կոռուպցիոն բաղադրիչը 2010-11թթ. ընթացքում կազմել է արտահանումների ընդհանուր ծավալի տարեկան մոտ 25%-ը: 2006-11թթ.

ընթացքում ածխաջրածինների արտահանումների ոլորտի կոռուպցիոն բաղադրիչը գումարայինը կազմել է մոտ \$31.0 մլրդ, այսինքն՝ ԱԶԳ նավթադաշտի շահագործումից 2001-2016թթ. ընթացքում ակնկալվող շահույթի (\$200 մլրդ) մոտ 16%-ը:

11. 1992-2011թթ. ընթացքում Ադրբեջանից արտահանումները օՖշորային գոտիներ կազմել են մոտ \$2.1 մլրդ կամ աշխարհի երկրների հետ (բացի ԱՊՀ երկրներից) Ադրբեջանի ողջ արտահանումների 1.6%-ը: Մայրան այստեղ գրավում է առաջին տեղը՝ \$861 մլն, որին հաջորդում է Վիրջինյան կղզիները (ԱՄՆ)՝ \$610 մլն: 1992-ին արտահանումները օՖշորային գոտիներ կազմել էին ընդհանուր արտահանումների մոտ 9%-ը (\$73 մլն՝ դեպի Կիպրոս): 2008-ին ֆինանսական ճգնաժամի հետևանքով դրանք նվազում են: 2011-ին արտահանումներն օՖշորային գոտիներ կազմել են արդեն մոտ 4% (\$807 մլն)՝ նախորդ տարվա համեմատ աճելով գրեթե 3.5 անգամ:
12. Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների մասին (ՀՆԱ, ՄԳԻ, սղաճ, պետբյուջե) պաշտոնական տվյալներն Ադրբեջանում իշխանությունների կողմից ենթարկված են զանգվածային կեղծումների: Դրանք կրում են միտումնավոր և համակարգված բնույթ:
13. Ադրբեջանում գործող կլանաօլիգարխիկ համակարգի կողմից ածխաջրածինների ոլորտը զավթված է, իսկ գոյացած բարիքը՝ օտարված ԱՀ քաղաքացիներից, ի հակադրություն «Ադրբեջանի նավթն Ադրբեջանի ժողովրդի հարստությունն է» ալիյան տխրահռչակ կարգախոսի: Զավթված բարիքն առաջին հերթին ուղղվում է գործող ռեժիմի կայունության պահպանմանը և վերարտադրմանը:
14. Երկրում ձևավորված ֆինանսաբյուջետային համակարգը ճշգրտորեն արտացոլում է այս հանգամանքը պետական բյուջե ԱՆՊՀ մասհանումներով: Դրանք խորացնում են կոռուպցիան և հասարակության բևեռացումը, էրոզիայի ենթարկում պետական կառույցները: Ի հաշիվ քաղաքացիների բարեկեցության և երկրի զարգացման հեռանկարի, Ադրբեջանում գործող ռեժիմը նպատակաուղղում է ժո-

- դովրդից զավթված բարիքը երկրի խելահեղ ռազմականացմանը և ռազմարդյունաբերական համալիրի ստեղծմանն ու զարգացմանը:
15. Խափանված է ԱՀ տնտեսական ոլորտի դիվերսիֆիկացիայի ծրագիրը: Երկրի տնտեսական համակարգը շարունակում է մնալ մոնոտնտեսություն՝ հիմնված ածխաջրածինների արդյունահանման վրա:
16. Ածխաջրածինների արդյունահանումից եկամուտների նվազման սպասումները, միջազգային նավթագազային ընկերությունների «շանտաժին» հլու ենթարկվելը, ինչպես նաև մի շարք այլ գործոններ ադրբեջանական հասարակությունում առաջացնում են շոշափելի հիասթափություն դեռ 1994-ին Ադրբեջանին համատարած բարօրություն ու սոցիալ-տնտեսական շեշտակի զարգացում խոստացած «Ալինի դոկտրինից»:
17. Այս հիասթափությունը, զուգորդված հասարակության խորացող սոցիալական բևեռացմամբ, հանրային և անձնական ազատությունների բռնաճնշմամբ, ազգային փոքրամասնությունների նկատմամբ համակարգային բնույթ ունեցող խտրականություններով, պայթյունավտանգ իրավիճակ է ստեղծում երկրում: Իրադրությունը խորանում է Ադրբեջանում առկա ժողովրդավարության սաղմնային մակարդակի, քաղաքացիական հասարակության թերզարգացածության և հատկապես իշխանափոխության մեխանիզմների և իշխանության կիրառման, ըստ էության, կիսաֆեոդալ բնույթի պատճառով:
18. 1992-2012թթ. ընթացքում Ադրբեջանը ծախսել է մոտ \$30 մլրդ ռազմական նպատակներով: Այն կոպտորեն խախտում է իր իսկ ստորագրած միջազգային պայմանագրերի հիմնարար դրույթները, պատկան մարմիններից, միջազգային հանրությունից և սեփական քաղաքացիներից թաքցնում ԾՄՊ իր գնումները: Ադրբեջանին զինող բոլոր հիմնական երկրներն ունեն ռազմական ոլորտում կոռուպցիայի «բարձր» և «շատ բարձր» աստիճան: Բուն Ադրբեջանում այն հսկայածավալ է: Ադրբեջանի ռազմական (պաշտպանական) ոլորտում միայն 1992-2012թթ. ընթացքում կոռուպցիայի ծավալը

կազմում է \$3-5 մլրդ և ավելին է, քան անցած 20 տարիների ընթացքում ՀՀ ողջ ռազմական ծախսերը:

19. Օգտագործելով ածխաջրածինների արդյունահանումից գոյացած և սեփական քաղաքացիներից օտարված միջոցները՝ Ադրբեջանի իշխանությունները, 2005-ից սկսած, իրականացնում են երկրի ռազմականացման բազմափուլ, համալիր պետական ծրագիր: Այս ծրագրի շրջանակներում՝

- Սահմանադրորեն ամրագրվել է ժառանգական բռնապետության քաղաքական համակարգ, որն ԱՀ քաղաքացիներից օտարել է ածխաջրածինների արդյունահանումից գոյացած միջոցները՝ պարփակելով դրանք նեղ կլանաօլիգարխիկ շրջանակներում, ծառայեցնելով դրանք սեփական շահերին և իշխանական համակարգի վերարտադրմանը: Իշխող ռեժիմը, միջազգային մի շարք կազմակերպությունների ներգրավմամբ, իրականացնում է Ադրբեջանի սոցիալ-տնտեսական համակարգի հիմնական ցուցանիշների զանգվածային գեղծարարություն: Խեղաթյուրված ցուցանիշներն օգտագործվում են ԱՀ իշխանության կողմից վարվող տեղեկատվական և հոգեբանական պատերազմում:
- Ստեղծվել է ռազմարդյունաբերական համալիր, որտեղ գործում են ավելի քան չորս տասնյակ կազմակերպություններ: Իրականացվում են սպառազինության, այդ թվում նաև դրա նոր տեսակների համատեղ արտադրություն և մոդեռնիզացիա:
- Իրականացվում են ծանր սպառազինությունների ծավալուն գնումներ: Այս ուղղությամբ Ադրբեջանի կողմից ծախսված միջոցների ավելի քան 70%-ն օգտագործվել է գրոհային նշանակության ծանր սպառազինություն ձեռք բերելու համար:
- Իրականացվում են հայատյացության ու ռևանշի պետական քարոզչություն, հասարակության ինդոկտրինացիա: Վարվում է բազմակողմ և բազմավեկտոր տեղեկատվական պատերազմ: ԱՀ իշխանությունները ՌԾ-ի մասին տեղեկատվությունը, ինչպես նաև

պատմական, ազգագրական, ժողովրդագրական, տնտեսական և այլ բնույթի կեղծված «փաստերն» օգտագործում են որպես քաղաքական գործիք տարատեսակ մյուսոսների գոյացման համար:

20. Իսրայելի և Թուրքիայի հետ ռազմաքաղաքական համագործակցության հոլովակով Ադրբեջան (և տարածաշրջան) են թափանցում գլոբալ աշխարհաքաղաքականության այնպիսի հարցեր, ինչպիսիք են հակահրանական պլացդարմի կազմակերպումը և հակահրթիռային պաշտպանության տարրերի տեղակայումը: Կասպից ծովի սահմանագատման տակավին չլուծված ու չափազանց սուր հարցի ֆոնին, Ադրբեջանը ջանում է փոխել այստեղ ռազմավարական հաշվեկշիռը՝ ձգտելով ԱԶԳ-ից գատ Կասպիցում տիրանալ ածխաջրածինների նոր պաշարների, մեղմել նավթային «հետպիկային» ժամանակահատվածի դառը հետևանքները:
21. Ադրբեջանի ՌԾ-ի շուրջ ստեղծվել է արտառոց իրավիճակ: Ըստ էության, դրանց մասին հավաստի գնահատականները բացակայում են թե՛ պաշտոնական, թե՛ այլ աղբյուրներում: Ադրբեջանի կողմից իրականացվող ռազմականացման համալիր, ծրագրի իրականացմանը, գրոհային նշանակության սպառազինությունների ծավալուն գնումներին, հիմնարար կարևորության միջազգային պայմանագրերի դրույթների կոպիտ խախտումներին միջազգային հանրությունն ընդհանուր առմամբ ցուցաբերում է անտարբեր, իսկ որոշ դեպքերում՝ նաև խրախուսական վերաբերմունք:
22. Այսպիսի իրավիճակում իշխանական վերնախավում աճում է գայթակղությունը՝ վերաուղղորդել աճող հիասթափությունն ու բացասական էներգիան այլ, ցանկալի է՝ երկրի ազգային սահմաններից դուրս (Արցախ, Հայաստան, Իրան, Հրվ. Կովկաս) ուղղություններով և/կամ դեպի այլ թիրախներ (ազգային և կրոնական փոքրամասնություններ, «ազաի իմպերիալիստներ», «դավադիր և նենգ հայեր», «ներքին թշնամիներ», տարատեսակ «դավաճաններ» և այլն):

23. Լեռնային Ղարաբաղում պատերազմի վերսկսման մասին ռազմավարական որոշումն ընկած է «Ալիևի դոկտրինի» հիմքում և «ԱԶԳ-ն ու նավթը՝ ընդդեմ խաղաղության» 1990-ականների սկզբի գործարքի տրամաբանությունում: Ադրբեջանում պատերազմի վերսկսման ռազմավարական որոշումը կայացվել է 1994թ.:
24. ԱՀ Պաշտպանական արդյունաբերության նախարարության հիմնադրումով, ռազմականացման պետական համալիր ծրագրի ընդունումով և Իսրայելի ու Թուրքիայի հետ ռազմաքաղաքական համագործակցության նոր փուլի մեկնարկով (2005թ.) թվագրվում է Լեռնային Ղարաբաղում պատերազմի վերսկսման մասին Ադրբեջանի քաղաքական որոշման կայացումը: Այն վերջնական իրավական տեսք ընդունեց 2009թ. մարտի սահմանադրական հանրաքվեի արդյունքներով, երբ Ադրբեջանում հաստատվեց ժառանգական բռնատիրական ավտորիտար համակարգ, իսկ մինչև կյանքի վերջը Ի.Ալիևի նախագահ վերընտրվելու հնարավորությունը սահմանադրորեն կապվեց Լեռնային Ղարաբաղում պատերազմում վերսկսելու և պատերազմը երբևէ չավարտելու անհրաժեշտության հետ:
25. Առկա փաստերի ու միտումների վերլուծությունից կարելի է ենթադրել, որ Լեռնային Ղարաբաղում պատերազմի վերսկսման մասին մարտավարական որոշումն Ադրբեջանն արդեն կայացրել է կամ ընդհուպ մոտեցել է այս կործանարար քայլին: Այս որոշման կայացման ու դրա մանրամասների վրա մեծ է տարածաշրջանային միջառք հակամարտ գործընթացների (Իրանի մեկուսացում, Հարավային Կասպիցի սահմանագատում, Հարավային Կովկասից ՌԴ արտամղում) ազդեցությունը:

Արա Մարջանյան
ԱՌՐԲԵԶԱՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Տեխնիկական խմբագիրներ՝
Խոնարհիկ Քարաուղանյան
Լուսինե Բաղրամյան

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ, 0026 Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ office@noravank.am
Հեռախոս/ֆաքս՝ + (374 10) 44 04 73

Թուղթը՝ օֆսեթ, ծավալը՝ 41,25 տպ.մամուլ:
Տպաքանակը՝ 200: Տառատեսակը՝ Sylfaen:
Տպագրվել է «Գասպրինտ» ՍՊԸ տպարանում: